ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ



Վեստիք Իսահակյան

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՎԵՑ ՀԱՏՈՐՈՎ

„ՀԱՅԱՍՏԱՆ" ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 1975

ՔՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ

Ա 15496Հ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 1975

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Ap l
Ի 75

Ի 0—74—3 (2078) / 791 (01) 73 07, 73 «S»

Տեքստը պատրաստեցին՝

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԱԲԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Ծանոթագրությունները՝

Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆԻ

Խմբագրական կոլեգիա՝ Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ
Ս. Բ. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ
Գ. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Վ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Հատորի խմբագիր՝

Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ

Պատմվածքներ

ՕՋԱԽԻ ԾՈՒԽԸ

Քանի՞ տարեկան կլիներ Վարոս ամին: Այն ժամանակ շատ տարեց էր թվում ինձ, որովհետև ես, համեմատաբար, դեռ շատ երիտասարդ էի: Իսկ հիմա, երբ Վարոս ամուն կենդանացնում եմ երևակայության մեջ, կարող եմ հազիվ վաթսուն տարեկան տալ նրան, գլխի մազերը կես առ կես սև ու ճերմակ էին, աչքերը կայծով էին, ձայնը՝ ուժով, ողնաշարը՝ շիտակ:

Լուրջ, խոհուն, պատկառելի մարդ էր: Իմաստուն առածներով համեմված ամեն մի խոսքը: Գյուղի ազդեցիկ մարդկանց առաջին շարքումն էր: Թեև երկու աղջիկ ուներ, սակայն իրեն շատ դժբախտ էր զգում արու զավակ, «ժառանգ» չունենալու պատճառով: Եվ կինն էլ վաղուց արդեն դադարել էր «պտուղ» տալուց:

Ժառանգի կարոտը անափոփ վշտի պես կրծում էր Վարոս ամու սիրտը: Միշտ մռայլ էր, և մանավանդ խեղճ կնոջ հանդեպ չարությամբ, հանդիմանությամբ լցված: Առանց պատճառաբանելու, միայն կնոջն էր մեղավոր բռնում ժառանգ չունենալու դժբախտության մեջ: Իսկ խեղճ կինը լուռ կրում էր ամուսնու անարդար հանդիմանությունը, ինքն իր հերթին պատճառը վերագրելով «աստվածային անհասանելի կամքին»:

Եղավ որ կինը մեռավ: Վարոս ամին կքեց այս հարվածի տակ: Նրա տունը բոլորովին ամայացավ:

Աղջիկները թեև այդ սուգի օրերը հոր տունն էին եկել, բայց կարճ ժամանակից հետո պիտի վերադառնային իրենց տները: Նրանք ուրիշ գյուղեր էին հարս գնացած: Նրանց մեկնելուց հետո Վարոս ամին պիտի մնար մենակ, այս ծեր օրերում բոլորովին մենակ և անմխիթար:

Այս վիճակը սարսափեցնում էր Նրան:

Իսկ եթե տեղափոխվեր աղջիկներից մեկն ու մեկի մոտ, այդ կնշանակեր՝ իր տան դուռը հավիտյան գոցել, իր օջախի ծուխը հավիտյան մարել: Այս վիճակը և՛ ավելի սարսափեցնում էր Նրան: Եվ ժամերով նստում էր իր թափուր տան պատի տակ, աչքերը առանց մտածումի՝ անորոշ կետի հառած:

Վարոս ամուն ես մոտիկ էի,— նա մեր ընտանիքի հին բարեկամն էր և լավ դրացին:

— Վարո՛ս ամի, ինչո՞ւ ես քեզ այդպես զուր տանջում,— փորձեցի Նրան մխիթարել,— ամենքիս ճամփեն էլ վաղ թե ուշ էդ է: Եկողը պիտի երթա:

— Գիտեմ, տղաս, գիտեմ, գիտեմ,— ասաց նա՝ մատով հողը փորելով,— բայց մարդու սիրտը խոսք չի հասկանում...

Լռություն: Ապա խոր հառաչեց:

— Ա՛խ, օ՛ֆ... ողորմած հոգին պիտի մեռներ ու ինձի էսպես թողներ պատերի տակ, փեսաներիս հույսին: Մեղա՛ քեզ, աստվա՛ծ, մեղա՛, թող ծանր չլինի քեզ, թե որ ասեմ. քու Շողակաթ աղախնուն թե որ պիտի տանեիր քովդ, ինչի՞ ավելի կանուխ չտարար, քանի ես դեռ... հաջորդ բառերը կուլ տալով.— ժառանգի համար է խոսքս: Ուրիշ բան չմըտքես:

— Վարո՛ս ամի, արժի՞ միթե ժառանգի համար այդքան ցավել և այդպիսի դառն խոսքեր ասել,— կես հանդիմանիչ, կես կարեկից եղանակով ասացի ես:

Թերևս սրտի դառնությունից ակամա ժայթքեց Նրան այս տմարդի բաղձանքը, որից սակայն ես շատ վատ ազդվեցի, և նա նկատելով այս, կարծես իրեն արդարացնելու համար, ավելացրեց.

— Խղճմտանքս տանջում է ինձ... մարդ է՞լ իրեն կնոջ մահն ուզենա... Բայց ի՛նչ ասեմ, չգիտեմ: Ինքը մեռավ՝ գընաց. էգուց էլ ես կմեռնեմ, կերթամ՝ մեր անունը աշխարքիս երեսից կջնջվի, հիշող չի լինի, ասել է՝ որ ոչ եղել ենք, ոչ էլ բան... Ժառանգն է մարդուս կյանքը. ժառանգ ունես՝ ասել է դու կաս, կապրիս, քեզ մահ չկա, ծուխդ կա աշխարքի վրա, նորեն քեզի համար աշխարքը կա...

Դու էս բաները չես հասկանա, դու դեռ երիտասարդ ես:

Անցավ ավանդական «քառասունքը», երբ անջեցյալի մահից քառասուն օր հետո ընտանիքի անդամները պաշտոնապես «սգահան» էին լինում, դառնում էին կյանքի ընդհատված առօրյային, գոնե արտաքնապես, և հաճախ վիշտը իրենց հոգում անթեղելով:

Վարոս ամին քառասունքից հետո էլ տևական և լիակատար տոգի մեջ էր՝ միշտ մռայլ, միշտ մտամփոփ: Դեմքը այլևս ածելի չտեսավ, մորուքը երկարեց, և ճերմակ մազերը օրեցօր հաղթեցին անին:

Աղջիկների գնալուց հետո Վարոս ամին մնաց մենակ, մի ծառայի հետ, այս դատարկված տան տխուր լռության մեջ:

Նրա հացը հարևաններն էին թխում, կովերն ու ոչխարները հարևաններն էին կթում:

Իր հորեղբոր այրին, մի պառավ կին, օրը մի անգամ գալիս էր՝ տունը իբրև թե կարգի բերելու: Ի՞նչ կարող էր անել խեղճ, տկար պառավը: Մի բան վերցնում էր՝ մի ուրիշ տեղ դնում, մի երկու ավել զարկում թոնրի շուրջը և քթի տակ անընդհատ խոսում Շողակաթի հետ:

— Աղջի Շողո՛, հա՛րս ջան, վա՛խ, լուսս թափվեր... ձեռքովդ շարած կարասներդ, ծալքդ... Էս ի՛նչ անասուած բան արիր, ո՛ւմ թողիր ձագուկներիդ, խեղճ, ջրատար Վարոսին... Ո՛ւր գնացիր, հա՛րս ջան...:

Բարեկամները խորհուրդ էին տալիս Վարոս ամուն — արտերը վարձու տալ, տունը ծախել, տանմեջը, տավարը առնել գնալ աղջիկներից մեկի մոտ տեղավորվել, այնտեղ պատսպարվել:

Վարոս ամին գլխի ժխտական շարժումով, առանց խոսքի, մերժում էր նրանց խորհուրդը:

Հասակակիցները խորհուրդ էին տալիս Վարոս ամուն — մի տարեց այրի կին բերել՝ տունը դարձնելու համար, իհարկե ամուսնանալ հետը, որ ծեր, անօգնական օրերին իրեն շահե, խնամե:

Վարոս ամին լուռ լսում էր նրանց՝ աչքերը հեռավոր մի բանի հառած...

Հունձի ժամանակը հասավ: Վարոս ամին մշակների հետ

արտերը հնձեց, կալը կալսեց, հարդը մարագը լցրեց, ցորենի մի մասը հորեց, մյուս մասը տարավ ջաղաց, ալյուրը բերեց, ամբարեց: Աշնան բերքերով տունը լցրեց, ձմռան պատրաստությունը, նախկին տարիների պես, լրիվ կատարեց:

Եվ երբ ամեն բան ավարտած տեսավ, մի օր էլ խնամքով սափրվեց, հագավ «դրանավոր» (տոնական) լավ զգեստները, տան պահպանությունը հանձնեց ծառային, ձին նըստավ, և իր մտադրության մասին առանց ուրիշ մեկին մի բան ասելու, գյուղից գնաց:

Երկու շաբաթ անց վերադարձավ՝ մի երիտասարդ կին ձիու գավակին առած: Զարմացած դուռ ու դրկիցներին և բարեկամներին անվերապահ հայտնեց, թե սա իր կինն է՝ եկեղեցիով օրինավոր պսակված:

Համեմատաբար երիտասարդ և գեղեցիկ մի ալրի կին էր նա. չքավոր ընտանիքից: Գյուղերից մեկում գտել էր նըրան, այնտեղ էլ պսակվել:

Սկեսցին գյուղում Վարոս ամուն ծաղրել և քննադատել:

— Լիկած, փտած Վարոս ամին ո՞ւմ համար է բերել էս ջահել հարսը: Կանայք ասում էին.

— Էս անպատիվ Վարոս չեղածդ ի՞նչ ասավ էս քաջը բերեց լուսահոգի Շողոյի տեղը: Տղամարդ ասածդ շուն է, շուն, ո՛չ ամոթ ունեն, ո՛չ աստծուց վախ:

Ծերունիներն ասում էին.

— Ցնդել է Վարոսը, ցնդել: Խելոք մարդ գիտեինք իրան, էս ինչ գեշ օրինակ տվեց աշխարքին:

Սակայն Վարոս ամին, երիտասարդացած, անցնում էր գյուղի փողոցներով, գլուխը հպարտ բռնած, առանց ուշ դարձնելու ականջին հասած չարամիտ կամ ծաղրական խոսքերին: Եվ կրկնակի եռանդով, ուրախ-զվարթ, աշխատում էր տանն ու դրսում, հոգատար ձեռքը տավարի և ոչխարների վրա:

Ամուսնությունից յոթն ամիս հետո, Վարոս ամու կինը մի արու զավակ աշխարհ բերեց:

Վարոս ամու հպարտ ուրախությանը չափ ու սահման

չկար: Թևեր առած թռչում էր: Հիմա ժառանգ ուներ և ամբողջ աշխարհը իրեն էին վերադարձրել:

Վարոս ամին երեխան մկրտեց, անունը դրեց Մնացական:

Սակայն գյուղում սկսեց ծայր առնել բամբասանքն ու խծբծանքը Վարոս ամու կնոջ մասին:

Բամբասանքները ճամփա էին կտրել և հասել նրա ականջին: Շատ ազդվել էր նա, շատ տխրել և մանավանդ խիստ զայրացել, որ իր կնոջ անարատ պատիվն այնպես անարդար կերպով անարգում էին չարաթույն լեզուները՝ անտեղի, լիրբ զրպարտանքներով:

Մի առավոտ Վարոս ամին եկավ ինձ մոտ:

— Դու գիտնակ մարդ ես,— դիմեց ինձ,— գրքերդ մեկ բաց՝ տեսնենք: Տեսնենք թե՝ իմ տարիքի տեր մարդուց ծրնած օխթնամսեկան երեխան կարո՞ղ է ապրել:

— Իհարկե, կարող է ապրել: Ոչ մի կասկած,— հանգրտացրի նրան:

— Նորից ասում եմ, իմ տարիքի տեր մարդուց, կուզեմ ասել, ինձնից ծնած երեխան,— և շեշտեց «ինձնից» բառը:

Աչքերիս մեջ կարդալով իմ զարմանքը, Վարոս ամին հուզված ասաց.

— Դու չես լսել, որ գեղը վրաս հաչում է, թե տղան ինձնից չէ, թե՝ հետը բերովի է:

Ես չգիտենալ ձևացրի:

— Հա, գեղը որ կա՝ անասունված, անխիղճ, անմոթ բան է...— Եվ քիչ հետո հարեց.— բայց ամենագետ աստծուն հայտնի է, որ երեխան իմն է: Կնիկս անարատ է, կընիկս անմեղ է թե՛ աստծու, թե՛ իմ առաջ:

— Դարդակ խոսքերին ուշք մի՛ դարձրու, Վարոս ամի,— ասացի ես.— միայն երեխային լա՛վ պահիր, լա՛վ կերակրիր: Յոթնամսականաներին ավելի լավ պիտի խնամել:

— Պահել... հոգիս չեմ խնայի, աչքիս լույսը կթափեմ, լավ կպահեմ, ձեռքիցս եկածն ու չեկածը կանեմ:

Եվ տեղից վեր կենալով, ինքնավստահ կեցվածք առավ, խոսեց, կարծես խոսքը իրեն ուղղելով.

— Հիմա ես է՛լ մահից վախ չունեմ: Աշխարք ոտք ելնի իմ դեմ, է՛լ ինձ չի կարող հաղթել: Հիմի թող գեղը հաչե, ինչքան կուզե:

Եվ Վարոս ամին արհամարհոտ աչքերը գյուղացիների վրա հածելով՝ անցնում էր գյուղի փողոցներով՝ գլուխը բարձր բռնած:

Երջանիկ և անդորր սրտով, երեխաի գիրկն առած, նըստում էր դռանը, մի աչքը թանկագին ժառանգի վրա, մյուս աչքը տուն ու տեղի, տավարի և ոչխարի վրա:

Անցան շատ տարիներ:

Արտաստահմանից վերադարձա հայրենիք: Գնացի Շիրակ, մեր գյուղը այցի:

Իմպերիալիստական պատերազմից առաջ մեռել էր Վարոս ամին: Թուրք բանակը արշավել էր Շիրակ, ավերել էր գյուղը, կոտորել էր բազմություններ և ավար առել ինչքերը:

Վարոս ամու կինն ու տղան փախել էին լեռները: Աս-քյարները կողոպտել և ավերել էին նրա տունը նույնպես:

Հրի և սրի միջից, արցունքի և արյունի միջից մարմին էր առել Սովետական Հայաստանը: Սկսվել էր խաղաղության և վերակառուցման անձնախընթաց շրջան: Ժողովրդի ողջ մնացած մասը վերադարձել էր իր ավերակ բույները՝ նորից վերաշինորոգելու և նորից վառելու պապենական օջախները:

Խնդրանքիս վրա կանչեցին իմ հին բարեկամ Վարոս ամու որդուն: Քառասնյոթն տարեկան մի պարթև երիտասարդ, հոր քթից թռած, հոր պես բարձրահասակ, կայծուն աչքերով, կանգնեց առաջս:

Մնացականը նորից շինել էր հոր տունը, հին հիմքերի վրա, բայց ճաշակով, հարմարագույն, մեծ լուսամուտներով և բարձր առաստաղով:

Ամուսնացել էր, ուներ երկու զավակ—մի տղա և մի աղջիկ:

Տղայի անունը դրել էր Վարոս, աղջկա անունը՝ Շողակաթ:

Նորից կանաչել էին գյուղի արտն ու արոտները, նորից

քաղցր բառաչյունով տավարը գալիս էր հանդից և լիզում էր գոմերի առջևը տարածուն աղած հին ապաքարերը:

Եվ փոքրիկ Վարոսը զվարթ խաղում էր գառների հետ մեծ մոր սիրագորով աչքերի ներքո, և նորից Վարոս ամու շեն տնից ծուխ էր ելնում և փռվում էր համայնական դաշտերի վրա և Վարոս ամու գերեզմանի վրա՝ իր օջախի անուշ ծուխը...

1927

«ՀԱՄԲԵՐԱՆԴԻ ՉԻԲՈՒԽԸ»

Երկաթուղին ոլորվում էր Շիրակի ծաղկած դաշտերում: Վագոնի լուսամուտից նայում էի այնքան սիրելի հողի կտորին, ուր խաղաց ու անցավ իմ բախտավոր մանկությունը:

Ահա՛ և Օհան-ամու ջաղացը: Այստեղ էր մի ժամանակ չխկչխկում Օհան-ամու ջաղացը: Առուն չորացել է հիմա, ջաղացը ավերվել է վաղուց, միայն երեք ուռի և մի բարդի է մնացել այն փոքր ծառուտից, որ տնկել էր Օհան-ամին ջաղացի շուրջը:

Ինչքա՛ն անգամ ենք նստել այս ծառերի տակ Օհան-ամու հետ և զրույց արել:

Այն օրվանից շատ բան է կուլ գնացել ժամանակի անհունության մեջ՝ անկրկնելի և անվերադարձ.— և Օհան-ամին էլ չկա, վաղուց մեռել է նա և թաղված է այս ծառերի տակ իր սրտի ուզածի համաձայն:

Եվ հիշում եմ քո իմաստուն խոսքը, Օհան-ամի. «Մարդը կերթա, աշխարքը կմնա»:

Մեր ջաղացից կես ժամ հեռու, Ախուրյանի զառիթափի վրա էր գտնվում Օհան-ամու փոքրիկ ջաղացը մի աղորիքով, որ դառնում էր Ախուրյանի մեջ թափվող մի կարկաչուն առվակի ջրով: Իր ձեռքով էր շինել Օհան-ամին ջաղացը և ընդամեն կիպ տնակը, և իր ձեռքով էլ մշակում էր ոչ մեծ բոստանը, որ փռված էր ջաղացի շուրջը մինչև գետի եզերքը:

Երբ մեր ջաղացն էի լինում՝ հաճախ այցի էի գնում Օհան-ամուն: Թեյ ու շաքար էի ևվեր տանում նրան, որ միասին թեյ խմեինք և լսեի նրա զրույցները:

Շա՛տ վաղուց է այդ: Շա՛տ տարիներ առաջ, այն պար-

1

զասիրտ և միամիտ ժամանակները, երբ Օհան-ամու ծերունի ընկերները, գյուղից գյուղ, ցույները շավիղների քարերին ծեծկելով, քթերի տակ մի հին բան թոնթռալով, կորամեջք ու տնկտնկալով գալիս էին ջաղացը հատկապես Օհան-ամու ընտիր թյությունից մի չիբուխ քաշելու և հնություններից միերկու խոսք իրար հետ արտաքց խոսելու համար, և նորից տնկտնկալով վերադառնում էին իրենց գյուղերը:

Պատահի երևակայությանն համար երևում էր լուրջ, մենակյաց Օհան-ամին, իբրև նահապետական դարերի մի իմաստուն, որ վաթսուն տարիների գագաթից նայում է աշխարհին, միտք է անում աշխարհի բանը՝ ծխելով իր «համբերաքի չիբուխը»:

Իմ թարմ զգայությանն վրա խորհրդավոր տպավորություն էր թողնում նրա անցրած ու ապրած կյանքը և իր ապրումներից գումարած մտքերը:

Մինչև քառասուն տարին Օհան-ամին ապրել էր իրեն պապերի գյուղում, աշխատել էր օր ու գիշեր, ցանել ու հընձել, Կողբ ու արաններ քիրա-քյարվանի գնացել, ծնողներին խնամել ու պատվով թաղել, քույրերին ամուսնացրել, ինքն էլ ամուսնացել և որդիներ հասցրել:

Քառասուն տարեկան հասակում գյուղում հողաբաժին եղավ: Հարուստներն իրենց մեջ բաժանեցին բերրի հողերը և ստերջ հողերը տվին թույլերին, խեղճերին:

Օհանը զայրացավ: Վառեց ու բորբոքեց հողազուրկների արդար վրեժը: Գյուղի զրկված մասը ըմբոստացավ: Հարձակվեցին, ծեծեցին ռեսին ու մի քանի հարուստների:

Գանգատը հասավ քաղաք: Եկավ կաշառված պրիստավը մի քանի յասավուլներով (ոստիկան), հավաքեց ըմբոստներին, բարկացավ, ոտները գետին զարկեց ու քաշեց ընդհանց մտրակի տակ:

Արյունը կոխեց Օհանի աչքը. ձեռքը ձգեց պատահած քարին և նետեց պրիստավի կրծքին: Ծեծվողները թև առան, հարձակվեցին յասավուլների վրա, գինաթափեցին նրանց, քարահալած արին պրիստավին ու ոստիկաններին և գյուղից քշեցին:

Երրորդ օրը, երբ կազակները եկան նրանց ձերբակա-

լելու՝ նրանք գյուղից փախել էին արդեն, ելել էին սարերը, «ղաչաղ» էին ընկել:

Կարճ ժամանակի ընթացքում փախստական գյուղացիները մեկ-մեկ իջան գյուղը, ընկան հարուստների ոտները, ներում խնդրեցին և ներվեցին:

Օհանը մնաց չորս ընկերով փախստական: Մի ժամանակ հետո, չորս ընկերն էլ եկան, վզները դրին հարուստների շեմին, ներում ստացան: Բայց Օհանը մնաց մենակ և անասան: Նա չզիջեց: Մերժեց հարուստների պատգամը, որ ուղարկել էին նրանք — հանձնվել, զղջալ և թողություն ստանալ:

Մի օր էլ, մատնությամբ, մի գյուղում բռնվեց նա: Չեռևերը կապեցին հետևը, տարան Գյումրի քաղաքը, դատեցին և չորս տարվա բանտարկություն վճռեցին:

Երբ Օհանը բանտից ազատվեց, գյուղն եկավ, որդիները հասել էին արդեն, ուժովցել և հարստացել, բայց իրեն մենակ զգաց գյուղում, չուզեց տեսնել իր դավաճան, փոքրոգի ընկերների երեսն անգամ: Չուզեց մնալ գյուղում, որպեսզի ստիպված չլինի պատահելու իր թշնամի հարուստներին:

Արդեն բանտում երազել էր մեկուսանալ — «աշխարհաթող» լինել: Եվ հիմա, բանտից ելնելով՝ վճռեց և վերջնականապես տեղափոխվեց ջաղացը: Եվ միայն շատ անհրաժեշտ դեպքերումն էր գյուղ գնում:

Անզոր եղան կնոջ և որդիների թախանձանքները՝ բեկանելու փայփայած նրա իղձը:

«Քանի ողջ եմ,— այսպես ասաց ու այսպես կտակեց իր որդիներին.— Էստեղ կաշխատեմ կապրեմ. երբ մեռա, էստեղ թաղեցեք ինձի՝ իմ ծառներիս տակը»:

Եվ այսպես «աշխարհաթող» եղավ Օհան-աղին:

***

Այսօրվա պես հիշում եմ իմ այցելած օրերից մեկը:

Ամառ էր: Ախուրյանում լողանալուց հետո գնացի Օհան-աղու մոտ զրույց անելու:

Օհան-աղին թիկն էր տվել ծառերի տակ: Մի փոքրիկ արահետ մասնակի ծածկում էր նրա գլխի վրայ, ներսում

Ա 54962

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՈՒՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

մազերը: Ճակատը շա՜տ կնճռոտված էր երևում: Ահագին ձյունափայլ մորուքը խառնվել էր բաց կրծքի ալեխառն մազերին: Ինքնամփոփ ծխում էր չիբուխը: Ոտների տակ մրափում էր Ալաքը, Օհան-ամու հավատարիմ, հսկա գամփռը:

Բարև տվի և թեյ-շաքարը դրի կողքին: Խորշոմների մեջ կորած խոհուն աչքերով նայեց ինձ:

— Գալդ բարի, աղախպորս տղա,— այսպես էր նա միշտ կոչում ինձ:

Միջօրեի ճպուռներն արևաբորբոք ճոռում էին, կարծես արևի ձայնն էր այդ, կամ ուղղակի, արևի ճառագայթներն էին ճոռում այսպես բարկ ու բորբոք:

Ջաղացը ծուլորեն չխկչխկում էր: Ջաղացի դռանը կապած կար մի խղճուկ էշ, որ եռանդով քաշում էր մեջքը պատի աննկյունին: Հավերը քջուջ էին անում այս ու այն կողմ:

Ինձ տեսնելով մոտեցավ Օհան-ամու պառավը, որ եկել էր ամուսնուն այցի:

— Ես՝ չէ, թող աղեն ըսե,— դիմեց ինձ,— հայը էսօր քեֆ չունի, կ՚ըսե՝ մեջքս կցավի: Էս չոլում ո՞երիք մնա, ինչի՞ համար: Թող տուն գա, առոք-փառոք ապրի. ջարդվելիք հարսներն ինչի՞ համար են, թող շահեն: Էս օր-ծերությանը դադար չունի. մեկ գլուխ կդատի ու կաշխատի: Ի՞նչ պիտի տանի աշխարքեն:

— Կնի՛կ, ո՞երիք փնթփնթաս. քանի հազար անգամ ասել եմ քեզի — ես աշխարհպող եմ եղել. ես էլ գեղն եկողը չեմ: Խոսքս խոսք է: Աշխատե՞լ: Քանի ձեռքս բերանս կհասնի, պտի աշխատեմ: Հո հարստության համար չե՞մ դատում. իմ աչքս կուշտ է: Տղերքս իրանց համար, ես ինձ համար: Իմ հացս իմ քրտինքովս պիտի ուտեմ: Ես քեզնից լավ գիտեմ, որ աշխարքից բան տանող չի եղել, բայց մենակ թե՝ մարդս էս աշխարքն եկել է աշխատանքի համար: Ձեռքս բան, ոտքըս՝ գերեզման: Պրծա՞նք:

Դե՛ հն, էս չայ-շաքարն առ, սեղան բաց, չայդանն էլ դիր, աղախպորս տղի հետ հաց ուտենք, չայ խմենք:

Երբ պառավը գնաց, ես հարցրի.

— Օհան-ամի, հիվա՞նդ ես:

— Չէ՛, ջանըմ, մեջքիս ցավը հո նոր չէ, հին բան է,

բանտից եմ հետս բերել: Հիմի հո դպա ջահելություն չե՞նք երթա. տվողը ինչ որ տվել է, հիմի քիչ-քիչ ետ կառնի: Էդպես է աշխարքիս բանը: Ես էլ կամաց-կամաց ճամփա կիատկեմ դպա հորս քովը:

Ու չիբուխը խրելով գոտկի ծալքը՝ թեթև շարժումով ոտքի ելավ:

— Էրթանք բոստանը, մեկ քիչ սոխ, թարխուն քաղենք: Էսօր կնիկս ինձի համար գառով փլավ է բերել, ուտենք իրար հետ:

Մարգերի ճեղ արահետով քայլում էր Օհան-ամին՝ առանց գավազանի. նա տակավին գավազան չէր գործածում: Ասլանը կրկնակոխ՝ լեզուն դուրս ձգած՝ հետևում էր նրան:

Ես գնում էի նրանց հետևից:

Օհան-ամին կորաքամակ էր արդեն, գլուխը բավական թաղվել էր ուսերի մեջ. հատ, բայց կարճ ոտները դեռ տոկուն էին ու ամուր:

Ասլանը՝ կապտավուն մազերով աժդահա գամփռը, իր տոհմի երրորդն էր, որ ապրում էր այստեղ: Նրա եղբայրներն ու քույրերն ապրում էին գյուղում, Օհան-ամու տանը:

Այս Ասլանից առաջ երկու Ասլան ապրել էին այստեղ՝ իրար հաջորդելով և նրանց թաղել էր Օհան-ամին բոստանի ծայրում ու վրաները քար ձգել:

Օհան-ամին թարմ կսկիծով մեկ-մեկ հիշատակում էր նախորդ Ասլանների բարեմասնությունները, նրանց հետ կապված դեպքերը, նրանց անձնազոհ քաջություններ:

Ասլանը Օհան-ամուց մի վայրկյան չէր բաժանվում. երբ իրար չէին տեսնում՝ անհանգիստ ու ջղայնացած որոնում էին իրար:

Իրար հետ սեղան էին նստում: Օհան-ամին ուտում էր իր ճաշը, Ասլանը՝ իր լափը:

Ձմռան երեկոները, Օհան-ամին բուխարիկի կողքին նըստած՝ լուռ, իր չիբուխն էր ծխում, Ասլանը նրա ոտների տակ, գլուխը թաթերի վրա դրած, լուռ, չիբուխի ծուխի պարույրներին էր հետևում:

Երբ մեկը Ասլանի մոտ «Օհան-ամի» արտասաներ, նա

աչքերը կբանար լայնորեն, ականջները կսրեր, պոչը կշարժեր: Օհան-ամու անունը թինդ էր հանում Ասլանի հոգին:

Վա՜յ թե մեկը Օհան-ամու բացակայության ժամանակ ձեռք դիպցներ նրա որևէ իրին՝ Ասլանի զայրույթին չափ չէր լինում, կհաչեր ու կգազազեր մինչև տերը գար. սակայն ինքը սիրում էր խաղալ Օհան-ամու իրերի հետ: Հաճախ այսպիսի հանաքներ էր անում: Թաքցնում էր Օհան-ամու թյությունի քսակը կամ թաշկինակը, և սուտ-քուն մտած, ներքին հրճվանքով նայում էր՝ թե ինչպե՞ս իր տերը քրքրում է ամեն մի անկյուն՝ կորցրածը գտնելու, և հետո, ինքը քնած տեղից ելնում էր, որոնում, գտնում իրը և ուրախ-ուրախ բերում հանձնում Օհան-ամուն:

Մի օր, եղբորս երեխաները Ասլանին բռնել էին դաշտում, ուժով տարել էին մեր տուն, փակել մի սենյակում, առատ միս դրել առաջը, որպեսզի այս կերպով սովորեցնեին մեր տան վրա: Բայց երկու օր Ասլանը գրեթե ոչինչ չէր կերել, անընդհատ ոռնացել էր՝ մինչև որ մայրս արձակել էր նրան:

Եվ Ասլանն իսկույն, խելակորույս, սլացել էր Օհան-ամու մոտ:

Երբ ես մի օր Օհան-ամուն պատմեցի Ասլանի կրած տանջանքը մեր տանը, նա հանգիստ արտով առաց.

— Թագավորի պալատն էլ տանես ու ամեն օր հավ ու լոր տաս, էլի պտի պրծնի, գա:

Եվ ավելացրեց.

— Էս շուն է. հալա մեկ ասա՝ շուտ՜ուն: Էս մարդ արարած չէ: Էս՝ կնիկարմատ չէ: Էս շուն է — հավատարմություն: Մարդու բնույթն իսկի չի կրնա հասկանա շան բնույթը: Մարդը սուտ է, հավատարմությունը մարդու համար անհասկանալի բան է:

***

Նստեցինք ծառերի տակերում: Ասլանը սեղանակից էր մեզ՝ մի փոքր հեռու պպզած: Մենք գառի ոսկորները նետում էինք նրան. նա էլ ճարպկորեն այնպես էր դիրքավո-

րում գլուխը, որ ոսկորներն ուղղակի ընկնում էին երախի մեջ և մի ակնթարթում հզոր ատամներով փշրում էր ոսկորները:

Օհան-ամին մի բաժակ օղի խմեց, մի բաժակ էլ ինձ մատուցեց.

— Խմե՛, աղախնորս տղա, խմե, որ ուրախանանք: Էս աշխարքում գլխավոր բանը ուրախասիրտ ընկնելն է: Ուրախությունը բախտավորության կեսն է: Ինչ որ ընկնելու է՝ պտի ընկի. էս գլխեն ի՞նչ տալացուք ունենք տխուր ընկելու: Էս սհաթն է մեր ձեռքը. քանի էս սհաթը մեր ձեռքն է՝ ուրախ ընկնենք, մեկէլ սհաթի տերը մենք չենք, կարելի է կանք, կարելի է չկանք:

Օհան-ամին բաժակը կրկնեց:

— Ես չար բան սիրող չեմ, կռիվ ուզող էլ մարդ չեմ. ու վիճակիցս էլ շա՜տ գոհ եմ: Էս ջաղացը, էս կտոր հողը շա՜տ է ինձի համար: Աշխարքը որ բաժնեն, կարելի է էսքանն էլ ինձի չհասնի: Էնքա՜ն մարդիկ կան—անտուն, անհող, ետնյալ աղքատ...

— Է՛յ գիտի, Միրզա Մեհդի, ականջդ կանչե՝ թե որ ողջ ես. թե էն է՝ պառկել ես հողի տակ, տղերքդ ողջ ընկեն: Էսպես մեկ տաղ կերգեր բանտի մեջ, երկու տարի միալար: Էդ տաղի խոսքերը մտքիս մեջ տպվել են: Քսան տարի է՝ ամեն օր կըսեմ ինձ ու ինձ:

Կանաչ դաշտի պարզ հոլիկը
Շահի ոսկե քյոշքից լավ է,
Գրտինքովդ կերած հացը
Սուլթանների ճաշից լավ է:
Շահիրների մուղամներից
Քամու ազատ շունչը լավ է:
Հարուստ, հպարտ ախպորիցդ
Սրտամոտ օտարը լավ է:

— Լավ խոսքեր են,— ասացի ես,— բայց ո՞վ էր Միրզա Մեհդին:

— Էն ամամ էր: Իմ տարիքիս մարդ էր: Կեղծ փող էին գտել քովը, բերել կոխել էին բանտը: Երկու տարի իրար հետ շա՜տ սիրով ապրանք, կողք-կողքի, մեկ ամանից էինք ուտում: Իմ ու քու չունեինք: Չգիտեմ՝ մեղավոր էր, թե փոր-

ձանքի մեջ ընկած.— բանտում բռնված մեկը չկա, որ իրան մեղավոր հաշվե, ամեն մարդ իրան արդար, անմեղ է հաշվում.— բայց ազնիվ, պատվական մարդ էր, իմաստուն մարդ էր, խելքի ծով. շա՜տ երևելի խոսքեր ուներ:

Կնստեր թախտի վրա, չիբուխը կքաշեր միալար ու կըսեր.— «քաշենք համբերանքի չիբուխը մինչև ազատության դուռը բացվի»: Ես էլ նրանից սովորեցի էդ խոսքը, ես էլ կքաշեմ հիմի համբերանքի չիբուխը՝ մինչև...

— Կնի՜կ, մեկ հատ էլ լից,— ընդհատելով իր խոսքը՝ Օհան-ամին դիմեց կնոջը, և լիքը բաժակը վերցնելով, կարծես, մի վայրկյան մեզնից անջատվելով՝ հայացքը հառեց հեռուն:

— Կենա՜ց, Միրզա Մեհդի, ախպեր ջան,— ասաց և թերևը սրբելով դարձավ ինձ.

— Հա՜, էն կուզեի ասել՝ աշխարքը էն գլխից համբերանք է եղել ու կա...

Շա՜տ տեսակի մարդիկ կային բանտը — եփված, աշխարհատես: Հայ ասես, թուրք ասես, էլ քուրդ, ըռուս: Վարժապետ կար, վաճառական, գրել-կարդալ գիտցող մարդիկ: Շա՜տ բան սորվեցի էդ մարդկանցից: Վատ ականջ փողը քուկը չէ, կրնա ուրիշը գողնա տանի, բայց ինչ որ սորվեցիր՝ էն քուկդ է:

Մեկ լավ ջահել տղա կար՝ անունը Սարգիս: Հարազատ ախպերը քառատուն տեսակ զրկել էր նրան, վերջն էլ հողը ձեռքից ուզեցել էր խլե: Սարգիսը կրակ էր բացել վրեն, վիրավոր էր արել, բայց չէր սպանել: Բանտ էին քցել մեկ տարով: Բանն աջողի, անուշ տղա էր, գառի պես, պատվով:

Էդ ագահ ախպոր վրա Միրզա Մեհդին ըսավ:

— Ժամանակով աճառի հողը մեկ մարդ կուգա, կիջնի մեկ գեղ ու կխնդրվի՝ իրան դրկից շինեն, հող տան, ապրի: Գեղի մեծերը կըսեն.— Էս հողը քեզի. կըսե՝ քիչ է: Կըսեն.— Էն մեկն էլ քեզի. կըսե. Ծորեն քիչ է. Էն ժամանակ գեղի մեծերը կըսեն.— Է՜յ դու ծակաչք մարդ, ահաւ մեր հանդը ադաջդ է, վազե՜, ինչքան ոտքդ կտրեց՝ էն քեզի: Էս մարդն էլ Էնքա՜ն կվազե, Էնքան կվազե, որ վերջը շունչը կկտրի, միրտը կպատռի, կընկնի, կմեռնի... Հիմի քու ախսէրն է.

պատիժն առավ, մահը մոտիկուց տեսավ: Էդքանն էլ բավական է:

— Մեկ հատ էլ խմենք ու ըսենք՝ հերիք է:

Իմ մերժումիս վրա՝ ինքը խմեց:

— Բանտի մեջ մեկ կոտր ընկած վաճառական կար, շատերի փողը կերել էր: Ծիծաղու բան էր: Ում փողը որ կերել էր, նրանց շատերից ամեն օր ուտելիք ու խմելիք կստանար: Էդ բանի վրա ինքը կըսեր թե՝ ես Նոյ Նահապետի պարտապանն եմ: Ըսել է թե՝ ջրհեղեղի ժամանակ, երբ որ տապանը ջրերի վրա էր, մեկ մարդ լող է տալիս դպա տապանն ու գոռում.— Նո՛յ ջան, ճոպանը քցե, տապանդ ելնեմ: Միտքդ չէ՞, որ դու եղ չունեիր, քեզի մի տիկ եղ տվի: Նոյ Նահապետը չլսելու տված ու մտքի մեջ ըսավ.— Ազատեմ, հետո՝ պտի կանգնի, եղը պահանջե: Թող ջրի տակն անցնի:

Մեկ ուրիշ մարդ մոտեցավ, թե՝ Նո՛յ, ազատի ինձի, դու լավ մարդ ես: Էն տարին ալյուր չունեի, մեկ ջվալ ալյուր փոխ տվիր... Նոյ Նահապետը տղոցը, թե՝ ազատեցեք, խեղճ է: Ու մտքի մեջ ըսավ,— որ խեղդվի, ալուրս պտի կորի. ազատեմ, կելնի, կաշխատի, պարտքը կուտա:

Հիմի էլ էս իմ պարտատերերն են:

Օհան-ամին չիբուխը լցրեց և մի կում ծուխ առնելով ու արձակելով, շարունակեց.

— Էսպես, բանտ ըսածդ մեկ հավաք աշխարք է: Մեկնակ էն զանազանությունը կա, որ աշխարքում չբռնված գողերն ու արուներն են ապրում, իսկ բանտի մեջ՝ բռնված գողերն ու արուներնը:

Բանտի մեջ հասկացա բանի ուղն ու ծուծը. էն թե՝ ամեն, ամեն գեշ բաների պատճառն իմ ու քուն է: Գեղ ու քաղաք իրար գզում են փողի, հարստության համար, ուրիշի աշխատանքը տանելու համար:

Ու քանի որ փողը կա, մարդ չկա, քանի իմ ու քու կա, սեր ու խիղճ չկա: Էդտեղից էլ հարուստ ու աղքատ, զրկող ու զրկվող, բանտ արուներեղություն:

Թուրքը կըսե.— «Կոխվն ուրտեղի՞ց է:— Մեկը կուտե, մեկելը կաշե.— կոխվն էդտեղից է»: Ես իմ մասիս.— հաշիվս իստկել եմ աշխարքի հետ: Ուրիշ ի՞նչ կրնայի անել: Կովեցի,

բանտ դրին, մենակ մնացի: Մենակ մարդն ի՞նչ կարող է անել աշխարքի սարքի դեմ: Զարկես-զարկվես, օգուտն ի՞նչ: Գեղ պիտի կանգնի, որ գերան կոտրի: Հիմի՝ իմ ձեռքս առանց ուրիշի բերնից հաց փախցնելու՝ իմ բերնիս հացը կվատնակե, և էլ արդար հացս միշտ կիսել եմ ուրիշի հետ, ծանոթ-անծանոթի հետ:

Ուրախ աղմուկով թևերը թափ տալով եկավ խելառ Մըխոն:

— Միտո ջան,— ասաց Օհան-ամին,— նստի հաց կեր:

— Միտոն էնքան ուրախասիրտ է,— դարձավ Օհան-ամին ինձ,— գիտես թե ո՛չ պատռավանալ կա, ո՛չ մեռնել: Աշխարքը իրան վրա ծախես, մեկ կոպեկի չի առնի: Ամեներն հարուստ մարդն է, ինչու որ ամեներն գոհ ու կուշտ մարդն է: Ամեն բանի հաղթել է:

Միտոն Օհան-ամու քրոջ որդին էր՝ մանուկ հասակից որբացած: Մեծացել էր քեռու տանը, իբրև նրա որդիներից մեկը: Մոտ երեսուն տարեկան կլիներ, նեղ ճակատով, մեծ քթով և բարձրահասակ:

«Խելառշունչի մեկն է», գյուղացիները այսպես էին բնորոշել նրան: Խելառ-խելոք: Խոսում էր անկապ, տակից-վրայից, սարից-ձորից: Սակայն մշտական զվարթ տրամադրության մեջ էր այդ մարդը: Թվում էր, թե՝ երբեք տխրություն զգացած չէր կարող լինել նա: Աշխարհի չար իրերը նրան բարի դեմքով էին երևում: Ամեն բան ծիծաղի առիթ էր նրա համար — մահն էլ, մահի բոլոր տարրերն էլ — ցավ, հիվանդություն, ծերություն:

Միտոն ապրում էր Օհան-ամու հետ, թեև նրա մի ոտը ջաղացումն էր, մյուս ոտը՝ գյուղում: Միասին վարում էին իրենց փոքր տնտեսությունը՝ բաղկացած մի-երկու տասնյակ հավերից ու բադերից և մի կթան կովից: Միասին կռանում էին ջաղացաքարը և սարքի գցում:

Միտոն անչափ ընկիրված էր Օհան քեռուն, նրա խոսքին՝ հլու-հնազանդ: Եվ միայն Օհան-քեռու հարցերին էր լուրջ պատասխանում:

Միտոն գդակ չէր դնում, գարուն-ձմեռ: Մազերը թաղիքի

պես կպել էին գլխի մաշկին: Միայն սաստիկ ցրտերին բաշլուղ էր փաթաթում գլխին:

Երբ գդակ էին տալիս՝ նա մի կողմ էր նետում, ասելով.— «Իմ փափախս գտեք, տվեք՝ դնեմ. ուրիշը չեմ ուզե: Իմ փափախս վեցը հատ աբասի արժեր»:

Գյուղի երիտասարդները, յուրաքանչյուր անգամ նրան տեսնելիս՝ հարցնում էին.

— Մխո՛ ջան, փափախդ ո՞ւր է:

Եվ Մխոն ամեն անգամ, օրական հարյուր անգամ իսկ, միևնույն պատասխանն էր տալիս.

— Ի՞նչը:

— Փափախդ ո՞ւր է:

— Ո՞ւմ:

— Քու փափախդ ո՞ւր է:

— Փափա՞խս, հա՛: Քամին տարավ փափախս: Չգիտեմ, խոլեռի տարին էր, թե քեռուս ձիու կորած տարին, մեկ սաստանի քամի ելավ, աշխարք առավ մեջ, ջաղցի քարի պես պտտցուց, ֆոռացրեց: Ես մե մենձ քարի տակ մտա, քարը բռնի, տափ եղա: Մենակ փափախս տարավ, էդ տանելն է, որ տարավ: Հիմի վո՛վ գիտե, փափախս ո՞ր սարի գլուխն է կորել, ո՞ր ծովերու վրեն կտմբտմբա:

Ի՛նչ փափախ, ի՛նչ փափախ, վեցը հատ աբասի արժեր:

Մխոն մեղանի ափին ծունկի եկած՝ ձեռքին ընկածը խոթում էր բերանը և խնդումերես նայում Օհան-ամուն:

— Մխո, գե՞ղն էիր,— հարցրեց Օհան-ամին:

— Վո՞վ:

— Դու գե՞ղն էիր:

— Չէ, քեռի ջան, գնացել ճամփու վրեն կայնել էի էկող-էրթացողի հետ մե-քիչ խորաթա էնելու:

— Քեռի ջան,— բարձր ծիծաղով ավելացրեց,— ըսին թե՝ հոռոմցի Բայթո աղեն մեռել է, հա՛, հա՛, հա՛, մեռել է:

Եվ ծիծաղից դողում էր ողջ մարմնով:

Օհան-ամին աչքերը մի պահ գոցեց, ձախ ձեռքով տրորեց ճակատը և ապա աչքերը վրաս հառելով՝ ասաց.

— Գոող-գուխողի մեկն էր, աղքատի շապիկը վրայից

հանող: Տեղովը որ արև-արեգակ ըլներ էդ Բայթո աղեն, էլի մեկ մարդու չէր կրնա տաբացնե:

Ողորմի՜ կողքի մեռելներին...

Եվ մի երկու ումպ թեյից հետո՝ շարունակեց:

— Լավ կճանչնալի, ինչքան որ ագահ էր, էնքան էլ կծծի էր: Աշխարքը իրան տալիր՝ աչքը էլի մրջյունի տարած մեկ գարի հատիկի վրա կըլներ: Ագահ մարդու փորը կրնա կուշտ ըլնի, բայց աչքը միշտ անոթի կըլնի:

Էս մարդը բան էլ չէր ուտում, միալար կոխիզեր ու կոխիզեր: Տղա զավակ էլ չուներ. դիզածը մնաց փեսաներին: Էդպես է աշխարքիս բանը՝ կծծի մարդու վիզը ոջիլը կուտե, փողը՝ ուրիշը:

— Մարդը գնացական է,— ամփոփեց իր մտքերը Օհան-ամին,— նրա լավ գործը՝ մնացական. ըսել է՝ ինքն է մնացական: Ա՛յ, խոսքի օրինակ, էս շաքարը գցեցիր չայի մեջ, հալավ, կորավ, չկա. բայց չայն անուշցավ: Էնպես էլ լավ մարդը կմեռնի, բայց նրա լավ գործը աշխարքը կանուշցնե: Թե չէ առանց լավ մարդու աշխարքը շա՜տ դառն է՝ օձի լեղի...

— Վո՞վ ,— հարցրեց Միսոն:

— Բայթո աղի վրա է խոսքս, Միսո ջան:

— Որ մեկ բրդում հաց տար ուրիշին, ի՜նչը կծռվեր,— ասաց Միսոն բրքջալով:

— Ղուրբան եմ եղել էդ ճակատիդ, Միսո՜ ջան,— խրախուսեց Օհան-քեռին մի մեծ կտոր շաքար Միսոյին տալով, որը ղոթ-ղոթ աղմուկով մանրեց ատամների տակ:

Քայլ առ քայլ երեկոյանում էր: Լեռները ծխում էին մանուշակի գույների մեջ. արևածաղիկները ոսկե գլուխները կախում էին: Դաշտերից ու արտերից դանդաղ-դանդաղ տուն էին դառնում շինականները:

Ես վեր կացա գնալու: Օհան-ամին ուղեկցեց ինձ մինչև բոստանի ծայրը՝ ճանապարհին մի քանի մատղաշ վարունգներ քաղելով ինձ համար:

Բոստանի ծայրին կանգնեցինք: Օհան-ամին ծանրությամբ նայեց շուրջը — դաշտերին ու գետի փայլփլուն ոլորներին, դաշտերի մեջ ձգվող շավիղներին, նայեց հեռավոր

լեռներին, որոնց նայել է տասնյակ տարիների ընթացքում, և մայր մտնող արևին նայեց, ու չիբուխը վառելով ներս տարավ մի ումպ ծուխ, և ապա ծուխ ու հոգոց իրար խառնելով, ասաց.

— Է՛է՛հ, ծերացա՛նք, ըսել է՝ եկանք հասանք ծերին: Ամեն բանի ծերին, կյանքի ծերին, աշխարքի ծերին... Վնաս չունի: Մեկ խնդրանք ունիմ — քանի ողջ եմ, ոտ ու ձեռով մնամ, գետնին գերի չըլնիմ, աշխատեմ, ու էստեղ, ջաղացիս դուռը նստած, համբերանքի չիբուխս քաշեմ, ու ամեն օր լըսեմ բարի, ուրախ լուրեր աշխարքիս չորս դիերից, ամեն կողմերից: Էլ ուրիշ բան չեմ ուզի...

***

Իմ սիրելի՛ Օհան-ամի:

Շա՛տ և շա՛տ տարիներ են անցել այն օրերից, շա՛տ բան է խավարել իմ հիշողության մեջ, սակայն անջնջելի է մնացել քո նահապետական պատկերը իմ հոգում:

Եվ հիշում եմ միշտ քո անմոռաց զրույցները, և քո համբերանքի չիբուխի խաղաղ ծուխը աչքիս առջևն է դեռ, և քո հանգիստ, հնամենի ձայնը ականջումս է տակավին...

1928, Երևան

ՀՈՎՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Ավանդաբար կիրառվող մի սովորույթ կար Շիրակում, որ մեր քուրդ հովիվներն արածացնում էին մեր հոտերը մինչև աստվածածնա պասի երկուշաբթին, այսինքն՝ մինչև օգոստոսի սկիզբները:

Ապա ոչխարները հանձնելով տերերին, հովիվները՝ վարձերն առած, ծանրաբեռն էշերն առջևները ձգած՝ վերադառնում էին իրենց ղշլաղները՝ Երասխաձորի, Կողբի և Ղարաքաղի ձորամիջի քարանձավները:

Հովիվների չուից հետո՝ ոչխարները հովվում էին գյուղի պատանիները մինչև ուշ աշուն, մինչև ձյունը դնելը: Սակավաթիվ ոչխար ունեցողները հանձնում էին իրենց ոչխարները շատ ունեցողներին:

Երկու տարի ես հովվություն եմ արել բացարձակապես, միայն «արվեստի սիրուց»: Մինչև որ քաղաքում դպրոցները կբացվեին, և կսկավեին դասերը: Այն ժամանակ ես դժկամությամբ թողնում էի գյուղն ու հոտը՝ սիրելի ոչխարներս հանձնելով ուրիշին, և գյուղացիացած ու խարկված դեմքով գնում էի քաղաք, բանտարկվում դպրոցի ճնշող պատերի մեջ, ձեռք առնում ձանձրալի գրքերը և գերի դառնում վարժապետների խստապահանջ իշխանությանը:

Ես պիտի պատմեմ իմ հովվական օրերից մի օր, մի գիշերվա կյանք: Անհուն քաղցրությամբ ապրած մի գիշեր՝ բընական չկրկնվող: Անխառն ու անթերի մի գեղեցկություն:

Քառն-քսանմեկ պատանի ընկերներով հովվում էինք մեր ստվար հոտը: Ես 15—16 տարեկան էի, մեր ավագ ընկերը՝ Սումբատը, որին անդիմադարձ հպատակվում էինք, կլիներ 23 տարեկան: Ընկերներից մի քանիսը գինված էին հրացաններով: Օգոստոսի վերջին գիշերներից մեկն էր. լուսինը դեռ

ծայր չէր տվել: Հոտը մակաղել էր. մի-երկու ընկեր հերթով պահակ էին կանգնել: Գամփռները թափառում էին հոտի շուրջը:

Մենք հավաքվել էինք հոտին մոտիկ, ձորակի լանջից բխող աղբյուրի բոլորը: Գավերով կաթը դրել էինք ջրի մեջ, որ սառչի: Տավարի չոր աղբից խարույկ էինք վառել և վրան դրել մեծ կաթսան ջրով լի՝ թեյի համար: Գետնախնձորներ էինք թաղել պեծացած մոխիրների մեջ՝ խորովելու համար:

Ընկերներից ոմանք պառկել էին յափունջիների կամ թաղիքների վրա, ոմանք փռվել էին գետնին կողքի կամ մեջքի վրա, կամ բերանքսիվայր:

Սումբատը՝ հասակի և փորձի բերումով մեր հովվապետը, թիկն էր տվել մի մեծ քարի, ծխում էր հատ թղթով փաթաթած, խոշոր, կոպիտ գլանակը, որից մեծաքանակ կծու ծուխ էր ելնում, և հրամաններ արձակում՝ ահագին դաշույնը շարունակ ձախ կշտից առաջ մղելով: Երկու գամփռ, Սումբատի ոտների տակ, թաթերի վրա գլուխները դրած՝ խորունկ մրափում էին:

Բարակ հովը մեղմիկ սլսլում էր խոզաննների վրայով, ծղրիդները՝ մոտիկ ու հեռուն, ռիթմիկ ծղրտում էին, անտեսանելի հավքերը հնձած արտերի մեջ անուշ ճռճռում էին, և ոչխարները մլչում էին անհուն բարությամբ:

Հովը բերում էր գյուղերից ու ճանապարհներից շների ընդհատվող հաչերը, բեռնաբարձ սայլերի ճռինչները, և անորոշ ձայների բեկորներ...

Այս բոլոր ձայներն ու ձայնի հյուլեները ձուլվել էին մի անհասկանալի լռության մեջ, որ ինքնին մի ներդաշնակություն էր: Մի հազարամյա լռություն, որ սկիզբ ու վախճան չունի, ծորում էր հոգուս մեջ ու տարածվում մարմնիս բոլոր կետերում, և ինձնից դուրս, տարրացած ծավալվում էր մինչև անեզրության ափերը:

Եվ այս տարերային լռությունը երգ էր դարձել իմ հոգում:

Ես պառկել էի մեջքիս՝ գլուխս ձեռներիս վրա դրած, և նայում էի երկնքին: Մուգ թավշյա մի խորունկ երկինք, ուր, կարծես, հենց գլխիս վրա հավաքված էին բոլոր երկինքների

բոլոր աստղերը: Եվ կարդում էի ապագային ոսկետառ գիրքը, որ էջ առ էջ բացվում էր հիացմունքով վառված աչքերիս առաջ: Ապագա՜ — չքնաղ սպասելիքների, առումանդյա հույսերի անծայր Ծիր-կաթին:

Կյանքը՝ իրականապես, թվում էր ինձ մի կախարդական ճանապարհ, որի դռանը վրնջում էր ոսկեսանձ ձիուցգը, դոփում էր գետինը և ինձ էր սպասում: Եվ ինձ էր սպասում ճանապարհին կոիվ և պայքար, սեր և երազած աղջիկ, անկում և բարձրացում, հաղթանակ և միշտ հաղթանակ — ու քնավ մահ: Որովհետև կյանքը անմահություն էր նշանակում, և մահ չկար ճակատիս գրած:

Մի հոյակապ տրամադրություն, այսպիսի մի գերագույն ինքնագգացում:

Լսում էի հոգուս ներքին երգին, և արյունս ցնծագին կարկաչում էր երակներիս մեջ՝ ողջ էությունս ողողելով մի անպատմելի, տարերային երջանկությամբ:

Սիրտս պռունկե-պռունկ լցված էր մի հզոր, ամենատարած սիրով, որ հեղեղանման զեղում էր դեպի բոլոր արարածները և դեպի բոլոր իրերը: Ուզում էի գրկել և համբուրել և՛ ընկերներիս, և՛ բոլոր մարդկանց, և՛ ոչխարներին, և՛ քարերն ու սարերը: Եվ տիեզերքի բոլոր աստղերը համբուրել էի ուզում:

Եվ զգում էի ինձ բոլոր արարածների և բոլոր իրերի մեջ՝ անմեկին և անբաժան — և՛ թփի ու քարի մեջ, և՛ ջրի ու հողմի մեջ, և՛ սմպի ու աստղի մեջ... հյուլեացած ու տիեզերացած...

Երազանքից հասնեց ինձ ընկերներիս խոսակցությունը:

— Ա՜խ, մարդ էս աշխարքի մեջ կամ Քյոռօղլի պտի ծընվի, տղամարդ գա ու տղամարդ էրթա, կամ իսկի չծնվի: Քյոռօղլի եղնես, սիրածդ աղջկան առնես ու թոնես էս սարից էն սարը, դեմդ ելնողին թրի բերան տաս...— ասում էր մի ընկեր:

— Դրո՜ւստ է, մարդ էս աշխարքի վրա թե որ շուն էլ ծնվի, մեր Քյալաշի պես գելխեղդող շուն ծնվի,— վրա բերեց մի ուրիշը:

— Դո՛ւ ի՞նչ կմտքես, դարձավ ինձ առաջին խոսողը:

— Հա՛, Սողոմոն ջան, առնես ու թոնես էս սարից էն սարը, էս սարից էն սարը...

Եվ արդեն մեր պատանեկան սրտերը ամենից շատ երկու բան էր թիկնդ հանում — սերն ու քաջությունը: Բոլորս էլ երազում էինք՝ մեր սիրած աղջկան առնել ու ղաչաղ լինել, ավազակ դառնալ, ձուն հանել, աշխարհն սասանեցնել...

Վերադարձավ մեր ընկերներից մեկը, Հովակը, որ գընացել էր Սեհոյի հետ գյուղի բոստաններից մի բան «թոցընելու»: Պետք է ասել, որ գողությունը, և ավելացնել՝ հասարակ տեսակի գողությունը, հանցանք չէր մեր աչքում, այլ քաջություն ու շնորհք, ճարպկություն ու պարծանք: Հովվական կենցաղում սերունդից սերունդ քայլող մի գովված սովորություն:

Մեր ընկերները, բացառությամբ հովվապետի, հերթով գնում էին գյուղից հավ ու հավկիթ, բոստաններից վարունգ, գազար, գետնախնձոր թոցնելու: Երբ հերթն ինձ հասավ, ես, չհանդգնելով ուրիշի հավաբույնը մտնել, մորս հավերից չորս հատ թոցրի:

— Տո՛, ընչի՞ ուշացար,— գահավեժ շտապեց Նազարեթը,— մինչդեռ մենք լարված հետաքրքիր նայում էինք, թե Հովակը ի՞նչ բարիք պիտի թափեր մեր առաջը:

— Հորդ մեռելի գլխուն վառվող մոմը շինող մեղրաճանճին կփնտրեի: Էդոր համար ուշացա:

— Գտա՞ր,— ծաղրով հարցրեց մի ուրիշը:

— Մամիդ հոգու հացի թթխմորի ջրի մեջն էր ընկել,— հանգստությամբ պատասխանեց Հովակը:

Բոլորս Հովակի սրախոսության վրա ծափ տվինք ու զբվարթ ծիծաղեցինք, ոմանք հրճվանքից ոտները օդի մեջ ճոճելով:

— Բա Սեհոն ո՞ւր մնաց,— հարցրեց հովվապետը:

— Հերը հիվանդ էր, մնաց տանը,— ասաց Հովակը և յափունջին դեն ձգեց ու գրպաններից ու ծոցից գետին թափեց մատղաշ վարունգներ, որոնց վրա միանգամից խուժեցին տասնյակ ձեռքեր:

— Տո, ինչքա՜ն քիչ ես քերել, մարդ-գլուխ մեկ հատ հասնի-չհասնի,— դժկամ նկատեց Նազարեթը:

— Ամիրավը, Տեփան ամին, հազար աչքով կաշե բոստանին: Էն է՝ պտի վրա հասներ, ես՝ պո՜ւկ: Էսքանն եղավ: Հալալ էրեք: Գիլու բնից կրնա՞ս միս փախցնել: Տղամարդ ես, էգուց գնա, բոյդ տեսնենք:

— Դե՜հ, լավ, հա՜ց քաշեք, հա՜ց քաշեք, ասոթի մեռանք,— հրամայեց Սումբատը, որը յուրաքանչյուր ժամի սկզբին ու վերջին մեռնելու չափ քաղցում էր և պայթելու չափ կուշտ կոխվում:

Արագ-արագ բացինք մեր տավարջուղները (մախաղ) և յափնջու հարթ երեսի վրա շաղ տվինք՝ հաց, պանիր, սոխ... Ուտում էինք ու զրուցում, ուտում էինք ու կատակում:

Ընկերս կողքս բթեց՝ աչքի ծայրով Սումբատին ցույց տալով: Սումբատը ահագին լավաշի մեջ սեղմել էր հավկիթ, սոխ, գետնասխնձոր, իրեն բազկի թանձրությամբ բրդում էր շինել և գլուխը թափահարելով կտրում էր:

— Էնքա՜ն հաստ բրդում է, իսկը՝ տնփեսու վիզ,— ականջիս շշնջաց ընկերս: Ես հազիվ զսպեցի ծիծաղիս պայթումը, որովհետև չէինք սիրտ անում ծաղրել մեր մեծին: Այնպես վախենում էինք նրա զայրույթից:

Ունեինք միայն մի-երկու թեյի բաժակ: Հերթով խմում էինք պղտոր, ծուխ առած թեյը մի անկշռելի հեշտանքով:

Երբ կերանք խմեցինք՝ թիկն տվինք մեր տեղերի վրա և սկսեցինք բաներ պատմել,— առակներ ու զվարթ դեպքեր, հրաշապատում անցքեր, ղաչաղ Քյարիմի, գյոկչեցի Ղազարի ու գող-Եղիկի քաջ արկածներից և նրանց վիպական սերերից: Ուռճանում-լցվում էին մեր սրտերը նրանց տիպարով: Եվ ամեն մեկս իրեն զգում էր մի սիրահարված կտրիճ ղաչաղ-ասպետ:

Մեզնից մեկը երգեց Քյոռօղլիի երգերից, երգեց կրակված ձայնով:

— Ղազա՜ր ջան, շվի՜դ ածա,— թախանձեց Սումբատը, — շվիդ ածա, հոգուդ սատկիմ:

Ղազարը սկսեց նվագել եղեգնյա սրինգը: Կարծես հովերն էին շնկշնկում նրա պարզասիրտ սրնգի միջից, կարծես

աղբյուրն էր կարկաչում կամ լուսնի շողերն էին կաթում սրճգի անուշ փողից: Վիշտ ու տվայտանք: Քաղցր, սրտաճմլիկ ու մելամաղձիկ:

— Ա՜խ, Ծովինարս էստեղ էղներ, աշխարհարարատ մեկ գրոշի չէի առնի,— իրենից ելածի պես ձայնեց Սողոմոնը և գդակը նետեց վեր՝ մութ տարածության մեջ, հետո ընկավ բերանքսիվայր և ճակատը թաղեց յափունջու մեջ:

— Գյադեն խելոավ,— ասաց Սումբատը,— տո՛, քու տունն ակոլի, Գալոյենց Մոսե՞սը պտի էղնիս: Վերջդ էդ է:

Մոսեսի պատմությունը տարիներ առաջ պատահած մի սրտառուչ դեպք էր: Մոսեսը սիրահարված էր մի աղջկա վրա: Զինվորագրության վիճակն ելավ, Ռուսաստան սայլդաթ գնաց: Գյուղից մեկնելիս՝ հավատարմության խոստում է առնում սիրած աղջկանից: Երկու տարուց հետո գյուղ վերադառնալիս՝ լսում է, որ աղջիկը ամուսնացել է ուրիշ մեկի հետ: Մոսեսը վայրկենապես թոցնում է խելքը, առնում է գերանդին և սկսում է կատաղաբար հնձել հանդի կանաչ, տակավին խակ արտերը: Եվ մինչև վերջն էլ նա խելագար մնաց, հաճախակի կրկնելով սիրած աղջկա անունը...

— Քոռ Սողոմի սեր քցածն էլ մեկ բանի նման էղնի, էլի բան է,— կարճ ու հատ՝ պաների տիկ,— շշնջաց Պարսամը:

Լավ էր, որ Սողոմոնը չլսեց, թե ոչ՝ պիտի գազազեր, կռիվ սարքեր: Նա այլևս մեզ հետ չէր, երազանքի մեջ էր՝ Ծովինարի հետ:

Լուսինն ելավ լեռան կողմից, և լեռան ստվերը փռվեց մեր վրա:

— Ղազար ջան, մատներդ ուտեմ, ընչի՞ կտրեցիր, ածա՛, է, ածա:

Սումբատն էր ասողը: Ղազարը նորից նվագեց: Բոլորս լռած ու մտատարված լսում էինք նվագին: Յուրաքանչյուրս սուզվել էր իր հոգու ներսը և դեգերում էր իր երազների մեջ, իր սիրածի հետ: Նվագից բացի լսվում էր հովի մեղմ շշունջը և հոտի անուշ մնչյունը:

— Ածա՛, Ղազար ջան, ածա: Կարելի է, էն հիմի էստեղ է, մեր քովը:

— Ո՞վ, ո՞վ, ո՞վ,— ինքնասուզումից զարթնած հարց տվինք Սումբատին:

— Է՛ն, էլի՛, խաղի ու երգի սիրահարվածը...

— Էդ ո՞վ է, անունն ի՞նչ է:

— Անունը ես էլ չեմ իմանում, բայց էդոր պատմությունը գիտեմ, հիմի ասեմ՝ լսեք:

Մենք սթափվեցինք, թափ տվինք անրջային մշուշը մեր վրայից և սրեցինք ականջներս:

— Ժամանակով մի տղա է եղել, ջահել, սիրուն մի տղա,— սկսեց Սումբատը:— Էս երիտասարդ տղեն շա՜տ է սիրում եղել խաղ ու երգ, աշուղ ու սազանդար, սազ ու թառ, շվի ու բլուլ:

Բան ու գործ թողած, հաց ու ջուր մոռացած՝ միալար լըսել է խաղ ասողներին, աշղներին ու սազանդարներին: Ուրտեղ որ իմացել է կա մեկ երևելի խաղ կանչող ու ածող, փող է տվել, քերել է քովը, ու, օր ու գիշեր, աչքերը փակել, ո՛չ հացի է ձեռք զարկել, ո՛չ էլ բանի, լսել է էնոնց, լսել է միալար ու չի կշտացել:

Էսպես անցել է՝ ես կասեմ երեք տարի, դուք ասեք օխտը տարի, մեկ էլ աչքը բացել, տեսել է, որ հարստությունը պրծել է, բան չի մնացել: Ծախել է, ինչ ունի-չունի, տավար ու արտ, փող է շինել, հետն բռնել է մեկ ձեռք երևելի սազանդար ու խաղ կանչողներ, հանել է սարի գլուխը, թագավորի վայել սեղան է բաց արել, ու ասել է էնոնց. «Կերե՛ք, խմեք ու ածեք, ինչքան որ փողս ձերիք կանի: Աճառ քսակս ձեզի: Ածեք էն ամենեն անուշ ու լավ երգերը, էն ամենեն սիրտ տրորող խաղերն ու երգերը, որ սար ու քար, հավք ու անասուն, ծառ ու ջուր լսեն, իմանան՝ թե ի՛նչ անուշ բան է երգն ու խաղը, թե ինչպե՛ս կյանքն ու աշխարքը կանուշանան ու կթանկանան տաղերով ու երգերով: Թո՛ղ լսեն, ու զուրկ չմնան աշխարքի լավ բաներից, զուրկ ու խեղճ, անբան անասունի պես չերթան էս աշխարքից...»:

Էդպես, կերգեն ու կածեն, մինչի սեղանը կպրծնի, փողը կպարպի: Հետև սազանդարները կցրվեն, ինքն էլ գլուխը կառնի ու մեկ կողմով կկորի:

Կասեն, որ էն մինչի էսօր ողջ է, չի մեռել, կպտտվի աշ-

խարքի մեջ. մեկ օր էստեղ, մեկ օր՝ ուրիշ տեղ: Բայց ուր որ մեկ տաղ կկանչեն, մեկ շվի կփչեն, մեկ սազ կածեն՝ էն ձեռաց կուգա, դռան հետևը կամ մեկ պատի տակ պահ մտած կլսե. կլսե մինչի վերջանալը: Անտես կուգա, անտես կերթա: Էդոր պատճառով կըսեի թե՝ կարելի է՝ էն հիմի մեր քովն է. ա՛յ, կարելի էն մեծ քարի հետևը:

Եվ Սումբատը աչքերը լարեց դեպի մեր թիկունքում կանգնած ժայռը: Մենք ամենքս էլ, մի մարդու պես դարձանք և սրտատրոփ նայեցինք ժայռին ու նրա շրջակողմին: Այնպես բորբոքված էր մեր երևակայությունը:

— Ղազա՛ր ջան, ածա, հիմի մենակ էն տղի համար ածա՛, էն տղի սիրուն:

Նորից թախանձեց Սումբատը և մի հաստ գլանակ վառելով՝ յափունջին քաշեց գլխին ու լռեց:

Ղազարը դեռ նվագում էր սրինգը:

Երգի սիրահարի պատմությունը խորապես ազդել էր բոլորիս հոգու վրա: Իրապես զգում էի, թե նա հիմա մեզ հետ է, անտեսանելի, մեր կողքին նստած:

Չգիտեմ ինչո՞ւ, ես նրան պատկերում էի խորունկ ու տխուր աչքերով, տասնվին երիտասարդ մի տղա:

Ղազարը դադարեց նվագելուց: Եվ մենք փաթաթվելով մեր յափունջիների ու թաղիքների մեջ՝ գլուխներս «կակուղ» քարերին դրած՝ միամիտ սրտով քուն մտանք հովի շշունջյունի և հոտի անուշ մնչյունի ներդաշնակության տակ:

1929, Երևան

ԱՄԲՈՂՋ ԲՈՔՈՆԸ ՏՎԵՑ

Պահդիտությանս տարիներում, մեծության մեջ շա՛տ անգամ եմ սիրով հիշել իմ հեռավոր ընկերներին և բարեկամներին:

Շա՛տ անգամ եմ մտքիս մեջ պատկերացրել նրանց և վերհիշել նրանց ինքնահատուկ խոսքերն ու բնորոշ դեպքերը նրանց կյանքից:

Եվ հաճախ ստույգ մխիթարություն եմ գտել այդ վերհիշումների մեջ:

Շա՛տ մտերիմ դեմքերի միջից ստեպ կանգնել է ներքին հայացքիս առաջ իր զինվորական կեցվածքով Երվանդ Միրաբյանը:

Հագուստը միշտ լավ մաքրած ու հարթուկած, կարծես, ասեղի տակից նոր դուրս հանած՝ քայլում էր նա մորուքը ցցուն, բարձրավիզ, աչքերը փոքրացած ու արհամարհանքով դեպի շրջաշխարհը, ինչպես իշխաններն են քայլում, ինքնաբավական և ինքնասիրահար:

Այդ իշխանական ինքնազգացումը միշտ ուներում էր նա, երբ կուշտ կերած ու խմած էր լինում:

Երբ կուշտ կերած ու խմած էր լինում՝ աշխարհի իրերը իրենց տեղումն էին լինում:

Եվ ինքն էլ հաճախ ասում էր.

«Երբ կուշտ եմ լինում, երկրագունդը իր առանցքի շուրջը դառնում է կանոնավոր կերպով. իսկ երբ քաղցած եմ լինում, երկրագունդը դառնում է անկանոն կերպով»:

Երվանդը իր Տասնաբանյան ուներ, որ գրել էր մի ճերմակ խավաքարտի վրա և փակցրել էր իր անկողնու սնարին:

«Աշխատել ուրիշի տունը հյուր չգնալ, որովհետև անմար-

սելի է տանտիկնոջ հայացքը, որ համրում է վերցրածդ պատառները:

Հյուրասիրությունն ընդունել ռեստորանում, ուր ինչքան ուտես, այնքան սիրելի կլինես խազեինին:

Ուրիշ մարդ այնքան ինձ համար արժեք ունի, ինչքան որ նա պետք կգա իմ կյանքիս և առողջությանս համար:

Թեև գլուխը փորի վրա է, բայց փորը գլխից վեր է:

Այն մարդուն հաց տուր, երբ հաստատ գիտես, թե տանջվազն փոխարենը պիտի ետ ստանաս:

Ամենաքաջ և ամենախելոք մարդը փորը կուշտ պահողն է:

Կինը՝ կշտացնողինն է և ո՛չ թե նրան երկրպագողինը:

Ով որ հացիս եղ քսեց, նա իմ սիրելի և հարգված մեծ եղբայրն է:

Մի թշնամին հազար բարեկամից շատ է, մի պատառ հացը՝ հազար խրատից ու խորհրդից:

Ի սկզբանե էր կյութն, և կյութն հաց եղավ, և մտավ հացն ի փորի իմում և ապա եղև ի գլխո իմում խոսք, միտք և կամք...»:

Եվ Երվանդը՝ ամեն առավոտ, ուսուցչական իր պաշտոնին գնալուց առաջ, ուշադիր կարդում էր Տասնաբանյան, որպեսզի ցերեկվա կյանքի ընթացքում անշեղ հետևե նրա պատվիրաններին:

Եվ գիշերը, քնելուց առաջ, նորից ուշադիր կարդում էր և հաշվի առնում օրվա մեջ իր արած քայլերը, թե արդյոք անսայթաք ընթացե՞լ է համաձայն Տասնաբանյալի տրամադրությունների:

Երբ մի անգամ, ընկերական շրջանում, խոսում էինք բարձրագույն կուլտուրայի և մարդու բարձր արժանիքների մասին և մարդկության վսեմ իդեալներից, նա դանդաղ պես կտրեց մեր խոսքը.

— Իզուր ջուր եք ծեծում,— ասաց նա,— ի՞նչ եք հասարակ բաներին մեծ-մեծ անուններ տալիս: Կուլտուրա՛... Ի՞նչ է կուլտուրան — հավելյալ կշտացում: Եվ մարդն էլ — խոսող

անասուն: Ուրիշ ոչինչ: Ի՜նչ իդեալներ, ի՜նչ արժանիքներ, ի՜նչ բան...

Եվ ծոցի թղթապանակից հանեց լրագրի մի կտոր, ուր գրված էր, թե՝ Փարիզում կանայք հարցացուցակ են բացել, թե ինչպիսի՞ վարմունք պիտի ունենալ, որպեսզի ամուսինները իրենց կանանց սիրեն:

Եղել են շա՜տ գեղեցիկ, բանաստեղծական պատասխաններ, բայց մրցանակը շահել է մի կին, որը հայտնել է.

«Եթե ուզում ես՝ մարդդ քեզ սիրի, լավ կերակրիր այդ անասունին»:

— Ասողը կին է,— ավելացրեց նա,— այս աշխարհի ամենից գործնական, ամենից դրական բնակիչը և ոչ թե ձեզ նման ամպաքաղաքացի:

Այսպիսի դեպքերում մենք՝ առանց նրան հակաճառելու՝ զվարթ ծիծաղում էինք, իսկ ինքը ոգևորված ավելի տարածում էր իր «փորոլոգիայի» կամ «փորաբանության» մտքերի սահմանը:

Այս վայրկյանիս արձանանում է նա իմ առաջ:

Նստած ճաշում է, լիապես իր տարերքի մեջ: Վերցնում է հացը սեղանի վրայից և հարձակվում է վրան, ասելով — «Հպատակվի՛ր, ո՛վ հաց», և պատառոտում է այն սուր ատամներով: Այս կերպ և մսի, և կանաչի հետ: Եվ ճաշում է կերակրի ամեն հյուղեն զատ-զատ ծամելով, զգացումով և գիտակցաբար ըմբռշխնելով:

Ճաշում է բոլոր բջիջների ու ջլարդերի մասնակցությամբ, բոլոր կենտրոնացած, լիքը խորին ապրումներով մի արքայական, խորհրդավոր ծես ու հանդես կատարելով:

Ահա նա վերջապես կշտացավ կամ թվաց, թե կշտացավ: Հիմա էլ նստել է սրճարանում, բազմության մեջ, «մարդկանց հետ միասին, բայց առանձին», ինչպես ինքն է բնորոշում իրեն: Ներամփոփ, բոլոր կապերը կտրած արտաշխարհի հետ, ինքն իրեն ապրելով, վայելելով իրեն:

Թեյ է խմում, թեյ է խմում և թեյ է խմում նախանձելի ախորժակով և իր բոլոր էությամբ, և քթի տակ երգում է:

Ոն չի սիրում, որ մարդիկ իրեն նայեն, խոսեն հետը, իրանգարեն երանական իր կենսազգացումը:

«Ա՛խ, կուզենայի,— հաճախ տենչ էր հայտնում նա,— սրճարանում տախտակով մի խցիկ շինեին ինձ համար, ընտեի մեջը, թեյս խմեի անվրդով, առանց որ ուրիշները ինձ նայեին և խմած բաժակներս համրեին»:

Ինչպիսի՛ զվարթ դեպքեր ու մանրամասներ էին պատմում Երվանդի շատակերության մասին: Պատմում էին, որ նա ամենափարթամ սեղանը մի կարճ ժամանակի մեջ խժռում էր, բառացի կերպով՝ ջնջում, և ափսեները հաճախ կատվի պես լիզում: Բան չէր ազատվում նրա բերանից: Խոշոր սուպովնիկով պիտի բերեին նրա համար սուպը, և առհասարակ ամեն կերակուր անպատճառ պիտի կրկներ: Իսկ անագին սամովարը կես էր գցում:

Մի անգամ նա երկու ամիս մի մարդու մոտ պանսիոն էր մտել: Պանսիոնի տերը ստիպված եղավ Երվանդին մի կերպ հեռացնել:

«Երևակայեցե՛ք, նա ինձ սնանկացման հասցրեց: Յոթը գյուղացու չափ է ուտում: Եթե մի տարի մնար մոտս, այլևս երբեք ոտքի չէի կանգնի»:

Այսպես էր արդարացնում իր անքաղաքավարի վարմունքը պանսիոն պահողը և ավելացնում էր ժպտալով.— «Անիրավը աշխարհի ամենից ամբարտավան, ամենից անճոռնի շալվարն էր հագնում ճաշի ժամանակ, կապերն էլ ազատ արձակելով, որ շատ լցնի ներս: Խոհարարի և սեղանի աղախնի հետ էլ բարեկամացել էր. նրանք էլ լավ կտորները ընտրում, նրան էին տալիս»:

Սա արդեն Երվանդի փորձված գործելակերպն էր — մըտերմություն մշակել խոհարարների և սեղանի սպասավորների հետ:

Մի անգամ Երվանդը ընկերներով ճաշում է: Այդ լինում է Բաքու քաղաքում, ռուսական առաջին հեղափոխության շրջանում, 1905 թվին:

Ճաշի կիսին հանկարծ դրսից ռումբի պայթյուն է լսվում: Բոլոր ընկերները թողնում են սեղանը և այլայլված փողոց վազում՝ իմանալու, թե ինչ է կատարվում:

Երվանդը տեղից չի շարժվում և, ամենայն հանգստությամբ, շարունակում է իրեն միշտ անդավաճան գալլի ախորժակով վայելել սեղանը: Երբ ընկերները ետ են դառնում, տեսնում են՝ Երվանդը իրենց բաժիններն էլ կերել-սրբել է, և բազմոցում, թիկն տված՝ անուշ թմբիրի մեջ, աչքերը կիսախուփ, դանդաղորեն իր պապիրոսն է քաշում:

Երվանդը սովորություն ուներ դպրոցական ամառային արձակուրդներին իրենց գյուղը գնալու, հոր տունը, այնտեղ իր պարապությունը լիաճաշ վայելելու համար:

Սկզբում մեծ հոգատարություն էր հանդես բերում տնտեսության մեջ—բանջարանոցը ջրել, փեթակներին հսկել, սագիկներին, վառեկներին կերակրել ու խնամել, մինչև որ լավ հասնեին նրանք: Եվ հետո մեղր ու կարագ, վարունգ ու բանջար, սագ ու վառեկ, բոլորին քաշում էր որկորը, մաքրում փառավորապես և գնում:

— Տո՛, գելխո (շատակեր), ասում էր մայրը ուրախ զայրույթով,— էլ հավ չթողիր՝ կերար, ամեն անգամ 15 հավկիթով ձվածեղ էիր ուտում: Տո՛ մարդակուլ դև, էլ ի՞նչ թողիր մեզի:

— Մեր ջան, ճամփա պիտի երթամ. բա ի՛նչ անեի, չէ՞ որ ձին մտրակով չեն քշի, գարով կքշեն:

Հիշում եմ, մի օր ի՛նչ պատահեց ինձ: Թիֆլիսից գնում էի Լենինական: Նույն վագոնում հանդիպեցի Երվանդ Միրաբյանին: Մենք մի սին պատճառով, թյուրիմացությամբ, խռոված էինք և իրար հետ չէինք խոսում: Վագոնում կային նույնպես լենինականցի որմնադիր վարպետներ:

Գնացքը հենց որ շարժվեց՝ վարպետները բացին իրենց խուրջինների բերանը և ամեն բարիք հանեցին մեջտեղ—հավի միս, գառի միս, ձկներ, միրգ, օղի, գինի, հաց, պանիր, կանաչի:

Ինձ ևս հրավիրեցին այս ճոխ սեղանին մասնակցելու: Ուտում էինք ու խմում: Ես աչքիս ծայրով նայում էի Երվանդին: Նա հետու անկյունում նստած՝ ծխում էր և թավ ծխի միջից գաղտուկ, աննշմարելի դիտում էր մեզ: Ես նրա հո-

գին լավ էի ճանաչում: Գիտեի, որ նա հիմա երևակայության մեջ մեր պատառները իրեն բերանն է տանում, մեր գավաթները պարպում, մեր ձեռքի թթու վարունգը կլանում և այսպիսով իրեն քիմքը զովացնում, սակայն իրոք նա պապիրոսի թույնով դառնացած թուքն էր կուլ տալիս:

Ես գիտեի, որ նա հիմա շատ է տանջվում, չարաչար տանջվում:

Խնդրեցի վարպետներին, որ Երվանդին էլ հրավիրեն, որովհետև վարժապետը իմ ընկերն է: Հյուրասեր վարպետները միաբերան դիմեցին նրան:

— Վարժապետ ջան, դու մեր Ա-ի ընկերն ես եղել. կխնդրենք մեր ու քու ընկերոջդ խոսքը չկոտրես. համեցեք՝ հաց անուշ արեք:— Երվանդը մեկը երկուս չարավ. ուրիշ ի՞նչ էր ուզում: Իսկույն, դեմքը երջանիկ ժպիտով պայծառացած և աչքերով ինձ խորունկ շնորհակալություն հայտնելով միացավ մեզ. բարևեց բոլորիս, և գլուխը կախեց ու սկսեց բանել երկու ձեռքով և բոլոր ատամներով:

Չանցավ մի քիչ ժամանակ, նա հասավ մեզ և մի քիչ էլ հետո գլխեց-անցավ մեզնից:

Երբ կերանք-պրծանք, վարպետները բերանները սրբեցին և, յափունջիների մեջ փաթաթվելով՝ պառկեցին քնելու:

Ես և Երվանդը ելանք կանգնեցինք վագոնի լուսամուտի առաջ, հաշտ ու բարեկամ, ամեն մի թշնամանք հարթած, լուռ ծխում էինք և բնության խուսափուկ պատկերներին հետևում:

— Կեցցե՛ս, սիրելի՛ս,— լռությունը խզեց Երվանդը,— հին բարեկամը երբեք թշնամի չի դառնա, ասել է մեր գյուղացին: Դու, որ հավի ազդրը բերանդ էիր կոխում, սոխն ու բողկն էլ հետևից քշում ներս, գինին էլ վրան քաշում — ես ուտում էի ինքս ինձ ու ինձ հայհոյում.— Ա՛յ հիմար, ի՞նչ գործ ունեիր էս մարդու հետ վատ լինելու: Հետը որ բարեկամ մնացած լինեիր, հիմա կողքին կլինեիր և հավի ազդրը ձեռքիդ: Ապրե՛ս, հիշաչար չեղար: Էդ լավությանդ փոխարեն հիմի քեզ մի խոսք կտակեմ, տեղը դուրս գա,— ոչ մի մարդու հետ վատ չլինես, մի օր պետք կգա:

Երբ հայրենիք վերադարձա, հարցրի Երվանդ Միրաբյանի մասին: Իմացա, որ բացակա է իմ գտնված քաղաքից և շուտով գալու է:

Ընկերներս շատ նոր բաներ պատմեցին նրա մասին: Շատ պատմություններից մեկն եմ ուզում հիշատակել, որ ինձ ամենազվարճալին երևաց:

Ամառները, սովորաբար, Երվանդի մայրը սարն է լինում. յայլեն, կթան տավարի հետ:

Մի անգամ, մի ոչխար հիվանդանում է. տեսնում են, որ սատկելու վրա է, մայրն ասում է. «Մորթեցեք, ուղարկենք գեղը, գելխոն ուտե»:

Միսը մորթի մեջ լցրած ուղարկում են գյուղը: Երվանդն անասնական հրճվանքի մեջ է: Հայրն ու մեծ եղբայրը բացակա են լինում, տանն են լինում փոքր եղբայրը, քույրը և հարսը:

Երվանդը կարգադրում է մեծ թոնիրը և ակութը (փոքր թոնիրը) վառել:

Մինչև մեծ թոնրի կրակը կիջներ և բոզբաշն ու փլավը կեփվեր, նա ձեռաց փայծաղից, թոքերից խորոված է շինում ակութի վրա:

Երբ բոզբաշը պատրաստ է լինում, Երվանդը տանեցիներին դուրս է անում և թոնրատան դուռը փակում, որ ինքը մեն-մենակ վայելե, մանավանդ այն իրավունքով, որ մայրը հատկապես իրեն համար է ուղարկել ոչխարը:

Տանեցիները գիտենալով, որ սատակի միս է, դյուրավ հրաժարվում են: Չհրաժարվեին էլ՝ Երվանդը նրանց բան տվողը չէր: Երվանդը սկսում է ուտել մենակ ու անվրդով: Ուտում է, ուտում է, այնքան է ուտում, այնքա՜ն, որ հափրացած, բթնկոխ եղած, գորտի պես ընկնում է մեջքի վրա, աչքերը չռած, ձեռները թափահարելով գոռում է.— Մեռնում եմ, մեռնում եմ:

Սակայն դուռը փակ է, ինքն էլ անկարող է եղել դուռը բանալու: Եղբորը՝ ստիպված՝ երդիկից վար են կախում: Երվանդի ոտներից ու ձեռներից բռնած հանում են դուրս, դնում են ծառի ճովին, գլուխը սառը ջրով լվանում են: Ծար չի լինում: Մի բերան գոռում է.— Մեռնում եմ, մեռնում եմ:

Մի պառավ գեղջկուհու խորհրդով նրան դնում են սայլի վրա և գյուղի հարս ու աղջիկների ու երեխաների ծաղրի ու ծիծաղի տակ եղբայրը քշում է սայլը, քարքարոտ ճանապարհներով, դարուփոս հանդերով, որպեսզի սայլի ցնցումներից, վերուվայրումներից շարժման մեջ ընկնի Երվանդի մարմինը և դյուրացնե մարսողությունը:

Ձորից իջնելիս՝ սայլը շուռ է գալիս, լուծը կոտրվում, Երվանդն ընկնում է գետին:

Եղբայրը եզները տանում է տուն, ասելով.— «Դեհ, դու էստեղ կաց. թե չմեռար՝ էն է ոտքովդ տուն կգաս. թե մեռար, էն է քո ուզածը կկատարվի. չէ՞ որ միշտ ասում էիր՝ իմ նպատակն է կուշտ մեռնել. երբ կուշտ մեռնեմ, գերեզմանիս վրա գրեցեք՝ կուշտ մեռավ»:

Երեկոյան Երվանդը իր ոտքով հանգիստ դառնում է տուն, և բավական ախորժակով ընթրիքի նստում:

Լսեցի, որ վերադարձել է: Գնացի իր մշտական հաճախած սրճարանը: Իսկույն ճանաչեցի նրան: Դեռ ինքս ինձ ներկայացնելուց առաջ, հեռվից դիտեցի նրան:

Տարիները մեծ ավեր չէին գործել նրա վրա, միայն բավական պարարտացել էր և մի փոքր ճերմակել, բայց ընդհանուր տպավորությունը նույնն էր՝ երիտասարդ օրերի Երվանդ Միրաբյանը:

Նստել էր մեկուսի, իրենով երջանիկ և թեյ էր խմում խորին ախորժով և փիլիսոփայի անդորրությամբ, առաջվա պես անհաղորդ շրջապատի անցուդարձին, ներաճնճացած, և օրվա լրագիրը առջևը տարածուն:

Մոտեցա: Սրտագին բարևներ փոխանակեցինք, իրար առողջություն և տրամադրություն հարցրինք:

Մի քանի անգամ տեսակցելուց հետո, մի օր հարցրի.

— Երվանդ, տղերքը շատ բաներ են պատմում մասիդ: Ճի՞շտ են արդյոք:

— Ո՞րը, օրինակի համար:

— Թե մի ողջ ոչխար ես կերել:

Եվ համառոտակի վերապատմեցի դեպքը:

— Ճշմարտությունը չափազանցրած է, ոչխար չի՛ եղել,

գառ է եղել: Արդեն շատ պիտի զարմանայի, եթե աշխարհում ճիշտ բան պատմվեր:

— Երևի շա՛տ վատ օրեր տեսար վերջին տարիները— սով, փախուստ,— հարցրի ես:

— Այո՛, այո՛, թշնամիս չտեսներ:

— Լսեցի, որ թուրքերի արշավանքի ժամանակ գյուղումն ես եղել. ինչպե՞ս սիրտ արիր՝ մնացիր:

— Եղավ: Պատմեմ՝ լսիր:

Եվ մի բաժակ թեյ պարպելուց հետո՝ սկսեց.

— 1920 թվի աշնանն էր, ուշ աշուն: Թուրքերի արշավանքի ծանր օրերն էին: Շիրակից, Կարսից հայերը լըցվել էին Փամբակ՝ իրենց տավարով: Ամեն տան պես մեր տունն էլ լիքն էր գաղթականներով: Ամեն օր մի եզ էին մորթում:

Մի օր էլ մի եզ մորթած, թոնիրները վառած, ամեն մարդ մի շամփուր բռնած միս էր խորովում: Հանկարծ լուր տարածվեց, թե ասկյարները մոտենում են: Շամփուրները իսկույն վար ձգեցին, և մի ժամ չանցած, բոլոր գաղթականները, մեր գյուղն էլ, մեր տանեցիք էլ հետները փախուստի ճանապարհը բռնեցին՝ հնար եղածի չափ պաշար ու տավար հետներն առած: Ես էլ հետևեցի նրանց:

Դեռ կես օր չկար: Մեր գյուղի գերեզմանոցի բարձունքից նայեցի խելակորույս բազմությանը: Իրար բոթելով փախչում էին նրանք: Ճանապարհ, կածան ու ձոր լցված էին հազար ու մի ձայներով. ամեն տեսակի ձայն կար — սայլերի ճռինչ, ոչխարի մայոց, կովերի բառաչ, երեխաների ճիչ, կանանց լաց ու կոծ: Եվ այս բոլորի վրա աշնան բարակ անձրևը, անվերջ անձրևը:

Ես ականջներս խփեցի երկու ձեռքով և դարձա գյուղ: Դարձա գյուղ այն մտքով, թե միևնույն է, եթե ասկյարները չհասնեն ու ճանապարհին չսպանեն, ուրիշի դռները անոթի պիտի մեռնեմ: Իսկ մեր տանը պաշար շատ կար. այնպես որ՝ եթե պիտի սպանեն, թող տանը սպանեն, գոնե կուշտ կմեռնեմ՝ հավատարիմ իմ սկզբունքին, թե՝ ավելի լավ է կուշտ մեռնել, քան քաղցած ապրել:

Մտա տուն, սկսեցի շամփուրները հավաքել. կամաց-կա-

մաց խորովեցի և ճաշա ուտելու։ Անվրդով ուտում էի և ինձ ու ինձ ասում.— «Կե՛ր, կո՛ւշտ կեր, լա՛վ կեր. կուշտ մարդը բթանում է, խիստ չի հակազդում մահին, խիստ չի զգում մահի ցավն ու սարսափը. օրինակի համար, ինչպես կուշտ կերած բոա-օձը այնքան է թմրում, որ վրան հարձակվում են, տեղից չի շարժվում»։

Երանդով ուտում էի՝ հանգիստ սրտով սպասելով թուրքերին և իմ ճակատագրին։ Երեկոյան դեմ ասկյարները եկան տեսան ինձ միամիտ սրտով ճաշած եմ անագին տանը, մեն-մենակ, թիկն տված բարձերին։ Իսկապես այնքան կուշտ ու թմրած էի, որ հազիվ շարժվեցի, բայց չկարողացա ոտքի կանգնել։ Զգիտեմ, գուցե նրանք ինձ խեղթի տեղ դրին, սակայն բարևեցին ու եկան ճաշան կողքիս և սկսեցին ուտել։ Բացի ինձնից, գյուղում մնացել էին ծեր ու հիվանդ մարդիկ, ոչ ոքի ձեռք չտվին, ինձ հետ էլ բավական բարեկամացան։ Սակայն քաղցած էինք, և նրանք մեզ գրեթե ոչինչ չէին տալիս մեր տներում մնացած անագին պաշարից ու ալյուրից։ Նրանք գրավեցին այդ ամենը, նույնպես գոմերի անկյուններում ու հանդերում ցրված մեր տավարը։ Իհարկե, ծերերից ու հիվանդներից շատերը մեռան։ Գալով ինձ՝ ես մի կերպ ապրում էի՝ ասկյարների սեղանի փշրանքներով, արտերից ցորենի ու գարու թափած հասկերը, հատիկները հավաքելով, բույսերի արմատներով։ Ու քառասուն գայլի ախորժակով ուտում էի ձեռքս ընկածը, քարից կակուղը — ամեն ինչ, որ կարելի էր ծամել։

Երբեմն այնպես անոթի էի լինում, այնպես անաստված անոթի, որ ձեռքս ինչ տեսակ կենդանի արարած ընկներ՝ կպատառոտեի ու կլափեի հում-հում։ Այստեղ հասկացա, որ կուշտ մարդն է մարդ. անոթի մարդը գազան է։

Սովից ոսկոր ու կաշի էի դառել. այնքան էի թուլացել, որ ծնկներս տակս ծալվում էին. մի տասը քայլը չէի կարող անել առանց կանգ առնելու։ Միշտ որ՝ մարդու հոգին բկից է ներս մտնում և մարդը հացի շենք է։

Հաճախ ճաշում էի մեր թափուր տանը, կիսավառ օջախի առաջ, դատարկ փորով, և երազում էի,— աչքերիս առաջ փովում էին անցյալ բախտավոր օրերի ճոխ սեղանները,

Բաքվի կլուբի բուֆետը բազմատեսակ զակուսկիներով — խավիար, լոբի, սունկ, ձկի ու հավի կտորներ և այլն. և պատառաքաղը ձեռքիս՝ ուտում էի սեղանի մի ծայրից սկսելով մինչև մյուս ծայրը, ընդհատելով Սմիրնովի օղու գավաթներով...

Երվանդը այստեղ կանգ առավ մի նոր բաժակ թեյ ըմպելու համար:

— Գարնան գլխին ասկյարները քաշվեցին,— շարունակեց Երվանդը,— գյուղացիք սկսեցին մեկ-մեկ վերադառնալ. մերոնք էլ եկան: Բայց սովը դեռ կար: Քսան տան միջից հազիվ մեկի երդիկից ծուխ էր ելնում: Ի՞նչ ուներին խեղճերը եփելու, որ թոնիր վառեին:

Անոթությունից թափվել էին հանդերը և տավարի հետ արածում էին: Կանայք ուտելով փորները ուռել էին, աչք ու երես դեղին դառել: Ինչքա՜ն սովամահներ եղան...

Մեր գյուղին մոտիկ բլուրի կատարն էի ելնում՝ այնտեղից նայելու, թե՝ ո՞ր գյուղից ծուխ է ելնում, և քայլերս ուղղում էի այնտեղ: Պատիվս պահում էին, իբրև վարժապետի և գարուց ու թեփից եփած հաց էին տալիս, բոքոն, որ ուտում էի ամենահամեղ գաթայից ավելի ախորժակով:

Մի օր էլ, հարևան գյուղում կշտացրել էին ինձ ու մի գարի բոքոն էլ ձվեր տվել: Ծոցս դրի և բերի տուն. խնամքով, գաղտնի թաքցրի իմ սենդուկում և կողպեցի, որպեսզի գիշերը, մերոնցից ծածուկ, մի-մի կտոր ուտեմ:

Գիտե՞ս, էն ժամանակ մի գարի հացը մի գլուխ արժեր:

Հենց այդ օրը գյուղի տղերքը ուրախ, վազելազ եկան հայտնեցին, թե մի ռուս է գյուղն եկել: Շտապեցի մոտը: Կարմիրբանակային զինվոր էր: Առաջին ռուս մարդը, որ երևաց իբրև գարնան ճշահ — ծիծեռնակ: Սիրտս լցվեց մեծ ուրախությամբ. աչքերս՝ արցունքով. գրկեցի սոլդատին և, համարյա համբուրելով, ասացի.

— Եղբա՜յր, ընկե՛ր, բարով, բարո՛վ եկաք. երկու տարի է ձեր կարոտով մնացինք. մենք ձերն ենք, դուք՝ մերը: Ի՞նչ կկամենայիք:

Սոլդատը քաղցած էր:

Իսկույն վազեցի տուն, բոքոնը բերի և ամբողջ բոքոնը,

հասկանո՞ւմ ես, ամբողջ բոքո՛նը սիրով և խնդրանքով տվի նրան՝ կարմիրբանակայինին։

Հիմա պիտի մտածես. ի՛նչն էր դրդիչը այս զոհաբերության, որ կյանքիս մեջ թերևս առաջին անգամն էր կատարվում։ Ես՝ Երվանդ վարժապետս, որ անձնասեր եմ, որ այն վայրենի սովի օրերում գազազված էի ու ավելի անասնացած, քան որ մարդն է կուշտ ժամանակը սովորաբար,— ես բերանիս պատառը, որ նույնիսկ մորս և եղբորս երեխային չէի տալիս, բոլոր սրտով տվի ռուսին, օտարին, տվի, որովհետև այն հաստատ համոզումն ունեի, որ կոմունիստ ռուսի հետևից գալու է հաց, խաղաղություն և ապահովություն։

Երվանդը ավարտեց իր պատմությունը և ձեռն առավ թելի վեցերորդ բաժակը։

1929

ՂԵՎՈՆԴ ԱՂԱՆ

Երբ Ղևոնդ աղան քնից զարթնեց՝ իսկույն հիշեց, որ երեկ վճռել էր այսօր բաղնիք գնալ: Վերջապես զիջել էր կնոջ թախանձանքներին: Կինը շարունակ հանդիմանում էր նրան բաղնիք չգնալու համար: Հիմար պառավը չի կարող հասկանալ, որ ծուլությունը չէ պատճառը, այլ տրամադրություն չկա բաղնիք գնալու, չգիտե, որ լալու համար էլ սիրտ պետք է... բայց, սիրտ թողի՞ն որ այս բոլշևիկները...

Եվ Ղևոնդ աղան հազար անգամվա պես այս անգամ էլ վերապրեց ու վերհիշեց այն բոլոր աղետներն ու զրկանքները, որ փլչող տան պես թափվեցին հանկարծակի, իր ծերունի գլխին, բոլշևիկների երեսից: Ո՞ր մեկը հիշել, ո՞ր մեկը մոռանալ, քաղաքի ամենահարուստից դարձավ ամենաաղքատ մեկը: Ինչե՜ր ուներ և ինչ մնաց — և աչքերը բացեց, մաև ածեց շուրջը՝ վերստին ստուգելու իրականությունը — ծով հարստությունից մնաց միայն այս սենյակը՝ երկու մահճակալ, մի-երկու գորգ, մի քանի աթոռներ...

Ղևոնդ աղայի ցավոտ մտքերի թելը կտրվեց իր ամուսնու սենյակ մտնելով: Կինը, չորացած մի պառավ, ուսերի վրայից վար առավ շալը, ծալեց ու դրեց թախտի վրա:

— Ժա՞մ էիր գնացել,— հարցրեց Ղևոնդ աղան:

— Հա՛, օղորմի աստված,— պատասխանեց կինը՝ մոտենալով պահարանին և հանելով թեյի պարագաները:

— Օղորմի ծնողացդ,— հեգնանքով արտասանեց Ղևոնդ աղան ավանդական պատասխանը:

Կինը սենյակից դուրս գնաց, Ղևոնդ աղան արդեն սովորական դարձած ախ ու օֆով ճիգ արավ անկողնուց ելնելու: Կես ժամ անց՝ նա հագնված, լվացված, թեյի սեղան

էր ճստել: Կինը նախաճաշիկի ընթացքին պատմում էր եկեղեցում լսած քաղաքի նորությունները, հանդիպած տես ու ծանոթի մասին: Ղևոնդ աղան մեքենաբար լսում էր՝ թաղված իր հուշերի մեջ:

— Մի կարգին լողացիր,— ասաց կինը ճերմակեղենի կապոցը դնելով ամուսնու առաջ:

Երբ Ղևոնդ աղան կապոցը ձախ անութի տակ, հին օրերի արծաթաբուռն գավազանը աջ ձեռքում իջնում էր սանդուղքից, կինը գորովանքով ետևից ձայնեց.

— Աշխենս խաշ է դրկել. շատ չուշանաս:

— Աղջկանդ հացը ուտողը չեմ,— չոր ու կտրուկ պատասխանեց Ղևոնդ աղան, առանց ետ նայելու և գավազանը սանդուղքի աստիճանների քարին կրքոտ զարկելով:

— Էլի էծերդ եկե՞լ են,— կշտամբեց կինը ու կարծես վախենալով, արագ-արագ ներս մտավ՝ քթի տակ խոսելով. «Էս կողը հաստ հայը հրեշտակի սիրտ աղջկաս դեմ էլ է սրվել»:

Ղևոնդ աղան յոթանասուն տարեկանի մոտ առույգ ծերունի էր, բարձրահասակ, թավ հոնքերով և վճռողական դիմագծերով:

Հեղափոխությունից առաջ նա քաղաքի առաջնակարգ հարուստների շարքին էր պատկանում: Ուներ բամբակի ծավալուն գործ, կրպակներ, տուն և ընդարձակ այգի: Հեղափոխությունը բոլորը պետականացրեց, թողնելով նրան մեծ բնակարանից միայն մի սենյակ՝ խոհանոցով: Ուներ մեկ որդի և մի աղջիկ: Որդին Մոսկվայում պաշտոնավարում էր մի հիմնարկի մեջ: Աղջիկը ամուսնացել էր մի կոմունիստի հետ:

Ղևոնդ աղան բնավ չհաշտվեց ստեղծված դրության հետ, առաջին օրից և շարունակ մշտաթարմ կրքով լցված՝ հարձակվում էր բոլշևիկյան կառավարության դեմ, հայհոյում էր ու ծաղրում, և խորին ցավով երանի էր տալիս ցարական կարգերին և կարոտով ու հավատով սպասում էր նախկին վիճակի վերադարձին: Անհաշտ էր և իր միահատիկ դստեր հանդեպ. չէր կարող ներել, որ աչքի լույսի պես պահված

աղջիկը կինն է դարձել մի ինչ-որ հեղափոխական տղայի... Հանդիմանում էր կնոջը, որ ոտքը չի կտրում դավաճան աղջկա տնից, և սաստիկ զայրանում էր, վիրավորվում խորապես, որ աղջիկը ծնողներին օգնության է հասնում գաղտնի կամ հայտնի ձևերով: Համախական առիթներ էր որոնում կնոջ հետ կռվելու՝ իր սրտի մաղձը թափելու նրա գլխին: «Նրանք ո՞վքեր են որ՝ փեսադ էլ հետները — սիբիրականներ, կատղրժնիկներ: Դրախտ Ռուսաստանը թալանեցին, ավերեցին, դժոխք դարձրին: Թե նրանք կարգին, խելոք մարդիկ էին, թող մեզի պես աշխատեին, մարդ դառնային, ոչ թե թրով ու արյունով ուրիշի հացի տերը դառնային: Ես ուսում չունեի, համակներս հազիվ կարող էի գրել, բայց ազնիվ աշխատանքով ինչ աստիճանի հասա...»:

Կինը, որ գրեթե սկզբից հաշտվել էր կացության հետ, հանգստացնող սրտով խրատում էր ամուսնուն — «Մարդ աստծու, ի՞նչ ես քեզի ուտում, հո մենակ քեզանով չեղավ, աշխարհքին էլ եղավ: Մի քանի տարի կյանք է մնացել, էն էլ դառն ու թարախ ես շինում: Էլի իրան փառք տուր, որ երեխեքդ ողջ-առողջ են: Էնքան տարի լավ ես ապրել, հիմի էլ թող ուրիշները լավ ապրեն»:

Կնոջ այս համակերպությունը ավելի էր զայրացնում Ղևոնդ աղային, և զայրացած Ղևոնդ աղան փնթփնթալով դուրս էր գնում տնից, գնում հանրային պարտեզը, ուր սովորաբար հավաքվում էին հասակակից իր հին ընկերները ու բարեկամները՝ միմյանց հետ զովացնելու խոսքով ու զրույցով իրենց դառնացած սրտերը:

***

Տակավին առավոտ, բայց արևը կիզում էր:

Երկինքը՝ անհուն կապույտ: Շլացուցիչ լույսով հեղեղված էր ամեն իր: Ղևոնդ աղան փողոցների ստվերոտ կողմերից քայլելով հասավ իր կրպակների շարքին: Ամեն օր պիտի անցներ այդ շենքերի առջևով, պիտի նայեր — ամեն բան նախկին վիճակո՞ւմն է արդյոք, քար չի՞ խախտված տեղից, սակայն օրերից ի վեր, առաջվա անջատ կրպակների

միջնորմները քանդելով մի ընդարձակ կոոպերատիվ խանութի էին վերածում: Ղևոնդ աղայի սրտովը չէր այս փոխակերպումը, և առհասարակ ամեն մի չնչին փոփոխություն նույնիսկ. «Ի՜նչ սիրով շինեցի էս խանութներս»,—իրեն մեջ խոսում էր նա,—ինչքա՜ն փող ծախսեցի, հիմի տվին, փչացրին, ղազախի ձիու ախոռ դարձրին...»:

Գլուխը շարժեց և շարունակեց ճանապարհը: Փողոցի մայթերի երկայնքով՝ առուները արծաթե փոքրիկ ալիքներով վազում էին կարկաչուն: Երեխաները խաղում էին ջրերի հետ, որոնց վրա պստիկ մակույկների պես տարուբերվում էին ձմերուկի կեղևները:

Մի տեղ փողոցի լայնքին կանգնել էին ծանր բարձած սայլերը, որ քար ու ավազ էին բերել աջ կողմում կառուցվող նոր շենքերի համար. սայլերը բռնել էին ճանապարհը, այնպես որ Ղևոնդ աղան ստիպված եղավ ետ դառնալ. մտավ մի ուրիշ փողոց, և, վերջապես, բաղնիքը:

***

Ղևոնդ աղան խոսք բաց արեց իրեն լողացնող քիսաչու հետ, որ մի քառասուն տարեկան տղամարդ էր:

— Ո՞րտեղացի ես, աղբորս տղա:

— Քյավառցի եմ, հայրիկ, քյավառցի:

— Դրուստ է, բոլոր քիսաչիները քյավառցի են:

— Ցեղով քիսաչի ենք, հերս էլ քիսաչի էր, պապս էլ,— լրացրեց քիսաչին:

Խոսակցությունն ընդհատվեց. Ղևոնդ աղայի գլուխը սապոնի փրփուրների մեջ էր:

— Դու միշտ էս բաղնիքո՞ւմն ես աշխատում,— հարցրեց Ղևոնդ աղան:

— Հա՛, վրա տասնմեկ տարին է. առաջ հերս էր, էստեղ, ես նրա տեղն եմ հիմի. առաջ ես Թիֆլիզն էի:

— Հե՞րդ. տեղովը որ ասես, կարելի է միտքս բերեմ: Ես միշտ էս բաղնիքն եմ եկել:

— Միրզաջան է հորս անունը. վարպետ քիսաչի էր,— պատասխանեց քիսաչին:

— Դեհ, ասա, իմ լավ ճանաչի տղեն ես: Ո՞նց չէ, Միրզաջանը, իմ քիսաչին էր. է՛յ գիտի ժամանակ, հա՛... հերդ կա՞ հիմի:

— Կա, բայց ոտները բռնված են, տնից դուրս չի գալում: Դոխտուրները ասում են՝ տաք ու պաղից է, որ ոտները բռնված են:

— Հորդ բարև արա, ասա Ղևոնդ աղան բարև ղրկեց. ձա ինձ լավ գիտե: Նորելուկները ինձ չգիտեն:

— Ղևոնդ աղան դո՞ւն ես, բամբակի մեծ մաղազայի տերը: Անունդ լսել եմ:

Ղևոնդ աղան ներքուստ հրճվեց, սակայն աչքերում տխուր լույս շողաց:

— Է՜հ, ինչն է մնացել առաջվա Ղևոնդ աղայից. անունը կա, ամանումը չկա,— հառաչանքով ասաց Ղևոնդ աղան:

Քիսաչին մի պահ ուշադիր նայեց Ղևոնդ աղային, ապա լռելյայն քիսայեց ծերունու թառամած մեջքը:

Աղան խզեց լռությունը.

— Առաջ որ բաղնիք էինք գալիս, ընկերներով էինք գալիս: Ի՜նչ քեֆ, ուրախություն, զակուսկիներ, գինի, արաղ... հիմի՞... դարտակ ձեռքերով...

— Գիտե՜մ, գիտե՜մ,— համաձայնեց քիսաչին գործը շարունակելով:

— Տարա՜ն, տարա՜ն, ամեն բան տարա՜ն: Քառասուն տարվա աշխատանքս մի օրում ջուր դառավ գնաց: Մարդ էլ քառասուն տարի քրտինք թափի, ու վերջի օրը դատարկ ձատի՜: Մեկ տարվա չէ, քառասուն տարվա քրտինք է...

— Աղայիս բանը, քրտինքն ի՞նչ է որ, քրտինքն ի՞նչ գին ունի — ձեչ, քրտինքը ձեչ բան է,— հարեց քիսաչին:

— Ա՛յ աղա, էդ ի՞նչ ես ասում, ո՞նց թե քրտինքը՝ ձեչ: Քրտինք թափելն է հարստության աղբյուրը, առանց քրտինքի բան կլինի՞...

— Բա ի՛նչ ասեմ, աղա ջան, իմ կարճ խելքով՝ քրտինքը զուր բան է: Աշխարհքիս վրա քիսաչու չափ ո՞վ քրտինք կթափե: Ծով-քրտինք որ ասում են էդ մերն է, բայց ո՞ր քիսաչին է հարստացել — ձեչ մեկը:

Ղևոնդ աղան աչքերը տրորելով՝ լարված լսում էր նրան: Քիսաչին շարունակեց.

— Պապս աղքատ մեռավ: Երեսուն-քառասուն տարի բաղնիքում քրտինք թափող գոթացած հորս ես կպահեմ: Քրտինքը ջուրի չափ էլ չէ, աղա ջան, քրտինքը հեչ, հեչ,— ամփոփեց քիսաչին իր խոսքը:

Երկուսով լռեցին: Գոլորշիով տոգորված մթնոլորտի մեջ քիսաչու ձայնը ավելի ծանրացած, դառն ծանրությամբ իջավ Ղևոնդ աղայի հոգու վրա: Քիսաչին մի պահ դադարել էր աշխատելուց. ափով սրբում էր ճակատից հոսող առատ քրտինքը, և տխուր, պղտոր աչքերով նայում էր աղային: Գոցել էր Ղևոնդ աղան աչքերը և մտածում էր: Մտածում էր Ղևոնդ աղան:

— Արդար է ասածդ, խելքի մոտ բան ես ասում, դրուստ է, դրուստ է,— անվերջ կրկնում էր նա: Պառկած դրությունից ելավ նստեց:

— Անուն իճ բախշե՞ս, տղա ջան:

— Երանոս է անուս, աղես որ դուն ես:

— Երանոս ջան, դրուստ ես ասում:

— Հա՛, աղա ջան, ես ինչքան էս աշխարհքում ապրել եմ, էն եմ տեսել, որ քրտինք թափողը հաց կուտե, բայց հարստություն չի կապե:

Ղևոնդ աղան ուշադիր լսում էր, միևնույն ժամանակ միտքը լարված բանում էր:

— Երանոս ջան, ուզում ես ասել թե՝ խելքն է բան տեսնողը, թե որ աշխատանքը ոչինչ է:

— Խելքն էլ բան չէ, աղա ջան, խելքն էլ՝ հեչ: Ի՞նչ է՝ աղքատ մարդիկ խելք չունի՞ն, որ աղքատ են: Էնքան հարուստ մարդիկ եմ տեսել, խելքի կտոր չունեին, էնքան աղքատ մարդիկ կան՝ խելոք, խելքի տեր, բայց աղքատ, չունևոր:

Ղևոնդ աղային այս միտքը չզարմացրեց, ինքն էլ շատ փորձ ուներ այս մասին: Իր գործի մեջ կային շատ խելացի գործակատարներ՝ հասարակ ոճիկով, իսկ իր եղբոր որդիները՝ անխելք, հիմար տղաներ, բայց աշխարհի հարբուտության տեր:

— Երանոս ջան, դու ասում ես՝ քրտինքը. խելքը ոչինչ են, ուրեմն ի՞նչն է բանը:

— Չգիտեմ, աղա, չգիտեմ, էդ տեղ խելքս չի հասնի... Կարելի է՝ բախտի բան է հարստությունը:

— Բախտ-մախտ չգիտեմ,— ձեռքը շարժելով ասաց Ղևոնդ աղան,— բախտը պատահմունք է, կարող է պատահել, կարող է չպատահել: Մեկ մարդ փող է կորցնում. մեկ ուրիշը գտնում է կորցրածը. բանը էդ չէ, բանն էն է, թե ինչպես էն կորցնողը փող վաստակել է, խելքո՞վ, քրտինքո՞վ, ուրիշ ի՞նչ կա դրանից դուրս:

— Չգիտեմ, աղա, չգիտեմ,— և որովհետև գործը ավարտել էր, շիտկվեց մեկնելու, միաժամանակ հարելով,— աղա, բաղնիքդ աևուշ:

Ղևոնդ աղան հագնվեց և Երանոսին կարողացածից ավելի վարձատրելով մեկնեց բաղնիքից: Անմիջապես տուն չգնաց, քիսաչու խոսքերը գրգռել էին նրա մտքերը, ուզում էր հին ընկերներին հանդիպել և խոսք բաց անել իր հոգում ոտքի ելած մտքերի մասին: Կարմրած դեմքով անցավ հանրային պարտեզի միջով, աչք ածեց իրենց հավաքատեղին, մարդ չկար, ճաշի ժամանակն էր. ընկերները տուն էին դարձել: Ինքն էլ քայլերն ուղղեց դեպի տուն. դանդաղ քայլում էր և մտածում: Նրա հոգում մեծ վեճ կար: Հանկարծ աչքին ընկան մի քանի նոր, հսկա շենքեր, զարմացած նայեց, մինչև այսօր դրանց չէր նկատել. նրան թվաց, թե՝ հենց այսօր են շինել: Մի ձայն, կարծես, խոստովանում էր իր մեջ. «Լավ շենքեր են, բան չունեմ ասելու»:

Անկանչին հասան ռադիոյի ձայներ, ինչ-որ ծանոթ երգեր լսեց, մի պահ ականջը լարեց:

Ծիծաղելով, կարկաչելով խումբ-խումբ անցնում էին տղաներն ու աղջիկները՝ գրքերը անութների տակ: Աշակերտներն էին, տուն էին դառնում. «Ուսում տալու կողմանե գեշ չեն, տեսնես ի՞նչ են սովորեցնում» — խորհում էր Ղևոնդ աղան: Եվ վեճը շարունակվում էր նրա հոգում:

Մի կողմը ասում էր — «Հասարակ քիսաչի մարդը ի՞նչ ճշմարիտ բաներ ասաց, իսկությունը, արդարությունը: Թե որ խելքն ու քրտինքը արժեքավոր բաներ լինեին, ամեն խելոք

ու աշխատող մարդ հարուստ պիտի լիներ»: Իսկ մյուս կողմը հակառակում էր — «Քիսաչին ի՞նչ գիտե, բաղնիքից դուրս աշխարհ չի տեսել: Հարստանալու աղբյուրը խելքն է, աշխատանքն է: Էլ ուրիշ բան չկա»:

Սակայն Ղևոնդ աղան չէր կարող որոշել՝ թե ո՛ր ձայնն է ճշմարիտը, երբ հավանությունը մեկի կողմն էր հակվում, մյուսը կատաղի բողոքում էր, իր փաստերը առաջ քաշելով: Ղևոնդ աղան կիսվել էր, երկու կտոր էր եղել՝ մեկը մյուսի դեմ զինված, որոնք անհաշտ կռվում էին իրար հետ և տանջում նրան: Եվ մինչև այսօր հաստատամիտ և համառ Ղևոնդ աղան՝ անսովոր ներքին պայքարի, հիմա հանձնված էր կասկածների ու տարակույսների: Դանդաղ քայլում էր և չիմացավ, թե ինչպես տուն հասավ:

Կինը սեղանը փռած՝ սպասում էր նրան: Նկատելով ամուսնու արտասովոր մտածկոտ դեմքը՝ վախեցած հարցրեց.

— Ինչո՞ւ էսօր մի տեսակ ես:

Ղևոնդ աղան ամբողջությամբ ներկայացրեց բաղնիքում տեղի ունեցած խոսակցությունը:

Կինը իր սովորական հանդարտությամբ լսում էր ամուսնուն՝ խաշը պնակների մեջ լցնելով:

— Քիսաչի՞ն պիտի ասեր, որ աչքերդ բացվեին: Հիմի հանգստացա՞ր... Էլ ի՞նչ էիր միալար ասում թե քրտինք եմ թափել, ինձի պես խելացի մարդ քիչ կա:

— Լա՛վ, իսկ դու ի՞նչ ես ասում. եթե խելքն ու աշխատանքը դարտակ բաներ են:

— Քա՛ դե, ես ի՞նչ գիտեմ: Ուրիշներին որ հարցնես, ասում են թե մարդիկ հարստանում են ուրիշներին զրկելով, նրանց աշխատանքը կողոպտելով, գողնալով:

— Ո՞վ է ասողը... աղջի՞կդ, փեսա՞դ...

— Ասենք թե՝ հա. շիտակ չէ՞: Դու ասա, ի՞նչ բան է առուտուրը: Գողություն չէ՞, խաբեբայություն չէ՞,— աչքերը բանալով ամուսնու վրա, պատասխանեց կինը:

— Առուտուրը առուտուր է՝ աշխարհքի էն գլխից: Թե կուզես իմանալ խաբել, գողանալու համար շատ մեծ խելք է հարկավոր: Խելքը ինչի՞ համար է տրված մարդուն: Մեղավորն ո՛վ է, որ ծախողը առնողից խելացի է, աշխարհքը

խելքով կուտեն, և էլ հիմարը խելոքի ծառան է: Էս է աշխարհքիս օրենքը:

— Էս սատանայական աշխարհքի օրենք է: Չլինի էդպես աշխարհքը, ավելի լավ կլինի,— հուզված պատասխանեց կինը:

— Մեկ մասով շիտակ է,— կնոջն ավելի չգրգռելու համար մեղմ եղանակով ասաց Ղևոնդ աղան,— բայց աշխարհքն էապես եկել է, էապես էլ կերթա, ուզենանք, չուզենանք:

— Ինչպես եկել է, էդպես է՛լ չի երթա,— հակաճառեց կինը,— ապա ծաղրելով,— խելք չունիս, բա ա՞չք էլ չունիս, չե՞ս տեսնում, որ բոլշևիկները աշխարհքն էնպես փոխեցին, որ ինչպես եկել է, էլ էնպես գնում չի՞...

Ղևոնդ աղան մի պահ զարմացած նայեց կնոջը, ապա աչքերը վար նետեց և կարծես թե իրեն հետ էր խոսում.

— Մեկ մասով շիտակ է:

Հետո հաշտ ու հեզ ձայնով՝ հոգեկան պայքարից ելք գտնողի բավարարությամբ, դարձավ կնոջը.

— Դրուստ ես ասում, աշխարհքը փոխվեց... աշխարհքը փոխեցին:

Եվ լուռ ու մունջ սկսեց ախորժակով ուտել աղջկա ուղարկած խաշը: Ճաշից հետո՝ բարի տրամադրված դիմեց կնոջը:

— Ա՛յ կին, վաղը կիրակի է, մի լավ ճաշ պատրաստիր, աղջկաս ու փեսիդ հրավիրիր մեզ մոտ հացի: Հաշտվենք երթա. ես էլ ծերացել եմ...— և խոսքի շարունակությունը ներսի դին տանելով,— «բոլշևիկները մի բան գիտենալու են անպատճառ, որ հինը սուտ հանեցին, տակը վրեն բերին: Հիմի լավ եմ հասկանում, որ բանի մեջը բան կա»:

Եվ երբ Ղևոնդ աղան պառկեց՝ վերմակը գլխին քաշելով ետճաշվա քունը առնելու համար, կինը ուրախ-ուրախ գընաց աղջկա մոտ:

Իսկ Ղևոնդ աղան հանգիստ քնեց: Վաղուց է այսպես հանգիստ չէր քնել նա:

1931

ԾԱՌԱ ՍԻՄՈՆԸ

Վաղուց անցած-գնացած օրերից է այս վերհիշումը:

Իմ բարեկամ մի ընտանիք Սիմոն անունով մի սպասավոր ուներ: Սիմոնը տարիներից ի վեր ծառայում էր նրանց մոտ. գոհ էին նրա աշխատանքից և թվում էր, որ ինքն էլ գոհ էր նրանցից:

Մի օր Սիմոնը ներկայանում է տանտիրուհուն և ասում.

— Խանում, ներող եղեք, ես ուզում եմ տուն գնամ, մեր գեղը: Շատ շնորհակալ եմ ձեզանից, բայց էլ չեմ ուզում ծառայել:

— Ինչո՞ւ, Սիմոն ջան,— զարմացած հարցնում է տիկինը,— չէ՞ որ մենք քեզ միշտ լավ ենք նայել, տարիներ շարունակ մեր տանն ես եղել, սովորել ենք իրար: Հիմա ի՞նչ պատահեց, ասա սրտաբաց: Թե ոռճիկդ քիչ ես գտնում՝ ավելացնենք: Էնպես լինի, որ գոհ լինես մեզնից և մեր տանը մնաս:

— Չէ՛, խանում ջան, գիտեմ, որ ինձ հետ լավ եք վարվել, և ոռճիկիս մասին էլ գանգատ չունեմ. միայն թե ուզում եմ գեղ գնամ, ժամանակավոր. կարելի է մի քանի ամիս անց էլի ետ գամ:

— Բայց ինչո՞ւ ես մնում այդքան երկար ժամանակ. գեղում ի՞նչ կա որ...— Սիմոնը լռում է:

— Մեկ էլ որ՝ չասացիր գնալուդ պատճառը:

— Խանում ջան, ճշմարիտը որ կուզես իմանալ՝ ասեմ,— վճռողական շեշտով պատասխանում է Սիմոնը,— ուզում եմ գնալ, որ էլ իմ անունը չլսեմ: Չլսեմ անունս՝ ականջս հանգստանա: Թե չէ, Էս ինչ կյանք է, ես կխելոեմ: Շարունակ, ամեն օր — Սիմոն, սամավարը բցե, շո՛ւտ, շո՛ւտ արա:

Սամավարը բցում եմ, կրակը փչում եմ, մեկ էլ — Սիմո՛ն, աղայի կոշիկները արի տար, շուտ սրբիր՝ բեր:

Վազում եմ, կոշիկները տանում, սրբում եմ շտապով, հանկարծ՝ Սիմո՛ն վազե ֆայտոն բեր, օրիորդը տեղ է գընում, շո՛ւտ, շո՛ւտ: Վազում եմ ֆայտոն բերելու՝ սամավարը թողնելով իր բախտին, կոշիկները սրբելը կիսատ, ֆայտոնը բերում եմ: Սամավարը եփել, ջուրը թափվել է. նորից ջուր եմ լցնում, նորից ածուխ եմ բցում: Մեկ՝ սամավարն եմ փչում, մեկ՝ կոշիկները սրբում:

Նորից աղունիս.

— Տո՛ տղա Սիմոն, չայն ո՛ւր մնաց. բերանիներս չորացավ: Դեհ, գնա մի լիմոն էլ բեր, միայն շո՛ւտ արա:

Մյուս կողմից աղայիս ձայնը.

— Տո՛, Սիմոն, կոշիկ սրբե՞լ էր, թե սեղյակ սրբել: Մի ժամ եղավ: Շտապում եմ, շո՛ւտ արա:

Ձեռքս կոշիկի միջից չհանած՝ դռան զանգը տալիս եմ:

— Սիմո՛ն, վազի՛ր, դուռը բաց,— էդ միջոցին, մեկ էլ պատին տղան.— Սիմոն, թռի մի տուփ պապիրոս բեր: Դե՛հ, քեզ տեսնեմ... Դեհ, խանութ ջան, բա ես ո՞նց անեմ, որ չխելոքեմ: Օրը հազար անգամ աղունիս լսում եմ.

— Սիմո՛ն, արի,
Սիմո՛ն, գնա,
Սիմո՛ն, տար,
Սիմո՛ն, բեր,
Սիմո՛ն, վազե,
Սիմո՛ն, թռիր,
Սիմո՛ն, Սիմո՛ն,
էլի
Սիմո՛ն, Սիմո՛ն...

Էդ՝ ականջս խարտոցող Սիմոն աղունը երազիս մեջ էլ եմ լսում, քունս հարամ է անում:

Տունը մարդ չեղած ժամանակ էլ պատերը ձեն են տալիս. — Սիմո՛ն, Սիմո՛ն:

Աղունիս ինձ թշնամի է դառել, աչքիս գրողն է դառել.

կատաղեցնում է ինձ, գժվեցնում է ինձ: Կուզեմ փախչեմ աշխարհի ծայրը, որ զզվելի անունս էլ չլսեմ:

Չէ՛, խանում ջան, էլ ուժ չունեմ. հիմի շատ եմ խնդրում իրավունք տաս, երթամ մեր գեղը, մի քանի ամիս ականջս հանգստանա, հետո նորից կգամ: Խոսք եմ տալիս, միամիտ եղեք...

1931

ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ՄՈՏ

Ընկերս մի անգամ պատմեց ինձ հետևյալը.

— Տարիներ առաջ, 1900-ական թվականներին, գնացել էի Սյունյաց աշխարհը տեսնելու: Պատանի հասակիցս իմ երևակայությունը թափառում էր այդ սքանչելի երկրում: Հիմա գնացել էի իրական աչքերով տեսնելու այն: Ելնում էի բարձր լեռները, իջնում էի մթին ձորերը, մտնում էի ամեն մի անկյունը այս հետաքրքրաշարժ աշխարհի, հետաքրքրաշարժ նույնքան իր արի ժողովուրդով: Թափառում էի ձիով, թափառում էի ոտքով, միշտ խանդավառ, միշտ անսպառ կարոտով:

Սյունիքում ունեի ուսանողական երկու ընկերներ, Պետերբուրգի համալսարանից: Հարազատ եղբայրներ էին նրանք, ավագ եղբայրը՝ 30 տարեկան, կրտսերը՝ 27 տարեկան, հարուստ կալվածատերեր էին՝ իջած մելիքների սերունդից:

«Հավիտենական ուսանողներ» էին նրանք: Ուսանել էին Պետերբուրգում, Փարիզում, Բեռլինում, շարունակում էին ուսանել Մյունխենում, Մոսկվայում, Փարիզում: Զվարճանում էին, և ֆակուլտետից ֆակուլտետ անցնում: Երկու տարին մի անգամ դառնում էին հայրենիք, իրենց մոր մոտ: Հայրը վաղուց մեռել էր և մայրն էր կառավարում ընդարձակ կալվածները, հուսալով, որ ահա որդիները կավարտեն իրենց ուսման ընթացքը և կգան, ձեռք կառնեն հայրենի ժառանգությունը վարելու գործը: Սակայն որդիները գալիս էին, իշխանավայել զբոսնում, որսի ելնում և գրպանները դրամով լցրած՝ նորից վերադառնում էին Ռուսիայի և Եվրոպայի մայրաքաղաքները:

Մելիքական այս ընտանիքին պատկանող գյուղախմբի

կենտրոնում, բլրակի վրա թառած էր նրանց մեծակառույց, երկհարկանի տունը, հսկա դարբասով: Սվատական դղյակ:

Ընկերներս ընդունեցին ինձ գրկաբաց և ներկայացրեցին իրենց տիկին մորը — իսկական մի տիրուհի, հրամայական աչքերով՝ թավ հոնքերի տակ վառվող, իշխանական կեցվածքով, բարձրահասակ, նիհար, ջղուտ: Անշեջ ծխախոտը բերանի ձախ անկյունից մխացող: Ասացին, որ հայրերը մեռած էր, ուստի տիկինն էր վարում այդ մեծ տնտեսությունը: Ծառաները հետևը ձգած ընտիր ձին նստած, ատրճանակը կողքից կախ, մտրակը երկարավիզ կոշիկի մեջ խրած՝ մելիքուհին շրջում էր սեփական գյուղերում, հանդերում, այգիներում, անտառներում: Այցելում էր ջրաղացները, փեթականոցը, ամբարները: Գնում էր ստուգելու ձիերի երամակները, ոչխարների հոտերը, եզների, կովերի նախիրները:

Ուղարկում էր բերքերը շտեմարաններն ու պահեստները, գինիները՝ մառանները, մթերքները ճամփա էր դնում շուկաները վաճառքի համար:

Հրամայում էր, կարգադրում, գանձում հասույթների ու վաճառքների գումարները, հավաքում տուրքերն ու տասանորդները:

Առավոտյան նստել էինք մեծ ու լուսավոր դահլիճում, և նախաճաշում էինք:

Սեղանի վրա՝ աշխարհի բարիքը — ձու, հավի ապուր միս, կաթ, սեր, կարագ, մեղր, պանիր, սուրճ... Երկու եղբայրները՝ շնորհալի ձևերով, ջենտլմեններ: Հագնված մաքուր, նորատարազ, օսլայած շապիկներ, ընտիր փողկապներ՝ մարգարտյա գնդասեղներով: Կուշտ կերած և կուշտ քնած: Թարմ սափրված դեմքերով, օդը-կոլոնով անուշահոտված:

Դահլիճը կահավորված էր Վիեննայից հատկապես բերված թանկարժեք կարասիներով — բազմոցներ, աթոռներ, սեղաններ, դաշնամուր: Գրադարաններում փառակազմ գրքեր՝ մտքի ու զգացմունքի համաշխարհային տիտանների երկերը: Առաստաղից կախված էր բյուրեղյա ջահը: Դահլիճի պատերը զարդարված էին մեծ հայելիներով և զանազան

հեռավոր աշխարհների և քաղաքների շքեղ տեսարանների նկարներով և մեծ մարդկանց պատկերներով: Դահլիճի աջ կողմի պատուհանները նայում էին դղյակի բակին, իսկ ձախ կողմի պատուհանները բացվում էին մի հոյակապ բնանկարի վրա.— լեռների շղթան հանգույց առ հանգույց ձգվում էր, գնում էր հեռուները և ուրվականում: Երազուն գագաթները՝ ծերպերի մեջ կապույտ ձյուների պատառներով, մենախոսում էին երկնքի պայծառ լռության մեջ: Ստորոտները պատած մութ-կանաչ անտառներով, որոնց շունչն ու շառաչը հասնում էին մեզ:

Ձորերի շրթներին՝ ապառաժների գագաթների վրա, դարերին ճակատ էին բռնել հինավուրց վանքերը և մեյիքների կիսափուլ ամրոցները:

Արտերի ծովածուփ զմրուխտը կակաչներով կարմրախայտ և արտերի եզերքով սուրացող լույսերի նման առվակները ցոլում էին ու ցոլցլում: Որոտագին ու լիությամբ վազում էր Որոտան գետը՝ ժայռոտ ափերը դարեր անխոնջ տոկունությամբ տաշելով:

Արևը ոսկի էր մաղում և մի անհրակաև գեղեցկությամբ բաբախում էր հունիսյան այս չքնաղ առավոտը Սյունյաց կախարդական աշխարհում: Ուտում էինք և խոսում զանազան հարցերի մասին: Եվ կարճ լռությունից հետո, շարունակեց իր խոսքը պարոն Հովսեփը, կրտսեր եղբայրը.

— Ա՛յսպես, ես ատում եմ ամբոխին: Ամբոխը ամեն տեղ և ամեն ժամանակ անազնիվ է, արհամարհելի: Այո՛, թող շատ բան լինի ամբոխի համար, շատ բարիք, եթե կարող եք, ես համաձայն եմ, բայց ո՛չ ամբոխի միջոցով, որովհետև նա ստոր որակի արարած է, հետևապես նրա գործերն էլ ստոր կլինեն: Հա՛րկ է արդյոք կրկնելու հին դարերի ամենահիրատես խորհողի՝ Հերակլիտի խոսքերը. «Ամբոխը անասունի նման է. նա մտածում է մի բանի մասին միայն թե՝ ի՞նչպես կուշտ ուտի»: Մի՞թե սա զզվելի չես գտնում...

— Դեռ շարունակի՛ր, լսում եմ քեզ,— ասացի ես:

— Ես շատ եմ մտածել այն բանի մասին, թե՝ ո՞ր հասարակարգն է լավագույնը և հետևապես, բնականը և ո՞ւր է գնում մարդկությունը, ի՞նչն է մարդկության ապագան: Եվ

իմ մտքերն համաձայնում են Նիցշեի փիլիսոփայությանը: Այս փշրվող աշխարհի վրա պիտի կառուցվի ապագա պայծառ աշխարհը, գերմարդու վեհ աշխարհը:

— Ո՞րն է գերմարդու այդ վեհ աշխարհը, կոնկրետ կերպով ասա ինձ,— հարցրի ես:

Մեծ եղբայրը, որ ուշադիր լսում էր մեզ, վառեց մի գլանակ, և մատի ծայրով թոցրեց զգեստի վրայից անտեսանելի, երևակայական փոշու հյուղեն:

— Ժողովուրդը, այսինքն ամբոխը,— շարունակեց պ. Հովսեփը,— հովիտներում և դաշտերում պիտի աշխատեն, հաց արտադրեն և սերունդ առաջ բերեն: Սա է նրա կյանքի իմաստը: Իսկ գերմարդը պիտի սավառնեն այդ նյութական գործերով զբաղվող բազմության վրա: Ճի՛շտ մեր լեռների արծվի պես, որ ճախրում է դաշտերի և գյուղերի վրայով, երկրից, նյութից բարձր, աչքերը լույսին հառած:

Ոգևորված՝ ավարտեց խոսքը, հաղթական աչքերը վրաս պտտեցնելով:

— Սխալվում ես, հանդարտ հակաճառեցի ես: Այդ ասածդ զուտ երևակայություն է: Արծիվը չի ճախրում աչքերը լույսին հառած: Երբե՛ք: Նրա աչքերը քո արհամարհած նյութին են հառած. նա վերևից իր սրատես աչքերով որս է փընտրում, ներքև, երկրի վրա: Եվ ոչ թե լույս: Քո գերմարդն էլ որս փնտրող արծիվ է՝ վերևում ճախրող: Նա սովորական եսամոլ է, և ուրիշ ոչի՛նչ:

— Բնա՛վ, բնա՛վ... տաքացած վրա բերեց պ. Հովսեփը, անհատականությունը եսամոլություն չէ: Ինքը՝ Նիցշեն ասել է, որ՝ գերմարդու դռան վրա գրած է — «ապրել ուրիշների համար»: Գոյություն ունի երկու դրություն՝ ամբոխ և գերմարդ: Գերմարդը տալիս է իր հոգուց պատգամներ նոր, լավ կյանքի համար, իսկ ամբոխը միայն պիտի աշխատի և պիտի հպատակվի գերմարդուն: Սրա մեջն է նրա երջանկությունը: Բայց գերմարդը պիտի ճգնի, երկնի, ստեղծի ուրիշների համար, զանգվածների համար: Այս վսեմ տառապանքի մեջն է նրա էությունն ու փառքը:

— Լավ չհասկացա, թե՝ ինչո՞ւ համար է նրա այս վսեմ տառապանքը.— դիտմամբ հարցրի ես:

— Որպեսզի անասնությունից բարձրացնի ամբոխին, նրան տանի դեպի լույսը,— կարճ և կտրուկ պատասխանեց նա:

— Եթե գերմարդու նպատակն է բարձրացնել ամբոխին, այսինքն, աշխարհաբար ասած՝ ազատել նրան տգիտությունից, շահագործումից, և եթե քո նպատակն էլ նույնն է, թո՛ղ ուրեմն այդ միջնադարյան զառանցանքները և կառչիր նոր դարաշրջանի մեծագույն մտքին՝ գիտական սոցիալիզմին, որ...

Խոսքս ընդհատեց և գրոհ տվեց վրաս, արհամարհալից՝ կրկնելով.

— Սոցիալի՛զմը, սոցիալի՛զմը... այդ սոցիալիզմդ ջրընջում է անհատականությունը...

Լա՛վ իմացիր, որ անհատն է պատմության հոմը, մղիչը, նպատակը: Թովմաս Կարլայլի հետ ասում եմ, որ՝ պատմությունը դասակարգերի կռիվների պատմությունը չէ, այլ մեծ մարդկանց, գերմարդերի կենսագրությունը: Եվ հետո, սոցիալիզմը...

Իսկ հիմա ես խզեցի նրա խոսքը.

— Թույլ չտվիր ինձ, սիրելի Հովսեփ, որպեսզի լրացնեի իմ տեսությունը: Լսի՛ր հիմա: Միայն սոցիալիզմի հաղթանակով երկրի վրա կտարրանա իսկական անհատականությունը: Միայն նա կարող է ազատագրել մարդուն հացի մղձավանջից, որ ստրկացնում է նրան: Ստրուկ, անազատ մարդը զուրկ է անհատականությունից: Ազատությունը հնարավորություն կտա մարդուն զարգացնելու իր անհատականությունը բազմակողմանի ձևերով: Սոցիալիզմը հոմանիշ է բախտավորության, ազատության, անհատականության:

— Ի՜նչ թյուրիմացություն, ի՜նչ թյուրիմացություն, կըրկնում էր Հովսեփը, ջղագրգիռ մատներով ոլորելով ընչացքների ծայրը:

— Ո՞վ գիտե, շարունակեցի ես, այդ քո ասած ամբոխի մեջ ի՜նչքան կորած հանճարներ կան, որ մեռնում են կեղտի ու կարիքի մեջ: Սոցիալիզմը կփշրե բոլոր պատվարները, կլայն ճանապարհ կբանա բոլորի առաջ, և գիտությամբ ու ազատությամբ թևավորված մարդկությունը, ամբողջ մարդ-

կությունը, կգերմարդանա: Եվ ո՛չ թե կլինի գերմարդերի մի տիրող գագաթ՝ բարձրացած ստրուկ մարդկության փոշիների վրա: Եվ պիտի տեսնես այն ժամանակ թե նոր մարդկությունը ի՛նչ խոյանքներ պիտի ունենա բնության ուժերի դեմ՝ հաղթահարելու տարերքը իր երջանկության համար. և այն ժամանակ միայն մարդը կլինի, իրապես, իմաստն ու նպատակը նույնիսկ բովանդակ տիեզերքի:

— Լսեցի քո ճառը, որ միտինգի մեջ էր հարմար: Ի՛նչ ամբոխավարն ես եղել, չգիտեի,— ասաց պ. Հովսեփը, որի ձայնի մեջ դրսևորվում էր հոգու ատելավառ կիրքը սոցիալիզմի հանդեպ:

Եվ արագ քայլերով գնաց, գրադարանից հանեց, բերեց մի գեղակազմ գիրք:

— Ահա՛ նոր մարդկության ավետարանը՝ «Զարադուստրան»: Սա է փրկության գիրքը:

Եվ Նիցշեի գիրքը հաղթականորեն բռնելով աչքերիս առաջ, երկյուղածությամբ դրեց սեղանի վրա: Ես այլևս միտք չունեի բան ասելու, սակայն չգիտեմ ինչո՛ւ բորբոքված վրա բերի.

— Բայց այդ գիրքը հեքիաթ է. դրանով չի կարելի փրկել հյուծվող մարդկությունը շահագործումից, տառապանքներից: Մարդկության փրկությունը, մարդկության ապագան...

Ընդոստ ոտքի կանգնեց մեծ եղբայրը, պարոն Դավիթը, ջղուտ շարժումով գիրքը առավ, շպրտեց, որ ընկավ բազմոցի վրա, այնտեղից էլ շառաչով ընկավ հատակին:

— Ի՛նչեր եք խոսում, ի սեր աստծու, ի՛նչեր եք խոսում, — գոռաց՝ ուղղակի մեր վրա ցատկելով,— դուք կարդացել եք արդյոք Մայնլենդերի գիրքը՝ «Փրկության փիլիսոփայությունը»:— Ո՛չ: Ձեք կարդացել: Կարդացեք: Մարդկությունը փրկություն չունի: Բնությունը չար է. բնության օրենքները՝ դաժան, գազանային պայքար, հավերժական արյունոտ կռիվ, իրար ուտել, և մենք այդ անողոք բնության ձեռքին սոսկ խաղալիքներ ենք միայն իրար ուտելու համար.. Ի՛նչ երազներ են դրանք՝ գերմա՛րդ, սոցիալի՛զմ, երջանկությո՛ւն, բարձրացո՛ւմ... սուտ բաներ են դրանք, պատրանքներ են

դրանք: Միակ ճշմարտությունը հարատև տանջանքն է և միակ փրկությունը՝ մահը: Իրական տրամադրությունը հավաշխարհային վիշտն է և անվիճելի փիլիսոփայությունը՝ պեսիմիզմը: Մյուս բոլոր վարդապետությունները՝ օրոր, ինքնախաբում, խաշխաշ, ոսկե մշուշ...

Մարդկության ապագա՜... ի՜նչ դառն ծաղր: Ի՞նչ պիտի լինի մարդը 30.000 տարի հետո, երեք միլիոն տարի հետո...

...Երկրագնդի ապագան և նրա վրա տառապող-զառանցող մարդկության ապագան գազային վիճակն է, և ոչ նույնիսկ հող դառնալը:

Հանկարծ լսվեց մի սուր ճիչ: Վախեցա ես, ցնցվեցի: Ջարհուրելի ճիչեր՝ բակի կողմից, թերևս այնտեղ անասուն էին մորթում... Սակայն եղբայրները հանգիստ էին, և հայացքիս մեջ հարց տեսնելով՝

— Մայրիկն է:

— Գյուղացի է ծեծում.— ասացին այնպիսի անտարբերությամբ, որպես թե առօրյայի մի սովորական բանի մասին լիներ խոսքը:

— Գյուղացիները հաճախ հարկ չեն տալիս կամ պարտադիր աշխատանքից փախչում են, մայրիկն էլ ծեծել է տալիս. տիո՜ւր անհրաժեշտություն,— ասաց մեծ եղբայրը լամբակի ծաղիկը ուղղելով:

— Եթե այդ ռամիկներին չսաստես, կելնեն գլխիդ կկզնստեն,— ասաց պ. Հովսեփը և գնաց վերցրեց Նիցշեի գիրքը: Տնտղեց, ապա հանդիմանալից շեշտով ասաց եղբորը,— փչացրիր կազմը. մի՞թե չէիր ափսոսում:

Ներքին, անգիտակից մղումով մոտեցա պատուհանին: Գետնին ձգած էր մի գյուղացի, որի մերկ մեջքին երկու ծառաներ ճիպոտով հարվածում էին: Տիկինը կանգնել էր թշվառի գլխի վերևը, ձախ ձեռքը կողքին կանթած, ծխախոտը բերանը և աջ ձեռքի կշռավոր շարժումով չափ էր տալիս, ղեկավարում սև գործը...

Մի վայրկյան նայեցի և հեռացա:

Եղբայրները, կարծես, արդարացնելու համար այս դաժանությունը, գաղափարաբանում էին:

— Տգետ են գյուղացիները, չեն ըմբռնում, որ պարտավոր

են մեզ՝ կալվածատերերիս, քանի որ հողը մերն է դարերից ի վեր:

— Օ՜, նրանք իրենց շահը շատ լավ են ըմբռնում, բայց ուրիշի շահը՝ երբե՛ք: Սեփականության մասին նրանց գաղափարը այդ է:

— Առանց սեփականության ճանաչումի չկա հասարակություն: Պետություն, օրենք, կարգ-կանոն շինված է ժողովրդի հնազանդության վրա:

— Ամբողջ քաղաքակրթությունը և հառաջադիմությունը կայանում է սև աշխատանք կատարողների հնազանդության մեջ:

— Արիստոտելն ասում է, որ առանց ստրուկների չկա...

Մի եղբայրը լրացնում է մյուս եղբորը, բայց ես այլևս չէի լսում: Մտքերս և զգացմունքներս խառնվել են իրար, հոգիս տակնուվրա էր: Այս ո՞ր աշխարհումն ենք... Մի՞թե չկա իշխանություն, օրենք, զսպիչ ուժ... Կան, այո՛, կան, բայց նրանք կալվածատերերի շահերի պաշտպանության համար են, բովանդակ ցարական իրավակարգը: Այս ավատական վայրում կալվածատերը իրավունք ունի վարվելու իր հպատակ գյուղացիների հետ գրեթե այնպես, ինչպես կվարվեր իր անասունների հետ:

Կրակ ու կիրք բռնկվեց մեջս, զայրույթ ու վրեժ. ուզեցի ավազակ լինել, այս ճորտերից ավազակախումբ կազմել, ընկնել սար ու ձոր, կոտորել բոլոր հարստահարողներին, ճիվաղներին, իշխանավորներին, իշխանության ներկայացուցիչներին, այրել նրանց դղյակները և հնադարյան կեղեքման որջերը...

Ներս մտավ տիկին մայրը, իշխանական հանդարտությամբ մշտավառ ծխախոտը բերանին:

— Դե՛հ, վե՛ր կացեք, ձիերը նստեք, գնացեք մեր կալվածները մաև եկեք, ցույց տվեք ձեր ընկերոջը, հա՛, չուշանաք ճաշին... Ի՜նչ եք էս սիրուն օդին նստել վարժապետների պես գրույց եք անում. էդ բանը քաղաքումն էլ կանեք: Ի՜նչ է, չկշտացա՞ք գրքերից:

— Մայրիկ, ո՞ւմ էիր ծեծում,— հարցրեց պ. Դավիթը:

— Շատունց Մարգարին, հա, էդ շան տղան լավ ծեծ

կերավ: Էս մի շաբաթ է՝ էդ գյադեն խաբում է, հարկը չի բերում: Եթե չխղճայի, ծառաներս նրա ոսկորները ջվալի մեջ դրած տուն պիտի տանեին:

Ես քարացած նստած էի: Նա տիրական հայացքը դարձնելով դեպ ինձ.

— Բա՛, որ ռայաթին չծեծես, հարկ չառնես, էս իմ տղերքը ո՞նց պիտի քեֆ անեն, էսպես փայլեն ու բլբլան: Դո՛ւ ասա, տեսնեմ...

Կարծես, ուրիշն էր իմ փոխարեն լսում մելիքումու խոսքերը: Ես ներկա չէի արդեն. ինձ հափշտակել էր իմ բոցավառ երազը —

...Ես ավազակապետ էի, աի ու սարսափ տարածող: Հավաքել էի բոլոր ճնշվածներին, կեղեքվածներին և ճորտերին: Նրանց գլուխն անցած՝ հեղեղի պես իջել էի մթին լեռներից, կրակի պես, մտրակի պես ջնջում էի, լափում էի, սրբում էի երկրի երեսից բոլոր հարստահարողներին, գիշատիչ հրեշներին, բռնակալներին և բոլոր քեֆ անող, փայլող ու բլբլացող սինլքորներին և կռիվ էի բացել ամբողջ աշխարհի շահագործողների դեմ: Իսկական ավազակների դեմ...

1932, Փարիզ

ՆՐԱՆՔ ԴՐՈՇԱԿ ՈՒՆԻՆ

(Պատմվածք)

Նոտր-Դամի տաճարի մուտերը, Սենա գետի ձախ ափը:

Հին Փարիզի այս մասը անձուկ և անկարգ փողոցների մի բավիղ է: Այստեղ լիքն են փոքրիկ, էժանագին սրճարաններով և ճաշարաններով, որոնք ապաստարան են աղքատ, անօթևան մարդկանց:

Լուսաթաթախ և կենսաթրթիռ այս մեծաւիարթամ մայրաքաղաքում ցրտից և անձրևից, քաղցից և հոգնածությունից սպառված ընչազուրկները միայն այստեղ են գտնում լույս ու ջերմություն, ընկերություն և հանգիստ:

Մի քանի «սու»-ով ընդունում են սուրճը հիշեցնող մի սև, տաք ջուր և նորից մի տասնյակ «սու»-ով ստամոքսի զարհուրելի գազանը խաբող մի արգանակ, մսի երևույթ ունեցող բաներով:

Այստեղ են վիճաբանում ու ճառում աղքատ հոետորներն ու փիլիսոփաները, խորհում ու սրախոսում, լուծում պետական, միջազգային և ընկերային հարցերը: Եվ վերջապես, այստեղ, նորից մի քանի «սու»-ի գնով գիշերում են նրանք՝ չոր հատակների վրա կամ նստած տեղերում քնում են՝ աներեր գլուխները դրած սեղանների չոր տախտակներին: Իրրև հատուցում իրականության մեջ կրած զրկանքների. թերևս այս կարծր փայտերի վրա հանգչող գլուխների մեջ ավելի շքեղ երազներ են ծաղկում, քան մետաքսի բարձերին հանգչող գլուխների ներսը:

Կես-գիշերից անց էր, երբ «Լուի Քաթորզ» սրճարանից փողոց ելավ մի ստվեր, անութի տակ մի դատարկ պարկ, և մինչև աչքերը քաշած, բնական ձևը վաղուց խաթարված մի

գլխարկ: Փողոցի լապտերի լույսը մատնեց նրա արգահատելի վիճակը — օրերով չսափրված սև դեմքը՝ ցցուն այտոսկրներով, ջարդված ուսերին մի հնամաշ վերարկու:

Սրճարանի խառնիճաղանջ ժխորը գրգռել էր նրա ջղերը. չէր կարողացել նիրհել կամ անրջել, ներամփոփվել իր խոհերի և հուշերի մեջ:

Հասարակ սիգարեթների կծու և խիստ ծխով տապակված մթնոլորտը սրտախառնուք էր պատճառել նրան:

Կանգնեց գետի քարափին, հին գրքեր վաճառողների մոտ և լիաթոք շնչեց: Ձմեռվա պաղ օդը մատներով շոյեց նրա քունքերն ու ճակատը: Անցավ սրտախառնուքը: Քայլեց...

Քայլում էր աչքերը Սեհնայի ջրերին ձգած,— խավար հունի միջով անձայն, խորհրդավոր սողոսկում էր մի սև, մթին թանձրություն, որի վրա դողում էին լուսերը, լույսի կարմիր, դեղին, ճերմակ բեկբեկուն այուներ:

Մի ավտո շաչեց և սլացավ նրա կողքով, վայրկենապես տեսավ լուսավոր կառքի մեջ մուշտակով պարուրված մի կին՝ աչքերը գոց, գլուխը հենած մի երիտասարդի ուսին...

Արշակն իր բոլոր անտարբերությամբ նայեց և դեմքը շուռ տվեց դեպի գետը,— ինչքան նման էր ինքը՝ իր հոգին, իր կյանքն այս գետի մթին, անշշուկ մի ալիքին, որ սևամած գնում է, սողոսկում է...

Դեպի իրեն քաքսալով երերում էր ու դանդաղ հառաջանում մեկը: Ծուռ ոտներով, առանց վերարկուի: «Ինչքան խեղճ է սա մարդը,— մտածեց Արշակը.— ո՞ւր կերթա, ո՞վ կսպասե գինքը: Ինձմեն ավելի թշվառ կերևա... ասել է՝ ինձմեն ավելի թշվառներ կան սա քաղաքին մեջ»:

Արշակի երեսին խստագին նայելով անցավ հասարակությունից տրորված այս խեղճ էակը, սակայն, ո՞վ կիետաքըրքըրվի, ո՞վ կուզե իմանալ՝ թե ինչ անհավոր վիշտ ու ցավ կա նրա կրծքի տակ... ինչպիսի՞ գալարումներ այս փոշիների մեջ:

Ամեն օր, առավոտյան ժամը 3—4-ին Արշակը գնում էր կենտրոնական-կենսամթերքների մեծ շուկան, մի պատահա-

կան աշխատանք անելու՝ օրվա ապրուստը ճարելու համար: Այսօր իր ժամանակից վաղ դուրս եկավ սրճարանից՝ հեղձուկ օդի պատճառով: Թեև կես գիշերից սկսում է մթերքների հետզհետե տեղափոխումը դեպի շուկան, բայց եռուն աշխատանքը տեղի է ունենում ժամը 3—4-ին:

Հսկա քաղաքը խորին մրափում էր այս պահին: Մի պաղ լռություն կար բոլոր փողոցներում: Այս լռությունը թեպետ հաճելի էր Արշակին, հանգստացնում էր նրա գրգռված ջղերը, սակայն փչում էր ցրտաշունչ մի քամի՝ վայրկյանե-վայրկյան զորեղանալով: Կարելի էր հավատալ, որ քամին գալիս էր ուղղակի հյուսիսային բևեռից: Սղոցի պես կտրում էր, կիսում էր Արշակին: Դողում էր նա, ատամներն իրար զարկելով:

Իջավ մետրոյի աստիճաններով ցած, քամուց պատըսպարված գուբը: Մետրոյի բերանից փչում էր մի տաք շունչ: Վանդակավոր գոց դռների առաջ կույտ եկած կային՝ իրար վրա, մարդկային սև զանգվածներ՝ թե՛ այրեր, թե՛ կանայք: Արշակը բռնեց մի ազատ տեղ, մեջքը դեմ տվեց ներսից բխող տաք շնչին: Պարկից հանեց լրագրի թերթեր, ընթանցով փաթաթեց ոտներն ու ծունկերը, ձեռներն անցրեց թեզանիքների մեջ և կծկվեց:

— Օրինյալ ըլլա սա մետրոն, աղքատներու «կենտրոնական ջեռուցումը»:

Արշակն ութ ամսից ի վեր գործազուրկ էր. միջազգային տնտեսական տագնապը նրան փողոց շպրտեց: Գործ չկար: Եվ բացի այդ՝ աշխատելու իրավունք չուներ. առաջ, նորից աշխատանքի թուղթ չունենալով հանդերձ, ծառայում էր մի հայի գարաժում: Ավտոներն ընդունում էր, ցուցակագրում, պահում, մաքրել տալիս և վճարները գանձում: Գոհ էր՝ ժամանակ ուներ թերթեր, գրքեր կարդալու: Իշխանությունն աչքը գոցում էր, բայց հետզհետե խստանալով տագնապը, հետապնդումներն ավելի սաստկացան. հայը վախենալով օրինազանցության տուգանքից՝ արձակեց Արշակին:

Նրանից առաջ մի բարի ֆրանսացու մոտ էր, որը միձիանի սայլ ուներ. դրսից՝ դաշտերից սև հող էին բերում հարուստների պարտեզների համար: Նորից գոհ էր. բայց

իր բախտից ֆրանսացին հիվանդացավ. կինը սայլը վաճառեց:

Արշակը շատ աշխատեց թուղթ ձեռք բերել՝ չկարողացավ. վերջին տարիները դժվարացրել էին աշխատանքի արտոնություն ստանալը: Փող պետք էր մեջտեղ խաղացնել. բայց փող որտեղի՞ց: Չեղավ ու չեղավ:

Գործազրկության առաջին շրջանում ծախեց ժամացույցը, զգեստներից: Ընկերներից պարտքեր արավ, քաշքշվեց մի կերպ: Այնուհետև սպառվեցին բոլոր միջոցները: Ամենուրեք մերժում. ամեն դուռ՝ գոց, ամեն ճանապարհ՝ փակուղի: Ինչպե՞ս եղավ, ինչպե՞ս ընկավ, ինքն էլ չհասկացավ:

Արշակի ներքին աչքերի առաջ ներկայացան ու կենդանացան իր անցյալ կյանքի օրերը: Պատերազմից առաջ իրենց սիրուն ավանը՝ դալար պարտեզների մեջ, կարկաչուն առուներով օրորուն.... Հայրը, մայրը՝ այն սուրբ կինը, եղբայրը, քույրը, ընկերները...

Վերքեր, վերքեր, հին ու նոր վերքեր... Ոորը թուրքերն սպանեցին, մայրը տեղահանվեց դեպի Միջագետք և... կորսըվեց. քրոջը, լույսի պես քրոջը, թուրքերը տարան, ինքը պատերազմի հայտարարումից քիչ առաջ արդեն թուրք բանակի մեջ զինվոր էր, ակաևատես չեղավ իր հարազատների կորստին, սակայն պատերազմից ետո փոքր եղբորը գտավ որբանոցում, թոքախտի վերջին շրջանում և քիչ յ·սմանակ անց, խեղճը մեռավ իր գրկի մեջ. բայց ի՞նչ եղան ընկերները՝ ա՜խ, Պետրոսը, Արտաշեսը, է՜յ գիդի Տիգրանը... ի՞նչ եղան... ինչպե՞ս էին դպրոց գնում, ինչ ճիչով, աղմուկով, չանթաները գրքերով, տետրակներով, ուտելիքներով լեցուն. չանթաներն իրար կռնակի զարկելով դպրոց էին գնում... «Մեղրագետը» ծայրեծայր կարդաց, «Գյուղիս ճամփան», ա՜խ, գյուղիս ճամփան, ի՜նչ գեղեցիկ քերթված է, գոց գիտեր, ընդհանուր ազգաց պատմություն, հայոց պատմություն, հաճույքով էր սովորում. թվաբանություն բնավ չէր ախորժում. քերականություն՝ «ես կերթամ, դուն կերթաս, ան կերթա». «ես կուտեմ, դուն կուտես, ան կուտե». ճշմարիտ է, առաջ ամենքս կուտեինք, հիմա՝ ես չեմ ուտեր, սա իրաղթություն է, դուն չես ուտեր՝ թերևս ադ ալ իրողություն է. ան

չուտեր. ոչ, հարկավ մեկը կա, որ կուտե. կամ դուն կուտես, կամ ան կուտե. «ես չեմ ուտեր», և մտքի մեջ անվերջ խոնարհեց — ես չեմ ուտեր: Մտածումը ցրվեց, անորոշացավ, սակայն հոգու մեջ մեքենայաբար դառնում էր՝ «ես չեմ ուտեր, ես չեմ ուտեր...»:

Կողքին քնածն ուժով խոմփում էր, Արշակը դարձավ իրական աշխարհին, մտքերը որոշ գույն ու ընթացք առան նորից...

«Սա անիծված պատերազմը... թուրք բանակի զինվոր էր Միջագետքում, Բաղդադի ճակատին, անգլիացի և հնդիկ զինվորների դեմ... իրեն վաշտի ճակատից ճակատ փոխադրվելու ընթացքին, ճանապարհին տեսավ կողոպտված, ավերված հայ գյուղեր, տեսավ տեղահանված հայերի խմբ-բակներ՝ կանայք, ծերեր, երեխաներ. ոչ մի երիտասարդ չկար մեջները, ցնցոտիներ հագած կմախքներ, ոտով գնում էին թուրք ձիավոր ոստիկանների հրացանների տակ... լացով գնում էին նրանք. գերմանացի սպաները լուսանկարում էին այդ թշվառներին... Իրենց վաշտից զատում էին հայ զինվորների և տանում անհայտ ուղղությամբ. անվերադարձ... Ինքը հրաշքով ազատվեց. վիրավորվել էր աջ ոտից, թեև բուժվեց, բայց մինչև օրս էլ, երբ ցուրտ է լինում կամ շատ հոգնած, ոտը ծանրանում է, կարծես, ծանր երկաթ լինի կախված ոտից... Հիվանդանոցում նրան խնամեց մի արաբ զինվորական բժիշկ և մոտը պահեց իբրև սպասավոր մինչև պատերազմի վերջը... Թուրքերը պարտվեցին. զինադադար... Ինչ խանդավառությամբ շտապեց Կ. Պոլիս: Դաշնակիցները գրավել էին Պոլիսը. տրամվայի վրա տոմսեր վաճառող եղավ. լավ էր, ուրախ էր. գիշերները լուսացնում էր ընթերցանությամբ. այնքան նոր գրքեր կային, սակայն Հյուգոյի «Թշվառները» նորից կարդաց... Աչքերի առաջ նազով ու գեղով մի պահ կանգնեց Սիրարփին... Բայց լքեց Արշակին, անսիրտ կերպով լքեց, գնաց ուրիշի հետ: Թերևս լավ եղավ: Ինչքան ավելի դառն վիճակ պիտի լիներ, եթե նա հիմա հետը լիներ,— անհաց, անօթևան...

Այնուհետև փախուստ, Բուլղարիա, Ռումինիա. երբեմն զբաղմունք, կուշտ օրեր, բայց հաճախ— անգործ, անոթի

թափառումներ, հետո՝ Մարսեյլ, Փարիզ, բայց նորից լավ էր, սակայն հիմա, հիմա, բայց հիմա...

Հանդիպակաց մի մեծ շենքի աշտարակից խավարն ու ցուրտը ճեղքելով՝ հատ-հատ զարկեց ժամացույցը— զընգ, զընգ, զընգ, զընգ: Ժամը չորսն է: Բոլոր փողոցներից, լայն ու նեղ, վազում էին դեպի կենտրոնական մթերաշուկան անհամար ծանրաբեռնված կառքեր, ձիով կառքեր, երկաթուղի, ամեն տեսակի կամիոններ: Դեպի Փարիզի փորը, սոսկավիթխար փորը:

Շուտով պիտի զարթնի, ահա շուտով կզարթնի հսկայամարմին քաղաքը, չորս միլիոն որկորանի Լևեաթանը: Պիտի զարթնի և գիշերվա հանգստից ուժովցած ստամոքսով սեղան պիտի նստի և պիտի լափե ու խժռե, պիտի կլանե ու խմե այն անհուն, անհամար, անբավելի բարիքներն ու չարիքները, որ բազմամիլիոն աշխատավոր ու չարչարված ձեռքեր՝ երկրագնդի տարբեր կետերում որսացել են, հանել են, բռնել են, ցանել են, հնձել են, մաղել են, մաքրել են, պատրաստել են ու բերել այդ ճիվաղային որկորի համար, այդ հրեշային գազանի համար — Կանադայից ու Կալիֆորնիայից, Ալժիրից ու Սիբիրից, Իսպանիայից և Իտալիայից, Եգիպտոսից և Հնդկաստանից, փոթորկահույզ ծովերից և մթին անտառներից, անճպրածիր դաշտերից, երկնքի կապույտ ոլորտներից...

Արշակը դժկամորեն ելավ երազային մտորումներից, ոտի կանգնեց, ցնցեց մարմինը, ձեռները վեր-վար, ետ-առաջ թափահարեց, թերթերը հավաքեց պարկի մեջ և ուղի ընկավ:

Աղջամուղջը սև լռությամբ շաղախել էր քաղաքի հսկա շենքերն իրար հետ: Տների պատուհանները խավար էին, փողոցի լապտերները՝ նոսրացած:

Դեպ իրեն գրոհ էր տալիս ձիավորների մի ուրվաբանակ: Իրականությո՞ւն, թե՞ բանդագուշանք: Սակայն հաղթակազմ ձիերը փնչալով հառաչանում էին, երկաթե սըմբակներով ծեծելով սալահատակները: Ահագին աղմուկն ու դղրդոցը ցնցում էին քաղաքը, վախ ու սարսափ ձգելով սըրտերի և տարածությունների մեջ: Արշակի զարհուրած հոգին ապրեց պատերազմի ահեղ տեսիլները նորից: Թաքնվեց

դռան մի խորշում: Լապտերի լույսի տակ տեսավ զինավառ ձիավորները՝ շրջապատած վարում էին մի բազմություն այր մարդկանց՝ ձեռները շղթայակապ, երիտասարդ, տարեց, ընկճված և խիստ դեմքեր, գլուխները՝ կոր և գլուխները ցից:

Լուռ, լուռ, լուռ:

Անցան, գնացին:

Արշակը ելավ թաքստոցից, շունչ առավ, շնչեց, սրտի զարկը խաղաղվեց: Ովքե՞ր էին, ո՞ւր էին տանում, բա՞նտ, աքսո՞ր, տեղահանությո՞ւն... Բացատրություն չուներ:

Արշակը մտավ ընդարձակ շուկայի սահմանը: Մի ամբողջ աշխարհ: Լույս, լույս ամեն կողմ: Իրարանցում, եռուզեռ: Կառքեր, կամիոններ, մարդիկ, ձիեր, կանայք, կամիոններ, նորից կառքեր, նորից ձիեր, մարդիկ, ցրտահար, արեվակեզ կարմրած, սևացած: Ծիչ, աղմուկ, ժխոր, բոռոց, խրխինջ, ծիծաղ, զայրույթ, կատակ, գոռոց, հայհոյանք...

Իջեցնում էին կառքերից, կամիոններից արկղներ մեծ ու փոքր, սակառներ, զամբյուղներ, տակառներ, հազարավոր, հազարավոր: Արշակը առաջ էլ, թեև աշխատանքի պաշտոնական թույլտվություն չուներ, բայց միշտ աշխատանք գըտնում էր, որովհետև գործ շատ կար, ձեռքեր՝ քիչ: Կանչում էին նրան՝ պետք ունեին: Շալակում էր բեռները, գլորում էր տակառները և տանում շուկայի զանազան բաժանմունքները:

Երբ տագնապը չկար, ֆրանսացին ավելի ազնիվ, ավելի շահավետ գործի էր ձեռ զարկում, իսկ հիմա — «ներողություն, ես իմ տանն եմ, իմ հացը ուրիշի չեմ տա: Գնացեք ձեր երկիրը...»:

Սակայն նորից, երբեմն, բախտը ժպտում էր Արշակին. մեկը ձայնում էր. «չո՛ւտ, այս բեռը տար, այ տես, այնտեղ...»:

Ծանր էր բեռը, բայց փող էր տալիս մարդը, երեք ֆրանկ, չորս, հինգ ֆրանկ մինչև իսկ:

Արշակը մխրճվեց կառքերի մեջ, կանգնեց կամիոնների առաջ՝ պատրաստակամ աշխատելու... Ահա մի բեռնակիր

դիմեց նրան երկու մեծ զամբյուղ միասին տանելու: Տարան:

Բեռնակիրը զննեց նրան և պեղելով գրպանը, երկու ֆրանկ տվեց: Արշակը նորից դեգերեց. բայց ոչ մի ապսպրանք, միայն մի ծեր կին խնդրեց ձեռքի ծանրոցը տանել մինչև մոտիկ տրամվայը: Տվեց մի ֆրանկ: Արշակը գոհ եղավ:

Հետո անցավ ծովածավալ շուկայի ուղիներով՝ ծածկված և բացօթյա: Օհ, ինչքան բարիք կա վաճառքի հանած: Ահա փողոցները մսերով լիքը՝ կեսերից կախված եզներ, ամբողջական հորթեր, խոզեր, վարազներ, եղնիկներ, նապաստակներ, ճագարներ... Ահա թռչունների փողոցաշարքը — հավեր, սագեր, հնդկահավեր, փասիաններ, բադեր, կաքավներ... Մյուս փողոցները — հացեր, յուղեր, պանիրներ: Բազմատեսակ ընդեղեններ, բանջարեղեններ, կաղամբ, սոխ, գետնախնձոր, ճակնդեղ, միրգ, միրգ, պտուղներ՝ չոր ու թաց, խնձոր, տանձ, նարինջ, բանան, նույնիսկ թարմ խաղող, դեղձ: Հազար անուններով ու ձևերով:

Ահա ձկնեղենների շարքերը: Գետերից, ծովերից, օվկիանոսներից: Ինչ արտառոց տեսակի ջրային կենդանիներ, բույսերի պես բաներ, ժժմունքներ, ոստրեներ, կրիաներ, խեցգետիններ, գորտեր...

Գլխապտույտ բերող առատություն, անչափություն... և ինչ սիրտ խառնող հոտեր...

Մի՞թե այս բոլորը պիտի ուտվեն, պիտի ուտեն, և վաղը նորից նույնը և մյուս օրը նորից նույնը, և մի տարի հետո նույնը... և միշտ, միշտ:

Իսկ ի՞նքը — իրեն բաժին չկա, գրեթե չկա, այո, իհարկե:

Ինչ որ շուկա են բերված հեռու վայրերից և անհամար տեղերից, հիմա պիտի ցրվեն մայրաքաղաքի մեջ: Վաճառված իրերն արդեն հետզհետե ելնում են շուկայից դուրս: Ձեռքի կառքերը, ձիերի կառքերը, ավտոները, կամիոնները կրում էին իրերը նեղ ու լայն փողոցներով, ցրվում էին, ծավալվում էին քաղաքի հազար-հազար կետերում: Այդ անհուն բարիքները պիտի մատակարարվեն միլիոնավոր քաղաքացիներին, ամենքին իրենց վճարման կարողության համաձայն բաժին պիտի հասնեն, իսկ իրեն՝ Արշակի համա-

ներին՝ գրեթե ոչինչ, այո՛, իհարկե, ոչի՛նչ, ոչի՛նչ... Ահա վաճառում են: Վաճառողները համոզված դեմքով և համոզիչ խոսքերով գովում են իրենց ապրանքները, գնորդները կասկածոտ հարցով ու հայացքով, վեճով ու դժկամորեն գնում են ապրանքները: Ազնիվ աշխատանքով, խարդախությամբ, ստորությամբ, ոճիրով ձեռք բերած փողերն աղմուկով, պայքարով անցնում են ձեռքից ձեռք, կարծես ամեն ոք ուզում է խլել մյուսի փողը, միսը, միրգը... կռիվ, հայհոյանք, բռունցք իրար հանդեպ:

Ոստիկաններն անցնում էին խոժոռ, հանգիստ երկյուղ սփռելով:

«Բուրժուական աշխարհը կռիվ է՝ ապրելու համար, կռիվ՝ մեկը մյուսի դեմ, ապրողը հաղթողն է. հարուստները հաղթողներն են» — մտքի մեջ ասաց Արշակը Շարլ Բրեյի խոսքերը: Բրեյը Լուի Քաթորզի սրճարանի հիմնական հաճախորդն էր, ուր և լինում էր Արշակը: Արդեն տարեց մարդ էր, ժողովրդական թերթերի նախկին աշխատակից, հիմա կլոշար դառած: Ամիսներից ի վեր ինչքան բան էր սովորել Արշակը նրանից: Խորապես հարգում էր նրան, որպես իր պատկառելի ուսուցչին, որի խոսքերն անհերքելի ճշմարտություններ էին, սրբազան պատգամներ: Ինչե՞ր Արշակին չէր ասել նա, ինչքան բան էր ամիսների ընթացքում սովորել նրանից, լուսաբանել հասարակական-քաղաքական բարոյական երևույթների մասին: Նրա խոսքերը միշտ կրկնում էր նա՝ անվերջ խորհում դրանց մասին:

Արշակը մի պահ դեգերեց առևող-ծախողների շուրջը, բայց ոչ մի ապսպրանք չստանալով՝ գնաց շուկայի աղբյուսները, ուր թափված ծղոնների և թղթերի մեջ լինում են արկղներից և տակառներից գլորված-ընկած խնձորներ, նարինջներ, ընկույզներ, բանջարեղեններ, երբեմն կոնսերվի չբացված տուփեր և այլն, և այլն:

Իր նման քաղցածների բազմությունն արդեն ձեռնարկել էր աշխատանքի պրպտանքի, ընտրության: Ինքն էլ սկսեց պրպտել: Պարկի մեջ նետեց մի քանի գետնախնձոր, երկու նարինջ, երկու բանան, տոմատ, մի քանի գլուխ սոխ: Պարկի մեջ նետեց մի քանի կտոր տախտակի բեկորներ: Բավա-

կան էր, պարկը ծանրացավ։ Կապեց պարկի բերանը, ձգեց ուսը և մի սիգարեթ վառելով շրջում էր աղբյուրից-աղբյուր և դիտում ընչազուրկներին։

Շուկայի պարտեզակի մեջ խանութների յուրաքանչյուրի դռան առաջ աղբյուրներ կան, որ ներում են ծառայողների ճաշերից մնացած ավելցուկները — երշիկի, մսի կտորներ, հացի, պանրի կտորներ, միրգ, պտուղ... Եվ բոլոր աղբյուրների մեջ լաթի կտորներ, սանր, դանակ, թելեր, առասաններ, գամեր... Այս ավելցուկների դեզերը,— մինչև քաղաքապետության բեռնակիր կամիոնների գալը, որոնք հավաքում-տանում են աղբերը քաղաքից դուրս,— ընչազուրկների ձրի շուկաներն են։

Ահա աղքատ մարդկանց ստվար խմբեր աղբյուրների վրա, աղբյուրների մեջ ընկղմած՝ պրպտում են, քրքրում են մրջյունների պես, վիրավոր մատներով, կիսաբոբիկ ոտներով, սպանված, հիվանդ աչքերով։

Հավաքում են, ինչ որ մարդիկ այլևս չեն կերել, հավաքում են, ինչ որ ոչ միայն մարդիկ, խոզերն էլ չեն ուտում, բայց ինչ որ մարդիկ ուտում են։

Ահա մի ծերուկ երկու անթոցների վրա՝ գտավ մի կտոր միս և ձգեց անատամ բերանը։

Ահա մի պառավ՝ կքած, կարծես, աշխարհի ծանրությունն իր փխրուն ուսերի վրա կրելով՝ պեղեց, հանեց մի շերտ հաց և երշիկի կտոր, հացը կրծեց, իսկ երշիկը դրեց պարկի մեջ, երևի թոռան համար։

Մի ուրիշ պառավ՝ մաշված, քաշված երեսով, դողդոջուն ձեռով գտավ մի լաթի կտոր, տնտղեց և դրեց պարկը։

Ընտանիքներ՝ հայր, մայր, աղջիկ՝ հյուծված, ուրվային, աղբյուրների վրա։— Այսպես սերունդներ՝ անդուռ կարիքի մեջ խեղդված, այսպես, մարդիկ՝ բռնված ապրելու անգիտակ, անպարտելի մղումով՝ քշված գնում են բնության հըզոր մականի տակ։ Ակամա դատապարտվածներ ապրելու։ Մարդիկ, որոնք մանկության օրերից այլևս գլուխներն աղբյուրներից վեր չեն բարձրացրել, աստղերը չեն տեսել, մարդիկ՝ որոնք դարերի ձեռքով, ճիգով ու հանճարով կերտած այս չքնաղ ոստանից ոչինչ չեն ստացել։ Ոչինչ չեն շա-

ճել գիտության և տեխնիկայի նվաճումներից, որոնց հոգիները չեն բաբախել երբեք գեղարվեստի հրաշալիքներից:

Ռադիոյի, սավառնակի, էլեկտրականության բանաստեղծությունը նրանց համար չէ:

Եվ կուշտ մարդկության միտքը խաղցնող չորրորդ տարածության և վեցերորդ զգայության առեղծվածները նրանց համար վաղուց լուծված են, որովհետև նրանք ապրել են միշտ բոլոր ըմբռնելի տարածությունների և զգայություններից դուրս:

Ահա նրանք ուսերն առան լիքը պարկերը և դանդաղ, դեղնկոտ քայլերով հեռանում են շուկայից, դառնում են... առուն:

Սողում են չքնաղակերտ քաղաքի պողոտաներով, ուր վարարուն հոսում է կյանքը: Գնում են սողալով ճարտարապետության հրաշքների տակով, ապարանքների մարմարիոնների առջևից:

Անսիրտ հարստությունը, զայրացուցիչ լիությունը, անըմբռնելի պերճանքը հորդում է դուրս հոյակապ տներից, վաճառատուններից, բանկերից, պայթում է, պոռթկում է, ծլփում է, բայց մարդիկ աղեգալար սողոսկում են:

Գնում են տուն, աղքատության արվարձանները, ուր անմարդկային չքավորության ճախճախուտի մեջ վխտում են անթիվ ապրեր, կանայք, երեխաներ՝ խոցոտ մորթերով, վիրավոր աչքերով: Ուր ընտանիքներ քնում են խոտե-քուրջերթերե մի անկողնու մեջ, միասին՝ մկների, որդերի, մանրէների հետ: Ուր արև քնավ չի այցելում, միայն խոնավ մթություն, միայն հիվանդություններ, մահվան հարևանություն, գարշահոտություն, թշվառություն, թշվառություն...

«Այս քաղաքը աշխարհի աչքն է, բայց կույր է այդ աչքը և քնավ չի տեսնում իր գոռոզ քթի տակ նեխվող թշվառությունը: Մթին, անլեզու, բայց աղաղակող, ոռնացող կապիքը...»:

Արշակը հիշեց Նորից Ճարլ Բրեյի խոսքերը:

Արշակն ինքն էլ շուկայի պարունակից դուրս ելավ:

Սենյայի երկու ընդարձակ, հոյակապ թևերի վրա փռված աշխարհաքաղաքը սկսել էր գարթնել միլիոնավոր մարդ-

կանց մի գիշերում տեսած երազներից, մղձավանջներից, ապրած հեշտանքներից և տառապանքներից:

Զարթնել էր մեծակառույց մրջնանոցը և սկսել էր աոօրյան: Բանվորների խմբերը գնում էին դեպի գործարանները, աշակերտները՝ դեպի դպրոցները, առևտրականները՝ դեպի խանութները, պաշտոնյաները՝ դեպի գրասենյակները:

Արշակը հոգնած էր և քաղցած. մտավ մի էժանագին սրճարան, ուզեց մի սուրճ, երկու հացիկ, ախորժակով ճաշակեց. տնտղեց իր հավաքածուն, մի խնձոր և մի բանան ինքը կերավ: Պարկն ուսը ձգած գնում էր Արշակը: Աչքերը գետնից չէր կտրում մի բան գտնելու հույսով. այդ արդեն իր խեղճ կացության պատճառով, ունակություն էր դարձել: Այսօրվա գտածներն էլ սովորականի պես չնչին բաներ էին: Ուրիշները դրամ են գտել, իսկ ինքը այդ բախտը չունեցավ: Առհասարակ, ե՞րբ է նա բախտ ունեցել:

Անցնում էր հարուստ խանութների, վաճառատների առաջով, կողմնակի ակնարկ նետելով հսկա ապակիների հետև ցուցադրված ապրանքների վրա:

Ահա աննշանոտությունների մի խանութ: Արդ ու զարդի: Ծլացուցիչ գոհարեղենների: Կանանց հագուստների: Հայացքը բևեռեց ուտելեղենի մի ճոխ կրպակի վրա — համադամ ուտեստներ, գինիներ, տեսակ-տեսակ ըմպելիքներ, գայթակղեցնող աղանդերներ: Մի պահ կանգնեց, ապա շեշտակի անցավ:

Կանգ առավ ճերմակեղենի մի խանութի առաջ: «Ինձ ինչ»— լսելի ձայնով ասաց իրեն Արշակը: Ամսից ի վեր նա չի փոխել ճերմակեղենը: Երկու ձեռք փոխնորդ ուներ, մեկը տվել էր երկու թաշկինակի, երեսսրբիչի և գուլպաների հետ մաքրելու, սակայն ավելորդ դրամ չուներ լվացարարուհուն վճարելու և ետ ստանալու համար: Աշնան, երբ ապրում էր կամուրջների տակ, ինքն էր անում, գետի մեջ, իր լվացքը: Հիմա ցուրտ է, կարելի չէ: Փոխնորդի տեղ մարմնի վրա թուղթ է փաթաթում հիմա, ոտները նույնպես: Թուղթը և՛ տաք է պահում, և՛ մաքուր է:

Հանկարծ, մի մեծ խանութի դրսի պատի վրա, հայելու մեջ տեսավ իրեն,— կանգնեց և դիտում էր իր պատկերը:

Ինչի՞ նման է նա հիմա, մի՞թե սա ինքն է — մազերը եղ-կար, անկարգ, դեմքը չսափրված, այտերը դեղնած, շրթունք-ները ճաքրտուն, հագուստները բոլոր նախկին ձևերը կորց-րած, երեք գույն փոխած, կոշիկները ծումոած, ձախ ոտի բը-թամատը կոշիկի քթից դուրս ցցված:

Պոլիս գտնվող իր ծանոթները հիմա հարկավ նախանձով կասեն՝ — «Երանի Արշակին, Փարիզ կապրի...» — և ձեռքը հեգնորեն թափահարեց:

Օ՛, եթե գիտենային, թե ինչպես դժբախտ է նա այս փա-ռահեղ Փարիզում, օ, ինչքան է ատում նա այս նզովված քաղաքը, որ հմայում, խաբում, բերում է մարդկանց մաշելու, խոշտանգելու, սպանելու համար:

Մի՞թե ինքը սպանված չէ, ոտքի վրա չորանում, մեռ-նում է: Ոչ ուժ մնաց վրան, ոչ եռանդ, ոչ սիրտ: Տրամադր-րություն ամեն գամ չունի երեսը լվանալու...

Ախ, ինչպես կուզեր հեռանալ, փախչել այս մարդակեր քաղաքից. հովիվ լիներ դաշտերի մեջ, արտերի, ագարակ-ների մշակ: Ի՞նչ է պետք իրեն — մշտական մի աշխատանք, մի վառ օջախ, մի կուշտ փորով հաց և բավական է:

Այս մտքերի մեջ սուզված, սողոսկում էր մայթերի եզեր-քով՝ չվստահանալով դիպչել անց ու դարձող լավ հագնված մարդկանց: Վախենում էր նույնիսկ դիպչել: Վախով, ոչըն-չանալով անցնում էր խստադեմ ոստիկանների մոտով: Ան-նկատ, աննշմարելի, աչքերի մեջ որբություն, հայացքի մեջ անվստահություն...

Քառուղու առաջ կանգնած էր մարդկանց մի հոծ բազ-մություն՝ աչքերը հառած ոստիկանի ձեռքի ճերմակ փայտին, սպասելով անցնելու թույլտվության: Մի փողոցով անցնում էր օթոների քարավանը, մյուս փողոցով քիթ-քթի կանգնել էին օթոներն ու տրամվայները: Մի թանկարժեք օթոյի մեջ մի տարեց կին էր ընկողմանել, կողքին թավիշի վրա մի շըն-ձիկ, կռնակին գեղեցկահյուս մի ծածկոց:

Արշակը նախանձով դիտում էր շանը, մինչև որ շարժ-վեց օթոն (ավտոն):

Նորից ճոխ, փարթամ խանութների տողանցք: Ի՞նչ հա-կոտնյա, հակասական իրերի խանութներ — կահ-կարա-

սիների վաճառատուն, սափրիչի, երեխաների խաղալիքների, մրգավաճառի խանութ, կողքը՝ հուղարկավորության պարագաների մի շքեղ ցուցաճանդես, արվեստական և բնական ծաղիկներով պսակներ, ժապավեններ, մարմարյա մահարձաններ: Արշակն աչքի ծայրով նայեց ներս — մի տարիքով մարդ, անկյունում նստած, թիթեղյա ծաղիկներից պսակ էր հյուսում:

«Ապահովաբար ոչ ինձ համար: Ավելի հավանական է իրեն համար: Ատկե զատ՝ ասոնք բնավ ինձ չեն վերաբերիր: Ողջ ատենս մարդիկ չեն խորհիր վրաս, մեռնելես հետո թող հարկադրված ըլլան խորհիլ՝ դիակս մեջտեղեն վերցնելու: Շատ հոգս»:

Այս մտածումով, կարծես վրեժ էր հանում մարդկային հասարակությունից:

Արագ քայլերով անցավ մեռելատան խանութից, սակայն մի հարց, մի միտք հետևից վազելազ հասավ և բռնեց նրան: Ինչու չմեռնել: Ի՞նչ իմաստ ունի այս ողորմելի գոյությունը: Ի՞նչ եղավ իր կյանքն այս երկրի երեսին — միայն քաշքշվիլ: Երբեք օր չտեսավ: Ինչու է հիմա ուզում ապրել, երբ կյանքը կրում է իբրև անտանելի մի բեռ՝ ուսերը ճարճատող: Երբ բավական է մի ոստյուն Սենայի մեջ, և լուծված կլինի վայրկենապես ամեն հարց: Անցյալ աշնանը չէ՞ր, որ կամուրջի տակ ապրող իր ընկերներից մեկը բարձրացավ կամուրջի վրա, կոճկեց ժակետը և գլխիվայր նետվեց գետի մեջ: Ինքը սարսափեց այդ դեպքից և փախավ այն չարաբաստիկ վայրից և տեղափոխվեց հեռավոր մի կամուրջի տակ:

Ինքը միշտ վախեցել է մահից: Պատերազմի ընթացքին էլ նույնպես մտածում էր մեռնելու մասին... Բայց չկարողացավ իրականացնել: Խստադեմ հարցը դաժանորեն բռնել էր Արշակի օձիքից, պատասխան էր պահանջում իր համար և անտեղիտալի առաջադրումներին:— Ի՞նչ կա ապրելու, որ կվախիս մեռնել, որո՞ւ համար կապրիս, ի՞նչ բանի համար կապրիս, ո՞վ կսպասե քեզ և կամ ի՞նչ կսպասիս կյանքեն»:

Ոչինչ, ոչինչ, հարկավ ոչինչ...

«Եթե մեռնելու վախը չըլլար, սա սոսկալի վախը... շան

պես կվախենամ մեռնելեն... ոչ թե կյանքը կսիրեմ, այլ մահեն կսարսափիմ... ահա թե ինչու կապրիմ...»:

Մեռնելը դյուրին բան չէ, մեռնելը բնավ դյուրին բան չէ: Անգարտելի է իր էության մեջ նստած ապրելու այս հզոր, աննիասկանալի այս տենչը: Բայց ինքը մենակ չէ այսպես զգացողներից: Ամեն մարդ ուզում է ապրել, ամեն արարած, մեծ կամ փոքր, ուժով կամ թույլ, բախտավոր կամ դժբախտ: Թռչուններն օդի մեջ, ձկները ջրի մեջ, որդերը տիղմի մեջ, ամենքը, ամենքն ուզում են ապրել: Մեռնել ուզողները բացառություն են:

Եվ ներսից, ընդերքից ու տարերքից բարձրացավ մի տաք, ապրեցնող զգացում և ջերմությամբ ողողեց նրա հոգին ու մարմինը:

Թող ինքն էլ ապրի բոլորի պես: բոլորի հետ: Թերևս ապրելն ավելի արիություն է: Եվ վերջապես աշխարհ է, ամեն բան կպատահի, բախտը մի օր էլ կարող է դեպ իրեն դառնալ:

Մահը, երբ լինի, կա ու կա:

Եվ ձեռքի մի ուժեղ շարժումով վերջ տվեց ներքին այս հարց ու պատասխանին:

Արշակը կապված էր մի աղքատիկ ճաշարանի հետ: Ինչ որ հավաքում էր կենտրոնական շուկայից, ինչ որ գտնում էր փողոցներում, բերում տալիս էր ճաշարանի տերերին՝ պարոն և տիկին Գաստոններին: Տիկինն ամեն բան ընդունում էր — կոճակներ, առասաններ, գամեր, կոնսերվի դատարկ տուփեր, սրվակներ, շշեր, նաև թերթեր-թղթեր, փայտի կտորներ տիկնոջ վառարանի համար — այս բոլորի փոխարեն նա ստանում էր քնելու մի անկյուն, առավոտները սուրճ՝ մի կտոր հացի հետ, կեսօրին մի պնակ արգանակ, միս և հաց: Երեկոները սովորաբար անցկացնում էր ճաշարանից ոչ շատ հեռու, Լուի Քաթորզի սրճարանում, իր բախտակից ընկերների, մանավանդ շատ սիրելի Շարլ Բրեյի մոտ: Այնտեղ էր իր սուրճը խմում, մի երկու հացիկ ուտում:

Ճաշից հետո Արշակը փողոց ելավ:

Նա իրեն լլկող հոգսերից, մտածումներից ազատվելու համար, սիրում էր թափառել փողոցները և դիտել հոսող կյանքը, այսպիսով զբաղեցնել ուշքն իրենից դուրս իրերով և մոռանալ իրեն. այդ նրա միակ սփոփանքն էր:

Այսօր որոշել էր նա տեսնել, վերստին տեսնել պատերազմի իրեն ընկերներից՝ Արամին և Սեդրակին, որոնք հիմա Փարիզ են գտնվում. վերստին խնդրել անպայման մի գործ գտնել իրեն համար, ինչ գործ ուզում է լինի՝ գավառներում, գյուղերում: Եթե ուզենան, կգտնեն, նրանք շրջանակ ունեն: Սակայն դեռ կանուխ էր նրանց մոտ գնալը: Արամը երեկոյան դեմ էր լինում իր սովորական սրճարանում, ուր թուղթ էր խաղում, իսկ Սեդրակին, որ դերձակ էր մի արհեստանոցում, կարելի էր միայն ժամը 7-ին տեսնել աշխատանքի ավարտումից հետո:

Արշակն անցավ փողոցե-փողոց, և մեծ պտույտ գործելով, եկավ կանգ առավ Նոտր-Դամի տաճարի առաջ:

Վեհաշուք տաճարի վերևից, առեղծվածային, խոլական քիմեռները օրվա բոլոր ժամերին նայում են իրենց ոտների ներքո ընդարձակ հրապարակին և հեռուները, հսկա քաղաքի մարդկային եռուզեռին, հոսող կյանքին, և Արշակն ամեն անգամ ուշադիր դիտում էր նրանց՝ քիմեռների դեմքերի արտահայտությունները:

Հրապարակի կողքի փողոցով անցնում են արագագոռ կառքեր, ավտոներ, անդուլ, անվերջ. ժխոր, աղմուկ: Ահա անցան հեծելազորներ՝ երկաթե ամբակները սալահատակը ծեծելով: Հրապարակով անցնում են աշակերտներ, կրոնավորներ, աղքատներ կարիքի մեջ կծկված, գունատ, ուժասպառ կանայք՝ ոտները քարշ տալով, անցնում են շքեղ հագնված պարոններ, կանայք ոսկեհյուս զգեստներ հագած: Անցնում են ոմանք արագ, արմունկներով ճեղքելով բազմությունը, կարծես վազում են փախչող որսի հետևից: Ահա մի սև, մեռելատար կառք, սև վարագույրներով, ճակատին փոքրիկ սև դրոշակ, մարդիկ վախով ու ակնածանքով ճանապարհ են բանում:

Մի հոյակապ շենքի պատի տակ, մայթին, նստել է մի

հաշմանդամ, քաջության մեդալները կրծքին, երգում է, դրամ է խնդրում... Ծփում է մարդկային ծովը, անցնում են իրար խառնված հարուստ և աղքատ, հիվանդ և առողջ — մեռել և կենդանի:

Քիմեռները նայում են... ահա այս քիմեռը զարմացած, ապշած է այսքան շռայլություն և աղքատություն տեսնելով, — ասում է իրեն Արշակը: Ահա այս մյուսը, ականջները գոցել է, հարկավ չլսելու համար ամեն կողմից խուժող այս ահագին ժխորը, իսկ այն մյուսը՝ արհամարհիչ անտարբերություն ունի դեմքի վրա, գրեթե չի էլ նայում. իսկ սա խորին լրջությամբ նայում է և մտածում, իրավունք ունին: Բայց մյուսը զզվանք ունի, կողքինը՝ ատելություն: Հապա ինչպես — այսքան առասպելական պերճանք և այսքան ցնցոտիություն. իսկ այն մյուսի դեմքին հեգնանք կա, նայելով այս հիմար եռուզեռին, ծաղրում է բոլորին, ծիծաղում է բոլորի վրա.— մահ, ունայնություն. անցավորություն. իսկ սրան նայիր, սրան, ինչ սարսափած դեմք ունի, նայում է սարսափած այս աշխարհաքաղաքից, մարդկանցից, թոհ ու բոհից... մի վայրկյան վախն անցավ իրեն՝ Արշակի սրտին, ետ-ետ գնաց: Քիմեռներն երբեք այսքան պերճախոս չէին եղել. երբեք այսքան բան չէին ասել Արշակին... բայց սա,սա, այս քիմեռը, ինչ հուսահատ տեսք ունի, տխուր է շատ, լաց է լինում, լաց է լինում քաղաքի վրա, այսինքն թշվառների, զրկվածների, տառապողների վրա...

Բոլոր քիմեռներն իրավունք ունին և՛ զարմանալու, և՛ զայրանալու, և՛ զզվելու, և՛ ծաղրելու, բայց նամանավանդ լալո՛ւ, ողբալո՛ւ: Եվ Արշակն իր սրտին տիրող զգացմունքը բոլորից ավելի լացող քիմեռի մեջ տեսավ մարմնացած: Տխրությամբ ու սրտաբեկ, թողեց տաճարն ու քիմեռները, դանդաղ քայլերով հեռացավ և, գնալով, մեքենաբար կանգ առավ այն կամուրջի վրա, որով ամեն օր անցնում էր տուն գնալիս:

Սենայի քարակերտ ափի պատին հենվեց և մտամոլոր ծխում էր՝ խորհելով, թե ո՞ւր գնա, ի՞նչ ասի հիմա միևչև ընկերների մոտ գնալու ժամը, և ակամա նայում էր անցորդներին: Անցնում էին մարդիկ առանց իրար նայելու, իրարով

հետաքրքրվելու, անցնում էին անտարբեր, մտազբաղ: Հավանաբար այս մարդկանցից շատերին ամեն օր տեսնում էր Արշակը, և ամեն օր նրանք նոր էին երևում իրեն: Սակայն ոչ մի ծանոթ դեմք, բոլորն անծանոթ մարդիկ, ճակատների հետև դեռ ավելի անծանոթ աշխարհներով: Ի՞նչ իմանաս — ինչպիսի՞ խոհեր, տենչանքներ, ցավեր, հաշիվներ, կրքեր, չարություններ...

Զարմանալի է, ոչ մի ծանոթ դեմք ամենօրյա տեսած մարդկային հոսանքի մեջ, գոնե երկրորդ անգամ տեսած դեմք — ոչ մի հատ: Եվ մի աճավոր, խոր մենակություն ըզգաց հազարավոր այդ մարդկանց մեջ. աճռելի քաղաքը կարծես առավ նրան իր ծանր թաթերի մեջ, ճմլեց, տրորեց, ընդմեց... և ներքին մի մղումով շտապեց գնալ այնտեղ, ուր հավաքվում են կլոշարները. գետի ափին, ներքևը: Նրանք հարազատ են իրեն. մոտիկ են, համազգում են իրար, ինչպես վտանգի ժամանակ կենդանիներն ու թռչուններն իրար մոտ են հավաքվում:

Սկսեց սանդուղքից իջնել գետափը:

Ներքևը, Սեվայի քարափի արևելահայաց պատի տակ, պառկել կամ նստել էին իրեն պես անտուն, անտերներ: Նրանցից մեկը, հավաքած թղթերն էր՝ խնամքով շտկում ու ծալում. մի ուրիշը ժողոված մանր իրերն էր զետեղում պարկի մեջ. մի ուրիշ տեղ — կեղտոտ կարտերով թուղթ էին խաղում: Դեպի Սեւնա իջնող այդ սանդուղքների գլխին հավաքվել էր զբոսնողների մի խումբ — այրեր, կանայք, պատանիներ, որոնք հետաքրքիր դիտում էին աղքատներին: Ոմանք ծիծաղում էին նրանց վրա և գոհ դեմք ունեին՝ պայծառացած ներքին այն հրճվանքից, որ իրենք չեն նրանց տեղը:

Արշակը թշնամանքով նայեց ծաղրող բախտավորներին և աստիճաններից վայր իջավ, խոսելով իրեն հետ.— «Արեվելքի մեջ թշվառներուն կմեղքանան, այստեղ կխնդան»: Թուրքիա եղած ժամանակ, հայ թերթերում և հայերից լսեր է, թե՝ Եվրոպան երկրագնդի փառքն ու պարծանքն է. լուսավորության, կրթության, մշակույթի կենտրոնը: Եվրոպայի մարդը, ազնիվ, քաղաքակիրթ, մարդասեր... բայց ի՞նչ

հիասթափություն, ի՜նչ ստություն: Եվրոպացին մարդ լինելուց դեռ շատ հեռու է:

Այսպես էր մտածում Արշակի սիրտը:

Ինքն էլ նստեց պատի տակ, միայնակ, ծունկերը ձեռների մեջ առնելով: Ցիրուցան նստել էին քուրջերի մեջ պարուրված՝ մարդկային եղկելի արարածներ: Չէ՞ որ սրանց էլ մայրեր են երկնել ու աշխարհ բերել, կաթ տվել ու գուրգուրել — խորհում էր Արշակը,— ապա ո՞վ է հիմա սրանց շպրտել սալահատակների վրա, այսպես քաղցած, աղտոտ ու այլանդակ:

Շատերին ճանաչում էր ինքը, գիտեր նրանց կյանքի պատմությունը. կային գործազուրկներ՝ իրեն նման միշտ անհաջող, անպաշտպան, վշտից ընկճվածներ, կարիքից հարբեցողներ, որոնք հարբում են ինչ գնով ուզում է լինի, ինչ ընկնում է ձեռները խմում են, որպեսզի մոռանան իրենց դառը վիճակը, մի պահ երջանիկ զգան. կային բանտերը մտած-ելածներ, նախկին ունևոր մարդիկ՝ կորցրած ամեն ինչ, հիմա անընտանիք, հասարակության մեջ այլևս տեղ չունեցողներ:

Ոմանք իրար գլխի հավաքված խոսում էին բարձրագոռ, վիճում էին տաքացած, ամենքը գազազված, դիվացած ոխով վառված իրար դեմ, աշխարհի դեմ: Նրանց մեջ հարբածներ կային, կատաղի հայհոյում էին հարուստներին, ոստիկաններին, պետությանը, բռունցք էին ցցում, վրեժ փնջչում...

Ինչքա՜ն կիրք, ցասում, բողոք, չարություն...

Արշակը հայացքը մի պահ ձգեց ծանր ու հանգիստ հոսող Սենային:

«Սրա անունը Սենա չէ: Սա Սենա գետը չէ, սա Լետան է՝ մոռացության գետը»— այսպես էր ասում միշտ Շարլ Բրեյը Սենայի մասին:

Ինչե՜ր չէին կատարվել ժամանակների մեջ Փարիզում: Ի՜նչ ոճիրներ, կոտորածներ, ինչքա՜ն արյուններ են հոսել նրա փողոցներով, բայց Սենան բոլորը հավաքել, թափել է մոռացության անդունդը:

Ո՞վ գիտե, երեկ, ինչքան զրկանքներ, եղեռներ է կա-

տարել մարդը մարդու դեմ. բայց Սեւնաև գիշերը սրբել, մաքրել է այդ բոլոր չարիքները և տարել թափել մոռացության անդունդը: Եվ այսպես ամեն օր:

Սակայն ամեն առավոտ անմեղ կերպով նորից հոսում է Սեւնաև, կարծես թե՝ երեկ կամ առաջ ոչինչ չի պատահել. ոչ մի չարիք Ֆրանսիայի սրտի մեջ, այս չքնաղ մայրաքաղաքում՝ բողբոջած Լետայի ափերին:

Արշակի մտածումը կանգ առավ:

Մի դալուկ արև, մեղմ ջերմություն էր մաղում:

Արշակը մի սիգարեթ վառեց և հանձնվեց աշնան հանելի արևի ջերմությանը:

Կլոշարներից մի քանիսը, աչքերը գոցած, նայում էին իրենց ներսը, որն անշուշտ շքեղ կահավորված էր, լավ տաքացրած և լուսավորված իրենց երազներով, տենչելով՝ աղքատների, այս անսպառ գանձերով և անկապտելի հարստություններով:

Արշակը լավ էր ճանաչում այս հոգեվիճակը: Ինքն ամեն օր հանձնվում էր երազանքի մխիթարությանը: Իրական դըժխեմ կյանքից փախչում, փոխադրվում, այսպես ասած՝ ապաստան գտնում անրջային աշխարհի մեջ: Մի ներքին հըզոր պահանջումով էր կատարվում այդ փոխադրությունը:

Ինչպես բոլոր մարդկանց, այնպես էլ Արշակի հոգին լցված է անհնշելի, անպարտելի փափագներով, որոնք անպատճառ իրականացում են պահանջում, երազների մեջ, թե առարկայական աշխարհում — այդ գրեթե համարժեք է:

Առանց երազի ինչպե՞ս կարող էին տանել այդ թշվառներն իրենց գոյության ծանր շղթաները: Երազի մեջ նրանք կուշտ էին, լավ հագնված, ծնողների մոտ, յուրայինների հետ, զվարթ, բախտավոր...

Պառկած չոր տախտակին, կամ սալահատակին, Արշակն ապրում էր անուրջների երջանիկ աշխարհում, ուր թուրք չկար, ուր հագուրդ էր տվել իր կարոտներին, ուր իրականացնում էր իր անկատար տենչերը, կորուստները ետ էր դարձնում, կործանված ընտանիքը վերակենդանացնում: Սրտի ուզածի պես դասավորում միջավայրը և աշխարհի բաները:

Արշակը կիսախուփ աչքերով դիտում էր սիգարեթի ծու-

խը — ծուխը տարածվեց, տարածվեց և կամաց-կամաց ուրվականացրեց այդ դաժան քաղաքը և տարավ նրան երազային, բարի, կատարյալ և իրական քաղաքը: Սենայի վրայով անցնող շոգենավակի շչակի ձայնից Արշակը վերադարձավ ցավագին իրականությանը: Բախտակից անտերունչները սկսել էին գնալ: Արևը կուլ էր գնացել գորշ ամպերի մեջ: Երկինքն իջել էր քաղաքի վրա, այնպես ցած, գրեթե տանիքներին քավելով:

Սանդուղքներից բարձրանալիս, Արշակը անզգուշորեն կոշիկից դուրս ցցված բթամատն ամուր զարկեց քարին, և մատը սաստիկ ցավեց: Խիստ ցավից աչքերն արտասուքով լցվեցին. կաղալով գնում էր և արցունքների միջից էր նայում շրջապատին, մարդկանց: Չէր հասկանում ինչու, բայց ուզում էր, որ իրեն կարեկցեին, գեթ մի հոգի բաժաներ նրա ցավը: Սակայն մարդիկ անցնում էին միանգամայն անտարբեր՝ առանց իսկ նկատելու նրան: Ե՞րբ է նկատել կյանքից շփացածի աչքը ցնցոտիների տակ թաքնված մարդուն, նրա հոգին: Թերևս հարուստները կարծում են, թե աղքատները ցավ չեն զգում:

Խաչաձևող փողոցներից ցուրտ քամի էր փչում. ցուրտը շեշտում էր նրա աղքատությունը, ցուրտը ավելի սաստկացնում էր նրա լքվածությունը. զգում էր իրեն ավելի մենակ, քան երբևէ եղել է:

Մի պահ հետո, հակառակի պես, դեմ առավ կոշիկի մի լուսազարդ խանութի: Ինչքա՜ն կոշիկներ, ինչքա՜ն բազմատեսակ, ինչքա՜ն շատ և անկարելի գներով: Ցասումով բռնկվեց արյունը, վայրկենական կամք զարթնեց հոգու մեջ. արյունը խուժեց դեպի բազուկները, բռունցք շինեց, ուզեց զարկել խանութի ապակիներին, փշրել ապակիները... Թո՛ղ, թո՛ղ տանեն բանտ: Բանտը երանություն է, տաք տեղ, կուշտ հաց... Շատերն այդպես են անում, որ գոնե բանտում ձմեռեն: Հանկարծ, միտքն ընկավ, որ բանտ տանելուց առաջ ոստիկանները խիստ ծեծ են քաշում, հանցավորի քիթն ու բերանը ջարդում: Ընկերներն այդպես էին պատմել իրեն:

Եվ մանավանդ ավելի խստորեն, անգթորեն են ծեծում

օտարականներին, անցագիր չունեցողներին: Շատ է մաշվել ու հյուծվել ինքը, ցավ չի կարող տանել... Ոչ, այդ իր բանը չէ, ուրիշ բան, եթե անմիջապես բանտ տանեին:

Սակայն մեծ քաղաքի ճաշի պահն էր սկսվում. մարդկային ստվար բազմություններ, ամեն ուղղությամբ աճապարում էին սեղան նստել: Մի հոյակապ ճաշարանի հսկա լուսամուտից նայեց Արշակը ներս, արդեն վառվել էին ջահերը.— բազմաթիվ սեղանների վրա, բյուրեղի և ոսկե անոթների մեջ անծանոթ խորտիկներ. սեղանների շուրջը այր մարդիկ և կանայք՝ հագուստների մեջ մերկ: Բազուկները, ուսերը, մեջքերը, կրծքերը՝ հոլանի: Կարծես սուտ կանայք լինեին, այդպես էր թվում Արշակին: Մազերի գույնը՝ սուտ, հոնքերը՝ սուտ, թարթիչները՝ սուտ, շրթների գույնը՝ սուտ, շարժ ու ձևերը, կեցվածքները՝ սուտ, բայց ինչպես իրականորեն և ճշմարտապես ուտում էին բոլորն էլ պնակ-պնակի հետևից, բաժակ-բաժակի հետևից պարպելով:

Արշակի մոտ կանգնել էր մի գունատ պատանի, ախորժակով կրծում էր ձեռքի չոր հացը, աչքը շողյության սեղանին, որպես վայելող հարուստների կողքին ճաշի բազմած:

Մի մարմնեղ ոստիկան, մեծ-մեծ քայլերով մոտեցավ և զայրույթով վանեց երկուսին էլ ճաշարանի լուսամուտների առաջից: Արշակը հեռացավ: Պանթեոնի մոտ, Սեն-Միշելի բուլվարում, Արշակը գնաց Արամի հաճախած սրճարանը, դռնից նայեց ներս. Արամը չկար, իհարկե, դեռ չպիտի լիներ, այդ լավ գիտեր ինքը, սակայն այնպես, նայեց:

Բուլվարի մայթի վրա ետ ու առաջ էր գնում, սպասելով Արամին և խորհելով իր ապելիքի մասին: Փարիզի երկինքը պղնձագույն էր դարձել միլիոնավոր լույսերով. պողոտայով պլանում էին ավտոները: Տեղ-տեղ ցցվել էին հաղթանդամ, անարկու ոստիկաններ: Անցնում էին ուսանողներ՝ տղա-աղջիկ խմբերով, զույգ-զույգ, թևանցուկ, փայլուն դեմքերով, բարձրաձայն զվարթ ծիծաղելով, աղմուկով: Նրանց միջով անցնում էին տարեց մարդիկ՝ գլխահակ, մտազբաղ,

կանայք՝ տխուր, մաշված իրենց հոգիների մեջ պտտեցնելով մի ամբողջ աշխարհը, ո՞վ գիտե ինչ ցավերի և խոհերի: Սակայն Արշակը բոլորին իրենից երջանիկ էր համարում, անհամեմատ երջանիկ:

Երեք երիտասարդ կանգնել խոսում էին: Արշակի ականջին դիպան հայերեն բառեր: Ուշը լարեց. այո, հայերեն էին խոսում:

«Դիմեմ ասոնց, թերևս բախտը ժպտի, ինձի համար գործ մը ճարեն»...

Մոտեցավ, հեռացավ, մոտեցավ նորից, գլխարկը հանեց և շփոթված մրմնջաց.

— Ներեցեք, կաղաչեմ, գործ մը չե՞ք կրնար ինձի տալ, գտնալ, կուզեմ ըսել: Հայ եմ...

— Ինչպե՞ս, ինչպե՞ս:

Արշակը կրկնեց իր խնդիրն այս անգամ ավելի հստակ և որոշ:

— Կըցավինք, բան մը չենք կրնար ընել: Աս կրիզը ամենուն հարվածեր է:

Արշակը տեղից չշարժվեց, պարզապես չըմբռնեց պատասխանը: Երիտասարդներից մեկը ձեռքը տարավ գրպանը և ապա մեկնեց դեպի Արշակը: Արշակը շփոթվեց:

— Կխնդրեմ,— ասաց երիտասարդը,— բան մը չէ եղածը: Ես ալ հայ եմ քեզի պես:

Արշակը դողդոջուն ձայնով կմկմաց.

— Բայց ես դրամ չէի խնդրեր, այլ գործ մը:

Երիտասարդն ուժով դրամը դրեց Արշակի ափի մեջ և հեռացավ, խոսակիցներին հետը տանելով: Արշակը գամված մնաց կանգնած տեղում: Ուզում էր վազել նրա հետևից, դրամը ետ դարձնել... Նա երբեք չէր մուրացել, ձեռք չէր մեկնել երբեք, միշտ մի բան տվել էր՝ մի բան առնելու համար... Հուզմունքից դողում էին ձեռները, սակայն ափը այրվում էր: Դրամն այրում էր ափը: Երերուն ծնկներով մի քանի քայլ արավ և կանգնեց, նայեց միտք կասեցրեց նրա քայլը... ինչո՞ւ վիրավորել երիտասարդին, ի՞նչ արեց, պարզապես կարեկցեց իրեն և մի՞թե ինքը խղճալի չէր և՛ տեսքով, և՛ խորքով, իսկ

թշվառության մարմնացում... Բացեց ափը — մի հինգ ֆրանկանոց:— Աչքերից ծորող արցունքը կուլ տվեց:

Բայց և այնպես այս դեպքն ավելի դառնացրեց իր դառնալից հոգեվիճակը: Ո՛չ, թշնամանք չէր տածում դեպի անծանոթ հայ երիտասարդը, այլ իրեն դեմ զայրացած էր, իր խեղճության, իր ճակատագրի դեմ դառնացած:

Մեքենաբար, անգիտակցորեն մխրճվեց հոսող բազմության մեջ և հոսանքի հետ քշվեց: Քայլել էր ուզում, անվերջ քայլել: Ձղերը գերագրգռված էին, ամեն դեմք խոցում էր ուղեղը, ամեն ձայն ու ծիծաղ ծակում էին ուղեղը, և տրամվայները, և՛ ավտոներն ուղղակի սղոցում էին, ճեղքում անցնում նրա ուղեղի միջով:

Մարդկանց մի խումբ կանգ էր առել, ինքն էլ կանգնեց: Ոտքը կտրած թշվառի մեկը նստել էր, ջութակ էր նվագում... Հիշեց ընկերներից մեկին, որ պատերազմում կորցրեց իր ոտքը, հիշեց ուրիշ ընկերին, որ Փարիզի մի գործարանում թողեց աջ ոտքը... Ուզեց հինգ ֆրանկն ամբողջապես տալ թշվառ ջութակահարին, մի վայրկենական վարանումից հետո հիսուն սանտիմ ձգեց պնակի մեջ:

Մեծ-մեծ քայլերով ետ դարձավ, սպասեց սրճարանի առաջը: Ահավասիկ և նա: Կտրեց Արամի առաջը: Արամը վերից վար մի ակնարկով ընդգրկեց Արշակի սրտաշարժ դրությունը:

— Վա՜յ, Արշա՜կ, դո՞ւն ես: Ծո, ի՞նչ կընես: Ո՜ւր ես՝, ինչպե՞ս ես:

— Ալ մի հարցներ:

Լռություն. նայեցին երկարորեն իրար աչքերի մեջ: Նորից լռություն:

— Նորեն նույն վիճակին մեջն եմ, հալլեն հավաքած բաներու փոխարեն ուտելու բան մը, կերակուրի ստվեր, հարկավ: Ուրիշ հավաքած բաներու փոխարեն ալ գրեթե քնելու իրավունք մը... Եթե Շարլ Բրեյը չըլլար, գիտես, անոր մասին պատմեր եմ քեզի, հուսահատությունը զիս վաղուց խեղդած էր...

Արամը ներքևի շուրթը կրծում էր:

— Արամ, ճանըս, բան մը, գործ մը գտիր ինձի համար,

աշխատանքեն փախչող չեմ, այնքան որ հացս հանեմ...

— Սիրելիս, ի՞նչ կրնամ ընել: Այս սոսկալի կրիզին ամեն մարդ գազան է կտրեր, ամեն մարդ...— ուզում էր ասել՝ քո վիճակին են, բայց չափազանց սուտ կլիներ այդ և հարեց:— Ի՞նչ գործ, աշխատանքի իրավունք չունիս, արհեստ չունիս, լեզու ալ լավ չգիտես...

— Ի՞նչ ընեմ,— կտրեց Արամի խոսքը,— ուրեմն երթամ Սենը նետվիմ: Վրաս զգեստ չկա, կոշիկս ծակ, ճերմակեղենս քար-աղտ է կապեր վրաս. մազերս կտրելու սուտակ չունիմ անգամ. ամիսներով բաղնիքի երես չեմ տեսած: Այնքան հայ ծանոթներ ունիս,— ճաշարանի մը մեջ աշխատիմ, ափսեներ լվանամ, գետնախնձոր մաքրեմ... ինչ գիտնամ...

— Արշակ, հոգիս, Սենի մտքեն վազն անցիր: Քեզի կրսեմ մի ընկճվիր, տոկա: Դուն պատերազմ տեսած մանչ ես ու քաջ ալ կովող, ասիկա ինչ է որ՝ կանցնի,— քաջալերող շեշտով ասաց Արամը.— գիտցիր, որ ամեն ատեն աչքիս տակն ունիմ քեզի, վրադ միշտ կխորհիմ. հիմակ ու հիմակ անկարելի է, եթե չըսես, բայց շատ դժվար է: Ես ալ, գիտես, գործ չունիմ. ըշտե թուղթ խաղալով սանկ-նանկ գըլուխ կպահենք: Քրոջս մանչը թոքախտավոր է, անոր հոգը ես կքաշիմ...

— Հապա ի՞նչ պիտի ըլլա իմ վիճակս, նորեն հալլը, նորեն աղբանոցները,— ցավագին ձայնով ասաց Արշակը:

— Թուրքի լուծեն ազատվելու համար Անգլիայի, Ֆրանսիայի կողքին կռվեցանք թուրքին դեմ. թուրքերը մեզ կոտորեցին, կողոպտեցին, վտարեցին մեր հայրենիքեն: Հիմա անոնք թուրքերուն բարեկամ են, մեզ կարհամարհեն: Խաբեցին մեզ այդ սրիկաները: Անոնք թուրքին պես ո՛չ խիղճ ունին, ո՛չ ամոթ, ո՛չ մարդկություն...

Արամի միտքը գնացել էր հայկական կոտորածներին: Արշակի մարմնով սարսուռ անցավ: Արամի խոսքերը ճզմել էին նրան. Արամը նկատեց ընկերոջ ընկճվածությունը, առույգ շեշտով ասաց.

— Աշխարհը միշտ այսպես չի մնա, մենք մեր վրեժը կհանենք, անկասկած, միայն պիտի դիմանանք մինչև այդ

օրը, ես, իմ մասիս վրեժի համար կապրեմ, այլապես կյանքը արժեք չունի ինձ համար... ինչ քաղցր բան է վրեժը լուծել...

Արամը ներքևի շուրթը ջղայնորեն կրծում էր, ապա Արշակին առանց նայելու ասաց.— վաղը եկուր քովս, կեսօրին միասին կճաշենք, խորհենք միասին: Թերևս... չի վիրավորվիս, սիրելիս, բան մը ըսեմ, հին զգեստ ունեմ, գեշ չէ՛, կոշիկ ալ ունիմ, ձեռք մը ճերմակեղեն նույնպես, ընկերներ ենք, բան մը չէ: Սա տասը ֆրանկ ալ առ բաղնիք գնա, մազերդ կտրե, սա հինգ ֆրանկն ալ առ, ուրեմն վաղը կըսպասիմ. հիմա մնաս բարով, ճանս, խաղընկերներս կսպասեն, անոնց խերը պիտի անիծեմ. ունևոր արաբ տղաներ են, Եգիպտոսեն... կյանքը պայքար է:

Ամուր սեղմեց Արշակի ձեռքը և ձեռքն ափի մեջ պահելով, հարեց.

— Ատոր Փարիզ կըսեն, դրամ չունենաս նե, մարդ երեսըդ չի նայի: Ասանկ է Լոնդոնն ալ, Բեռլինն ալ: Նյու-Յորքըն ավելի գեշ: Դրամ, կհասկանա՞ս, ի՞նչ է դրամ: Մենք որ մեր երկիրն էինք, պատերազմեն առաջ, չէինք գիտեր ի՞նչ է դրամը, կարհամարհեինք, ճանըմ, կարհամարհեինք: Իդեալ, պատիվ, ազնվություն... Ատոնք այստեղ փարա չըներ: Դրամը — ատ է մարդու հոգին, ո՛չ, աստված է ան: Ատ բանը քաղաքը, սա քաղաքներն ինձի սովորեցուցին: Դրամ, դրամ, խերն անիծեմ աս եգիպտացիներուն...

Արշակի ձեռքը նորից սեղմելով, մտավ սրճարան:

— Եթե ձեռքեն գա, բան մը կըսե, լավ մանչ է Արամը,— նրա հետևից ասաց իրեն Արշակը:

«Quatrième édition Paris-Soir» մի տղա բոռալով վազեց Արշակի կողքից: Արշակը մի թերթ գնեց, ծռվեց, մտավ մի ընդ փողոց: Նրա մտքի մեջ անընդհատ դառնում էր — «դրամ, դրամ, սա քաղաքները, քաղաքը, դրամ, դրամ» և ներս մտավ մի փոքր սրճարան: Ժամանակ կար տակավին մինչև Սեդրակի մոտ գնալը: Նստեց մեկուսի, անկյունում, պատվիրեց մի բաժակ տաք կաթ և հացիկ: Բացեց թերթը,

բայց չկարողացավ կարդալ: Իր ծանր վիճակը միշտ ներկա էր, միշտ հարցատու՝ հանգստացուցիչ լուծում պահանջող:

«Այսօր վճռական օր է, անշուշտ Սեդրակն ալ ձեռքեն եկածը պիտի ընե: Ուզածս մեծ բան մը չէ... Կաթով և հացիկով կազդուրված, սկսեց թերթի ընթերցումը: Մեծ հոդվածների վրայից անցավ, նայեց լուրերին: Թերթի մի սյունակը լցված էր աշխարհի զանազան կողմերում վերջին օրերում տեղի ունեցած ոճիրներով, աղետներով:

— Բեռլին: Մի սևանկացած բանկիր սպանեց կնոջը, փոքրիկ զավակին և իրեն:

— Վիեննա: Մի անգործ իրեն նետեց երկաթուղու տակ: Ջախջախվեց:

— Լոնդոն: Ածխահանքի փլուզման հետևանքով քսան և մեկ բանվոր ողջ-ողջ թաղվեցին հազար մետր խորության տակ:

— Լոնդոն: Մի կին, իր երկու երեխաներով մեռած գըտան: Խոհանոցի գազով խեղդամահ եղած: Քաղցածությունից և հուսահատությունից:

— Լոնդոն: Բոմբեյի շրջանում սաստիկ սով է: Քաղցած ժողովուրդը հարձակվեց պետական պահեստների վրա: Ոստիկանները ցրեցին սովածներին: Կան սպանվածներ, նույնիսկ կանայք, երեխաներ:

— Փարիզ: Մի ռուս նախկին սպա մեռած գտան իր սենյակի մեջ: Կախել էր իրեն:

— Փարիզ: Անհայտ չարագործները, երեկ գիշեր, մի ծեր մարդու սպանեցին, կողոպտելու համար:

— Նյու-Յորք: Առավոտյան գտան չորս գործազուրկ՝ սառած քաղաքապետության պատի տակ: Խիստ սառնամանիք է քաղաքում: Անտուններին հավաքում է քաղաքը, բայց անապաստան մարդկանց բազմության պատճառով՝ ցրտամահության դեպքերը հաճախակի են:

— Չիկագո: Գանգստերներն առևանգեցին մի ֆաբրիկանտի որդու: Եթե փրկանք չտան, պետք է սպանվի երեխան:

«Սարսափելի է աշխարհը» — մտմտաց Արշակը, թերթն

իրենից հեռու նետելով: Արմունկները հենեց սեղանին, գլուխը առավ ափերի մեջ, աչքերը գոցեց. սիրտը սաստիկ ճմլվում էր, բորբոքված ուղեղի մեջ անվերջ դառնում էր.— սարսափելի է աշխարհը, Փարիզ, Լոնդոն, Նյու-Յորք: Սարսափելի են:— «Մեծ քաղաքները ջունգլաներ են՝ իրար հոշոտող գազաններով լցված»,— հիշեց Շարլ Բրեյի խոսքը... Ճշմարիտ, ճշմարիտ, ճշմարիտ:

Ինչ որ կարդացել էր Արշակը, ինչ որ լսել էր բողոքող գազազած ընչազուրկների հասարակության, օրենքների, պետության մասին քննադատություններ և հայհոյանքներ՝ բոլորը խառնվել էին ուղեղի մեջ, աղմկում էին բարձրագոչ: Եվ շուրջը ծանր ու թանձր աղմուկով որոտում էր Փարիզը. իրեն թվում էր, թե Բեռլինը, Լոնդոնը, Նյու-Յորքը խռնվել են Փարիզի մեջ և աղմկում են ահռելիորեն:

Որոտում էր հսկայամարմին քաղաքը, հևում, փնչում: Կառքերի, մեքենաների աղաղակը, խոսքերի ժխորը, մանուկների զվարթ կանչերը, ծերունիների հոգոցները զանգել են, շաղախել են այս վիթխարի, խռովված որոտը: Բախտավորների քրքիջները, հուսահատների ողբերը, նորածինների առաջին ճիչերը, մեռնողների վերջին հոնդյունները զանգել են այս ամեհի որոտը, քաղաքի հրեշային ձայնը...

Արշակը աչքերը բացեց. ցնցեց իրեն, շփեց ճակատը, մի սիգարեթ վառեց, կարծես սիգարեթը անդորրություն բերեց մտքին, գլխի աղմուկը լռեց, սակայն վերստին որոտում էր քաղաքը, դավերի և բանկերի ոստայնը, արյունոտ դաշտը հակամարտ շահերի:

Որոտում է թոհ ու բոհը մթին, տարերային տենչերի, սև եղեռնի, անսփոփ ցավերի, սեռային մղձավանջի քաղաքը, ինքնասպանության, ընդվզող շռայլության և խելահեղ զրկանքների, ստրկացման և հեղափոխության քաղաքը:

Որոտում էր ստեղծագործության և խելագարության, հրաշքների և մտքի թռիչքների և անկումների քաղաքը:

Արշակը նստած մեկուսի՝ լսում էր քաղաքի որոտին: Քաղաքը մեծերախ գազանի պես ոռնում էր, գոռում, ամեն կողմից, ամեն փողոցից, ամեն վայրկյան, առանց հանգստանալու, ապառնալով կուլ տալ թույլերին, խեղճերին:

Մի անբացատրելի, խորհրդավոր վախ էր զգում նա քաղաքի ձայնից, երկյուղը տրորում էր սիրտը, մահվան չափ երկյուղը:

«Սարսափելի է քաղաքը: Ա՜խ, եթե գտնեի գյուղիս ճամփան, ա՜խ, եթե գտնեի... Չկա՛, կորել է գյուղիս ճամփան, հավիտյան կորել...»:

Եվ հուսահատ սուզվեց իր պատառոտված ցնցոտիների մեջ... Չկա՛ ամեն ինչ կորել է, ամեն ինչ կորել է...

Ժամը 7-ին արդեն Արշակը մտամոլոր և շվարուն կանգնել էր դերձակատան առաջ: Աշխատանքից հետզհետե դուրս էին գալիս արհեստավորները:

Արշակն ու Սեդրակը ողջունեցին իրար: Արշակը պարզեց նրան իր փափագը:

— Տեսնեմ, սիրելիս, հարցուփորձ ընեմ... բայց նորեն հայերու քով պիտի կյանքդ շահիս, գործինակ, սենյակ մաքրիս, ես ի՞նչ գիտնամ, ոտաց վրա երթաս-գաս, տանիս-բերիս...

— Ատ բոլորն ուրախությամբ, ուրախությամբ, միայն թե ըլլա:

Սեդրակը մտածելով.

— Արշակ, սիրելիս... բայց կըսեն, որ լավ կնայիմ ազիլներու մեջ. «փրկության բանակի» տուներուն մեջ: Չե՞ս փորձած: Անտեղերն ավելի լավ չե՞ն ատ քաշածդ կյանքեն:

— Կըրնար շատ լավ ըլլալ, չեմ փորձած: Փորձեմ ալ, տեղ չկա: Անանկ պոչ կա դուռներուն առաջ — պառավներ, փոքրիկներ, կաղեր, հաշմեր... Վերջապես մեղք է՝ ատոնց տեղը բռնել: Մնաց որ, անոնցմե շատ-շատերը տեղ չըլլալուն պատճառով նորեն կերթան փողոցներուն պատերուն տակ պառկելու...— Ապա համոզմունքի շեշտով հարեց:—

Ես կուզեմ գործ մը, որ կտոր մը հացը իրավունքովս ուտեմ:

Լռություն:

— Արշակ, հոգիս, գնա նորեն հայկական աշխատանքի գրասենյակը, պահանջե, որ անպայման գործ մը գտնեն:

— Գնացեր եմ, քանի-քանի անգամ, միշտ կըսեն՝ գործ չկա. եթե ըլլա, քեզի կհայտնենք. հասցեդ ձգե հոս:— Կամ՝

դուն գործ գտիր, մենք կմիջնորդենք: Օրմ ալ հարուստ հայ մարդու մը վրա երկտող մը տվին. հարստին դուռը զարկի, բացին. երկտողը մեկնեցի աննոր, չառավ. հարցուց՝ ի՞նչ կուզես: Քեզի պես հարյուրներ կան, ըսավ, որուն հասնիմ: Գործ չկա:— Ու զայրացած դուռը գոցել ուզեց. բռնեցի դուռը, չթողի գոցել. հրամայեց ծառային ինձի վռնդիլ. ծառան թե՝ բերանիդ համով դուրս ելիր, թե չէ գեշ կըլլա... Ի՞նչ ընեի. անպես կատաղած էի — երբեք այդչափ կատաղած չէի եղած,— կրնայի աշխարհ քանդել:

Սեդրակը մեղմ ժպտաց:

Հետո պատմեց Արամի հետ ունեցած տեսակցությունը:

— Արամը,— ասաց Սեդրակը,— միջավայր ունի: Ես ամբողջ օրը ծունկս ծալած կկարիմ, մարդու երես չեմ տեսներ: Աննոր փեշը լավ մը բռնե: Ինչո՞ւ չես երևար քովս, շատ իրիկուններ տանն եմ, կար կկարեմ: Եկուր, կխոսենք, ես ալ զգեստներ, բաներ մը ունիմ, կուտամ: Ըսիր երեսարբիչ չունիս: Կուտամ: Ընկերներ ենք, մարդ ենք, աշխարհ է, ամեն բան կպատահի, պետք չէ լքիլ. տոկալ, դիմանալ պետք է... այս տասը ֆրանկն ալ ընդունիր, երբ կունենաս, կդարձնես: Կսպասեմ, անպատճառ գաս...

Արշակը թեթևացած սրտով ուղղվեց դեպի «Լուի Քաթորզի» սրճարանը: Հարկավ տոկալու է: Արամն ալ նույնն ըսավ. հարկավ աս աշխարհի մեջ ամեն բան վերջ ունի, լավն ալ, գեշն ալ. վաղը հալլը չեմ երթար, հանգչիմ վաղը, աս գիշեր ոտներս պարզած քնանամ. առավոտ բաղնիք առնիմ, մազերս կտրիմ, կօգտե դրամս... Իրեն հետ զրուցելով մտավ մի խանութ, մի տուփ սիգարեթ գնեց, մի ամբողջ տուփ... «Օրինվի ծուխի արմատը. եթե սա ալ չըլլար, մարդն ավելի թշվառ պիտի ըլլար»:

Սեն-Միշելի բուլվարով իջնում էր դեպի Սենայի ափը: Շքեղ սրճարանների առջևից անցնելիս, նայեց ներս — բյուրեղյա ջահերից հորդում էր լույսը, թավշյա բազմոցների մեջ նստել էին մարդիկ, ծխում էին ու զրուցում: Արշակին բռնավ չհրապուրեց լույսն ու թավիշը. նա շտապում էր րոպե առաջ լինել Շարլ Բրեյի մոտ. կարոտել էր նրան: Բացի այդ, սրտով որոշել էր իր ունեցած դրամից տասը ֆրանկ ծախսել

Շարլ Բրեյին հյուրասիրելու համար, իր անզուգական, սիրելի Շարլ Բրեյին, իսկ մնացածը պահել վաղվա նախատեսված ծախսերի համար՝ բաղնիքի, սափրվելու:

Երկնքում երևում էր Էյֆելյան աշտարակը՝ ամբողջապես էլեկտրական լույսի վերածված: Մի հայացք ձգեց նրան, նայեց լուսավառ ժամացույցին. ժամն արդեն 8-ն էր և ծուլեց դեպի աջ՝ իր սրճարանի կողմը:

Սրճարանի հարևան փողոցում լսեց կոպիտ, զզվելի հայհոյանքներ. կանացի խոպոտ ձայներ, որ խուլ ու խավար փողոցների մթության հետ շաղախվում էին: Երկու պառավ աղջիկներ վիճում էին մի տղամարդու համար, որին իրար ձեռքից խլելու հետևանքով, փախցրել էին: Արշակի երևումով լռեցին իսկույն, և իրար հրելով ու արմնկելով, արտորում էին նրան մոտենալ, քաղցր, ավելի քաղցր և սիրազեղ խոսքերով թանձրագին ներկած շրթների վրա: Նրանցից հազիվ գլուխ թափած՝ փողոցի անկյունից դեպի իրեն շեշտակի հառաջանում էր մեկը, անթոցափայտը սալահատակին չխչխկացնելով: Եկողը մի երիտասարդ աղջիկ էր, վընասված ոտքով: Նորից սիրո զեղում... Արշակը զարհուրած՝ մի ֆրանկ դրեց թշվառի ափի մեջ և վազ տալով, փախավ... «Ասոր Փարիզ կսեն, դժոխք, է, անունը մնա...»:

Երբ սրճարանի դուռը բացվեց, տեսավ՝ իր ընկերներից նստել են գինու աղտոտ բաժակների առաջ, ծուխի մեջ թաթախված լույսերի տակ, Շարլ Բրեյին մեջներն առած: Մյուս Բրեյը իր մշտական դերումն էր. ոգևորված, բորբոքված ճառում էր՝ ձեռքը խոսքերի իմաստի համաձայն վարելով: Արշակը, չխանգարելու համար, լռությամբ նստեց դուռն մոտ:

— ...Բնությունը, այո, վստահ հանճարիր բնությանը, Սյուզան, սիրելի քույրիկս, և մի՛ մտածիր մահի մասին: Մեռնելուդ մասին որ մտածես, կորած ես. ավելի շուտ կմեռնիս: Գալով մյուս աշխարհին, երկու տեսակ է՝ դրախտ և դժոխք: Դրախտը լավ է, համեղ պտուղներ, զով ջրեր, բարեխառն օդ. բայց հասարակությունը ձանձրալի է — հիմարացած ճգնավորներ, արգանդները չորացած կույսեր և ամեն վայրկյան այս ու այն կերպով հավիտյան օրհնության և գովաբա-

նության երգեր մի փառասեր աստծու գահին ուղղված: Հավիտենական ձանձրույթ:

— Բավական է, բավական է, էլ չեմ ուզում լսել,— վրդովված, վիրավորված իր ջերմեռանդության մեջ գոչեց մադամ Սյուզանը՝ չափազանց պարարտ մի կին, սրճարանի տիրուհին:

— Շատ լավ: Ես խոսքս կուղղեմ իմ բարեկամներին, դու չկաս... Դժոխքը հետաքրքրաշարժ է. այնտեղ է երկրագնդիս բարձր հասարակությունը. փարավոններից բոնիր մինչև Հռոմի կայսրները. Ռուսիո ցարե՛րը, թուրք սուլթանները, Եվրոպայի թագավորները՝ իրենց արքայական պոռնիկներով, մինիստրներով, զորապետներով, բանկիրներով... Հապա Կլեոպատրա՞ն, Ասպազիան, մադամ Պոմպադուր, հապա սուրբ պապե՛րը... բայց մյուս աշխարհը գնալուց առաջ, մենք այս աշխարհում դեռ հաշիվ ունենք մաքրելու...

Եվ շրթները թաթախեց գինու մեջ, մի պահ լռելով:

— Արի մոտս,— դարձավ Արշակին,— այստեղ, մոտս, այ դու աղքատ դևս, թուրք բանակի ներոս զինվորս,— և կողքին տեղ տվեց Արշակին:— Ո՞ւր էիր,— հարցրեց, մեջքին թեթևակի խփելով:

— Հայրենակիցներիս մոտն էի:

— Ի՞նչ եղավ:

— Խոստացան գործ գտնել:

— Դու էլ հավատա, գոնե այս գիշեր հարուստ կքնիս: Էյ, ուրի՞շ:

Արշակն ասաց, որ մի քիչ փող տվին և վաղն էլ հագուստ են տալու:

— Կեցցե՛ն հայրենակիցներդ,— գոչեց Բրեյը,— արևելքից բերած մարդկությունը դեռ վրաներն է: Վաղը մեր քաղաքակրթությունը նրանց էլ կփչացնի: Նրանք էլ մերոնց պես գազան կդառնան, ոսկիներն իրենց հոգու և սրտի հետ հողի տակ կթաղեն: Եվրոպացի կդառնան:

Ժանը թոքերը կտոր-կտոր անող հազի միջից մռմռաց.

— Քաղաքակրթություն: Ինչ ծա՛ղր:

Արշակը սեղանի վրա դրեց տասը ֆրանկանոցը:

— Պիտի խմենք այս գիշեր,— ասաց կես ձայնով՝ հայացքը Շարլին ուղղելով:

Շարլը վեր առավ դրամը երկու մատով, ինչպես մի աղտոտ իր վեր կառնեն և դողդոջուն ձեռքով դրամը ճոճելով օդի մեջ.

— Նայեցեք սրան,— ասաց: Բոլորն աչքերը սևեռեցին տասը ֆրանկանոցի վրա,— լավ նայեցեք այս պստիկ, կապույտ պոռնիկին,— մի օր, մի կորած տեղում, անանուն աշխատավորների քրտինքով ծնվելուց հետո, քանի-քանի հազար սրիկաների ձեռքից-ձեռք անցնելով, քանի-քանի ստոր և դառն արարմունքներ կրելով իր բարակ մարմնի վրա, վերջը եկել, ընկել է այս խեղճ օտարականի ձեռքը... հիմա էլ կանցնի Լուի Քաթորզի ձեռքը: Առ, Լուի, և մեզ գինի տուր:

— Գինի բեր՝ խմենք այս աննման պոռնիկի կենացը,— մռմռաց կլոշարներից մեկը:

— Սպասեցեք, սրա պատվին բաժակաճառ ասեմ, խըմենք,— ոտքի ելավ Շարլը՝ բաժակը ձեռքին:

Silence...— Ականարկը բոլոր ներկաների վրա սահեցնելով սկսեց Շարլը.— Մեր նախահայր Կայենը անիծված ձեռքով շինեց քաղաքը, և այն օրվանից աներեսքը ծաղրացավ քաղաքների վրա:

Նրա թոռները՝ Թոբել-կայեններն, երկաթն ու ոսկին ընկճեցին. երկաթից շինեցին սուրը, ոսկուց՝ փողը: Երկաթը շինեց բերդ, ոսկին շինեց շուկա: Մեկի կողմն անցավ զինվորականը, մյուսի կողմը՝ վաճառականը: Եվ ամեն տեղ զինվորականն ու վաճառականը ստրուկ դարձրին մարդկանց. բայց երկուսի նպատակը նույնն էր — ապրել ուրիշի վաստակով:

Վերջը դարերի ընթացքին փողի ուժը գերազանցեց սուրին: Եվ սուրը դարձավ փողի հլու գործիքը:

Փողը նվաճեց բոլորին:

Փողը, ի՞նչ է փողը:

Ամեն բան, այս երկրի վրա, արվում է փողի համար: Ամեն բան շուկա ելավ:

Ամեն բան առնում են փողով — սեր, առողջություն, տաղանդ, ազատություն, կին, պատիվ:

Ամեն բան ծախում են փողով — սեր, առողջություն, տաղանդ, ազատություն, կին, պատիվ:

Փողն է եղեռների մղում: Փողն է լցնում բանտերը: Փողի ձայնը ամեն տեղ — բորսաներում բանկերում, նախարարությունների մեջ, եկեղեցիների մեջ, պալատներում, բոլոր տներում: Փողի համար է աշխարհի ամեն կետի վրա պատերազմ պայթած, ամեն մարդ կովում է փողի համար, ամեն մարդ կովում է ամեն մարդու դեմ՝ փողի համար...

Կորչի փողը, թող կորչի հավիտյան:

— Կորչի՛ փողը, կորչի՝ փողը,— ուժով ձայնեցին կլոշարները:

— Բայց ես խմում եմ նրա կենացը, թող նա անպակաս լինի մեր գրպաններից,— ասաց կլոշարներից մեկը՝ Պոլը:

— Այ ուղտ, ինչքան ուզում ես խմիր, նա քեզ մոտ չի գա երբեք,— ասաց կողքին նստած Ժանը:

— Իսկ ես խմում եմ ձեր կենացը. կեցցեք դուք, ընչազուրկներ, այսինքն՝ իրավազուրկներ, իմ ազնիվ կլոշար ընկերներ,— տաքացած ասաց Շարլը, բաժակը բարձրացնելով: Կլոշարներից մեկը խանձված ձայնով երգեց կլոշարների, անտուների հին երգը, մյուսները գլխի, աչքերի շարժումներով և մրմռալով ձայնակցում էին նրան:

Աշխարհն եղավ ինձ խոստմնազանց.
Խաբեց փորձված մի բոզի պես:
Երազեցի բախտավոր կյանք,—
Վաղը պիտի գլխատեն ինձ:
Սատանային ընկեր դարձա,
Նա էլ խաբեց հին բոզի պես,
Փողոց նետեց ինձ անոթի,
Ձմռան քաղցած գայլերի պես:
Աղոտ դեմքս, որ հայելի
Հազիվ տեսավ մի օր միայն,
Վաղը պիտի սափրեն կարգին՝
Գլխատելու համար սակայն:
Չունեցա ես մի կտոր հող,
Մերկությունս ծածկող մի լաթ,
Գլուխ դնելու և ոչ մի տեղ
Այս լայն ու մեծ աշխարհի մեջ:

Վաղը մի թիզ դաշտ կտան ինձ
Պատժվածների գերեզմանոցում,
Մերկությունս կծածկեն հողով՝
Կտրած գլուխս ոտներիս մեջ:

Սրճարանատեր Լուին ազդված կլոշարի երգից, հևալով, փնշալով երկու շիշ գինի դրեց Շարլի և ընկերների առաջը,

— Շարլ, խնդրեմ, էս էլ իմ կողմից:

— Կեցցե Legion d' honneur-ի ասպետ Միշել Բեռնարը, — գոչեց Շարլը կլոշարների ձայնակցությամբ:

Լուի-Միշել Բերնարը մեկ աչքը ծիծաղի մեջ կոպ գնացած, ուսերը վեր նետեց և զվարթ անցավ վաճառասեղանի հետևը:

— Լուի, ես քեզ հազար անգամ ասել եմ, որ դիմում անես Legion d'honneur-ի ասպետ դառնալու: Այս անգամ լսիր ինձ՝ քո հին, անկեղծ ընկերին...

Բոլորը բեղերը սրբելով հավանության նշան արին:

Շարլը կատակի համար միշտ ասում էր Միշելին, թե դու երեսուն տարի է սրճարան պահող ես, հայրենիքին աճապին ծառայություն ես մատուցել, ազգային հարստության զարգացմանը նպաստել ես, հետևապես, իրավունք ունես պատվակիր մարդկանց ցանկի մեջ մտնելու: Մի քիչ փող շարժեցրու, մի սենյատորի կերցրու, առ փառավոր նշանը լամբակիդ անցրու, հովանոցն ամեն եղանակին թևիցդ կախիր, մադամդ մյուս թևդ առ և հպարտորեն ցույց տուր քեզ Փարիզի փողոցներում: Ուրիշները քեզանից ինչո՞վ են առավել:

Եվ ամեն անգամ բարի խորհուրդը գոցվում էր զվարթ ծիծաղով:

Շարլ Բրեյը հիսուն տարեկան կլիներ. նրբակազմ-ջղուտ, մոխրագույն աչքերով: Սուր դեմք, սուր կզակ, բարակ շրթներով, ալկոհոլից ուռած, փուք առած այտերով: Երիտասարդ տարիքին աշխատակցել էր դեմոկրատական երկրորդ կարգի թերթերին: Քաջ պայքարող ժուռնալիստի համբավ ուներ: Քննադատող սուր հոդվածներ ունի գրած քաղաքապետության դեմ, որ երեսի վրա է թողել աղքատ թաղերը, առողջապահական ոչ մի միջոցառում: Գարշահոտության մեջ խեղդվում են մարդիկ: Աղքատների երեխաներն անխնամ,

կիսամերկ թափված են մայթերի վրա, քաղաքի տերերի կողմից ոչ մի հոգատար վերաբերմունք: Բոցաշունչ հոդվածներով նկարագրում էր ընչազուրկների, աղքատների ծանր վիճակը, հասարակությունից, պետությունից պահանջում էր նրանց դրության բարելավում: Գազազում էր, հուսահատվում, չտեսնելով ոչ մի դրական արդյունք իրենց մղած պայքարից: Անհիշխանական ոգով բուռն ճառեր էր խոսում, պախարակում պետությանը, տիրող օրենքները: Պատերազմն ավելի հուսալքեց նրան, հասցրեց այն հոռետեսական մըտքին, թե աշխարհն օրեցօր ավելի վատթարանում է՝ կապիտալիզմի օրեցօր աճող տիրապետության պատճառով:

Միշտ ախորժել էր նա ոգելից խմիչքները. բայց հիմա արդեն խմելու մեջ սփոփանք էր որոնում. սկսեց ավելի ստեպ հաճախել գինետունները. կամաց-կամաց խմելու ախորժակը ախտի վերածվեց, դարձավ անբուժելի հարբեցող, կամքը բեկվեց և ընկավ մինչև մարդկային ընկերության հատակը, խառնվեց հասարակության, այսպես կոչված, տականքի հետ: Սակայն իր զարգացման և հարաբերաբար ավելի դրամ ունեցողի հանգամանքով, մնաց ընչազուրկների մեջ միակ ազնվականը՝ «կլոշար արիստոկրատը». նրան ականջանքով լսում էին կլոշար ընկերները, որոնց սրտերի մեջ խոսում էր նա: Ապրում էր քրոջ հետ: Տարիներ առաջ, դիրք ունեցած ժամանակը, քրոջը տեղավորել էր գրքերի մի մեծ հրատարակչական տան մեջ: Երախտագետ քույրը կերակրում էր և հագցնում դժբախտ եղբորը: Շարլն այլևս չէր կարող գրել. ձեռները դողում էին, և բացի այդ, մտածումները, մի բան իրականացնելու համար, անկապ և աննշարիր էին դարձել:

Այլևս թերթերի միջոցով չէր կարող խոսել հասարակության հետ, սակայն հրապարակով արտահայտվելու տենչանքը չէր հանգել նրա հոգում. բուռն պահանջ էր զգում խոսելու օրվա չարիքի և առհասարակ կյանքի այրող հարցերի մասին և ունկնդիրներ էր որոնում, որպիսին ներկայացան սրճարանի կլոշարները: Շարլը գտավ իր հասարակությունը, ուր կրակված խոսում էր այն ամենի մասին, ինչ որ թերթերի բեմից կուզեր ասել. ճառում էր առանց հոգնելու, հոգ չէ,

թե կլոշարները իրեն կարող էին հասկանալ, թե՞ ոչ: Հյուրասիրում էր իր ունկնդիրներին սուրճով, սիգարեթով, և այսպես, նրանց առաջ զեղելով իր զայրույթի և բողոքի թույնը, բավարարված էր զգում իրեն և սիրտը հանգստացած դառնում էր տուն:

Խմիչքի և այլ պետքերի գոհացման համար զգաստ պահերին բուկինիստներից հին գրքեր էր առնում և վաճառում նախկին բարեկամներին և միջնորդչեք ստանում: Շահած դրամը իր ընչազուրկ ընկերների հետ էր ծախսում: Վերջին սանտիմը չէր խնայում ընկերներից: Արշակն առանձնապես նրա խնամքի ենթական էր. Արշակին կարեկցում էր իբրև անօգնականի, իբրև բռնության և վայրագության զոհի: Այս խավարի և լքման մեջ նա Արշակի միակ բարոյական հենարանն էր:

Սրճարան բանեցնող Միշելը նրա մանկության ընկերն էր, միևնույն թաղից: Իրար հետ հյուսված էին հազար ու մի կապերով և հուշերով, անդավաճան սիրում էին իրար: Միշելին վերակոչել էր՝ «Լուի Քաթորզ» անունով, որովհետև Միշելը «Արև-Արքայի» նման մեծ, կարմիր երես ուներ և նրա նման շատակեր ու մարմնեղ էր. կլոշարները «Լուի Քաթորք» անունով էին ճանաչում Միշելի սրճարանը:

Շարլը այդ թաղի բոլոր փոքր, հասարակ սրճարանների սիրելին էր, բայց Միշելի անշուք սրճարանը նրա համար Փարիզի ամենից հաճելի անկյունն էր, ուր միշտ ընդունվում էր սրտաբաց: Նա թերևս և մյուս սրճարաններում էլ ուներ իր ճառերին ունկնդիրներ, բայց ամենից շատ այստեղ էր, այս ընտանեկան, հարազատ միջավայրում, իր զգացմունքներն արտահայտելու հոգեկան պահանջին լիուլի հագեցում գտնում: Շարլի ընկերներից էր Ժանը՝ խորշոմների տակ թաքնված արյունոտ աչքերով մռայլ մի տիպ, Ֆրանսիայի հարավից էր, խոսում էր իտալական առոգանությամբ: Ասում են, որ մի մեծ նավի վրա աշխատող է եղել՝ բեռներ տեղափոխող: Հեռավոր աշխարհներ է տեսել: Ինչ որ հանցանքի համար բանտ է նստել, փախել է բանտից: Իսկական անունը ոչ ոք չգիտեր, փորձված, եփված մարդ էր, մտածկոտ, բայց ջղային և կուվարար, թուղթ էր խաղում կամուրջ-

ների տակ, սրճարաններում, հաճախ հարբած էր լինում: Ձեռքն ընկած լրագիրը կարդում էր և զայրացած ճմլում, պատառում... Ալֆրեդը՝ աշխույժ, շարժուն դիմագծերով, Պոլը, Մարսելը — սևահեր, դյուրաբորբոք և ամենից երիտասարդը. մոտ երեսուն տարեկան Անատոլը՝ բանտից նոր դուրս եկած, տխուր, սև աչքերով: Բոլորը ցնցոտիների մեջ, աներդիկ, անապաստան: Այսօր դեռ չկշտացած, վաղվան մասին մտահոգված, թշվառներ՝ մի-մի շյուղ ընկած գոյության կուվի փոթորկի մեջ: Կլոշարներ, ընչազուրկներ, Ֆրրանսիայի լայնքին ու երկայնքին — բոլոր ճանապարհներով անցած ու դարձած, ծանոթ երկրի բանտերից հաճախակի մտած-ելած: Քնած անթիվ կամուրջների տակ, դաշտերում, անտառներում, նավահանգիստներում:

Ջսափրված երեսներով, ուռած աչքերով, որոնք տեսել են իրենց շուրջը ծովածավալ փուված փարթամությունն ու շքեղությունը հրապույրի այս քաղաքում, ուր թափվում է աշխարհի ոսկին ու կիրքը՝ վայելք և հաճույք գտնելու համար, և սակայն իրենք մնացին միշտ անհաղորդ, միշտ անմասն: Ընչազուրկներ, որոնց բաժին եղավ ցուրտը, քաղցը, անքուն, անօթևան գիշերները, աղտն ու միջատները և արհամարհանքն ու ծաղրը մարդկային ընկերության կողմից:

Դառնացած, դիվակաևացած, դժոխացած հոգիներ, որոնց մշտավառ կիրքն էր ջարդել, կոտրել, հրդեհել, ավերել ներկա հասարակարգը, ունևորներին, իշխանավորներին...

— Շարլ, խոսքդ կիսատ մնաց, էն որ ասում էիր, թե՝ հաշիվ ունենք մաքրելու,— հիշեցրեց Ժանը:

— Գինի լից, ասեմ, չեմ ասի, եթե չլցնես. ալ, էդպես լիքը. ապրես, ապրես... Այո, հաշիվը մաքրել, կապիտալիստների, բուրժուաների հետ,— կնշանակե քանդել այս փտած հասարակությունը, ամբողջովին, այնպես, ինչպես ռուսները մաքրեցին:

— Ապրես, Շարլ,— հարեց Ժանը:— Օրինակ առնենք ռուսներից:

Շարլը շտկվեց նստած տեղում, գլուխը վեր բռնեց, դողդոջուն բազուկը տարածեց, լռեց մի պահ, նայեց շուրջը, որ-

պես թե մարդկային հսկա բազմության առջևը պիտի խոսի ձայնին հանդիսավոր գույն տալով, ասաց.

— Այս հասարակությունը, այո, փտած է, նեխված: Պետք է թաղել նրան աղբանոցի մեջ ընտանիքի, եկեղեցու հետ միասին...

Մադամ Սյուզանը, որ ակամայից լսում էր Շարլի խոսքերը, աղտոտ սրբիչով աղտոտ բաժակները մաքրելով՝ մի կողմ շպրտեց սրբիչը և բոլոր զայրույթով ընդհատեց նրա ճառը.

— Բավական է, բավական է, ծերուկ, խենթ. քանդել ընտանիք, եկեղեցի... Աստված իմ, սրբապղծություն, ներիր նրան, աստված իմ, աստված իմ...

— Եկեղեցի, հա, հա, հա... եկեղեցիները վարդապետների, եպիսկոպոսների մսուրներն են,— քրքջալով ասաց Պոլը:

— Աստված իմ, աստված իմ,— կրկնում էր մադամ Սյուզանը:

— Աստված չկա՛,— գոռաց Ժանը, բռունցքը սեղանին զարկելով:— Աստված: Ո՞ւր է նա, բարի աստվածը,— թթիցբերանից ծուխ արձակելով հարեց Մարսեյլը:

Իսկ Լուին արմունկը վաճառասեղանին հենած՝ կզակը ափի մեջ, հևում էր ու աչքով-ունքով քաջալերում էր Շարլին:

— Խոսի՛ր, Բրեյ,— գոչեց Ժանը:

Իսկույն ոտքի ելավ Շարլը, արձակեց շապիկի կոճակը, որ ճնշում էր կոկորդը, և կրակված աչքերը դարձրեց Սյուզանին:

— Այդ դեռ ոչինչ, այդ դեռ ոչինչ, պետք է կոտորել բոլոր բուրժուաներին, կապիտալիստներին, բոլո՛ր, բոլո՛ր հարուստներին:

— Այո՛, այո՛, բոլորի՛ն, բոլորի՛ն,— գրգռված գոչեցին ընկերները, բացի Անատոլից և Արշակից, որ լուռ և զուսպ լսում էին:

— Բայց չէ՞ որ դուք քրիստոնյա եք: Այս ինչ բարբարոս բաներ եք ուզում, և չէ՞ որ հարուստները մեր եղբայրներն են — սարսափած ասաց Սյուզանը:

— Նրանք մեր եղբայրները չեն:

— Եղբայրը եղբոր բերնից հացը չի խլի:

— Այո, հարուստները մեր եղբայրներն են, մադամ Սյուզան, բայց նրանք մեր Կայեն եղբայրներն են: Այդ մեկը լավ իմացիր,— մոայլ հանդարտությամբ ասաց Ժանը:

Շարլն առաջ անցավ.

— Շատ գեղեցիկ, ասացեք խնդրեմ, բայց ո՞վ է խեղճ աշխատավորի արյունը ծծում: Ո՞վ է մեր աղջիկներին պոռնիկ դարձնում ու սփռում մայթերի վրա:

Ո՞վ է մեր երեխաներին թոքախտ տալիս և վաղահաս գերեզման իջեցնում:

— Մեր հարուստ եղբայրները, միշտ նրանք:

Ո՞վ սարքեց այս զարհուրելի պատերազմը, ուր միլիոնավոր երիտասարդներ կտոր-կտոր եղան ռումբերի տակ: Եվ դեռ այդ գազանը չի հագեցել, նոր, ավելի զարհուրելի պատերազմներ է թխսում:

Ո՞վ միլիարդների հարստությունը ծուխ դարձրեց կռվի դաշտում, միևչդեռ այդ միլիարդներն ինչքան թշվառներ կբախտավորեցնեին: Մեր հարուստ եղբայրները. միշտ այդ հարուստները:

— Ճշմարիտ է ասում Շարլը, ճշմարիտ է ասում,— ձայնեցին կլոշարները:

— Բայց վերջապես ի՞նչ մեղավոր են հարուստներն այդ բանում: Պետությունն է պատերազմ անողը, հարուստների ձեռքն ի՞նչ կա որ: Թագավորները, նախագահները՝ սրանք և այն էլ հայրենիքի համար,— պատասխանեց Սյուզանը Շարլին չնայելով:

— Ի՞նչ հայրենիք, սուտ բան է. աղքատը հայրենիք չունի, հարուստները խլել են հայրենիքը նրա ձեռքից...— հազի մեջ խեղդվեց Պոլի ձայնը:

— Հիմա, սիրելի Սյուզան, լսիր ինձ, խենթ ծերուկ Շարլին, ասում ես՝ հարուստները մեղավոր չեն, հա՞: Խելքդ չի հասնում, չվիրավորվես, իմ քույրն էլ՝ Մաթիլդը, քեզ պես է մտածում: Պետությունը գիտե՞ս, ի՞նչ է պետությունը: Հարուստներն են պետությունը: Կայսրը, թագավոր, նախագահ, բանակ, նրանց ծառաներն են, նրանց կամակատարները, նրանց վարձակալները:

Պետությունն օրենքներ, գիլիոտին է շինել հարուստների գանձը պաշտպանելու համար միայն:

Իսկ գիտե՞ս արդյոք, ինչու համար են պատերազմ անում քո անմեղ հարուստ եղբայրները — իրենց շահի համար: Հայրենիքի մասին ես խոսում: Բանկիրի, ֆաբրիկանտի-կապիտալիստի համար հայրենիքն իր գրպանն է: Պատերազմին, քո հայրենասեր բուրժուա անգլիացիները, Ֆրանսիայի դաշնակիցները, զենք չէի՞ն ծախում իրենց թշնամի Գերմանիայի վրա: Մի՞թե չգիտեին, որ գերմանացին զենքով պիտի սպանի անգլիացի և ֆրանսիացի զինվորին: Ի՞նչ կասես սրան: Կապիտալիստի համար միայն շուկա է պետք, ո՛չ հայրենիք, ո՛չ բարոյականություն, ո՛չ սեր, ո՛չ մարդկություն:

Շարլի խոսքերին Ժանն անմիջապես կցեց իր խոսքը:

— Իսկ մենք ինչո՞ւ պիտի կովենք այդ ոճրագործ շուկայիկների համար: Ո՞ւմ են հարկավոր ժողովուրդների կոտորածները. ծերերի և մանուկների ջարդը: Դրանք մեզ հարկավոր չեն. դրանք ագահ, անկուշտ բուրժուաներին են պետք: Դրանցից նա միլիոնների շահ է ճնճում, որպեսզի լափի ու լակի ոսկե պալատների մեջ: Վերջապես այդ բուրժուաները չե՞ն, Ամերիկայի մեր հարուստ եղբայրները, որ կաթի ու ցորենի գինը բարձր պահելու համար՝ այդ կաթն ու ցորենը ծովն են թափում, փոխանակ աղքատներին ձրի կամ էժան տալու: Այդ սրիկաներին, այդ հրեշներին անիծնա, մինչև վերջին սրիկան կոտորել, ջնջել բոլորին:

Շարլը նորից խոսեց.

— Բոլոր ընչազուրկներն ի՞նչ են նրանց համար—բոլոր մեր որդիներով, և ամեն մարդ, իրենցից բացի, միայն «անծանոթ զինվոր», մեռած կամ թե ողջ, և ուրիշ ոչինչ:

Այ, դրանց բոլորին հավաքել եկեղեցիների մեջ, քահանաների և սրբերի հետ միասին՝ այրե՛լ, այրե՛լ...

Քաջալերական մի երկու խուլ մռմռոց լսվեց, սակայն մյուսները գլուխները տխրությամբ կախեցին: Շարլը հաղթականորեն նստեց, սիգարեթը դրեց շրթունքին, Արշակը վառեց լուցկին, իսկ Պոլը լցրեց բաժակը:

Ծանրացավ մի լռություն:

Յոթը բերանից լուռ բարձրանում էր սիգարեթների թանձր ծուխը և ջերմացած մթնոլորտը դարձնում էր կծու, աչք ծակող և ծանրագին:

Բանտից նոր դուրս եկած Անատոլը սև բթամատով ճզմեց-հանգցրեց վառվող սիգարեթի վերջին մնացորդը և հանգիստ, խեղճ ձայնով դիմեց Շարլին.

— Շարլ, հազար ներողություն, ես էլ մի խոսք ասեմ: Շարլ, մենք ի՞նչ ենք, որ կարողանանք աշխարհը փրկել կամ քանդել ու մեր հաշիվը մաքրել հզոր բուրժուազիայի հետ: Մենք ի՞նչ ենք որ, մենք կլոշարներս, սանքյուլոտներս, մենք մարդու հաշվի չենք, մենք լումպեններս, խոսքս քո մասին չէ, Շարլ:

— Եթե մենք ոչինչ ենք, ապա ո՞վ է բուրժուազիայի հետ հաշիվ մաքրողը...

Հարցը շատ ուղղակի էր դրված. Անատոլը մի պահ շփոթվեց, Բրեյի հեղինակությունը ճնշում էր նրան:

Բոլոր ընկերները լարված նայում էին մեկ Անատոլին, մեկ Շարլին: Անցավ մի երկու վայրկյան:

— Պրոլետարիատը: Նա է ուժը: Լումպեն պրոլետարիատը զրո է,— հանգիստ և կտրուկ շեշտով պատասխանեց Անատոլը:

Նորից ընկերները լարված նայում էին այս անգամ առաջ Շարլին, հետո՝ Անատոլին:

Շարլ Բրեյը զսպված ձայնով ասաց.

— Էհե՛, այդ չեղավ, սիրելի Անատոլ, դու պրոլետարիատին շատ բարձր դասեցիր, մենք ուրեմն ոչի՞նչ ենք... ես արհամարհում եմ պրոլետարներին, այդ վարձու ստրուկներին: Ես, իհարկե, անցած մարդ եմ, բայց եթե կյանքս նորից սկսեի, երբեք չէի ուզենա բուրժուա լինել՝ ուրիշին աշխատացնող, ոչ էլ պրոլետար՝ ուրիշի համար աշխատող: Ես սիրով կլինեի ազատ, անտուն կլոշար...

Անատոլը նույն ձայնով շարունակեց.

— Ես էլ առաջ քեզ պես էի մտածում, բայց Սանտեի բանտում բանվորներ կային, սոցիալիստներ, ցույցերի մեջ, գաղտնի ժողովների մեջ բռնվածներ, նրանց հետ ծանոթացա, նրանք ինձ շատ բան սովորեցրին, շատ

բան պարզվեց ինձ համար: Նրանք մոտները գրքույկներ ունեին, ծածուկ կարդում էին և ինձ՝ իմ ընկերներին բացատրում. կարդացին Մարքսի Մանիֆեստը: Համոզվեցի, որ պրոլետարիատը միայն կարող է...

— Այո, գիտեմ,— ընդմիջեց Բրեյը,— երիտասարդ ժամանակս կարդացել եմ Կարլ Մարքսի Կոմունիստական Մանիֆեստը և ուրիշ շատ բաներ: Ես Ժորեսին անձամբ ճանաչում էի. շատ եմ լսել նրան:

— Դու, իհարկե, կարդացել ես, կասկած չունեմ, իսկ ես նրա անունն էի լսել: Ես հիմի գիտեմ...

— Ես գիտեմ, Անատոլ, դու ինչ պիտի ասես,— նորից Բրեյն ընդհատեց նրան,— որ բուրժուազիան է ծնել պրոլետարիատին, որ պրոլետարիատը նրա ժառանգն է, նրա գերեզմանափորը, որ պիտի վերջ տրվի մարդու միջոցով մարդուն շահագործելը, որ պիտի վերանա մասնավոր սեփականությունը, որ պիտի լինի ընդհանուր սեփականություն: Այդ պիտի ասեիր, չէ՞:

— Այո, ես էլ էդ պիտի ասեի, բայց դու ավելի լավ ասացիր: Միայն...

— Դու դեռ միամիտ ես, սիրելի Անատոլ, դա շատ հին հեքիաթ է, ձանձրալի է դարձել վաղուց. բան գիտես, բան ասա:

— Դեհ, ես էլ էն եմ ուզում ասել, որ նրանց գործի հետ ծանոթանալով տեսա, որ մենք ոչինչ ենք, լումպեններս. ընդդանք են ուժը — պրոլետարիատը: Նրանք կազմակերպված են ամբողջ աշխարհի մեջ, ընկերություններ ունեն, փող ու գանձ ունեն, ժողովներ, թերթեր, ղեկավարներ, պառլամենտներում ներկայացուցիչներ, կռվում են կապիտալիստների դեմ: Նրանք դրոշակ ունեն, ամեն տեղ միևնույն դրոշակը, սոցիալիզմի դրոշակը: Իսկ մենք դրոշակ չունենք, մենք ոչինչ ենք, բոլորովին ոչինչ: Նրանց դրոշակի տակ միլիոնավոր բանվորներ կան: Ապագան նրանցն է, վերջնական հաղթությունը նրանցն է:

— Ինչպե՞ս ուռեցնում է,— խոպոտ ձայնով միջամտեց Ծանը:— Քո այդ պրոլետարներն ինչացո՞ւ են. նրանք վախկոտ են, կռվող չեն, նրանք հաց ու տուն ունեն, կորցնելու

բան ունեն: Իսկ մենք ի՞նչ ունենք կորցնելու. մենք վաղուց արդեն կորցրել ենք, մենք անոթի ենք, անտուն, մենք անվախ կկռվենք, ավելի վրեժխնդիր, ավելի գազազած: Մենք ենք, որ պիտի քանդենք, ավերենք, հրդեհենք... մեր աստվածը դևն է, մեր ընկերը՝ սատանան:

— Ճշմարիտ ես ասում Ժան— հանգիստ ձայնով հակաճառեց Անատոլը,— մենք կատաղի կկռվենք, մենք դիվացած ենք, մենք կայրենք, կավերենք, կսպանենք, բայց ի՞նչը — տները, շենքերը, հարուստներին, բայց մենք չենք կարող քանդել հին կարգերը, հին օրենքները. դրանք նորից կմընան, իսկ ավերվածներն ավելի փառավոր կերպով նորից կշինվեն, որովհետև մենք չգիտենք, թե ինչ ենք ուզում, ինչ կարգեր ենք ուզում դնել: Բայց պրոլետարիատը գիտե, թե ինչ է ուզում, ինչու համար է կռվում, ինչ նոր կարգեր պիտի հաստատե: Մնաց որ մենք քանդող ուժ ենք՝ էն էլ թվով քիչ, իսկ պրոլետարիատը ստեղծող է ու թվով շատ մեծ:

— Պրոլետարիատը ի՞նչ է, որ աշխարհը փոխե,— արհամարհական ձայնով միջամտեց Բրեյը.—Նոր աշխարհ, նոր օրենքներ, արդար հասարակություն ստեղծե: Նա վարձու ստրուկ է, և Ժանի ասածի պես, նա վախկոտ է, կռվող չէ, իսկ բուրժուազիան պետություն ունի, բուրժուազիան բանակ ունի...

— Ներողություն, սիրելի Շարլ, պրոլետարիատի բանակը շատ և շատ ավելի մեծ է և հզոր: Բոլոր երկրների պրոլետարները պիտի միանան: Էդ ժամանակի հարց է:

— Լա՛վ, լա՛վ, կարճ կտրե,— Ժանն ընդհատեց Անատոլին:

— Թողեք խոսքս վերջացնեմ,— գոռաց Անատոլը:

— Թողեք մարդը խոսքը վերջացնի,— ձայնեցին ուրիշները:

— Այ, իմ խոսքն էս է,— շարունակեց Անատոլը,— կռվի մեջ մենք պիտի պրոլետարիատի բանակի հետ լինենք, որովհետև նա է այն միակ ուժը, որը կարող է կապիտալիզմը վերացնել, հին կարգերի տեղ նոր կարգեր դնել, ուր բոլոր մարդկանց համար պիտի լինի հաց, ազատություն, եր-

ջանկություն: Իսկական «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» — որ ամեն տեղ կարդում ենք, նույնիսկ բանտի դռան ճակատին, բայց ոչ մի տեղ չենք գտնում...

Այս խոսքի վրա Ժանը բորբոքված ոտքի կանգնեց, բրոունցքը թափով զարկեց սեղանին և մռնչաց...

— Ծնածս օրից լսել եմ «Ազատություն, հավասարություն, եղբայրություն»: Դրանք մեռած, սատկած խոսքեր են: Ի՞նչ է, մենք երեխաներ ենք, մեզ վրա ծախու ապրանք ուևես: Երեխան դու ես:

Ես դրանց չեմ հավատում, ես հավատում եմ միայն դանակին:

— Հանգստացիր, Ժան, ո՛չ դու ես երեխա, ո՛չ ես: Հասկացիր բանը. մեծ կռիվ կա. բուրժուաների ձեռքից պիտի առնել կապիտալը, իշխանությունը. պետք է շինել էն նոր աշխարհը, որին դու չես հավատում, որի դեմ էդպես կատաղած խոսում ես: Սանտեումն էլ քեզ պես ասում էին, որ ռուսներից օրինակ վերցնենք, քանդենք և շինենք: Սանտեում ուրիշ շատ ճշմարիտ բաներ էին ասում, որ պրոլետարիատը իրեն ազատելով բուրժուազիայի ձեռքից, ամբողջ աշխարհն էլ կազատվի նրա հետ միաժամանակ: Բոլոր ժողովուրդները կազատվեն աղքատությունից, թշվառությունից, պատերազմներն էլ հավիտյան կվերանան: Կարճ՝ վերջը, վերջը այս մեծ կռվի մեջ պրոլետարիատն է հաղթելու, մի խոսքով՝ սոցիալիզմը:

Անատոլի համոզված արտով ասված խոսքը ներգործեց Ալֆրեդի և Մարսելլի վրա, նրանք աշխուժացան: Արշակը շատ էր լսել Շարլ Բրեյի ճառերը, միշտ միևնույն իմաստով, բողոք և կիրք, զայրույթ և ցասում, որոնք ավելի դառնացնում և մթագնում էին նրա հոգին, իսկ լսելով Անատոլի խոսքերը, մռայլը հետզհետե պարզվում էր ու պայծառանում: Հիմա նա խանդավառ աչքերով դիտում էր Անատոլին:

— Ես հիմի մի փափագ ունեմ,— մի գործարանի մեջ բանվոր լինել, որ, երբ օրը գար, պրոլետարիատի հետ, նրանց դրոշակի տակ, կռվեի բուրժուազիայի դեմ, թե չէ՝ կրակոտ ճառերով, հայհոյանքներով բուրժուազիային չեն վախեցնի... իսկ հիմի, ի՞նչ եմ որ ես, ի՞նչ, ի՞նչ...

Անատոլի ձայնը կամաց-կամաց իջնելով մարեց տաք և հեղձուկ լռության մեջ:

Շարլը գլուխը հակեց կրծքի վրա:

— Գլուխս ծանր է,— ասաց ձեռքը ճակատին տանելով.— Անատոլն իրավունք ունի. նա Սանտեի համալսարանը ավարտել, Սորբոնը ոչինչ է, Սանտեի վկայականն է բանը, շատ լավ բաներ ասաց: Նա ուզում է մեզանից հեռանալ: Բարի ճանապարհ: Անկեղծորեն ցանկանում եմ նրան հաջողություն, նաև նրանց, ովքեր ուզում են նրա հետ գնալ: Եթե սոցիալիստները ուժ ունենան բուրժուազիային հաղթելու՝ իրենց խոսքը կլինի: Բայց ես կմնամ իմ ազնիվ ընկերների հետ՝ չենթարկվող ոչ մի օրենքի, ո՛չ պետության, ո՛չ հասարակության — բացարձակ ազատ...

— Միշել, տուն չեմ գնալու, ինձ էլ Արշակի հետ մյուս սենյակում տեղ տուր քեզնք, այնպես որ այս աղտոտ օտարականը ոտները մեկնած քնի...

Ժանը ծանր քայլերով մոտեցավ Անատոլին, կանգնեց նրա առաջ, խստագին նայեց աչքերին.

— Մենք այլևս ընկերներ չենք, գնա, քո վարձու պրոլետարների մոտ. գարշելի են այդ ստրուկները... Մենք ոչինչ ենք, հա՞. թող այդպես լինի, բայց ես չեմ ծառայի բուրժուաներին, թող անոթի մեռնեմ Սենայի կամուրջների տակ: Ես, ես ատում եմ բուրժուաներին, զզվանքով, թույնով, հայհոյանքով ատում եմ նրանց, իմ վերջին շունչը հայհոյանք պիտի լինի,— գնա ծառայիր քո տերերին:

— Պոլ,— դիմեց նրան,— ել երթանք, թափառենք, միտքըս պղտոր է, քունս չի տանում:

Երկուսով դուրս ելան սրճարանից:

Սրճարանի դուռը բացին, որ ծուխը քաշվի և թարմ օդ ներս գա: Ալֆրեդն ու Մարսելը մաքրած սեղանի առաջ տեղ բռնեցին՝ քնելու պատրաստվելով: Անատոլը մի պարկ փռեց հատակին, մի երկու լրագիր իբրև սավան պարզեց պարկի վրա և գլխի տակ դրեց տոպրակը:

Ամիսներից ի վեր առաջին անգամ լինելով՝ Արշակը հանվեց և ոտները ազատորեն տարածելով պառկեց թախտի

վրա: Քունը չէր տանում. ուղեղը բորբոքված էր, մտքերը՝ լարված:

Անատոլի ասածները հեղափոխել, լուսավորել էին նրա հոգին: Եվ Անատոլի փափագը՝ բանվոր լինել, իրեն համար էլ տեղչալի ու հմայիչ նպատակ էր դարձել: Զգում էր, որ գտել է իր ուղին այս խավար գուբից ելնելու:

Զգում էր իրեն փոխված, կամքով կարծրացած: Աշխարհում իրեն առաջ իդեալ էր տեսնում և կյանքի մեջ՝ իմաստ: Մտնել գործարան, զինվոր լինել պրոլետարիատի բանակում, պայքարել թշվառության դեմ, թշվառությունն ստեղծող մարդկանց և կարգերի դեմ: Մեռնել, նույնիսկ մեռնել թշվառների ազատության, բախտավորության համար:

Ա՛յ, մեռնելը հիմա դյուրին է, այնպես հեշտ է հիմա մեռնելը և գեղեցիկ այս գաղափարի համար, այս կռվի մեջ...

Եվ Արշակը գիշերվա լռության մեջ մեկնում է երկու ձեռքը պրոլետարիատի ազատարար դրոշակին: Իր հոգով, իր մարմնով, իր արյունով բոլորովին պատրաստ:

1922

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՒՇԵՐ

1927 թվականի ամառն է: Իմ հայրենի Շիրակի դաշտումն եմ: Ձիով դանդաղ գնում եմ այն գյուղը, ուր ջրաղաց ունեինք և ընդարձակ հողեր, Ախուրյանի ափին, բարդիներով և ուռիներով պարսպած, և պարտեզներ՝ վարդենիներով վառ:

Ահա մեր գյուղի հանդերը, ուր աղջիկների և տղաների հետ բանջար էինք քաղում, ահա՛ լեռները, ուր գիշերել եմ ոչխարների հոտերի մոտ, երբ ընկերներիս հետ հովիվ էի:

Ահա՛ մեր ջրաղացի առուն... ցամաքած է նա վաղուց, որովհետև ավերակ է մեր ջրաղացը. տեսնում եմ հեռվից մեր տան և ջրաղացի ավերակները: Թուրք զինվորի ձեռքը և երկրաշարժի տարերքը կործանել են նրանց. ահա՛ մեր հողերը և պարտեզները, մեր բարդիներն և ուռիները՝ խորտակված են մեծ մասով և արմատախիլ եղած...

Նվիրական վայրե՛ր, ուր անցան իմ մանկությունը և պատանեկության առաջին տարիները, ուր խաղացի ընկերներիս հետ և մենակ թափառեցի երազներով թևավոր, ուր ըզգացի առաջին սիրո սրբությունը և նրա քաղցր վիշտը...

Ձիուս սմբակների տակից բարձրանում է ճանապարհի փոշին, և փոշու նման բարձրանում են հուշերս — բարձրանում են ապրած օրերից և զգացած վայրերից: Հոգուս մեջ տեսնում եմ ապրած իմ քաղցր օրերը այս նվիրական հողերի վրա, նվիրական Ախուրյանի ափին:

Ահա՛ հայրս և մայրս: Հայրս լուրջ դեմքով, բարի և պատկառելի. մայրս սրբուհու պատկերով, անուշ, վշտոտ և գթառատ:

Հայրս քաղաքի առևտրական իր գործերը հանձնել էր եղբայրներիս և մորս հետ տեղափոխվել էր գյուղի կալվածը՝

վերջին տարիները անվրդով ապրելու համար: Ես էլ, որպես ծնողներիս կրտսեր որդին, նրանց հետև էի: Հարևան մոտիկ գյուղի դպրոցն էի հաճախում մինչև մեծանալս, հետո քաղաք փոխադրվեցի:

Առավոտ է: Հայրս հագել է քիրմանշալի խալաթը (ըզգեստ), նստել է մտամփոփ, վերացած, Սաղմոս կամ Նարեկ է կարդում, կիսաձայն: Դռան ճեղքից երկյուղածորեն նայում եմ հորս. կարծես, խեղճ մարդը մի ծանր ոճիր է գործել, որ հիմա, աչքերը արցունքով լի, կարդում է սուրբ գիրքը՝ քավելու համար իր մեղքը:

Մայրս դուրս ու ներս է անում. քաղցր և բարի ձայնով կարգադրություններ է անում աղախնուն, հացթուխին, ծառային, պարտիզպանին — կովերը նախիր տարե՞լ են, հորթերը հանձնե՞լ են հորթարածին, գառները՝ գառնարածին, ձիուն կեր տվե՞լ են, շներին լափ տվե՞լ են, հավերին, սագերին, բադերին կուտ, ուտելիք տվե՞լ են...

Արդեն մեծ ու փոքր թոնիրները վառել են, հաց են թխում, կերակուր են եփում թե՛ մեզ համար, թե՛ ջրաղացի բանվորների համար:

Մայրս իր ձեռքով շրջիկ աղքատներին և ճամփորդներին կերակրում է և ճամփա դնում:

Հայրս ավարտել է ընթերցումը, այցելում է ջրաղացը, մեկ-մեկ նայում բոլոր աղորիքներին, խոսում է ջրաղացպանի հետ, աղունատերերի հետ. գնում է պարտեզը, բանջարանոցը, իր ձեռքով կանաչեղեն է քաղում ճաշի համար:

Ես ընկերներիս հետ վազվզում եմ ջրաղացի ներսն ու շուրջը, մեր և հարևանների կտուրներն ենք բարձրանում, թոնում ենք խոտնոցների վրա. մեծ աղմուկով գյուղացոց գոմեշներն ենք լողացնում գետի մեջ և նրանց հետ սուզվում ջրի տակ. դաշտերում բաց թողած էշերն ու ձիասանձ պառավ ձիերն ենք հեծնում ու նրանց բաշերից բռնած արշավում...

Ճաշից հետո հայրս մի պահ պառկում է հանգստանալու: Ապա գալիս են հորս բարեկամները, բոլորը՝ հասակակիցներ, հորս զրույցընկերներն են նրանք — Տեր Միքայելը,

Օհան տացուն, Ադամ քեհյան, Պապան քեհյան, Ներսես ամին:

Ծխում են, թեյ են խմում և զրույց անում: Խոսում են հըղից ու նորից, անցած դեպքերից, վաղեմի օրերից, ընտանեկան անձերից:

Ես թեյ եմ մատուցում այս հարգելի ծերակույտին և ուշադիր կլանում եմ նրանց խոսքերը:

Տերտերը պատմում է Գրիգոր Նարեկացու հրաշքներից, Սիմոն Սյունակյացի վարքից: Օհան տացուն ասում է, որ վերջերս անիծված թափառական հրեան հանկարծ երևացել է Հոռոմ գյուղի հովիվներին, մի քիչ դադար է առել նրանց մոտ, մի թաս կաթ է խմել և նորից ճամփա է ընկել, աներևութացել. հայտնել է, որ շուտով աշխարհաոչնչացում պիտի լինի, և իր տանջանքները աշխարհի հետ պիտի վերջանան:

Մարմինս փշաքաղվում է, և բաժակները դողում են մատուցարանի վրա:

Տեր Միքայելը հակաճառում է ասելով, որ աշխարհը կկործանվի միայն այն ժամանակ, երբ Նեռը կերևա. Հայտնության գրքի վկայությամբ դեռ հազար տարի կա Նեռի երևալուն:

Ես հանգստանում եմ:

Պատմում են զանազան իմաստալից առակներ:

Լսում եմ Դիվանա Պահլուլի մի առակը:

Նրա եղբայրը թագավոր է՝ հզոր և պատերազմասեր. գրնաացել է մի աշխարհ է տիրել և ցնծությամբ վերադառնում է:

Տեսնում է, մայրաքաղաքի ավագ դռան առաջը եղբայրը չափչփում է գետինը, անուշադիր ընդհանուր ցնծությանը:

— Ի՞նչ ես անում,— հարցնում է թագավորը:

— Ուզում եմ չափել իմանալ, թե՝ էդքան անծայր հողերից, որ տիրել ես, ինչքա՞ն է լինելու վերջնական քո բաժինը — չափեցի տեսա՝ յոթը կանգուն հող, եղբայր սիրելի, — պատասխանում է Դիվանա Պահլուլը:

Ձիս քայլում է դանդաղ, և նրա սմբակների տակից բարձ-

րանում է մեր գյուղի ճանապարհի փոշին, և հոգուս մեջ բարձրանում են հուշերս...

Հայրս ուներ մի աշուղ բարեկամ, մեր դրացի գյուղից, աշուղ Գալուստ անունով: Լավ սազ էր նվագում, անուշ, թավ ձայն ուներ՝ սրտից խոսող, շա՜տ հեքիաթներ գիտեր: Պարսկական, թրքական, հայկական անթիվ հեքիաթներ: Իր սիրո վեպն ուներ արևելքի հեքիաթների տարրերով և գույներով հյուսած:

Ամեն շաբաթ, կեսօրից հետո, սազը պատյանի մեջ վզից կախ, գալիս էր նա մեր տունը, մնում էր ամբողջ կիրակի օրը մինչև երկուշաբթի: Եվ երկուշաբթի առավոտ, մեկնում էր սազը վզից կախ, առատ վարձատրված:

Ինչքա՜ն, ինչքա՜ն էի սիրում աշուղ-ամուն: Երբ գալիս էր, տոն էր սկսվում ինձ համար: Հափշտակված, աչքերս նրա մթին աչքերին հառած՝ ժամերով կախված էի մնում նրա կախարդ շրթներից: Նրա սազն ու հեքիաթը այլափոխում էին իմ աչքում իրական շրջապատը: Հանկարծ մեր գավառի լեռները, ձորերը, դաշտերը վերածվում էին ուրիշ տեսակ մի աշխարհի, աննկարագրելի գեղեցիկ, առասպելական: Հրաշքի աշխարհ, որի լեռների բաշերով թռչում են հրեղեն ձիերը, կտրիճները գնում են անմահական խնձոր բերելու, չքնաղագեղ աղջիկները մարմարյա ապարանքների մեջ կարոտով սպասում են անվեհեր կտրիճներին, որոնց մեջ տեսնում էի և ինձ... Ամառը քաղաքից հյուր էին գալիս մեր ազգականները: Հորեղբրանք, հորքուրանք, քեռոնք, մորքուրանք, խնամոնք... Մնում էին օրերով, զվարճանում էին և գնում, տեղ տալով հաջորդներին:

Ամառային մի անուշ երեկո է. ջրաղացից անընդհատ գալիս է չախչախների ձայնը և ջրերի խոխոջը... բարդիները սոսափում են...

Հորքուրանքս մեզ հյուր են: Հորաքույրս նստել է հորս աջ կողմը, նրա ամուսինը՝ ձախ կողմը. մայրս հորքուրիս մոտն է:

Նվագում է աշուղ Գալուստը. քույրերս, եղբայրներս, հարսներ, աղջիկներ, պատանիներս հավաքված ենք նրա շուրջը:

Աշուղը՝ սազի լարերը լացացնելով, երգով պատմում է Բաղդասար աշուղի դժբախտ սերը: Հետո իմացա, որ այդ իր սիրո վեպն էր, որ վարագուրել էր ուրիշ անունի տակ:

Դժբախտ էր այդ սերը, տառապալից, անհույս, կարոտով տոչորուն, ինչպես բոլոր մեծ սերերը: Հուզումով, վշտով վերապրում էր նա իր վեպը: Մենք՝ բոլոր ունկնդիրներս, մեծ և պստիկ, համակված ենք իրական կարեկցանքով դեպի դժբախտ աշուղի ճակատագիրը:

Երբ աշուղ Գալուստը հառաչելով ավարտեց իր վեպը այս հարցումով՝

«Հե՛յ վախ, մեռել է Բաղդասար,
Ցա՛ր, գերեզմանը չե՞ս տեսել...»:

Հորքուրիս գեղեցիկ, դեռատի աղջիկը փղձկաց, և երկար պահ նրա եղնիկի աչքերից հոսում էին արտասուքները...

Հայրս պատվիրեց աշուղին, որ այլևս տխուր բաներ չերգի — «ջահելների սիրտը մի՛ կոտրի. ուրախ երգեր ասա...»:

Աշուղ Գալուստը ուրախ երգեր նվագեց, սակայն դրանցից բան չեմ հիշում, իսկ նրա թախծանուշ երգը միշտ կենդանի հնչում է հոգուս մեջ...

Դանդաղ քայլում է ձիս մեր հանդերի արահետներով, նրա սմբակների տակից բարձրանում է արևակեզ հողերի փոշին, և բարձրանում են հուշերս իմ կարոտակեզ հոգում...

Ախուրյանի ափին, մեր տան դիմաց, վրան ենք սարքել. պատանիներս այնտեղ ենք անցկացնում մեր ժամերը — կարդում, վիճում, նարդի խաղում: Մեզ հյուր են եղբորս ընկերները, հինգ երիտասարդներ, որոնք այցի են գնում Անի քաղաքին, որ մեր գյուղից հեռու չէ:

Զրույց է տեղի ունենում: Խոսքի նյութն է հայրենիքի գաղափարը: Քաղցր է հայրենիքը, ասում են նրանք, նվիրական է հայրենիքի հողը. խորհրդավոր է և անբացատրելի հզորություն ունի: Հայրենիքը հող է, ասում են նրանք, հողը ավանդապահ է, հողն է ստեղծում և կաղապարում ազգությունը, երբ հողը կորսվի, ամեն ինչ կորսված է: Մեր պապերը ծնվել են այդ հողից և նորից վերածվել են այդ հո-

ղին: Մենք ինքներս էլ ծնվել ենք այդ հողից, սնվել ենք այդ հողով. այդ հողով է շինված ու զանգված մեր ոսկորը, մեր արյունը, մեր հոգին: Մեր բյուրավոր նախահայրերի հողը է մեր մեջ: Հայրենիքը,— եզրակացնում են նրանք,— մեր նախնիքն են, մեր ծնողներն են, մենք ենք՝ հող դարձած: Եվ ինչքա՜ն դժբախտ է այն մարդը, որ կմեռնի օտար հողում և բախտ չի ունենա խառնվել իր ծնողների հողին...

Հայրենի Շիրակ, ինչքան քաղցր հուշեր ես զարթնեցնում իմ հոգում: Եվ հուշերիս զմրուխտյա գետը քո նվիրական դաշտերով տանում է ինձ դեպի երջանիկ մանկությունը, դեպի մայրական գիրկը, դեպի երազներով խանդավառ պատանեկությունը և առաջին սերը:

Հայրենի Շիրակ, ինչքա՜ն, ինչքա՜ն սիրում եմ քո հին, հարազատ հողը...

1938

«ՋՈՒՅՆ ՍՈՒԼԹԱՆԻ» ԵՐԳԸ

Մի քանի տարի շարունակ բոստանչի թաթերը վարձել էին և բանեցնում մեր գյուղի բանջարանոց-բոստանները:

Նրանք գարնանը գալիս էին, հողերը հերկում, սերմանում, ամառվա արևի տակ չարաչար աշխատում և ուշ աշնանը՝ իրենց վաստակի արդյունքը գանձած՝ վերադառնում էին իրենց երկիրը՝ գարնանը նորից գալու համար:

Իրանից էին նրանք, Մակու նահանգից: Իբրև իրանյան ցեղին պատկանող մարդիկ՝ իրար հետ խոսում էին պարսկերենի մի ենթաբարբառով, բայց հայերի հետ խոսում էին թուրքերեն: Ավագ թաթը՝ Ռահիմը, 50 տարեկան կլիներ: Բարձրահասակ, տարիների ծանր աշխատանքից կորաբամակ: Արևակեզ դեմքով, խելացի աչքերով: Լուրջ, փորձված մարդ էր, բավական աշխարհ տեսած, պատմում էր Իրանից ու Թուրանից, Թավրիզից ու Սմրղանդից:

Կրտսեր թաթը՝ Ջաֆարը, աշխույժ մի երիտասարդ էր: Շատ երգեր գիտեր և անուշ ձայն ուներ: Երրորդ թաթի անունը մոռացել եմ. սակայն, ամեն անգամ, երբ մտքիս մեջ իրականացնում եմ նրան, միշտ տեսնում եմ այդ թաթին աշխատանքի վրա, բահը՝ ձեռին և քրտինքը՝ ճակատից ծորուն:

Ես տակավին շա՜տ երիտասարդ էի այդ ժամանակ: Հետները լավ մտերմացել էի և շատ բան լսեցի սրանցից հեքիաթական արևելքի մասին և նրա զրույցներից, առասպելներից և առակներից:

Վերապրում եմ հիմա մի անմոռանալի երեկո, զգացումներով հարուստ այդ չքնաղ օրերից: Բոստանումն էի, բոստանչիների հյուղակի առաջ, հողի վրա թիկն տված, Ախուր-

յանի ափին: Անդորր ու խաղաղ մի տրամադրություն կար բոստանի և դաշտերի մեջ և իմ սրտում:

Աշնան սկիզբն էր — բոլոր խոստումները լիուլի կատարած բերքառատ աշնան: Սերմերը, որ գարնանը պայթել էին հողի մեջ, ծծել էին սևահողի ուժն ու հյութը, լցվել էին արևով, աճել և ուռճացել, հասունացել, հասել էին իրենց ընպատակին — դարձել էին բանջար, հունդ, արմտիք — և հիմա բոլորը բուրում էին հասունության տարփալից հոտերով և թաթախել էին ինձ տարերային մի մթնոլորտի մեջ:

Արևը մայր էր մտել արդեն, և նրա հետքի վրա մնացած լույսերը հետզհետե դալկանում էին: Արևելքում խավարը վայրկյանե-վայրկյան թանձրանում էր, և աստղերը, այստեղ ու այնտեղ, հանկարծ կայծում էին: Մոտիկ, մթի մեջ ծվարած բլուրների թիկունքից, խամրած արծաթի գույնով ուրվանում էր Արագածի ձյունապատ գագաթը:

Բոստանչի թաթերն ընթրել էին արդեն և այժմ թիկն տրված՝ հանգչում էին ցերեկվա աշխատանքից: Դադարել էին խոսելուց՝ անցած օրվա գործերի և վաղվա անելիքների մասին: Եվ երեկոյի համատարած լռության մեջ իրենք էլ լռել էին և, լուռ ու ինքնամփոփ, ծխում էին և երազում:

Ո՞վ գիտե՝ ինչ էին երազում. թերևս իրենց մանկության մասին, թերևս դեռ խոստումներ շռայլող ապագայի մասին:

Ո՞վ է իմացել երազների ուղիները և նրանց դեգերած վայրերը:

Առանց քայքայելու այս խորին լռությունը՝ անցնում էին ուշ մնացած թռչունները՝ թևերի անլսելի շրշյունով, և բարակ հովը մեղմ երգի պես հոսում էր ծառերի սաղարթների միջով, մերթ լսվում էր, կարծես, ափի եղեգնափողերի միջից գետի ալիքների քաղցր մրմունջը:

Հյուղակի պատի տակ, օջախի վրա դրած կար ջրով լի չայդանը: Անաղմուկ և անփույթ այրվում էր աթարը առանց լուսավորելու այս խորին և կիսախավար լռությունը:

Անրջական լռությունից աշխարհ հանեց մեզ Ջաֆարը, որ սկսել էր քթի տակ մի թախծանուշ եղանակ մրմնջալ, մեղամաղձոտ արևելքի մեղեդիներից մեկը:

— Լավ եղանակ ես սկսել,— ասաց Ռահիմը,— վաղուց

է՝ չեմ լսել այդ երգը: Դեհ, քեզի տեսնեմ, կարգին ասա լսենք:

Ջաֆարը գլուխն առավ ափերի մեջ և սկսած եղանակը ավելի ուժեղացրեց:

Երգի բառերը պարսկերեն էին, բան չէի հասկանում, սակայն մեղեդին հասկանալի լեզվով խոսում էր սրտիս հետ:

Ա՜խ, ինչքան վիշտ, ինչքան տանջանք, ինչքան անհույս գանգատ կար այդ քաղցր ու դաժան հնչյունների մեջ: Տեսնելու չափ զգում էի, որ մարդկային մի սիրտ՝ խորքից զարկված՝ հեծեծում է դառնագին, գալարվում է և արյունոտվում:

Ո՞վ էր արդյոք իր տառապած հոգին քամել այդ ձայների մեջ: Ջաֆարը արտագին «ա՜խ» քաշելով ավարտեց երգը: Թաթերը հառաչելով, նստած տեղերում փուլ եկան, փըշըրվեցին: Լռությունը, որ մի պահ խզվել էր, նորից հաստատվեց:

Երգը վերջացավ, բայց իմ սիրտը տակավին տրորվում էր ու մղկտում:

Չայդանի ջուրը եռ էր գալիս: Երրորդ թաթը հանեց թեյի բաժակները: Ծխահամ թեյը խմում էի մեքենաբար:

— Ի՞նչ երգ էր այդ,— հարցրի ավագ թաթին:

— Էդ ե՞րգը...— կարծես հարցս լավ չլսելով կրկնեց նա,— Էդ ե՞րգը, հա՜, էդ Զիլի Սուլթանի դեմ կապած երգն է: Լավ խոսքեր ունի և լավ էլ եղանակ:

Եվ, թեյի բաժակը քարի վրա դնելով՝ շարունակեց.

— Էդ էնքան էլ հին պատմություն չէ: Իրանի շահնշահի՝ Նասրեդդինի որդիներից մեկն էր Զիլի Սուլթանը: Ֆարսիստանի հաքըմն էր, շահի կողմից երկրի գլուխ-գլխավորը: Նստում էր Իսֆահան քաղաքի մեջ: Մեկ անգութ, չար, գազան մարդ էր: Անկուշտ ու ագահ: Նստել էր ռայաթի շլինքին ու թաբիարը[1] գլխին զարկում: Ինչ բան որ աչքը խմեր, իրենը պիտի լիներ: Խլում էր ռայաթի տունը, բաղը, մյուլքը, վաղը: Մարդ չէր կարող դեմ դնել: Հակառակորդի գլուխը կտրում էր, մարմինը շների առաջը գցում: Ո՛չ ալլահից վախ ուներ, ո՛չ շահից: Խոսքը՝ արյուն, գործը՝ արյուն: Էսպես մի

[1] Տասպար:

զալում ու զոռպա խուճխար[1]: Մի կտրիճ մարդ է լինում Իսֆահան: Իր քարվանի գլուխն ընկած՝ էդ մարդը գնում էր Իսֆահանից Ղանդահար. Ղանդահարից էլ գալիս գնում էր Թեհրան: Խլում է էդ մարդու քարվանը, խլում է տունն ու փողը, օրվա հացի կարոտ թողնում, վերջն էլ խլում է մարդու սիրեկան, սիրուն կնիկը: Դանակը ոսկորին է հասնում. որ դանակը ոսկորին է հասնում, էս մարդը գնում է Թեհրան, շահի դուռը: Շահի ոտքն է ընկնում, գանգատվում:
Շահի բարի սահաթին էր...

— Ա՛յ նալլաթ[2] նրա բարի սահաթին,— բացականչեց Ռահիմը իր խոսքն ընդհատելով:

— Այ նալլաթ նրա բարի սահաթին,— արձագանքեցին մյուս թաթերը:

— Էսպես. շահը ֆերմա[3] է տալիս, ֆերմանի մեջ հրամայում է Զիլի Սուլթանին, որ ետ դարձնի էդ մարդու կնիկը, կայքն ու քարավանը: Ֆերմանը գլխի վրա բարձր բռնած՝ էդ մարդը ուրախ-ուրախ գնում է Զիլի Սուլթանի դիվանը: Շահնշահի ֆերմանի առաջ ամեն դուռ բաց է:

Ֆերմանը տալիս է Զիլի Սուլթանին: Զիլի Սուլթանը հրամայում է միրզային[4] որ կարդա ֆերմանը: Ֆերմանը որ կարդում է, Զիլի Սուլթանի արյունը բարկությունից կրակ է առնում...

— Փա՜ֆ, փա՜ֆ, փա՜ֆ, էդ ի՜նչ մեծ սիրտ ես ունեցել, մեր տղա, որ գնացել ես շահի դուռը իմ վրա գանգատ: Էդպիսի մեծ սիրտ ունեցող մարդ չեմ տեսել իմ աշխարհի մեջ: Աչքովս կուզենայի տեսնել սրտիդ մեծությունը:

Ու հրաման է տալիս: Հրամանի վրա գալիս է միր-ղազապը[5] ջալլաթներով[6]: Էդ մարդուն գցում են գետին, խանչալով ճեղքում են կուրծքը, հանում են սիրտը ու սինու վրա դրած ցույց են տալիս Զիլի Սուլթանին:

Զիլի Սուլթանը նայում է, նայում, ասում է.

— Շիտակ, որ մեծ սիրտ է ունեցել էս մարդը: Ամենից մեծ շանս տվեք էդ սիրտը, թող էսօր կուշտ ճաշ ուտենա:

---

[1] Արյունահում: [2] Աղեղք: [3] Հրովարտակ:
[4] Գրագիր: [5] Դահճապետ: [6] Դահիճներ:

Էս երգը էդ խեղճ մարդու կողմից են կապել Ֆարսիստանի շայիրները: Էս երգի մեջ էդ մարդու ցավն ու սարսափը կա մահի առաջ. սերն ու կարոտը կյանքի համար ու իրան սիրեկան կնկա և էլի զավակների համար: Էս երգի մեջ գանգատ կա ալլահի դեմ, որ չի պատժում բռնավորներին: Գանգատ կա աւօրեն, անարդար աշխարհի դեմ: Ռահիմը լռեց: Ծխամորճը լցրեց թյությունով, բթամատով սեղմեց և հարեց տխրությամբ.

— Հազար-հազար տարիներ էսպես են եղել ու էսպես են աշխարհի բոլոր շահերն ու սուլթանները, էմիրներն ու թագավորները: Ռայաթին գռել են, գուժել են, թալանել են, հոգին հանել են, միսը շներին տվել:

Ջուլո՜ւմ, զուլո՜ւմ, զուլո՜ւմ:

Վառեց ծխամորճը, մի պահ ջղայնոտ ծխեց և ապա ուժեղ շեշտով ասաց.

— Էսպես չի մնա: Օրը պիտի գա. արյունը դրանց փորը չի մնա: Նադիր շահն էլ լիտրներով աչք հանեց իրան գլուխ չծողող ռայաթից, բայց Նադիր շահը՝ որ Նադիր շահ էր, պատիժն առավ: Ռայաթի հետ խաղալը հեշտ բան չէ:

Տես, ոնց է ասում շայիրը.

«Գիշերը
Նադիր շահը
Նստել էր թախտին,
Թագը՝ գլխին:
Առավոտը
Ոչ Նադիր շահի մարմինը
Գլուխ ուներ,
Ոչ գլուխը՝ թագ»:

Միայն ռայաթի ականջը ծակող պիտի լինի, որ աչքերը բանա: Էդ օրն էլ պիտի գա: Ու էն ժամանակ աչքը բացված աշխարքի հետ էլ գլուխ ելնել չի լինի:

Էդ օրը Նադիր շահի պես վերջ պիտի ունենան աշխարհի բոլոր զոռբաներն ու բռնավորները:

1933

ՀՈԲ ԵՐԱՆԵԼՈՒ ԾԱՌԸ ԴԱՆԿԲԵԺ ՍԼԵՄԱՆԸ

Ծա՛տ տարիներ առաջ, հունվարի սկզբներին, մի բարեկամի հետ Կաղզվանից գնում էինք Երևան: Բարեկամս փաստաբան էր և Երևանի դատարանում գործ ուներ պաշտպանելու:

Առաջին գիշերը իջևանեցինք Կողբ ավանում: Առավոտուն կուշտ նախաճաշեցինք, խմեցինք ամեն մեկս մի քանի բաժակ օղի, փաթաթվեցինք բալշուղներով ու չափունջիներով և ճանապարհ ընկանք:

Երկձիանի կառքը աշխույժ թռչում էր լավ խնամված խրճուղիով, որը զուգահեռ գնում էր Արաքսի ընթացքի հետ:

Օդը պայծառ էր բյուրեղի պես կապույտ երկինքով: Արևը սահում էր Մասիսի լեռնապարի գագաթներին գրեթե բավելով:

Ենթադրում էի, որ շա՛տ ցուրտ պիտի լիներ, որովհետև Կողբից դուրս գալուց անմիջապես հետո մեր բեղերից և մորուքներից կախվեցին սառույցի փոքրիկ սյուներ և մեր չափունջիների և ձիերի մազերի վրա եղյամի խավ նստեց:

Միևնդեռ մենք չէինք զգում ցուրտը: Օդին՝ այդ հրեղեն հեղուկը, մեր արյան մեջ կրակ էր վառել:

Իմ տրամադրությունը շա՛տ զվարթ էր, ինչպես և բարեկամինս, որ հասով, կատակախոս մարդ էր:

Նա մեկը մյուսի հետևից շա՛տ զվարճալի բաներ էր պատմում, և մենք ծիծաղում էինք լիասիրտ:

— Տղամարդ ցուրտ է,— հանկարծ ասաց մեր կառապանը՝ բրդե թանձր թաթմանների մեջ պարուրած ձեռքերը իրար զարկելով:

— Ի՞նչ է, մրսո՞ւմ ես,— հարցրի ես:

— Ինձի պես տղամարդու համար մրսելս ո՞րն է:

— Է՛հ, մենք ի՞նչ պակաս տղամարդ ենք,— վրա բերեց բարեկամս:

Եվ երեքով, միասին, բարձր ծիծաղեցինք:

Օ՛, երիտասարդության անառիթ ուրախություն, ո՞ւր գնացիր...

Դաշտերը, ինչքան աչքդ կարող էր կտրել, ծածկված էին ձյունով. մինչև լեռների կատարները կայծկլտուն, մարմարյա ձյունով: Սակայն ժայռերի սև մոռթները խաթարում էին այս համասփյուռ սպիտակությունը:

Եվ մի անսահման խաղաղություն կար տարածված ամեներքեք, մի ցուրտ, ճերմակ լռություն դաշտերի և լեռների վրա: Միայն ձիերի առույգ փռնգտոցն էր և անիվների աղմուկը, որ կենդանացնում էին այս մեռելային բնանկարը:

Ճանապարհի երկու կողմը ո՛չ մի գյուղ չէր երևում — ընդարձակ ամայություն էր:

Հանկարծ խճուղու ծայրին տեսանք ծուխի մի բարակ սյուն բարձրացած... Կյանքի ներկայության հաճելի խորհրդապատկեր:

Ղարա-Ղալայի փոստի կայանն էր: Այնտեղ պիտի մի պահ դադար առնեինք՝ ձիերը փոխելու համար:

Ինչքա՛ն խոստմնալից է այս վայրը մրսած, հոգնած ձիերի և ուղևորների համար. ինչքա՛ն ցանկալի կայանը, իջևանը գիշերվա պահերին, ամառվա շոգերին:

Ձիերը ինքնաբերաբար արագացրին իրենց քայլերը:

Կայանի պետը, 30 տարեկանի մոտ, համակրելի դեմքով մի երիտասարդ, մեզ առաջնորդեց մի սենյակ, ուր զվարթ ճարճատյունով ջերմություն էր բաշխում սև, թիթեղյա, բարի վառարանը:

Խնդրեցինք մեզ սամովար տալ, մինչ ձիերը կփոխեին, և հանելով բաշլուղ ու յափունջի, նստեցինք վառարանի առաջ և մեծ հաճույքով վառեցինք մեր ծխախոտները:

Կայարանի պետը ելումուտ էր անում:

Ես զննում էի սենյակը: Արևելյան կողմը մի լուսամուտ կար՝ բացված Արարատյան դաշտի վրա, ուր Արաքսը ճերմակ դաշտերի միջով վարում է դեղնականաչ իր ջրերը: Ձախ

կողմը արծաթյա Արագածն է կանգնել երկնահուպ Մասիսի հանդեպ:

Սենյակի մի անկյունում կար մի փայտե մահճակալ, պատին՝ մի գորգ. մյուս պատի տակ մի թախտ՝ վրան գորգ ու բարձեր: Անկյունում՝ մի մեծ պահարան:

Մահճակալին կից մի սեղան կար՝ վրան թղթեր, գրիչ, մելան և կարմիր շապիկով մի գիրք: Նայեցի — «Մուրճ» ամսագրի վերջին թիվը:

Ի՞նչ — այս ամայի, հեռավոր վայրում գրական վերջին նորությո՞ւնը,— չէի սպասում: Եվ ինչքա՜ն թանկարժեք երեվաց ինձ այս պահին «Մուրճ»-ի այս համարը: Սիրով կմընայի այստեղ, մինչև որ ծայրեծայր կլանեի այն: Քաղաքում ո՞վ է լրիվ կարդում որ... այնքա՜ն գիրք կա՝ իրար խեղդող:

«Մուրճ»-ը թերթեցի: Այնտեղ կար իմ մի ոտանավորը: Ուրախացա: Ցույց տվի բարեկամիս:

Ներս մտավ կայանի պետը:

— Այս «Մուրճ»-ը ձե՞րն է,— հարցրի ես:

Այո՛, իրանն է. բաժանորդ է. ուրիշ ի՞նչ կերպ ժամանակ ավցներ այս մեկուսի, ճգնավորական վայրում, մանավանդ ձմռան երկար, մթին, անվերջ գիշերները... ուրիշ գրքեր էլ ունի:

— Երևի կարդալ շա՜տ եք սիրում:

Այո՛, շա՜տ է սիրում կարդալ, միակ մխիթարությունն է: Վաստում է վառարանը, սամովարը դնում է, նստում է մենակ, ծխում է և կարդում է, քամին մռնչում է, ծեծում է դուռ ու պատուհան, բայց ինքը տարված է գրքով, և մանավանդ, երբ լավ գիրք է ձեռն ընկնում, մոռանում է ողջ աշխարհը... Ի՞նչ բախտավորություն: Օրինակ, վերջերս կարդում էր «Հո՞ երթաս»-ը. երկու անգամ, ծայրեծայր, կարդաց, այնքան հափշտակված էր...

— Դուք ճանաչո՞ւմ եք հայ բանաստեղծներին,— հարց տվեց բարեկամս:

— Իհարկե: Քչից-շատից:

— Օրինակի համար, Հ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին:

— Այո՛, կարդացել եմ «Մուրճ»-ի մեջ:

Բարեկամս աչքի ճշանով ցույց տվեց ինձ — «Իսահակյանն է»:

Երիտասարդը շփոթվեց. մեկ նայում էր ինձ, մեկ՝ բարեկամիս:

— Այո՛, հենց ինքն է. հանգաք չեմ անում:

Ես ժպտացի և խոստովանեցի:

Իսկույն երկու ափերի մեջ առավ ձեռքս: Աչքերի մեջ բոց էր փայլում:

— Ինչքա՜ն ուրախ եմ, բախտավոր եմ: Մտքովս չէր կարող անցնել, թե մի օր, այստեղ... Ես շատ էի ցանկացել ինձ մի անգամ Թիֆլիս ձգել, որ գոնե հեռվից տեսնեի մեր գրողներին,— և թվեց անուններ:

— Տեսա՞ք,— կտրեց նրա կցկտուր խոսքը բարեկամս,— մատաղն իր ոտքովն է եկել:

— Ես մատաղ լինեմ Ձեզ,— դարձավ ինձ երիտասարդը,— ես շա՜տ կխնդրեմ: Ո՛չ, թույլ չեմ տա... Էս գիշեր իմ հյուրն եք. չէ, չեմ թողնի...

Բարեկամս հակառակեց — շտապ գործ ունի, պիտի գնա:

Կայանի պետը թախանձեց.

— Խնդրում եմ, անպատճառ մնաք, լավ ժամանակ կանցնենք, գոհ կմնաք: Ձեզ ցույց կտամ Ղարա-Ղալայի ավերակները, կտանեմ քրդերի մոտ, բեկը բարեկամս է, շա՜տ հետաքրքրական մարդ է. գիշերը քուրդ երգիչ կբերեմ, իրենց երգերն ու զրույցները կերգե...

Հրապուրիչ հեռանկար էր: Ես համոզեցի բարեկամիս, համաձայնեց:

Կայանի պետի բերկրանքին սահման չկար:

Արսենը կողբեցի է. սովորել է ռուսական տարրական դպրոցում. ծնողները գյուղումն են. հայրը տադիկ է (աղահանքում քար կտրող), մի քույր և փոքրիկ եղբայր ունի, հայրը շատ չի վաստակում, տան նեցուկը ինքն է. մինչև քույրը չամուսնանա, ինքը չպիտի ամուսնանա...

Բացի Արսենից, կայանում մշտապես ապրում էր և ձիերի խնամող, ախոռը մաքրող մի ծառա: Երթևեկող կառապանները հաճախ գիշերում էին կայանում:

Իրենց փոքրիկ տնտեսությունն ունեին — մի կով և հա-

վեր: Հացը՝ թխած՝ գալիս էր Կողբից: Արսենը հաճախ գընում էր Կողբ և պաշարով վերադառնում:

Շղթայի զարկած երկու հսկա շներ կային. այնքա՜ն բրդոտ էին նրանք, կարծես մուշտակ էին հագած: Գիշերը արձակում էին նրանց: Կայանի արթուն և կատաղի պահապաններն էին:

Ծոխ ճաշից հետո, ուր հավով փլավից բացի վայելեցինք Արաքսի համեղ ջանաո ձուկը, գնացինք Ղարա-Ղալաո տեսնելու: Հեռու չէր կայանից: Իջանք մի ձոր, որ քրդերի ղշլաո էր, ձմեռանոցը:

Գարնան բացվելուն պես քրդերը իրենց կոներով (վրաններ) և հոտերով բարձրանում են լեռները, աշնանը ապաստանում են տաք ձորերում: Բազմաթիվ մեծ ու փոքր անձավներ ունի ձորը, մաղարաներ, ուր տեղավորվել են քուրդ ընտանիքներն իրենց ոչխարով և տավարով: Քարայրերը ընդհանց խոտանոցներն ու հարդի մարագներն են: Այրերի մեջ օջախներ կան շինած, թոնիրներ կան թաղած: Այրերի բերանները անտաշ քարերով պատեր ունեին և փայտե կամ եղեգնե կափարիչներով դռնակներ:

Հարուստները այրերին կից քարաշեն մի-երկու աչք բնակարաններ ունին, բայց ընտանիքի մեծ մասը և ծառաները այրերումն են ապրում: Ամեն մի այրից ծուխ է բխում: Անհագին գամփռներ պահել էին դռների առաջ. քուրդ մանուկները՝ կիսամերկ, խաղում էին անզոր արևի ջերմության տակ. նրանց մարմինները սևացած էին իրենց ոչխարների թուխ գեղմների պես:

Տեղ-տեղ ոչխարների խումբեր՝ գլուխները միմյանց դրմակների տակ թաղած՝ կանգնել էին, գրեթե անշարժ: Դուրս էին հանել տաք անձավներից՝ մաքուր օդ առնելու համար:

Քանի դեռ արև կար, բարձրացանք ավերակ քաղաքը. վերադարձին պիտի այցելեինք բեկին:

Ղարա-Ղալաո երեք կողմից պատած է ձորով: Հյուսիսում ժայռոտ անդունդի հատակով հոսում է Արաքսը: Ալիքները անդադրում ծեծկվում են հունի խորքից բուսած կամ հունի մեջ ընկած վիթխարի ապառաժների հետ, կոտրտում են շա-

րուսակ իրան ընկճելու ձգտող սառույցը և հավերժական անդուլ աղմուկով և շառաչով լցնում են անդունդը:

Հենց անդունդի եզերքից բարձրանում են սև-երկաթագույն դարբնած աշտարակներ ու պարիսպներ, ուր մերթ պատերի հետ հյուսված կան մեծաքիշ խաչեր՝ կարմրավուն քարից: Քաղաքը ամեն կողմից պարսպապատ է: Քաղաքի մեջ կան ավերակների կույտեր, քանդակված վեմեր, փլատակ շենքերի մնացորդներ, կարկառներ, կարկառներ...

Թափառում ենք հինավուրց գեղեցիկ բեկորների մեջ, մի կարկառից մյուսը: Ի՞նչ է այս քաղաքի անունը: Անհայտ է: Ե՞րբ է հիմնվել, ո՞վ է հիմնել, ե՞րբ է կործանվել — անհայտ է:

Ի՞նչ պատմություն ունի. ինչե՞ր են անցել նրա գլխովը. ի՞նչ դեպքեր են տեղի ունեցել այս պարիսպների մեջ — ո՛չ ոք գիտե: Պատմական ո՛չ մի հիշատակություն, պատմական ո՛չ մի անցքի հիշատակում:

Եվ պարիսպների, և շենքերի վրա ո՛չ մի տեղ արձանագրություն: Գերեզմանաքարեր կան միայն խաչանշաններով, առանց տապանագրերի:

Այս ի՛նչ կախարդական քաղաք է — մտածում եմ ցավով և զարմանքով: Սերունդներն են ապրել այստեղ, ամրակուռ պարիսպներով պատել են իրենց քաղաքը, կռվել են, սիրել են, ատել են, տառապել են, սերունդներ ու սերունդներ, և գերեզման են իջել՝ առանց մի խոսք կտակած լինելու հետնորդներիս իրենց դարևոր գոյության մասին:

Ինչքա՜ն այրեր են եղել, կանայք, աղջիկներ, երեխաներ. գոնե մի անուն, մի ապրողի անուն...

Հավիտյան կորած են թվում ինձ այս հին քաղաքի դարեր կենդանացնող այն հազարավոր ու բյուրավոր մարդիկը:

Ինչքա՜ն ունայն է մարդկային կյանքը. ինչքա՜ն ոչինչ է երկրի վրա մարդու հետքը, ինչպես ծովի վրա սահող տաշեղի հետքն է...

Սակայն ուզում եմ անպատճառ մի բան գիտենալ: Խեղդող է, ճնշիչ է այս անգիտությունը: Միտքը լկկող է այս գաղտնիքը:

Մի՞թե առասպելներ չկան ժողովրդի մեջ այս անանուն

քաղաքի մասին: Ժողովրդի հիշողությունը երկար է, և նրա առասպելները, առհասարակ, պատմության փաստերից ավելի ստույգ են լինում...

— Պարո՛ն Արսեն, շրջակա գյուղերում, Կողբում, ո՛չ մի պատմություն չկա՞, միթե, այս քաղաքի մասին, զրույց, հեքիաթ:

Արսենը լսում է մտածկոտ, ապա մեղավորի պես նայում է աչքերիս և, վարանելով.

— Այս քաղաքի մասին բան չկա, բայց մի առասպել կա այս տեղերի մասին, որուն չի վերաբերում. և շա՜տ պատավական, անհավը բան է...

— Ի՞նչ է,— հետաքրքրվում եմ ես:

— Մի ծառ կա այս կողմերում, հին ծերացած, ճղակոտոր ծառ, կեսը չորացած, փչակ դառած: Ասում են, որ Հոբ Երանելու ծառն է, նրա տակին է նստել Հոբը իր վերքերով, իր ցավերով: Այդտեղ են եկել նրա բարեկամները՝ թշվառին մխիթարելու համար...

— Ո՞ւր է, ո՞ւր է,— հարցնում եմ ես անհամբեր, և դիտակս տանում եմ աչքերիս:

— Այստեղից դժվար թե երևա, բավականին հեռու է. մի ժամ, ավելի: Ա՛յ, այնտեղերն է,— և մեկնում է ձեռքը:

Ես լարված նայում եմ — միայն և միայն ձյունոտ դաշտեր, ձյուն ու դաշտ, և ծառի ո՛չ մի նշույլ...

— Բան չի երևում, չի՞ կարելի արդյոք գնալ տեսնել:

— Հիմա շա՜տ դժվար է, ճանապարհը լցված է ձյունով... Իսկ եթե ամառը շնորհ բերես գաս, կերթանք միասին:

— Ուրիշ ի՞նչ են պատմում այդ ծառի մասին:

— Ուրիշ բան չկա: Սուրբ ծառ է. ուխտատեղի է. հայ և քուրդ գալիս են, մատաղ են անում: Տերևները բուժիչ են: Տերև չի մնում վրան՝ քանի որ բոլորը տանում են: Առանց էդ էլ՝ կիսամեռ ծառ է, գրեթե տերևազուրկ:

Հերու մայրս գնացել էր ուխտի. մի քանի հատ բերել էր. մեկն ինձ տվեց թե՝ պահիր — չարոցքի դեմ է: Ես էլ գրքի մեջ դրի: Ուրախությամբ կտամ Ձեզ:

Ես նորից նայում եմ մատնանշած վայրին և խորհում եմ— ինչո՞ւ է հայ ժողովուրդը Աստվածաշնչի Հոբին Եդովմական

հողերից տեղափոխել իր հողերի վրա: Անշուշտ, խորունկ նույնություն է տեսել Հոբի և իր ճակատագրի միջև:

Ինչո՞ւ մի այլ ժողովուրդ՝ վրացին, ռուսը, ֆրանսիացին չեն տեղափոխել Հոբին իրենց տունը... Իհարկե, անիմաստ կլիներ:

Չէ՞ որ ինքը՝ հայ ժողովուրդն էլ Հոբի պես մրրկահար և կայծակնահար է — իր գույքն ու ինչքը ավազակներից և հելուզակներից կողոպտված, որդիներն ու աղջիկները վայրագ թշնամիներից սրակոտոր ու թոփամահ, և Հոբի պես, դառնակսկիծ վերքերով նստել է, դարերով, իր տան մոխիրների վրա, իր հոյակապ ավերակների մեջ և հառաչում է ու մորմոքում:

Հոբը վերստացավ իր ինչքն ու գույքը կրկնապատկված, վերստին ունեցավ որդիներ և աղջիկներ, ավելի գեղեցիկ, քան առաջիններն:

Հայ ժողովուրդն էլ, Հոբի պես, հավատում է իր պայծառ ապագային: Անպարտելի հույս ունի և դարեր վառ է ու կենդանի նրա հավատը. գիտե, որ վերստին պիտի ստանա իր արդարավաստակ գույքն ու ինչքը. վերստին պիտի ունենա բազմաբյուր որդիներ և աղջիկներ, ավելի կորովի և ավելի գեղեցիկ, քան առաջիններն:

Այլապես, առանց այս հզորագույն հավատի, ինչպե՞ս կարող էր նա, ցավերով և խոցերով լի, ապրել դարեր և դարեր, նստած հայրենիքի մոխիրների վրա, իր շքեղ ավերակների մեջ...

***

Իջանք քրդերի ձմեռանոցը: Արսենը մեզ առաջնորդեց Յուսուֆ բեկի մոտ, որ Ջալալի ցեղի պետերից մեկն էր:

Բեկի քարակերտ բնակարանի դռան առաջ մեզ ընդունեց նրա ծառան և ներս հրավիրեց:

Բեկը 50 տարեկան մի առողջ տղամարդ էր, խրոխտ գեղեցկությամբ, շեկ մորուքով և կապույտ աչքերով:

Նստել էր օջախի կողքին և ծխում էր, երբեմն-երբեմն

ունելիով խառնելով մեղմ վառվող աթարը, որից նուրբ մի ծուխ էր ոլորվում բուխարիկի մեջ:

Թախտերի վրա փռված էին թաղիքներ և քրդական նախշուն գորգեր:

Բեկը հանգիստ և հանդիսավոր ձևով պատասխանեց մեր բարևին և տեղ հրամայեց:

— Բարով եք եկել, հազար բարով, իմ գլխիս, իմ աչքերիս վրա,— քրդական շեշտով, հայերեն բառերով ասաց բեկը (Հայաստանի քրդերը բավական վարժ հայերեն են խոսում՝ շրջապատի բարբառով):

Արսենը ներկայացրեց մեզ: Փաստաբան: Եվրոպայից եկած գրող-կարդացող: Անունով մարդիկ են:

Բեկը զննեց մեզ՝ ոտքից մինչև գլուխ.— լավ էինք հագնըված, ժամացույցով. ոսկի շղթայով. հետադիտակը վզիցս կախ:

— Ավրոպա՜, Ֆռանկստա՜ն, Ինկիլի՜զ, Լամսա՜...— ն գլուխը թափահարեց:— Քանի՞ լեզու գիտես,— դիմեց ինձ:

— Մա՛շշալլա, մա՛շալլա... Ի՞նչ դարդ ունես սրտիդ մեջ, որ թողել ես էդ լավ աշխարհքները, եկել ես մեր քամբաղը:

— Հայրենիք է, վաթան,— ասացի ես,— իսկ հայրենիքը ամեն տեղից անուշ է:

— Դրուստ է, դրուստ է... Հավքը օսկե վանդակի մեջ դնես, էլի իրան չոլի ծառը կուզե... Էնտեղ կուզե խաղ կանչել...

Հարցրեց Եվրոպայի կենցաղի մասին, հետո.— Ինկիլի՞զը է ուժով, թե՞ Լամսան, թե՞ Ռուսը:— Ապա գիտցածովս՝ Ինկիլիզը, Ֆռանկը, Լամսան հնճարք, խելք, մաշինա շատ ունին, քան ռուսը, բայց ռուսի հողը շատ է, ռուսը ամենեն ուժովն է:

Ես հարցրի քրդերի մասին: Ինչպե՞ս են ապրում, գո՞հ են:

— Մեր կյանքը է՛ս է,— բազուկը երկարացրեց. ափը լայն բանալով.— գարունը սար ենք ելնում, ոչխար արածացնում, ձմեռը նստում ենք օջախի առաջը, ուտում ենք գարնան աշխատածը, չիբուխն ենք քաշում ու դնդնում աշխարհքի բանը:

Հենց էն գլխից, մեր պապերից բռնած, էսպես եկել է. էսպես էլ կերթա. նոր բան չկա...

Բարեկամս վրա բերեց

— Նոր բանը չէ գլխավորը: Բանը բախտավոր լինելու մեջն է:

— Իրավունք ունիս. բայց դուք կրնա՞ք ձեր քաղաքի տները թողնել, գալ մեզ պես ապրել՝ սարում, ձորում...

— Ուրախությամբ,— պատասխանեցի ես:

Բեկը մի պահ կասկած արտահայտող ժպիտով նայեց աչքերիս մեջ, ապա.

— Դրուստ է, մարդուս սիրտը մեկ բանի վրա չի թառի մնա: Էնտեղ, թե էստեղ, էն մեծ բանը էն է, որ մարդ թըշնամու առաջ գլուխ չծռե:

Յուսուֆ-բեկը մեզ հյուրասիրեց թեյով և մատի թանձրությամբ չոր-սերով:

Խորին շնորհակալություններ հայտնելով, թողինք բեկին իր օջախի առաջ, իր չիբուխի և իր մտորումների հետ:

***

Երբ հասանք կայանը՝ արդեն մութը կոխել էր:

Արսենը վառեց լամպարը: Եվ մի գրքի միջից հանեց մի չորացած, դեղին տերև... Հոր Երանելու ծառից և զգուշաբար, դրեց հուշատետրիս մեջ:

Նայում էի մեռած տերևին և սիրտս խոսում էր այդ խորհրդավոր ընձաի հետ...

Բարեկամս պառկեց թախտի վրա հանգստանալու և իսկույն քնեց:

Դուրսը մութն ավելի խտացավ, և շողշողուն աստղերի մի բույլ ճառագայթեց պատուհանից ներս:

Ես էլ տարածվեցի բարեկամիս կողքին, ականջս տված Արաքսի խուլ շառաչին և մտքերիս հետ գնում էի...

Եկավ Ալեմանը՝ թաղիքե աբան հագած, գլուխը՝ քոլոզ, մի երիտասարդ հովիվ, արևառ, ցրտահար դեմքով, ուր փայլփլում էին երկու կրակ-աչքեր:

Սլեմանը ղշլայի ամենից գովական դանկբեժն էր (երգ ասող) և բլուլ (սրինգ) նվագողը:

Բարևեցինք իրար, «քեֆ ու հալ» հարցրինք իրար, ծխեցինք իրար հետ և բարեկամացանք:

Ախոռի դռները գոցեցին, գամփռներին արձակեցին, որոնք սկսեցին հաչելով կայանի շուրջը անցուդարձ անել:

Արսենի հետ սենյակ մտան մեզ բերող կառապանը և ձիապանը:

Ընթրիքի սեղան հարդարեցին և շարեցին օղիի և գինու շշերը:

Սլեմանին մեջներս առած՝ բոլորվեցինք միասին սեղանի շուրջը:

Սլեմանը ուտում էր ու խմում, և, փոխնիփոխ, նվագում էր բլուլը և երգում նվագածը:

Վառված, կրակված նվագեց ու երգեց քրդական վիպերգեր, մեկը մյուսից գեղեցիկ:

Երգերից մեկը — մի մեղեդի, սիրո հառաչանք, այնքան վճիտ, այնքան հուզիչ, որ բոլոր սեղանակիցներս սրտագին ա՜խ քաշեցինք և լի բաժակներով խմեցինք Սլեմանի կենացը:

...Տղան ասում է աղջկան.

— Ո՞վ է ասել քեզ,
Ա՛յ ջադու խըճե,
Թե սեր ունիմ ես,
Սեր ունիմ վրադ:

Ո՞վ է ասել քեզ,
Ա՛յ ջադու խըճե,
Թե օր ու գիշեր
Սիրտս միտում է՝
Քո տեսքին կարոտ:

Սերըդ աչքերս մուժով չի պատել,
Սար ու դարերը չի պատել մուժով:
Ուսեցածդ ի՞նչ է,
Ա՛յ ջադու խըճե,
Որ շուքիդ գերի՝
Հալվիմ ու մաշվիմ...

Շիտակ է, որ դու քառուն ծամ ունիս,
Որ մեջքիդ բոլոր փաթութ են գալիս,
Բայց քո ծամերդ մուշկի հոտ չունին,
Ու աբրեշումի փայլփլանք չունին:

Շիտակ է, որ դու աչքեր ունիս սև,
Երկու սև օձեր խոո-խոո ծվարած.
Բայց աչքերիդ մեջ կրակներ չկան,
Մեռած են, մարած քո սրտի պես սև:

Շիտակ է, որ քո հասակդ բանձր է,
Հասակդ բանձր է, մեջքդ բարակ է
Բայց հասակդդ չի ծփում բարդու պես,
Ու Խան-Արազի եղևնների պես
Մեջքդդ ճկուն չէ:

Հագել ես, կապել ատլաս, դանավուզ.
Ու դեմքիդ վրա երկու մոռ խալ կա.
Բայց քո թշերը վարդի թերթեր չեն,
Կարմիր ու վառման, վարդի պես անուշ:
Սերդ աչքերս մուժով չի պատել,
Մուժով չի պատել աշխարքը աչքիս:

Լա՛վ իմացիր դու, առանց ափսոսի
Կերթամ, կհեռանամ ես քեզնից հիմի,
Առանց ա՛խ քաշել կընկնեմ սար ու ձոր,
Կոխվ կընմտնեմ ով դեմըս ելնի:
Դուման դաշտի մեջ կընկնիմ վիրավոր,
Կըմեռնիմ առանց անունըդ տալու,
Ու չեմ փափագի, որ վերջին անգամ
Մեռնելուս շեմին, թեկուզ երազով,
Քո ձայնըդ լսեմ, աչքերդդ տեսնեմ...

Էսպես ասավ տղան.
Աղջիկը բերանը չբացեց.
Կոնից դուրս ելավ տղան,
Նիզակն հանեց գետնից,
Բռնեց ձիու բաշից,
Բռնեց որ հեծնի,

Մեկ էլ... դառավ ետ,
Ու կոնի դռանը
Ընկավ ծնկների վրա.

— Ո՛վ մալաք, ո՛վ հյուրի-փերի,
Սրտիս սիրական Գյուլիզար,
Ատված գիտե, դու էլ գիտես,
Որ սո՛ւտ եմ ասում, սո՛ւտ:
Ա՛խ, մեռնում եմ քեզ համար.

Հոգիս բերանս է եկել, յա՛ր:
Աշխարհքի մեջ ծովերի վրա
Չկա քեզ նման, չկա քեզ նման,
Սիրուն, գովական, Գյուլիզար,
Դու սիրո՛ւն, սիրո՛ւն, սիրո՛ւն
Հազար անգամ հազար...

***

Սլեմանի բլուլը լեռների ծաղկաբույր զեփյուռով և աղբյուրների անուշ կարկաչյունով թաթախել էր մեր ժամերը, որոնք, աննշմարելի, վաղուց կիսել էին գիշերը: Եվ հանկարծ, աքաղաղի երրորդ կանչը ինչեց զարթուցիչ ժամացույցի պես: Ցնդեց երազը և գեղեցկի ոլորտներից իջանք գործերի և հարկադրանքի աշխարհը:

Պետք է կանուխ վեր կենալ, ոչխարը ջրել, ձիերին կեր տալ և Երևանի դատին ներկայանալ...

Նախապես Արսենն ասել էր մեզ, որ Սլեմանին դրամ չըտանք, կվիրավորվի: Եվ իբրև հիշատակ այս անմոռանալի գիշերվան՝ ես ձվիրեցի նրան զմելիս, իսկ բարեկամս՝ մի փոքրիկ հայելի և սանր: Սլեմանը չափազանց ուրախացավ:

Առավոտ, երբ զարթնեցինք, Սլեմանը արդեն մեկնած էր: Մենք էլ պատրաստվեցինք ուղի ընկնելու:

Այս մի օրվա մեջ այնպես մտերմացել էինք Արսենի հետ, որ կարծես տարիների բարեկամներ լինեինք: Առանց տրխրության չբաժանվեցինք իրարուց:

Երբ կառքը Արաքսի կամուրջն անցավ դեպի Սարդարապատի դաշտերը, ես ետ նայեցի,— Արսենը առափնյա մի բարձր դիրքի վրա կանգնած ճոճում էր թաշկինակը:

1934

ՀԻՆ ԳՅՈՒՂԸ

Շատ տարիներ առաջ էր, համաշխարհային պատերազմից էլ առաջ: Գնացել էի Ծիրակի գյուղերից մեկը, հին ընկերիս մոտ հյուր: Նախակրթարանի դասընկերներ էինք, միևնույն սեղանի վրա երեք տարի կողք-կողքի նստած — Վարդանը և ես:

Նախակրթարանից ես գնացի Գևորգյան Ճեմարանը, իսկ Վարդանը՝ իրենց գյուղը: Հայրը չուզեց, որ տղան ուսումը շարունակե. ունևոր գյուղացի էր, տնտեսության մեջ մեծ նակ էր, օգնականի պետք ուներ: «Ինչքան բան սովրեցար, հերիք է մեզ,— ասել է հայրը,— հո՞ վարդապետ դառնալու չես: Արի՛, մալիդ տեր եղիր»:

Հետագայում, թեև մեր ուղիները բաժանվեցին իրարուց, բայց ես իմ ընկերական հարաբերությունները չխզեցի մանկության աննոգ օրերի ընկերի հետ: Եվ այսպես, հաճախ հյուր էի գնում նրան:

Ամառն է, օգոստոսի սկիզբը, կալուկուտի ամենահրատապ օրերում:

Ընթրիքից հետո Վարդանն ու ես նստել ենք նոր շինված այվանում (հյուրասենյակ) և զրույց ենք անում: Լուսնկա պայծառ գիշեր է, աննկարագրելի պայծառություն, այնպես որ սենյակում, ուր լամպը չէինք վառել, կարելի էր նույնիսկ կարդալ և գրել:

Գյուղը նիրհում է: Վաղ առավոտից մինչև արևամուտը, ամառվա այրող արևի տակ քրտնաթոր և ինքնամոռաց աշխատանքից չարաչար հոգնած գյուղացին և տավարը բերանները բաց՝ խոր քուն են մտել:

Լուսնյակից մեղմորեն ծորում է մի աննուն խաղաղություն նիրհողների վրա, կալերի և դաշտերի վրա, որոնք նույն-

պես ննջում են: Նրա անդորր և անուշ լույսը, զեփյուռի պես, զովացնում է գյուղացիների, տավարի և հողի արևակեզ մարմինները:

Մենք վերհիշում ենք մեր դպրոցական օրերը, մեր ընկերներին. ապրում ենք նորից մեր անցած ուրախությունները, աշակերտական զվարթ խաղերը: Հետո Վարդանը ծիծաղաշարժ դեպքեր է պատմում գյուղացիների կյանքից....

Հանկարծ անվրդով լռությունը բեկանեց մի ահազանգ,— «Աթոյի հարսը մեռնում է. օգնությո՛ւն, օգնությո՛ւն...»:

Ահարկու ձայնը գալարվում է գյուղի անծուկ փողոցներում, դռների առաջ, կալերում.— «Աթոյի հարսը մեռնում է. օգնությո՛ւն, օգնությո՛ւն...»:

— Մեր դրացու հարսն է մեռնողը,— ասաց Վարդանը ու ընդոստ ոտքի ելավ և, չգիտեմ ինչո՛ւ, լամպը վառեց:

Մեր պատուհանների տակ լսվում են մարդկային ոտքերի շփոթ դոփյուններ, որոնք անցնում են շտապ:

Հրացանի երկու պայթյուն, մեր տան շատ մոտիկ, մի անպատմելի սարսուռ ձգեց Էությանս մեջ:

Վարդանի մայրը՝ քնաթաթախ, կիսահագնված, գլուխը ներս է կոխում մեր սենյակը.— Աթոյի հարսը տղոցկանի վրա մեռնում է. արնաքամ է ըլնում, սիրտը մարում է. ի՛նչ անենք..

Իրար երես ենք նայում, ավելի քան անզոր ենք մի բան ասելու, մի խորհուրդ տալու:

— Ղայֆա շինեցի, ասում են՝ լավ է, սիրտը կբռնե, հա, դրո՞ւստ է,— հարցնում է մայրը:

Վարդանը մեքենաբար պատասխանում է — հա, հա, հա, շուտ արա:

Հագնվում ենք և վազում Աթոյի տունը: Դռան առաջ սըրահը, թոնրատանը անհագին բազմություն է լցվել՝ կանայք և այր մարդիկ: Անհնար է ներս մտնելը:

— Հարսի ուշքը անցել է. մարդը՝ Ավագը, երկու անգամ թվանք կրակեց, որ ձենից հարսը ուշքի գա, չեղավ:

— Արունը հիմի կտրել է, էլ արուն չի գալի, նորեն հարսը իրան չի գտնում:

Մեզ վերջապես ճամփա են տալիս, ներս ենք մտնում:

Թոնրատանը, պատի տակ, հողե հատակի վրա անկողին է ձգած. բարձի վրա մազերը խճճված, մի մաճատիպ դեմք, աչքերը գոց, քիթը սրված: Ամուսինը ուժով բաց է անում դժբախտ կնոջ, թերևս, արդեն մահով գոցված բերանը, ուր մի պառավ գդալով սուրճ է կաթեցնում, որը սակայն շրթունքի անկյունից դուրս է թափվում:

Թոնրատունը ծայրե-ծայր լցված է արյունի, քրտինքի, ծուխի, նաև մարդկանց հոտի և արտաշնչումի և ժխորի մի ծանրագին մթնոլորտով: Խեղդիչ, հեղձուցիչ — օդ չկա բընաավ, դուռը բռնված է ամբոխով, երդիկի փոքրիկ լուսամուտը չափազանց անբավարար է: Ուրիշ ոչ մի պատուհան, ոչ մի օդանցք:

— Առաջին ծինը չէր, որ դժվար ըլներ: Շատ ցավ չքաշեց, երեխան աջողութենով առանք, բայց արուն շատ էկավ, շատ եկավ. իսկի հնար չեղավ կտրելու: Էսպես խեղճ հարսը ձեռքե գնաց...— բացատրում է մի տարեց կին, որ կարծեմ, դայեկ-անան էր, գեղջուկ մանկաբարձուհին:

Մի զարհուրելի երևույթ — աչքերիս չեմ հավատում, հանկարծ սկսեց ամուսինը ուժով քաշել մեռնող հարսի ականջներից և մի պահ հետո թափով ապտակել թշվառին:

— Ի՞նչ ես անում, անգութ, գազան,— աղաղակում եմ ես և առաջ նետվում:

Ամուսինը խելակորույս նայում է ինձ, չի կարողանում խոսել:

— Էդպես է անում, որ հարսը ցավից ուշքի գա,— պատասխանում է մեկը:

Մոտենում եմ արնաքամ հարսին, մազերը թաց են, բարձը՝ թաց, վերմակը՝ թաց: Բռնում եմ բազուկը, որոնում եմ զարկերակը — չեմ գտնում: Թվում է թե՝ վերջացած է ամեն ինչ, կյանքի նշույլ չեմ տեսնում: Ծոշափում եմ ոտները — շատ պաղ են, գրեթե սառած:

Վարդանը հայելի է ուզում, հայելին դնում է կնոջ դեմքին, հայելու վրա գոլորշի է հավաքվում — ուրեմն դեռ ապրում է:

Ի՞նչ կարելի է անել, ոչինչ չեմ հասկանում, ոչինչ չգիտեմ, տգետ եմ բոլոր գյուղացիների չափ...

«Օդ պետք է, օդ»:

Կարծես, միտքս գյուտ արավ այս նեղ վիճակից ելնելու համար:

— Օդ չկա այստեղ, խեղդվում է հիվանդը, դուռը բռնել եք. խնդրում եմ՝ հեռանաք, թողեք հանգիստ հիվանդին: Խոսք, ձայն, աղմուկ վնասակար են, հեռացե՛ք, հեռացեք,— գոռում եմ ես: Վարդանը հավաքված բազմությունը քշում է դուրս, թարմ օդը ներս խուժեց:

Առանց խորհելու կարելիության մասին դիմում եմ Վարդանին.

— Բժիշկ պետք է, բժիշկ, չե՞ս կարող մի մարդ ուղարկես քաղաք, բժիշկ բերե, խնդրում եմ՝ շուտ:

— Շատ լավ,— ասում է Վարդանը և մի գյուղացու իսկույն ուղարկում է կալը, որ ծառային զարթեցնե, ձին թամբե,— շուտ-շուտ, մենք էլ հիմա կգանք, նամակ կտանք բժշկին:

— Երեխան ո՞ւր է,— հարցնում եմ ես:

— Գետինն անցնի երեխան, մոր գլուխը կերավ,— ասում է մի պառավ, որ հետո իմացա՝ հարսի կեսուրն էր:

— Ոչ բարով աշխարհք գար... աղջիկ է եղածն էլ,— ասում է մի ուրիշ պառավ:

Երեխան — սակայն երեխան մեռել է, իրարանցումի ժամանակ խեղճ նորածինին դրել են մի կողմ, դրել են ու մոռացել, և... մեռել է: Հիմա են իմանում, որ երեխա է եղել և հիմա են իմանում, որ մեռել է — մոռացված, լքված... Սիրտս սեղմվում է: Վարդանի հետ հեռանում ենք: Պատվիրում ենք, որ մեզ անընդհատ տեղյակ պահեն հիվանդի վիճակին:

Հիմա եմ գնալիս միայն նկատում, որ Աթոյի տան դռան առաջ պառկել են եզներ ու կովեր՝ անտարբեր աշխարհի այս մթին անկյունում կատարվող ողբերգությանը, և հանգիստ որոճ են անում:

Մեր հետևից, ոտքերը հազիվ քարշ տալով, հետևում է մի ծերուկ:

— Գլխիդ մեռնեմ,— ձայնում է նա,— կեցիր, մեկ խոսք ասեմ:

Կանգնում ենք. ինքը Աթոն է, հարսի կեսրայրը:

— Օջախս մարավ. էդ հարսն էր տունս դարձնում: Աստծու սիրուն, մեկ ճար արեք: Էդ դոխտուրը ե՞րբ պտի գա. օֆ, ամաո... մինչի լույս չի ապրի իմ ազիզ հարսս...

Դողում է ձայնը և ձայնը լցված է արցունքով:

— Դոխտուրը մինչև կեսօր կհասնի. հիվանդը կդիմանա,— մխիթարում ենք մենք հուսահատ ծերուկին:

Կալից տակավին չի եկել ծառան, ձին տակավին չի թամբած:

Ես, մինչ այդ, նամակ եմ գրում մի բժիշկ բարեկամի: Կասկածում եմ, նույնիսկ համոզված եմ, որ ապարդյուն է բժշկի գալը. շատ ուշ է արդեն, թշվառ կնոջ վերջին վայրկյաններն էին, անշուշտ, բայց և այնպես գրում եմ, խիղճս հանգստացնելու համար:

— Վարդան,— հարցնում եմ ես,— ինչո՞ւ դեղեր չես պահում տանը:

— Ի՞նչ դեղեր պահեմ: Ես ի՞նչ գիտնամ, որը որանց է:

— Ինչո՞ւ գյուղերդ չեք միանում, մի երկու բժիշկ պահում, կամ մի փոքր հիվանդանոց ձեր կենտրոնի գյուղում:

— Ի՞նչ ես կորցրել, ի՞նչ մաճ կուգաս,— դառնագին պատասխանում է նա,— մեր գեղացիք աղքատ են և մանավանդ չափազանց տգետ, ո՞ւմ խոսք հասկացնես: Էդ բանը կառավարությունը պիտի գլուխ քաշի, բայց էս մեր ռուսի կառավարությունը սատանի պես ամեն լավ բանի հակառակ է. մենք ուզենանք էլ, նա պիտի խանգարի: Նրա ուզածն ու արածն է — հայությունը փչացնել, խավար ու աղքատ պահել, ցավ ու չոռի մեջ, և կամ ռուս դարձնել, այսինքն՝ ուրիշ տեսակով փչացնել: Դո՛ւք պիտի էս գործը հոգաք, ուսում առածներդ, քաղաքի մեծերը, հարուստները. գեղացին անտեր է...

Վազելազ ներս մտավ մի երիտասարդ.

— Հարսը մահացավ...

Վայրկենապես թոանք դուրս:

Անտարբեր որոճացող եզների մոտ, սրահի դռան առաջ, անհույս, սրտամորմոք լալիս է, ավելի ճիշտ գոռում է մի

պատանի. «վա՜խ, մերիկ ջան, վա՜խ, մերիկ ջան, ես մեռնեի քու տեղդ, վա՜խ, վա՜խ...»:

Այդ ամին փաթաթվել է թոռին բռնում է ձեռները, չի թողնում, որ հուսահատ թողը գլուխը պատերին զարկե:

Վարդանը ներս է մտնում, եզան պես բառաչող Ավագին ուժով քերում է դուրս: Վրա են հասնում դուռ ու դրկից: Աղմուկ, իրարանցում ,ախ ու վախ, լաց ու կոծ:

Ես նստել եմ սենյակում, արմունկներս՝ սեղանին հենած, գլուխս՝ ափերիս մեջ:

Խե՜ղճ գյուղացիք, թշվառ, տգետ, անտեր մարդի՛կ... Քաղաքներում ճառում ենք ձեր մասին — դուք մեր հիմքն եք, մեր բուսահողը, դուք եք ստեղծել մեր մշակույթը, մեր լեզուն, մեր երգն ու մեր ոճը, դուք եք պահել հայությունը հերի ու սրի միջոցով ու հասցրել մինչև այսօր... Ինչքա՜ն սուտ և կեղծ խոսքեր: Խաբեբաներ ենք մենք, պոռոտախոսներ... Լրագրներում, դահլիճներում պերճախոսությամբ իրար ենք խեղդում ձեր անունով, իսկ դուք ոչնչանում եք կեղտի, խավարի, հիվանդությունների, թշվառության մեջ...

Ամոթի և խղճահարության մեջ տվայտում է սիրտս: Ահավոր և շփոթ տեսիլներ խռնվում են ուղեղիս մեջ, որոնց միանում են Ավագի բառաչը, պատանու ողբը և եզների անկարեկից որոճի կշռավոր ձայնը:

Գլուխս ծանրանում է, և տեսածներս, լսածներս ու խորհածներս վերածվում են քաոսի:

Երբ աչքս բաց եմ անում, ինձ տեսնում եմ թախտի վրա պառկած, հագուստով, կոշիկներով: Վարդանն է, անշուշտ, որ զգուշությամբ պառկեցրել է ինձ թախտին:

Նայում եմ դուրս. արև-արքայություն է դուրսը, թռչուները ծլվլում են, ճռնչում են ծանրաբեռն սայլերը, օրաներ են բերում արտերից: Կալերի վրա դանդաղ շրջան են անում եզները և կամերի վրա կանգնած պատանիները երգում են, խրախուսում են եզներին...

Եկավ Վարդանի հայրը երկու հասակակիցների հետ. քիչ հետո եկավ Վարդանը՝ սամովարը գրկած: Նախաճաշիկ բերին:

Պատմեցին, որ հարսին լուսադեմին թաղել են, մեռած

երեխան մոր գիրկն ես դրել: Ժամանակ չկար պատարագի: Հիմի ամբողջ գեղը զբաղված է, պարապ ժամ չունի: Կալակուտից հետո թողին պատարագն ու ննջեցյալի հոգու հացը: Աթոն խոստացավ՝ շեկ երինջը մորթել հոգու հացին...

— Աստված ողորմի հոգուն, լավ հարս էր —խուփ բերրան, համեստ, աշխատող: Ավագի տունը քանդվավ,— ասաց Վարդանի հայրը՝ թեյի բաժակը վերցնելով:

— Երեք հեղ տղոցկան էր եղել, պատճառն ի՞նչ էր, որ հիմի մեռներ.— ուրեմը՝ աստծու կամքն է, ինքը գիտե: Մեռնողին արքայություն ասենք, ապրողին՝ միսիթարություն, և է՛լ համբերություն:

— Ինչ եղավ՝ մեռնողին եղավ, ապրողին ի՞նչ,— վրա բերեց երրորդը,— էգուց, մեկէլ օրը Ավագը նոր հարս կբերի տունը. անցուկ-մոռցուկ կլնի — աշխարհքի օրենք է:

Ես հանգիստ չունեի սենյակում, ուզում էի դուրս գնալ և թափառել դաշտերը, գյուղից հեռո՛ւ, հեռո՛ւ:

Ցույս առա և ելա գյուղից դուրս: Մերթ խորհելով, մերթ առանց մի մտքի, մեքենաբար թափառեցի, թափառեցի: Այնքան հուզված էին ջղերս: Եվ նորից թափառեցի, մինչև որ հոգնեցի և վերադարձա գյուղ:

Անցնում էի կալերի առջևով: Շփոթվեցի, երբ տեսա Ավագին և իր պատանի որդուն. ձեռները ծնոտին, լուռ ու տրխուր ,նստել էին նրանք կամերի վրա, և եզները, անտրամադիր, խիստ համորեն քաշում էին կամերը:

Կարծես ինձ չնկատեցին նրանք, և ես ստվերի պես սահեցի նրանց մոտից:

«Մահից ու թաղումից հազիվ մի քանի ժամ անց, աշխատանքի վրա են խեղճերը»— այս միտքն անընդհատ կրկնվում էր գլխիս մեջ:

Այս պատկերը մի տխուր հետաքրքրություն զարթեցրեց իմ մեջ — ուզեցի մի ակնարկ նետել Աթոյի տանը: Աթո ամին նստել էր պատի տակ, աչքերը խուփ, ձեռքը՝ ճակատին, անընդհատ ծուխ էր ելնում երկայն ծխամորճից:

Իսկ պառավը նստել էր դռան շեմքին, փոքրիկ թոռը՝ 8 տարեկան աղջիկը, գլուխը թաղել էր մեծ մոր ծնկների մեջ և լվում էր:

Քիչ հեռու, կրակի վրա ջրով լի կաթսա կար, գետնի վրա մեռած հարսի արյունոտ լաթերը: Մի կին աթար էր դնում կաթսայի տակ: Հավերը քջուջ էին անում, աքաղաղը հըպարտ-հպարտ դառնում էր նրանց շուրջը:

Վարդանին հաղորդեցի տեսածիս մասին. նա գլուխը շարժելով ասաց.

— Աղքատությունը սևերես է: Ի՜նչ անեն, հաց պետք է, մեռնողը մեռավ, ապրողը պիտի ապրի: Կալը երեսի վրա թողնել կարելի չէ: Ո՞վ պիտի աշխատի նրանց տեղը: Ամեն մարդ զբաղված է, գլուխ քորելու ժամանակ չունեն: Գեղացու մեռնել-ապրելու օրերն են: Իրանք էլ միջոց չունեն մշակ բռնելու. ուզենան-չուզենան պիտի աշխատեն: Չունևոր մարդու օրոցքը կոտրի, լացի համար էլ ժամանակ չունի:

Եվ մի պահ լռեց. հետո տարեց մարդու լրջությամբ, որ հատուկ է գյուղացիներին, ավելացրեց.

— Սուգ անելու համար էլ փորդ կուշտ պիտի լինի:

Երբ երեկոյան դեմ ձիով մեկնում էի քաղաք, այնպես էի զգում, որպես թե մղձավանջային մի ծանր երազից եմ զարթնել:

Եվ խորհում էի — ո՞վ պիտի հանե հայ գյուղը այս խավարից, այս աղքատությունից:

Ի՜նչ կերպով և ե՞րբ պիտի ազատվի նա այս դառն ու դաժան իրականությունից:

1934, Փարիզ

ՎԵԶԼԵ

(Իմ օրագրից)

Ավալոն գեղեցիկ քաղաքի ստորոտից փովում է Բուրգոնտիայի հարուստ, ընդարձակ դաշտի մի մասը, որի կենտրոնում բարձրանում է Վեզըլեի ժայռոտ բլուրը: Ծովածուփ անտառների և կանաչավառ արտերի մեջ բլուրը նմանում է մի վիթխարի նավի և Վեզըլեի հինավուրց տաճարի աշտարակը՝ երկնահուպ կայմի:

Վեզըլեի հոչակավոր տաճարը: Աշխարհիս երեսին քիչ կա այսպիսի մի վսեմ, ներդաշնակ, գեղաշուք կառուցում: Մի չքնաղ երազ, որ քարացել է, մի լուսեղեն տենչանք, որ մարմին է առել: Նրա նախագավիթը՝ ոսկան ոճի մի բյուրեղ: Քնքուշ սյուները, կամարները, ծածկը... Գեղեցիկը, իրոք վերջանում է այստեղ:

Տաճարը՝ ինքը՝ գոթական և ոսկանական արվեստների դաշն գրկախառնում: Ամեն մի սյունի առաջ տրոփում է սիրտդ գեղարվեստի երջանկացնող վայելքով:

Հափշտակված նայում եմ տաճարին, նայում եմ,— և տեսնում եմ մեր Երերուքը, Շիրակի դաշտում, մենավոր, ամայի, դարերի և թշնամիների առաջ կքած, բայց վեհ, չքնաղ, երազային:

Ինչո՞ւ այսպիսի սրտագին նմանություն եմ զգում Երերուքի և Վեզըլեի միջև՝ 7-րդ և 12-րդ դարերի այս հրաշագեղ կոթողների: Երկուքն էլ վսեմացած, հոգիացած, անմահացած:

Բարձրանում եմ աշտարակի կատարը, նայում եմ շուրջը... հեռուները — Բուրգոնտիայի կապույտ, քնքուշ հորիզոններին. նույն սրտագին մտերմությունն եմ զգում — հայրենի հորիզոնների կախարդանքը:

Նստում են նախագավթի դռան սանդուղքի քարերի վրա: Խորունկ լռություն կա, անեզր անդորրություն:

Լռում եմ և ներանձնանում: Բարակ անիրական հովը շշնջում է ականջիս: Անցած դարերի մասին է զրույց անում: Հարյուր հազար ասպետներ ծովացած են տաճարի շուրջը, հեռվից գալիս է նժույգների վրնջյունը, տրուբադուրները երգում են առաջին խաչակիրների սխրագործությունները: Տաճարի բարձր ամբիոնից հրեղեն խոսքերով քարոզում է սուրբ Բերնարդոսը, ասպետներին բոցավառում է սրբազան պատերազմով Քրիստոսի գերեզմանը ազատելու համար սարակինոսներից: Արևի տակ շողշողում են սաղավարտները, փայլատակում են սրերը, և հարյուրավոր ասպետները որոտում են — խա՛չ, խա՛չ. դե՛պի Երուսաղեմ, դե՛պի Երուսաղեմ... Նժույգները վրնջում են և երկաթե սրմբակներով ծեծում սալահատակները. տրուբադուրները փառաբանում են ասպետների հաղթանակները...

Աչքերս բաց եմ անում — խորունկ լռություն կա և անեզր անդորրություն. հրապարակը մերկ է և թափուր: Ո՞ւր գնացին նրանք, այդ ծովածավալ բանակը. նժույգները, ամբոխը: Երազ միայն: Կարծես բնավ չեն եղել:

Անհնար է հագենալ Վեզըլեի անպատմելի գեղեցկությունից: Անհնար է բաժանվել չքնաղ Վեզըլեից:

Մնաս բարև՛, Վեզըլե, էլ չեմ տեսնի քեզ:

Անմահ Երերուքի կարոտը քեզանից առա, բայց երբ հայրենիքում լինեմ, քո կարոտը Երերուքից կառնեմ:

Մնաս բարև՛, չքնաղ Վեզըլե:

Բլուրի ստորոտում Սեն-Պիեր անունով մի մեծ գյուղ կա իր գոթիկ հոյակապ եկեղեցիով, 13-րդ դարուց:

Նստել եմ գյուղական փոքրիկ սրճարանում և սպասում եմ Ավալոն գնացող կառքի ազդանշանին:

Հաշվեսեղանի հետև նստել են սրճարանի տերերը, այր և կին. չափազանց պարարտ, հաստաբեստ արարածներ: Գոհ, անհոգ դեմքերով: Բարձր, քրքջալիր ծիծաղում են առանց պատճառի:

Սրճարանի մեծ մասը բռնել են մի խումբ պատանիներ, տղա-աղջիկ. զբոսաշրջիկներ են, Ավալոնից: Ելել են պր-

տույտի, գնում են Վեզըլե: Բարձրաձայն խոսում են: Ակամայս տվել եմ նրանց զրույցին և աչքերիս տակից նայում եմ նրանց: Մի տարեց մարդ կա նրանց մեջ, ակնոցներով, մորուքով: Զրույցից երևաց, որ նա գյուղի ուսուցիչն է, բայց Ավալոնի բնակիչ, նրանց դրացի, բարեկամ:

Պատանիներից մինն ասում է.

— Վեզըլեի շրջակայքը՝ այս արտերը, ուղիները, ժայռերը, ի՜նչ մեծ անցքերի վկա են եղել: Խաչակիրների փառավոր պատմությունը այստեղով է անցել: Ամեն մի ափ հող պատմական նշանակություն ունի:

Ուսուցիչը լուռ լսում է:

Մի ուրիշ պատանի ավելացնում է.

— Ամբողջ ասպետական միջին դարը Վեզըլեի անունով է դրոշմված: Մենք կոխում ենք այն հողերը, որով անցել են սուրբ Լյուդովիկոսը, Ռիչարդ առյուծասիրտը: Երանի էր, որ ապրեի այդ ժամանակ և նրանց հետ կռիվ գնայի: Մարդկության պատմության մեջ միակ գաղափարական պատերազմն է խաչակիրների արշավանքը, որ նյութի, շահի, անձնական փառքի համար չի մղվել:

— Սխալվում եք, երիտասարդ բարեկամներս,— ասում է ուսուցիչը,— ես էլ ձեր հասակում ոգևորվել եմ խաչակիրների արշավանքներով: Բայց երբ բավական գրքեր կարդացի, հենց այստեղ լինելու հանգամանքով, բոլորովին հիասթափվեցի:

Բոլոր պատերազմների պես, Քրիստոսի գերեզման փրկողներն էլ նյութական հարստություններ են հետապնդել, եկեղեցիները ձգտել են հողի, ինչքի և փառքի. իսկ զանգվածներին ոգևորել են անշահախնդիր գաղափարներով, աստվածային նպատակներով: Բայց այդ աստվածանվեր բանակները ինչպե՜ս կողոպտեցին Բյուզանդիոնը և Փոքր Ասիայում՝ ճանապարհին ընկած քրիստոնյաների քաղաքներն ու ժողովուրդները:

Պատանիները միջամտում էին, խոսքերը խաչաձևում էին:

Ուսուցչի ձայնը բարձրացել էր.

— Ես վստահաբար կարող եմ պնդել, որ խաչակիրնե-

րի շարժումը Եվրոպան ներս եկավ հետադիմության մեջ: Ո՛չ մի օգուտ. միայն վնաս: Ապարդյուն կերպով մեռան հարյուր հազարներով մարդիկ, ոչնչացան երկիրներ ու ժողովուրդներ, և վերջ ի վերջո գրգռված իսլամությունը կոիվների շնորհիվ կազմակերպվեց և հաղթանակեց. Եվրոպայի մուտքը բացվեց նրա առաջ:

Ուրիշ մի մեծ չարիք էլ — ուժեղացավ պապական իշխանությունը, եկեղեցու բռնապետությունը: Անհավոր խավարամտության մեջ ընկավ Եվրոպան. մոլեռանդությունը, անհանդուրժողությունը խստացավ, վերածնունդը երկու-երեք դարով ուշացավ:

Ինչպիսի՛ արտառոց հրաշքների, տեսիլների շրջան էր այդ. բայց ձեր խաչակիր ասպետներն ու վարդապետները ի՛նչ անհեթեթ հրաշագործ իրեր, մասունքներ էին բերում հետները սրբազան երկրից, որոնցով եկեղեցին և իշխանները թե՛ շահագործում էին ամբոխներին, թե՛ ավելի մթագնում նրանց գիտակցությունը: Իբրև խորհրդանշան պատմեմ մի իրական դեպք:

Վերադարձող խաչակիրներից մեկը իր հետ բերում է անթափանցելի մի սրվակ սև, մելանից ավելի սև գույնով, և ամենայն երկյուղածությամբ և հավատով ասում է, որ այս սրվակի մեջ լցված է այն շոշափելի խավարից, որով աստված պատժեց եգիպտացիներին, երբ Փարավոնը հակառակում էր Մովսեսին հրեա ժողովուրդը անարգելք Ավետյաց երկիրը տանելու համար:

Այդ սրվակին երկրպագում էր ամբողջ քրիստոնյա միջին դարը. այդ խավարով ծածկված էր ամբողջ միջին դարը և այդ խավարից տակավին շատ կա Եվրոպայի և մեր շատ շատերի հոգիների վրա...

Չկարողացա իմանալ, թե այս բանավեճը ինչի հանգեց: Կառքը մեկնելու նշան տվեց. ես շտապեցի, որ բաց չթողնեմ կառքը:

1924, Ավալոն

ԳԵՐՆԻԿԱՅԻ ՆՎԻՐԱԿԱՆ ԿԱՂՆԻՆ

(Բասկերի կյանքից)

Երբ թերթերում կարդում եմ, թե ինչպես արյունարբու գեներալ Ֆրանկոն և վայրագ Մոլան, միջնադարյան այս խավարակուռ ոգիները, գերմանական և իտալական գազազած ֆաշիստների հետ խեղդեցին քաջարի բասկերի նորանվաճ ինքնավարությունը, ոումբերի հրեղեն ձեղեղի տակ կործանեցին, աճյուն դարձրին բասկերի հոյակապ մայրաքաղաքը՝ Բիլբաոն և այս առեղծվածային ժողովրդի մշակույթի վայրը՝ նվիրական Գերնիկան — խորին ցավով և սըրտի մորմոքով վերհիշում եմ Փարիզի իմ բասկ բարեկամներին: Ոգևորված երիտասարդներ էին նրանք, բանվորներ և ուսանողներ, վառված հայրենիքի սիրով և սոցիալիզմի գաղափարով, արձագանք տվին հայրենիքի կոչին և թռան գըննացին կուրծքը դնելու նորագույն բարբարոսների դեմ՝ պաշտպանելու համար հինավուրց հայրենիքը, դարերի մշակութային գանձերը, ժողովրդի կյանքը և նվաճելու ազատություն և սոցիալական արդարություն:

Ո՞վ գիտե՝ ինչ եղան նրանք. այս արյունոտ փոթորկի մեջ արդյոք ի՞նչ էր ճակատագրված նրանց համար...

* * *

Լամանշի ծովափին, Թուքե (Պարիպլաժ) քաղաքում, ուր գնացել էի 1935 թ. ամառը, ծանոթացա մի բասկ երաժշտագետի հետ: Բայոն քաղաքից էր, ապրում էր Փարիզում, երաժշտության դասատու էր: Միջին տարիքի մարդ էր նա, տաք խառնվածքի տեր, զարգացած և կրթված: Միասին լողանում էինք ծովում, պառկում էինք ավազի վրա և զրույց էինք անում: Հրաշալի զրույցընկեր էր: Շոշափում էինք այժ-

մեական այրող հարցերը — համայնավարություն, ֆաշիզմ, դեմոկրատիա, պրոլետարիատ, քաղաքակրթական խնդիրներ և այլն:

Մեծ համակրություն էր տածում Սովետական Միության հանդեպ. այն համոզումն էր հայտ բերում, թե՝ կապիտալիզմի և իմպերիալիզմի կրունկի տակ հեծող և այլասերվող փոքր ազգերի գոյությունը և նրանց մշակույթների ինքնուրույնությունը և հարատև զարգացումը հնարավոր է միմիայն կոմունիզմի հաղթանակով: Ինչպես և՛ անհատի, և՛ ողջ մարդկության փրկությունը կապիտալիզմի անկման և կոմունիստական իրավակարգի մեջն է:

Մեր զրույցները շարունակում էինք երեկոները, սրճարանում: Հաճախ թափառում էինք Թուբեի անտառներում, և մշտապես տրամադրված մաեստրո Թեոդորը երգում էր բասկերի ժողովրդական տաղերից, որոնք խոսում էին իմ սրտին. այնքան նման էին մեր մելոսին:

Բաժանվելիս՝ իրար խոսք տվինք հանդիպումներ ունենալու Փարիզում:

***

Ինձ շատ էր հետաքրքրում բասկերի պատմությունն ու ազատագրությունը:

Անհիշատակ ժամանակներից եկած և մինչև օրս հարատևած այս մի ափ ժողովուրդը գիտության համար մնացել է տակավին անլուծելի առեղծված: Նրանց ծագումը անհայտ է. նրանք չեն պատկանում մեզ հայտնի ոչ մի ցեղային խմբավորման: Նրանց լեզուն անկախ դիրք ունի և չի հարաբերվում հին ու նոր ոչ մի լեզվի հետ:

Մի օր ուզեցի բասկերենի դասեր առնել՝ մի փոքր ծանոթանալու նրա քերականության և բառամթերքի հետ. երբ իղձս հայտնեցի մաեստրոյին, ժպտալով ասաց.— «Շատ դժվար լեզու է բասկերենը, անհաղթելի է, նա ոչ մի նմանություն չունի եվրոպական ներկա լեզուների հետ: Շատ պիտի տանջվեք և մանավանդ ուշ է ձեզ համար»:

Ախորժակս բեկվեց, թողեցի մտադրությունս:

Փարիզում մի երկու անգամ հանդիպումներ ունեցա Թեոդորի հետ: Մի օր առաջարկեց ինձ, եթե կհաճեի, ներկա լինել բասկ երիտասարդների հավաքույթին: Նրանք հետաքրքրքրական երիտասարդներ են, և ես առիթ կունենայի կենդանի օրինակներ տեսնելու և իրական գաղափար կազմելու բասկերի մտայնության և ձգտումների վերաբերմամբ:

Ուրախությամբ համաձայնեցի:

Մի երեկո Թեոդորը առաջնորդեց ինձ Մոնպարնասի մի սրճարան, որի վերին հարկում իր գլխավորությամբ շաբաթը մի անգամ ժողովվում են 20—25 բասկ երիտասարդներ՝ ֆրանսիական և սպանիական հատվածներից: Բանվորներ և ուսանողներ էին նրանք՝ կրակոտ, ամրակազմ, սևաթեր երիտասարդներ: Բանվորներից մի քանիսը Բիլբաոյի հեղափոխական բանվորական շրջանից էին՝ փախստականներ, ապաստան գտած Ֆրանսիայում: Մեջերը կային նաև ֆրանսիական կոմպարտիայի անդամներ:

Ինձ ներկայացրեց նրանց, որպես սովետական քաղաքացու, գաղափարական ընկերի և այլն, և այլն:

Հարգանքով սեղմեցին նրանք իմ ձեռքը և սկսեցին բազմատեսակի հարցեր տալ Միության իրերի վիճակի մասին: Ես նկատեցի, որ նրանք մեր մեծ Հայրենիքի գործերին լավ իրազեկ էին: Խանդավառված էին Միության հսկա իրականացումներով մշակութային մարզերում, և սոցիալիզմի հաղթական ընթացքով: Պաշտամունք, բուռն հիացմունք և ակնածանք ունեին պրոլետարիատի մեծագույն ղեկավարի՝ Լենինի հանդեպ: Սեղանի վրա փռված էին «Լյումանիտե» «Եսկվադի Ռոխա» («Կարմիր Բասկ») և ուրիշ թերթեր: Պատից կախված էր Սպանիայի քարտեզը: Կրակված խոսում էին, վիճում էին.— երբեմն Թեոդորը թարգմանում էր խոսակցության կարևոր մասերը՝ ինձ իրազեկ պահելու համար մթնոլորտի տրամադրությանը:

Նրանց խոսքերի առանցքն էր կազմում, բնականաբար, սպանական հեղափոխության իրադարձությունները, Կատալոնիայի և բասկերի լայն ինքնավարության պահանջները, բանվորական շարժման առաջընթացումը, կապիտալիստնե-

րի դիմադրությունը (Ֆրանկոն դեռ չէր երևացել) և ժողովըրդական ֆրոնտի առաջադրած հարցերը:

Ես ուշադիր հետևում էի նրանց խոսակցությանը, թեև բան չէի հասկանում:

— Ձեզ միանգամից հասկանալի դարձնելու համար մեր շարժման բնույթը, որ քիում է մեր պատմությունից, մի երկու խոսքով ասեմ մեր պատմության փիլիսոփայությունը,— դարձավ ինձ Թեոդորը.— մեր պատմության էությունը պայքարն է եղել և է. դրանով է կաղապարված մեր բնավորությունը:

Մեր ժողովուրդը անընդհատ պայքար է մղել՝ պայքարի բոլոր ձևերով: Պայքարել ենք հողի և ժողովրդի պաշտպանության համար, լեզվի և մշակույթի ինքնության համար:

Դարերի ընթացքում մեր ժողովուրդը ապաստանած է անառիկ լեռներում և հպարտ իր ազգությամբ՝ կուրծք է դրել գոթերի և մավրերի, սպանական սինյորների և ֆրանկների դեմ, նրանց ուժեղ մշակութային աշխարհակալության դեմ և ինքնապաշտպանվելով բոլոր նրանցից՝ հասել է մինչև օրս, պահելով իր հողը հին, խորհրդավոր տեղանուններով, լեզուն, ավանդությունները, սովորույթները և հիմա էլ կռվում է հին արիությամբ սպանական բուրժուազիայի, նրա կլանող նացիոնալիզմի դեմ՝ լավագույն ապագայի համար:

— Այո՛,— ոգևորված շարունակեց նա,— շատ ուժեղ է ազգային զգացումը մեր ժողովրդի մեջ, և եթե չլիներ այդ միացնող ուժը, ինչպե՞ս պիտի կարողանար գլուխ հանել մեր մի բուռ ժողովուրդը, որ իր հողի վրա հազիվ 7—8 հարյուր հազար բասկ է հաշվում պատմական այս շրջապտույտից, այս մղձավանջից:

Այս ուժի շնորհիվ է, որ մենք դարերի մեջ կորզել ենք մեր հռչակավոր ֆուերոները[1], մեր յուրահատուկ ինքնավա-

[1] Տ ա ճ ո ղ. հեղինակի: Ֆուերոները սպանական թագավորներից ձեռք բերած իրավունքներ են, որոշ ազատություններ: Մի տեսակ ինքնավարություն: Ֆուերոների հիման վրա բասկերը զինվոր էին տալիս Սպանիայի կառավարությանը միայն պատերազմի ժամանակ՝ այն էլ վարձատրումով:

Սպանական զորքերի մուտքը արգելված էր բասկերի երկիրը:

Դատավորները նշանակվում էին համայնքից, ինչպես և քաղաքապահ ոստիկանները:

րությունը՝ Լեոնի և Կաստիլիայի գոտոզ թագավորներից: Եվ հին ժամանակ այս թագավորները գահը նստելուց առաջ, մինչև չգային մեր ևվիրական հինավուրց կաղնու տակ և չերդվեին հավատարիմ մնալ ֆուերոներին, բասկերը չէին վճարի պետական հարկերը:

Գերնիկայի ևվիրական կաղնին: Դուք գիտե՞ք նրա մասին արդյոք, լսած չե՞ք նրա անունը...

Բիլբաոյից քիչ հեռու գտնվում է մեր սրբազան քաղաքը, Գերնիկա, հնադարյան մի ավան, որի շուրջն է ապրում մեր ժողովրդի տարերքը: Գերնիկան բասկերի սիրտն է: Այնտեղ անհիշատակ ժամանակներից կանգուն է ևվիրական կաղնին: Դարերի մշուշից է բուսել նա. չգիտենք՝ երբ է տնկված, ում ձեռքով. ո՛չ մի գիր, ո՛չ մի ավանդություն չի պատմում նրա ծագման և հասակի մասին: Սակայն հին է նա, անսահման հնություն ունի: Ինչքա՜ն կայծակներ են, դարերի մեջ, պայթել նրա կատարին, ինչքա՜ն փոթորիկներ կոտրել են նրա ճյուղերը, բայց միշտ դալար է նա, այդ հսկան, միշտ կանգուն է մնացել, միշտ հաղթական: Նա մեր կայունության, կյանքի, ազատության խորհրդանիշն է:

Երբ բասկերը մի համայնական վճիռ են կայացնում, նրա տակն են հավաքվում: Ժողովրդի սրբություններին հավատարիմ մնալու բոլոր ուխտերն ու երդումները այնտեղ են կատարվել, և չի եղել մեկը, որ դավաճանե այնտեղ ուխտածին ու երդվածին: Մեր պատմական բոլոր նշանավոր դեպքերը նրա ևվիրական ստվերի տակ են որոշվել, մեր ժողովրդի բոլոր ապստամբությունները այնտեղից են սկսվել:

Թեոդորը մի պահ լռեց. լուռ էին բասկերը. ապա թափով ոտքի ելավ, և բազուկը պարզելով դեպի բասկերը, սրտով լցված, ասաց.

— Իմ հայրենակիցները, սրանք բոլորը ուխտվածներ են. բոլորը կռվել են մարդակեր Պրիմո դե Ռիվերայի դեմ, բանտ են նստել, փախել են կապիտալիստների և ֆեոդալների ճիրաններից: Սրանք բոլորը ևվիրական կաղնու տակ երդվել են իրենց արյունը թափել՝ ջախջախելու ֆաշիզմը, կապիտալիզմը, հայրենիքի ազատության համար տանջվող ամբողջ ժողովրդի բարօրության համար:

Ընկերներ, մեր բարեկամի համար երգենք մեր ազգային հին երգը. մեր սրբազան կաղնու երգը, մեր պապերի հին եղանակով:

Բոլորը ոտքի կանգնեցին, երգեցին միասին:

Մեր դաշտերում թափառում են
Քաղցած գայլեր ոռնալով.
Ու ակնդետ մեր հոտերին՝
Որս են ուզում ոռնալով:

Քաջ հովիվներ, արթո՛ւն կացեք,
Մոտ են նրանք մեզ արդեն.
Քաջ հովիվներ, ոտքի՛ ելեք,
Մեր հոտերը չջնջեն:

Այս ոսոխներն ապառնալից՝
Հագել են գենք ու զրահ,
Ի՜նչ են ուզում մեր սուրբ հողից,
Որ խուժում են մեր վրա:

Մեր պատիվն ու ազատությունն
Մեզնից խլել են ուզում.
Իրենց պետի չար բերանից
Ի՜նչ խոսքեր են մեզ ասում:

Պատանինե՛ր մեր գեղեցիկ,
Մեր լուսեղեն աղջիկնե՛ր,
Նրանց ծառա պիտի լինիք,
Նրանց կանանց՝ նաժիշտներ:

Մեր հայրենի ազատության
Կաղնին չուզեց խոնարհվել,
Վայրագ ոխով կուզեն հիմա
Մեր վեհ կաղնին խորտակել:

Դո՛ւրս մեր երկրից, դո՛ւրս, գազաններ,
Մեր հին հողը մի՛ պղծեք,
Կորչելու չէ մեր հայրենիք,
Քանի կովել մենք գիտենք:

Ապառաժներ մենք կպոկենք
Մեր երկաթե լեռներից,

Ու ձեր գլխին վար կթափենք,
Ձեզ կվանենք մեր տնից:

Տեսե՛ք մեր մութ երկնում ծագեց
Ազատության աստղն աճա.
Մեր հին կաղնին նորից ծաղկեց
Եվ ծիում է մեր վրա:

Հին երգը հին եղանակով, որ երգեցին բասկերը մի վերացած հոգեվիճակով, չափազանց հուզեց ինձ:

Լռություն իջավ. անկասկած, երազանքի մեջ էին բասկերը:

Թեոդորը սուրճի գավաթը պարպելուց հետո, վառեց մի գլանակ և դառնալով ինձ՝ խաղաղ ձայնով ասաց.

— Իհարկե, մեր ժողովուրդն այնս չի կռվում հին ֆուերոռների համար, դա պատմության գիրկն է անցել արդեն, այժմեություն չունի: Նա կռվում է հիմա ուրիշ տեսակ հայրենիքի համար, ուրիշ տեսակ ազատության և իրավունքների համար.— ընկերավարական հայրենիքի և ընկերավարական սկզբունքների իրականացման համար:

Բասկ կապիտալիստները, որ համախոհ գործում են ընդհանական կապիտալիստների հետ՝ խեղդելու բասկ բանվորների դասակարգային ծավալուն շարժումը, ամբոխավարություն են անում արծարծելով այն ստությունը, թե՝ սոցիալիզմը քայքայում է ազգությունը. լուծում է ազգությունները, դարձնելով նրանց անհայրենիք աշխարհաքաղաքացիներ: Սակայն մեր բանվորները և չքավոր գյուղացիները հասկացել են նրանց խարդախությունը: Մենք գիտենք, որ կոմունիզմը հակասության մեջ չէ ազգության հետ. չի ժխտում հայրենիքը և սերը դեպի հայրենիքը: Մեզ փառավոր օրինակ Սովետական Մեծ Միությունը, ուր ցարերի խավար բռնապետության փլատակների միջից արևի երես ելան ոտնահարված ազգություններ ,անհայտ անուններ, որոնք պատմության ասպարեզն են մտնում հիմա իրենց լեզվով, մշակույթով, ազատությունով:

Նրանք, կապիտալիստ ավազակները, չեն ուզում տեսնել, որ կոմունիզմը ստեղծել է ազգության և հայրենիքի

նոր տեսություն, նոր ըմբռնում, որի շնորհիվ մարմին են առել նոր ազգությունը, նոր հայրենիքը: Եվ առանց իրենց է այդ նոր հայրենիքը, առանց շահագործողների գոյության: Աշխատավորական ազգություն, ժողովրդական հայրենիք, ուր ամեն ազնիվ աշխատավորի համար մարդավայել ապրուստ կա, կրթություն և ազատություն:

Մենք կռվում ենք հիմա այդ նպատակների համար:

Ոգևորությամբ վառվում էին բասկերի դեմքերը:

— Մենք կռվում ենք,— հարեց մի բանվոր,— ֆաշիզմի տեռորի դեմ, մենք սպանական պրոլետարիատի հետ միասին պիտի ջախջախենք կապիտալիզմի ծանր լուծը, մենք կռվում ենք Սպանիայի խորհուրդների հաղթանակի տակ:

— Այո՛, այո՛,— ձայնեցին ամեն կողմից,— մենք կըռվում ենք Իբերիայի սովետական սոցիալիստական հանրապետությունների նոր Միության համար:

Վերջնական հաղթությունը մերն է:

Ուշ գիշեր էր արդեն, երբ տուն էի մեկնում: Խոսք տվեցի նորից լինելու նրանց մոտ:

Վերջին անգամ եղա բասկերի մոտ Սովետական Հայաստան մեկնելուց երկու շաբաթ առաջ: Գնացի մնաք բարև ասելու: Բասկերին գտա մի հանդիսավոր տրամադրության մեջ, կարծես, սովորականից վեր մի մեծ գաղափարով համակված էին բոլորը: Մեծ մասը ազգային տարազով էին հագնված — մուգ-կապույտ անդրավարտիքներ, սպիտակ շապիկներ, հաստ, կարմիր շալե գոտիներով բասկական բերետներ և ձեռներին՝ ավանդական մաքիլաներ՝ գավազաններ երկաթե սուր ծայրերով: Ի՞նչ էր պատահել արդյոք:

Ուրախ ողջույններով ընդունեցին ինձ:

— Մի-երկու շաբաթից հետո ես մեկնում եմ Սովետական Միություն, հայրենիք,— ասացի ես.— եկել եմ հրաժեշտ տալու ձեզ, իմ սիրելի բարեկամներ: Ծանոթացանք, բարեկամացանք, հիմա բաժանվում ենք. ո՞վ գիտե՝ տեսնելո՞ւ ենք մեկ էլ իրար:

— Մենք էլ ենք գնում հայրենիք, մենք էլ ենք գնում հայրենիք,— ձայնեցին մի քանիսը:

Մի ներշնչված դեմք՝ Գոնսալո, կանգնեց առաջս.

— Հիմա ավելի, քան երբևէ, համոզված եմ, որ կխորտակենք մեր հայրենիքները իրարուց բաժանող ֆաշիստական պատվարը և նորից իրար կտեսնենք:

Թեոդորը պարզեց ինձ խնդիրը. Սպանիայում բռնկված է կռիվը, անտեղիտալի կռիվը ֆաշիզմի դեմ. Սպանիան բաժանված է երկու բանակի՝ ժողովրդական ֆրոնտի և ֆաշիզմի: Հայրենիքը կանչում է իր զավակներին, ընկերները գնում են կռվելու, մարդ չի մնալու այստեղ...

Գոնսալոն ընդհատեց Թեոդորի խոսքը.

— Դուք գնում եք ազատագրված մարդկության մեծ հայրենիքը, դուք բախտավոր եք, մենք էլ ենք բախտավոր, որ գնում ենք ձեռք բերելու ազատությունը: Մենակ չենք մենք, հեղափոխական Էվսկալդունը[1] միացված Կատալոնիայի, Կաստիլիայի և Աստուրայի պրոլետարիատի ու կեղեքված գյուղացիների հետ՝ կփշրենք արյունոտ բուրժուայի ֆաշիզմը: Մեզ առաջնորդում է ռուսական հեղափոխության ոգին, մենք նրա գաղափարների ջահակիրն ենք Ատլանտյան օվկիանոսի սահմանների վրա: Մեր ջերմ ողջույնները տարեք Միության աշխատավորությանը, ասացեք, որ խնդրում ենք մեզ չմոռանան՝ իրենց մարտիկ ընկերներին:

Ես զգացված էի — ինչպիսի՜ ոգևորություն, ինչպիսի՜ պատրաստակամություն՝ կռվելու և զոհաբերվելու:

— Բոլոր սրտով ցանկանում եմ ձեր մեծ գործին հաջողություն,— ասացի ես.— անպատճառ կհայտնեմ հայրենիքիս աշխատավորությանը ձեր ողջույնները և կգրեմ ձեր անձնվիրության մասին:

Ես հիացած եմ ձեզնով, ես խոնարհվում եմ ձեր նպատակի վեհության առաջ:

Կեցցե՜ Սովետական Էվսկալդունը:

Բասկերը միաբերան խանդավառված պատասխանեցին ինձ.

— Կեցցե՜ Սովետական Միությունը:

Գոնսալոն ստիպված էր կարևոր գործով թողնելու հա-

---

[1] Բասկերը իրենց և իրենց երկիրը Էվսկադուն են անվանում:

վաքույթը. ձեռքս առավ իր երկու ափի մեջ և հուզված ասաց.

— Գոնսալո է իմ մեծ պապի անունը. բոլոր էվսկալդունները հարգում են նրա հիշատակը: Ես նախկին ուսանող եմ, Սպանիայից փախած, հիմա դեղատան մեջ մի համեստ աշխատող: Պապիս անունը միշտ պիտի բարձր պահեմ — սա մեր տոհմի ուխտն է: Ես գնում եմ կռվի ճակատը՝ արժանի լինելու պապին:

Մենք պիտի կոմունիզմի դրոշակը բարձրացնենք մեր հին կաղնու վրա և նրան հավատարիմ՝ պիտի կռվենք ու մեռնենք հայրենիքի ազատության և կոմունիզմի հաղթանակի համար:

Եվ բոլոր ձայնով գոչեց.

— Կեցցե՛ կոմունիզմը:

— Կորչի՛ ֆաշիզմը...

Բասկերը ոգևորությամբ արձագանքեցին:

Գոնսալոն ուժգին սեղմեց ձեռքս և թռավ սենյակից դուրս:

Թեոդորը պատմեց ինձ նրա հոչակավոր տոհմապետի մասին:

Նրա պապը՝ Գոնսալոն, ավատի կալվածների վրա աշխատող հողազուրկ գյուղացի էր. ըմբոստանում է հողատեր ավատի դեմ. իր շրջանի չարաչար շահագործված գյուղացիների գլուխն անցած՝ հավաքվում են Գերնիկայի կաղնու տակ, վճռում են ավատներից խլել հողերը, երդվում են կռվել միասիրտ-միակամ, և բռնկվում է ապստամբությունը: Այդ լինում է 1840 թվին:

Հարձակվում են ապստամբները, կողոպտում են ավատների տները. հրդեհում են շտեմարանները, մի երկու ավատ են սպանում: Վիտորիայից զորք է գալիս, ապստամբները իրենց ընտանիքներով ապաստանում են լեռները և երկար դիմադրում: Մի օր կատաղի ընդհարման մեջ զարկվում է Գոնսալոն, մեռնելիս մեկնում է ընկերներին ձախ բազուկը՝ բուռը պինդ սեղմած, վերջին ձայնով գոչելով. «Էս գանձի համար կռվեցինք, մի՛ կորցրեք էս գանձը»:

Կռիվը ճակատ-ճակատի բորբոքվում է ընկած առաջնորդի շուրջը. միայն այն պահին, երբ զինվորները տեղի են

տալիս, ժամանակ են ունենում Գոնսալոյի մարմինը վերցնելու, կամենում են իմանալ, թե ինչ գանձի մասին էր կտակում նա. ուժով բաց են անում կարկամած մատները, տեսնում են ափի մեջ — մի կտոր հող: Բոլորը ծնրադիր համբուրում են այդ մի բուռ հողը և որպես սրբազան ավանդ բաժանում են տոհմերի միջև: Ապա երգելով նվիրական կաղնու հին երգը՝ թաղում են ժողովրդի հավերժ հիշատակելի հերոսին—Էվսկալդունի Էպիկական լեռներում:

Կայծակի մի վայրկենական փայլատակումով ես տեսա բասկերի պատմական պայքարի խորքը:

Սրտագին հրաժեշտ տվեցի սիրելի բասկ բարեկամներիս և խորապես հուզված դուրս ելա սրճարանից:

1937

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԴԻՄԱՎՈՐՈՒՄԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Երբ Փարիզ էի, մի քանի ընկերներից հրավեր ստացա նոր տարին միասին դիմավորելու:

Դեկտեմբերի 31-ի գիշերը, մոտ ժամը 10-ին, մեր խումբը ռեստորանում արդեն գրավել էր վաղուց պատվիրած սեղանը: Ռեստորանի ընդարձակ դահլիճը լիքն էր հասարակությամբ, բոլոր սեղանները բռնված էին: Կային բազմաթիվ կանայք՝ շքեղ հագնված, ծաղիկներով զարդարված: Դահլիճը լուսավորված էր անհամար ջահերով, ամեն սեղանի վրա լույսեր կային, որոնք բխում էին ծաղիկների միջից:

Կանանց օղերի և մանյակների, ապարանջանների և մատանիների գոհարներն անթիվ աստղերի պես շողշողում էին շլացուցիչ փայլով:

Երաժշտությունը նվագում էր, և տեղ-տեղ պարում էին զույգերը:

Ֆրակներ հագած սպասավորները, ճարպիկ և ճկուն ձեռնածուների նման, մատների վրա կրելով մատուցարանները, ափսեներով, բաժակներով, կերակուրներով լեցուն, անցուդարձ էին անում սեղանների միջով:

Ամեն սեղանից ճառագայթում էր ծիծաղ, քրքիջ, զվարթ ձայներ:

Նայում էի շուրջս, մոտիկ ու հեռուն. բոլորը զվարթ էին, բոլորի աչքերի մեջ պայծառ ժպիտ կար և գոհունակություն: Կարծես այս մարդիկ բնավ վիշտ չէին տեսել, ոչ մի տխուր ժամ չէին ունեցել և հիմա հավաքվել էին այստեղ նույն հավատքով ընդունելու նոր եկող տարին, որ շարունակողն է լինելու իրենց ուրախության և երջանկության:

Ժամանակը քանի մոտենում էր գիշերվա ժամի 12-ին,

երբ պիտի հին տարին տեղի տար նորին, ընդհանուր զվարթությունը լցվում էր, ուռճանում, որ պիտի պայթեր շամպայնի գինու շշերի աղմուկով թռչող խցաններուն հետ և պիտի հորդեր շշերից հոսող փրփրուն գինիների հետ:

Փողոցից, ռեստորանի հսկա լուսամուտներից նայում էին ներս ցնցոտիներ հագած մարդիկ, խեղճ երեխաներ: Նույնիսկ մի քանի երեխաներ հանդգնել էին ներս մտնել և դռռան մոտ կուչ էին եկել վախվխելով:

Ներս մտնող պարոնները նայում էին նրանց և անտարբեր անցնում, ոմանք մի քանի սանտիմ էին դնում նրանց ափերի մեջ:

Սպասավորները անընդհատ և զայրույթով նրանց քշում էին դուրս:

Մի պահ անց, նորից ներս էին մտնում նրանք:

«Երևի դահլիճի լույսն ու շքեղությունը հրապուրում է նրանց,— մտածում էի ես,— և մոռացության մատնում իրենց ապրած դառն իրականությունը»:

Ես նկատում էի, որ մի սպասավոր չափազանց կատաղած է նրանց դեմ, կոպտաբար ծոծրակներին զարկելով վռնդնդում է դուրս:

Այս տեսարանն ուղղակի փչացնում էր իմ և ընկերներիս տոնական տրամադրությունը, մանավանդ որ մեր սեղանը մուտքից հեռու չլինելով, ավելի մոտիկից տեսնում էինք այս տխուր պատկերը:

Մի քանի ֆրանկ տվինք սպասավորին, երեխաներին հանձնելու համար:

«Զարհուրելի բան է աշխարհը»,— ասաց ընկերներիցս մեկը՝ մի ծխախոտ վառելով:— «Մանավանդ մեծ քաղաքը»,— հարեց մի ուրիշը: «Քանի աղքատ կա քովդ, երջանիկ չես կարող լինել»,— ասաց մեր ընկերներից մեկի տիկինը:

Երաժշտությունը մի պահ դադարեց, մի քանի րոպե միայն մնում էր ժամի 12-ին: Բոլորը, բոլորը պատրաստվում էին «խորհրդավոր» վայրկյանին, ժամի 12-ի հնչելուն, երբ հանկարծ մի ցավագին ճիչ լսվեց, մի աղիողորմ ձայն. բոլորը դարձան ձայնի կողմը. դռան մոտ էր: Երեխաներին դուրս քշելիս, սպասավորներից մեկը բռունցքով ամուր հար-

վածել էր մի երեխայի երեսին: Խեղճ երեխան երկու ձեռքով բռնել էր բերանը, բայց քթից հոսում էր արյունը. խեղճը լալիս էր և վախեցած ճչում:

Կանայք շրջում էին՝ դեմքերը կնճռոտելով և ծածկելով հովհարների տակ: Շատերը զայրացած էին, չգիտես ո՞վ, ո՞ւմ դեմ: Ռեստորանի կառավարչի հրամանով երաժշտությունը որոտաց և ձայների մեջ խեղդեց երեխայի լացը:

Մի րոպե անց, երեխաներից մաքրված էր դուռը, և մի սպասավորուհի սրբում էր հատակի արյունը:

Այդ վայրկյանին հնչեց ժամը 12-ը. շամպայնի շշերը պայթյունով բացվեցին, և դահլիճը թնդաց ուռաների մեջ:

— Վատ սկսվեց տարին,— ասաց ընկերներիցս մեկը:

— Դատարկ խոսք է ասածդ,— խստությամբ վրա բերեց ուրիշը,— ուրախ լինենք, քեֆ անենք, ամեն տարի ողջ, առողջ...

Բայց մեր բոլորի տրամադրությունը փչացել էր, թեև ձգտում էինք ուրախ ձևանալ:

Սակայն այդ գիշեր ինչ որ ես ուտում էի և խմում, ինձ այնպես էր թվում, թե այդ խեղճ երեխայի արյունն է թափվել իմ բոլոր կերած-խմածի մեջ:

1938

ԴԱՐԲԻՆ ԳԵՎՈՐԳԸ

Շաբաթ օր էր: Արևը դեռ մայր չմտած՝ դարբնոցներում իրար հետևից դադարեցին մուրճի հարվածները:

Դարբին Համբարը վարպետի փոքր մուրճով ավանդական երեք հարվածը տվեց սալին և «բանթող» հայտարարեց: Աշխատանքը ավարտված էր:

Դարբնի բանվորները քուրայի կրակը հանգցրին, հավաքեցին գործիքները — մուրճերն ու աքցանները, դասավորեցին իրենց մշտական հատուկ տեղերում, ավլեցին, մաքրեցին դարբնոցը, հանեցին իրենց կաշե գոգնոցները, լվացվեցին և փանգեցին վարպետի առաջ: Վարպետ Համբարը վճարեց նրանց շաբաթականները և ճանապարհ դրեց: Ապա դարբնոցի դուռը փակեց, բանալին դրեց գրպանը և իր օգնական վարպետ Գևորգի հետ մեկնեցին: Երկուշաբթի օրվա աներևիքների մասին խոսելով հասան դարբնոցների փողոցի անկյունը և իրար «գիշեր բարի» մաղթելով բաժանվեցին:

* * *

Վարպետ Գևորգը մտավ իր հին ընկեր Սեթոյի վարսավիրանոցը, ուր ամեն շաբաթ երեկո գալիս էր սափրվելու և գլխի մազերը կարգի բերելու համար: Սեթոյին բարևելով, նստեց հայելու առաջ. վարսավիրն սկսեց իր գործը:

Վարպետ Գևորգը առողջ, ուժեղ մարդ էր, իր լավ տարիքի մեջ: Ուներ մի պառավ մայր՝ ծանր հոդացավով անկողին ընկած, կին և չորս զավակներ՝ երկու աղջիկ, երկու տղա: Վաղ էր ամուսնացել: Լավ աշխատողի և լավ վարպետի համբավ ուներ: Սակայն շատ դժվար էր ապրում. ընտա-

նիքը մեծ էր, կարիքը շատ. ինչպես ասում են գյումրեցիները՝ «քաշքշելով» մի կերպ ապրում էին: Ինքը մեղավոր չէր, իր խղճի առաջ արդար էր. առանց իրեն խնայելու չարաչար աշխատում էր, բայց վարձատրությունը այնքան նվազ էր, որ ընտանիքի անհրաժեշտ պետքերը նույնիսկ չէր կարող բավարարել: Վարպետ Համբարը բարի սիրտ չուներ, պարզապես շահագործում էր Գևորգին, օգտվելով նրա խեղճ դրությունից և երբեք մտքով չէր անցկացնում վարձն՝ արժանիքի և աշխատանքի համաձայն ավելացնելու:

Շատ ծանր էր նրա վիճակը. միայն ինքն էր տան աշխատողը, ամբողջ ընտանիքը նրա ձեռքին էր նայում: Հասած աղջիկ ուներ, հագնվել-կապվել էր ուզում, հապա մյուս երեխանե՞րը, ուսումնարանի ծախսե՞րը...

Գևորգը ընկճված էր այդ ծանրության տակ: Նա շատ էր խորհում այս վիճակից ելնելու մասին. օրինակի համար՝ ուրիշ վարպետի մոտ գնար աշխատելու, որ զրկող չլիներ, կամ ընկերովի աշխատեր մեկի հետ. իսկ եթե իր դարբնոցը ունենար, ինչքա՜ն հաճախորդներ կունենար, լավ կվաստակեր և ընտանիքը լավ կպահեր. ինչո՛ւ չէ, քանի որ ինքը փորձված վարպետ էր, ձեռքից ամեն բան գալիս էր, ինչե՞ր չէր շինում — կացին, բահ, ուրագ... ավելի մեծ բաներ՝ խոփ, գութանի շղթա... բայց ո՞վ էր տվել նրան այդ բախտը:

— Անուշ եղավ, Գևո ջան,— ասաց վարսավիր Սեթոն գործը վերջացնելով:

***

Դանդաղ քայլերով գնում էր Գևորգը՝ գլուխը կախ գցած: Շուկայից անցնելով, խորովածի և խաշլամայի միս գնեց, դրեց նախշուն մեծ թաշկինակի մեջ, ինչպես և կանայքեղեն. «Խեղճ երեխաներս շաբաթը գոնե մեկ անգամ միս ուտեն», ասաց ինքն իրեն:

Շաբաթ երեկոները տուն գնալուց առաջ Գևորգը մի պահ այցելում էր դարբինների սրճարանը, մի-երկու ֆինջան սուրճ խմելու, ընկեր, ծանոթ տեսնելու, մի-երկու խոսք փոխանակելու նրանց հետ, նաև քաղաքի և դրսի նորությու-

ները լսելու համար: Մեկ էլ հույս ուներ այստեղ հանդիպելու իր հին, սիրելի ընկեր Եղիշին: Նա մի շաբաթ առաջ խնդրել էր, որ Եղիշը իր դարբին քեռու մոտ տեղավորեր նրան: Եղիշի քեռին՝ վարպետ Ղևոնդը, որ ազնիվ մարդ էր, շատ հաճախորդներ ուներ, այնպես որ լավ աշխատող օգնականի պետք կունենար: Եղիշը, որ գիտեր ընկերոջ վիճակը, սրտանց խոստացավ միջնորդել քեռու մոտ: Թերևս այսօր մի բարի լուր ստանար:

Սրճարանի դռան առաջ Եղիշը ուրախացած գրկեց նրան:

— Գևո ջան, հոգուդ մեռնեմ, ո՞ւր էիր, գնացի դարբնոց՝ փակ էր, շատ մանե եկա, չգտա, մտածեցի, որ էստեղ կլինես, եկա քեզի բռնեմ:

Գևորգը շատ ուրախացավ ընկերոջ այս ջե՛րմ հանդիպման համար:

— Եղիշ ջան, քեֆդ լավ կերևա, միշտ էդպես լավ եղիր, — ասաց Գևորգը:

— Ընչի՞ չպտի լինիմ... քեզի աչքալուսանք ունիմ, ել երթանք Հարթենի դրախտիրը, քեզի լավ բաներ պտի ասեմ, ուզածիցդ ավելին եղավ, էդոր համար էլ պտի խմենք:

Հարթենի գինետունը ճոխ լուսավորված էր, բոլոր սեղանները գրավված էին հաճախորդներով, խոսակցության ձայներով, ծիծաղով, քրքիջով լցված էր ընդարձակ սրահը:

Նրանց համար պատի տակ փոքր սեղան տեղավորեցին: Եղիշի պատվերով օղի բերին, աղանդեր, հետը գինի և խորոված:

— Գևո ջան,— ասաց Եղիշը՝ Գևորգի աչքերի մեջ նայելով,— մենք հին, անգին տղերք ենք, ես քեզ շատ կսիրեմ, էս դու լավ գիտես: Ախպերս որ դուն ես, էս օրվանից հետո էլ ընդություն չես քաշի, հաստա՛տ: Քեռիս ծերացել է հիմա, ծերացել է, տղերքը հասել են, մեկը բուխալտեր է, մեկէլը՝ ֆելդշեր. լավ փող կաշխատեն, չեռիս էլ դարբնությունն չպիտի անե, տղերքը չեն թողնի: Քեռիս ուզում է դարբնոցը ուրիշի՝ մեկ արժեքավոր մարդու հանձնել: Քեռիս էլ իմ խորհրդով ու խնդրանքով դարբնոցը իր ամեն բաներով տեղնուտեղը քեզի պիտի հանձնե:

Եղիշը մի շնչով ասաց այս ամենը և կանգ առավ:

Գևորգը չէր հավատում ականջներին: Իջավ մի պահ լռություն:

— Մտքիս թելը կորցրի, լից խմե՛ք, Գևո ջան:

Մի-մի բաժակ գինի խմեցին:

— Հա՛, էն էի ուզում ասել, էգուց կերթանք քեռուս քովը, ձեռքը կպաչես, քեզի հոր տեղ է, ամեն բան դրած վերցրած է, գործը եփված է, երկուշաբթի օրվանից դարբնոցի տերը դուն ես: Գիտես չէ՞, ի՞նչ բանուկ տեղ է: Ի՞նչ ընտիր գործիքներ ունի:

Գևորգը աչքերը լայն բացած լսում էր:

— Գևո ջան, քեռուս կենացը, լավ մարդ է: Ես ոսկերիչ եմ, չէ՞,— քեռուս եմ պարտական, ինձի Ախըլցխա ղրկեց ամենից երևելի վարպետի մոտ, սորվա, եկա:

Ապա Եղիշը խոսեց պայմանների մասին, այն, որ Գևորգը պիտի վճարե դարբնոցի վարձը այնքան, ինչքան քեռին վճարում էր շենքի տիրոջը, իսկ իրեն՝ քեռուն՝ գործիքները բանեցնելու և սարք ու կարգի համար մի ընդունելի հատուցում, ուրիշ ոչինչ: Հետո վրա բերեց.

— Թե որ բան է, ժամանակի մեջ մի քիչ փող հավաքես, քեռուս գործիքները, սարքն ու կարգը բոլոր քուկդ կլինի ու քուկդ, հասկացա՞ր: Բայց Էդոր մասին հետո:

Գևորգի աչքերը ջերմացան, արցունքոտ ձայնով ասաց.

— Եղիշ ջան, ի՞նչ ասեմ, երեխոցս կյանքը փրկեցիր... — և փաթաթվեց ընկերոջ պարանոցով:

Երկու իրար սիրող ընկերները խմում էին իրենց ընտանիքների կենացը. խոսում էին մանկության քաղցր օրերից, նյատակում, նորից խմում և խանդավառված համբուրում իրար:

°₀°

Երբ իրարից, գյումրեցոց ասածի պես, պոկվեցին, Գևորգն ուզում էր վայրկյան առաջ տուն հասնել, վայրկյան առաջ ընտանիքին ուրախացնել: Վազում էր, ուղղակի թըռչում էր: Արագ վազքից շունչը կտրվեց, մի պահ կանգնեց՝ աչքն առավ երկնքին.— «Վա՛հ, ինչքա՞ն աստղեր կան...», — զարմացած ասաց ինքն իրեն:

Ամառ գիշերվա վճիտ երկնքում փայլում էին, շողշողում էին աստղերը, անթիվ պայծառ աստղերը: Ինչքա՜ն փայլուն էին, ինչքա՜ն գեղեցիկ էին: Շատ վաղուց կլիներ, որ Գևորգը երկնքին չէր նայել, նա միշտ գլուխը կախ, մտազբաղ անցել էր տան ճանապարհը: Ընտանիքը սպասում էր Գևորգին. նա երբեք այսքան չէր ուշացել: Կինը ճամբերանքը կորցրած՝ դուրս ու ներս էր անում:

Գևորգը լի օրերը դարբնոցից ուղղակի տուն էր գալիս, շաբաթ երեկոները մի քիչ ուշանում էր սափրվելու և սրճարան այցելելու հետևանքով: Իսկ այսօր ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ այսքան ուշացավ, մի վատ բան պատահած չլինե՞ր:

Շաբաթ երեկոները նա միշտ տանն էր, նստում էր հիվանդ մոր մոտ, զրույց էր անում, նրա հետ էր թեյը խմում:

Կինը մի պահ դռանը կանգնած՝ ամուսնու ճանապարհին էր նայում, երբ ուրախ-ուրախ երևաց Գևորգը. կինը մոտեցավ, ձեռքից առավ թաշկինակի կապոցը, մեծ աղջիկը լամպը ձեռքին ընդառաջեց հորը: Լամպի լույսի տակ հայրը նայեց աղջկան, ավելի ուշադիր նայեց:

— Յա՜, Վարդուշ ջան, ինչքա՜ն սիրուն ես եղեր...

Մի վայրկյան հայր ու աղջիկ լուռ կանգնեցին իրար դեմ: Հոր ձայնը կերկերաց, խզվեց.

— Վարդուշ ջան, անուշ ջան, ներող եղիր, լավ չէի տեսել...— թրջվեցին աչքերը, և գորովով, ջերմագին համբուրեց աղջկան:

Աղջիկը սիրտը լցված փախավ:

— Քա՜ մարդ, ևո՞ր տեսար...— վախեցած, զարմացած և հետո կշտամբանքով հարցրեց կինը:

— Աղքատի օրոցքը կոտրի, սիրտ ունի՞, որ աշխարքին աշե. ամեն բան սև է աչքին,— հառաչելով ասաց պատավ մայրը:

Մի սրտաբեկ տխրություն համակեց բոլորին: Յուրաքանչյուրը մտածում էր իր սրտում:

Երկաթագործի ծանր աշխատանքից ջարդված՝ Գևորգը գալիս էր տուն՝ մռայլ, քիթը կախ, մի փոքրիկ լամպի աղոտ լույսի տակ հազիվ նշմարում էր տնեցիներին, մոր ձեռքը համբուրում, երբեմն շոյում փոքրիկների գլուխը և կնոջ հետ

մի-երկու խոսք փոխանակելուց ու մի աղքատիկ ընթրիք անելուց հետո՝ հոգնած մտնում էր անկողին ու առավոտը վաղ, լուսումութին, անտեսանելի գնում գործին:

— Գործերս լավ են, շատ լավ են,— առույգ ձայնով ասաց Գևորգը և արագ ու համառոտակի պատմեց Եղիշի հաղորդածի մասին:

— Աննա, Վարդուշ, մեկէլ լամպն էլ վառեք:

Լամպը վառեցին, սենյակը լցվեց պայծառությամբ, ուրախությամբ:

Գևորգը համբուրեց քնած երեխային, համբուրեց մոր ձեռքը, մայրն էլ համբուրեց որդու ճակատը, օրհնեց Եղիշին, նրա քեռուն, և դիմելով հարսից, ասաց.

— Հարս ջան, չայ տուր, բերանս չորացավ:

— Հիմի, մայրիկ ջան, հիմի,— ասաց հարսը աչքերը սրբելով և անցավ թեյի պատրաստությանը:

Կես-գիշերն անց էր, դեռ բոլորը արթուն էին: Գևորգը ոգևորված խոսում էր, զվարթ բաներ էր պատմում, ծիծաղում էր ու ծիծաղեցնում:

Եվ վերջապես պետք էր քնել. քթի տակ մի եղանակ մմռմռալով անկողին մտավ: Շատ տարիներից ի վեր այսպիսի ուրախ սրտով և հանգիստ մտքով նա գլուխը բարձին չէր դրել:

1951

Գլուխներ «Ուստա Կարո» վեպից

ՍԵՂԱՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ՊԱՏՎԻՆ

Պայծառ և ուրախ արևի տակ երկրի մի կտոր է ապրում — հինավուրց Շիրակը, շատակեր Շարայի արտն ու կալը:

Ավերակ Մրենի տակ խորանում է մի գահավեժ ձոր-դունդ, որի հատակին, բարձրուղեշ եղեգների միջով, փոքրիկ ջրընկեցներով, հոսում է Ախուրյանը՝ մերթ որոտում, մերթ անշշուկ:

Գետի երկու կողմերից հսկա թռիչքով բարձրանում են վիթխարի ժայռեր — մութկապույտ սյունաձև ապառաժներ, որոնց ծերպերում վայրի աղավնիներն ու մեղուները իրենց բունն ու փեթակն են հյուսել:

«Աղջկա ձոր» է կոչվում այդ վայրը. առասպելը պատմում է, որ այնտեղ ջրերի խորքում մի հրաշք-աղջիկ է ապրում: Աղջիկը անուշ երգով և ալիքների վրա տարածած իր՝ ջրի պես երկայն մազերով հրապուրում է արտի տեր մարդկանց, քաշում հատակը և բանտում նրանց ջրով լցված մութ անձավներում:

Այդ ձորում, գարնան մի առավոտ, ծառերի ստվերների տակ նստել էին մի խումբ մարդիկ:

Դալար սեզերի վրա փռված կար մի կապույտ սփռոց՝ նկարուն եզրերով:

Սեղանի գլխին ծալապատիկ նստել էր Բագրան գյուղի առաջին հարուստը, երեցփոխ Տոնոն, պատվով ու հացով մի մարդ, նոր սպիտակած մազ-մորուքով:

Նրա աջ կողքին նստել էր հարսանիքների ու խնջույքների աղն ու ծաղիկը, բոլոր գյուղերի ընտիր քավոր, երեվելի վարպետ, աշխարհատես Ուստա Կարոն, մոտ 38 տարեկան մի առողջ, սիրուն տղամարդ: Փոքրիկ փափախը

շուռ էր տված դեպի ծոծրակը, սև մաճուդ չուխայի թևերը վեր ծալած: Ձախ ուսին ձգած կարմիր ու նախշուն մեծ թաշկինակը, որի ծոպերը հասնում էին գինու գավին, որ վիզն երկնցրած պառկել էր նրա կողքին, թևի տակ:

Ուստա Կարոյի փայլուն սև լաստիկ արխալուղի վրա ծփծփում էր մի մեծ արծաթե շղթա, որից կախված կար նրա նշանավոր ժամացույցը. այնպե՞ս հաստ էր այդ շղթան, այնպե՞ս հաստ, որից վստահ կարելի էր կապել մի գամփռ, քան թե մի ժամացույց, ինչքան էլ որ այդ նշանավոր լիներ:

Ուստա Կարոյի քեֆը այսօր շա՜տ տեղն էր.— նոր սափրված, պայծառ երես, աչքերը խնդումով լի:

Երկու շաբաթ է, որ նա աշխատել էր Բագրանում: Գյուղական աղբյուրի խողովակներն էր մաքրել ու կարկատել, սուրբ Գեորգա մատուռը տանող քարաբլուրի սանդուխի մատներն էր նորոգել:

Եվ երեկ ավարտել էր գործը, ու այսօր, կիրակի, Բագրանի ջոջերը՝ գյուղի իշխանները, իրենց հին բարեկամի պատվին սեղան էին սարքել վաղ առավոտից:

Տոնոյի ձախ կողմը, ծալապատիկ չկարողանալով նստել, քարի վրա տեղավորվել էր պարոն Կայծակը, մի երիտասարդ տղա:

Ասպա հերթով իրար կողքի նստոտել էին գյուղի տանուտերը, մի-երկու առաջավոր մարդիկ...

Սեղանի մյուս ծայրին, երեցփոխի դեմուդեմը, ծնկներն վրա չոքել էր Ուստայի անբաժան ընկեր ու աշխատակից Փիլոս ախպարը, Չավուշենց Փիլոսը, կամ հակիրճ խոսքով — Չավուշը:

Սեղանի քովնտի տեղ էր բռնել աշուղ Փելեշը՝ ցավկոտոր աչքերով, գլուխը թեթև ճերմակած: Սազը սեղմած կրծքին, խաղում էր լարերի հետ:

Յուրաքանչյուր սեղանակից ուներ գինով լեցուն մի գավ, ամենի առջև՝ գինու գավաթներ. միայն պարոն Կայծակի առջևը գինին ճերմակ շիշով էր. ամենքը սեղանի օրենքով պարտական էին լցրածը խմել մինչև հատակը, եթե ոչ կպատժվեն կրկնակի խմելով. միայն նա զերծ էր

օրենքից ու պատժից: Եվ խմում էր նա զգույշ, չափով, որ չհարբեր և վարկը չկորցներ:

Մի քանի երիտասարդ տղերք, իշխանների որդիները, ծառայում էին ոտքի վրա կանգնած:

Հեռվում երեքական քարերի մեջ շինած երկու օջախ բոցկլտում էին. մեկի վրա թարմ ձուկեր էին խաշվում ու խորովածի շամփուրը դառնում, մյուսի վրա հավով փլավն էր հասունանում:

Պարոն Կայծակի զինվորը՝ Հլդաթն էր դարձնում շամփուրները, իբրև հմուտ խորոված պատրաստող:

Քեֆ անողները արդեն ակրատը արել էին ու մի-երկու բաժակ օղի խմել, երբ լավաշ հացերի վրա թշթշալով տեղաց խորովածը:

Երեցփոխը, որ խնջույքի պետն էր, լցրեց գավաթը գինով, բոլորը հետևեցին նրան, ապա գավաթը վեր առնելով դարձավ դեպի աշուղը.

— Էդպե՛ս, Փելե՛շ ջան, մատներդ ուտեմ, էդտեղ կանգ առ:

Աշուղը քըոթ կտրեց նվագը. ամենքը ուշադիր դարձան գյուղի առաջին մարդուն:

— Ախպրտիք, պարոն Կայծակ,— աչքերը փոելով բոլորի վրա հանդիսավոր ու ծանր ասաց Տոնոն.— մեր նախնյաց, մեր հին ու նոր մեռելի հոգին լուս դառնա, ամեն: Խմենք մեր հայոց ազգի, մեր Էջմիածնի, մեր Հայաստանի կենացը:

Տեր աստված, փառքդ շատ: Ես կարճ ասի, դուք շատ հասկացեք:

Բոլորը լուռ դատարկեցին գավաթները:

Այսպա նորից գավաթը լցնելով, Տոնոն ժպտուն երեսով դիմեց սեղանին:

— Ուստա Կարոն էսօր մեր թանկագին հյուրն է. ըսենք, միշտ էլ մեր գլխու վրեն տեղ ունի, բայց էսօրվա սեղանը իրան ենք պարտական: Կարո՛ ջան, քու անգին կենացը, ողջ էնիս, գեշ օրդ էսպես էնի. աստծու աչքը վրեդ էնի:

Ու գավաթը զարկեց Ուստայի գավաթին: Ուստան էլ թեքվեց դեպի նա՝ գլուխը բանալով.

— Շնորհակալ եմ, Տոնո՛ ամի,— մրմնջաց հարգանքով:

— Ուստա՛ ջան, պայծա՛ռ մնաս:

— Ուստա՛ ջան, աստված քո սրտով քեզ տա:

— Ուստա՛ ջան, երկեն արև էղնիս...

Այսպես յուրաքանչյուրն իր հերթին մի-մի խոսք ասին նրա կենացին: Միայն պարոն Կայծակն էր, որ թեթև գլուխ տվավ Ուստային և լռիկ խմեց:

— Փելե՛շ ջան, գիտես էլի, ո՛ւմ թասն է,— ակնարկեց երեցփոխը:

Աշուղը աշխույժով զարկեց լարերին, լարերը միաբերան լեզու առան ու անուշ-անուշ խոսեցին:

Երբ երգը վերջացավ, իջավ մի կարճատև լռություն: Ապա Ուստան ծանր ու մեծ՝ ծնկի գալով, ընչացքը ոլորեց և հատ-հատ ասաց.

— Իմ աչքի լուս ախպրտիք, շեն մնաք, երկնուց-գետինք գոհ եմ ձեզնեն, արժանի չեմ էս ամեն հարկին. Տոնո ամի, Ներսես քեհյա, ես ձեր պզտիկ ախպերն եմ:

Եվ գավաթը շուռ տվեց բերնին ու կարմիր թաշկինակով սրբեց կարմիր ու թաց շրթունքները:

— Անուշնե՛ր, անուշնե՛ր, Ուստա ջան,— ձայնեցին ամեն կողմից:

Ուստան նորից գլուխ տվեց ու նստեց:

Խոսքը տանուտեր Ներսեսինն էր:

— Իշխաննե՛ր, էսօր մեր սեղանը պատվել եկել է մեր պարոն Կայծակը:

— Ամե՛ն, ամե՛ն,— կարկուտի պես վրա տվին բոլորը, և գավաթները մեկնեցին դեպի պարոն Կայծակը:

Ընդհանուր աղմուկը կրկնապատկեց ատրճանակների պայթումը, որ զինվոր Հլղաթը և մի-երկու երիտասարդ կրակեցին նրա պատվին: Ջորը լցվեց արձագանքով, և վայրի աղավնիները իրենց անտես ծերպերից վախեցած թռան դեպի ժայռերի կատարները:

Ուստային հաճելի չեկավ հարգանքի այս նախանձելի արտահայտումը պարոն Կայծակի անվանը: Թեև ինքը

հարգում էր նրան, բայց թե՛ այս և թե՛ այն, որ նա Ուստայի թասի վրա բերան չբացեց, ինքն էլ հիմա չուզեցավ առանձին մաղթանքներ ու գովեստներ անել նրա կենացին:

Ուստան միշտ իր գինը ճանաչում էր և գիտեր, հարկը եղած տեղը, իրեն ծանր ու հարգավոր պահել:

Պարոն Կայծակը ուղղվեց իր տեղում և ցած ու լուրջ ձայնով ասաց.

— Շնորհակալություններս, հայրենակիցնե՛ր...

Բերին հավով փլավը. աշուղն էլ մասնակից էր հացկերույթին, մեջե-մեջ երգելով սեղանակիցների կենացներին, որ ձերթով տեղի էին ունենում:

— Ներո՛ղ եղեք, մի խոսք էլ ես ասեմ,— բարձր գոչեց Մացակը.— Էս թասն էլ իմենք մեր Փիլոս ախպարի կյանքի համար. խնդրենք աստվածոթենիցն, որ էս էրկու հոգով ընկերներում էն սերը տա մշտական, ինչ որ ունեցեր են մինչի օրս. իրարով ապրին, իրարով մխիթարվին, ջան ասին, ջան լսին:

Եվ թևը փարելով Չավուշի վզովը, գավաթը շրխկացրեց նրա գավթին:

— Ապրի՛ս, սանիեր Մացակ, լավ թաս էր:

— Փիլո՛ս ջան, փնջփնջոտիս:

— Ըսեր է ըսողը,— ընդհատեց սեղանակիցների բացականչումները Տոնոն,— նմանը որ նմանին չպատահի, օրն ախ ու վախով կանցնի: Ինքը Տերը երկար կյանք տա Փիլոս ախպարիս իմ լավ Ուստա Կարոյի համար:

Մինչդեռ Չավուշ Փիլոսը ծնկների վրա հենված՝ ձախ ձեռքը կրծքին տված՝ աջով շնորհակալություն էր հայտնում, ձեռքը մեկ ճակատին դնելով, մեկ ծնկներին՝ լուրջ և հարգալից կերպով Ուստան սրտից բխած ձայնով ասաց.

— Չավո՛ւշ ջան ու ջան, իմ անգին ախպեր, ամեն բան սուտ, իմ ու քու սերը՝ ղորթ: Աստված է վկա, որ ես առանց քեզի օր չունիմ. դուն էլ առանց ընձի. աշխարքը աշխարքի համար, Չավուշս էլ ընձի համար. իշխաննե՛ր, ողջ ընիք, մենք էլ ողջ ընիք, աստված լսող-կատարող ընի. Չավուշ ջան, հոգիդ ուտեմ, արի մեկ պռոշտի էնենք:

Չավուշը թռավ տեղից, մոտեցավ Ուստային, գրկեցին իրար ու կսկուծ համբուրվեցին:

— Օխա՜յ, օխա՜յ, մեկ է՛լ, մեկ է՛լ,— վրա տվին չորս կողմից:

Նրանք նորից համբուրվեցին:

Բոլորը զվարթ ծիծաղում էին ու ծափ տալիս:

Ապա Չավուշը ոտքի վրա կանգնած, գլուխը կախ՝ մեղմով ասաց.

— Իշխաննե՛ր, աստված ձեր բանն աջողի, ձեզ ողջություն ու կյանք տա. վարպե՛տ ջան, քո շվաքդ վրայես անպակաս ըլնի, դու ինձ համար սարը Մասիս ես:

Ու այս խոսքերի վրա մի խումով պարպեց գավաթը:

Օրը կիսվել էր արդեն. գինու գավն էլ կես էր դարձել, ու ամենքի աչքերի մեջ փայլում էր գինու կարմիր ժպիտը. ծափ էին զարկում ու բղավում: Այս քանիերորդ անգամ էր՝ Հլղաթին տրնկի խաղալու էին հանել, որ գետինը դոփում էր ու կրակված պարում:

Բոլորով, բացի պարոն Կայծակից, կլոր պարի ելան: Սազը ճնկճնկում էր ու չափ տալիս, իսկ Ուստան ոգևորված քաշում էր պարը իր ետևից ու թև առած թռչում:

Թեև նա ամենից շատ էր խմել, քանի որ, երեկ երեկո էլ, գործը ավարտելուց հետո, կարգին կոնծել էր, և այսօր էլ, առավոտ շա՜տ վաղ, մի-երկու բաժակ օղիով բարի լույս էր ողջունել, սակայն դարձյալ ամենից կանոնավոր ու գեղեցիկ պարողն էր, մինչդեռ մյուսները ոտները իրար էին մճճում ու կանգնած տեղերը գլորվում:

Դե՛հ, Ուստային ո՞րտեղից կարող էին հասնել նրանք. գինու զելված կարաս էր Ուստան:

Պարոն Կայծակը, նստած քարի վրա, գոհ ժպիտով դիտում էր պարը, բարակ ընչաղցքը անվերջ ոլորելով և ծխելով գլանիկը: Երբեմն էլ ծոցից հուշատետրը հանելով արագ-արագ մի բան էր գրում:

Պարից հետո, երբ բոլորը հոգնած եկան նստեցին իրենց տեղերը, Ուստան, քրտինքը սրբելով ճակատից, մոտեցավ Ախուրյանին, կռացավ և ջուրը բուռ-բուռ խփեց ճակատին ու աչքերին, հետո խմելով մի-երկու կում, ասաց.

— Է՛յ մանկութ ճանճանչ ու խմած ջուր, ակդ անսպառ. քեզ պես անուշ ջուր չեմ տեսել ո՛չ Հապաշ, ո՛չ Հալապ...

Եվ նստեց մի քարի վրա՝ աչքերը լարելով գետին:

Ախուրյանը այդ կետում, ուր կանգնել էր Ուստայի հայացքը, հոսում էր հարհանդ ու անխոս, ոտքը զգույշ փոխելով:

— Ուստա, ի՞նչ ես ծովացել, ի՞նչ ես մտքում,— մոտենալով նրան, ականջի տակից փսփսաց Մացակը:

— Ոչինչ, Մացակ ջան, ոչինչ,— երեսը շփելով մտազբաղ պատասխանեց Ուստան.— աչքս էն հրաշք-աղջկա վրեն է, որ մարմար մարմինը հանում է ջրից, անուշ երգով մարդու խելքն է թոցնում. գիտե՞ս, լսե՞լ ես էս բանը:

— Մանկուց լսողաց եմ, գիտեմ, ընչի՞ չէ. բայց էդպես բան չկա, սուտ, պառավական զրույցք է, առասպել:

— Սո՛ւտ, առասպե՛լ,— հեգնանքով բարձր կրկնեց Ուստան,— սուտ բանը չի խոսվի հարյուր տարիներով, թե որ խոսվում է, ասել է՝ եղել է ու կա, թե որ տեսնողաց չըլներ, լսողաց էլ չէր ըլնի:

— Լա՛վ, թե որ էդ աղջիկը ցուց տա իրեն, ի՞նչ է, երթալո՞ց ես ետևից:

— Բա՛, խելաո եմ, որ մնամ,— կարճ կտրեց Ուստան:

Մացակը ծափ տվեց ծիծաղելով և, Ուստայի թևից քաշելով՝ ուժով բերեց սեղանին, և ծիծաղի միջից ասում էր անընդհատ.

— Տեղդ ամուր նստե, չարոցի չգաս, ափսո՛ս ես:

— Էդ ի՞նչ է, իրար անցաք,— հարցրեց երեցփոխը:

Մացակը պատմեց եղածը:

— Հա, Տոնո ամի,— հաստատեց Ուստան,— ականջս ձենի է՝ հենց որ կանչե, աստված է վկա, երթալու եմ. մի ժամվա լավ ապրելը հազար տարվա դատարկ ապրելուց վեր է:

— Տո՛, խելաո,— գոչեց Տոնոն ու ձայնին հայրական շեշտ տալով,— մեղք չե՞ս, քեզի նման կտրիճ տղամարդը կնիկ արմատի կուլ երթա:

— Ինչո՞ւ եմ մեղք. ինձ կնիկ է ծնել, կնիկն էլ իրավունք ունի մեռցնելու. ուրիշի ձեռքից ինձ մահ չկա ու չեմ

էլ ուզենա, ու ես էլ գերեզմանիս գիրը էսպես եմ ուզում ըլնի:

— Ինչպե՞ս, ինչպե՞ս,— հարցրին մի քանիսը:

Ուստան մտաբերելով իր մահկանացու լինելը՝ աչքերի վրա մի մեղմ տխրություն իջավ և, ամեն մի բառը շեշտելով, ասաց.

Ուստա Կարոն ծնավ կնկա մեջքից,
Մեռավ կնկա անուշ ձեռքից.
Չեմ անիծե ես իմ բախտը,
Սպրի կնկա ոսկե թախտը:

— Վա՜հ, պարոն Ուստա Կարոն բանաստեղծ է եղել,— լուրջ և միաժամանակ զարմացած գոչեց Կայծակը:

— Գլխիդ մատաղ,— դարձավ Ուստան նրան,— հըպա՛, ո՞ր օրվա Ուստան եմ էղել, որ բան չստեղծեմ:

Եվ հոգին լցվեց անուշ, հպարտ զգացումով:

— Կարո, ինձի նայե, քեզ հետ եմ,— խոսեց երեցփոխը,— լավ խոսքեր ես հնարե, բայց ասում եմ նորեն. կընկա համար մեռնելը ամոթ բան է:

— Ի՜նչ ամոթ կա,— տաքացած վրա պրծավ Ուստան,— Տոնո ամի, ներո՛ղ եղիր, ես քո տղադ եմ, բայց թո՛ղ էսօր քովդ լեզու առնեմ:— Ուստան միշտ ակնածում էր նրանից, թեև միշտ էլ ազատ-համարձակ խոսում էր մոտը.— ամոթ է փորի ցավից, եզան քացուց մեռնելը, կամ թե մեր գեղացոց պես մեկ խորոմ խոտի համար իրար աղիք թափելը: Պատվով մարդը սիրած կնկա համար պիտի մեռնի: Երևելի խոսք է ասված ժամանակով, թե սեր չքաշած մարդը տխմար ոամիկ է, թեկուզ թագը գլխին թագավոր ըլնի:

Ու ինքնավստահ շեշտով դիմեց պարոն Կայծակին.

— Ա՛յ, թող ինքը պարոն Կայծակը ասե, գիտակ մարդ է:

Պարոն Կայծակը այս խոսակցության և այս դիմումի վրա սրտի մեջ ժպտաց, բայց ոչ մի նշանով չարտաբերեց դեմքի վրա, որ չվիրավորեր ոչ ոքի: Նա ներքին կրակով

վառված և գաղափարով ներշնչված մի հոգի էր, որ սիրում էր ժողովրդին, որի համար և որի ծոցում գործում էր. բարձրից չէր նայում գյուղացիների վրա. բնավ ծաղր չուներ նրանց մտքերի և դատողությունների հանդեպ. նրանց հետ այնպիսի նյութերի մասին էր խոսում, որոնց հասկանալու համար մարդ մշակույթ պիտի ունենար:

Նա այն կարծիքին էր, թե անուս գյուղացիները իրենց բնական խելքով ընդունակ են հասկանալու շատ գաղափարներ, որոնք իբրև թե միայն մտավորականներին են սեփական. եթե միայն գյուղացիներին՝ իրենց հասկանալի ձևով բացատրեն այդ գաղափարները:

Միայն մի ածականով բավ էր բնորոշելու նրան. «լուրջ» ածականով: Լուրջ մարդ էր առհասարակ, և մանավանդ ավելի լուրջ մարդու երևույթ էր տալիս իր դեմքին ու ձեվերին: Անկեղծ էր իր զգացումների և արտահայտումների մեջ, բայց իբրև երիտասարդ զերծ չէր ցուցադրումից: Լրջորեն լսում էր գյուղացիներին և լրջորեն պատասխանում նրանց միամիտ հարցերին, որոնց վրա մի ուրիշը պիտի խնդար արհամարհանքով:

Եվ լուրջ վերաբերում ու հավատ ուներ դեպի իր գործը ու մտքերը. նրա լրջությունը հասնում էր պարգամտության աստիճանին, նման երեխաներին, որ իրենց տղայական խաղերին այնպիսի հավատի և լրջության կնիք են դնում, որպիսին չունին հաճախ մեծերի լուրջ արարքները:

Եվ այսպես ուշադիր նրանց վեհին, ուշադիր պատասխանեց նա ծանր ու ազդու մի վճիռի պես.

— Ո՛չ, հազար անգամ ո՛չ, տղամարդը պիտի մեռնի ազգի համար. մյուս կամավոր մահերը անպատիվ բաներ են:

Ուստայի վրա պաղ ջուր ածեցին. չէր սպասում մի գիտակ, երիտասարդ տղայից այսպիսի պատասխան. ուղղակի մի վայրկյանի մեջ քեֆը թողեց ու, խիստ ամաչելով, գլուխը կոր կախեց: Ամենքը լուռ էին և անձայն նայում էին Ուստային. սակայն սա գլուխը կախել էր ու չէր տեսնում նրանց:

— Խոսքը պատվական Ուստա Կարոն ինձ թողեց,— լռությունը խզեց պարոն Կայծակը, նկատելով, որ իր վճռական խոսքը ներազդեց նրանց վրա և վայրկյանը պատեհ համարեց իր քարոզչական դերը կիրարկելու:

Բոլորը ուղղվեցին նստած տեղերում. ոմանք սրբեցին ճակատները, ոմանք ուշքները լարած՝ հայացքները բեվեռեցին նրա վրա:

Նա մի պահ հազալուց հետո խոսեց վճիտ ու հանդարտ ձայնով, որ քանի գնաց տաքացավ ու շեշտավորվեց, ինչպես լինում էր միշտ, մանավանդ որ այսօր ինչքան չլինի մի քիչ էլ գինով էր:

— Սիրելի եղբայրներ. ձեզ հայտնի է, թե ես ինչի եմ ծառայում և թե որքա՜ն սուրբ է այդ գործը:

— Ճշմարիտ է, ճշմարիտ է,— վկայեցին ամենքը միաբերան: Սակայն Ուստան նորից լուռ էր:

Ապա, շարունակելով իր խոսքը, ասաց, թե այդ գործը ամեն ազնիվ հայի սրտում կա, և այդ գործի էությունն է՝ ազատել հայ ժողովուրդը բռնակալի լծից: Գիտեք, որ մեր պապական երկրի մի մասը, ուր հիմա դառն արտասուքով ապրում են մեր արյունակից եղբայրները, սուլթանի կրունկի տակն է շղթայված և արյունլվա:

Սուլթանը գինեց տգետ ու գռեհիկ քրդերին ու թուրքերին և բաց թողեց անզեն հայերի վրա, որ կոտորեն ծեր ու մանուկ, տղա ու աղջիկ, ջնջեն հայի ծուխը իր դարևոր հայրենիքից:

Հանցավոր չեն թուրք և քուրդ ամբոխը. մոլեռանդ են նրանք: Հանցավորը նրանց ղեկավարող ձեռքն է, սուլթանը: Վրեժ ունինք միայն և կռիվ չարիքի արմատի դեմ...

Մեր նպատակն է՝ հայրենիքում հաց, լույս և խաղաղություն բոլորին, բոլորի համար: Բայց ի՞նչ է մնում մեզ հիմա, ներկայիս անելու, երբ ամեն օր մեր հեռավոր մայրերն ու քույրերը, հազարներով, լլկվում են ու մորթվում, եթե ոչ կռվել ու մեռնել նրանց փրկության համար և ոչ թե մեռնել միայն մի աղջկա սիրուն:

Եվ ապա մեկ-մեկ ներկաների աչքերի մեջ նայելով, սուր հայացքն ամփոփեց Ուստայի վրա և կտրուկ ասաց.

— Հայ տղամարդը պետք է ասե սուլթանին. «Արևի տակ կամ ես, կամ դու»:

Պարոն Կայծակը վերջացրեց ճառը: Բոլորը, որ շունչ-ները պահած լսում էին, հառաչեցին մի մարդու պես:

— Ա՜խ, էդ գեշ սուլթանը, ոզո՛վք նրա թախտին,— գլուխը թափահարելով մրմնջաց Տոնոն:

— Արունն ելավ ծովերու պես ծով կապեց,— կանգնած տեղից տխուր սրտով խոսք ձգեց Հլղաթը, որ բնիկ Մշու դաշտից էր:

— Էյ վա՛խ, էյ վա՛խ,— հոգոց հանեց Չավուշը, որ վաղուց գաղթած էր Բասենից.— Էդ գազանի ձեռքից արուն են լալում ամենքը:

Բոլորը մի հարվածով զգաստացել էին. գինու զորու-թյունը տեղի էր տվել արյունի հուշերի առջև: Գլուխները կրծքներին կախ, կնճիռները ճակատներին հավաքած՝ մտորում էին...

Ուստա Կարոն, որ պարոն Կայծակի փայլուն ու ծակող հայացքից շանթահար էր եղել ու պապանձվել, հիմա զգում էր իրեն պզտիկցած, բոլորի առջև խաղք եղած, որ թույլ էր տվել իրեն տղամարդու անվայել փափագներ հայտ-նելու: Չէ՞ որ նա լսել էր հենց պարոն Կայծակից, գաղթա-կաններից, Թորոս վարժապետից հայերի ջարդերի մա-սին. անտեղյակ լիներ, ուրիշ բան... Եվ մեկ էլ սթափվածի պես, ձեռքը ամուր զարկեց ճակատին, ասես, մի բան հան-կարծ հիշելով, մի շնչով ասաց.

— Պարոն Կայծակ, դրան ո՞վ է դեմ. ես ինքս էլ պատ-րաստ եմ մեռնել ազգիս համար: Չավուշն էլ հետս, խոս-քըս խոսք է:

Եվ աչքերը կախեց պարոն Կայծակի շրթներից, մի բախտորոշ վճիռ ստանալու համար. իսկ սա նրա հան-կարծական վճիռը վերագրեց գինու ազդեցությանը և մը-տածում էր մի խուսափուկ պատասխան տալու, երբ Տո-նոն մեջ ընկավ.

— Տո՛, քո տունը չծակվի, որ կրակվում ես, էլ չգիտես ո՞նչ մեծ քար վերցնես. մեծ քար վերցնողը զարկելու միտք ի ունենա, թե կարաս՝ պստիկը վերցրու:

Ու քմծիծաղով բոթեց արմունկով նրա կողքը.

— Քեզնից Հայաստան գնացող չի ընկի. տեղդ ծանր ճաւոի:

Ուստան անզուսպ կերպով երեցփոխի վրա պրծավ.

— Տոնո ամի, աստված վկա, գնացողն եմ ու ամենեն մեծ քարը վերցնողը ու սուլթանի գլխին զարկողը...

Եվ բորբոքուն աչքերը վառեց Տոնոյի վրա. ապա դառնալով նայեց ուղղակի շրջիկի աչքերի մեջ:

Կայծակը նրա այս մեծախոսիկությունը նույնպես վերագրեց գինուն և հարկ համարեց այս խոսակցությանը վերջ տալ:

— Մեծ քարի ու պստիկ քարի խնդիր չկա. ամեն մարդ պետք է իր պարտքը կատարե իր ուժերի համաձայն. մարդու արժեքը իր վճիռի, իր կամքի մեջն է: Հա՛, սիրելի հայրենակիցներ, ներեցեք. ես ստիպված եմ սեղանը թողնել. գործեր ունիմ. խորին շնորհակալություն, ցտեսություն:

Եվ ոտքի ելնելով մնաս բարևի ձեռք մեկնեց բոլորին, ամենից առաջ երեցփոխին, ապա մտերմական ժպիտով սեղմեց Ուստայի ձեռքը:

Երբ գինվոր Հլղաթի հետ շրջիկ-քարոզիչը գնաց, Ուստան երկա՜ր, մտորում նայեց նրա ետևից. ապա նստեց իր տեղում: Նա շա՜տ գոհ էր, որ շրջիկը մասնակի ուշադիր եղավ իրեն, ժպտաց. միայն հայտ չբերեց այս զգացումը, այլ անտարբեր կերպով ասաց.

— Պարոն Կայծակը շա՜տ խելքը գլխին տղա է. իմաստուն խոսքեր ասաց:

— Ինչ ասել կուզե, գիտնական ուսումով մարդ է...

Սակայն Ուստան չէր լսում. նա հոգով ներկա չէր այնտեղ. նա մտածում էր: Տոնոն կարծելով, թե նա վիրավորվել է իր հեգնանքից, ուզեց սիրտն առնել. գավաթը օղիով լցրած՝ մատուցեց նրան՝ բարի ձայնով.

— Կարո ջան, խմե՛, էս մեծ գավաթը, մեծ քարը մոռցի՛. տնաշեն, իսկի հանաք չես վերցնում, ես քեզ էդպես չգիտեի:

Ուստան ելավ մտքերի միջից:

— Տոնո ամի, կեսս կտրես, քեզնից նեղացող չկա,— և մի ումպով խմեց օղին:

Երեցփոխի ակնարկի վրա, Փելեշը զվարթ մի եղանակ նվագեց, և ընդհատված ու վերջին մոտեցած քեֆը նորից ընթացք առավ: Նորից զվարթ ծիծաղում էին ու զվարճանում անցածը մոռացած, երբ Մացակը հարբած մարդու լրջությամբ դիմեց Չավուշին.

— Հը՛, Փիլոս ջան, դո՞ւն էլ Ուստայիս պես ազգասեր ես:

Փոխանակ Չավուշը պատասխանի, պատից ընկածի պես վրա եկավ Ուստան.

— Ի՞նչ եք մտքում, Չավուշս ամենալավ հայն է, որ կա: Կեցե՛ք մի պատմություն անեմ, տեսեք, թե նա ո՞վ է ու ի՞նչ ազգասեր հոգի ունի: Էս օրից շիտակ երկու տարի առաջ ես ու ինքը Արագի գեղն էինք երթում. անցանք Անի քաղաքի ձորաբերնից մի-երկու արտ հեռու կածանով, նորեն տեսա Անին, սիրտս մղկտաց, դարձա Չավուշիս ասի.— Չավուշ ջան, է՛ստեղ մեկ կանգնի: Չավուշս կանգնավ:

Այս խոսքի վրա Ուստան ինքն էլ կանգ առավ, դանդաղորեն գրպանից հանեց ծխատուփը և դանդաղորեն, գինովի մատներով, մի հաստ գլանակ փաթթեց, ուկնդիրների հետաքրքրությունը, կարծես, դիտմամբ ավելի գրգռելով, վառեց, մի-երկու կում, ագահաբար, ներս քաշելով ծուխը, հարեց.

— Չավուշս կանգնավ: Ասի, Չավո՛ւշ ջան, թե որ Անին նորեն նոր շենցնեն, ի՞նչ կուտաս: Չավուշս թե՝ մեկ միլիոն մանեթ կուտամ: Չէ՛, Չավուշ ջան, ասի, թե որ լա՛վ, լա՛վ շենցնեն, պայծառ նորվի ու հայի թագավորն էլ մեջը նստի, ի՞նչ կուտաս: Չավուշը թե՝ Ուստա ջան, ի՞նչ կուզես որ տամ: Ես էլ՝ հինգ միլիոն կուտա՞ս: Կուտամ, Ուստա ջան, կուտամ, ասավ: Մեկ խոսքս երկու չարավ: Դե՛հ, հիմի տեսա՞ք. էդպես հայ ո՞րտեղից կգտնեք:

— Ղորթ է ասում վարպետս. աստված վկա, որ ունենամ, կուտամ,— հավաստեց Չավուշը:

— Որ ունենաս՝ կուտաս,— հոհոացին բոլորը ու ծափ ծափի տվին,— դարտակ ամբար, անտակ կոտ. չափե՛ ու չափե՛, մեջն ի՞նչ ունիս, ի՞նչդ կերթա...

— Էստեղ ի՞նչ կա խնդալու,— բարկացած ու վիրավորված վրա բերեց Ուստան,— բանը մարդուս սիրտն է, սրտից պիտի բխի, որ ձեռքը տա, ու ձեռքը կուտա, թե որ սիրտն ուզենա...

Ուստայի խոսքը կտրեց աշուղ Փելեշը, կողքից մի խոսք նետելով.

— Ասած է. ձեռքը կա՝ սիրտը չկա. սիրտը կա՝ ձեռքը չկա:

— Ապրիս, Փելեշ, իսկն ասացիր,— գոչեց Ուստան.— հա՛, էն էի ասում, թե ա՛յ ինչքան հարուստ, աստծու կրակի տեր հայեր կան, որ ուզենան չէ թե հինգ միլիոն, տասը հինգ միլիոն կուտան, միայն չեն ուզենա, սիրտ չունին: Պարոն Կայծակն էլ էդ մտքով ասավ, թե բանը կամեցողության մեջն է. հիմի հասկցա՞ք...

— Ուստայիս լեզվի վրա ո՞վ կրնա գա,— վեճը կնքեց երեցփոխը և օրորվելով ոտքի կանգնեց,— երթանք, ուշ է. իրարուց կշտանալ չի ըլնի. երթանք, կեսն էլ աստղծով, մեկ ուրիշ անգամ:

Արդեն երեկոյան ստվերները խտանում էին ձորերում: Բագրանի մեծերը Ուստային մեջներն առած՝ իրար թև մտած, ծանր ու դանդաղ՝ գլորվելով, աղմուկ-ծիծաղով մտան Բագրան: Պատերի տակ նստած գյուղացիները հարգանքով ոտքի էին ելնում. հարս ու աղջիկ դռների ճեղքերից ու անկյուններից ծկլատում էին կերուխումից դարձող իշխաններին:

Նրանց ականջին դիպան Ուստա Կարոյի կրակոտ խոսքերը.

— Ձեզի բան եմ ասում, ուզածս տղերքը տվեք, սոյթանին գլխի վրա կախեմ, ու հայերի լացի ձենը կտրվի ականջներիցս...

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԵՎ ՉԱՎՈՒՇԻ ԴԱՐՁԸ ՆԱԽՃՎԱՆ

Գյուղը հավերի հետ քուն է մտնում, աքլորների հետ աչքը բաց անում: Ուստա Կարոն էլ քեֆից հետո մեռածի պես քնեց և, առավոտ վաղ, աքլորների հետ զարթնեց. վեր կացավ, լուր օրվա զգեստները հագավ, լվացվեց, «մախմուրահաճ» մի-երկու բաժակ օղի անուշ արավ, նախաճաշեց, և ապա, հյուրընկալ երեցփոխ Տոնոյին և բոլոր տնեցոց մնաք բարև անելուց հետո՝ Չավուշի և իրենց ավանակի հետ ճանապարհ ընկան դեպի Նախճվան, «Ուստա Կարոյի աթոռանիստ» գյուղը, ինչպես ասում էին նրա բարեկամները:

Թեև արևը բավական բարձրացած էր և հսկայական քարաժայռի գլխին նստած ս. Գևորգի մատուռը ճառագայթների մեջ ծիփում էր, սակայն Բագրանի գոգավոր ձորի վրա դեռ գիշերվա ստվերներն էին թափառում, և զով էր մրսեցնելու չափ:

Գյուղի արևմտյան ծայրին, որ զառիվեր բարձրանում է ոլորանման, քարքարոտ շավիղներով՝ հանդիպեցին չորս բագրանցու. նրանց վրա-գլուխներից երևում էր, որ չունևոր մարդիկ էին, ցրտից կուչ եկած ցնցոտիների մեջ՝ քայլում էին գլխակոր:

— Բարի լույս ձեզ, տղերք,— ասին միաժամանակ Ուստան ու Չավուշը:

— Բարին արևներդ, Ուստա, Չավուշ,— պատասխան տվին նրանք:

— Ո՞ւր առաջ բարի,— հարցում արավ Ուստան:

— Տիկոր, գլխիդ մատաղ, Համբոյենց հողերի վրա բանելու. աղքատի օրոցքը կոտրի,— հառաչանքով ընկերների կողմից պատասխանեց մեկը:

Մի պահ գնում էին անխոս. լսելի էր միայն քայլերի տակ գլորվող և ցույների հետ ծեծկվող քարերի չոր աղմուկը: Ավանակը հաշվով, տնտղելով փոխում էր քայլերը, սուր քարերից ազատ, հողի վրա դնելով տոտիկները:

— Տո՛, էս ճամփու տիրոջն ի՞նչ ասեմ,— խոսեց Ուստան,— հավատաս թե՝ դևերն ու սատանաները իրար հետ

կուվել են ու քարե կարկուտ թափել իրար վրա, թե չէ էսքան քար ո՞վ հավաքեց էստեղ. խեղճ անասունի ոտները ջարդվան,— վերջացրեց խոսքը, կարեկցաբար նայելով ավանակին:

— Երեկ լավ քեֆ ունե՞ք, Ուստա,— ասաց բագրատցիներից երեցը Ուստային շեղ նայելով:

Ուստան ուրախացավ սրտի մեջ և չկարողացավ զսպել այն գոհ ժպիտը, որ շողաց դեմքի վրա:

— Էլ լա՛վ ասիր ու անցար. փառավո՛ր, ուզածիդ պես. պակաս բան չկար:

— Է՛դպեսն է,— վրա բերեց մի ուրիշը,— բայց, խոսքը մեր մեջ մնա, աշխարհքի համը դու ես առնում. կնկաերեխի ցավ չես քաշում. գեղ ու քաղաք կրակ ընկնի, քո մի խորոմ խոտը չի էրվի:

Ուստան նկատեց նրա ձայնի մեջ նախանձի մի թեթև գույն:

— Աստված էլ մեզ էդ է վիճակել,— կարճ կտրեց՝ ձայնին մի այնպիսի իմաստ տալով, թե վերջացած է այս մասին խոսքը:

Ու լուռ բարձրանում էին: Ավանակը նրանց առաջն ընկած, ականջները ճոճելով քայլում էր. երբ ոտքը դրեց զառիվերի գագաթին, և նրա առջև փովեց Կամսարականների ընդարձակ դաշտը, ուր կանաչ արտերը ցնծին էին տալիս, ոռնգները բացեց դալարի վրա սահող հովի դեմ և լիակուրծք զռնչաց:

— Դադրած է Միրզան,— ավանակին նայելով ասաց Չավուշը, որ անշեղ հասկանում էր նրա լեզուն ու սովորույթները:

— Նստինք, նստինք,— ասացին ու նստեցին ցրված քարերի վրա:

Ուստան ծուխի տուփը հանեց, մի գլանակ փաթաթելու չափ ծխախոտ առնելուց հետո, տուփը հրամցրեց գյուղացիներին:

Չավուշը Միրզայի բեռը վար առավ և բաց թողեց սեզերի մեջ արածելու. ինքն էլ եկավ նստեց Ուստայի կողքին, ծուխին մասնակցելով:

Ուստան ծխում էր և տուզված նայում իր շուրջը: Ոսկի թևերը փռած՝ արեգակը բարձրանում էր դեպի երկնքի կամարը. բնությունը լցված էր երիտասարդությամբ. դաշտերը, արտերը խայտում էին մանկական թարմությամբ. թռչունները երգելով՝ թևին էին տալիս՝ աշխույժ ու կայտառ. մողեսները արևկող էին եղել քարերի վրա. ճերմակ թիթեռները սուրում էին կապույտ ծաղիկների շուրջը, որոնք նայում էին արևին. երկրից՝ հողից ու քարից, մի ջերմ շնչով գոլորշի էր ելնում ու ձգվում դեպի վեր. նրբին ծուխի նման: Ամենուրեք կյանք կար, աճում եռուզեռ:

— Շիտակ է ասել իմ Օրթե Հարութս, թե արար-աշխարք մեկ հավկիթ է արևի տակ թուխս դրած,— կարծես արևի ու երկրի հետ խոսելով ասաց Ուստան, ապա երազից արթնացածի պես շուռ եկավ դեպի ներկաները:

— Մարգար ջան, տխուր ես երևում, ի՞նչ կա,— հարցրեց դիմացը նստած գյուղացուն, որ միշտ լուռ էր, մտամփոփ:

— Է՜հ, Ուստա ջան, մի տարեկան տղաս մեռավ:

— Գլուխդ ողջ ըլնի, նշանածդ ողջ ըլնի, բանը էդ է,— մխիթարական ձայնով ասաց Ուստան,— կնկա ծոցը լիքը ծաղիկ է, պարպելիք չկա:

— Բերող կնիկը մահին կհաղթե,— միջամտեց Չավուշը:

— Ուստա ջան,— ծիծաղելով ասաց մի ուրիշ գյուղացի,— աստված տվել է Մարգարին, չի խնայել, ութը նատ երեխա ունի:

— Է՜հ, թո՛ղ ըլնի,— կես հպարտ, կես տխուր պատասխանեց Մարգարը,— մատղաշի մեռնելը ցավ է. ամեն մեկը իր տեղն ունի. աստծուն փառք:

— Մի խոսքով, երեխա կունենաս՝ ա՜խ, չես ունենա՝ վա՜խ,— վրա բերեց մեկ ուրիշը:

Մի մողես կտրեց անցավ նրանց առջևից:

— Էս քարերի մեջ շատ օձեր կրնա ըլնի. աչքերդ չորս պահեք,— վախվխելով և շուրջը նայելով տխուր խոսքի նյութը փոխեց մի ուրիշը:

— Մի՛ վախենաք,— վստահ ու խրախուսելով ասաց

Ուստան,— Էստեղի օձերն ինչ են, որ մարդու վրա իշխանա՝ գան. աչքս որ վրաները գցեմ, իրենց բնի ծակն էլ կկորցնեն. ա՜յ, օձեր, սարսափելի մեծ, գերանի պես հաստ օձեր է՜նքան եմ տեսել, որ ծառն արմատով են հանում, որ փըշշալով մարդու վրա են գալում, ասես թե՝ վիշապ քամի ըլին, աչն ու դողը մարդու ծուծն է ընկնում...

— Ուստա՛ ջան, էդ ո՞րտեղացիներն ես տեսել էդ օձերը,— հարցրեց մեկը:

— Ո՞նց թե որտեղացիները,— վիրավորված կրկնեց Ուստան գյուղացու անմեղ հարցը, վիրավորված, որ դեռևս գյուղերում մարդիկ էին գտնվում, որ չէին իմանում, թե Ուստան աշխարհներ է ոտքի տակ տվել:

— Ի՜նչ տղա-տղա խոսում ես,— բարկացած մեջ մտավ Փիլոսը՝ կտրելով վարպետի խոսքը և աչքերը սևեռելով գյուղացու վրա. զարմանում էր, որ աշխարհաժուռ վարպետը ի՞նչ չի տեսել, որ այդ էլ տեսած չլինի:

Հարց տվողը իրեն մեղավոր զգալով գլուխը կախեց:

— Ես գիտեի, որ Ուստան շա՜տ տեղեր է եղել. մենակ ի՞նչ գիտնամ, թե էդ տեղերը էդքան օձեր կան եղել:

— Որ չգիտեն, Փիլոս ջան, ի՞նչ մեղքնես,— փափկությամբ միջամտեց Ուստան,— օձի խոսք եղավ ու միտքս ընկավ Շամի օձերը:

Առհասարակ, երբ առիթը գալիս էր, Ուստայի միտքն էր ընկնում իրեն գլխով եկած մի պատշաճ դեպք, որ պատահած է եղել երբևէ իր ճանապարհորդությունների ընթացքում, ու սովորույթ ուներ պատմել այդ պատշաճ դեպքը:

Եվ Ուստայի շնորհքը այդտեղ էր երևում, որ համարյա միշտ, երբ խոսք էր բացվում մի բանի մասին, իսկույն կարողանում էր օգտվել իր հարուստ փորձառությունից և պատմել տեղին իրեն պատահած դեպքերն ու արկածները, կամ նմանօրինակ «լսողաց» դեպքերն ու արկածները:

— Էդ տեղերը, որ ման էի գալում,— հարեց Ուստան,— ամեն անցուդարձիս պատահում էի էդ ահռելի օձերին. է՜նպես օձեր, է՜նպես օձեր: Շամի հողը մեր Արագից մեծ մի ջուր կա, անունը, անունը... լեզվիս վրա է, հա՜ միտքս

չի գալում. հենց լեզվիս ծերին է... Չավուշ ջան, քեզի շա՜տ եմ պատմել էդ ջրի մասին. միտքդ չե՞ս պահել, ի՞նչ է:

— Գիտցածովս, Ջոռ-սու անունն էիր տալում, վարպետ,— օգնության հասավ Չավուշը:

— Հա՜, ապրի՛ս, ապրի՛ս, Ջոռ-սու, մեծ ու խորունկ ջո՜ւր... օձերը էդ գետի վրայից թռչունի պես էին թռնում ու քարվանիս վրա տալում. բայց վախեցողն ո՞վ էր, թե որ գալում էին քարվանիս առջևը խմբով կտրում, հանում էի չոնգուրս ու հեջազին ածում. հեջազին որ իմանում էին, բոլորը գումար բերանները բաց, աֆսոնած կանգնում մնում էին... ես էլ դրանց վրայից քշում էի քարվանս, անցնում-երթում... Բա՛, էդպիսի բաներ. բա՛, դրանց կռիվը, տեսնելու բան էր. զարմանալի՜, զարմանալի՜...

Անցած-գնացած դեպքերի վրա զարմանքով գլուխը տարուբերեց Ուստան:

Գյուղացիների հեքիաթական երևակայությունը վառվեց:

— Պա՜հ, օ՜հ, Ուստա ջան, պատմե՜ տեսնենք, Ուստա ջան, զով ճամփա է, խոսելով, խոսելով կկարճնա,— թախանձեցին զարմացած գյուղացիները:

— Լավ,— համաձայնեց Ուստան,— քանի որ խոսք եղավ, պատմեմ էդ կռիվը:

Բոլորը ոտքի ելան ու քայլ առան, Ուստան մեջերը. սա էլ մի վայրկյան ունքերը իրար բերեց՝ մտքերն հավաքելու համար ու սկսեց.

— Էդ տարին Շամ էի. մեկ քարվանսարի մեջ քնած. մեկ էլ կեսգիշերին էնպես ձեն ու ալաղց, ճիչ ու ճչոց լըսվեց, որ բոլոր ճամփորդները զարթնան վախեցած: Ասինք իրարու՝ «Էս կամ Սպահանի սարերից վիշապ քամին է պրծել ու անտառները պրկելով գալում է, կամ Ջոռ-սուն է, որ հեղեղից կատաղած՝ գեղերը սրբելով ծովերն է երթում»: Ելանք մոտիկ մեկ քար-ապառաժի գլուխը. ի՞նչ տեսնենք՝ աստղերի պես գետինը փայլփլում է ու պսպղում և շարժվում դեպի Հաբաշու սարերը: Մնացինք շվարած-կանգնած մինչի ադամամութը. շատերը վախու ետ դառան քարվանսարան. մնացինք ես ու երեք կտրիճ տղա: Էն ժամին, երբ որ մարդ կրնա սև թելը ճերմակ թելից զատել,

արմանք-զարմանք բան տեսանք, որ հիմի էլ միտքս է գալում, մազերս ցից են կանգնում: Ի՜նչ ասեմ, որ հասկանաք, երկու արտի երկանքին ճամփա լիքը, լիքը օձերով, իրար վրա, խտխտալու տեղ չկա.— գույն-գույն, սև, ճերմակ, նշխուն, կարմիր, կապույտ, դեղին, կանաչ, մեծ ու խոշոր, վազող ու թռչող օձե՜ր — օձե՜ր. մեկ ծերը հասել էր Ջոռ-սուի քարքարոտ դուրանները, մեկէլ ծերը, ինչպես ասում էին տեսնողները, նոր էր դուրս պրծել Սպահանի սարերից. զարզանդ ֆշշալով, չորս դի թույն ու աղու փսխելով, արտերը տափնելով գալում էին ու գալում էին, դիզվում էին ու ծովանում Ջոռ-սուի փեշերի վրա: Մեկ էլ տեսանք, Հաբաշու սարերից, քարերից ու ծերպերից, այրերից ու քերծերից կրակի աչքերով, լեզուները բոց նետերի պես ցցած, քամուց զիլ թռնելով՝ կատղած, կայծակ դառած թափվան Հաբաշու օձերը. ես ասեմ հեղեղի պես, դու ասա կարկուտի պես՝ ալծեր, ահտուտ, ալթիլ եկան, եկան, Ջոռ-սուն թռան և թափվան Սպահանի օձերի վրա.— մեկ իրարանցո՜ւմ, մեկ իրարանցո՜ւմ.— տեսնելու բան էր. լեզվով ասել չի ըլնի...

Եվ Ռուստամ ընդհատեց խոսքը. մի վայրկյան կանգնեց, ձեռքերը առաջ տարածեց և աչքերը սարսափից մեծ-մեծ բացեց ու քարացավ. ասես, հենց հիմա, իրապես, աչքերի առջև կատարվում էր այդ ահավոր դեպքը, որ նա տեսել էր գոնե մի տասը տարի առաջ:

Ունկնդիրները, համակված նրա սարսափից՝ լուռ կանգնել էին փշաքաղված:

— Հա՛, մեկ էլ ես տեսա,— շարունակեց,— Հաբաշու օձերի թագավորը մեկ հասո ու երկեն, ոսկեղեն օձ՝ ալմաստի ու յաղութի թագը գլխին թռավ Սպահանի օձերի թագավորի վրա, իրար փաթաթված, ծառս ելան, զարկին իրար գետին, քարեքար, էլի կանգնան, էլի զարկին. մնացած հազար-հազար օձերն էլ, նրանց նման իրար փաթաթված, լեզուները հանած շչում էին ու ճչում, հողն ու փոշին էլել ամպերի պես դիզվել էր կռվողների վրա: Մեկ էլ էն տեսանք, Սպահանի օձերը ետ-ետ դառան, գլուխ կորցրած, փախս տվին... Հաբաշու օձերը քշին փախչող-

ներ ետևից մինչև Ծամի հողից դուրս. ու հետո իրանք ուրախ-ուրախ դաշտերի վրա սլսլանց, եկան գնացին իրենց աշխարքը: Էդ կռվի ժամանակ ոչ մեկ մարդու կամ անասնի իսկի վնաս չհասավ. գնացինք կռվի տեղը. համրանքին համրանք կար, սատկած օձերին համրանք չկար... Տղամարդ կտրին օձեր էին Հաբաշու օձերը...

Ուստան ավարտեց իր ականատեսի պատմությունը, և իր սովորույթի համաձայն մեկ-մեկ նայեց ներկաների երեսներին՝ տեսնելու համար, թե ի՛նչ տպավորություն է թողել:

— Պա՛հ, պա՛հ, պա՛հ, ի՛նչ կռիվ է եղել. իսկի ռուսն ու օսմանլին էդպես չեն կռվել,— ուշքի եկած ասացին գյուղացիները:

Ուստան ինքնաբավական ընչացքը ոլորելով՝ չուխան հանեց ու ձգեց ուսին: Բագրանցիներից մեկը ասաց.

— Իմ ողորմածիկ հերս էլ տեսել է Մասրսա օձերի կռիվը Կավկավու օձերի հետ, բայց էդպես զորավորը չի տեսել:

Գյուղացիներից մեկը, որ ամենից խեղճն էր, թե պատմությունից գրգռված, թե արևից տաքացած, իր ցնցոտիի օձիքը բացեց՝ ասելով.

— Տո՛, արևը մինչի ծուծս խարկեց:

Շիտակ է, «արևը աղքատի կապան է»— մտքի մեջ խոսեց Ուստան, նայելով նրան՝ չուզենալով բարձրաձայն ասել՝ չվիրավորելու համար չունևոր ուղեկցին:

Նրանց միացավ մի գյուղացի, որ գալիս էր նոր հիմնած Կնտո գյուղից:

Բարևեց Ուստային և մյուս բոլորին:

— Պողոս ջան, ի՞նչ կա ձեր գեղը:

— Աջողություն, Ուստա ջան, շա՜տ լավ ենք. քո ձեռքդ կանաչ ըլնի. շինածդ բանդը մեզ լիացրեց ու անցավ:

Ուստան անհո՜ւն ուրախացավ. ինքն էր այդ անջուր գյուղի համար ձորում ամբարտակ կապել, ուր հավաքվում էին անձրևի ջրերը, և տավարը հագեցնում էր ծա-

րավը, իսկ բնակիչները ուրիշ գյուղից էին տակառներով խմելու ջուրը տանում:

— Լսել ենք, որ լավ այգի ունիք, լավ տուն ու տեղ. բայց ժամ չունիք. տո՛, առանց ժամի ինչպե՞ս եք ապրում,— չար քմծիծաղելով հարցրեց բագրատցու մեկը:

— Ոնցոր քաղաքացիք են ապրում առանց ժամի, մենք էլ էդ օրինակ,— լրջորեն պատասխանեց կնտոցին:

Բոլորը զվարթ խնդացին այս կատակի վրա: Ուստային շա՜տ հաճելի եկավ նրա սուր խոսքը և, իբրև նշան իր հաճության, իր ձեռքով գլանակ փաթաթեց և տվավ կընտոյի բնակչին:

Նրանք արդեն Կամսարականների դաշտի մեջտեղն էին, որը բարձր գահի պես իշխում է Ախուրյանի և Կաղզըվանի ձորերին: Շատ մոտիկ էր Մրենի հոչակավոր տաճարը, որ գմբեթը՝ վեղարի նման գլխին դրած, հազար տարուց ավելի կանգուն էր արևի տակ: Ուստան ամեն տեսնելուն՝ հիացումով ու նախանձով գովում էր նրա կառուցող անհայտ վարպետի հանճարը:

Ձախ կողմը Կամսարականների բերդաբլուրն էր՝ ցըրտից ու տապից թրծված փլատակներով:

Կապույտ հեռուներից, հորիզոնների վրա, երևում էր տեսիլի նման մեծ Մասիսի ձյունապատ գագաթը. հանդեպ՝ քղանցքները անծայր փռած, ճերմակ տատիկի պես, Արագածն էր նստել ծալապատիկ, սակայն որի բեղուն կանանչ կողերը ցոլցլում էին արեգդեմ:

Ուստան լուռ էր, ընկած մի մտքի ետևից, որ իր ծայրին չհասած խզվեց, որովհետև կեսօրին կութի եկող ծովածավալ հոտը՝ մայելով, դմակները օրորելով բռնեց ուղևորների առաջը, փոշեղեն ծուխի մեջ թաղելով մարդ ու ճամփա:

Ուստան իր խմբով հաջողեցավ ոչխարներից առաջ գյուղը մտնել:

Ուղեկիցները գյուղի ափին բաժանվեցին:

ՇԵԿՈՅԵՆՑ ՕՍԿԱՆԻ ՏՈՒՆԸ

Ավանակը քայլերն ուղղեց՝ ակներև աշխույժ դեպի Շեկոյենց Օսկանի տունը: Ուստան և Չավուշը գյուղական նեղլիկ փողոցներով՝ ծանր ու մեծ անցնելով, աջ ու ձախ բարև առնելով ու տալով հասան տուն:

Օսկանենց շները, մեծ ու փոքր, որ պառկել էին շվաքի հովում, նրանց տեսնելով, մի գլուխ վրա տվին, մանավանդ Միրզային: Մեկն անցավ նրա փորի տակով, մյուսը դունչը ի վեր մագլցեց, մյուսը պոչը քաշեց. մի այսպիսի զվարթ ողջագուրում. ապա Միրզան թողած՝ բոլորով միասին ավելի եռանդով թափվեցին Ուստայի և Չավուշի վրա, նրանց փեշերը քաշքշելով: Ուստան ուղղակի հազիվ էր կարողանում քայլերն այնպես փոխել, որ կամ վար չընկներ, կամ սիրազեղ շների թաթիկները չկոխեր: Շներից մեկը կանգնեց ետևի երկու ոտների վրա ու առաջի երկու ոտները հասցրեց դրեց Ուստայի ուսերին և սկսեց լիզել նրա ծնոտի դեղձի փոսիկը:

— Տո՛, էս անգին շները մարդու պես կարոտ են քաշում,— ասաց Ուստան քնքշորեն շոյելով լիզող շան գլուխը, ազատելով ծնոտը նրա գուրգուրանքից:

Ապա աչքի պոչով նայելով իր օթևանի (այվան) կարմիր դռանը, որի ճակատին, վերև, իշխում էր խոյի աճապարագին գլուխը ոլորուն եղջյուրներով, ներս մտավ սրահը, այնտեղից թոնրատունը. իսկ Չավուշը ավանակի առջև բացեց գոմի դուռը:

Թոնրատան շեմքից Ուստան ուրախ-ուրախ ձայն տվեց.

— Բարո՛վ ձեզ, Եղսո քուրիկ, բարո՛վ, հարս, ա՛յ սիրուն մատղաշներս, մոտս եկեք, ինչպե՞ս եք, լա՞վ եք,— դիմելով թոնրի շուրջը հավաքված երեխաներին:

Օսկանենց ամբողջ ընտանիքը մեծ ու պստիկով ժողովվել էր թոնրի բոլորքը. կրակի վրա դրված էին կերակուրի կաթսաներ. երեխաները մեկ-մեկ շամփուր ձեռներին, թոք ու փայծաղ շարած՝ պպզել էին կաթսաների ետևը՝ շամփուրները կրակին բռնած:

Օսկանի կինը, Եղսոն, տանուիրուհին, ծիծաղն աչքերի մեջ, ընդառաջ եկավ Ուստային ու, թաց շերեփը աջ ձեռքից ձախին տալով, բարևորվեց Ուստայի հետ.

— Բարով, Ուստա՛ ջան, բարով եկար:

Տանուիրուհի Եղսոն թեև դեռ երիտասարդ էր տարիքով, բայց ընտանեկան հոգսերն ու ամենօրյա անդադար աշխատանքը ժամանակից առաջ ծերության նախանշաններ ձգել էին նրա դեմքի վրա: Սակայն մի գրավիչ կրակով փայլող սև ու խոշոր աչքերից երևում էր, որ գեղեցիկ է եղել աղջնակ օրերում:

Միաժամանակ մոտենալով Ուստայի ձեռքը համբուրեց մի մանկամարդ հարս, Օսկանի եղբոր, Հովսեփի կինը, որ հարսնություն էր անում Ուստայի առաջ, բնավ չէր խոսում հետը, ինչպես թե մեծ տագրը կամ կեսրարը լիներ: Ուստայի հարցերին պատասխանում էր նա գլխի ու ձեռքի նշաններով կամ երեխաների միջոցով: Մինչ այդ, երեխաները թվով հինգ հոգի, աղմկով ու ծիծաղով, կախ էին ընկել Ուստայի թևերից. մեկը քաշում էր նրա կարմիր թաշկինակը, մյուսը ջանում էր ձեռքը նրա արխալուղի գրպանը մտցնել:

— Ուստա ջան, մեզի ի՞նչ ես բերել Բագրանից, ի՞նչ ես բերել, Ուստա ջան:

— Հա, մատաղ եմ ձեզի, շա՛տ բան եմ բերել,— ասաց Ուստան մեկ-մեկ համբուրելով երեխաներին,— փշատ եմ բերել, չամիչ, կակալ. Միրզայի վրա է:

Նրանք Ուստայի գրկից ուրախ ճիչերով թռան դեպի գոմը:

— Ուստաս առանց արմաղանի տուն չի գալում, երեխեքը գեշ են սորվել,— ժպտալով ասաց Եղսոն և սյունի տակ կարպետ փռելով դիմեց նրան:

— Անոթի կըլնիս, նստի, խաշլամա հանեմ Փիլոս ախպորս հետ կեր:

— Հա, աստված է վկա, անոթի ենք, բայց դեռ մեկ ասա, էս ի՞նչ բան է, էսօր մորթ ունինք:

— Գյումրեցի հաց առնողներն են եկել. Օսկանը հաց ծախեց վրաները. իրիկվա ճաշ եմ շինում:

Մեծ շերեփը խառնելով կաթսայի մեջ, լավ կտոր էր որոնում Եղսոն, երբ թոնրի մոտ սուտ քուն մտած կատուն վրա տվեց ոչխարի ոտները փախցնելու, սակայն աչքաբաց տանտիրուհին վայրկենաբար տաք-տաք շերեփը հանեց և տո՛ւր թե կտաս կատվի դունչին, որը մլավելով փախավ ծալքի տակ. ապա գոգնոցով սրբեց շերեփը և նորից սուզեց կաթսայի մեջ:

Թոնրատունը (բնակարանի կենսորոնական մասը) բարձրանում էր չորս մեծ ու հաստ գերանե սյուների վրա՝ գմբեթաձև առաստաղով. տանը, ուղիղ մեջտեղը, գետնի մեջ ահագին թոնիրն էր խորանում, որի վերև, գմբեթի գագաթում, երդիկն էր բացված լույսի ու ծուխի համար: Սյուների շուրջը փաթաթած էին գութանի հաստ ու բարակ շղթաները. սյուներից մի երկուսի վրա կային ճրագթաթեր, որոնց վրա հանգչում էին հիսուն փոքր ճրագամանները. մյուսներից կախված էին գդլոնցները մանր ու խոշոր գդալներով լեցուն: Ծխից սևացած առիքի այս ու այն գերանից կախված էին գերանդիներ, մանգաղներ, փոցխ, հորսելի և այլ գյուղատնտեսական գործիքներ:

Թոնրատան հարավային և հյուսիսային պատերի կողմը դռներ էին բացվում դեպի մառանն ու մյուս սենյակները. արևմտյան կողմը ընդհանուր մուտքն էր, իսկ արևելքում մի կամարակապ խորշ էր բացվում, եկեղեցու սեղանի պես մի-երկու ոտք սանդուղքով. այնտեղ թաղած կար մի փոքր թոնիր, իսկ պատի մեջ՝ Ուստայի հմուտ ձեռքով շինած մի գեղեցիկ օջախ:

Տան մի անկյունում ահագին ծալքն էր բազմաթիվ անկողիններով, վերմակներով, բարձերով՝ ծածկված մի նըշխաուն կարպետով. իսկ մյուս անկյունում գորգերի ու կարպետների ծալքն էր. խսիրները ոլորած՝ դրված էին այս ու այն կողմը:

Ծալքերից ու դռներից ազատ մնացած պատերի տակ, թմբիկների վրա կլոր ու կարմիր փորերով շարվել էին կողք-կողքի տված նշխաուն կճուճներն ու կարասները յուղի, պանրի, բրնձի, աղի և թթու դրած բանջարեղենների, խուփը բերաններին:

Նրանց վերև ձգվում էին դարակները գույն-գույն փայլուն սաքսոններով և նկարազարդ ափսեներով, որոնց խորքերից ամենից շատ աչքի էին ընկնում կարմրակատար աքլորների պատկերները:

Մինչ Օսկանի եղբոր կինը՝ դնչկալը բերնին, երկայն թարթիչներով, նշաձև սիրուն աչքերը վար ձգած՝ համեստ շարժուձևերով սեղան էր հարդարում Ուստայի առջևը, ներս մտան Ջավուշն ու Օսկանը:

Օսկանը մի երկու տարով Ուստայից պակաս կլիներ. շեկ մազերով, հասակով մի քիչ Ուստայից բարձր. ուներ կապույտ-խաղաղ աչքեր, դեմքը բացօդյա աշխատանքից ու քրտնքից եփված-կարմրած:

— Դե՛հ, Ուստա ջան, բարով տեսանք. կերած-խմածդ անուշ ըլնի ու քեզ ըլնի, տեսածդ պատմե. լսողաց՝ լավ քեֆ ես նշանց տվել,— ասաց Օսկանը և, ամուր սեղմելով Ուստայի ձեռքը, նստեց կողքին: Ջավուշն էլ տեղ բռնեց մյուս կողքին:

— Հա՛, Օսկան ջան, քե՛ֆ, ջահել տղամարդի քե՛ֆ:

— Լավ քեֆ արինք,— վարպետի խոսքը հաստատեց Ջավուշը,— գինին առատ, գառի միս, հավ, ձուկ, արաղ, աշուղ, իշխաններն է՛նպես...

— Ջավո՛ւշ ջան,— նրա խոսքը կտրեց Ուստան,— խոսքդ տո՛ւր ինձ, մեկ ես պատմեմ, թե Բագրանի իշխանները մեզի ի՛նչ պատիվ տվին, թե ես ի՛նչ խոսքեր ասի. պարոն Կայծակը ի՛նչ ճառեր ասաց ու ի՛նչքան ինձի գովեց. քանի հեղ կենացս խմեցին, աշուղ Փելեշը ի՛նչ լավ երգեր ասաց, ու թե ի՛նչպես մինչի իրիկուն աքլորը երդիկը հանեցինք, էլ ո՞րն ասեմ, էլ ո՞րն ասեմ...

Բայց զարմանալի կերպով Ուստան մոռացել էր իր Հայաստան գնալու միտքը, Սուլթանին սպանելու փափագը: Սակայն բնավ չհիշեց, եթե ո՛չ կասեր. Օսկանից ծածկելու ի՞նչ իմաստ կար, երբ երեկ պատվավոր մարդկանց առջև հանդիսավոր ձևով արել էր իր հանդիսավոր խոստումը:

Այդ միջոցին խաշած միսը դրին սփոռոցի վրա, օղին էլ իրեն կարգին: Ուստան գրպանից հանեց գոմեշի եղջյուրի կոթով մեծ դանակը, սկսեց միսը կտրտել:

— Բա չե՞ս ասի, երկու հոր ցորենս լավ գնով տվի Գյումրեցի խելառներին:

— Լսեցի. աստված զղջում չտա,— ասաց Ուստան լցնելով օղիի բաժակը. ու առաջ ինքը մի հատ խմելով, տվեց Օսկանին, հետո Զավուշին,— էլ ի՞նչ կա ուրիշ, ի՞նչ չկա գեղը. երկու շաբաթ է հեռու եմ:

— Գեղն էլի էն է. նոր բան չկա. մենակ աչքդ լուս, սանամոր Մուկուչիդ նշանածը պառկել է՝ տղա է բերել:

— Աչքի լուսով կենաս, Օսկան ջան, տարոսը մեկել սանամորներիս. չէ՞ որ, չբերք ընկնի ինձ ես մեղ դնում, թե Ուստայի ձեռքը վրա չեկավ. հիմի պարզերես կընկնք:

Ներս մտավ Օսկանի եղբայրը՝ Հոսեփը և տղան՝ Արտաշը: Բարև տվին ու հացի նստան: Հոսեփը դիմագծերով նման էր մեծ եղբորը. միշտ լուռ էր, համրի պես. գլուխը կախ իր բանին. տնտեսության գործերի մի խոշոր մասը նա էր կատարում. շա՜տ չարքաշ մարդ էր ու հոգնած տեսք ուներ:

Օսկանի մի հատիկ որդին Արտաշը մի շա՜տ դուրեկան պատանի էր, տասնութ տարեկան, բարձրահասակ, խարտյաշ, կապույտ աչքերով:

Ճաշից հետո Ուստան «շե՜ն մնաս, ապրե՜ս, Եղսո քուրիկ», ասելով վերկացավ և ուղղվեց իր օթևանը մի քիչ հանգստանալու: Գոհ էր, որ հյուրեր ունեին, այն էլ քաղաքացի մարդիկ, որոնց հետ հաճելի էր ասուլիս ունենալ:

Շեկոյենց տունը Նախճվան գյուղի ունևոր ընտանիքներից մեկն էր: Օսկանը գյուղում «դաս» չուներ — հորեղբայրանք կամ հորեղբոր որդիներ. մենակ մարդ էր. ինքն ու իր եղբայրը: Նրա տունը պարկեշտ, հացով և վարվող հարևանի հռչակ ուներ. ինքը Օսկանը հանդարտ բնավորության տեր մարդ էր, վեճ ու կռվից խուսափող, նույնիսկ բավական վախկոտ:

Բացի Արտաշից ուներ և երկու փոքր աղջիկներ, տասներկու և տասը տարեկան: Հոսեփը Օսկանի կտորն էր, ամեն բանի մեջ հնազանդ երեց-եղբորը. նրա խորհրդով

Ճատոռ ու կանգնող: Այնպիսի խորին հարգանք ուներ դեպի ավագ եղբայրը, որ համարյա նրա ներկայությանը չէր ծխում և մի ավելորդ խոսք չէր ասում:

Ամբողջապես նվիրված էր իրենց օջախի բարօրությանը: Գյուղի աչքին նախանձելի եղբայրներ էին նրանք, սիրով ու ներդաշնակ: Գյուղացիք նրանց վրա խոսելիս ասում էին, թե Օսկանենց տանը երբեք «իմ ու քո» չկա: Բաժանության չար ոգին նրանց շեմքովը բնավ չի անցնելու:

Հոսեփը ուներ երկու մանչ տղա՝ ութը և մյուսը չորս տարեկան. և մի աղջիկ տասը տարեկան:

Ուստայի սերտ բարեկամությունը այս օջախի հետ Հոսեփի ութ տարեկան տղայի մկրտությամբ սկսվեց: Ուստան, Շավուշի հետ այս կողմերը երևալուց հետո, մի տարիի չափ այս ու այն գյուղերը թափառելով, պատահաբար մի օր հյուր եղավ Օսկանին, ապա դարձավ կնքահայրքավոր, և սիրտը կպնելով այս տան մեծին ու պստիկին, խարիսխ ձգեց այստեղ, հիմք դրեց ու մնաց: Մի-երկու տարի ապրեց Օսկանի հին օթևանում (հյուրասենյակ), ապա քանդելով հինը, արտով ու սիրով, իր բոլոր ճաշակով ու վարպետությամբ շինեց նորը, շա՜տ լավը:

«Օսկան ջան,— ասել էր Ուստան,— քանի ողջ եմ, կամ թե քանի էս կողմերն եմ, միասին կապրինք էս օթևանի մեջ, թե որ մեռա կամ գնացի ուրիշ երկիրներ,— բարով վայելեն Օսկանիս ու Հոսեփիս տղերքը, որ իմ տղերքն ասել է»:

Այս պայմանից դուրս ուրիշ խոսք ու զրույց չի եղել երկու բարեկամների միջև:

Թեև Օսկանն էր ընտանիքի տերն ու գլուխը գյուղի և հոգևոր ու մարմնավոր իշխանությունների առջև, սակայն նա թե՛ տանը և թե՛ դուրսը այնպիսի հարգանքով ու սիրով էր վարվում Ուստայի հետ, և այս վարվելակերպը այնպես էր ներշնչել ընտանիքի մեծին ու փոքրին, որ օտար գյուղացիներն այն տպավորությունն էին առնում, թե Ուստան է տան պետը, իսկ համագյուղացիները, թե Օսկանը շարժվում է, ինչպես կրտսեր եղբայր, նրա խոր-

հուրդներով ու ցուցմունքներով ճիշտ այնպես, ինչպես Հոսեփը Օսկանի հարաբերությամբ:

Օսկանի կինը խորապես հարգում էր Ուստային և նրա բնակվելը իր օջախում համարում էր իրենց համար բախտ ու շնորհ: Նվազ սեր ու հարգանք չունեին նաև դեպի Զավուշը: Հոսեփը միշտ ասում էր. «Երկու աղբեր չենք, չորս աղբեր ենք. աստված բաժանութեն չտա»:

Ուստան և Զավուշը լավ ըմբռնում էին այս սերն ու հարգանքը և կարողացածներից ավելին չէին խնայում այս հյուրընկալ օջախի բարգավաճման և պատվի համար:

Նրանց միջև հաշիվ գոյություն չուներ. Ուստան և Զավուշը գարնան բացվելուց սկսած մինչև ձյունը դնելը համարյա միշտ դուրսն էին, գործերով. ամիսը հազիվ մի քանի օր էին անցկացնում Նախճվանում, սակայն ձմեռը տանն էին միշտ: Այդ միջոցին Օսկանենք շա՜տ ընտիր կերպով կերակրում էին նրանց ու նրանց հյուրերին. հագուստները լվանում, կարում-կարկատում:

Բայց Ուստան նկատելի ու զգալի չդարձնելու ձևով, ժամանակ-ժամանակ, զանազան պատրվակներով, փող էր տալիս Օսկանին ու Եղսոյին: Տան համար գնումներ էր անում, կանանց ու երեխաներին՝ հագուստներ: Ու ինչ որ իրեն ու Զավուշի համար էր առնում, նույնը առնում էր և Օսկանի և Հոսեփի համար: Իհարկե առանց վարձի, շինում-սարքում էր նրանց տունն ու տեղը, ապրն ու արորը նորում-նորոգում: Զավուշը պարապ եղած օրերում մտած տան ծակն ու ծուկը, արհեստի գործիքները ձեռքին շինում էր, կարկատում տան պակաս-պռատը. գնում էր արտն ու կալը, օգնում նրանց. ջրաղացը բնաղուն տանում, աղումին հսկում:

Մի խոսքով, նրանք համարում էին Օսկանի տունը իրենց տունը, «մեր տունը» ասելով, և Օսկանի շահերը — իրենց շահերը:

Գյուղի արյուն-բերան լեզուները նախանձով ասում էին, թե Ուստան կթան կով է Օսկանենց համար. բայց Ուստան բնավ ականջ չէր կախում այս չարերի գայթակղիչ թույն-

խոսքերին և արհամարհանքով պատասխանում էր. «Իրենց ի՞նչ, մեր գիտնալիք բանն է»:

Սակայն ավազ չէին և բարի նախանձով խոսողները, որոնք ասում էին, թե Ուստաև Շեկոյենց տան օրհնությունն է:

ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ՉԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ

Ուստա Կարոյի և Չավուշի ճշմարիտ և իսկական ծագումը, թե բնիկ ո՞րտեղից են նրանք, առաջ ի՞նչ մարդիկ են եղել, ի՞նչ գործով են պարապելիս եղել, կին ու տուն ունեցե՞լ են արդյոք, ի՞նչ երկրներ են եղել, և վերջապես ո՞ւր և ի՞նչ կերպ են իրար հանդիպել և ընկերացել՝ գիտեն միայն իրենք, և իրենց պատմությունների համաձայն էլ գյուղացիները:

Եվ գյուղացիները ի՞նչ հիմք ունեին չհավատալու նրանց ասածներին, կամ ի՞նչ իրավունք ունեին կասկածելու: Մի՞թե միայն այն պատճառով, որ նրանք ծնունդով ու ծագումով իրենց գյուղերից կամ գավառից չէին, նրանց մանկությունը չէր անցել իրենց հետ, իրենց տղայության խաղերի մեջ միասին:

Մի՞թե գյուղերում և մանավանդ քաղաքներում քիչ կան մարդիկ, որ տարիքն առած հասակում գալիս են օտար մի երկրամասից, հաստատվում են բոլորովին անծանոթ վայրում, «վերաբնակվում» ինչպես ասում են, գործ են անում, հաց վաստակում և պատմում իրենց անցած կյանքից: Եվ ոչ մի ազնիվ մարդ իրավունք չի համարում չհավատալ այդ վերաբնակիչներին՝ սոսկ այն պատճառով, որ նրանց ապրած կյանքը իրենց աչքերի առջև չի ոռսել:

Մնաց, որ Ուստան և Չավուշը այնպիսի հավատով և զգացումով էին պատմում իրենց կյանքի վեպը, որ կասկածի տեղիք չէր թողնում բնավ: Իսկ ներկա նրանց ապ-

քելակերպը բոլորի առջևն էր պարզված — մի աշխատասիրաված, արդարախոս և մաքուր կյանք:

Ուստան և Զավուշը այնքան անկեղծ մարդիկ էին, որ պետք չէին զգում իրարից և մարդկանցից ծածկելու իրենց ինքնությունը իրենց անցյալով:

Զավուշին այսքան և այսպես է պատմել Ուստան իր վեպից, ինչքան ու ինչպես որ կարողացել է վերհիշել, որովհետև նրա գլխով անչափելի բաներ են անցել, որ մի ուրիշը նրա տեղը շատ բան պիտի մոռանար պատահած դեպքերից կամ վայրերն ու ժամանակները իրար պիտի խառներ, և մարդ բան պիտի չհասկանար:

Ուստան ասել է, որ ինքը բուն շիրակեցի է, Շիրակի հյուսիսային ծայրից, ձորերի մեջ կորած, Ախուրյանի ակունքների վրա ընկած փոքրիկ Սալուտ գյուղից:

Շեն տան տղա է, «օջախի տղա» Աբիկենց Գաբոյի մի հատիկ որդին:

Նրա ծնողները երկար ժամանակ զավակ չունենալով, ուխտ են անում, յոթ տարի ծոմ ու պաս են պահում, սուրբ Կարապետի անվանը մատաղ են կտրում, որ իրենց մի տղա տա և խոստովանում են նրա տոնին ամեն տարի մատաղ անել (ինչ որ Ուստան ինքը մինչև օրս սրբությամբ կատարում է՝ լուսահոգի հոր փոխարեն): Ուստան ծնողների հոգուն է մատաղ անում ամեն տարի:

Ուխտը կատարվում է: Նա աշխարհ է գալիս, մկրտվում, անունը դնում են Կարապետ՝ սրբի պատվի համար: Նրա ծնողների ուրախությանը սահման չի լինում:

Կարոյի տասնումեկ ամիս հասակում հայրը մեռնում է, մայրն էլ մի տարի անց վշտից մահանում է: Պատիկ Կարոն մնում է որբ: Որովհետև Կարոն հորեղբայր չի ունենում, քեռին իսկույն «հերագլուխ» է կանգնում, տանելով նրան իր տունը:

Մի անգութ մարդ է լինում թե՛ քեռին, թե՛ քեռակինը: Թե՛ սրանք, թե՛ սրանց զավակները նրան օր չեն տալիս: Հոր հարստությունը տակովն են անում և իրեն էլ կարգում են հորթարած:

Հոր արտերն ու ապրանքը կորզելով, անգութ քեռին

բնավ չի էլ մտածում նրան մի պարզ գրել-կարդալ սորվեցնել տալու:

Շատ քիչ օրեր է տեսել հոր մարած օջախի կողքին՝ կիսաքաղց, կիսամերկ: «Քեռիս կուշտ հաց չէր տա, որ խելքի գայի, հագուստ չէր տա, որ շնորհքի մտնեի: Էն օրն էին քցել ինձի, կարկատաններու մեջ, որ թե լուսահոգի մերս զարթներ, պիտի չճանաչեր իրեն մեկ հատիկ տղին»:

Վերջապես տարիների հետ խելահաս դառնալով, պատանի Կարոն, իբրև աչքաբաց տղա, տեսնում է, որ գյուղում մնալով մարդ չպիտի դառնա: Հիմա հորթարած է, մեծանա, պիտի հովիվ դառնա: Ավելի բան դառնալիք չունի: Մտածում է իրեն նետել դուրս, մեծ աշխարհի մեջ բախտ որոնելու, աշխարհներ տեսնելու, բան սովորելու, մի խոսքով, մարդ դառնալու: Մի կողմից էլ, օձիքն ազատելու կատաշտ ծննդավայրից, ուր բոլորը խորթի պես են վարվել հետը՝ ազգական թե հարևան, որովհետև ամենքըն էլ քեռու կողմն են բռնել, իր հոր հացը քեռու տանն են կերել ու կուրացել:

Եվ այս բոլոր պատճառների տակին կար հիմնական պատճառը — Կարոյի տարերքը: Նրա տարերքը կրակից էր շինած, որն այրում էր Կարոյին անհանգիստ և անորոշ տենչերով, դանդաղ ու առաջ մղող փափագներով, և գյուղըն էլ իր հանդերով խեղդելու չափ նեղ ու անձուկ էր գալիս նրա խանդավառ և երազող հոգուն:

Հետագայում Ուստա Կարոն ասում էր.— «Գիշերը քնած ժամանակս, ցերեկը հանդում, հորթերի հետև ընկած ժամանակս, միշտ էն երազի մեջն էի, թե մեր գեղեն չխախել եմ, անծեր աշխարքի մեջ լող կուտամ: Չէի հավքվում մեր գեղի ու հանդերի մեջ, սիրտս հա նեղվում էր, շունչս կտրվում: Կելնեի սարերու գլուխը և կաշեի ամեն կողմ փուչ աշխարքին ու կուզեի՝ հավք դառնալ ու թռնել: Մինչև աշխարքի հետու ծովերն ու ծերերը թռնել, ազատ շունչ քաշել: Սարերու գլխուն մարելիք կուգար վրես: Թե որ չփախնեի մեր գեղեն՝ պիտի շնչակտուր մեռնեի. անդուռ ու աներդիկ բանտի պես էր մեր գեղն ինձի համար...»:

Այս սրտամաշ մտորումների և մտմտուքների մեջ տապակվում էր Կարոն, որ, երբ նա 15—16 տարեկան էր, բախտը մի ձեղ կաճառ բացեց նրա առջև: Այսպես եղավ այդ դեպքը:

Սալուտ գյուղի հանդերի միջով կտրում-անցնում է Ալեքսանդրապոլից-Ախալքալաք ձգվող խճուղին:

Ինչքան անգամ մանուկ Կարոն կանգնել է այդ բանուկ մեծ ճանապարհի եզերքին և նախանձով և հափշտակությամբ նայել է անծանոթ ճամփորդներին, որ սլանում են ձիերը հեծած. ո՞վ գիտի որտեղից են գալիս, ո՞վ գիտե ուր են գնում քառաձի փայտոններ հարուստ մարդիկով և կնիկներով, թռչում են, անցնում են... Ծանր ու բարակ փուրգոններ՝ հովերի դեմ փոֆռացող ծածկի ճերմակ քաթաններով, որ աղմկում են և օրորում խճուղու երկայնքին, անընդհատ, անվերջ... և ուղտերի ձիգ քարավաններ, որ շորորվելով և ղողանջելով գալիս են, մոտենում են համր ու դանդաղ, անցնում են, գնում համր-դանդաղ: Ո՞րտեղից են գալիս, ո՞ւր են գնում... Հեքիաթներից գիտեր Կարոն, որ նրանք գալիս են Իրանից ու Թուրանից, Սամսոնից ու Տրապիզոնից և գնում են Հաբաշ-Հալաբ, Մսըր ու Բաղդատ, Հնդստան, Չինմաչին, ներսի աշխարհներից դրսի աշխարհները...

Եվ Կարոն կանգնած տեղը քար կտրած՝ բայց հոգով, երազով գնացել է նրանց հետ: Նրանց հետ գնացել է հեռու աշխարհները, նոր, զարմանալի, հեռավոր աշխարհները...

Գարնանը Սալուտ գյուղն եկան բերզեն՝ թրքախոս հույն թափառական որմնադիրներ, խճուղու կամուրջները նորոգելու համար: Սալուտ մնացին մի երկու ամիս: Կարոն վճռեց նրանց մոտ աշկերտ դառնալ և խոստում առավ: Միևնույն ժամանակ ապագայում վճարելու պայմանով, հույն վարպետների ձեռագործ սրբատաշ տապանաքարեր դրեց ծնողների գերեզմանի վրա: Այսպիսով կատարեց որդիական պարտքը և խիղճը հանգստացավ:

Բերզեների մեկնած օրն իսկ, պատանի Կարոն ուշ երեկոյին՝ ծնողների գերեզմանի վրա երկար և կուշտ լա-

լուց հետո, հեծավ հորից մնացած մադյանի կրակոտ քուռակը և ծածուկ փախավ գյուղից: Փախչելիս երդվեց, որ էլ երբեք ոտք չկոխի այդ թշնամի գյուղը, ուր այնքան լացել է ու տառապել, և նույնիսկ բնավ բերանն անգամ չառնի նրա անունը:

Հույները պատանի Կարոյին հետներն առած տարան գյուղե գյուղ, քաղաքե-քաղաք, ուր որ գործ էին գտնում: Այս թափառական կյանքը Կարոյի շատ սրտովն եկավ: Սիրով ծառայեց վարպետին, սրանք էլ սիրեցին Կարոյին: Կարոն երեք տարի նրանց մոտ աշխատեց ձրի, «մի փոր հացի», սակայն հիմնավորապես սովորեց որմնադրության բոլոր արհեստը — քար տաշել, քանդակ անել, պատ շարել, կամար կապել, և դարձավ վարպետ:

Այդ ժամանակաշրջանում էլ մի անգամ, ձմեռը Ղազախ գավառում լինելով, պարապ պահերին մի աշուղից չոնգուռ նվագել սովորեց, որն իր որբության և մենակության ընկերն եղավ. նվագեց իրեն համար, սիրտը զեղեց ու մխիթարվեց:

Ապա հույներից բաժանվելով ինքնուրույն գործեր բռնեց: Գործ անելով, գործի հետ թափառելով, ողջ Կովկասը ոտքի տակ տվեց, էլ Թիֆլիս ասես, էլ Գանձակ, Արաս, Ղարաբաղ, Երևան:

Այդ թափառումների ժամանակ, երբեմն էլ նոր արհեստներ սովորեց: Ուստան այն համոզմունքն ուներ, թե ինքը լինելով մենակ մի մարդ, անօգ և անպաշտպան, ընկած մարդակուլ աշխարհի բերանը, ջրի երեսը մնալու համար պետք է ունենա ձեռքին «ոսկե ապրրանջան»՝ մեկի տեղ մի քանի հատ: Եթե մի տեղ հաց չի տալիս այսինչ արհեստը, ապա գործ դնել տեղին ու պետքին հարմար արհեստը:

Եվ այս իրողության շնորհով դարձավ նա հազարարհեստ մարդ:

Հացի ապահով ճանապարհ գտնելու հոգսը նրան անչափ է զբաղեցրել, ինչ չափով որ այդ կարող էր դյուրացնել նրա փափագի իրականացմանը: Հայտնի է, որ նրա հոգում, մանուկ հասակից, բունկած կար մի անմարելի կա-

րոտ, թափառումների կարոտ —գնալու հեռավոր աշխարհներ, նոր մարդիկ, նոր բաներ տեսնելու, հանդիպելու արկածների և դիպվածների, որոնց դեմ ճակատելով բովվում է մարդ, փորձ է առնում: Այդ արկածներն ու պատահումները, Ուստա Կարոյի կարծիքով, կյանքի սանդուխի ստեղներն են, որոնցով խելոք և աստղի տեր կտրիճը կարող է բարձրանալ մինչև գագաթը — մատով ցույց տրվելիք մարդ դառնալ, աշխարքի մեջ մի մեծ անուն:

Արդեն Ուստան փոքր հասակում, ձմեռները գոմի օդաների անկյունում կուչ եկած՝ ուշադիր, ականջը կախած՝ լսել է ծեր, փորձված մարդկանցից հրաշալի պատմություններ, քաջերի կռիվների և արկածների մասին: Լսել է հայ և թուրք թափառաշրջիկ աշուղներից հոգի կախարդող հեքիաթներ ու մասալաներ, և անցորդ ճամփորդներից սիրտ գերող զրույցներ զանազան զարմանալի աշխարհների և ժողովուրդների մասին... և Կարոն տեղացած թղթել է այդ հրաշքի վայրերը, կռվել է ու հաղթել և աշխարհով մեկ անուն հանել...

Հիմա որ կտրիճ երիտասարդ է, ձեռքն էլ հաց ունի և արհեստի բերմամբ թափառելով ճամփորդությունների համն առել է և բավական եփվել, ինչո՞ւ հիմա կանգ առնի կես-ճանապարհին, ինչո՞ւ չգնա ավելի և շատ ավելի հեռուները, այն դյութական, խելք թոցնող հեքիաթի աշխարհները: Մարդ աշխարհ է գալիս աշխարհ տեսնելու համար, ժամանակ չպիտի կորցնի, հո՛, երկու անգամ չես գալիս, որ վրա երկրորդին աշխարհատեսության երթաս...

Թեև Կովկասում Ուստան իր թափառական կյանքի ընթացքին շատ բան սովորեց շատ մարդիկ տեսնելով, լսեց ու սերտեց հայերեն ու թուրքերեն լեզվով երգեր, խաղեր, զրույցներ ու հեքիաթներ, իմաստուն առակներ ու առածներ, բայց ծարավ էր նրա հոգին... անծայր ուղիներ էր երազում նրա հոգին, փորձի ու բախտի մեծ ոլորտներ, ավելի շա՜տ բան սովորելու, շա՜տ ավելի բան սովորելու...

Հիմիկ ու հիմիկ ուզում էր իրեն դուրս նետել Կովկասից, ընկնել Իրան-Թուրան, ուզում էր Թավրիզ ձգել իրեն:

«Չավուշ ջան, ասել է Ուստան, տեսա, որ շա՜տ ապ-

բողը չէ շատ բան գիտցողը, հապա, շա՜տ մաև եկողը: Աշխարքն որ կա՝ ասուլիս է, տես ու ուսէ: Գլուխդ առ ու գնա, ճամփին ամեն պատահած մարդու հետ խոսքի բռնվիր, թե իմաստուն հետ չդառնաս, էլ ինձի բարև մի՛ տուր»:

Եվ այսպես, երիտասարդ Ուստան ծարավ հոգով, գլուխը առած, ձեռքի արհեստները բանեցնելով, գնալով, գնալով, գնաց հասավ Իրանի հողը, Թավրիզ քաղաքը: Թավրիզում մի տարվա չափ մնալով պարսիկ վարպետներից սովորեց ջուր գտնելու գաղտնիքը, աղբյուր կանգնեցնելու արհեստը:

Ապա իր երազածը դիպվածով առաջն եկավ: Ծանոթացավ պարսիկ նշանավոր քարավանապետ Խոջա Մանսուր աղայի հետ, որին և Թեջեր Մանսուր աղա էին ասում. մի պատվական մարդ, որի անունը առանց օրհնելու սեղան չէր նստում Ուստան:

Որպեսզի հնար ունենար աշխարհներ տեսնելու, երիտասարդ Ուստա Կարոն ծառայության մտավ Մանսուր աղայի քարվանի մեջ: Երկու տարի եռանդով և հավատարմությամբ ծառայեց: Մանսուր աղան գնահատելով Ուստայի կտրիճությունն ու աչքաբացությունը, դարձրեց նրան իր տեղապահ Աբբաս աղայի օգնական, առատ վարձն էլ իր կարգին:

Աբբաս աղան, որ փորձ ու հմուտ քարվանապետ էր, շատ սիրեց օգնական Ուստային, մեծ եղբոր պես թևի տակ առավ նրան, հարազատի պես վարվելով հետը:

Այնուհետև շատ անգամ Ուստան Աբաս աղայի հետ գլուխն անցած, քարվանը պտտցրեց քաղաքե քաղաք, երկրե երկիր: Նա հնար ունեցավ գնալու հեռու տեղեր, որ հրաշքներով և հրապույրներով հարուստ հեքիաթների մեջ էր միայն տեսել...

Տարիքով մարդը մեծացած երեխա է, նրա հոգին էությամբ չի փոխվում, այլ մեծանում է, էությամբ մնում է նույնը: Ուստա Կարոն, մանուկ ժամանակն էլ, առանց հուզումի չէր կարող նայել ճանապարհ ասած բանին. լինի

դա շավիղ կամ կածան, արահետ կամ լայն ուղի, բավական է, որ այդ կախարդ բանը, քեզ կարող է տանել այս ծանոթ, սովորական տեղից անծանոթ, գրավիչ, գեղեցիկ տեղեր, հեռու տեղեր: Հեռու տեղերը մանուկ Կարոյին և մեծացած Ուստա Կարոյին երևում էին դյութիչ, խորհրդավոր պատկերով, որ քաշում էին, ձգում նրա հոգին դեպի իրենց հրաշքն ու կախարդանքը:

Ճանապարհը փոքր ու մեծ Կարոյին շքեղ խոստումներ էր շշնջում: Ճանապարհը պարզում էր նրա առաջ լայն ու մեծ աշխարհը, փորձի ու գործի անսահման ասպարեզ...

Եվ երբ Ուստան քարավանի գլուխն անցավ, այնուհետև նրա առջև բացվեցին բոլոր ճանապարհների երկաթե դռները, և բոլոր հեռու տեղերը մոտեցան, և մոտիկ տեղերը հեռացան:

«Ողջ աշխարքին հայտնի է, Չավուշ ջան,— ասել է Ուստան ընկերին,— որ ես քարվանի գլուխ գլխավոր էի, շա՜տ անգամ մենակ, շա՜տ անգամ Աբբաս աղի հետ, ժամանակ-ժամանակ էլ Մանսուր աղայի ձեռքի տակ: Օխթը տարի, ասելն է հեշտ, օխթը տարի: Ես կտրիճ, անվախ երիտասարդ էի, արյունս տաք: Էսպես, գլուխս առած՝ քարվանիս հետ հազար սարեր ու ձորեր եմ կտրել-անցել, կապուտ ու կանաչ ծովերու պռունկներով՝ մեկ աշխարքեն մեկ ուրիշ աշխարքը գանձ ու կարողություն, մարդ ու ապրանք եմ տարել-բերել: Ինչպիսի՜ իմաստուն մարդիկ տեսա՝ որ օրերով լսեիր, չէիր կշտանա: Օրը՝ նոր, ճամփեն՝ նոր, փորձությունը՝ նոր: Մազերուս համրանքի չափ չար ու բարի եմ տեսել: Ի՜նչ հողեր, ի՜նչ երկրներ, վերի աշխարքներեն ներքի աշխարքները, ներսի աշխարքներեն դրսի աշխարքները: Է՜հ, Չավուշ ջան, իմ չիբուխիս մուխը ի՜նչ երկնքի տակ ասես, չի մխացել, ի՜նչ ծովերու ամպերու հետ չի խառնվել: Հիմի ո՞ւմ խոսք հասկացնես: Նստողն ի՜նչ գիտե, թե գնացողն ո՞ւր հասավ:

Ո՞ր մեկն ասեմ տեսածներես: Ի՜նչ ազգեր ու լեզուներ, ի՜նչ տեսակ-տեսակ քաղաքներ: Ծառեր կային, որ մարդու և էլ անասունի մսերը կքաշեին, կուտեին, թե որ մոտերեն անցնեիր. անտառներ կային, որ մեղր կբխեր ծառերեն ու

գետի պես կելներ կերթար մեղրը: Ու էլի ինչե՜ր, ինչե՜ր...

Ի՜նչ եղելություններ տեսա, ի՜նչ հրաշք բաներ. շատերուն աչքովս ականատես եղա... Ու էսպես տեսնելով, լսելով ու փորձվելով, հասակես ավելի հասակ առա:

Չավուշ ջան, Թավրիզ, քարվան ճստելուս օրը գնացի մեկ բախտ բացող աճամ կնկա մոտ: Ինչու որ նոր ճամփա բացավ առջևս, կուզեի ճակտիս գիրն իմանալ: Էդ կնիկը ինձի աշեց, հետև իրեն եղունկին աշեց ու ասավ.— Նորնոր աշխարքներ պիտի տեսնես, ծովերու բոլորը պիտի մաճ գաս, ջանքով ու փառքով պիտի ապրես, բայց առջևդ սև բու կա, ճամփեդ օձերով լիքն է: Էդ փորձանքներեն պիտի ազատվիս վերջը, աստծուդ ապավինելով ու ետև ծիծեռնակի պես պիտի թռնիս երթաս քու ազգիդ ու լեզվիդ հողը, էնտեղ բունդ պիտի շինես ու սրտիդ ուզածի պես պիտի ապրիս:

Էդ կնկա խոսքն եղավ: Չավուշ ջան, քարվանովս իջա Բաղդատ, Մսըր, Իրան-Թուրան ոտքիս տակն էր. Ղանդահարը ճամփուս վրա էր, Հնդստան չիջա, հասանք մինչև Արաբստանի քովը, Չինմաչին էլ չեղա: Մեծ փորձանք պատահավ: Իմաստուն խոսք ասած չեմ եղնի, թե որ ասեմ, թե՝ բախտն է աշխարքիս կառավարողը. էսօր իշխան ես, վաղը՝ հող ու մոխիր. երեկ անունդ չգիտեին, էսօր մատով ցույց կուտան քեզի, էսօր դուռդ հազար մարդ հաց կուտե, էգուց դու հացի կարոտ ես: Բախտի ամեն խաղերն ու երեսները աչքովս տեսա իմ հազար ճամփեքի վրա: Էս աշխարքի օրենքն է ու մեր գլխուն էլ եկավ: Արաբստանին չհասած՝ ավազակները, անթիվ ու անչափ, վրա տվին, մեր քարվանը տարան, մեկ օր ու մեկ գիշեր կռիվ տվինք, խեղճ Աբբաս աղան էդտեղ զարկվավ, ես ու Մանսուր աղան մահե պրծանք. հրաշք էր, մեր մերերի աղոթքը զուր չէր անցել: Ես ու ինքը, հաց մուրալով, տեղ-տեղ արհեստներս բանեցնելով, եկանք ընկանք Թավրիզ:

Խոջա Մանսուրը, աստուծ բանն աջողե՝ թե ողջ է հիմի, իրենց չեննաթին արժանանա, եթե մեռած է հիմի,—մորեմերկ առքատ էր դառել ու վախեն երկու կտոր եղել...

Ուրտեղե՞ն փող ճարեր, որ նորեն քարվան սարքեր, անկարելի բան էր: Ես էլ ի՞նչ անեի, ի՞նչ չանեի,— ես էլ էի մորես մերկ դառել,— իմ ունեցած չունեցածն էլ թալանել էին, էդ մտմտուքի մեջն էի, ներսես մեկ ձեն ինձի ասավ.— հերիք մնաս դրսերը, տուն դարձի՛ր: Էս խոսքը ականջս ծակեց, աչքս բացեց: Ես էլ շատ կարոտել էի հայի հողին ու ջրին, հացին ու լեզվին, ձեռաց մնաս բարով արի Մանասուր աղային ու ճամփա ընկա:

Էսպես դարձա եկա հայոց հողը: Մեկ տարի չկար, որ Էջմիածնա գեղերն էի, բախտը մեզի իբար բերեց ու ախպերացանք:

Մնացածը դու գիտես:

Այս պատմության վրա թե՛ տխրությամբ և թե՛ իրեն մխիթարելով՝ ավելացրել է Ուստան:

«Չավուշ ջան, ցավ մնաց սրտիս մեջ, որ Չինմաչինն ու Հնդստանը չտեսա: Չելավ: Բախտը չկամեցավ: Էյ քարվա՛ն, քարվա՛ն, է՛յ անուշ տեղեր, արդյոք մեկել աչքս տեսնելո՞ւ է ձեզի... Է՛հ, ի՞նչ անենք, էլի բախտավոր եմ, որ աշխարքի մեկ մեծ կտորը տեսա, մեկ կտորն էլ լսողաց գիտեմ. մեկ կտորն էլ երազով, մտքով կիմանամ. մնացած մյուս կտորն էլ մնաց ա՛խ քաշելու համար»:

Ուստան ծիծեռնակի պես թռավ եկավ, և հայրենի Շիրակի հակառակ ծայրում շինեց իր բույնը նորածանոթ հայրենակից գյուղացիների բույների մեջ:

Գյուղացիները ապրում էին անձուկ հողերում, լեռների խորշերում, ուր երկինքը երդիկի չափ է, ապրում են բլուրների տակ կուչ եկած պստիկ գյուղերում, մի սահմանավոր փոքր աշխարհում, որի հորիզոնները վրանի պես իջնում են մոտիկ լեռների գլխին: Եվ այդ անձուկ ծիրից երազում են մեծ, լայն, անսահման աշխարհը, որի ծայրերը կորչում են ծով-օվկիանոսների և սատանայական անդունդների մեջ:

Այս կուսական մտքերի պատկերացումով այդ մեծ աշխարհը կազմված է զանազան զարմանալի երկրներից՝

ներսի ու դրսի, վերևի ու ներքևի՝ գույն-գույն ծովերով իրարուց զատված: Այն տեղերում ուրիշ տեսակի մարդիկ են ապրում, ուրիշ տեսակի լեզուներով ու կրոններով, ուրիշ տեսակի վարքերով ու սովորույթներով: Զարմանահրաշ կենդանիներ, թռչուններ, բույսեր կան այն տեղերը: Հրաշքի ու հրաշալիքների երկիրներն են նրանք, հեքիաթի գործեր են կատարվում այդ հեքիաթնական և խորհրդավոր աշխարհներում:

Եվ հիմա գյուղացիները իրենց առօրյա չարքաշ կյանքում, անգիտակ մղումով, փափագում են մտքով ճամփորդել այն վայրերը՝ հեռու և գեղեցիկ, տեսնել, շոշափել պերճն ու սքանչելին, հոտոտել ցնորուն բույրերը այնտեղի կախարդիչ պարտեզների, ունենալ այն, ինչ որ չունի իրենց չքավոր կյանքը,— այն ամեն հրաշալիքն ու ցանկալին, որի զգայությունը լիուլի կերպով կարող է փոխարինել պատրանքը միայն, իրականի բույրն ու գունեղ պատկերապատճենը, որ բերում էր Ուստայի քարավանը հեռու հեռուներից...

Ուստայի քարավանը՝ երազի մարմին հագած, գյուղացիների հայացքի առջև փռում էր նրանց փափագած աշխարհների տեսիլները, որոնք դյութական ուրվականի պես գրկում, քաշում, հեռացնում էին նրանց հոգիները իրականության չոր ու չար շրջապատից:

Եվ տեղափոխվում էին նրանք երջանիկ լույս-ոլորտի մեջ, ուր մի պահ ուրախանում էին՝ մոռանալով իրենց աղքատիկ, փոքրիկ կյանքը: Մանավանդ եթե բախտ էին ունենում հանդիպելու Ուստայի ոգևորված կամ գինով ժամերին, երբ քարավանը ավելի հեռուներից ու խորերից էր գալիս՝ բարձված ներսի ու դրսի աշխարհների անանուն հազարանուն գանձերով, հրաշքներով ու հեքիաթներով, գինիներով ու լուսե աղջիկներով...

Ինչո՞ւ պիտի չլսեին հավատով իրենց սահմանափակ աշխարհից մեծ աշխարհը չտեսած գյուղացիները երբեմնի քարվանապետ-աշխարհաժուռ Ուստայի տեսածներին ու լսածներին, երբ սրանք լիակատար համապատասխանում էին թե իրենց երևակայած իրականին և թե ուրիշ եկողների

տեսածների ու լսածների ճշմարտությանը, իրենց ամբողջ մտայնությանը:

Չէ՞ որ, եթե իրենցից՝ գյուղացիներից մեկն ու մեկը Ուստայի փոխարեն այդ տեղերը լիներ, նույն բաները պիտի տեսներ ու լսեր, և թերևս, ավելի պակաս բաներ, որովհետև ամեն մարդ, հավասարաչափ տեսնող աչք ու լսող ականջ չունի, ինչպես Ուստան է և Ուստայի նման ճարտար լեզու և հիշելու միտք և եղած-տեսածը վառ ներկա դարձնելու շնորք:

Եվ թերևս ավելի շատ բաներ տեսներ ու լսեր, եթե Ուստայից ավելի շնորհալի լիներ, աչքը՝ բաց, և ականջը՝ ծակ:

Գյուղացիներից շատերը, չնչին բացառությամբ, հավատում էին Ուստայի զրույցներին այնպես, ինչպես երեխաները հավատում էին մեծերի խոսքերին և կամ հավատավորները առանց կասկածի ընդունում են ուրիշների և նրանց հրաշքների իրական գոյությունը:

Երբ Ուստան ու Չավուշն իրար հետ ծանոթացան ու եղբայրացան, Ուստան մի օր ընկերոջ ուսին զարկելով ասաց,— «Ա՛ռ Էս արաղը, խմենք մեր ախպերության կենացը: Սիրտդ շեն-ուրախ պահե: Չորս ձեռք ունենք, երկու բերան, թագավորի պես կրնանք ապրել ու դեռ ուրիշներին էլ ծաղկեցնել: Միայն մեկ լավ տեղ գտնենք ու պանդղխտության գոտիներս քանդենք ու նստենք»:

Մի անգամ, երբ Կողբ մեծ գյուղում էին աշխատանքի հանգամանքով, լսեցին որ հաջորդ շաբաթ Բագրանա ս. Գևորգի նշանավոր ուխտի օրն է: Ավանդաբար, այդ տոնի շնորհիվ հինավուրց դիցավանը դառնում է «աշխարհաժողով» մեծ մի վայր, ուր Շիրակի, Երասխաձորի և շրջակա գավառներից հավաքվում էին բազմաթիվ ուխտավորներ—գյուղացի, քաղաքացի, հայ, քուրդ, եզդի:

Երկու օր մեծ հանդեսներ են տեղի ունենում ավերակ վանքերի շուրջը, այգիներում զանազան խաղեր, քեֆ ու ուրախություն և տոնավաճառ:

Իրենք էլ պատրաստվեցին և կողբեցիների հետ գնացին ուխտին: Լավ քեֆ արին այնտեղ: Ծանոթացան նոր մարդկանց հետ և նրանցից էլ իմացան, որ այս հողաշատ և հացաշատ գավառում չկան որմնադիր վարպետներ և նրանց բերում են Կարսից, Կաղզվանից կարիք եղած դեպքում:

Նոր ծանոթները, որ լավ վերաբերմունք ցույց տվին նրանց հանդեպ, խորհուրդ տվին իրենց մոտ մնալ և նույնիսկ գործեր հանձնեցին: Եվ վերջապես Ուստայի մանկուց խմած Ախուրյան գետն էլ կար, որ թեև իր ապերախտ հայրենի գյուղի հանդերով է անցնում, բայց և անգին ծընողների սուրբ գերեզմաններին էլ է աչք ածում:

Առաջին աշխատանքը կատարեցին Թիրս գյուղում, Նազարենց Մարգարի մոտ: Ու նրա տունն էլ իջևանեցին: Ուստան Մարգարի նոր ծնված որդուն կնքահայր եղավ, այսպիսով այս նոր տեղում առաջին հիմքը դրեց սրբագործած բարեկամության: Այս եղավ նրա անդրանիկ կնքահայրությունը այս գավառում: Սրան հետո հաջորդեցին անթիվ դեպքեր, որով վերջ ի վերջո Ուստան դարձավ համարյա ամբողջ գավառի քավորը և իրավունքով կոչվեց «քավոր Ուստա Կարո»:

Ուստան ուզում էր հենց սանահայր Մարգարի տունը մշտապես տեղափոխվել, սակայն զգաց, որ Մարգարի պառավ մայրը՝ նորահարսի տեր լինելով, սրտաբաց վերաբերմունք չունի Ուստայի հանդեպ, և Ուստային բնավ դուր չեկավ պառավի կասկածոտ աչքը:

Ուստան և Չավուշը իբրև ամուրիներ, առհասարակ միշտ մի ընտանիքի մոտ էին բնակվում, որովհետև իրենց խնամող էր պետք, կանացի հոգատար ձեռք, եփող, թափող, կարող, լվացող: Եվ մնում էին իրենց սրտաբաց ընդունող ընտանիքների մոտ, իհարկե, Ուստան լիուլի վարձատրում էր հյուրասիրող ընտանիքի աշխատանքը և շատ ավելի էր տալիս, քան ստանում:

Չավուշի հետ վճռեցին ուրիշ տեղ որոնել, ասելով թե՝ իրենց հացն են ուտում, ուր որ սիրով ընդունեն, այնտեղ էլ իրենց օջախը կվառեն:

Եվ կարճ որոնումից հետո՝ փոխադարձ սիրով ու համաձայնությամբ Նախճվանի Շեկոյենց Օսկանի տունը եղավ իրենց տունը:

Ուստան իր քաղցր սրտով գրավեց գյուղացիների սրտերը: Կերավ ու ավելի կերցրեց, խմեց ու ավելի խմցրեց: Մի երկու տարի չանցած բոլոր գյուղերում բարեկամ ու սանահայր ունեցավ, ընկեր ու պաշտպան գտավ: Ամենից սիրվեց ու հարգվեց:

Եվ այդ կողմերը երևալու օրից մինչև այսօր, շրջանի գյուղացիների հետ, մատերի վրա հաստվող բացառությամբ, Ուստան ու Զավուշը ապրում են այնպես ծանոթ ու հարազատ, ասես թե, մանկական խաղերից իրար հետ մեծացած լինեն:

Ուստան այնքան հարազատ էր զգում իրեն այս միջավայրում, որ երբեք մտքով չանցրեց հորական գյուղը դառնալ:

«Զավուշ ջան, ասել է Ուստան ընկերին, երկու բան չեմ ուզում — մեկ՝ կնիկ առնել, քանի որ ժամս անցել է, ժամվորս դուրս ելել. մեկ էլ՝ իմ ծնած գեղը երթալ: Ընպես եմ կուշտ մեր գեղեն, էնպես եմ կուշտ, որ ասել չի ըլնի: 20 տարի է անցել, որ փախել եմ մեր գեղեն, իսկի չեմ կարոտել մեր գեղացոց ու իսկի էլ չեմ ուզենա, տեղս իմանան, գան արուն պղտորեն: Ուրիշ բան է՝ թե էնքան հարուստ եղնեի, երթայի ողջ մեր գեղի հողերն առնեի, գեղացոց դուրս հանեի, էնոնց տեղը ծառ ու ծաղիկ տնկեի՝ երկնուց խոսնակ հավքերի համար. ծնողներուս գերեզմանի վրա էլ մարմար գմբեթ շինեի էդ ծառ շվաքի մեջ: Ուխտել եմ միայն, երբ լավ ծերանամ, երթամ ծնողներիս հողը վերջին հետ տեսնեմ, պագեմ ու դառնամ գամ, էստեղ մեռնիմ: Ի՜նչ ունեմ-չունեմ էստեղ է, ախպեր էլ, քույր էլ, ընկեր էլ, բարեկամ էլ: Շինած տներս էստեղ են, բերած աղբյուրներս էստեղ են, ու անունս էլ էդոնց վրա է գրված: Ես կմեռնեմ, սանիկներս աղբյուրներուս ջուրը կխմեն, ինձի կհիշեն, ճամփորդները կամուրջներովս կանցնեն, անունս կուտան, ողորմիս կուտան»:

Մի հայացքով ասած՝ Ուստա Կարոն սիրուն տղամարդ էր, առողջակազմ, լայնաթիկունք: Միջահասակ էր, ուներ կանոնավոր գլուխ սև խիտ մազերով՝ միշտ կարճ խուզած: Միջակ լայնությամբ ճակատ՝ հոնքերի բարակ աղեղների վրա: Թուխ, շագանակի գույն մեծ աչքեր, մի քիչ մեծ քիթ: Ծիծեռնակի թևերի ձևով սև բեղեր, որ եզերում էին կենսալից կարմիր շրթները, ծխախոտից դեղնած առողջ ատամներ: Կզակը՝ կլոր, նման դեղձին իր քնքուշ ակոսով: Երեսը միշտ սափրած էր և դեռ ոչ մի ճերմակ մազ չուներ:

Նրա թավ ձայնը բխում էր ուղղակի սրտից: Ծարժ ու ձևերը կրակոտ էին, քայլվածքը մի փոքր օրորուն: Ինքը ամբողջ աշխույժ ու եռանդ:

Ամենից գրավիչը նրա հայացքն էր — պարզ, համարձակ, ուրախ: Ամեն խոհ ու խորհուրդ, հուզում ու զգացում լեզու էին առնում նրա աչքերի մեջ: Հոգին հայացքի մեջը էր:

Այդ հայացքն իշխում էր նրա դեմքի վրա, տալով նրան իր գույներն ու երանգները և վստահ, պարզ ու գվարթ էր այդ դեմքը:

Ծա՜տ զգայուն հոգի ուներևալով՝ սաստիկ և իսկույն ազդվում էր: Մի որևէ տխուր լուրից, անհաճո դեպքից, ուրիշին զարկած աղետից մահու չափ տխրում էր: Բայց շատ չանցած՝ զվարթանում էր, ինչպես գարնան երկինքը, որ հանկարծ ծածկվում է մութ ամպերով, սակայն մի պահ թաքնված անհաղթ ու պայծառ արևը, երևում է մեկ էլ վանելով ամեն թոչող-թախիծ: Անարդարության, չարիքի դեմ ընդվզած վայրկյաններին սպառնալից խոսքեր էր թափում,—զայրագին շարժումներ, ոխ ու վրեժի ուխտեր, սակայն անցնելով վայրկյանը, հալչում էին զայրույթն ու կռվի տենչը:

Երբ հուշերից ծագած մի դառն պատկեր կամ մարդկանցից կրած մի ծանր խոսք քայքայում էր նրա հոգին, իսկույն Զավուշին պիտի հաղորդեր այդ բոլոր դառնությունները, բոլորը առանց մնացորդի պիտի պատմեր, որ մտքի վրա ո՛չ մի վայրկյան ճնշող բեռ չունենար:

Եվ Չավուշին էլ նույն խրատն էր տալիս:

«Չավուշ ջան, երբ որ ընդվիս մեկ պատճառով կամ առանց պատճառի, իսկի ներս չքցես: Ասա՛, խոսի՛, չպահես: Ցավը մատը մտած փուշի պես, հանես՝ կլավնա, թողնես՝ կթարախոտի»:

Ինչքան որ նրա հոգին տրամադրությունների դյուրին ենթարկվող էր, սակայն տիրող գույնը հոգու — կարմիր ու կանաչ էր — հուսավառ զվարթությունը:

Նրա խորքը արևով էր շաղախված: Ուրախությունը եթե առարկայանար, անպատճառ, Ուստա Կարո պիտի դառնար: Այս կենսուրախ արևը գրեթե երբեք մայր չէր մըտնում նրա սրտի մեջ, թե նրա դեմքի վրա: Եվ այս արևազվարթ սրտով զգում էր նա կյանքն ու աշխարհը, սիրում էր մարդիկն ու իրերը:

Գյուղացիները սիրելով նրա այս պայծառ բնությունը ասում էին իրար. «Երնեկ իրեն, երջանիկ մարդ է, արդար հոգի ունի»:

Ուստան խորապես հավատում էր աստծու գոյությանը և նրա նախախնամությանը և հոգու անմահությանը: Հավատի մասին մանուկ հասակում բան չգիտեր, կամ այնքան, ինչքան հասակակից մանուկները, որոնց համար կրոնը նախապաշարումների և եկեղեցական ծեսերի պատկերներով էր սահմանվում:

Միայն «հայր մերն» էր սովորել լուսահոգի մորից և ուրիշ ոչ մի աղոթք:

Ամեն անգամ «հայր մերն» ասելիս՝ հոգու լացող աչքի առջև ներկայանում էր խեղճ վաղամեռ մայրը: Հասակն առնելով՝ լրիվ թախանձեց, հասկացավ «հայր մերի» խորհուրդը և նրանից ավելի իմաստուն բան չէր գտնում մարդկային խոսքերով ասված — «մեր ամենօրվա հացը տուր մեզի, փորձանքի մեջ մի քցիր մեզի, հապա փրկիր մեզի չարից»:

Ապագայում շա՛տ բան սովորեց կրոնի վերաբերմամբ, սակայն ոչ թե տերտերներից և եկեղեցուց, այլ զանազան բանգետ մարդկանցից, նրանց հարցնելով և ուշադիր ականջ դնելով: Բայց մի մարդ՝ մի հին վարժապետ, դեր-

վիշի տիպար, կրոնաբարոյական սահմանում անջնջելի կնիք դրեց նրա հոգու վրա:

Նրա հետ ծանոթացավ Թավրիզում, մի իջևանի-քարվանսարայի մեջ, երկու շաբաթ ապրեցին միասին: Նրան բոլորը Խալֆա էին կոչում և հարգալիր վարվում հետը: Խալֆան իջևանի տիրոջ վարժապետն էր եղել, գրել-կարդալ սովորեցնողը: Ծերացած և ընտանիք չունենալով ապաստանել էր իր աշակերտի մոտ, որը Խալֆային պատվում էր հոր պես: Ծերության պատճառով շատունց դադարել էր աշակերտներ կրթելու գործից: Հիմա, երբեմն, նորից, դիմում էին նրան, իբրև հմուտ հասկացողի, արժեքավորելու և գնահատելու համար ոսկեղեն ու գոհարեղեն զարդեր և իրեր: Հասույթի այս բարակ աղբյուրը բավարար էր այս սակավապետ մարդու համար:

Ուստան շա՜տ սիրեց նրան:— Տեսած ու լսած մարդ էր, բարի ու հեզ, ողջ ավետարանը գոց գիտեր: Ուստան ուզեց նրանից գրել-կարդալ սովորել, որ իր աչքերով կարդալ կարողանար Քրիստոսի խոսքերը, բայց ժամանակ չկար, քարավանը սպասել չէր կարող: Սակայն այս երկու շաբաթում Խալֆան նրան բավականաչափ ծանոթացրեց Քրիստոսի ուսմունքի հետ, մոտը կարդաց ավետարանը, պատմեց աստվածաշնչի զանազան դրվագներից, աշխարհի ստեղծման գլուխը կարդաց և բացատրեց, հասկացրեց, ինչ որ պետք էր: Ուստան հափշտակված լսում էր Խալֆային, հոգու մեջ քանդակելով նրա ամեն մի խոսքը:

Խալֆայի ասածներից Ուստան այս աշխարհապատկերացումը ունեցավ.

Աստված հազար-հազար տարիներ խորունկ մտածելուց հետո ոչնչից ստեղծեց աշխարհը կատարյալ կերպով: Եվ ստեղծեց մարդուն իր պատկերի նման, անմահ հոգով, և երջանկության համար թե այս անցավոր աշխարհում և թե մյուս հավիտենական աշխարհում: Միայն մի պայման դնելով — հնազանդումը մարդու՝ աստվածային պատվերներին: Անհնազանդը սատանայի գերին է՝ հոգով-մարմնով կորած, դժոխքի բաժին: Աստված հոգում է իր ստեղծ-

ների վրա: Համրել է մարդու գլխի մազերը և մի մազ չի ընկնում մարդու գլխից աստծու կամքից անկախ: Ամեն բան գիտե աստված, ամեն բան տեսնում է նա, թե՛ անցածը, թե՛ գալիքը: Ողջ աշխարհը աստծու ափի մեջն է, երկու աչքով հսկում է աշխարհին, և մյուս ձեռքով պաշտպանում է չարից-սատանայից: Իր որդուն՝ Քրիստոսին ուղարկեց աշխարհ իր պատվերները—ավետարանը մարդկանց տալու համար: Այս են նրա պատվերները — սիրիր ուրիշին ինչպես քո անձը, բարի արա թշնամուդ, և ինչ որ ուզում ես մարդիկ քեզ անեն, դու էլ նույնն արա նրանց: Այս է, ուրիշ բան չկա ավելի: Կատարողը կարժանանա աստծու երեսաց տեսության, դրախտի հավիտենական երանությանը: Ուստան երկար մտածելով աստվածային այս պատգամի վրա, հասավ այն մտքին, թե արդարև շատ դժվար է մարդ արարածին լիապես կատարելու ավետարանի պատվերը, սակայն ինքը ձգտում էր հնար եղածից ավելի չշեղվելու սուրբ պատվերներից.— բարություն էր անում ուժից ավելի, աղքատասեր ու օտարասեր, դրամի և օգուտի համար սուտ չէր խոսում, մարդ չէր խաբում. բամբասանքից և հայհոյանքից խուսափում էր:

Եկեղեցի հաճախելու հետ այնքան գլուխ չուներ, երբեմն միայն շաբաթ հիշտեկ երեկոները կամ կիրակի պատարագին գնում էր եկեղեցին՝ սրբերի առաջ հաստ մոմեր վառում և գանձանակը առատ խաչհամբույր ձգում: Սակայն Ուստան, ինչպես և Չավուշը, ամեն տաղավարների մեռելոցին օրհնել էին տալիս անտեր, մոռացված գերեզմանները, իրենց ծնողների սուրբ հիշատակին:

Պստիկ պասերը, երբ միտքն էր մնում, պահում էր նա, իսկ մեծ պասը չէր կարող «անծակ» մինչև զատիկ հասցնել, որովհետև քեֆի ժամանակ, գինով սիրտը հավի միս կամ խորոված էր ուզում, և երբ այսպես մի անգամ ծակվում էր պասը, այդպես էլ տևում էր մինչև ավագա շաբաթը, որը սակայն խիստ պահում էր:

Ուստան մանուկ հասակից շատ հարցասեր միտք ուներ, հետաքրքիր հոգով լսում էր ամեն մի խոսք փորձված մարդու բերանից և լսածը հզոր հիշողության մեջ ամբարում:

Նրա անհագ հարցասիրությունները անապատ ասպարեզ գտան իր ծայր չունեցող թափառումների ընթացքին: Թեև քարավանն ու ձեռք բերած հարստությունը կորցրեց, բայց հետ դարձավ ավելի հարուստ և այս անգամ անկողոպտելի գանձերով — այն իմաստությամբ, որ նա մրջյունի ջանքով ու տոկով հավաքել էր իր կարճ կամ երկար, բայց իրապես անցած ճանապարհների վրա: Ինչպես ծարավի հողը ծծում է ջուրը, այնպես էլ Ուստան խմել էր ու ծծել հայ ու հարևան ժողովրդի իմաստուն առակներն ու ասացվածքը, զրույցներն ու ասումները, որոնք դարերի մեջ, արձագանքից արձագանք թռչելով ու բազմապատկվելով եկել հասել են մինչև ներկա մարդը՝ ստեղծելով մի ամբողջ աշխարհայացք:

Միայն այս տարրերով չէր մշակած նրա միտքը:

Հազարավոր մարդիկ էր տեսել, ամեն տեսակի, ճամփորդ ու նստակից, աշուղ ու թափառական, արհեստավոր ու վաճառական, ու լսելով նրանց կյանքի վեպերն ու փորձությունները, յուրացրել էր ու բյուրեղացրել այս բոլորը իր հոգու մեջ, և իր բախտի իրադարձություններից և ապրումներից ստացած գանձերն էլ վրան գումարած՝ դարձել էր իսկապես փորձ մարդ և աշխարհատես, բանիմաց և սրտագետ:

Սակայն նրա մտքի հորիզոնից շա՜տ ավելի անպարփակ էր նրա բորբ երևակայությունը, որ ոչ միայն Ուստայի տեսածի ու լսածի թերին էր լիուլի լրացնում, այլև մի քարից մի պալատ էր շինում, մի ծառից մի անտառ, մի կաթիլ ջրից մի ծով և մի աստղից մի ողջ երկինք:

Այդ երևակայությունը այնքան հախուռն էր ու կենդանարար, որ թեև մարած անցյալն ու դեռ չեկած ապագան ապրող ու շնչող ներկա էր դարձնում, և մեռելը նույնիսկ կարող էր հարուցանել, և թե չեղածն ու սուտը առարկայացնել ու ամեն ինչ շոշափվող իրականի շրջել:

Եվ ինչքան որ Ուստան օժտված էր այսպիսի մի հզոր երևակայությամբ, որը, շարունակ, նրա կամքից անկախ, ստեղծում էր հեքիաթի նման պատմություններ և պատահած արկածներին առասպելի գույն էր տալիս և հաճախ

Ուստայի առօրյա կյանքը խառնում էր երազականի և անիրականի հետ, սակայն գրեթե, երևակայությունից և ստեղծագործությունից զուրկ էր նրա կյանքի այն մասը, որ գործի մարզում շփվում էր մարդկանց հետ: Ճշմարիտ էին նրա խոսքն ու արարքները: Ծիտակ էին նրա զրույցները: Իրականության զգացումից շեղված չէին նրա փոխհարաբերությունները միջավայրի հետ: Ուխտապահ էր և խոստում կատարող: Եվ սուտից ու խաբեությունից զզվելով զզվում էր:

Նրա ճշմարտախոսությունը և արդարասիրությունը այն աստիճան անկաշառելի էր, որ գյուղացիները նրան երբեք վկա չէին կանչում դատարանի առաջ իրենց վեճ ու կռիվների համար, որովհետև նա ճշմարիտ էր խոսում—փորձել էին այդ մի քանի անգամ և ճշմարտությունը հաճախ ևպաստավոր չէր լինում վկա հրավիրողի գործին: Մորթեիր, նույնիսկ բարեկամի համար սուտ վկայություն չէր տա: Ուստան ուներ այն հազվագյուտ շնորհքը, որ գիտեր տեղին ու դեպքին պատշաճ՝ դուրս քաշել իր հուշերի ծովից և մտքի ամբարից հարմար խոհ ու խոսք, առած ու առակ՝ համով-հոտով և կապել ընթացիկ զրույցի հետ:

Գյուղացիները հիացած նրա այս համեմված խոսքի ու պատրաստման շնորհքի վրա՝ խոստովանում են ամեն առիթի. «Ուստան նմանը չունեցող խոսքաշեն մարդ է»:

Ուստան, շատ տեղեր թափառելով, բնականաբար, իր լեզվի մեջ թափանցել էին զանազան գավառների բարբառներից որոշ տարրեր, ձևեր ու ոճեր, որով նրա խոսած լեզուն տարբեր բարբառներից մի տեսակ խառնուրդ էր դարձել:

Ուստան առանձին պահերին, օջախի կողքին թիկն տված՝ ծուխը բերանին, ստեպ իջնում էր հոգու մինչև խորքը և իր մեջ տեսնելով ուրիշներին շատ հաճախ անվրեպ հասկանում էր մարդկանց արարքների բուն արմատները:

Ներհայեցության այս պահերին խորհելով աշխարհի բանը, տեսածի ու լսածի մասին, մարդկանց պատահած դեպքերի վրա, մի խոսքով աշխարհը պոռնկե պոռնկ

լցնող անհամար բաների մասին, Ուստան իրեն հարցեր էր տալիս և իրեն պատասխանում:

Այդ պատասխանները ձևով նման էին ժողովրդի ասածներին: Նրանք իր կարծիքներն էին աշխարհի և կյանքի երևույթների մասին, համոզմունքով ասված, հավատի չափ ուժոր:

Ինքնավստահ հայտնում էր նա այդ կարծիքները համայնքի վեճերի ու հարցերի փոթորիկների մեջ, խնջույքների ժամանակ, օրվա սովորական ընթացքին: «Իմ դատողություններով էս էսման է», ասում էր Ուստան իր ասածը մեջտեղ ձգելով: Եվ դիտմամբ, շատ անգամ խոսք էր բաց անում, որ իր շինած նոր առածները աշխարհ նետե՝ փորձելու համար թե կարող են թռչել: Եվ արդեն ինքը այն հավատն ուներ թե՝ իր խոսքերը անվախ, պստիկ ճնճղուկների նման թռչում էին երդիկե երդիկ, գյուղե գյուղ: Եվ իրավ, նրա խոսքերը բերնե բերան ճամփա էին կտրում:

«Էսման է ասում Ուստան»— ու կնքում էին գյուղացիները իրենց զրույցը Ուստայի ասածներով:

Ինչքան որ Ուստան մեծ հավատ ուներ դեպի իր խոսքը, նույնքան էլ հավատ ու հարգանք ուներ «աշխարհագետ» մարդկանց խոսքի հանդեպ և անողոք պահանջում էր նույն վերաբերմունքը ուրիշներից իրեն հանդեպ: Թեև առանց այդ էլ Ուստան գիտեր արժեցնել իր խոսքը:

Սակայն հոգու մեղք էին գործում գյուղացիները, երբ ասում էին թե «Ուստան լավ մարդ է, բարի, ազնվական, հացով ու պատվով, բայց վայ թե խոսքի պոչը կոխես, օխտը տաշտ մեկ տեղ կերած հացը մեկ ժամում կմոռնա»:

Հոգու մեղք ու չափազանցություն էր այս՝ գյուղացիների կողմից, որովհետև Ուստան մյուս օրը, քենը մոռցած, նույն աղ ու հաց կտրող բարեկամն էր նվազ բացառությամբ:

Ուստայի այս խոսքաշեն շնորհքի համար էր, որ առանց նրան կոչունք տեղի չէր ունենում, որովհետև ինքն էր սեղանները ծաղկեցնողը:

Ուստայի մյուս գեղեցիկ հատկությունների համար էր, որ առանց նրան դավուլ չէր զարկվում, որովհետև ինքն էր

աղմուկով ու ախորժակով ուրախացողը և ուրախացնողը և միշտ պարերի գլուխ կանգնողը:

Գյուղացիները շա՜տ էին գնահատում Ուստայի փորձառությունն ու ճարտար լեզուն: Եղբայրների բաժանություն, տղա-աղջիկ կարգել, հաշիվ մաքրել վիճող ընկերակիցների միջև — Ուստան պիտի լիներ, իբրև միջնորդ կենսական այս կնճռոտ հարցերում գյուղական ջոջերի մեջ նստած և ուր որ լիներ նա՝ հաշտությունը ապահոված էր:

Բան էր, երբ լուր առներ թե շրջանի մի որևէ գյուղում երկու հարևաններ իրար հետ վեճ ու կռիվ ունեն, իսկույն ձեռքի գործը թողած՝ օղի առած նստում էր ձին ու թռչում կռվի գյուղը: Խրատելով, խնդրելով, անարգելով համոզում էր գժտվածներին ու հակառակորդների ձեռքերը իրար հաշտ միացնում, ապա տարած օղին հետները խմում, ուրախանում և ուրախացնում, և նորից դառնում իր գործին:

Ուստան շա՜տ առատաձեռն մարդ էր: Այդ հատկությամբ բազմաթիվ բարեկամներ էր վաստակել, շատ սըրտեր շահել: Հաճախ կասեր նա. «մեկ փոր հացը մեկ հոր հաց կշահեհ»:

Լինելով գավառի միակ անգերազանցելի վարպետը շատ դրամ էր անցնում ձեռքը և անխնա վատնում էր, նրա սեղանը իր սրտի պես բաց էր բոլորի, ծանոթ-անծանոթի առջև: Սակավ էր պատահում, որ մենակ հացի նստեր: «Առանց ընկերոջ հաց վար չի երթում»— ամենօրյա խոսքըն էր նրա:

Նրա «հացով» մարդ լինելու հռչակը տարածվել էր հեռու գյուղերում: «Ուստան համ ցորեն հաց ունի, համ ցորեն լեզու» ասում էին Նախճվան մտնող ճամփորդները, անցորդ-դարձողները և իջևանում նրա մոտ:

Սրտագին ընդունում էր Ուստան իջևանող ճամփորդներին, հյուրասիրում ու գոհ ճամփա դնում: Նրա բացակա պահերին Օսկանի ընտանիքը Ուստայի անվան համար նույն ձևով պատվում էր եկող-գնացողներին:

Հռչակավոր էր Ուստայի ընտիր ծխախոտը, որ ամեն ամսու գլխին մի կաղզվանցի բերում էր նրա համար: Այդ

ծխախոտը թուրքերից առանց մաքսի փախցնում էին այդ կողմերը: Ուստան գովելով ծխախոտը միշտ կատակով ասում էր. «Թուրքն անիծած, թյութունն օրհնած»:

Նրա թյութունը գրեթե գեղովի ծխում էին: Սակավ դեպք էր լինում, որ Ուստան տուփը հաներ և չհյուրասիրեր ներկաներին: Որոշ դեպքերում, երբ մեկին չէր առաջարկում, դա պերճախոս նշան էր հակակրանքի և թշնամության և մանավանդ վայրկենական դժգոհանքի:

Ուստան գաղտնի կամ հայտնի կերպով ձեռքից եկածի չափ, օգնում էր գյուղի չքավոր ընտանիքներին: Հաճախ դրամ էր պարտք տալիս սրան ու նրան, առանց տոկոսի, որ գյուղի սուրբն էլ այդ չի անում. և ոչ միայն չէր հիշեցնում պարտքը, այլ երբ հանդիպում էր պարտապաններին, չտեսնել էր ձևանում՝ նրանց չամաչացնելու զգացումից մղված: «Ուզես, գեշ մարդ կլինիս, Չավուշ ջան, ունենաս՝ բերեն կուտան»: Եթե Չավուշը չլիներ, Ուստան այս մասում կորած մարդ էր: Չավուշն էր, որ երեսը պնդացնելով պարտքերը հավաքում էր, առավելապես, կալ ու կուտի շրջանին, երբ սովորաբար գյուղացու ձեռքը բերանն է հասնում: Առատաձեռնությունը հասնում էր իր կատարին Ուստայի քավորության, հարսանիքների և ուխտագնացության ժամանակ: Ամենաթանկ ընծաներն էր առնում սանամայրների համար, հարսանիքներին առատ «կանչ ու շաբաշով» զարմացնում էր կոչնականներին: Ուխտավայրերում օր ու գիշեր՝ իրեն շրջապատած ընկերներով ու դավուլ-զուռնայով բոլորի ուշադրության ծիանին էր դառնում:

Այսպիսով, տարի չէր անցնում, որ Ուստան մի քանի ամուսնացող զույգերի խաչը չբռներ և բազմաթիվ անգամ տները մեռոն չտաներ:

Ուստա Կարոն շնորհքով—հնճարքով վարպետ էր, ինքնաբեր, նորույթներ էր մուծում ավանդաձև շենքերի մեջ. հարմար, օգտակար, գեղեցիկ նորույթներ:

«Ինձ նման օթևան շինող, օջախ կապող, կարմունջ բցող, աղբյուր հանող վարպետ արևելքից արևմուտք չի գտնվի»,— իրավունքով այսպես վկայում էր իր մասին

Ուստաև և վկա էր բերում իր ձեռքով շինած գեղեցիկ շենքերը, կամուրջներն ու աղբյուրները, որ ամեն մարդ գիտե և գովում է կառուցող ձեռքը:

Սալերի ապառաժ կողերին նայելով հասկանում էր նա, թե՝ որտեղից կարող է ջուր բխել: Քարերը ճեղքելով ջուր էր հանում, առու ձգում, և ջուրը գալիս էր ընտելացած կենդանու պես հնազանդ նրա ձևած շավիղով դեպի գյուղերն ու պարտեզները, և չէր փախչում այլուր:

Աննման բանդ-ամբարտակ կապող էր ձորակների առաջը, որով գոյանում էին փոքր կամ մեծ ավազաններ: Այս ավազաններում հավաքում էին անձրևի ջրերը՝ բոստաններ, առվույտի արտերը ոռոգելու համար և սակավաջուր տեղերի ուրիշ պետքերի համար:

Նրա ձեռքին՝ հացահատիկի կամ ջրի հորեր փորելը, սալհատակել, պատ քաշել — խաղ ու պար էին: Թեև քարեղեն գործերի մեջ եզակի վարպետ էր, ուղղակի «քարին հոգի տվող», բայց փայտի գործերի մեջ էլ խելքը հասնում էր: Կարող էր տան լավ ծածք քաշել, նույնիսկ «Սողոմոնին» երդիկ շինել զարդարուն խոյակներով և գեղեցիկ սյուներով:

Ով որ փափագեր մի հիմնավոր և աչքի ընկնող շենք ունենալ, անպատճառ Ուստա Կարոյին պիտի դիմեր: Ամեն մեկը պարծանքով էր ասում, թե իր օթևանը կամ ամբարը Ուստաև է շինել:

Վարձատրության մեջ Ուստաև չափավոր էր: Դեպք չի եղել, որ մեկը գանգատեր, թե Ուստաև շա՜տ վարձ ուզեց:

«Աստված կյանք տա մեր Ուստային, մեզի շենցրեց ու լիացրեց: Օրհնած է Ուստայի ձեռքը, շինածը քանդում չունի»... Ուստայի վարպետության մասին խոսելիս, անբաժան էին այս գնահատականները գյուղացիների բերանում:

Միայն մի անժխտելի պայման կար, որ պիտի կատարեին գյուղացիները, եթե ուզում էին փափագած շենքն ունենալ: Պիտի խորհուրդ չտային նրան և մանավանդ պիտի չքննադատեին նրան: Շենք շինել տվողը պիտի հայտներ իր մտադրածը և հավատով ուղղակի պիտի հանձնվեր նրան:

«Ուստայի նազերը պիտի քաշենք, որ նազելի բան չինե»,— հաշտ ասում էին գյուղացիները և դիմում նրան: «Ուստա ջան, սրտիդ ուզածի պես արա: Ձեռքդ բան չի պրծնի, թե որ ուզենաս: Քեզի հո սորվեցնելու չենք. դու լավը գիտես: Քո հավնածը մեր հավնածն է»:

Այսքանը բավ էր. մնացածը գիտնալիք բանն էր Ուստայի, որն ըմբռնելով շենքատերի միտքը՝ ախորժակով ընկնում էր գործի վրա, գալի պես ուտում էր գործը, ինչքան էլ որ դժվար ու մեծ լիներ: Թեպետ և չէր շտապում, բայց և ոչ մի ուրիշ վարպետ նրա չափ արագաձեռն չէր: Այնպես բարեխիղճ գործ տեսնող էր, որ ասես, իր համար էր շինում, ինչ որ շինում էր: Ձեռքը դիպած գործին ջանում էր կատարյալ ձև տալ:

Շենքատերը՝ Ուստի մոտը կանգնած, գովում էր, խրախուսում նրան. իսկ սա ոգևորված, ուղղակի, ստեղծում էր՝ միաժամանակ խոսքն ու գրույցը չընդհատելով:

Գործի ավարտից հետո շենքատերը տեսնում էր, որ իր սրտի ուզածից ավելի լավն է մարմին առել: Բայց եթե մի շենքատեր, անզգույշ մեկը, խորհուրդ տար գործի կեսին ու կամ քննադատեր, Ուստայի ցասմանն էլ սահման չկար:

Մի անգամ Ուստան մի հորի ներսաշուրջը պատ բաշելիս՝ հորի տերը ասում է.— «Ուստա ջան, գիտես բե՝ պատը մեկ քիչ գոգավոր է»... Ուստան անմիջապես կրակված բղավում է —«Չէ, հիմի գոգավոր է, տղա պիտի բերե» և զայրույթով սկսում է հորը հողով լցնել... Ներկաները միջամտում են, հորի տերը ներողություն է խնդրում և հաշտվում են: Եթե հորի տերը զղջումի չգար, ապաևէր՝ Ուստան այլևս նրա համար գործ չէր անի:

Սկզբներում, Ուստայի բնույթը գյուղացիների կողմից դեռ չներտած ժամանակները, այսպիսի շատ անհամությունններ են ծագել: Ուստան թողել է գործը կիսատ՝ խոով հեռացել է: Եվ հետո ի՜նչ խնդիրներ, ի՜նչ ճաշեր անուշի կապելու համար գժտությունը: Նրա բնությունը ճանաչելուց հետո՝ այլևս դաշն էին փոխհարաբերությունները:

Ուստան գիտակից լինելով գյուղացիների կարծիքներին իր մասին՝ թե ինքը շնորհքով վարպետ է, հասնող չու-

Ես իրեն, թե իր ձեռքը պստիկ աւտված է— ավելի ոգեվորվում էր և բոցավառվելով իր ստեղծագործ զգացումից, հաց ու հանգիստ մոռացած՝ ձգտում էր արդարացնել իր վարպետության վրա դրած մարդկանց հավատն ու համոզումը:

Ճշմարիտ է, որ Ուստան իր վարպետի անունը բարձր էր բռնում, գյուղերն ընկած գործ չէր որոնում կամ ուրիշների ձեռքից գործ չէր խլում, մարդիկ իրենք տեսնելով նրա ձեռագործները գալիս էին նրա ոտն, գիտնալով, որ Ուստան փողի համար կամ միայն փորի համար չէ գործում, այլև արհեստի սիրուն, իր բավականության համար, փառքի ու հոչակի համար, բարեկամին լավ շենք շինորհելու մտքով:

Սակայն նա իր ներքին անկեղծության մեջ ուրիշ կերպ էր տեսնում ճշմարտությունները: Նա գիտեր, որ արհեստներ սովորեց ոչ թե արհեստի սիրուն, այլ որպեսզի ապահով հացի միջոցով հնար ունենար աշխարհներ տեսնել:

Ուստան իրեն զգում էր թիրախից վրիպած, ուղին կորցրած: Բնավ արհեստը չէր նրա կոչումը:

Ի՞նչ էր նրա կոչումը: Մի խորհրդավոր, մի երազական բան, որ ամենևին լուծված չէր նրա մտքի համար: Մի անհուն, անձև փափագ, մի տարերային ուժ, որ քշում-տանում էր նրա սիրտն ու հոգին՝ և սուզում հեքիաթի և կապույտ հեռուների կախարդանքների մեջ:

Նա թեև տասը տարի կուշտ թափառելուց հետո արդեն տարիներից ի վեր ամուր նստել էր Նախճվանում, իր տունն ուներ, իր հացն ու ջուրը, շրջապատված բարեկամներով ու հարգանքներով, գոհ ու երջանիկ և թեպետ ամենօրյա հոգսերն ու հանուքները անթեղել էին նրա կիզող փափագը, սակայն երբեմն-երբեմն, հին փափագը կրակված օձի պես գալարվում էր նրա ներսում, ցավագին կերպով խայթում նրա հանգիստը և մղում նրան անհայտ երազին:

Այդ փափագը զորեղ էր Ուստայի կամքից, ինչպես անձրևի զեղումից ծագած հեղեղը զորեղ է թումբից: Որ մի օր չէ մի օր պիտի խորտակե թումբը և...

«Չավուշ ջան,— «ախ» քաշելով ասում էր Ուստան,— ես արհեստի համար չէի ծնվել: Ես՝ ո՛ւր, արհեստը ո՛ւր: Ես ուրիշ բանի համար էի ծնվել, ուրի՛շ, ուրի՛շ բանի համար... Մեջս մեծ փոթորունք կար, գիտեի, որ շատ մեծ մարդ կրնամ դառնա, աշխարքը մատիս վրա կրնամ առնի:

Էս աշխարքի մեջ մարդ մեծ եղնելու է, կամ իսկի գալու չէ: Պատիկ մարդը կամ եղած, կամ չեղած — ոտնատակի փոշի: Քար էլ որ կեղնիս, գլուխ կոտրող քա՛ր եղիր:

Չեղավ: Անտեր էի: Ճար չունեի: Աղքատությունը արհեստ սորվեցրեց: Հո չէի կրնա ուրիշի ձեռքին աշել: Կռահեցի, որ արհեստը մարդու հավատարիմ ախպերն է, որ արհեստավորի փորը մինչև կեսօրն է սոված: Հիմի, փառք աստծու, մեկ ձեռքս մեկելիս կարոտ չէ, միայն սիրտս արհեստիս կպած չէ: Ձեռքով կշինեմ, մտքով չգիտեմ ուր եմ: Մեկ աչքս շինածս պատի վրա է, մեկէլ աչքս (մամ եկած հետու) ճամփեքի վրա: Ետած եմ հորի մեջ, բայց սիրտս ինչ իմանաս, ո՛ր ծովերու վրա է, ո՛ր երկրներու մեջ...

Ա՛խ, կուզենայի մեծ գործեր տեսնեի, անունս աշխարքի չորս պոչերը ձեռ տար, թե չէ, սիրտս կպատռվի՝ քար տաշել, պատ շարել, հորի մեջ ետել...»:

Եվ սակայն, շուտով, սեփական վիճակի հետ հաշտված՝ դառնում էր իր գանգատին. «Չավո՛ւշ ջան, հիմի պիտի ասես, թե որ արհեստս չեմ սիրե, հապա ինչի՞ լավ գործ կտեսնեմ: Պատճառն էն է, որ ձեռքես բան չի պրծնում. քարն ու ջուրը ծառա են ձեռքիս հնճարքին:

Ու ի՞նչ խոսք, որ մենակ հացը չէ, որ ձեռքս բանի կդնե, վարպետության պատիվն էլ առավել կա: Ու հորեն տեսնում եմ որ արհեստից պատվավոր բան չկա: Առուտուրը սրտովս չէ, էժան առնել — թանկ ծախել. ի՞նչ շնորհք կա էստեղ: Բայց արհեստը աշխարք է շենցնում, գեղ ու քաղաք է շինում, աստծուն ընդունակ բաներ — ժամ ու վարժարան: Ինչքա՜ն բարություն է, մանավանդ ջուր բերես. անցնող-դարձնող, մարդ ու անասուն հարուր տարիներով պիտի խմեն ու անունդ օրհնեն:

Շինածդ շենքերու ճակատին անունդ անմեռ կլնի, հիշատակդ կտեսնեն ու կասեն, լույս դառնա հոգիդ, ա՛յ,

երևելի վարպետ, ինչ անմահական ժառանգ ես կանգնեցրել:

Խոսքս վարպետի մասին է, Էդոր համար էլ անունիս ու պատվիս վայել թափում եմ ձեռքիս գումար շնորհքն ու ճնճարքը»:

Այս խոսքերի վրա Ուստաև հպարտ բարձրացնում էր գլուխը և հպարտ նայում Չավուշին և Չավուշի միջոցով ողջ աշխարքին՝ թե ներկա, թե գալիք:

Իր բոլոր այս հատկությունների համար Ուստաև շատ սիրված էր ու հարգված բոլոր գյուղերում: Սիրված ու հարգված իբրև շեն սիրտ ու հացով ծախսող մարդ, խոսքաշեն ու գլուխվարպետ, իբրև քավոր ու բարեկամ, աշխարհատես ու փորձված մարդ:

Մարդամոտ լինելով, շատ բարեկամներ ուներ և նրանց տներում իր պատվավոր տեղն ու բարձը: Մանավանդ մի երկու մտերիմ ընկերներ ուներ, փոխադարձ իրար հոգի տվող:

Գործից ազատ պահերը Ուստաև գնում-շրջում էր գյուղերը, անբաժան չոնգուրի հետ, քեֆ էր անում, ուրախանում: Եվ ուր որ գնում էր՝ ուրախությունը հետն էր տանում:

Ամենաժողովրդական մարդն էր Ուստաև, իր անվան շուրջը ամենից շատ խոսք ու զրույց դարձնողը:

Եվ ամեն տեղ «բարձրաթոռ էր և ամեն տեղ հատաջավոր»:

***

Չավուշը թյուրքահայ էր, Բասենի գյուղերից, ուսկից պատանի հասակում փախել է Ռուսահայաստան, և Երևանի գյուղերում մշակ-բանվոր լինելով մի կերպ գլուխ էր պահել:

Ճակատագի՞րն էր, ո՞վ էր, ի՞նչ էր, որ Ուստային ու նրան հանդիպեցրեց իրար:

Երբ Ուստաև պարսիկի հողից նոր վերադարձած Էջմիածնի գյուղերում արհեստը բանեցնելով թափառում էր,

մի օր պատահեց Չավուշին և իր մոտ բանվոր առավ: Տեսավ նրան համեստ, չարքաշ, լուռ աշխատասեր, և մտերմանալով սիրեց ու կապեց իրեն հետը:

Չավուշը էլ առաջին օրից անվերապահ սիրեց Ուստային, իր կողմից էլ կապվեց նրա հետ և նվիրվեց նրան բոլոր սրտով: Սերը եղավ նրանց հոդող օղակը:

Այդ օրվանից անտերունչ Չավուշի համար արև ծագեց և աչքերը լույս տեսավ:

Այդ ժամանակ Չավուշը կլիներ մոտ 24—25 տարեկան: Ուստան նրան իր գիտցած արհեստներից սովորեցրեց. ժամանակի ընթացքին Ուստայի ձեռքի տակ նա այնքան վարժություն յուրացրեց արհեստների մեջ, որ կարող էր նույնիսկ լավ վարպետ չեղած տեղում վարպետ կոչվել: Ուստայի բացակա պահերին կարողանում էր նրա գործը շարունակել, և արդեն մանր-մունր բաներն ինքը միայնակ էր շինում:

Չավուշն իրեն հավիտյան երախտապարտ էր զգում, որ Ուստա Կարոյի նման մի վարպետի շնչի ու շնորհքի տակ մարդ դարձավ, մարդամեջ մտավ, գլխին մեծ եղբայր ունեցավ և ապահով հաց: Եվ բացի արհեստներից, սորվեց շա՜տ իմաստուն բաներ, խոսք ու զրույց, առակ ու առած:

Սակայն ինքն էլ իր փոքրիկ թափառումների մեջ ուսել էր բավական երգ ու զրույց, աշուղական ու թրքական տաղեր. մանավանդ, որ անուշ ձայն ուներ և երգելու շնորհք. ամեն անգամ, երբ Ուստան չոնգուրն էր ածում, ինքն էլ ձայնակցում էր նրա նվագին:

Չավուշը Ուստայի պես միջահասակ էր, մի քիչ նիհար, սև մազերով, թուխ դեմքով: Հոնքերը այնքան թավ էին, որ ստվեր էին ձգում աչքերի խորշերի վրա, ուր ջինջ սպիտակի մեջ ավելի ցայտուն էին սև պտուղները: Տխուր էին այդ աչքերը և շատ բարի. երբ նայում էր, երեխայական միամիտ ու պարզ սիրտն էր, որ նայում էր մարդկանց ու աշխարհին: Կանոնավոր, սուր քիթ ուներ, որ մի փոքր կռացած էր հաստ բեղերի վրա:

Հագնվում էր Ուստա Կարոյի նման, միայն ժամացույց

չուներ: Երկար տարիներ ապրելով Ճիրակում փոխել էր մայր-բարբառը և խոսում էր տեղացիների պես, միաժամանակ յուրացնելով Ուստայի խոսքն ու ոճը:

Բնությունը մեղմ էր նրա ու հանդարտ, ասկավախոս էր, ծանր ու քիչ հուզվող, գլուխը կախ, տոկուն աշխատող: Գաղտնապահ էր և չափավոր իր վարմունքի և կերուխումի մեջ: Խնայող էր շատ, եթե նա չլիներ, Ուստան փողի երես չպիտի տեսներ, ամսվա վաստակածը մի օրում ջուր պիտի դարձներ: Նա էր, որ «ան օրվա» համար «ճերմակ փող» էր ետ ձգում:

Ուստան այս հատկության համար նրան շինել էր իրեն գանձապահը. նա էր պահում եղ ու մուտքի հաշիվը:

Ուստան թեև աշխատավարձը սկզբում բոլորը առանց հաշվելու Չավուշին էր տալիս, և իսկապես ուզում էր, որ սա էլ իրեն գրպանի-ծախքի համար խնայողաբար փող բաց թողնե, սակայն այս միայն բարի ցանկություն էր մնում, որովհետև կարճ ժամանակի մեջ զանազան պատրվակներով դրամ էր կորզում գանձապահից, առատաձեռն ծախսելու և սրան-նրան տալու համար: Չավուշն էլ չվրստահանալով մերժել վարպետին, փոխարենը դիտմամբ սուտ ու սխալ, բարդ հաշիվներով մոլորեցնում էր նրան, և այսպիսով փող տնտեսում:

Չավուշը իր համար առհասարակ բան չէր գնում, առանձին ծախսեր չէր անում, որովհետև Ուստան ինչ որ առնում էր իր համար, նույնը հավասարապես ընկերի համար:

Գյուղացիները գտնում էին, որ նրանք ընդհանուր գումարի մեջ շատ նմանում էին իրար, «ասես թե կիսած խնձոր լինեին»: Սակայն ճշմարիտ չէ այս: Ճշմարիտը այն է, որ Չավուշը երկար տարիներ ապրելով Ուստայի հետ, կրել էր նրա ազդեցությունը, մանավանդ արտաքուստ, յուրացնելով նրա շարժ ու ձևերը, նրա ոճը, նույնիսկ ձայնի շեշտերը: Ներքին բովանդակությամբ էլ քչից-շատից նմանվել էր Ուստային, թեև ակներև տարբեր խորք ունեցող մարդիկ էին: Բայց դրսերևույթով՝ Չավուշը Ուստայի արձագանքն էր:

Գյուղացիների ասումով՝ նրանք երկուսով մի հոգի են

մի մարմնի մեջ. աջ կեսը՝ Ուստան է, ձախ կեսը՝ Չավուշը: Եվ այսպիսով իրար լրացնում են:

Այս պատկերով ուզում էին ասել, թե Ուստան ավելի շնորհքով, ընդունակ մարդ է, քան Չավուշը, ինչպես աջ ձեռքը ձախ ձեռքի վրա:

Մի բան, որ խորապես բնորոշում էր Չավուշին և խիստ տարբերում Ուստայից, դա նրա զգացում ու տարր դարձած ճակատագրի հավատն էր. համոզված ճակատագրապաշտ էր նա, բառի իսկ իմաստով: «Ինչ ըլալիք է՝ պըտի ըլնի. ինչ որ գալիք է՝ պըտի գա. ինչ եղել է, չէր կրնա չեղնել. ինչ որ չի եղե, չէր կրնա եղնել». միշտ այս էր կրկնում նա պատահած կամ սպասելիք դեպքերի համադիման:

Այս հավատը դարձրել էր նրան անվրդով, անալլաղ, ճանգիստ ու համբերող, հակառակ Ուստայի բնույթին, որ բուռն ու բորբ էր, անզուսպ ու անհամբեր:

Նրանք մի բանի մեջ բոլորովին նման էին իրար — երկուսն էլ դյուրահավան ու բարի, մարդկանց հավատացող ու մարդասեր:

Ուստան միշտ Չավուշի խորհրդին էր դիմում մի գործ ձեռնարկելիս, իսկ սա առանց Ուստայի մի ոտը մյուս ոտի առջևը չէր դնում:

Գյուղացիները շա՜տ անգամ էին տեսել, թե ինչպես նրանք գյուղից դուրս, իրար փաթաթված մանե էին գալիս, խոսում ու խորհրդակցում:

Նրանք չտեսնված ու չլսված սիրում էին իրար, սիրում ու անվերապահ իրար հավատում:

Մեկի դեմքը մյուսի հայելին էր. երբ մեկը տխրում էր, մյուսի երեսի վրա էլ իսկույն արտացոլում էր ընկերի թախիծը: Երբ մեկը մի փոքր հիվանդանում էր, մյուսն էլ ուղղակի հիվանդ էր դառնում ու կողքին պառկում: Նրանք առանց «Վարպետ ջան, Չավուշ ջան» քաղցր խոսքերի իրար չէին դիմում:

Գյուղացիները հիացած էին այդ ընկերական-եղբայրական մեծ սիրո վրա. «Ծրագ առնիս, արար-աշխարհ ժուռ

գաս, Էդպես սիրով ախպեր ու ընկեր չես գտնի,— այսպես էին դատում գյուղացիները:

Թե նրանց որի՞ սրտում սերն ավելի ծանր էր կշռում, գյուղացիները անհնար էին գտնում ճիշտ պատասխանել. քանի որ նրանց զգացումները իրար հանդեպ մի արդար ու նուրբ կշեռքի երկու դաշն ու հավասարազոր ճժարներ էին:

Միայն մի բան աչքի էր ընկնում, այն, որ Չավուշը բացի սիրուց ուներ շատ մեծ հարգանք ու պատկառանք դեպի վարպետը. նրա խոսքերը իր համար սրբություն ու պատգամներ էին՝ անքննելի, անկասկածելի: Նա վարպետի առջև երբեք անվայել խոսք չէր զրուցում, երբեք անվայել հանգաք չէր անում, երբեք նրա խոսքը չէր կտրում, թեկուզ շաքարով:

Նրա համոզմունքով՝ Ուստայի պես խելոք, բանգետ, ազնիվ մարդ չկար աշխարհի երեսին, և մեծ ակնածություն ուներ նրա վարպետության հանդեպ. այնպես որ չնայելով երկար տարիների սիրով ու համերաշխ համակեցության, անկեղծ ու բացարձակ մտերմության — Չավուշը իրեն երբեք թույլ չէր տվել նրան «Կարո» կոչելու, այլ միշտ «Ուստա, վարպետ» տիտղոսներով, և ոչ նույնիսկ «Ուստա Կարո» ձևով:

Եվ հոգով ծառայում էր ու սպասավորում Ուստային ո՛չ միայն որպես ավագ և շա՛տ սիրելի ընկերի, այլև որպես պատկառելի և երևելի վարպետի:

Եվ պատրաստ էր վարպետի պատվի ու կյանքի համար ողջ աշխարհի դեմ կռիվ դուրս գալու՝ իր անձը զոհելու աստիճան:

Չավուշն էլ իրենց եղբայրացման առաջին օրերում հետևյալն էր պատմել Ուստա Կարոյին իր կյանքի վեպից:

Թե իրենց շեն տունը կոչվել է գյուղում Չավուշենց տուն. մեծ հայրը երկար ժամանակ Ստամբոլում եղել է հրշեջների գլուխ-տասնապետ՝ Չավուշ. այդ պատճառով ամբողջ տոհմը Չավուշենք կոչումով է հայտնի եղել շրջապատում և կառավարության առաջ:

Ուստան Չավուշենց հին տան պատվի համար Փիլոսին

Չավուշ կոչեց. գյուղացիներն էլ որդեգրեցին այդ ձևը, և սրբագործվեց Չավուշ մականունը:

Չավուշի բեղերը նոր ծաղկած՝ գլխին մի փորձանք է գալիս, որ պատճառ է դարձել հայրենի հողից փախչելու:

«Վարպետ ջան,— խոստովանել է Չավուշը,— եղավ որ եղավ, մի օր իմ հորս ծանոթ մի քուրդ քառսուն եզան բեռ ձմերուկ բերեց, լցրեց հորս ամբարը՝ որ ծախե: Ես էլ տղա-մանուկ էի, ընկերներիս հետ սարքել էինք, գիշերով ելնում էինք ամբարի երդիկը, նիզակը կոխում էինք երդիկից ներս, ձմերուկների մեջ էինք խրում, դուրս հանում ու տանում կալերը, ուտում: Քուրդը տեսավ մեկ-երկու որ ձմերուկները կեցած տեղերը հատնում են, նշան է անում ու նշանից իմանում է, որ գողցող կա, ուզեց բռնել գողը. գիշերը երթում է պառկում երդիկի տակը, ձմերուկների վրա, մենք էլ անտեղյակ, ելանք նորեն գողութենի. նիզակը կոխեցի, տեսնեմ «ա՜խ, օ՜ֆ» ձևեր ելան, քաշեցինք դուրս, ի՜նչ տեսնենք, քուրդը նիզակիս հետ կախ ընկած ելավ. նիզակս մտել էր խեղճի կուրծքը. արունը վազում էր. ընկերներս փախան, ես էլ տեսա որ բանը կհասնի դատավորին ու ինձի կմեղացնեն, կամ քուրդի ազգականները ոխ կպահեն ու ինձի մի օր չէ մի օր կզարկեն կսպանեն, գլուխս առա ու պուկ ռուսի հողը: Էլ չիշխցա ոտք կոխեմ ծնողքիս երկիրը, կյանքը ամեն բանից անուշ է:

Էսպես դառա անտուն-անտեր գաղթական, ընկա Ղարսա, Երևանու գեղերը, շա՜տ գեշ օրեր տեսա, անոթի-ծարավ, չարքաշ փոր-հացի մշակ, գեղե գեղ, դռնե դուռ, մինչև որ տեր աստված գթաց, քեզի պես գլուխ ու ընկեր ղըրկեց ընձի համար»...

Ուստա Չավուշի այս սրտառուչ խոստովանանքի վրա՝ արցունքոտ աչքերով գրկել է նրան ու կսկուծ համբուրել:

Ու այն օրվանից դարձան, մնացին մինչև հիմա և պիտի մնան էլ մինչև մահ հարազատ եղբայրների պես, երկու անբաժան ընկերներ — մի հոգով և մի քսակով:

Ուստան ու Չավուշը ունեին և մի հատկություն ուղեկից, իրենց աշխատանքներին ու ճանապարհներին անմեկին ընկեր — Միրզան:

Գյուղացիները այսօրվա պես հիշելով նրանց Նախիջևանի կողմերը երևալը, ծիծաղելով ասում էին. եկան առաջները ձգած «էշ ընդ ավանակի»:

Արդարև, նրանք այն ժամանակ երկու էշ ունեին՝ մատակ-էշը իր քուռակով: Տարիներ անց, մայր էշը ծերացավ և արևը թաշխեց իր որդուն, որը մեծացավ և իրեն հերթին դարձավ իր տերերի գործակիցը:

Ավանակը աչքը բացեց այդ գյուղերի ճանապարհների և ծանոթ-բարեկամ դռների վրա, և քաջ կարդացող վարժապետի պես, որ գոց գիտե գրքերը, այնպես էլ նա գոց գիտեր, խուփ աչքերով, այդ ուղիներն ու դռները: Դրա համար էլ Ուստան անունը դրեց «Միրզա» (գրող-կարդացող վարժապետ): Երբ տերերը ճամփա էին ելնում, Միրզան նրանց նայելով իրեն բնազդի ուղիղ թելադրումով, հասկանում էր թե որ գյուղը պիտի երթալին. գյուղը մըտնելիս, նորից մի հայացք ձգելով տերերի աչքերի և շարժումների մեջ գուշակում էր՝ թե ո՞ւմ դուռն էին ուզում գնալ: Շա՜տ հաճախ ստույգ էր լինում նրա կանխազգացումը:

Նրա այդ զարմանալի հատկության վրա՝ Ուստան ասում էր. «Միրզան իշու երես ունի, մարդու խելք, ինչպես որ ներհակը կա, մարդու երես ունեցող, իշու խելք»:

Ծերմակին մոտեցող գորշ գույն ուներ Միրզան, խոշոր կազմվածք, հաստատուն ու վճռական քայլվածք: Երբ քարքարոտ կածաններով մագլցում էր, ա՜յնպես հաշվով էր ոտները փոխում, ա՜յնպես խոհուն, որ Չավուշը ոգևորված բացականչում էր. «տո՛, յահուդու պես հաշիվ գիտե, տեղոց տեղ խելքի կտոր է, սիրտս ուզում է՝ բռնեմ պաչեմ էդ խելացի ճակատը»:

Ինչպես որ Միրզան հասկանում էր իր տերերի միտքը, նույնպես էլ նրանք էին հասկանում նրա միտքը, մանավանդ Չավուշը, որ գրեթե միշտ ինքը խնամելով, ավելի մտերիմ էր դարձել նրան և այդպիսով գիտեր թե Միրզան

ի՞նչ է ուզում, հոգնե՞ց արդյոք, նեղացավ, քաղցած է, ծարա՞վ է արդյոք...

Միրզան գիտեր և նրանց սովորույթները: Օրինակ, Ռուստան սովորույթ ուներ, որ ճանապարհին հանդիպող ելնող ծանոթ մարդուն, երբեմն էլ անծանոթին, կանգնեցնում էր, մի-մի ծուխ ծխում, հարցուփորձ անում, հաճախ, սիրտն ուզածի հետ նստելով ճամփի եզրին օղի անուշ անում, խոսում, հանգչում.— և Միրզան, այսպես, իսկույն կանգ էր առնում հանդիպողի առջևը, և ականջները լարած լսում նրանց զրույցին:

Առակի կարգ էր մտել գյուղերի մեջ ավանակի այս հատկությունը:

«Ի՞նչ Ռուստայի ավանակի պես էլի կանգնար». ծաղրով ասում էին գյուղացիները նրան, ով կանգ էր առնում բանի-գործի ժամանակ մի մարդ տեսնելիս:

Բացի այդ՝ Միրզան ուներ և մի եզակի հատկություն, գովական ու անմնան — նա գերծ էր իշությունից, որից ազատ չէ աշխարհում ոչ մի էշ: Նա համառ չէր: Ո՛չ մի անգամ, ճանապարհին, գետի մեջ, կամուրջի վրա, ուրիշ կամապաշտ էշերի նման, չէր ոտները չորս չոռում կանգնում, ո՛չ առաջ գնում, ո՛չ ետ: Երբեք գյուղի նեղ փողոցներում չէր հրում անցորդներին, կամ բեռով գնում մեկի դռանը սեղմ տնկվում, տան ելքն ու մուտքը բռնում:

Եվ նրա այս ընտիր հատկությունների համար տերերը շա՜տ էին սիրում նրան. լավ կերցնում էին, երբեք չէին բարկանում վրան, իսկ հարվածել — եղած բան չէր: Ձավուշը, կարծես, չվիրավորելու համար բնավ «չո, չո, չոշ» չէր ձայնակցում, այլ՝ «Միրզա, մի քիչ էլ գնա, էս է հասանք, Միրզա, մարալա» և Միրզան սիրալիր ձայնից թև էր առնում:

Օսկանը թեև ձի ուներ, և Ռուստան ու Ձավուշը օգտվում էին, երբ ուզենային, սակայն արհեստի բերումով գյուղերը շրջելիս, իբրև գործիքների և ճամփու պաշարի կրող, միշտ Միրզային էին գործի դնում, որովհետև հարմար էր և կարող էին միշտ հետներն ունենալ:

Գյուղում զանազան պետքերի առիթով մարդահամար անելիս, Ուստան կատակով ասում էր. «Միրզայիս էլ հաշվեք»։

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ

Ուստա Կարոն ներս մտավ իր այվանը — օթևանը։

Ներս մտնելով չուխան հանեց, կախեց պատից ու ընտեց իր մշտական տեղը՝ բուխարիկի աջ կողմը։ Իր այդ մշտական տեղն ու կարմիր մեծ բարձը զիջում էր միայն շատ պատվավոր հյուրերին։

Բուխարիկի մարմանդ կրակից վառեց ծխախոտը և թիկն տվեց բարձին։ Նրա բուխարիկում միշտ մխում էր աթարը, տարին տասներկու ամիս, օր ու գիշեր. երբեք պիտի չկտրվեր նրա օջախի ծուխը, ուր որ լիներ նա.— «Իմ ծուխս չպիտի կտրվի. ամպերու հետ մաև պիտի գա»,— ասում էր Ուստան, և տանեցիք սրբությամբ կատարում էին նրա իղձը։

Ուստան ծխելով մտածում էր վաղվան անելիքների մասին, սանամորների այցի մասին։ Այդ մտածուն մտքերի մեջ սուզված՝ գլուխը դրեց բարձին ու չիմացավ, թե ինչպես աչքերը փակեց։

Երեկոյան, ժամի զանգերի հետ, ներս մտավ Փիլոսը՝ Զավուշը, գոլորշիով պատած սամովարը գրկին։ Սեղանը զետեղեց սովորական տեղում, թեյի պարագաները հանեց պահարանից։ Բաժակների աղմուկից զարթնեց Ուստան. գնաց դուրս, լվացվեց ու եկավ նստեց թեյի։

— Զավո՛ւշ ջան, ամեն օրվա վրա էսօր քեֆս աբբա Մարկոսի է։

— Աստված ամեն մարդու սրտովը իրեն կուտա,— ասաց Փիլոսը և բաժակները լրեց։

Եկան Օսկանն ու հացահատիկ առնող գյումրեցի վաճառականները։

— Բարի՛ իրիկուն,— ասացին նրանք:

— Բարով եկաք, համեցե՛ք, նստե՛ք,— պատասխանեց Ուստան և տեղ ցույց տվեց նրանց: Չորս հոգի էին գյումրեցիները. աչքի պոչով Ուստան մեկիկ-մեկիկ տնտղեց նրանց:

— Էս էլ մեր Ուստա Կարոն, էս էլ մեր Փիլոս ախպարը,— ասաց Օսկանը,— ճանա՛նչ եղեք:

Մոտեցան իրար ձեռք տվին:

— Բարո՛վ տեսանք,— ասաց Ուստան և մի փոքր անց շարունակեց,— ախպորտի՛ք, չա՛յ անուշ արեք:— Եվ ինքը կարմիր թաշկինակով վերցրեց բաժակը և մեղմ ֆոֆոցով սկսեց խմել:

— Ի՞նչ նորություն կա Գյումրի, մենք գեղի անկյուն ընկած՝ բան չենք իմանա:

— Առողջություն, ուրիշ էնպես բան չկա,— պատասխանեց քաղաքացիներից մեկը, որ մի քիչ սպիտակած մարդ էր:

— Հարստացող քիչ, աղքատացող շատ,— ասաց մի ուրիշը:

Փիլոսը թեյի բաժակները շարեց հյուրերի և Օսկանի առջև:

— Ներսի աշխարհներն ի՞նչ կա, չկա,— հարցրեց Ուստան:

— Հա՛, մենակ գազեթներում կգրեն, թե էս տարի աշնանը աշխարհքը պիտի կործանի. կան մարդիկ, որ շատ կվախենան:

— Իսկի էղնելու բա՞ն է. աշխարհք կործանի. ու կործանողն ո՞վ է,— խնդալով ասաց Ուստան.— ի՛նչ տուտուց բան ըլնի, քաղքներեն դուրս կուգա, շա՛տ գիտնական մարդիկ շա՛տ անգետ կխոսեն:

— Չգիտեմ, գազեթները կըսեն, իմ խելքիս էլ չի պառկի,— արդարացավ գյումրեցին:

— Գազեթներն էլ մարդիկ կգրեն, ո՛ր ավետարանի մեջեն չէ, որ աստծու խոսքը ըլնի. խելքիս տունը չի մտնի էդպիսի բաներ:

— Ինչո՞ւ չէ, Ուստա, կրնա ըլնի, աշխարհացում-թո-

թափելն աստեղց, ըշտե գրած է ավետարանի մեջ,— վկայեց գյումրեցիներից մեկը:

Ուստան գլուխը չկորցրեց, լսելով ավետարանի ապրացույցը, և ողղակի նայելով խոսակցի աչքերին՝ հատոզական շեշտով ասաց.

— Էդ ուրիշ բան, գիտեմ, հայտնի է. ասածդ ավուրն աներեւ դատաստանի մասին է. էդորեն ջոկ, խելքիս չի ճստի գազեթներու գրածը. աշխարհք եղել է, կա ու կմնա. հավի բուն չէ, որ քանդվի. մեկ էլ որ,— ժպիտը խաղացնելով շրթունքների վրա, ավելացրեց.— քանի կճիկը կա, աշխարհք չի անցնի:

— Խելոք խոսքին ո՞վ բան կըսե,— ուրախ ծիծաղով ասացին վաճառականները: Ուստայի ինքնասիրությունը գոհացավ:

— Փիլո՛ս ջան,— ասաց,— մի հատ էլ լից. էսօր չալը շատ դուր կուգա:

— Էնոր համար, որ էսօր մախմուռ ես,— վրա բերեց Ծականը:

— Ի՞նչ է, Ուստան քեֆի մե՞ջ է եղել,— հարցրեց հետաքրքրված գյումրեցիներից մեկը, որի քթի կարմրությունից երևում էր, որ արաղի լավ բարեկամ է: Զարմացքի շեշտ էր դրված նրա հարցի մեջ, թե ինչպես է, որ գյուղում իր ներկա եղած օրերում քեֆ է եղել, ու ինքը չի մասնակցել հյուրասիրական իրավունքով:

— Երեկ, Բագրան, քեֆ, ի՞նչ քեֆ, հով տեղ, ջրի ափին, հինգ գավ գինի խմեցի, պակասը որ չասեմ. արաղն էլ իրեն կարգին:

«Փչան կերևա Ուստան»,— իրար ականջ շշնջացին վաճառականները:

— Մարդ կրնա՞ հինգ գավ գինի խմե,— զարմացած հարցրեց գյումրեցին:

— Մարդը գիտե,— կտրուկ պատասխանեց Ուստան, վերցնելով չորրորդ բաժակը...— Է հե՛յ, անցած օրին օր չի հասնի. երեկ էս ժամանակս քեֆս սուլթան Մուրադի քեֆն էր,— կարոտով բացականչեց Ուստան, ժամացույցը հանելով.— էս ժամանակս, ուղիղ ժամը 9-ին:

— Յա՛,— հանկարծակիի եկած գոչեց գյումրեցիներից մեկը,— ինչպե՞ս թե ժամը 9-ին, քու ժամացույցդ ի՞նն է, Ուստա:

— Բա քանի՞սը կուզես ըլնի,— ասաց Ուստան:

— Իմս օխթն է՝ բանըմ սուտ. քո՛ւկդ, Գևոր, քո՛ւկդ, Օնես:

— Շա՛տ սուտն է, ինչպես թե բանըմ սուտ,— քմծիծաղ տվեց Ուստան:

Գևորն ու Օնեսը նայեցին ժամացույցներին:

— Մերն էլ օխթեն բանըմ պակաս է. էդպես էլ կըլնի. արևը դեռ մեր չի մտել:

— Ուստա ջան, ժամացույցդ շա՛տ առաջ է, հրեղեն ձիու պես կվազե. էդպես որ երթաս, գարնան ծերին չհասած՝ ձմռան մեջտեղը կըլնիս,— մեղմ ձայնով, բայց ծաղրի շեշտով ասաց առաջին խոսող գյումրեցին:

Ուստային թեև հաճելի եղավ ձիու համեմատությունը, բայց ընդհանրապես սրտին դիպավ՝ նկատելով նրա խոսքերի խորքում ծաղրանք: Եվ ուղղակի թշնամաբար տրամադրվեց դեպի նրանց:

— Ո՛ւմ ժամացույցը. իմ ժամացույցիս հատը չկա ի վեր աշխարհքի. ես ի՞նչ անեմ, որ ձերը ձեզի պես օխթը տարվա գոթի է:

Ասաց Ուստան և թյուրյունի տուփը գոտիկի ծալքերից հանելով՝ արագ-արագ մի գլանակ փաթաթեց, ապա ակնհարև թշնամանքով գյումրեցիների գլխի վրայով նետեց տուփը Օսկանի գոգը, որ սա էլ գլանակ շինե: Հյուրերը նրա այս վիրավորիչ վարմունքը չհասկանալ ձևացրին:

— Լավ, մեկ տուր տեսնենք ժամացույցդ. կարելի է, որ անթիկա է,— ասաց ավագ գյումրեցին՝ ձեռքը մեկնելով:

Ուստան տվեց ժամացույցը. գյումրեցին ուշի-ուշով նայում էր: Ժամացույցը «Օսմանլի» կոչված տեսակիցն էր, կափարիչը ուռուցիկ, բարձր, արծաթյա, հաստ ու կոպիտ. թվերը զուտ արաբական նշաններով. ձայնը ամուր չընկչընկում էր: Ուստան շունչը կտրած սպասում էր վճռին:

— Ուստա ջան, ժամացույցդ կնմանի բռնութու (քթախոտի) տուփի...

Այս անքաղաքավարի համեմատությունը Ուստային ճանեց ինքն իրենից. մի փոքր լռեց, բարկությունը քանի գնաց աճեց, հոնքերը հավաքեց իրար, աչքերը մեծ-մեծ բացեց և սրտի որոտմունքին ազատ ելք տալով, ասաց.

— Է՛ս գյումրեցիք... տո, դուք ի՞նչ կհասկանաք. ձեր քաղաքեն դուրս դուք հավկուր եք. ի՞նչ կհասկնաք բանի լավն ու գեշը. արաղի մեծն պատիկը մենակ գիտեք. ուրիշ բան — վրա՛ս գրե, զի քո է:

— Ի՞նչի, էլ ժամացույց չե՞նք տեսել, քուկդ որտեղե՞ն է որ...

— Ի՞մս.— իմս Էրզրումի մութասարիֆի ժամացույցն է. հայտնի խմբապետ Փալաբեխ Նադոն, էն որ Բասեն կնըստի, էն սպանել է էնոր ու ժամացույցը վրայեն առել: Մութասարիֆին էլ Էրզրումի վալին է նվեր տված եղել: Հինգ տարի առաջ Ղարս հանդիպավ խմբապետն ինձի ու հիշատակ տվավ. ես էլ իրեն լավ քեֆ նշանց տվի: Ի՛նչ խոսք, որ ժամացույցս անթիկա է. տարա ժամացույց շինող մեկ անվանի վարպետի ցույց տվի. Փիլոսն հետս էր. էս-տեղ սուտ բան չկա...

Փիլոսը այդ խոսքի վրա գլխով լռելյան հաստատեց փաստը:

— Էդ ժամացույցը շինողն ասավ, թե՝ ժամացույցդ տեսոք հասարակ է, բայց ընտիրն է. քարերը ամենքը անգին են ու իսկի մաշելիք չունեն, և էլ մինչև իրարուց բաժանվիլը ժամացույց շինողի երեսը չի տեսնելու, ասավ. ձերը տղին քսան թուման չի տա... հիմի դուք ի՞նչ կասեք. հինգ տարի է ձեռքս ի՛նչ կքաշե: Շատ ժամացույցներ եմ առել ու ետ ծախել, էսպեսը չեմ տեսել: Էն տարի Էջմիածին էի գնացել, հայեցի տեսա իջման տաճարի զանգերի հետ կխոսար. ամեն մեծ մարդոց ժամացույցի հետ կխոսա. Խրիմյան Հայրիկի ու եպիսկոպոսների: Անիի ներսերեն գիտնական երևելի մարդիկ էին եկել, էնոնց ժամացույցներու հետ կխոսար: Մեկ խոսքով, կարճ ասեմ, աստծու անսխալ ժամացույցներու հետ՝ ըսել է արևի, աստղերու, լուսնյակի ու աքլորներու հետ կխոսա, արդար կշռքի պես. հիմա հասկացա՞ք...

Ուստան ոգևորված ավարտեց իր ժամացույցի գովքը և հաղթանակով՝ նայեց գյումրեցոց երեսին: Նրանց աչքերի մեջ մի զսպված ուրախություն էր փայլում. հազիվ էին տիրապետում իրենց քրքիջին:

— Աշխարքի մեջ ամեն բան կրնա ըլնի, կհավատանք ժամացույցիդ զորքին, Ուստա ջան, ա՛ո, գլխիդ մատաղ, հանկարծ փորձանք չպատահի, մեզ մեղավոր հանես,— ասաց հանդարտությամբ ավագ գյումրեցին և ժամացույցը հոգատար զգուշությամբ դրեց տիրոջ առջևը:

Ուստան վերցնելով ժամացույցը, կապեց շղթայից և դրեց ծոցը:

Նրա ժամացույցի հոչակը տիրոջ անվան պես հայտնի է շրջանի գյուղերում: Հատկապես՝ շատերը գյուղից գյուղ մարդու միջոցով ուղարկում էին իրենց ժամացույցներն Ուստա Կարոյի ժամացույցի հետ ներդաշնակելու, իսկ ինքը ոչ մեկի հետ և ոչ մի տեղ չէր ներդաշնակում: Ճշտապահ՝ միշտ իր կեսօրին, երբ իր ժամացույցի սլաքները պառկում էին իրար վրա, այն ժամանակ միայն լարում էր նա: Այսպիսի անխոտրակելի հավատ ուներ իր ժամացույցի վրա, և այս հավատը վարակել էր շրջանի շատ ժամացույցներ: Այսպիսով, մինչդեռ Շիրակում օրը կեսօր էր,— նրանց ժամերը երկուսն էր՝ ճաշից հետո: Արևը նրանց համար երկու ժամ առաջ էր ծագում և երկու ժամ առաջ էր մայր մտնում:

Այս խոսակցության վրա իջավ մի լռություն, որ հարկավոր էր բոլորին հանգստացնելու համար, և տևեց մինչև ընթրիքի սեղան բանալը: Ուստան արխալուղի թևքերը վեր քշտեց, կարմիր թաշկինակը փռեց ծնկներին և նախկին քենը մոռացած՝ ժպտերես դիմեց հյուրերին.

— Ախպրտիք, բարո՛վ եք եկել, մոտեցեք հա՛ց անուշ արեք:

Եվ լցրեց արաղի բաժակը ու սկիզբը ինքը խմեց, ասելով.

— Առաջ ես կխմեմ, որ իմանաք թե դեղած չէ:

Բաժակը լցվելով ու դատարկվելով շրջան գործեց և նորից հասավ Ուստայի ձեռքը:

Ուստաև դարձյալ լցրեց բաժակը, որ դարձյալ շրջան գործեց:

Հացի միջոցին ավագ վաճառականը հարց տվեց.

— Ուստա, իրավունք ունի՞ք մի բան հարցնելու:

— Իրավունք է,— պատասխանեց Ուստաև:

— Դուն ի՞նչ արհեստի վարպետ ես, կրնա՞ք իմանալ:

— Ես շատ բանի արհեստ ունիմ. ա՜յ, էս այվանը ձեռքիս գործն է, հոր կփորեմ, աղբյուր կբերեմ, կամուրջ կկապեմ, կրնամ սել ու արոր շինեմ, և էլի ուրիշ շա՜տ բաներ. շինել տվող ըլնի, ամեն բան ձեռքես կուգա:

— Հարցնելն ամոթ չըլնի,— ասաց կարմիր քթով գյումրեցին, որի աչքը չէր հեռանում արաղի շշից.— շինել տվողը ըլնի՝ կրնա՞ս Անիի կարմունջի պեսը շինել, մեկ ոտքն էս կողմը, մեկէլ ոտքն էն կողմը:

Ուստաև զգաց, որ իրեն ձեռք են առնում, հեգնում.— «Էդ գյումրեցոց սովորությունն է, բայց ես ո՞վ եմ, որ տակը մնամ»,— այսպես վճռեց մտքում և հանգիստ ձայնով ասաց.

— Օխտը էդպես գետ ըլնի, կարմունջ կրնամ ձգե. շա՜տ շինած ունիմ էդպեսները:

Գյումրեցիներից մեկը աննկատելի փսփսաց ընկերի ականջին. «Լավ տրաքացնողն է. քիչ ձեռք առնենք, ուրախանանք»:

— Ուստա, կրնա՞ս,— հարցրեց գաղտնի փսփսացողը,— էնպես հոր փորել, որ ողջ Նախճվանի հացը հավքի մեջը:

— Վարպետ մարդու ձեռքեն բան չի պրծնի.— կովի պատրաստակամությամբ պատասխանեց Կարոն,— էնպես հոր փորեմ, որ ձեր ողջ Գյումրին մեռել-կենդանով, ձեր տներով ու խանութներով, ձեր քառսուն պորտով հավքիք մեջն ու մնաք մինչև Քրիստոս գա դատաստան:

— Վնաս չունի, տղամարդու գործ է. բայց, Ուստա, էդքան մեծ հոր փորած կա՞ս իսկի:

— Շատ...— կարճ կապեց Ուստաև:

— Որ փորել ես, ի՞նչ է դուրս եկել,— հարցրեց չորրորդ գյումրեցին:

Մինչև Օսկանն ուզում էր միջամտել՝ այս անախորժ խոսվրտոքին վերջ տալու, և Փիլոսն իրեն ուտում էր, երբ Ուստան համբերանքը հատած վրա տվեց.

— Էնպե՜ս տաք, եռացման, եռացման ջրեր, որ ձեր ողջ գյումրեցոց հարսն ու աղջիկը կրնան քաղնիք անել...

— Ի՞նչ գոռ փուշտիկ կուռեցնես...— Ուստայի խոսքը կտրեց կարմիր բթով գյումրեցին, սաստիկ վիրավորված լինելով իր համաքաղաքացիների ընտանեկան պատվի համար:

— Բա՛, ձեզի պես փուշտիկներին ես լավ կուռեցնեմ, մտքերդ ի՞նչ է,— կրակ կտրած ասաց Ուստան:

— Ուստա՛, լեզուդ մի քիչ քեզ քաշե, թրի պես մարդ կզարկե,— լսվեց մեկի ձայնը:

Ոնց որ կարկտաբեր ամպը գոռար ու փուլ գար, Ուստան էլ այնպես...

— Ձեննեդդ, գյումրվա աևոթիներ, ընկել եք գեղերը, փոր կպտտեցնեք, դեռ մարդու էլ չեք հավնի՞, ձեսպեսներին էնքան եմ ջուրը տարել, ծարավ ետ բերել, դուք ո՞ւմ ձեռք կառնիք, դուք է՞լ եք մարդ, դուք էլ եք մարդու շարքի. խաղք ու խայտառակ գյումրեցիք, ձեզի ո՞վ չի ճանչնա, դուք էն չե՞ք, որ աևոթի-ծարավ՝ գերեզմանների քարերի վրա տամա կխաղաք ու ձմեռը փուռի երդիկները՝ խումար. տո՛, հոգի հայհոյողներ, դուք էն չե՞ք, որ տասը գրվանքան փութի տեղ կհաշվեք, տարան եղեն ծանր կքաշեք, ոտներդ կշեռքի քար կշինեք, սատանի՛ ձագեր...

— Լա՛վ, լա՛վ, Ուստա ջան, մի՛ նեղացիր,— թախանձեց Օսկանը,— օտար մարդիկ են, քեզ չեն ճանչնա, չգիտեն ինչ մարդ ես:

— Ձեռքս ոո քարի տակ չէ՞, որ էդոնց թուք ու մուրը տանեմ. էդոնց ցերեկը մանգալածը ես գիշերն եմ ման եկել. էդոնց կնիկները ժամ կերթան աստվածածնուն կաղաչեն, որ իրենց մարդոցը մահ տա, էդքան էդոնք գեշ են...

Այնինչ Օսկանը հյուրերի ոտները սեղմելով աչքով-ունքով հասկացնում էր, որ լռեն, և նրանք էլ լռում էին՝ ականջ-

ները կախ, բերաններում մնացած պատառները պաղ-պաղ ծամելով:

— Ուստա ջան, Ուստա ջան, ներող եղիր էսօր, էսօր էդոնք մեր հյուրն են. քու օջախիդ մեջ ներող եղիր, սիրտդ լեն պահիր:

Քանի խնդրում էին Օսկանն ու Փիլոսը, Ուստան այնքան ավելի թև էր առնում:

— Տո՛, ես չտրաքվիմ, ո՞վ տրաքվի. մեկ՝ ժամացույցս չեն հավնի, մեկ՝ վարպետությունս կծաղրեն... Ես ձեզ մարդ ասողին... թյո՛ւ, ախպեր Օսկան, կուզես ներացիր, կուզես՝ ոչ. ես էսոնց հետ հաց չեմ կտրի. դու էլ որ տղա չլինեիր մարդու կշեռքը կհասկանայիր. ու այվանս... մեղա՛ աստծու, ինչ պիտի ասեի...

Ուստա Կարո, դո՛ւ Ուստա Կարո. մեկ էլ վեր ելավ սեղանից ու բարկացած մի գլուխ՝ դեպի դուրս:

Փիլոսը կտրեց առջևը. բոլորի վրա սառը ջուր մաղվեց:

— Ուստա՛ ջան, մեծ ախպեր, վերև աստված, ներքև — դու. Օսկան ախպոր հետ կերած մի բրդում հացդ միտքդ բեր:

Փիլոսն էր խնդրողը և դռան առջև բանդ եղել կանգնել:

— Թո՛ղ, ե՛լ էրթանք, անապատներու մեջ տուն շինենք նստինք:

— Ցա՛, Կարո ջան, հոգուդ մատաղ, քովդ էնքան պատիվ չունի՞մ, ինձի ողջ-ողջ թաղես լավ է, ո՞ւր կերթաս, էսքան տարվա աղ ու հացկեր ենք, հիմի ամենքը ոտքի տա՞կ տանք, ի՞նչ է արածդ:

Օսկանն այսպես ասելով փաթաթվեց Ուստայի վզովը, համբուրեց ու ականջին շշնջաց.— Էդ չարժեցող ամբարտավաններու համար արժե՞ որ արյունդ պղտորես. ես քեզի էդպես չգիտեի:

Ուստա Կարոյի աչքերը լցվեցին. կանգ առավ, զայրույթը մեղմացավ, գյումրեցիք էլ մեկ-մեկ եկան և զղջումով, գլխիկոր, ձեռք տվին նրան.

— Ուստա, մեղա՛ աստծու, հաշտվինք:

Զայրույթն իջավ:

— Ես ոխ պահել չգիտեմ, իմ սիրտը շուտ կնեղվի, գեշ

բան չի տանի, լա՛վ, հաշտվինք. էս վերջինն ըլնի, մարդու հարգը գիտնաք. ես ձեր ակոի հավկիթը չեմ, ակոա չի դիմանա ինձի...

Ուստան բոլորին ձեռք տվեց ու գնաց, նստեց իր տեղը:

— Նեղսրտելու բան չկա, Ուստա՛ ջան, մեծ մարդը մեծ սիրտ կունենա,— ասաց Օսկանը,— էս մարդիկը չգիտեն, թե ում հետ հանաք կանին:

— Թող հիմա իմանան, թե ես ինչ մարդ եմ, և էլ՝ ուրտեղ իրենցը կպատմեն, էնտեղ էլ իմս չմոռնան...

Հյուրերը պատերի տակ քաշված՝ լուռ նստել ծխում էին, ոչ ոքի բերանը չէր բացվում մի խոսք ասելու. մի ծանր, ճնշող լռություն իջել էր սենյակի բոլոր անկյուններում:

Մի փոքր անց, Ուստան վեր կացավ, հագավ չուխան, չոնգուռն առավ պատից և կանգնեց հատակին:

— Բարի գիշեր ձեզի, ներող եղեք,— խոսեց հյուրերին և ապա ուղղվելով դեպի դուռը, Օսկանին կամացուկ ասաց.— մի քիչ կալերը կերթամ, սիրտս կհեղվի:

Փիլոսը հնազանդ ստվերի պես հետևեց նրան:

Ուստան գնաց նստեց կալը, ծառի տակ, Փիլոսն էլ մոտը: Ուստայի սիրտը ելած էր, և հանգստանալու համար չոնգուռը նվագեց: Գարնան ջինջ գիշերվա լռության միջից լսվում էր չոնգուռի անուշ հնչյունների հետ Փիլոսի սրտալից ձայնը.

— Սիրելիս, օ՛ր դատի, օ՛ր կեր,
Բախտըդ մի՛ տուր նամարդի ձեռ...:

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԱՅՑԸ ՍԱՆԱՄԱՅՐԵՐԻՆ

Գյումրեցի վաճառականները գիշերեցին Ուստայի օթևանում:

Ուստան երբ առավոտյան զարթնեց՝ աչքերը տակա-

վին չբացած՝ առաջին միտքը, որ նրա գիտակցության մակերևույթի վրա եկավ՝ գյումրեցիների մասին էր:

Անհանգիստ էր այդ միտքը. և դառնությամբ ամուր սեղմեց աչքերը՝ չուզենալով նրանց երեսը տեսնել: Խոժոռվեց Ուստայի սիրտը. առհասարակ զարթնելիս միշտ զվարթ էր լինում նա, հակառակ բնույթին շատ մարդկանց, որ թթված դեմքով և տհաճ ինքնազգացումով են քնի աշխարհից դուրս գալիս:

Լսելիքը լարեց — ձայն չկար. ուժ արեց, վերմակի տակից նայեց — գյումրեցիները չկային, անկողինները նույնիսկ վեր էին քաղված:

Իսկույն թռավ, նստեց տեղում, աչքերը տրորեց ու տրորեց՝ մեջեմեջ նայելով ուշադիր — մարդ-մուրդ չկար: Աշխարհն իրեն տվին: Կանգնեց ոտի, շտապ հագավ հին շորերը և մոտեցավ լուսամուտին.— դուրսը, երկնքի կապույտը շողում էր դաշտերի ցողաթուրմ կանաչի վրա և արևը հին, լավ բարեկամի պես ժպտում էր ամուշ, և ամուշ ժպիտով օրհնում էր աշխարհն արարած:

Երգը շրթներին գալով Ուստան արահը լվացվելու՝ անձեռոցն ուսերին գետած:

Օսեփը սայլն էր լծում՝ մղելով եզը լծի տակ՝ ականջից քաշելով, իսկ մշակ Սեթոն մատակ գոմեշն էր ձիթում՝ մակաբույծներից ազատելու համար արյունաքամ անասունին:

— Բարի՛ լուս, տղե՛րք ջան,— ասաց Ուստան:

— Բարին արևուդ,— պատասխանեցին տերն ու մշակը:

Եվ որովհետև մշակը՝ ձեռները ձիթոտ լինելով՝ չէր կարող սպասավորել Ուստային, Օսեփը ձայն տվեց տան բաց դռնից ներս:

— Արտաշ, արի ջուր լից Ուստի ձեռներուն:

— Օսեփ, ո՞ւր էդման,— հարցրեց Ուստան:

— Արտը, քար ու քրոջը թափելու:

Մինչ Արտաշը ջուրը կբերեր՝ Ուստան մի հայացք գետեց շուրջը — իրենց շները իրար բերանից մի մորթի էին քաշքշում... Թխասամայրը ոսկեվիետուր ձագերին թևի տակ առած՝ կո՛ղոթ, կո՛ղոթ, հպարտ քայլելով հետ ու առաջ էր

դառնում... Դրացի Գլիեցց տանը՝ Կոլոտ Աթոն սանտի մեջ հևալով աղ էր ծեծում, իսկ նրա մայրն ու կինը պատիկ երեխան էին լողացնում...

Ուստան լվացվեց և սրբելով ներս մտավ օթևանը: Դեմքը դարձրած արևելք, անդադար խաչակնքելով երեսը և «Հայր մերը» կիսաձայն մրմնջալով՝ կատարեց ամենօրյա իր առավոտյան աղոթքը:

Ապա՝ փոքրիկ հայելին հանելով պահարանից, սկսեց դանդաղորեն սանրել գլուխը՝ սպասելով Զավուշին, որ ուշանում էր:

Ուստան հայելու մեջ դիտում էր իրեն. ի՞նչ ուրախ, պայծառ, ի՞նչ առողջ է իր դեմքը: Գոհունակ մի ժպիտ փայլեց աչքերի մեջ: Նորից նայեց, ավելի ուշադիր, ուղղակի իր աչքերի մեջ սևեռելով իր հայացքը.— «Ուստա Կարո» — անձայն շշնջաց իր մտքում, «Ուստա՛ Կարո, ես Ուստա Կարոն եմ». և ավելի պայծառ ու բախտավոր մի ժպիտ ծփաց ամբողջ դեմքի վրա: Եվ անչափ բախտավոր էր, որ ինքը Ուստա Կարոն է: Աչքն ընկավ հանկարծ Անդրանիկի պատկերին. հարյուր անգամ տեսած պատկերին նորից նայեց: Նախանձով բորբոքված էին Ուստայի բիբերը...

Աշխարհագով խմբապետը կանգնած էր, հսկայահսկա, մի ոտը դաշտի վրա, մյուսը՝ սարի գլխին, հրացանը՝ ձեռին, դաշույնն ու ատրճանակները գոտու մեջ, փամփուշտակալները ուսերից խաչ-փակ իջնելով մեջքի շուրջը երկու փութ պարառած: Ծոպավոր մեծ փափախի տակից կրակ էին ցայտում զայրագին աչքերը: Թավախիտ բեղերը՝ երկու ահագին կեռ թրերի պես՝ ականջների ծայրը կտրում անցնում էին:

«Անդրանիկը տղամարդ է, խոսք չունիմ, կտրիճ է, հապա ընչի՞ սուլթանին չի սպանե՝ աշխարհ խաղաղի»... Եվ հիշեց Բագրանում ասած իր հանդիսավոր խոսքը, և աչքին ներկայացավ պ. Կայծակը. ամոթու գլուխը կախեց, տխրած ու նվաստացած էր Ուստան... «Կարելի է՝ դժվար բան է. հանաք չէ, տո՛, ինչքան չեղնի՝ սուլթան է, հազար շուն ու կել ունի տունն ու դուռը»:

Արդարացնելով Անդրանիկին, ինքն էլ մի թեթևություն

զգաց, և աչքերը հեռացնելով խմբապետից, կանգ առավ կյանքի սանդուղի պատկերի վրա, հատկապես 40 տարին խորհրդանշող աստիճանի վրա:

Այդ հասակը անձնավորված էր մի առնական կերպարանքի մեջ, որ կնոջ ու երեխաների հետ, լուրջ ու ինքնավստահ, կանգնել էր լեռան կատարին: Այդ բարձունքից հետո իջնում էր կյանքը— 50 տարեկան, հետո 60 տարեկան, հետո ծերություն ու մահ...

Ուստան՝ կենտրոնացած՝ նայեց, մի պահ արևը խավարեց և աշխարհն ունայնացավ աչքին, ապա ձեռքը թափահարելով, տխրամած աչքերով հեռացավ նկարից: Խավար մտքերի մեջ սուզված՝ անցուդարձ էր անում թախտերի միջանցքում, երբ Չավուշը աղմուկով դուռը բացեց՝ ինքնաեռը գրկին:

Ուստան ուշքի եկավ:

— Բարի՛ լուս, վարպե՛տ. քունդ անուշ,— ասաց Չավուշը,— էսօր ուշ զարթնար,— և զննական նայելով ավելացրեց.— վարպետ ջան, երեսիդ գունը տեղ չէ, ի՞նչ կա...

Ուստի սիրտը վախ ընկավ, բայց զսպելով իրեն, դեմքն ու աչքերը ամուր տրորելով, դիմեց Չավուշին.

— Հաստա՞տ որ գունս տեղը չէ. էղնելու բան չէ, մեկ լա՛վ աշե:

Չավուշը մոտեցավ, ավելի ուշադիր նայելու համար:— Չէ՛, վարպետ ջան, բան չկա. աչքի երևույթ էր:

Ուստան սրտապնդվեց:

Չավուշը սեղանն էր հարդարում:

Ուստան խոսքի ուղղությունը փոխելու համար, հարցրեց.

— Ամբարտավան գյումրեցիք գնացին, հա՞:

— Գնացին, գնացին, վարպետ ջան, էդոնց կրունկները թող միշտ էդին էղնին:

— Չավուշ ջան, երազիս լուսահոգի մորս տեսա. ձեռքը պաչեցի. տրտում նստեր, ընձի համար գուլպա կգործեր: Ա՞խ, մերիկ ջան. տեսնիս՝ ի՞նչ բանի նշանակ է...

— Բարի է, Ուստա ջան, մորը տեսնելը միշտ բարի է: Ես էլ երազիս քեզի ու Օրթե Հարութիս տեսա, կըսեր՝ վա-

ղուց է ձեզի չեմ տեսե, կարոտցեր եմ:— Դրուստ կըսե, երեք շաբաթ եղավ խելառ երեսը չեմ տեսե. էս օրերս երթանք. երազով եկեր՝ մեզի կկանչե:

Նրանք միշտ, իրենց սովորույթի համաձայն, տեսած երազներն առավոտյան իրար պատմում էին, իրար օգնությամբ մեկնաբանելով, և երբեք մեկը մյուսի երազին չարագուշակ իմաստ չէր վերագրում:

— Ձավուշ ջան, դեհ, հիմի արաղը հա՛ն:

Առանց նրա խոսքին էլ՝ Ձավուշն արդեն ուղղվել էր դեպի պահարանը: Հանելով օղիի շիշը պստիկ բաժակներով, և մի քանի հատ չամիչով, իբրև աղանդեր, դրեց նախաճաշի սեղանի վրա:

Նրանք ամեն օր, և ամեն տեղ միշտ օղիով ողջունում էին «բարի լույսը»՝ բարեմաղթություններ անելով աշխարհի և իրենց համար, տարիների ընթացքում գրեթե նույն, անփոփոխ բառերով:

— Ձավուշ ջան, լի՛ց, մեկ՝ ինձի, մեկ՝ քեզի:

Ձավուշը լցրեց բաժակները:

— Տեր աստված, եղիցին կամք քո, ստեղծեր ես, չըկորցնես,— աղոթավոր ձայնով ասաց Ուստան՝ աչքերը ճակատի տակից վերև ձգելով:

-- Ամե՛ն. փառք շա՜տ, ի՞նչ ըսեմ...— աչքերը նույնպես վերև ձգելով՝ ձայնակցեց Ձավուշը:

Երկյուղածությամբ խմեցին օղին:

— Ձավուշ ջան, նորեն լի՛ց, մեկ՝ ինձի, մեկ՝ քեզի:

Ձավուշը նորից լցրեց բաժակները:

— Ձավուշ ջան, մեր կյանքի համար. աստված մեր սրտովը մեզի տա, մեր գեշ օրն էս էղնի, ամեն լավ մարդու կյանքի համար, և էլ Օսկանի գերդաստանի համար. աշխարհքին խաղաղություն, մահին թանկություն, հացին էժանություն և էլ հայոց ազգին ազատություն, ամեն:— Ծանր և լուրջ եղանակով ասաց Ուստան՝ բաժակը շրթունքին տանելով:

— Ամեն. աստված լսող—կատարող էղնի,— ասաց Ձավուշը. խմելուց հետո բաժակը կործելով:

— Ձավուշ ջան, նորեն լի՛ց, մեկ՝ ինձի, մեկ՝ քեզի:

— Չէ՛, ինձի չէ, վարպետ ջան, չեմ ուզե, գիտե՞ս, էլի,— ասաց Չավուշը միայն մի բաժակը լցնելով:

— Լի՛ց, էսօր լից, Չավուշ ջան. ի՞նչ է որ՝ մատնոցի չափ բաժակ է, խմե՛,— պնդեց Ուստան:

— Չէ՛, գլխուդ մատաղ, խոսքիդ դեմ չեմ կենա. բայց չէ, վարպետ ջան,— թախանձեց Չավուշը:

Եվ ամեն օր գրեթե տեղի էր ունենում այս վեճը: Ուստան պնդում էր, Չավուշը հակառակում: Թեև Ուստան երկար պայքարից հետո հաշտվել էր, բայց դարձյալ կրկնում էր սովորական բանաձևը:

Եվ այսպես տարիներ շարունակ, Ուստան երրորդ բաժակը խմում էր միայնակ: Խմում էր լուռ, անխոս, սրտի մեջ միայն մաղթանքներ անելով: Ո՛ւմ համար...

Մի օր խմում էր ծնողների հիշատակին, մյուս օրը մի լավ ընկերոջ համար, մանավանդ, «Աստվածոտենեն դարձ» խնդրելով Օրթե Հարութի համար, կամ մի գործի հաջողության, կամ մի հիվանդ բարեկամի առողջության համար:

Ինչպես որ առաջին երկու բաժակախոսքերը գրեթե միևնույնն էին միշտ, այնպես էլ երրորդ բաժակի մաղթանքները փոփոխվում էին շարունակ:

Մինչդեռ Ուստան օղին լռելյայն խմելուց հետո չամիչն էր ծամում բերանը քաղցրացնելու համար՝ Չավուշը «անուշներ, անուշներ» ասելով, լցնում էր թեյի գավաթները: Ամեն օրվա պես այսօր էլ ուտելով ու խմելով՝ մեջընթեր մտերմիկ զրույց էին անում նրանք, երբ շների հաչը ընդհատեց ընկերների մեջ մանվող խոսքի թելը:

Մի կորաքամակ ծերունի, չոր ծնոտը առաջ ձգած, պարկը ուսից կախ, գավազանը սալահատակի վրա քարշ տալով, մեկ աչքը շներին հառած, մյուս աչքը՝ օթևանի դռանը, հառաչանում էր կամացուկ:

Չավուշն ելավ, սաստեց շներին: Ծերունին եկավ, կանգնեց դռանը:

— Ողորմություն արեք, խեղճ աղքատ եմ, հնեն-նորեն. թոռներս տկլոր են, ասպած իր օխթն պոռոով ձեզի պահե. հոգով խնդաք, միածինը որդիքդ ձեզի բաշխե...

Ուստան հաց ու պանիր ուղարկեց Չավուշի հետ, ապա մի ձերմակ 20 կոպեկանոց ևս տվեց:

— Ապրիք, զորանաք, տղեքս, ինչ որ պակսեցուցի ձեր սեղանեն, էնտոր տեղը ասպած իրան առատ սեղանեն ձեզի հազարապատիկը պարգևե:

Եվ հեռացավ երերուն քայլերով, անվերջ օրհնանքներ թափելով. «Բարերար տերը սիրտդ ուրախ էնե, տարիդ՝ հազար զնգզնգան ժամերը բարեխոս էղնին ձեզի...»:

Աղքատին ուղի դնելուց հետո, շները եկան շարվեցին դռան առջևը, գլուխները թաթերի և սեամի վրա դնելով՝ համբերող աչքերով սպասում էին սովորական պատառներին: Այսօր մորթու պատճառով ուշացել էին նրանք ներկա գտնվելու նախաճաշի սեղանին:

Ուստայի առանձին խնամքը վայելող փոքրիկ շնիկը՝ «Զաղարը», պոչը խաղացնելով եկավ փաղաքուշ քսվեց Ուստայի ոտներին: Ուստան բոլորին հաց բաժանեց. յուրաքանչյուր շան անունը մեկ-մեկ տալով: Հանկարծ, մի ոտնաձայնի վրա բոլոր շները մեկեն թռան սրահը:

— Չավուշ ջան, էսօր չպիտի բանիմ, ներող եղիր.— ընդհատված զրույցը կենդանացրեց Ուստան.— էսօր հագնիմ կապեմ, գեղամեջ երթամ պտի՝ սանամերերուս ինձի ցույց տամ.— ապա խնդալով հարեց.— դուն գլխուդ ճարը տես:

— Վարպետ ջան, ես էլ կերթամ Բուլիկենց ամբարի շարերը տաշեմ: Էգվան ամբարի հիմքը պտի գցենք: Բագռան երթալեն առաջ խոստացանք, մի՞տքդ է:

— Հա, լավ միտքս գցիր, շատ լավ. բայց էսօր չէ. էսօր միտք չունիմ: Չավուշ ջան, ախբերս որ դուն ես, ամենօրյա վրա էսօր քիչըմ տրտում եմ. պատճառ չկա, էնպես, յատարկ տեղը: Չավուշ ջան, դու գիտես, որ ես ուրախ արդ եմ, ինձի սևը չի հաղթե. էնքա՜ն գեշ օրեր եմ տեսեր ու թոեր վրաս, ելեր: Հիմի էլ ըսենք ուրախ եմ. էս վարկեխս տրտմությունս անցավ. շուքի պես բան էր, վրայես ռավ գնաց՝ ըսկի չեղածի պես:

— Վարպետ ջան, տխրելու բան չկար. կարելի է՝ անավատ էն գյումրեցիք էին պատճառը...

— Տո՛, ի՞նչ կըսես, ողջ Գյումրին թափվի, ինձի չի կրնա գետին զարկե. մեկ բան էր ըսի, դուն էլ առար-ածցար: Աստծու էս շեն ու պայծառ տան մեջը ե՞րբ եմ ես «ա՜խ» քաշեր, որ հիմա քաշեմ...

Մի քիչ խնդալուց հետո, «ախ» քաշելով, շարունակեց.

— Հիմի կսես, թե որ բախտավոր եմ, ընչի՞ շատ կըխմեմ. ոնց թե Օրթե Հարութիս չափ, քիչըմ պակաս, ա՜խ, Չավուշ ջան, լմանկատար ուրախ չեմ. սրտիս մեջը մեկ անդադար բանըմը կա, չեմ գիտեր՝ ի՞նչ է. էսա ես թե աչքը ծով դառավ կսպասեմ թագավորի վայել մեկ մեծ բանի, մեկ մեծ բախտի: Աղջի՞կ է—չէ՝, փո՞ղ է—չէ, մեկ ուրիշ բան է, աճուն չունեցող:

Մեկ-մեկ էլ ինձ էնպես կերևա, թե՝ սրտիս մեջը ասպապ կապած մեկ կտրիճ կա, խրխնջացող ձիու վրա նստած՝ կքշե ու կքշե. ո՞ւր, ընչի՞ համար: Ես էստեղ, էս ծածկի տակ նստած սիրտս ամեն տեղ է, ամեն ճամփու վրա...

Է՜հ, Չավուշ ջան, չծերացա, որ հանդարտ նստեի, չիբուխս ծխացնեի... ինչորիս է...

Գոցեց Ուստան իր խոսքը, և խաչակնքելով երեսը, սեղանից վեր եկավ:

— Դե՛հ, Չավուշ ջան, գնա՛ բյառբյառ Գալոյին կանչե գա թրաշ էղնինք, ես էլ էս է, ջուրը վրա կդնեմ:

Չավուշը սեղանը հավաքելուց հետո՝ գնաց:

Մի ծխախոտ վառելով՝ Ուստան ամանով ջուրը դրեց մեղմ ծխացող աթարի վրա և սկսեց դրսնավուր կոշիկները մաքրել:

Եկավ Չավուշը և հետևից, մի ոտի վրա կաղալով, սափրիչ Գալոն:

— Էկա՞ր, Գալո,— ասաց Ուստան ձեռը մեկնելով:

— Էկա, գլուխդ մատաղ,— ասաց սափրիչը նրա ձեռն ուժգին թափահարելով.— քեֆդ ի՞նչղ է, Ուստա ջան, քե՛ֆդ:

— Դե՛հ, նստի, նստի, մեկ պապիլոս շինե, մինչև ջուրը եռ գա,— և ընձեռելով նրան ծխատուփը՝ շարունակեց:— Ի՞նչ կա, ի՞նչ չկա գեղերը, մեր գեղն էլ մեջը. բոխչե՛դ բաց:

Գալոն սափրիչ ու ատամնաբույժն էր դրացի մոտիկ գյուղերի: Այդ կրկնակի արհեստների հետ միասին գյուղական լուրերի և մանավանդ բամբասանքների շրջում հարուստ տոպրակը:

«Ջհուդի բոխչա է Գալոյի բերանը»— այսպես էին բնորոշում նրան գյուղացիները:

Չվարթ-բամբառակ մարդ էր: Այծի նման սև ու խլրտուն: Սուր և կենդանի աչքերով: Թեև կաղ, բայց արագոտն էր, ամեն գյուղ ու ամեն տուն մտնելով-ելնելով՝ հավաքում էր խոսք ու զրույց՝ սուտ ու շիտակ՝ եռանդալից տարածելով գյուղեգյուղ, տնետուն:

— Ողջույթյուն, Ուստա ջան, էս անգամը էնպես, պոչով բան չկա, մեկ-երկու օր Ագրակ էի, մեկ-երկու օր էլ Ծպնի, հետև էլ՝ Զոչի, վով սուտ ըսե հոգին արաղով չթրջի.— և ձայնին բազմիմաստ շեշտ հաղորդելով, նայեց Ուստայի աչքերին:

Ուստան հասկացավ Գալոյի միտքը. աչքով արեց Զավուշին, որը պահարանից հանեց օղին, մի բաժակ լցնելով տվեց Գալոյին, ասելով.

— Որ էղեր ես Զոչի, կուլ տու՝ հոգիդ թրջի:

— Ուստա ջան, մեր մեջ մնա,— բերանն ափով և հագուստի թևքով ամուր սրբելով ասաց սափրիչը,— Ագրակ, Համբոյենց հարսը ջուխտ է բերե...

— Ի՞նչ զարմանք բան կա որ, էդ նշան է, որ հարսի զավակատունը ուժով է.— ասաց Ուստան:

— Չէ՛, Ուստա ջան, գլխու չես, ախր բանի մեջը բան կա. էդոր մարդը Ռուսեթ սոլդաթ է. Ագրակ՝ ո՞ւր, Ռուսեթ՝ ո՞ւր:

Եվ Ուստայի ականջի մեջ մի բան շշնջաց:

— Հըմ,— գլուխը վեր-վար շարժելով ասաց Ուստան,— լսել է, որ գեղի կտրիճները լավ գործ են հոգացե. մեկն իրանց տեղը, մեկէլն էլ մարդու տեղը: Աստծուց էր, որ էդոնց քավոր չեղա, շա՞տ կուզեին:

— Ուստա՛ ջան, հլա խոսքիս վերջն առ. զարմանքն էն է, որ էրկու երեխեն էլ ցուցանք են դուրս էկե. մեկի գլուխը

մեջքի վրեն է կպած, մեկէլի ոտքը՝ փորեն է էլե. ի՞նչ կըսես էսօր, Չավուշ ջան:

— Ասսու պատիժն է. հապա կխաբե պապակի մարդուն,— երկյուղածությամբ ասաց Չավուշը:

— Չէ՛,— վրա բերեց Գալոն,— ասպած էդման հասարակ բաներու մեջը չի խառնվի. բանի մեջը ուրիշ բան կա. ի՞նչ ըսիր, Ուստա ջան:

— Ես էն կըսեմ, որ կտրիճներեն մեկը սարքեր է, մեկէլն եկեր՝ քանդեր է,— հանգստությամբ ասաց Ուստան:

— Հա՛, հա՛, հա՛,— ծիծաղեց սափրիչը՝ փորը բռնած՝ կաղ ոտի վրա հենվելով:

— Տո՛, ասսու պատիժն է, ի՞նչ կծիծղաս— մեղք է.— բարկացկոտ ձայնով խրատեց Չավուշը:

— Չէ՛, Փիլոս ջան, էն կծիծղամ, որ ողջ գեղը էդ եղելութենի վրա Ուստիս խոսքը կենենձրնեն ու կխնդան:

— Ո՞ր խոսքս,— զսպված ուրախությամբ հետաքրքրվեց Ուստան:

— Էն որ մե հեղ ագրակցիք հարցեր են քեզի, Ուստա ջան, թե՝ պատճառն ի՞նչ է, որ՝ կնիկ կա ձուկ կծնի, կնիկ կա՝ կատվի գլխով ցուցանք. յա ուրիշ-ուրիշ այլակերպ-այլակերպ աճում-մաճում բաներ: Դուն էլ ըսեր ես, թե՝ պատճառս ո՞րն է. տղամարդը, որ խելքը կնկա հետ դնե խաղա, էն էլ ի՛նչ ըսես՝ էնի կբերե:

— Միտքս չէ,— հպարտորեն ասաց Ուստան:

— Դուն ո՞ր ըսածդ միտքդ կպահես, Ուստա ջան. տո՛, մինակ Ագրակ չէ, ամեն տեղ էլ խոսքերդ կըսեն. էնորն էլ Ջոչի ըսին, թե Ուստան կըսե, թե՝ կնկան պաչես՝ տղա կըբերե, չես պաչե՝ բուղա... Ի՛նչ տեղոք, իմաստուն խոսքերնիդ մեռնեմ, Ուստա ջան:

— Խոսք է, կըսենք, կանցնինք,— նորից ինքնագոհ հանգիստ ասաց Ուստան:

Ջուրն եփ էր գալիս. սափրիչն սկսեց իր գործը:

— Ուստա ջան, Ջոչի շինածդ աղբյուրը լավ գործ կտեսնի. գիշերանց տուն կուգայի. աշեմ-տեսնեմ, աղբյուրի տակը մե սիրուն հարս կլողնար, լուսի՛ կտոր...

— Էնոնց համար եմ շինե, ինչ էնոնց քոսոտ մարդոց համար չե՞մ շինե,— հաստատեց Ուստան:

— Ուստա ջան, սանահորդ Պողոսի առկեն հանեցի. մե ձենը երկինքն էր, մե ձենը գետինքը... քեզի շա՜տ բարև կեներ:

— Բարև բերողն ողջ էղնի:

— Սանամերդ, ես կըսեմ, երկհոգսի է, գոգնոցը մինչի ծկներն էր ելե... պատրաստ էղիր, Ուստա ջան:

— Գլխուս վրա, գործերուս անունն ի՞նչ է. իրանց կողմեն՝ աղջիկ ու մանչ, իմ կողմանեն՝ մեռոն ու խաչ,— խընդալով ասաց Ուստան:

Լռեցին: Սափրիչը վերջացնելու վրա էր:

— Էնքան մարդու թրաշ կենեմ, Ուստա ջան, շիտակն որ ըսեմ, քուկիդ պես սիրուն, կարմիր, պինդ թշեր չեմ տեսե. եղի պես ածելիս երեսիդ վրեն կսլլա. ատլաս է թըշերդ, ատլա՛ս, ու փառք երկնավորին, դեղապտի ճերմակ մազըմ չկա:

Ուստային շա՛տ հաճելի եկավ այդ գովքը, և բախտավոր ժպիտը խաղաց սափրած փայլուն երեսի վրա:

— Ուստա ջան, մեկ հայլին առ աշե, խոսքիս կհամոզվիս:

Ուստան ձեռը մերժողական ձևով շարժելով՝ ելավ լվացվելու: Չավուշը նստեց նրա տեղը:

— Ուստա ջան, երեկ Ղուկաս աղին թրաշ կենեի:

Ուստան դեմքը ծամածոեց:

Ղուկաս աղան, այդ անունով էր հայտնի նա Նախճվանի գավառակում, շրջանի ամենահարուստ մարդկանցից մեկն էր, մեծ խանութ ուներ և հացահատիկի լայն գործ:

Ուստայի բացարձակ թշնամին էր նա, Ուստան էլ՝ նրա: Ղուկասը Կարոյին համարում էր ու հոչակում բախտախընդիր, անտուն-անհայտի մեկը. «պատի ծակե ելած, թոկե փախած, քամու քարվան քշող»:

Ուստան էլ բոլոր գյուղերում հայհոյելով՝ նրան հոչակում էր անգութ վաշխառու, գող-ավազակ, որբի բերանից հացը խլող. «մարդ քերթող է Ղուկաս չեղածը, արուն ծծող, տըզրուկ. վասա՞կ է, վասա՞կ»:

Այսպես էին կոչում իրար, և իրար դեմ դավեր լարում:

— Ի՞նչ կըսեր էդ մարդագելը,— հոնքի մեկը բարձրացնելով հարցրեց Ուստան:

— Քու մասիդ չէր, Ուստա ջան.— տեր Մուքելը թուղթ է ստացե, որ իրեն նորեն գործակալ են կարգե. շատ ուրախ էին. փող զարկելու նոր դուռ է բացվե:

Տեր Մուքելը Ղուկասի աներն էր, միևնույն ժամանակ նրա ձեռնարկների ընկերը և խորհրդատուն: Խելացի մարդու համբավ ուներ:

— Տերտերը, ճեռի իրան սուրբ կարգեն, խաչագող, էշ ներկողի մեկն է, դարմանի տակի ջուր, կակուղ փուշ է... Ո՞վ գիտե, ինչքա՜ն կաշառք է տվե քաղաք, վարդապետին, որ նորեն գործակալ է դառե:

— Ուստա, խոսքը մեր մեջ մնա, շատ կռապաշտ մարդիկ են, աներ-փեսա: Երեկ խեղճ մարդըմ էկեր, կուլար, կըսեր՝ երեխեքս տկլոր են... Էդ անաստվածը 5 մանեթի ճոթ տվավ, 10 մանեթի թուղթ առավ, ամիսը էրկու աբասի շահ. ճիճ թուղթն էլ, որ 20 մանեթ էր, նորեն գրեց. գրողն էլ՝ էդ ձեռքը չորնալիք տեր Մուքելն էր, շինեց երեսուն մանեթ, էլի էդ անխիղճ շահը վրեն բանացնելով: Մարդն ընձի լալով ըսավ, թե՝ 20 մանեթի տեղ աշունքը 10 մանեթի ճոթ է առեր. ճիմի դուն արի էդ գազանի ձեռքեն պրծի. պրծում չկա. շա՜տ զրկողն է, զրկողը չի վայելե: Ի՞նչ ըսիր, Չավուշ ջան,— վերջին խոսքը ուղղեց Չավուշին՝ ածելին երեսի վրա սահեցնելով:

— Ի՞նչ ըսեմ, տո՛, երեսս կտրեցիր, խելքդ գլուխդ ժողվե:

— Վա՜յ, հաստա՜տ,— աղաչական ձայնով ասաց սափրիչը:— Էն կեծակի զարկվածն էր մեղավորը, լայշո Ղուկասը:

Եվ բամբակի մի ծվեն կպցրեց կտրված տեղին:

— Օ՜, Ղուկա՜սը, Ղուկա՜սը. քար կպաշտե,— ասաց Ուստան.— ընչի՞ քովս չղրկեցիր էդ խեղճին, փողը տայի, պարտքը թափեր:

— Մտքես չանցավ, Ուստա ջան, մեկէլ ճեղին:

Չավուշի դեմքի մի կողմն ավարտել էր արդեն, մյուս

կողմը պիտի սկսեր, երբ ածելին ձեռին մոտեցավ Ուստային:

— Բան է, կըսեմ, Ուստա ջան, ուրիշ տեղ չըսես. չեմ ուզե՝ իմանան, թե Գալոն խոսք տանող-բերող է: Հա՛, էն կըսեմ, որ իրան տունն էլ զուրկ կպահե, կնկանեն, երեխոցեն կզրկե. էդ ծով հարստութենի մեջ ետնյալ աղքատեն գեշ կապրին, կերածներն ի՞նչ է որ— միշտ թանե ապուր, միշտ թանե ապուր. միս կմտնի՞ տները,— մենակ տաղավարներուն:

Փողը դրեր կպաշտե, մե քոռ կոպեկի համար օխթը գըլխ-կոնծի կուտա:

— Գիտեմ, գիտեմ,— սափրիչի խոսքը կտրեց Ուստան — էն որ իմանա թե անփող կթաղեն՝ ձեռաց կմեռնի:

— Ուստա, ըսենք էդպես է, հմա-իրան չզրկե, ծածուկ՝ հավի միս կուտե, եղ ու մեղր:

— Էդ չիտեի, տո՛ ի՞նչ գազան-անասուն հրեշ է եղեր,— գլուխը տարուբերելով, զարմացած ասաց Ուստան:— Շա՞տ էլ նախանձ մարդ է, շատ. հատը չկա, չի կրնա տեսնի, որ աշխարքի վրեն իրանեն ջոկ հարուստ մարդ էղնի. կուզե որ ամեն մարդ մուրացկան էղնի, ինքը մենակ երևա:

— Գիտե՞մ, գիտե՞մ: Էն որ իմանա, թե մարդու մեկը երազին ոսկու գանձ է գտե, ցավեն հիվանդ կպառկի:

Ուստան մի չար հաճույք էր զգում իր թշնամու մասին լսելով այս վկայություններըը, և ուզում էր, որ անվերջ շարունակվի:

— Շիտակ կըսես, Ուստա ջան, մեկ էլ էդ անաստվածը շատ ամբարտավան է. գիտե, թե գումար ողջ գեղը ինքը կպահե. ընձի հետ էման կվարվի, ըսես թե սովի տարին երեխոցս հաց է տվե. մեկ կուզեմ քովը չերթամ, մեկ էլ կըսեմ՝ հերն անիծած, շան վրայեն մազ պոկել է:

— Էդ էլ գիտեմ. էն կկարծե, թե Մարա ծովերու վրայով անցնող հավքերը իրան կուտ ու ջրովն է, որ կթունին,— ուրախությամբ հաստատեց Ուստան:

Գալոն ավելի մոտեցավ և փսփսաց Ուստայի ականջին:

— Ի՞նչ կըսես: Եղնելի՞ք բան է,— ապշած նայում էր

Ուստաև Գալոյի սուր ու գաղտնալից աչքերին...— էն հարսը սրբի պես է, հոգուդ մեղք մի՛ էրա...

Սափրիչը նորից փսփսաց, իսկ Չավուշը համբերանքը հատած՝ զայրույթը հազիվ զսպելով, ասաց.

— Տո՛, նորդ թութունը թափի՛. սապոնն երեսիս չորացավ: Է՛ է՛ն, ներիք է՝ կլափին տաս: Արի՛, է՛, ես պարապ մարդ չեմ...

— Մի՛ նեղսրտի, Փիլոս ախպարս, Ուստիս հետո խոսելեն չեմ կշտանա:

Եվ սկսեց սափրել մյուս կողմը:

— Հա՛,— նորից խոսեց սափրիչը,— Ղուկասը նոր մեծն ամբար շինել կուտա. քարերը թափեր է տվել, Կաղզվանեն վարպետ է բերե: Ըսի թե՛ մեր Ուստին թողած, ընչի՞ ուրիշը կբերես. էն էլ թե՝ որ ուզենամ իշու բաղնիք շինեմ, նոր խելառ Կարոյին կկանչեմ...

Սափրիչը խոսքը չվերջացրած՝ Ուստաև աչքերը բորբոքված բղավեց.

— Տո՛, ես քու... ի՞նչ ըսեմ, մեղա աստծու... վա՛յ հողը գլխուդ, Ուստա Կարո, ուրիշի վրաև շուն կհաչա, քու վըրադ՝ կատու... Սպասե՛, աչքիս լուսը պտի թափեմ, սպասե՛, ինձի Կարո կըսեն, ես իշու բաղնիքի մեջը կաշիդ պտի քերթեմ...

— Ուստա ջան, Ուստա՛,— թախանձեց սափրիչը,— զուր ընչի՞ արունդ կպղտորես, թո՛ղ հաչե ինչքան կուզե, չի կրնա խածե. հանդարտի՛, հանդարտի՛...

— Հանդարտ եմ, հանդարտ եմ,— ասաց Ուստաև հանդարտ ձայնով:

Եվ իրավ հանգիստ զգացմունքով՝ սկսեց դրսնավոր հագուստները ծալքի վրայից խնամքով դուրս հանել: Գալոն ավարտելով գործը՝ պատրաստվում էր մեկնել: Ուստաև իր սովորական առատաձեռնությամբ վարձատրեց նրան, որ մի քանի անգամ շնորհակալ լինելով գնաց, սափրելու պարագաները թևի տակ՝ արագատ՝ կաղին տալով:

Ուստաև հագավ տոնական հագուստները. հագավ նոր փայլեցրած կոշիկները, կապեց արծաթյա գոտին: Կապույտ սնդուկից հանելով մի ոսկեշող «բաղդատի», դրեց

գրպանը: Եվ նայելով ժամացույցին, ժամը 10-ն էր,— ծանրը քայլերով գնաց գյուղամեջ՝ գլանակը բերանի ձախ կողմում, դանդաղ ծուխ արձակելով:

Ելավ տանամայրերին այցի:

Աշխատանքի լուր օր էր: Գյուղացիները անցնում էին մտազբաղ՝ ոմանք մի երգ ծորելով քթերի տակ, ոմանք եզների ետևն ընկած, «հո՛, հո՛» գոչելով: Բարևում էին Ուստային և անցնում:

Մի դռան առաջ ոչխար էին խուզում, մյուսում՝ կապույտ քարով դմակը հականեխում: Մեկը կվարակ էր կտրում: Եվ գրեթե ամեն դուռ, երդիկ բոնել էր նորաձուխ հացի համով հոտը:

Մի տեղ՝ շվաքում նստած երկու կին զրույց էին անում՝ անուշադիր անցուդարձողներին. մեկը սանդերքի բուրդ էր գզում, մյուսը թեշիկ էր մանում:

— Սիրտս կուլա, աչքս չի լա, քուրիկ ջան, դու չգիտես, թե ես ի՜նչ քաշեցի մինչի էսօրը հասցուցի, մատներուս միսը կերա, մատներուս:

— Ասպած պահե, լավ տղա է, ազրայիլ է դառե:

— Օղորմածիկը կըսեր, թե՝ տղես մեծնա, թևիս թևը կեղնի, ո՛ւր էր մեկ ելներ, իրան աչքովը տեսներ:

Թեշիկ մանողը շշնջաց բուրդ գզողի ականջին, ապա սովորական ձայնով հարեց.— Դուսե դուս գիտեմ, լավ տեղյակ չեմ. դրո՞ւստ է, աղջի Մաքո:

— Էդ աղջիկը տեղովն աստղ ու լուսնյակ էղնի, էլ մեզի հարկավոր չէ...

Ուստան առաջ անցավ: Աչքին ընկավ Գասպարենց Մանուկի ամբարը, իր ձեռքի գործը: Դռան վերևը կարմիր քարի վրա որոշ տեսավ իր անունը, ինքն էր փորագրել: Թեև կարդալ գրել չգիտեր, բայց գիտեր ի՜նչ է գրած. «Ամբարս այս Մանուկ Գասպարյանցին, շինեցավ ձեռք վարպետ Ուստա Կարոյի. յամի 1901. ի Նախջվանի գեղջ Շիրակա»:

Հպարտացավ և փափախը ցնցեց գլխի վրա:

Առջևն ելան երկու գյուղացիներ: Բարևներից հետո Ուստան հարցրեց.

—Նիկո, իմանալով՝ տղեդ հիվանդ էր, ասծու աչքը վրեն էղնի, ի՞նչղ է հիմի:

— Գոհություն աստու, լավ է:

— Հայկո՛, ըսիր թե ջուխտըմ եզ ես առե, լա՞լն են:

— Քիչըմ տուկատ են, հիմի կերի եմ քցե, տեսնենք հլա:

— Բարով վայելես,— հարեց Ուստան՝ առաջանալով:

Պատահմունք էր, թե սրտի գաղտնի տենչ՝ Ուստան իրեն հանկարծ կանգնած տեսավ սանամայր Ծովինարի տան առջև: Բոլոր սանամայրերից ամենից շատ նրան էր համակրում, ճերմակ, նազուկ Ծովինարին: Եվ հակառակի պես բոլոր սանահայրերի միջից նրա ամուսնում՝ Դավիթին էր, որ Ուստան աչքով աչք չուներ տեսնելու:

Դավիթը կասկածամիտ, խորամանկ բնույթի տեր մարդ էր: Եվ թվում էր, թե բոլոր սանահայրերի միջից միայն սա էր նվազ հավատ ընծայողը Ուստային:

Սակայն քավոր Ուստան Ծովինարի սիրուց՝ բանի տեղ չէր դնում սանահոր պղտոր աչքը և ոտը չէր կտրում նրանց տնից, միայն աշխատում էր առանձին գտնել սանամայր Ծովինարին:

Դող առավ Ուստայի սիրտը. վարանում էր, մտնի՞, թե՞ չմտնի. ա՞յ, թե շունը ներսը լինի, ի՞նչ իմանաս: Ապա չորս կողմն աչք ածեց՝ կասկածը փարատելու համար մի նշան գտնելու, երբ նկատեց իր սանիկին՝ երեխաների աղմկող խմբի մեջ:

Երեխաներից մի երկուսը մի շուն բռնած ունեին, երկու ուրիշ երեխա մի կատու շան վրա էին ձգում ու վերստին հետացնում. շունը մոմոում էր զայրույթից՝ մռութը կծկած, իսկ կատուն ճիրանները հանած՝ ֆշշացնում էր:

Երեխաների մի ուրիշ, ավելի մեծ խմբակ՝ փոշոտ մագերով, բոբիկ, ճիպոտների վրա հեծած ձի-ձի էին խաղում. հետ-առաջ քշում էին ձիերը՝ հող ու մոխրի մեջ, մի բերան բղավելով. «Մոսկով—Խարկով կերթանք... Մենք էլ Սամսոն—Տրապիզոն կերթանք»:

— Սմբլո, գառնուկս, արի տեսնեմ,— ձայնեց Ուստան: Սանիկ Սմբլոն, մի շիկահեր մանուկ, ձին քշելով եկավ

Սամսոն—Տրապիզոնից, թե Մոսկով—Խարկովից, և ձիով միասին ընկավ կնքահոր գիրկը:

— Քավո՛ղ, քավո՛ղ, չամիչ կուզեմ, չամիչ:

Ուստան կես-ափ չամիչ գրպանից հանելով լցրեց սանիկի գոգը, և շոյելով հողոտ ու գզգզված մազերը, կամացուկ հարցրեց.

— Մերդ տա՞ն է, պուլիկս:

— Հա՛:

— Ընը՞ն,— գոհ սրտով հնչեց Ուստայի ձայնը:

— Հե՞րդ:

— Հերս էլ:

— Օհոոոո՛,— դժկամորեն՝ քթի տակ մնչաց Ուստան և կրունկի վրա ետ դարձավ. «Շունը տուն է»:

Երդիկներեն ելնելով-իջնելով հասավ Վարդանենց Տիգոյի տունը: Սանամայր Սանդուխտը Ծովինարից հետո երկրորդ սիրելին էր նրա:

Վստահ ներս մտավ սրահը. անախորժ բան չէր լինի, եթե Տիգոյին հանդիպեր, որովհետև իրար բարեկամ էին:

— Սանահեր Տիգո, սանամեր Սանդուխտ,— գոչեց նա.— Էս ի՞նչ է, շունչ չկա տունը:

Նրա ձայնի վրա տան դուռը բացվեց և շեմքի վրա երևաց սանամայրը՝ թուխ, կայծկլտուն աչքերով, կարմիրկանաչ հագած, դեղին մաշիկներով. տարի-կիսական երեխան գրկին:

— Յա՛, քավոր Ուստա Կարո, էդ դո՞ւն ես, բարով եկար, սանահերդ կհարցներ, թե ո՞ւր է քավորը, չի էրևա:

Առհասարակ, տակավին երիտասարդ սանամայրերը, նահապետական բարքի համաձայն, քավորների հետ «հարսնություն» են անում. երկար տարիների ընթացքում չեն խոսում, սակայն Ուստան այս օրենքի զորությունը նորցրած էր համարում, երբ մի-երկու տարի էր անցած լինում պսակի օրից, կամ նորապսակների տունը մի կամ առավելն երկու անգամ «մեռոն» էր տարած լինում:— Իսկ այն սանամայրերը, որ համառում էին «չխոսկան» լինելու մեջ, նրանց մոտ ոտ չէր դնում մինչև լռության լուծումը:

— Բարով տեսանք, սանամեր Սանդուխտ. Բագրան էի,

շա՛ն աշխատանք ունեի, սանահերս ո՞ւր է, մեծ սանամերը ո՞ւր է:

— Սանահերդ ջաղաց գնաց, կեսուրս էլ տալոջս տուն է, ես կըսեմ՝ իրար հետ կռվի ես գնացել:

Ռուտան դեմքի վրա առանց գոհունակության նշան հայտ բերելու, հանգիստ ձայնով ասաց.

— Եկա քեֆերդ հարցնելու, ի՞նչդ եք, լա՞վ եք:

— Բարով եկար, քու տունդ է. համե՝ ներս, փառք իրան, լավ ենք.— և քավորի ձեռից բռնելով ներս տարավ: Ռուտան մի ակնարկով նայեց թոնրատան չորս անկյունը, և նստեց ջվալով ծածկված աղասանդի վրա:

— Քավոր Ռուտա, քեզի ի՞նչ պատիվ էնեմ, ձվածեղ էնեմ՝ կուտե՞ս:

— Չէ՛, սանամերս, շնորհակալ եմ, նոր հաց կերա, մեկ էլ, պատիվս ո՞րն է, էնքան պատիվ եմ տեսե ձեզնեն, որ համրանքի չի գա:

— Թո՛ղ էղնի, մեկ բռնե սանիկդ, քեզի արաղմ բերեմ:

Երեխան Ռուտայի գրկում թովռալով թաթիկը ձգեց նրա բեղերին, ապա բռնեց ժամացույցի շղթան ու քաշեց: Քավորը հանելով ժամացույցը մոտեցրեց սանիկի ականջին. երեխան կուսական հետաքրքրությամբ՝ աչքերը զարմանքով բացած՝ լուռ ու լռիկ, լսողություն դարձած, մտիկ էր անում ժամացույցի ամուր շխկշխկոցին:

Սանամայրը բաժակը լեփ-լեցուն մատուցեց Ռուտային:

— Սանամեր... ջան...— «—ջան» բառը գրեթե կուլ տալով, ասաց Ռուտան, բաժակն առնելով.— սանիկս մեծցեր է, ի՞նչ սիրուն տղա է դառե: Տիգոյի լման է երեսի դրությով. աչքերը շատ սիրուն են, ես կըսեմ՝ քու աչքերդ են, տեղոց-տեղ, քու աչքերդ,— և շեշտակի նայելով սանամոր աչքերի մեջ, հարեց.— աստված պահե, հորով-մորով էղնի:

Եվ հենց ուզում էր օղին բերանը տանել, երբ սանիկը թաթիկով տվեց, ողջ օղին թափեց Ռուտայի ատլաս արխալուղի կրծքի վրա:

— Վա՛յ, լուսս թափվեր, ի՞նչ էրավ անառակը,— կարմրըրած ասաց Սանդուխտը երեխայի արարքի վրա ամա-

չելով և միաժամանակ այս պատահարի բնույթը ծիծաղաշարժ գտնելով, ժպտում էր, խնդում-խնդում աչքերով:

— Վնաս չունի, սանամեր, ի՞նչ եղավ որ, ի՞նչ եղավ որ, — կրկնում էր Ուստան, այնինչ սանամայրը երեխային գետնին դնելով, կրծքկալի տակից հանեց թաշկինակը, սկսեց սրբել քավորի թրջած կուրծքը: Սրբելիս սանամոր մազերի ծայրերը շոյանքով քսվում էին Ուստայի երեսին: Սանամոր շնչի գոլը, որ պատրանքն էր տալիս եփվող չիր ու չամչի քաղցր շոգուն, գրգռում էր Ուստայի ռունգները:

Նա ուզում էր, որ մինչև Քրիստոսի դատաստան ընտելը սրբեր սանամայրը, սրբեր իր թաց կուրծքը, որի ներսը սրտի մեջ, զգում էր սանամոր նազուկ մատների ախորժելի խոխոանքը:

Սանամայրը ավարտեց.

— Էս չեղավ, քավոր, մեկ հատ էլ լցնեմ:

Ուստան անխոս համաձայնեց:

— Ողջ էղնիս, Տիգոյի հետ բախտավոր ապրիս,— ասաց օղին խմելով, ապա գրպանից «բաղդատին» պարզելով սանամորը.

— Էս քեզի համար եմ բերեր. հատուկեն Երևանեն բերել եմ տվե. չեմ ու չում չկա, առնես պտի:

Ուստան այստեղ սուտ խոսեց՝ հակառակ իր ճշմարտությանն: «Բաղդատին» հատկապես Ծովինարին նվիրելու դիտումն ուներ, բայց այն այցի անհաջողությունը և Սանդուխտի մատների քաղցր «խտուտը» սրտի մեջ՝ վայրկենապես փոխել տվին նախկին մտադրությունը:

Սանամայրն աչքի ծայրով զննեց գեղեցիկ «բաղդատին» և շա՜տ հավանեց:

— Շնորհակալ եմ, քավոր Ուստա, ավելորդ բան էր էսիկ, քեզնեն էնքան փեշքեշ ունիմ որ...

— Դուն իմ սովորութը չես կրնա փոխե, առ գլուխդ քցե, մեկ տեսնեմ:

— Որ շատ կուզես, տու, գցեմ,— շինծու անտարբերությամբ ասաց Սանդուխտը. և արձակելով գլխի նախկին ծածկույթը, նվեր բերածը կապեց, ոսկեշող բաղդատին, ապա կրծքկալի տակից հանելով մի փոքր կլոր հայելի՝

կարմիր կաշեպատ, ուղղեց մազերը, և աչքերի ծայրը ժպիտով նայեց քավորին:

— Կսազա, չէ՞, քավոր...

Ուստան մի անհագ հայացքով գրկեց սանամորը:

— Օհա՜յ, սանամեր ջա՛ն,— շեշտելով «ջան» բառը,— աննման դառար, սանահեր Տիգոյի աչքը լուս:

Սանամայրը, հանկարծ վար առավ բաղդատին, ծալեց տվեց քավորին ասելով.

— Ա՛ռ, քավոր, էգվան բեր, կեսուրիս յա մարդուս քովը տու:

— Ընչի՞,— բեկված հարցրեց Ուստան:

— Որ մտքերեն գեշ բան անցնող չեղնի...

Ուստային հանելի չեղավ վարմունքի այս կերպը, և նրա ձայնին ծանանելով կրկնեց նրա խոսքերը.

— Ընչի՞ տնազ կենես, Ուստա:

Սանամայրը ջղայնացած՝ կտրուկ վրա բերեց:

— Ես քեզի բան կըսեմ, ի՞նչ է, կուզես՝ վրաս խոսի՞ն, բամբասե՞ն:

— Մարդն էլ բամբասանքեն վախնա՞,— խրախուսեց Ուստան:— Բամբասանքն որ կա, դարդակ թվանք է, դարդակ թվանք:

— Թող էղնի. ով ուզե-չուզե, ես չեմ ուզե, որ ընձի առնեն-ծախեն, արժեցող-չարժեցող դնե-վերցնե. ես գետինը կմտնիմ:

— Թող չարկամդ գետինը մտնի, դու ափսոս չե՞ս. սանամեր, էնպես, խոսքի օրինակի համար կըսեմ, մարդ պիտի իրան օրն էնե, հաչողը թող հաչա:

Ուստան թեև ինքն էլ չէր հավատում իր ասածին, ինքն էլ չէր սիրում բամբասել ու մանվանդ բամբասվիլ, բայց «խոսքի օրինակի» համար ասաց, ինչ որ ասաց.

Սանդուխտը չլսելու տվեց և երեխային գետնից վերցնելով գիրկն առավ:

— Սանամեր, դո՞ւն էլ աչքերդ կդեղես. էսօր թերթիչներդ շատ սև կերևան:

— Էդման բաներու պետք չունիմ,— հպարտ պատասխանեց սանամայրը:

— Մեկ մոտեցիր, աչքովս տեսնիմ, չեմ հավատա,— ասաց Ուստան, ելնելով սանդի վրայից և մի քայլ առնելով դեպի նա:

Սանամայրը խեթ նայելով Ուստայի աչքերի մեջ՝ վճռական ասաց.

— Քավոր, հիմի կեսուրս կուգա, չմոռնաս էգվան գաս ձվաձեղի, սանահերդ քեզի կարոտցեր է:

— Լավ, թե որ միտքս մնա,— ձայնի դժգոհ գույնով ասաց Ուստան և մնաս բարևի ձեռք տվեց սանամորը, որի ժպտուն խաղերով ծոր գնացող աչքերը ճանապարհ դրին կես-խոով, կես-հաշտ քավորին:

Ճանապարհին Ուստան, ակամա, պատկերեց սանամոր աչքերը — փայլուն, կայծկլտուն: «Սիրուն, համով հարս է, էրնեկ պաչողին, մեռոն եմ տուն քերե, թե չէ...» — չգիտավորեց մտքով անցածը և շուռ եկավ դեպի սանահայր Մարգարի տունը:

Մարգարի տան առջև հավաքված էին մի խումբ կանայք և աղջիկներ: Ծփոթ, աղմուկ, խոսք ու ծիծաղ: Ուստան ոտը քաշ տվեց. կին ու աղջիկ հավաքվել էին Չարչի Կակոսի գլխին: Կաղզվանցի փերեզակ Չարչի Կակոսը՝ թրթուրը կերած կաղամբի պես երեսով՝ փռել էր նրանց առջև իր բողչան (կապոցը)՝ շարժական խանութը: Թել, ասեղ, ասղաման, մատնոց, կոճակ, մաստակ, ժապավեններ, կարմիր ու դեղին սապոններ, պստիկ հայելիներ, հասարակ գույն-գույն քարերով մատանիներ, և ուրիշ շա՜տ բաներ:

— Քա՛, գետինը մտած Կակոս, հոգի կծախես, սա՞նդր է, թե՞ ոսկի: Վո՜ւշ, ի՜նչղ լավ օյա է,— զարկվորածին տե՛ս, կրակի գին կուզե...

Կակոսի էշը, անտարբեր կանանց աղմուկին, ձանձրացած, վիզն անընդհատ քսում էր սայլի կոփին, ժամանակ սպանելու համար, իսկ տերը ոգևորված, ապրանքն էր գովում, որ եկած էր Ստամբոլից, Թավրիզից ու Թիֆլիսից:

Ուստան խառը ձայների միջից լսեց սանամայր Սրբուհի Նանոկաչուն ձայնը... «Խառն է գլուխը սանամորս, բնկալը

հավկիթ պիտի չթողնի հոգուցքի համար»— ժպտալով խոսեց մտքի մեջն Ուստան և հառաչացավ:

Սանահայր Մուշեղի տան գավիթը լցված էր ծխով, որ թոնրատան բաց դռնից հեղեղի պես բխում էր. «Սանամերս հացի է»,— ինքնաբեր՝ ասաց Ուստան: Դռան առջև կապած այծը եղջյուր բռնեց նրա դեմ. այծի մորուքը շոյելով, ծխից հազալով, կամացուկ սեամն անցավ Ուստան:

Սանամայրը բազուկները մերկ մինչև արմունկները՝ մեն-մենակ և՛ խմորի գունդն էր բաց անում գրտնակով և լավաշը կպցնում թոնրի կողին, և եփած հացը փոում շուրջը: Թոնրի գոլից խիստ կարմրել էր նրա դեմքը, և քրտինքը առատ կաթիլներով հոսում էր ո՛չ միայն ամբողջ դեմքից, այլև մազերն ու թարթիչների ծայրերը պտղել էին քրտինքից: Երևում էր, որ միայնակ աշխատանքից չափազանց հոգնել էր խեղճ սանամայրը Վաթոն, հոգնած ու սրտնեղած:

Ուստան սակայն թանձր ծխի միջից չկարողացավ կարդալ նրա այս վիճակը, և կատակի համար դուռն անձայն գոցեց և հենց այն վայրկյանին, երբ սանամայրը բազուկը թոնրի շրթին հենած, կռացել էր թոնրի կրակը խառնելու՝ Ուստան դարան մտած կատվի պես վրա վազեց և բռնեց մերկ բազուկը:

Սանամայրը վախեցած՝ իսկույն ետ նայեց և տեսնելով քավորին, բարկացած պինդ քաշեց բեղերից:

— Չոզըկիս, քավոր, ինձի թոնիրն էիր բցե:

— Ես էլ հետդ էի...— ուզում էր ասել՝ «իրար հետ մոխիր կդառնայինք», լեզուն կծեց և չասաց, այլ հարեց ժըպտալով:— Ինչի՞ վախեցար, հանաք կենեի...

— Գնա սանամեր Ծովոյիդ հետ հանաք էրա...

Ուստան շփոթվեց, չկարողացավ պատասխան տալ. նա գիտեր, որ սանամայրերն իրար նախանձում են քավորի համար, մանավանդ երբ իմանում են, թե ո՛ւմ ավելի թանկ նվեր է տվել, ո՛ւմ ավելի ատեպ է հանձախում: Բայց «տնակոլի կնիկը ուրտի՞ց գիտե, թե ես Ծովոյին էվելի կուզեմ. տո՛, կնիկները ի՞նչ սուր քթի ծակեր ունին»— խորհում էր Ուստան շփոթված ու հանկարծի եկած:

— Քու փնտրածդ Ծովոյիդ քովն է,— կծու ձայնով ասաց սանամայրը՝ աչքերը տրորելով:

— Սանամեր Վաթո, ընչի՞ էդման բաներ կըսես. ամեն սանամորս էլ ես մեկ աչքով կաշեմ: Ընչի՞ հոգուդ մեղը կենես:

— Քու աչքերդ քեզի մնա, իմ աչքերս քոոցան, դուռն ընչի՞ ես դրե, բա՛ց, ե՛լ բաց:

Ուստան, տհաճ, գնաց դուռը բացեց, ու մնաց դռան մոտ: Սիրտն ելել էր շատ. վրեժով լցված՝ ձայնը ծոր տալով, ասաց.

— Էսօր ձախ ոտքիդ վրա ես զարթնել, լեզուդ չեմ հասկնա:

— Ըսկի էլ մի՛ հասկնա,— չոր-չոր պատասխանեց սանամայրը, և անուշադրությունից կուտ ընկած մխացող հացը նետելով հեռուն՝ հարեց.

— Քեզի հասկցող ունիս...

Ուստան զայրացած չթողեց, որ նա խոսքը լրացներ, ինքը կանխեց մի շնչով՝ ասելով.

— Էդպե՞ս, շատ լավ, թե որ էսուհետ թագավոր ծնիս, էլ քեզի քավոր էղնողը չեմ: Գնա գտի քեզի հարմար խնամի, որ պոչը պոչիդ նմանի...

Եվ շտկվեց դեպի սրահը, դեպի դուրս:

Սանամայրը, զղջացած իր կոպիտ վարմունքի վրա, քավորի ետևից քաղցրաբար կանչեց.

— Վա՜յ, նեղացա՞ր, բա՛, հողը գլխուս, ի՞նչ ըսի, որ նեղացար, հանգաք էրի. սիրտդ ի՞նչ փուխր է...

Ուստան չէր լսում: Սանամայրն ավելի բարձր ձայնեց.

— Քավոր ջան, արի, արի՛, լավ անքաշ պանիր ունիմ, նոր լավաշի հետ կեր:

Ուստան ետ չդարձավ:

— Թե որ նեղացար, ես էլ նեղացա: Փիլոս աղբորս բաժինը մենակ տուն կղրկեմ, քեզի համար չէ:

Սակայն Ուստան արդեն փողոցումն էր: Ծխից ազատվելով՝ լիաթոք շունչ քաշեց մտքի մեջ խոսելով.— «Էսօր Վաթոյի սիրտը տեղը չէր. կամ սանահորս հետն է կռվե, կամ սանամեր Ծովոյի հետ է խոսք-խորաթա ունեցե, ու

հիմի ոխն իմնեն առավ, անցուք-մոռցուք էնենք: Վաթոն ափսոս է, սիրտն էլ բարի է. տո՛, թշերն էլ իրան անվանը պես ինչդ կարմրեր էին, վա՛րդ, վա՛րդ»:

Եվ համր քայլերով մեկ-մեկ միտքն էր բերում բոլոր սանամայրներին, թե ո՛րին ավելի հաճելի է գնալ, և որոշեց այցելել հին սանամայր Հեղնարին՝ Մարջանենց Սարոյի կնոջը:

Սանամայր Հեղնարի շվաքը մտնելով, տեսավ՝ սանամայրը մենակ չէ, մի կնոջ հետ խոնոցի է հարում, և մի ուրիշ կին էլ, անգործ, նստել է պատի տակ, քարի վրա: Զրույց էին անում:

— Բարի հաջողում, սանամեր, բարով ձեզի, քուրիկներ,— ի՞նչդ եք, լա՞վ եք, սանահերս տո՞ւնն է:

— Բարին եկար, քավո՛ր,— պատասխանեց Հեղնարը, խնոցու ծփումը դանդաղեցնելով,— սանահերդ գեղամեջն է, հիմի կուգա, նստի, նոր կարագիս համը տես:

Ուստան նստեց թմբիկի վրա, սանամայրը մի խոշոր կտոր կարագ հանեց դրեց լավաշի վրա:

— Քավոր Կարո, անուշ էրա:

— Ուստա, լողաց՝ Բագրան լավ քեֆ եր էրե, մեր մարդըն ըսավ,— խոսք բաց արեց պատի տակ նստած անգործ կինը:

— Ամենօրվա քեֆն էր, ուրիշ տեսակի չէր, որ գեղե գեղ ձենձնվեր է,— անտարբեր պատասխանեց Ուստան՝ կարագը հացին քսելով:

— Հազար էրնեկ տղամարդոցը, ըսկի ձեզի չեք զրկե. մենք ի՞նչ ենք որ — ճիժ, պիժ, էս է՝ խնոցի, թոնիր...— նախանձով ասաց մյուս կինը գլխի թաշկինակն ուղղելով:

— Աստծու դրունքն է,— ասաց Ուստան, պատառը բերանը տանելով:

— Հա՛, խոսքս Ուստեն շաքլարով կտրեց,— սկսեց անգործ կինը ընդհատած զրույցը.— հա՛, էն կուզեի ըսել, թե բախտն է բանը, ա՛յ, մեր Ավագի համար չառանք Մավրակցու Սաքոյի աղջիկը... Հիմի դու տե՛ս, թե էն ի՞նչ հարկ է դառել. ողջ տունը ծաղկեցրեր է. մատներեն ի՞նչ շնորհք ըսես կթափի՝ կարել, օյա գործել, չիտեմ որ մեկն ըսեմ...

— Արժանի չէր էդ աղջիկը, փսլնքոտ Սողոյին,— ասաց մյուսը:

— Լավ միտս ընկավ. էնօրը ժամ էի գնացե, Բուլիկենց հարսը տեսա...

— Ո՞րը...— հարցրին մյուս երկուսը:

— Էն ասոռու պատկերքը...

— Ասոռու պատկերքը...— քահ-քահ ծիծաղեցին՝ կըրծքկալները բռնելով, որոնց տակ խնոցու պես ծփում էին լիալիր ստինքները:

— Համա ի՞նչ զուգված-զարդարված էր, գլխուն մե շալ կար, թե որ ըսեմ 20 մանեթ արժենար, էլի քիչ է: Ախպերը Բաքու աշխատանքի է գնացե, քրոջ Զատկվա արմաղան է ղրկե. ախպեր էլ կա, ախպեր. երեք տարի է հերանցս տունը ոտք չեմ կոխե, ըսա՝, կերևա՞ս էդ անխիղճ ախպերտինքս, թե՝ քուր, կաս, չկաս... Ես գիտե՞ս, ի՞նչդ քուր եմ էղեր էդոնց համար. լուսնոգի մորս մեռնելեն հետև, անունս չեն տա, հարսներս որ, օ՞խ, ծակծկվին, զարկվին, թևերու միսն ուտեն, հորս հացը ընձի կխնայեն. հա՛, ըսածս էլ չեմ իմանա՝ թե ինչ կըսեի...

— Հերանցդ տան վրան էր:

— Ես կըսեմ, Ավագի վրան էր,— միաժամանակ երկուսը միասին օգնեցին նրան հիշելու ասելիքը:

— ՉԷ՛, միտքս եկավ, շալի վրան էր խոսքս. աղջիկներ, մեր գեղը էդպես շալ չկա, ինքը ծիծեռնակի գուն ունի, վրեն վարդի պուտ-պուտեր կան, տեսնելու բան է, լեզվով չի ըսվի... Քեռեկինս մե շալ ուներ, միտքս է, աղջիկ ժամանակս, վրան կզարմանայինք, էն էլ թանկանոց տեսակեն էր, գուլը ղայֆայի, վրան կաս-կապուտ նիշաններ...

Ուտան պատառները կամաց-կամաց ծամելով, լսում էր ուշադիր:

Շալի գովքը անողին ընդհատեց սանամայրը:

— Ենկոյենց տղեն կնշանվի, պատգամ են ղրկե Բադոյենց Սաթենիկի համար. հերն ու մերը կամ չեն, հմա աղջիկը ոտքը զարկեր է գետին, կանգներ կըսե, թե էդ տղին կուզեմ որ կուզեմ, աչք են քցեր իրար վրա...

— Հողեմ էդոնց գլուխը... էդ աղջիկը շատ իր ըսածին է.

բոի էկող չէ. ում տունը մտնի, քանդե պտի,— Հեղնարի խոսքը կտրեց մյուս խնոցահարը.— հերու սարը ժախի էինք գնացե, էդ աղջիկ չեղածը աչքով-ունքով տղոց հետ կխոսեր միալար...

— Էնոր մորը, Նարգիզին, ես լավ գիտեմ — մեջ մտավ անգործ կնիկը,— հորքուրիս տալի աղջիկն է, շատ խաղացողն էր, գեղի հոտաղներու հետ կլուսցներ, էնոր վրան մեր գեղը խաղ կար կապած. էսպես կըսեին.

Ջաղացս կեներ ալուր,
Նարգիզ, մի՛ մնա մալուլ,
Սիրեր եմ, քեզի կառնեմ,—
Թող բերե հետը բալուլ..

Նորից բարձր ու զվարթ ծիծաղեցին, Ուստան էլ ծիծաղեց:

— Հըմա, ի՞նչ կըսես,— շարունակեց նրա խոսքը սաևամայր Հեղնարը,— հիմի ի՞նչ տնտես համավոր-հարկնոր կնիկ է դառե, կզարմանաս...

— Ընչի՞ կզարմանաս, աղջիկ ժամանակը էնքան է կերե, կշտացեր է՝ հիմի փուքն իջե, ճստեր է,— սաևամայր Հեղնարի խոսքերին հյուսեց իր խոսքերը մյուս խնոցի հարրողը, մինչդեռ Հեղնարը առանց նրան լսելու շարունակում էր իր խոսքը:

— Էն որ չեղնի, էնոնց տունը քար քարի վրան չի կենա, մարդը հավի մեկն է...

— Հավի մեկն է... լավ գտար. էն իրանց թաղի աբլորն է, էնպես տակե տակ մարդ է, ժամեն հետ չի ընկնի, գիշերները տան երես չի տեսնի, էսոր-էնոր դուռը ափ կառնի.— անգործ կինն էր խոսողը, որ ինքն էլ իր կողմից նրանց խոսքերին հյուսեց իր խոսքերը:

Ուստան ուզում էր ինքն էլ մի-երկու խոսք ասել, բայց միջոց չէին տալիս:

— Աղջիկներ, ըսպա չեք հարցներ, Ջաբարենց հարսը երկու որբը երեսն ի վար գցած՝ Խեչաենց Մաթոսին կառնի...

— Վո՛ւշ, մարդ էլ Մաթոսին կնիկ կեղնի, էն էլ Մանուկի պես մարդ ունենալեն հետո...

— Չէ՛, էդպես մի՛ ըսե, կեսուր-կեսարի քթի ջուրը քաշելե հազար տակ լավ է իրան հմար մարդ ունենալը:

— Էդ էլ շիտակ ըսած է, թե՝ աքլորի չափ մարդս ունենամ, մե կալի չափ տեղս կունենամ...

Ուստան ձանձրանում էր. վեր կացավ գնալու:

— Կեցե՛ք բարով,— ասաց,— սանահորս հետ գործ ունեի, էրթամ գտնեմ:

— Յա՛, ի՞նչ շուտ ելար,— ասաց Հեղնարը,— խոսքի բռնվանք, մոռացանք բավորիս, կեցի, հիմի սանահերդ կուգա:

— Չէ՛, սանամեր, էրթամ, սհաթի 12-ն է,— ասաց՝ նայելով ժամացույցին,— չեմ կրնա մնա, կերթամ շենլիքի ժողոված տեղերը, սանահերս էղավ՝ էղավ, չեղավ՝ տուն կերթամ, մարդ պիտի գա քովս...

Եվ գլանակը վառելով՝ հեռացավ:

«Տո՛ էս կնանիք խոսքը իրար բերնե կխլեն,— խոսում էր ինքնին Ուստան՝ մտքի մեջ բարակ ծիծաղելով,— ամեն մեկը իրան հաշվին կխոսի, ամենքն էլ մեկ ժուկի-ժամի մեջ կխոսեն. մեկը մեկէլի խոսքին չի պատասխանե, ու ըսկի իրար չեն լսե, հե՛չ: Էնպես դուրս կուգա, որ կնկա համար լսող պետք չէ. էնքան որ ինքը խոսի: Կնկա ականջն էղեր է օղի համար, չէ թե՝ խոսքի. կնկա խոսքն էլ որ կա, իրան մանած թելեն երկեն է»:

Դժգոհ մնաց Ուստան այսօրվա այցերից: Ինչո՞ւ համար, ի՞նչ էր ուզում, ինքն էլ չգիտեր: Դժգոհ էր, սակայն և ընդհատելով նախորոշած այցերի շարանը՝ մանե եկավ փողոցներում, գտնելու իրեն վայել մի ընկեր, հաճելի ժամանցի համար: Ամայի էր, սակայն, գյուղը. բանի-գործի օր է, ապրել-մեռնելու օրեր էին:

Շրջում էր ու խորհում Սանդուխտի կասկածահարույց խոսքերի վրա. նրա ձայնը դեռ ականջում հնչում էր. «Կուզես՝ վրաս խոսի՞ն, բամբասե՞ն»:

Ի՞նչ ավելորդ խոսքեր, ո՞ւմ բամբասեն, ինչո՞ւ համար... Նա սովորույթ ուներ, ինչ գյուղ որ աշխատելիս լիներ, ազատ

պահերին սանամայրներին այցի երթալու: Մի սանամոր մի օրի, մյուսի մոտ մի ազնիվ պատառ վայելելով՝ անուշ-անուշ զրույցներ աներ, նորություններ ասեր ու լսեր, կատակներ աներ, ծիծաղեր ու ծիծաղեցներ: Եվ մեկի հետ սիրով, մյուսի հետ խոով բաժանվելով, նորից թե՛ սիրովին, թե՛ խոովին տես երթար՝ անխուսափելի ընկերներով, և նորից անմեկին հյուրը լիներ խաշիլին ու հարիսային, նորից իր բաժինն ընդուներ սերից ու մածունից, կարագից ու գաթայից:

Այսպիսի ընտանեկան անմեղ հարաբերություններ: Սակայն, չնայելով այս իրողությանը՝ Ուստան մի օր իմացավ, որ իրեն բամբասողներ կան: Սկզբում ուշ չդարձրեց, բայց զանազան ուղիներով նրա ականջին նորից նոր հասնում էին այդ չարամիտների բամբասները:

Զարմացավ ու զայրացավ այդ անանուն բամբասողների վրա: Ո՞վ էին, ի՞նչ էին ուզում իրենից: Եվ քրքրելով բամբասանքների «թնջուկը» հասավ արմատին.— Ղուկաս աղան էր իր «դասերով». Ղուկասը՝ տիկը, նրանք՝ բերանը: Իր սանամայրների պատիվը պաշտպանելու համար, չուզենալով հասարակության առջև խոսք ու վեճ բանալ, մի ընդհանուր ծանոթի միջոցով խրատիչ ու սպառնալից լուր ուղարկեց Ղուկասին. «Գնա՛ էդ մե հոգևորին ըսա՝ բերանն իրան քաշե, ամոթ է. թե չէ, ոչ թե խոնճանիս պես բերանը կկապեմ, հապա էդ հատ բուկը խոնճանովս էնպես խեղդեմ, աչքերն առիքը թռնի»:

Ուստան սպառնացավ ու հանգստացավ. թեև իր հինգ մատի պես գիտեր, որ նորից նրանք, Ղուկասի մարդիկը, պատերի տակ կծկված՝ իրար ականջ փսփսում են զուր ու մուր խոսքեր, միաժամանակ ցանկանալով, որ այդ փսփսուքները հասնին Ուստայի ականջին, խուսափելով հրապարակով ասել՝ վախենալով ծեծ ու կռվից:

Ուստան այլևս անտարբեր էր դրանց հանդեպ, սակայն Չավուշը, որ վարպետի սիրտը գիտեր և արդեն նրանք իրար խոստովանահայրերն էին, երբեք չէր հանդուրժում այդ չարաշռուկ ակնարկներին,— և մի օր, փրփուրը բերանին՝ հարձակվեց Ղուկասի դասերի վրա. «Ցո՛, չարի

Ճարտար, բարու տիմարներ, շիտակ է ըսած, թե՝ գեշ մարդը գեշ կմտածե, լավ մարդը՝ լավ. ամեն մարդ աշխարքը իրան սրտի պես գիտե: Դուք ընչի՞ ուրիշին ձեր գեշ աչքով կյաշեք. Ուստե՞ս, էն սուրբ մարդ է. զուր տեղը հոգիներդ ընչո՞ւ կմրեք»:

Իսկ չարախոսները փորձեցին իրենց վրայից մեղքը նետել անտեսանելիի վրա. «Կըսեն, մենք ի՞նչ էնենք, կըսեն. ո՞ւմ բերանը բռնես, մեզի ի՞նչ, մենք լսածը կըսենք»:

Չավուշը զայրացած, խրատելով զգուշացրեց. «Ես կիտեմ ձեզի տուն տվողը, չափերդ ճանչցեք, է՛լ չեղնի, չիմանամ ձեր հաչմչոցը...»:

Քիչ մնաց կռիվ ծագեր, բայց Ղուկասի մարդիկը տեղի տվին, որովհետև թույլ էին նրանք, այնինչ Ուստայի ետևը կանգնած էր գյուղի մեծ մասը...

Ղուկասի մարդիկ աստամները կրճտացնելով ասում էին իրար. «Տո՛, վո՞վ են էս թոկե փախուկները, որ եկեր մեր գեղի վրեն լեզու կփարթեն, հողը մեր գեղի մեջնեներուն, է՛ն սև հողը»...

Մինչդեռ Ուստան խորհուրդ էր տալիս ընկերոջը անվրդով մնալ:— «Չավուշ ջան,— ասում էր նա,— թո՛ղ խոսին. էդ նշան է, որ մսերս անուշ է՝ կծամեն: Մեկ էլ՝ աշխարքի օրենքն էնպես է, որ, թե ականջդ կտրես գցես աշխարհամեջ, ու թեկուզ երեխի պես անմեղ էղնիս, հենց տես ու նանաձնչիդ կողմեն էման գեշ խոսքեր վրադ լսես պիտի, որ հենց իմանաս, թե երդում կերած թշնամիքդ են էտոնք. էդ տես ու նանաձնչներդ. էլ ո՞ւր կմնան թշնամիքդ»:

Սակայն բուն թշնամիները, Ղուկասն իր դասերով, առանց իրենց հոգիներին մեղք անելու, մինչև օրս չէին կարողացել մի անհերքելի, վարկաբեկիչ փաստ ներկայացնել Ուստայի և սանամայրների փոխհարաբերությունների մասին, և նրանց ջանքերը տարիների մեջ զուր էին անցել՝ երբեք չկարողանալով իրենց լրտեսների միջոցով Ուստայի բերանից, նրա ամենաթունդ հարբած պահերին էլ, մեղադրիչ մի խոսք դուրս քաշել, թեև Ուստան բնությամբ գաղտնիք պահող չէր, թեև նրա բերանում չիր չկ

թրջում: Եթե իրավ գեշ բան լիներ, ողջ գյուղերը ամեն բան տեղին, անուն-անուն պիտի գիտենային:

Այսպես, թեև այս ամենը չարանյութ վարկած էր, բայց և այնպես, նորից միշտ նրանք էին՝ Ղուկասի մարդիկ: Ղուկասի սադրանքով՝ պատերի տակ կծկված՝ իրար անանջ փսփսում էին զուր ու մուր խոսքեր. միաժամանակ ցանկանալով, որ այդ փսփսուքները հասնեին սանահայրերի ականջներին, խուսափելով հրապարակով ասել՝ վախենալով վեճ ու ծեծից:

Իսկ սանահայրերը մի ականջով լսում էին այդ բամբասանքները, մյուս ականջով դուրս տալիս: Նրանք լավ գիտեին, որ Ղուկաս աղայից զատ, իրենք էլ ունեին թշնամիներ, որ ոխ են հանում իրենց կանանց բամբասելով: Քավորը ով էլ որ լիներ, նույնը պիտի լիներ, Ուստան մեղավոր չէր. մեղավորը՝ աշխարքի կարգն էր:

«Ուստայի սիրտը,— ասում էին նրանք,— իստակ է. էրեխի սիրտ ունի, մենակ լեզուն է, որ մեկ-մեկ կարկուտ կենե: Ուստեն պարզ մարդ է, աստատ չունի, և էլ ուրիշներու պես դարմանի տակի ջուր չէ»:

Եվ սանամայրներն էլ, որ հարգում էին ու սիրում Ուստային՝ իբրև շնորհքով, լեզվանի, իրենց ամուսիններից գերազանց մի տղամարդու, պաշտպանելով նրան՝ ասում էին. «Ինչ որ քավոր Ուստի սիրտնն է, էն էլ լեզվի ծերին է. Ուստեն տուն-տեղ, կնիկ-երեխա չունի. մենակ մեզնով, իրան սանիկներով պտի մխիթարվի: Թո՛ղ գա-երթա, վով գեշ բան կըսե, ըսողին չմնա»:

Ուստան էլ բաց ճակատով էր նայում սանահայրերին: Որովհետև ինչքան իրեն գիտեր, ո՛չ մի արարքով չէր մերձանչած բարեկամության սուրբ օրենքի դեմ: Ինքը աստվածավախ մարդ է, ջերմ հավատացող եկեղեցու խորհուրդներին: Խաչ բռնելով ու մեռոն տանելով՝ սուրբ կարգ է կատարել և այդ սուրբ կարգի զորությամբ քույր-եղբայր են դարձել իրար բոլորովին օտար մարդիկ:

Եվ աշխարհ դատաստան նստի, վրան գեշ բան չի կարող գտնի: Բայց արդյոք այդպե՞ս է իսկությունը, ներքին մարդը.— արի տես, որ սիրտը... է՛ն ուրիշ բան է մարդու

սիրտը... Ուստայի մարդկային սիրտն էլ, հակառակ իր ազնվական կամքին, երբեմն պղտորվում է անվայել զգացումներով:

Իրենից զորեղ մի բան կա, իր կամքից հզոր մի բան, այն որ երբ սանամոր մեկը ժպտուն աչքերով արաղ է տալիս, ակամա խղճ է վառվում իրեն սրտում, կամ պարի մեջ իրար ձեռք բռնած վեր-վար թռչելիս սիրտն էլ դող է առնում սանամայրների կրծքկալների տակ դող ընկած «սրսփուն» ծծերի մեջ ու միասին...

Ի՞նչ աներ... սիրտը որ կա՝ լկամը կտրած սատանի ձի է, ոտները պիտի կոտրես, որ չտանի քեզ քարե քար ձգես: Եվ սատանի ձիու ոտները կոտրելով՝ Ուստան հանգիստ ու մաքրախիղճ քայլում էր մի սանամորից մյուս սանամոր մոտը և այնտեղից էլ ուրիշ նոր սանամայրների մոտ, որոնց թիվը տարվե տարի շատանում էր:

Նրանցից ավելի ընտիր, ավելի առատաձեռն քավոր ո՞ւր կարող էին գտնել: Կաթնաճուճցի պես ձեռքե ձեռք էին խլում անզուգական, պատվական քավոր Ուստա Կարոյին:

Ծ Ե Ր Ե Ր Ը

Ուստան, հակառակի պես, այսօր իրեն արժանի մարդու չպատահեց, որ նստեր՝ հետը խոսեր, պարապություն անցներ: Գնաց եկեղեցու բակը, ուր սովորաբար կհավաքվեին պարապ մարդիկ զրույց անելու, գյուղի և գյուղերի անցուդարձերի մասին մտքերի փոխանակություն անելու:

Այստեղ էլ իրեն ընկեր մեկը չգտավ:

Եկեղեցու պատի տակ նստոտել էին ութ-տասը ալևոր ծերուկներ՝ 70—80 տարիներով բեռնավոր: Ուղղակի մարդկային փլատակներ էին նրանք, յուրաքանչյուրի վրա ժամանակի դաժան հարվածները... անխնա իջած:

Ոմանք ոսկրացած, դեղին մատներով, դանդաղ՝ հին «տերողորմյան» էին քաշում, քթերի տակ աղոթքի կտոր-

ներ մրմնջալով. ոմանք սրացած, դողդողջուն ծնոտներով ծխամորճն էին բռնել՝ անարյուն շրթներից ծուխը հուլորեն դուրս թողնելով:

Տարրալուծված էր, որ ավելի կամ նվազ չափով, բոլորի դեմքերը՝ հազար կնճիռներով, խավար խորշոմներով ծոմոված ու ճմրթված. չորացած, մեռելի գույն մաշկը ոսկորներին կպած:

Մեկ-մեկ դիտում էր Ուստան նրանց: Բաց էր բոլորի բերանը, քթերը կզակներին հասած. այտերը փոս ընկած, աչքերը փոքրացած ու հանգած, անթարթիչ, հաստ, վերքի պես կարմրացած կոպերով. ճերմակ կամ թափած հոնքերով... Ոմանք գրեթե բոլորովին անմազ ու անմորուք. ոմանց նոսր մազերը մետաքսից ավելի բարակ, հյուսված՝ ձյունաճերմակ և կամ դեղնավուն... Եվ գրեթե գլուխները գետնին հասած՝ գերեզմանի հողին կարոտ:

Ամենքին էլ, մեկին շատ, մյուսին քիչ, շոշափելի էր մահվան ձեռքը:

«Էս խեղճերեն մեռելի հոտ կուգա», մտքով ասաց Ուստան և նստեց մի քիչ հեռու, լսելու նրանց զրույցը՝ կարեկցանքով լի աչքերը անթարթ նրանց վրա հառած:

Նստել էին նրանք կողք-կողքի. մի երկուսը իրար ուսի ծռած՝ ննջում էին...

Ծերերից ամենից երիտասարդը, ինչքան ձայն ուներ, բղավեց ամենաալևորի ականջի կիպ ծակին.

— Օհա՜ն ջան, Օհա՜ն ամի, փեսեդ ընչի՞ Էրևան գնաց:

Օհան ամին հարցաբար նայեց՝ աչքերի մեջ մարող կրակի մի նեմ կայծ ցոլացնելով: Հարցավորը կրկնեց խոսքը: Նորից պատասխան չառավ: Հարցավորը չորացած կոկորդը ավելի ուժգին քերելով՝ գոչեց: Նորից անպատասխան:

— Է՛հ,— հուսահատած ասաց հարցատուն.— Օհանի բանը բանեն անցեր է. Գաբրել հրեշտակը էնոր գիրը մոռցեր է. է՛հ, հլա քաշելիք ունի...— ծիծաղելու պես կծկելով բերանի շուրջը:

— Էդման մի՛ ըսա, աստված իրան հաշիվը գիտե: Փա՛ռք ամենակալին, խղճով տղերք ունի, լավ կշահեն...

— Օհաճը աչքերեն լավ է, աճկաճջն է գուլցեր: Իմ աչքերըս տուկատ են, հմա ակռեքս լավ կբաճին, քուկդ ի՞նչղ է, Մարգար...— Եվ շրթները հետ շրջելով, ցույց տվեց կապույտ լնդերի վրա հատ ու կտոր երկարուն, դեղին ու ժանգոտ ատամները:

— Ակռա՞... դեղապտի չունիմ: Գոհություն աստծու, աչքիս լույսը տեղն է, ականջս էլ՝ վնաս չունի, մենակ, թատ՛ւ, ես ո՞ւր, Օհաճն ո՞ւր... Մատըմ տղա էի ես, պստլիկ հոտաղ, Օհաճը ճշաճվավ... վախճամ էնոր տարիքին ճոնիկով մաճ գամ, յա չորեքթաթ: Դո՛ւ ի՞նչղ ես, Աբրո,— հարցրեց կողքինին:

— Է՜հ, ինչ՞ղ պտի էղնի՝ գեշ, օր-օրի վրա գեշ... ա՜խ, ծերություն, չար գերություն,— հառաչեց Աբրո ամին,— սիրտս շատ կնեղվի. քուն չունիմ, կերածս չեմ մարսե. շա՜տ կ,ճշգոհիմ... Կյանքն որ երկննա, համն կանցնի. ըսենք, էսկի էլ աշխարքի համը չառա, չիմացա կյանքս ե՞ր էկավ, ե՞ր գնաց... Ես գանգատավոր կերթամ աշխարքես, աստծու դիվանի հաղագ գանգատավոր. ի՞նչ էր տվածը — ցավերս՝ երկար, խնդումներս՝ կարճ, բախտի գրքի մեջ ինձնեն ի՞նչ գրվավ — մենակ ցավերս ու նեղություններս...

— Տո՛, Աբրո, Աբրո,— ծխամորճը նրա ոսկրացած չոր ծնկին զարկելով ասաց մի ուրիշը,— տո ծերացար, ծոեցա՛ր... Աստծուն քար մի գցե, դիվոտա՞ր, մեղա՛ արի, աստծու դրուքի դեմ մարդ ի՞նչ կրնա էնել. հող էինք, հող դառնանք պտի, ճար չկա: Դու ըսա՛ մենակ էնդիու աշխարքի մեջ հոգով չկորինք, էսդիու աշխարքը մարմնուկորուս է ու կորուս. ի՞նչ ըսիր, Պողոս քիհա...

— Ես էլ Աբրոյի խելքին եմ, աշխարք երկու օրվա խաղ է, անխելք մանկութին, անուժ ծերութին... Է՛հ, ըշտե, բան է՝ բռնել-կերթանք: Մազերս թափվան, ակռեքս փտան ընկան, գերեզմնին հասա, հեչ չհասկցա թե՝ ընչի՞ եկա, ընչի՞ կերթամ, ո՞ւր կերթամ... Ինչքա՜ն մարդ է մեզնեն առաջ եկեր ու գնացեր ու մեկն էլ էնդիեն լուրիկ՛մ չէ բերեր, յա ղրկեր... Էնդիու աշխարք... ո՞վ է տեսեր, ո՞վ է էկեր...

Մինչ ծերունիները կխաչակնքեին դեմքերը, իրենց ըն-

ներների անբարեպաշտ խոսքերի վրա, մի ուրիշ ծերուկի ձայնեց, ծուխը բերանից հանելով.

— Ես էլ քուն չունեմ ծով-գիշերը. հերու լավ էի, էս տարի ծնկներս էլ զորք չունին, կդողան... սիրտս էլ շա՜տ կնեղվի, մենակ՝ մեկ հուսալով, մեկ անցածը մոռանալով, մեկ՝ իրան-իրան սիրտ տալով, հա՛ն-հո՛ն, օրը կհասնի, կերթանք օխթը հազար տարվա մեռելներուն կհվասարինք. ո՛չ եկեր ես, ո՛չ գնացեր...

— Էդպեսն է,— ասաց ծերերից ամենից երիտասարդը,— փուչ աշխարք, երա՜զ, երա՜զ, երա՜զ... Գիտես թե՝ երեկվա տղեն եմ. մարդ երկու անգամ պտի աշխարք գա, որ համ առնի, փորձված գործ տեսնի... Է՛յ գիտի անցած օրեր, ո՞ւր եք կորեր, ո՞ւր. հետ դառեք մեկ բերանըմ հլա...

— Հակո՛, զուր կկանչես, զո՛ւր. էդ օրերեն օրըմ էլ հետ չի դառնա՝ աչքդ կոխես. չիբուխիս մուխի պես գնացին, թե կրնաս երեկվա մուխս բռնե, անցածդ օրդ էլ կբռնես:

— Է՛յ գիտի, Հակո, ի՞նչղ կտրիճ տղա էիր, տո՛, ի՞նչղ խելառն էիր. գեղ ու թաղ քթիվ կ'էնեիր լորիկ բռնելու, շա՜տ շոռ աչքն էիր, հա՜... Չեղնի՞ համը բերանդ մնաց. քիչ էր, հա՞, հիմի կուզես փորձվա՞ծ աշխարք գաս, որ ձեռքեդ էլ բան չպրծնի,— ասաց ու կատակի համար իր ծխամորճը զարկեց նրա ծխամորճին:

— Միտքս չէ, հնութ բաներ են,— ասաց Հակո ամին, և կողքը քորելու համար, եռանդով քսվեց իր կուշտը ճիրհող ծերուկին, որն այս շոշափումից չզարթնեց: Եվ հարեց.— Լավ քուն ունի Սիմոնը, հոգին հանդարտ է, արդար մարդ է:

— Խե՜ղճ Սիմոն, ինչղ կանանչ-կտրիճ տղերք իրան աչքով հողը դրավ. էն օրվանեն դմրած է. նստած տեղը կքնի:

— Աստծու բանը,— ասաց մեկը,— ո՞վ է մեռնողը, ո՞վ կմեռնի. է՛յ գիտի աշխարք, մարդ չի իմանա քու ելն ու մուտը... Փառք քեզեն աստված, իրեք օրվա մահ տաս, գետնին գերի չեղնինք. բան չեմ խնդրե՝ տղերքս, թոռներս երեսիս մե բուռ հող գցեն, արժանանամ Գաբրելական փողին, աստծու լուս-երեսին... Էն տղեն էլ չեկավ՝ ընձի տուն տաներ, անոթի եմ, գիտես թե...

Ուստային սաստիկ տխրեցրեց նրանց այս անկարող, այս ցավալի վիճակը, և վախենում էր նրանց նայել. սակայն թվում էր իրեն, թե կյանքի ճշմարտությունը, ինքը, բխում է սրանց չորացած բերանից և քայքայված մարմնից...

Եվ մի սև միտք սուր դանակի պես փարտեց անցավ նրա սրտի միջով — ինքն էլ է ծերանալու, ինքն էլ: Եվ տեսիլքի պես եկավ աչքին, ինչ որ գալու էր ապագայում՝ ցամաքած, պստիկցած, կույր ու խուլ, պատերի տակ, այնքան խղճալի ու ողբալի... գերեզմանի բերանը այնպե՞ս մոտիկ... Մի-երկու վայրկյան. ապա բնազդական ներքին ակներից մի բուռն ու բորբ ալիք հորդեց հանկարծ Ուստայի էության մեջ՝ բոլոր թելերի վրա: Ելավ ոտքի, և առանց ծերերին նայելու, շտապ, ուղղվեց գյուղամեջ, կենսուրախ ու ապրող մարդկանց մոտ, որոնք թերևս պատահեին հիմա:

«Հասկացանք, բանը ջահել էղնելու մեջն է. գլուխդ որ տաք էղնի, աշխարքն էլ տաք կեղնի,— իրեն հետ խոսում էր Ուստան,— հասկացանք, հալևորներու արունը պաղեր է, սրտերը՝ դարտկվեր, աշխարքն էլ ամին-նման պաղեր ու դարտկվեր: Քե՛ֆ էրա, հաշիվը մեկ է, ուզես-չուզես պտի ծերանաս: Նստած տեղդ էլ, քնած տեղդ էլ, ուտես-խմես էլ, պաս պահես էլ, գնտանի մեջ, թե հարսի ծոցը, լաց էղնիս, թե պար գաս՝ ծերանաս պտի. լավն է՛ն է՝ քեֆով ապրիս, քեֆով ծերանաս»...

Սակայն այս կենսուրախ ալիքը նորից իջավ: Ծերերից ամենածերի դեղին պատկերը գերեզմանից հանած, այտերը փոս ընկած՝ հանկարծ ցցվեց աչքի առջև: Կարծես, խուսափելու համար նրանից, տենդոտ քայլեր առավ Ուստան, և մեկ էլ իրեն տեսավ գյուղից դուրս: Մտամոլոր քայլում էր ամայի հանդում, ուր միջօրեի արևի տակ անդուլ բզզում էին բզեզները և թռչունները, նետված քարի պես, շաչյունով սուրում-անցնում. սինձի կաթնահոտը, արևաջերմից գրգռված, պարուրել էր դաշտերի երեսը, ցողունների շաղը կանաչ ներկելով թրջում էր Ուստայի կոշիկները:

Գլուխն առած գնում էր Ուստան՝ առանց հետ ու առաջ նայելու, և ծերունու պատկերը հետն էր քայլում անբաժան.

ճալածում էր նրան, հոգու վրա ամուր նստել, ասում էր նրան. «Երեկ ես քեզի պես էի, էգվան դուն կեղնիս ինձի պես, մի՛ վռազի, էգվան, էգվան...»:

Ուստան նայեց իր ձեռներին — առողջ, ուժեղ, վարդագույն. ու չհավատաց ծերունու ձայնին, սակայն, ձայնը նորից ինչեց. «Մի՛ պարծենա, էգվա՛ն, էգվա՛ն»...

Եվ Ուստայի համար այնքա՜ն սիրելի աշխարհն, աոօրյայի այնքա՜ն սիրելի իրերով հանկարծ անարժեք երեվաց և տհաճ: «Օրթե Հարութի գլուխը կուլայի, իմ գլուխս եկավ. էսօր սատանի ներհակ օրն էր ինձի համար. ես սովոր չեմ էսպիսի թնջուկ բաներու», մտմտաց յուրովի Ուստան և վախենալով դաշտերի միայնությունից, նորից տենդոտ քայլերով, հետ դարձավ գյուղ, եկեղեցուց հեռավոր ուղի բռնելով:

Շտապում էր տուն հասնել. Չավուշի կարոտն ուներ, Չավուշի ներկայությունը կփարատեր տխուր մտքերը... Ճանապարհին միտքն ընկավ քրդերի խոսքը՝ վաղուց լսած Իրանի մի քարվանսարայում. «Մեռնել էղներ, ա՜խ ծերություն չեղներ»: Անուշադիր շրջապատին, անվերջ ու մեքենաբար կրկնելով այս առածը՝ վերջապես իրեն ձգեց ընկերոջ մոտ:

Չավուշը ճաշի սեղանը դրել սպասում էր վարպետին: Ճաշի վրա ինչքան ուզեց՝ իր բնույթի համաձայն, խոսք ու զրույց խառնել աղ ու համեմի պես կերուխումին, չեղավ, Չավուշն էր խոսում միայն, իսկ ինքը լսում ու չէր լսում միաժամանակ:

Ճաշից հետո փորձեց «տամա» խաղալ Չավուշի հետ.— «Խաղով ընկնեմ, սիրտս բացվի», բայց կիսատ թողեց տամանն: Չավուշի զարմացական և անհաբեկված հարցերին խուսափուկ պատասխաններ էր տալիս Ուստան: Սակայն տխրության սովոր չէր նրա հոգին, ճիգ էր թափում հաղթահարելու այդ ճնշող չար շունչը. մի-երկու չոնգուռ ածեց, նույնիսկ զվարթ եղանակներ, բայց շուտով թողեց, սիրտ չուներ... Վերջապես, խորհելով, որ իրեն բնավ վայել չէ քիթը կախել նստել, վեր կացավ, հագուստները փոխեց,

գնաց Չավուշի հետ քար տաշելու, աշխատանքի մեջ մոռանալու ծերերից առթած տխրությունը:

Երեկոյան Ուստան ավելի թեթևացած տուն դարձավ, սակայն նորից այն չէր — մշտական զվարթ Ուստան, որի երեսից պայծառ ժպիտը մի պահ միայն մայր կմտներ:

Սովորականից կանուխ պառկեց քնելու, վաղվան օրը շուտ սկսելու համար: Վաղը Բուլիկենց ամբարի հիմը սիտի դրվեր:

Խավարի մեջ, աչքերը գոց, սպասում էր քնի գալուն, բայց քունը չէր գալիս... հոգում ոտքի էին ելել խառն ու խուռն մտքեր... անցյալից ու ներկայից խուժեցին նրա վրա զանազան դեմքեր ու դեպքեր... ինչքա՜ն կերպարանքներ ուրվացան աչքի առջև — վարպետ ուռումները, հորեղբայրական ճերմակ ձին, որով փախավ գյուղից, սիրական ճերմակ ձին, որ ինչպե՜ս տխուր աչքերը ձգելով Ուստայի աչքերին, վերջին շունչը փչեց Գյանջվա կողմերը, անթիվ հայ ու թուրք, աճամ, ասորի ու քուրդ, գյուղացիներ ու սանճամայրեր... Պատկերի պես երևաց աչքին: Ջանգուի կամուրջի վրայի այն «չարվադարը», որ ջորու փալանն էր շիտկում... աչքի դիմաց տնկվեց երկայնավիզ մի ուղտ, որ մենակ արածում էր Արազի չորուտների մեջ... Ծրագի պես մեկ-մեկ տեսավ Թավրիզի խաղողի անվանի տեսակները... Համրեց իր շինած տներն ու աղբյուրները, կապած օջախներն ու կամուրջները... Համրեց, թե քանի գյուղ է եղել... և 45 համարի վրա գլուխը շաղվեց ու անվերջ կրկնում էր՝ 45, 45, 45... Քանի հառաջացավ, միտքն ավելի մշուշվեց, պատկերները խառնաշփոթ՝ իրար մեջ անցան, թնջուկի պես՝ հազար թելեր իրար վրա, մեջը — ծերունիների անթարթիչ աչքերը, սանամոր կարմիր թշերը, մի բառաչող կով, չարվադարի ջորին ու սանիկի փայտե ձին, և վերջը միտքը փսորած, կանգ առնելով սանամայր Ծովինարի վրա, էլ չիմացավ Ուստան իրեն:

ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ

Բագրանի սուրբ Գևորգի ուխտին ստվար, ուխտավոր ժողովուրդ էր հավաքվում ոչ միայն Շիրակի հեռավոր գյուղերից, Երասխաձորից, նաև Սուրմալվից, Կարս քաղաքից ու գյուղերից, նույնիսկ Ալեքսանդրապոլից: Կարսից գալիս էր գավառի հաջորդ վարդապետը և գավառամասի պրիստավը. առաջինը նշանավոր տոնին փայլ տալու, իսկ երկրորդը՝ հոծ բազմության վրա հսկելու, որ կռիվներ չծագեն, մի բան, որ ատեպ պատահում է հարբած գյուղացիների միջև:

Օսկանի ընտանիքը հինգշաբթի օրվանից պատրաստության մեջ էր, հորահարսի տեր էին: Խնամիների մոտ շքեղ պիտի երևալ, իրենց պատվին վայել: Գաթա էին թխում, հավ մորթում և այլն: Ուստա Կարոն ու Չավուշը նույնպես եռուզեռի մեջ էին:

— Չավուշ ջան, հոգիս որ դու ես,— ասաց Ուստան, բազմախորհուրդ հայացքը հառելով ընկերների վրա,— գիտես որ Սոնաս լինելու է, կհասկնաս, ինչ ասել է — վախնամ խելոքիմ էս ուրախությունից. Հարութս, Մարուքս էնտեղ են լինելու, սրբերը պիտի թուրքացնեմ. էնպե՞ս, էնպե՞ս քեֆ պիտի անեմ, դու էլ, քեզ տեսնեմ, մեկ էլ որ, Չավուշ ջան, դե՞հ, երթալու ենք՝ սուրբ գործի ճամփով...

Չավուշը աննշմարելի «ախ» քաշեց էս խոսքի վրա: Ուստան նկատեց և իսկույն վրա բերեց.

— «Ախդ» ինչացո՞ւ էր, թող մնացողները մեր ետևից «ախ» քաշեն, ինձ նայե:

— Չէ, Ուստա ջան, գլխիդ մատաղ, էնպես, առանց պատճառի սրտիցս ելավ — կուզեի ասել, թե մեկէլ տարի էս օրս, ո՞րտեղ ենք, որտեղ չենք,— խոսքը բերնից խլելով ասաց Չավուշը:

— Դրա համար էլ լա՛վ, լա՛վ քեֆ անենք, բերանս չի գորի, թե ասեմ՝ վերջին քեֆն է Բագրան, մենակ. դե՛հ, աշխարհ է՝ եղավ-եղավ, կովի մեջ տանձ-խնձոր չեն բաժնի, դրա մասին չխոսինք, դու գնա, էս 25 մանեթը սև ու

ներմակ փող դարձրու աղքատների ու մոմի, ժամի, աշուղի, առակ-պատակի համար:

Ուրբաթ, ճաշից հետո, Նախճվանի ուխտավորների մի մասը գյուղից ելավ, Կարոն, իր դրսնավուր հագուստը հագած, սափրված, ուրախ-զվարթ գնում էր քարվանի գլուխն անցած՝ Օսկանի ձին նստած. Չավուշը տաճեցոց հետ էր, սայլով կամ ոտքով:

Երեկոյան դեմ հասան Բագրան, ուր ձիերով, էշերով, սայլերով, հետիոտն գալիս էին ամեն կողմերից ամեն տեսակի ուխտավորներ:

Օսկանի ընտանիքը Կարոյի հետ իջավ իրենց վաղաժամոթ հյուրընկալ ընտանիքի մոտ: Տեղավորվելուց հետո, մի թեթև ընթրիք արին և վաղ քուն մտան, որ առավոտ կանուխ սկսեին ուխտն ու տոնը: Ուստան մի աչքով քնեց, անհամբեր հոգով, ընդհատ երազներով, մյուս աչքը բաց՝ թե երբ պիտի օրը նշույլի, որ գեղամեջ ընկնի, գտնելու իր ընկերներին, մի կերպ տեսնելու Սոնային:

Տարի գիշերն անցավ, և, վերջապես, շաբաթ օրվա աղոթրանը ներմակցավ: Ուստայի հետ բոլորը ոտքի էին: Ուստան Չավուշի հետ գնաց գյուղամեջ: Ամբողջ գյուղը եռուզեռի մեջ էր, անընդհատ նոր-նոր ուխտավորներ էին գալիս, գյուղական փողոցները վխտում էին տոնական հագուստ հագած մարդկանցով. ամեն տնից մի քանի ծուխ էր ելնում, թոնիր, օջախ, դրսի օջախ, բոլորը վառած էին մատաղի համար, հարյուրավոր մատաղ է լինում այս տոնին:

Սեպտեմբերի վերջին անուշ ու անդորր օր էր, այգիները լի ոսկի տերևով ու բարությամբ, կարասները հետզհետե լցվում էր նոր գինով:

Ուստային շատերը ճանաչում էին ուխտավորներից, բարև էին տալիս ու իրենց մոտ հրավիրում մի օղի խմելու, բայց Ուստան ժամանակ չուներ, շտապ էր, շնորհակալություն տալով առաջանում էր, նրա միտքն էր՝ իրեն ձգել Քերսի ուխտավորների տեղը, թե Մարուքին գտնելու, թե՛ Սոնայի գոնե հոտն առնելու, շուքը տեսնելու: Մարուքին գտավ, կսկուծ համբուրեցին իրար, ջան ասին

ու ջաև լսեցին, հեռվից տեսավ Սուդյա Թորոսին, սիրտը դողաց Ուստայի, բայց չտեսնելու տվեց, և Մարուքի ձեռքը բռնած՝ գնացին առաջ Մացակին տեսնելու՝ Բագրաևի իրենց հին ընկերը, քեֆի պատրաստությունների համար: Մացակին գտաև իր տանը, իրար ջերմ գրկելուց հետո, Մացակը հայտնեց՝ որ գինի, օղի, մաճառ, ոչխար, միրգ և այլն, ամենքը պատրաստ է, և կողբեցի նշանավոր գուռնաչի՝ Զուրաբին երկու օրով վարձել է, Զուրաբը շատ քաղցր մատ ունի: Քեֆը կսկսվի կեսօրին, Երիցախեղդի կաևուչ ափին՝ ուռի ծառերի տակ: Ապա գնացին Հարութին գտնելու, և ուրիշ ընկեր տղաներ, մի քանի սիրած սաևահայրերը Ուստայի, որ նրա անբաժան բաժակակիցներն էին: Չավուշին ուղարկեցին սաևահայրերի հետևից՝ Տեփոյի, Վարդաևի, Մեսրոբի, Սմբատի: Չավուշը գնաց, Կարոն ու Մարուքը մտաև գյուղական մի օդետուն, մի-երկու բաժակ օղի «նախատոնակ» աևելու: Իրար կենաց խմելուց հետո՝ հարց-փորձով իմացաև Հարութի իջևաևած տունը: Հարութը նրանց տեսավ թե ոչ՝ երեխայի պես ուրախ-զվարթ վազեց եկավ, փաթաթվեց երկուսի ճիտովը միաժամաևակ: Հարութը նույնպես տոնական հագուստներ էր հագել, սափրված, նոր կոշիկներով:

— Հարութ ջաև,— ասաց Մարուքը,— մեկ տարի կլինի աևուշ երեսդ չեմ տեսել, արի մի հատ էլ պաչեմ, տո՛, իմ խելոք խելառս, ես իմ բոստաևից դուրս չեմ գալիս, դու էլ քո ջաղացից, որ իրար տեսնենք, Կարոյին ենք պարտական, որ մեր բարևներն ու պաչերը իրար կտաևի ու կբերե:

— Հա՛, Մարուք ջաև, ես էլ քեզ շատ էի կարոտել, ես ջաղացից դուրս՝ թրջած մուկ եմ, դու կրևաս գա, խուբ տուր, որ հիմի գաս՝ օրթե բոստաևդ պրծնես, աշնաևը, ձմեռը:

Մարուքը խոստացավ:

— Հարութ ջաև, լեզուդ կկտրեմ, այ Մարուքիս մոտ կասեմ, վկա լինի, թե օրթեությունդ էստեղ բաևեցնես: Աևուշ ընկեր ու ախպերով ժողոված ենք, չտեսնված քեֆ

պիտի աներնք, գիտես էլի, մեկ էլ տարի էս օրս ո՞ւր եմ, ճողի վրա, թե ճողի տակը...

Այս ճուզիչ խոսքի վրա Մարուքը զարմացած նայեց Կարոյի երեսին, նրան Ուստան չէր հայտնել իր դիտավորությունը՝ Հայաստան գնալու:

Երկու մարդ գիտեր միայն՝ Օսկանն ու Հարութը, չէր ասել դեռ, վախենալով, թե բերներերան ձեռնեռնվի լուրը, ու հասնի Սոնայի ականջը, մի գուցե Սոնան թե շատ վշտանա, և թե հրաժարվի Ուստային առնելուց՝ ո՞ր հարսը կուզե իր սիրածից, նորապսակից զրկվի, գուցեև նորից այրի նստի. Ուստան որոշել էր իր մեծ նպատակի հաջողության համար ստել, ծածկել իր խորհուրդը, եթե ոչ Սոնան հարց կդներ ամուսնանալ, Հայաստան չգնալու պայմանով. պսակից հետո դյուրին էր:

Կարոն չնկատեց նրա հայացքը և շարունակեց իր խոսքը, իսկ Մարուքը անմիջապես մտածեց թե դա՝ խոսքի ձև է, որ մարդ ասում է սովորաբար:

— Էսօր, տղերք ջան, մունթաթող է, ջահելություններս հետ պիտի բերենք, ուտենք, խմենք, պար գանք, հարսներին աչքով անենք, տնազ գանք, հա, ի՞նչ կասեք:

— Իմ ուզածն էլ էդ է,— ասաց Հարութը:

— Դե՛հ, հիմի պտտվենք գեղը, քանի հարբած չենք, տեսնենք ո՞վ կա, ո՞վ չկա, ու մի լուս աչքով էլ երթանք ս. Գևորգ ուխտեր անենք, հետո աքլորը երդիկը հանենք:

Ուստային մեջներն առած պտտվեցին նրանք փողոցե փողոց, իրար ցույց էին տալիս իրենց ճանապարհին հանդիպած սիրուն հարսները, մինչև որ հասան ս. Գևորգի մատուռը տանող քարաբլուրի տակը: Այդ զառիվերի ոլորման, երբեմն սանդուղներով շինված ճանապարհների աջ ու ձախ կողմը շարված էին մանրավաճառների սեղանները և մեջե-մեջ էլ աղքատներ, կույրեր, հաշմեր, անբախտ, թշվառ մարդիկ, նստած կամ կանգնած, հազար ձևով ու խոսքերով ողորմություն էին խնդրում, գութ հայցում:

Հարութը, առնաստարակ, չէր կարող թշվառություն տեսնել, մի-երկու սրտաճմլիկ պատկեր տեսնելուց հետո, աչքերը գոցեց և չէր ուզում ո՛չ լսել, ո՛չ տեսնել:

Ուստաև աջ-ձախ սև դրամ էր տալիս խեղճերին, և օրհնություններ ընդունելով լուռ, ընկճված շարունակում էին վերելքը:

Հասան մատուռի բակը, ուխտավորները խառնված էին այնտեղ, շարժվելու տեղ չկար, շատերը նստել էին ցածլիկ պարիսպների վրա, որոնց ներքև անդունդն էր խորանում:

Հարութի ականջին դիպավ մի ցավագին ձայն.

— Ողորմացե՛ք անճարիս, ողորմությունը աշխարքիս պտուն է:

Նայեց և տեսավ մի ծեր մարդ՝ անդամալույծ, գլուխը անընդհատ ժաժուն. հայրը միտն ընկավ, սիրտը կծկվեց, գրպանից մի արծաթ դրամ տվեց, և մտքի մեջ ասավ, որ Ուստային չտխրացնե.

«Թող կոտրվի էդ պտունը, թող բլի աշխարհը, ի՞նչ ունիս կորցնելու»:

Երբ Ուստային ընկատեցին ուխտավորները, ճամփա բացին, բարև տալով, ու նա մոտեցավ դռան առջև դրած մոմավաճառի սեղանին և մի դաստա մոմ գնեց: Մարուքն էլ հետևեց նրան, Հարութը չգնեց և չմոտեցավ. Ուստան տեսավ նրա այդ վարմունքը, գանգատվեց և մոտեցավ ու շշնջաց. «տունդ չքանդվի, խեղճ ես, դու էլ մոմ ա՛ռ, ուխտ արա՛, քեզ համար, տղիդ համար»: Հարութը լուռ էր: Ուստան ձեռքից բռնեց և քաշեց հետը, Մարուքը մոտեցավ և հարցական նայեց, Կարոն շշնջաց նրան. «չգիտես, որ էս կապելուն խոով է վերևինի հետ»:

Կարոն ու Մարուքը մոմերի մի մասը վառեցին Զորավոր ս. Գևորգի գերեզմանի վրա, մնացածները դրին ուխտավորների բերած մոմերի դեզի վրա: Կարոն երկար աղոթում էր մտքի մեջ, աչքերը մեկ վերև, մեկ գետին՝ ծնկաչոք, նա աղոթում էր ու հաջողություն խնդրում իր գնալիք ճամփու համար, իր սրտի փափագների համար, նույնիսկ Հարութի համար: Աղոթքից հետո երբ Մարուքի հետ դուրս

ելաև, տեսաև Հարութը նստել է պարսպի վրա, ծխում է ու անդամալույծ ծերին նայում մոայլ աչքով:

Կարոն մոտեցավ նրաև, նայեց, բայց չխոսեց, խորունկ հանդիմանություն կար նրա հայացքի մեջ:

— Կարո, գոգդ բռնե, երկնքից հիմա կթափվին խընդրաձներդ,— ասաց Հարութը հեգնական ծիծաղը շրթունքների արաևքում:

Կարոն նորից լուռ էր:

— Տո՛, մեկ ջուխտ մոմով ուզում ես խնդիրներդ երկինք հասնե՞ն, 7 լուծ գոմեշ պետք է, օրթե տեղից շարժվեն քո նպատակները...

— Հերիք կարկուտի տաս, տո՛, խելառ, քեզ համար էլ խնդրեցի, որ ինքը խելք տա: Մեկ լէ ես քեզ չասի՞ օրթեությունդ ծալես, ձայնդ չբարձրացնես:

— Լա՛վ, լա՛վ, հերիք է, տեղը չէ, ելեք երթանք, ելե՛ք,-- մեջ մտավ Մարուքը և Հարութի ձեռքից քաշեց, իջեցրեց վար: Մի պահ լուռ գնում էին, Հարութը առջևից, նրանք հետևից: Մտան գյուղ, մի երկու տեղից լսվում էին զուռնայի ձայներ, ավելի ճիշտ, զուռնայի անկարգ ճիչեր, դյաշնավորելու փորձեր, սակայն այս անդաշն ձայները նույնիսկ բավական եղան Հարութին ցնցելու, և նոքի բերելու, որ դարձավ Ուստային՝ քաղցր ձայնով ասաց. «Կարո՛ ջան, մեծ ախպեր, ճակտիդ մեռնեմ, ե՞րբ պիտի զուռնան փչենք, ե՞րբ պիտի արաղը տափկցնենք»:

— Տո՛, հորդ թյութունը չթափի, տո՛, խեղճ ես, երեխայի բնույթ ունես, մեկ ամպ, մեկ արև,— ասաց Կարոն:

— Կնկա բնույթն էլ էդպես է,— կտրեց Մարուքը:

— Վա՛յ Մարուք, դո՞ւ էլ Ուստայի կողմն ես տաշում, ինձ կնիկ շիներիր:

— Ներող եղի՛ր, Հարութ ջան, լեզուս ձեռքս չէ, դու սրտիս նայիր,— և ձեռքը ձգեց Հարութի վզովը:

— Բերանս չորացավ,— ասավ Հարութը,— արաղից, գինուց չկա՞:

Եվ նորից մտան օղետուն:

Երբ օղետնից դուրս եկան, Չավուշը հանդիպեց նրանց և հայտնեց, թե մի ժամ հետո հավաքված կլինեն ընկերները և ճաշը կսկսի: Ուստան նայեց ժամացույցին, ապա ասաց թե, երթանք մի ակը տանք, տեսնենք, կարող ենք էն անաստված հարսին տեսնել, մինչև չտեսնեմ, աչքս աչքին չառնի, քեֆ չեմ կարող անել. հասկացա՞ք, խոսքի կարճը:

— Վազենք, վազենք,— ասաց Հարութը, և առաջ անցավ:

— Էդ խելառի կապը պահիր, Չավուշ ջան, ինձ խաղք չանե:

Գնացին Թորոյի իջևանը. սուդիան նստած էր ցվիքի տակ, թախտի վրա, կողքին Օսկանը, և մյուս կողքին մի կարճ, լիքը, սև մազերով մարդ, շիլ աչքերով, շատ հարուստ հագուստ-կապուստով, ժամացույց, ոսկեջուր գոտի, մատանիներ, կոշիկներ:

Թորոն նրանց առջև չկանգնեց, միայն ոտքը, որ մյուս ոտքի վրա էր, ձեռքով դանդաղ իջեցրեց, բարևելուց հետո, ծանոթացրեց նոր դեմքի հետ:

— Խնդրեմ, ծանոթ եղե՛ք Միհաս աղայի հետ, կողբեցի, անունը լսած կլինեք:

Թորոն հարցրեց Հարութի ընտանիքի մասին, տերտերի և մեծ ու խոշորի մասին, Մարուքը իրենց գյուղից էր, ազգեն:

— Քավոր Ուստա Կարո,— ասաց Թորոն,— լավ ընկերներ ունես, քեֆներդ շատ տեղին է, ուրախ-զվարթ եք, ասած է թե, նմանը նմանի որ չգտնի, օրը ա՞խ ու վա՞խով կանցնի: Մի-մի արաղ անուշ էրե՛ք, է՛յ, հարս, արաղ բե՛ր էստեղ:

Ուստան հարսի անունը լսելով՝ լեզուն շաղվեց չկարողացավ Թորոյին պատասխանել: Սոնան մանիշակի գույն դերիա հագած, եկավ արաղի շիշը ձեռքին, մատուցարանի վրա էլ բաժակներ ու չամիչ, շաքար: Կողբեցին Սոնային տեսավ թե չէ, իսկույն աջ ձեռքի բութն ու ցուցամատը լեզվի ծայրով թրջեց և ոլորեց բեղերը, և անթարթ նայում էր նրան՝ հարսին, թեև աչքի մեկը հարավ

էր ձայում, մյուսը հյուսիս, բայց Ուստան զգաց, որ երկու ներհակ կողմերն էլ միայն մի կետի վրա են աշխուշտ հառած՝ Սոնայի վրա: Ուստայի աչքից չխուսափեց նրա այս շարժումնը, և մտքում ցասկոտ ասաց՝ «Կողբե՛ցի, ի՞նչ ես ծուռ աչքդ ձգել շիտակ ուրիշի հացի վրա, օրդ վերջացե՛լ է»: Եվ հոգում թշնամանք ծայր առավ կողբեցու հանդեպ: Թորոն իր ձեռքով լցրեց արաղի փոքրիկ բաժակները, առաջինը ինքը վերառավ մի կտոր շաքարի հետ, հետո հերթով Սոնան մոտեցավ հյուրերին: Ուստան աչքի ծայրով նայեց նրան, Սոնան թարթիչները վար էր ձգած, Հարութը նայեց ինչքան որ հնարավոր էր մի երկու վայրկենի մեջ: Հարսը՝ մի քիչ անց, հեռացավ, միայն Հարութն ու կողբեցին հետևեցին, իրենց աննկուշտ հայացքով, հարսի քայլերին:

Ուստան ասավ, ոտքի կանգնելով,— խնամի Թորո, քեզ տեսի եկանք, ներող եղի՛ր, հիմի երթանք, մեզ սպասող կա,— և ձեռք մեկնելով Թորոյին ու գլխի թեթև նշան տալով կողբեցուն, մոտեցավ Ծականին և ցած ձայնով հայտնեց ճաշկերույթի վայրը:

Երբ հեռացան Թորոյի մոտից, Կարոն դարձավ Հարութին:

— Էդպես փերի տեսած կա՞ս դրախտում կամ երազիդ մեջ:

— Շա՜տ լավն է, ճիշտ որ պագնելու, ճակտի դնելու է:

— Ողջ մարդուն կմեռցնե, մեռելին կկենդանացնե, ես գիտեմ դրա զորքը,— ասաց Մարուքը:

— Նրա աչքի մեկը արև է, մեկելը՝ արեգակ, սիրտս վառեց, վառեց:

— Ուստա ջան, քո սրտիդ բոցը ինձ էլ առավ, գիտես թե ես էլ զարկվա, բարով վայելես:

— Թագավորի վայել հարս է, Ուստի մենակ վայել,— ասաց Չավուշը:

— Փլավն ո՛ւմ է տված, բերանը ո՛ւմ, տո՛ր, Կարո, էլ Հայաստան ուր կերթաս, դրա գրկի մեջ Հայաստանն էլ քոնն է, Չինմաչինն էլ ոտքիդ տակը:

— Ի՞նչ, Ուստաս Հայաստա՞ն կուզե երթալ,— զարմացումով հարցրեց Մարուքը:

— Չէ, Մարուք ջան, Հարութն է, իր ջաղցի պես սուտ կաղա,— իսկույն վրա եկավ Ուստան ծածկելու համար և աչքով նշմար տվեց Հարութին, որ գոցե:

— Չէ, էնպես ասի, խոսքի օրինակ,— խոսեց Հարութը:— Ուստայիս ղորթը, սանամերների հարսների հետ է, սուտը՝ աշխարքի հետ:

— Հը, չլինի, չիմանամ Հայաստան երթաս, առանց ինձի, ու ես էլ գացողը չեմ:

— Խոսքի օրինակ. ինչպես Հարութն ասավ, թե որ Հայաստան երթամ, ի՞նչ գեշ բան կանեմ:

— Լավ չի անի,— պատասխանեց Մարուքը,— գնացողներն ի՞նչ շահ տեսան, տեղդ ծանր նստի, օրը գա ես քեզ կասեմ, էն օրը տուն մնացողը մարդ չէ:

Ուստան չուզեց խոսքը երկարացնել, արդեն հասել էին քեֆի տեղին, Երիցախեղդի ափին, բագրանցիք ավանդաբար այդ անունն են տալիս Ախուրյանի այդ տեղին, ուր իբրև թե խեղդվել է Արամալի քրմապետ Երվանդն իր քուրմերով:

Ուռիներն ու բարդիների կանաչ հասակը աննշմար օրորվում էր անդորր ջրերի վրա: Սեղանը փռված էր ծառերի տակ, օջախները վառվում էին, վրան կերակուրի կաթսաներ, Մացակը բարձր ձայնով ասաց.

— Դե՛հ նստեք, զուռնան էլ թող փչե, սկսենք. հիմի կուգան մեկէլները: Սրա՛պ ջան, Ջուրա՛բ ջան, ձեզ տեսնեմ,— դիմեց դավուլ-զուռնաչուն:

Մի պահ հետո ողջ օդը բռնկվեց դավուլ-զուռնայի տաք շնչով: Ուստան, Հարութը, Մարուքը, Ջուրաբը վայրկենապես ընկան քեֆի տրամադրության մեջ: Նստեցին կողք-կողքի, Հարութը մտավ Ուստայի ձախ թևի տակ, առաջին երկու օղին խմեցին: Երկու պատանիներ, որ ծառայում էին Մացակի ձեռքի տակ, թարմ խորովածները թափեցին լավաշի վրա:

Մինչ այդ եկան երեք հոգի (սանահները և մի ուրիշը),

հագիվ էին նրանք տեղ բռնել, եկավ և Օսկանը, և երեք հոգի, որով խումբը պատրաստ էր արդեն:

— Ուստա՛ ջան, դու սեղանի գլուխ, գլխավոր, կառավարե՛ մեզ:

— Կարո՛, մեծ ախպեր, քեզ տեսնեմ, երեցների պես մեզ խեղդես արաղի ու գինու մեջ, հասկցա՞ր, ճնճուղ չջրես...

Ուստան սիրով պաշտոնն ընդունեց, թևերը վեր ծալեց, փափախը մղեց գագաթի վրա և հանդիսավոր ձայնով ասաց.

— Ախպրտիք ջան, ընկերներ ջան, իմացեք որ էն մեծ բախտը որ ունենք — վաղուցվա սիրով ընկերտինք, ջա՛ն ասենք, ջա՛ն լսենք. հանաք խոսքից չընդացող թող ընդնեն, էսօր սատանի մեռած օրն է, ես գիտեմ, է՛նպես քեֆ նշանց տանք, որ մինչև մահի օրը հիշենք ու գյուղ, քաղաք կանչեն տեսի ու զարմանան: Տեր աստվա՛ծ քեզ փա՛ռք, քո տան հացն ու գինին ենք վայելում, տղե՛րք, Մացա՛կ ջան, մատաղ բե՛ր մեկ առաջ ու առաջ: Կերե՛ք ու ըսե՛ք. մատաղներս ընդունական լինի:

— Ամե՛ն, ամե՛ն, Ուստա ջան, աստված փառդ շա՛տ լինի, մատաղներդ ընդունական ըլնի, մեզ ամենքիս ողջ պահելու ամենքի համար, քիչ ենք ասում, շատ հասկացիր,— ասաց Օսկանն ու մյուսները հետևեցին նրան:

— Գավաթներդ լցրե՛ք, մեր ամենքի թանկագին կյանքի համար:

Խմեցին ու սկսան մատաղն ուտել: Ուստան նորից խոսեց.

— Անունը տվինք անցանք, հիմի էլ մեր լեզվով օրհնենք սեղանը, Մարո՛ւք ջան, օրհնե՛, քո քեռուդ աները տերտերի քրոջ տղան է եղել, շորշոփը դիպած է քեզ, գրոց մարդ ես:

Մարուքը ծունկի եկավ և քահանայական ձայնով և ձևերով սկսեց. «Հայր մերս վկա, ջուրն ընկա սկա, ելա մարդ դառա...»:

— Ապրե՛ս, տիրացու Մարուք, կարգիդ հաստատ մընաս,— ձայնեցին ու ծափեցին սեղանակիցները:

— Սրա՛պ ջան, Զուրա՛բ ջան, բուկերդ թրջեցե՛ք, ու գլեցե՛ք, ձե՛զ տեսնեմ, էնպես որ մյուս քեֆ անողների զուռնա-դավուլի ձենը խեղդենք:

Արդեն ուրիշ շա՜տ տեղեր, Ախուրյանի երկայնքի ծառների տակ և ավելի հեռուն ու մոտիկ ուրիշ ուխտավոր քեֆ անող խմբեր լարել էին իրենց դավուլ-զուռնան:

Ուխտավոր բազմություններ, այր ու կին, հարս ու աղջիկ, երեխաներ, հավաքված զվարճացող խմբերի շուրջը, չնչին հեռավորությամբ, մտիկ էին անում նրանց, և մտիկ անելով ավելի կրակում զվարճացողների հպարտությունը: Սակայն վայրկյանից վայրկյան ավելի հոծ ամբոխ էր ժողովում Ուստա Կարոյի խմբի շուրջը՝ ով որ լսել էր թե, Ուստան է այնտեղ, շտապում էին նրա բոլորքը: «Որտեղ Ուստան է, Օրթե Հարութը, Քերոփը, Մարուքն ու բագրանցի Մացակը, քեֆն էլ է՛նտեղ է»:

Ուստան աչքի տակով նայում էր ժողովրդին, և ավելի ու ավելի թևավորվում ու գոլխրում:

Բագրանի ողջ ձորաձովիտը լցված էր դավուլ-զուռնի հզոր ձայնով, և Ախուրյանի հանդիպակաց ժայռոտ ափերըն ու խոր ձորերը, ավերակ վանքերը մեկին տասը պատասխանում էին որոտագին արձագանքով.

— Է՜հ, է՜հ, քաջքերն էլ մեզ հետ դավուլ-զուռնա են զարկում,— ասաց Ուստան,— ձեր կենացը, է՛յ քաջքեր,— և ինքը խմեց, մյուսներն էլ նույնպես: Աչքին ընկավ Օսկանի ընտանիքը, Սոնան էլ մեջներն առած՝ որ եկել էին իրենց մտերիմների ուրախությունը դիտելու: Ուստան Սոնային չտեսնել կեղծեց, սակայն արյունը թինդ առավ.

— Սրա՛պ ջան, լեզուդ բլբուլի թառ լինի, «Սիրուններ մի՛ք նեղանա» խաղն ասե՛ք, Զուրա՛բ ջան, փողն ածա՛: Եվ հանեց մի ռուբլի թղթադրամ շաբաշ, դավուլչի Սրաբը ռուբլին առավ մի ծայրը կոխեց փափախի տակը՝ ամբողջ ռուբլին ծածկեց ճակատը, որ տեսնեն դիտողները:

— Է՜հ, շաբաշ, Ուստա Կարոն մեկ մանեթ շաբաշ, շե՛ն մնա, շե՛ն մնա. և ապա երգեց— «Սիրուններ միք նեղանա, որ ես իմ յարին եմ գովում»:

— Լիքը լցրե՛ք, պռնկե-պռունկ Օսկան ջան, քո կյան-

քիդ թասն է, քո ազիզ գերդաստանի կենացը, օջախիդ ծուխը հուր հավիտյան թող բխե Շուշանկա աղբյուրի պես:

— Շնորհակալ եմ, Կարո ջան, աստված թող քո օրերիդ հետ ուժդ էլ, բախտդ է՛լ շատացնե. ի՞նչ կմտքես, կատար ունենա՛, ախպրտիք, ո՞ղջ լինեք:

— Սրապ ջան, Սրապ, մեկ տրնկի ածա՛, սանահեր Սմբո, ի՞նչ ես թթվել, ես քովդ, լի՛ց խմե, մի՛ վախի, խո տերության հարկը բոլորը քեզնից չե՞ն ուզում, ե՛լ խաղա՛:

Եվ կողքի ընկերները բրդելով սանահեր Սմբատին ոտքի կանգնեցրին, որ լավ պարող էր: Կանաչ սեզի վրա պարում էր ու թռչկոտում, իսկ մյուսները, բոլորը ծափ էին տալիս:

— Նազա՛ր ջան, մի թաս ասա, սրտիդ ուզածով:

— Սանահեր Սմբո, կենացդ, թո՛ղ ընկի ամենքիդ կենացը:

Նազարը ծնկի եկավ, փափախը ուղղեց, բերանը սրբեց ափով և բարձր ձայնեց.

— Ուստա՛ ջան, քո արևշատության համար, մեկ էլ կուզեմ ասել, լավ մարդու կենացը, ո՞վ էլ որ ընկի, ո՞ւր էլ որ ընկի:

— Ապրե՛ս, աստված լսող-կատարող ընկի:

Եվ Ուստան հերթով ընկերների կենացն էր խմում և նրանց խոսք էր տալիս:

— Հարո՛ւթ ջան, անունիդ մեռնիմ, մի շնորհքդ ցույց տուր էստեղ, մի գիտնակ թաս ասա,— դիմեց Ուստան իր անութի տակ նստած Հարութին:

Հարութը շփոթվեց, ապա ցած ձայնով ասեց (հասարակության մեջ վարժ չէր):

— Մարդ իր հոգին սատանի դրախտի մեջ տա,— և կործեց բաժակը:

— Էդ ի՞նչ խրթին բան ասիր, չհասկցանք,— ձայնեցին չորս կողմից:

— Սուսե՛ք,— ձայնեց Ուստան,— գժի լեզուն, գժի տերը կհասկնա, Հարութս կուզե ասել, թե, աստված մարդու հոգին կնկա գրկի մեջ առնի:

Հարութը գլխով հաստատեց:

— Կնիկների կենացը,— գոռաց Մարուքը— կնկա ծոցը — սատանի դրախտն է, լա՛վ ասավ:

— Օսկանը ցած ձայնով ասավ,— ա՛յ ջահելներ, էստեղ հարս ու աղջիկ կա, հազար օտար, անճանաչ մարդիկ, ամոթ է, ծանր կեցեք, խելոա՞ք, ի՞նչ եղաք:

Հարութը արագ ավելացրեց, «օրթե պետք է խելոել, արժե մենակ կնկա համար խելոել», և Մարուքը ձեռքը երկարեց Հարութին,— ձեռքդ տո՛ւր, հոգի՛ ջան, հենց կնկա խելքն էլ նրա մեջն է, որ տղամարդուն խելքից հանե:

Հեռու, մոտիկ եղողները բոլորը խնդացին, Ուստան ուզենալով վերջ դնել բոլորի խոսքերին, հանդիսավոր ասաց հատ-հատ, որ Սոնան լավ լսե:

— Կարճ կապեք, աստծուն ներհակ բան չէ, թե որ կնկա թասը խմենք, ինքը կնիկը տվավ տղամարդուն, ու տղամարդը՝ Ադամ, երկնքի դրախտը ծախեց, կնկա դրախտըն առավ, վարդ, բալասան, կնիկը այն տղամարդուն է վայել, ով կրակե պատերով բերդի վրա կերթա ու կրակի միջից կփախցնե իր սրտի սիրածը:

— Ուստա ջան, Ուստա, լեզուդ ուտեմ, մարգրիտ ես շաղ տալիս... Եվ Մարուքն ու Հարութը վրա պրծան, համբուրեցին Կարոյին:

— Սրապ ջան, ձեզ տեսնեմ:

Հարութն ու Մարուքը շարաշար տվին, Ուստան էլ իր կողմից: Դավուչին երգեց. «Քելե՛, յար ջան, քելե՛, սերդ վայելե»:

— Հե՛յ, ջա՛ն, ջա՛ն, հա ջա՛ն,— գոռում էին սեղանակիցները և ավելի ու ավելի բորբոքվում էին պարերը, տրնգիները:

Օսկանը, որ զգաստ էր, ջանում էր չափը չկորցնել, իբրև նորահարսի տեր, ելավ Ուստայից հրամանք առավ գնալու, թե Թորոյին պիտի երթամ: Ուստան պատշաճությունը հասկացավ: Օսկանը գնաց, մոտեցավ յուրայիններին և նրանց հետ հեռացավ: Ուստան նկատեց և վայրկենաբար պարապություն զգաց իր շուրջը: Սոնան ամեն բան տարավ հետը: Բայց իրեն չմատնելու համար նույն աշխուժո՛վ շարունակեց քեֆը:

Կեսօրը վաղուց անցել էր: Ուստայի խումբը, ինչպես միշտ անում են ուխտավորները, դավոլ-զուռնան առաջները ձգած, ելան կամաց-կամաց շրջելու փողոցե-փողոց, իրենց ցույց տալու համար: Սա քեֆի գագաթին հասած ձևն է: Ուխտավորները, որ գույն-գույն գետերի պես հոսում են վար-վեր, աջ ու ձախ, կանգ էին առնում, քեֆ անողներին դիտում, գովում, ոգևորում նրանց: Պատանիները նրանց հետևից կրում էին գինի, օղի և աղանդեր, հանդիպող բարեկամին հյուրասիրում էին, երբեմն հետները տանում: Հրապարակներում կանգնում էր խումբը և պար բռնում, և ապա աղմուկ-աղաղակով առաջ գնում:

Հարութը, Մարուքը թևերը ձգած Ուստայի ուսով, նրան մեջն առած, շփոթ, երերուն քայլերով, գնում էին, ստեպ-ստեպ նրա ուշադրությունը կոչում էին այս ու այն գեղեցիկ կամ շատ տգեղ կնոջ վրա: Ուստան կարմիր թաշկինակը ձգել էր պարանոցով, փափախը մինչև ծոծրակը շուռ տվել:

— Քեֆ արե՛ք, տղերք ջան, քեֆ արե՛ք, աշխարքի գանձը, աշխարքին կմնա, քեֆ քաշելը մարդուն կմնա. այ, հողածին, ի՞նչ ես շալկել աշխարքի ցավը, գարկ ու պտտվի, լակլակի կյանքը լակ-լակ կերթա, քեֆ անողինը՝ քեֆ անելով: Գինի բերե՛ք, էստեղ, գինի՛, գինի՛...

Անթիվ քեֆ անող խմբեր կային, անցան մեկի մոտով, Ուստան լսեց. իրեն անունը. «Տո՛, ի՞նչ անուշ քեֆ անողներ են, Ուստա Կարոն է, հալալ է նրան քեֆը...» և մի երկու մարդ լիք բաժակներով վազեցին, մոտեցան նրանց:

— Ձեր խմբի կենացը, շեն ու պայծառ մնա՛ք, հաճեցե՛ք մեր սեղանին:

Բոլորը շնորհակալ եղան, պատվեցին նրանց և նորից առաջ գնացին:

— Կարո ջա՛ն, ես մեռնեմ դու ապրես, մեկ տես ի՞նչ անաստված սիրուն հարս է, հոգին ուտեմ:

— Հարութ ջան, ձեռք քաշե,— ասավ Ուստան,— Ալոյենց Ղազարի կնիկն է:

— Քանի ձեռքս բերանս կերթա, ես ձեռք քաշողը չեմ, Ղազարինն ըլնի, թե Նազարինը...

— Հարութ ջան,— բոթեց Մարուքը Կարոյին, կարծելով թե Հարութին է բոթում,— էն հարսին նայե, եղն ելել է, մեղրը ծածկել, ա՜խ, ծոցիդ մեջ խեղդվեի...

— Ես էլ խեղդվեի հետդ,— ասաց Հարութը:

— Ձեզ մենակ չեմ թողնի, ե՛ս էլ:

— Պա՛, ձեր տունը չքանդվի, էդ ինչ մեծ ծով եք գտել:

— Յա՛, Չավուշ ջան դո՞ւ ես,— ասաց Ուստան,— մեկ արի աչքի առաջ, կարոտցեր էի.— և համբուրվեցին:

Մոտեցան գյումրեցի քեֆ անողներին, նրանցից մեկը բղավում էր:

— Ծ՜ո, տղերք, էս էլ խմենք էն լամպի կենացը, որ չորս բոլորը լույս կուտա: Ծո, Գոգոր, դու ո՜վ, գաթան ո՜վ. էյ, հե՜յ, ուտողը գիտե, չուտողն ի՞նչ գիտե, հոգուդ մեռնիմ, լավոտը, թուլցրու ես նրա ստեղծողին սատկիմ:

— Էդ խելառի լեզուն մարդ չի հասկնա, երթանք:

Առաջ անցան, մի խումբ կիներ, իջնում էին դեպի Շուշանա աղբյուրը, որի վայրը ստերջ կանանց համար հրաշագործ հռչակ ուներ:

— Աղջի մամս յոթ տարվա չբերք էր, խմեց՝ պտղեց:

— Ուստա ջան,— փսփսաց Հարութը,— նրանք չգիտեն, որ մենք ավելի զորավոր ենք:

— Հարութ ձենդ կտրե:

— Մեռնեմ արաղի սուրբ զորությանը, բերանս չորցավ, արաղ բե՛ր էստեղ,— բղավեց Մարուքը:

Հասան մի հրապարակի վրա, որի զանազան կետերում փերեզակաները իրենց մանրուքները ցուցադրած, գնորդներ էին հրավիրում, հարս-աղջիկ մեղուների պարսի պես բզզում էին նրանց շուրջը:

— Օսկու պես օղեր, յաղութի պես մատնիքներ, ասեղ, թել, օյա, էժան կտամ, փեշքեշի պես կտամ, քաղաք էլ չեք գտնի, մաստակ, գազբեճ, կանֆետ, մատներդ հետը կուտեք, է՜յ, հե՜յ:

Մարուքի աչքին ընկավ մի կին, ձեռքը ազատեց Ուստայի վզից և ամուր ճակատին զարկելով գոչեց.

— Հողն է՛ս գլխին, Ուստա՛, է՛ս էն անաստված աղ-

ջիկն էր, ջահել ժամանակս, որ երեք տարի հոգիս վառեց ու գնաց, ա՜խ սատանեն ասում է գնա, փաթաթվի հետը.

— Չէ՛ Մարուք ջան, չերթաս, թառից մի ընկնիր:

— Գնա՛, գնա՛ Մարուք,— խրախուսում էր Հարութը,— սատանին լսիր:

Կարոն բռնեց Մարուքի օձիքից, Մարուքն ուզում էր պոկ գալ ու վազել այն կնոջ մոտ, Ուստան հազիվ էր զսպում, օգնության հասան Գոգորն ու Սաքոն և հանգըստացրին Մարուքին, սակայն Մարուքը ուզեց, որ այստեղ փողը փչե և ինքը երգե...

Փողը փչեց մելամաղձիկ նվագ և Մարուքը գրեթե լացակումած երգեց՝ հարբած, կես խզված ձայնով. հարսը նկատեց, ճանաչեց և թաքնվեց ամբոխի մեջ:

— Հերի՛ք է, հերի՛ք, էսօր ձեզ կորցրիք, խումերդ ի՞նչ էր, որ բլբուլ դարձաք: Երթա՛նք, երթա՛նք:

— Բմբուլ դարձաք, բմբուլ,— լսեցին կողմնակի մի ձայն: Մի ուխտավոր էր, որ ասեց ու խառնվեց բազմությանը:

— Կերա՞ք,— ասավ Ուստան,— դե՛ երթանք էստեղից. Սրապ, Ջուրաբ, դավուլը զլե, ականջներս պատռե...

Որոտաց դավուլն ու զուռնան. մի պահ Մարուքը մոռացավ ցավը, իսկ Հարութը մթագնել էր: Ուստայի վարժ աչքը, որ Հարութի հոգու բոլոր ելևէջները անգիր գիտեր, նկատեց և փաղաքշելով Հարութին ասաց.

—Անուշ ջան, հոգիս, ի՞նչ էլի ամպոտար, տղամարդ կաց:

— Կարո ջան, տեսնո՞ւմ ես. էս երեխան մոր ծիծն է ծծում, էս եմ մտքում թե հիմի քեֆով ծծում է, էգուց, օրթե մեծնա, աշխարքը ծծած կաթը քթեն պիտի հանե...

— Ծ՜ֆ, Հարութ, վազն արի, էդ քու օրթեությունից, աշխարքը քանդում ես մարդու վրա,— և խիստ նայեց նրա աչքերի մեջ՝ խրատով ու ցասումով:

Հարութը լռեց:

Հասան աղբյուրի գլուխը, ուր ամենից շատ էր խառնըված ուխտավոր ժողովուրդը: Թորոյի իջևանած տան մոտն

էր: Ջուռնաչին բռնկված, կրակի պես կարմիր թշերով, գուռնան վեր էր փչում, վար էր բռնում, դեպի գետինն էր փչում և ավելի ոգևորված առանց ձեռքով բռնելու գուռնի փողը ուղղակի շրթունքների մեջ ծայրն առած փչում էր: Դավուլը դղրդում էր և խումբը դժվարով էր ճեղքում դիտող բազմությունը: Հասել էին Թորոյի իջևանած տան մոտերը, որտեղից ապահովաբար դիտելիս կլիներ Սոնան...

Ուստան նետեց իրեն բաց տեղի մեջ և սկսեց մի բուռն տրնկի, ապա բոլոր ընկերներով շարվեցին քոչարի պարին, ոտներն ամուր զարկում էին գետնին, օրորվում, թափ տալիս, ծնկի գալիս, դիք կանգնում, շիփ-շիտակ կանգնում ձողի պես:

Հարութն ու Մարուքը այնպես էին մոռացել և իրենց վայրկենական թախիծը, որ ոչ միայն իրենց գլխարկներն էին օդ նետում, այլև անծանոթ անցորդների, դիտողների. գոռում էին, գոչում, զանազան ձայներ արձակում:

Երբ դեռ արևը մայր չմտած, հնչեց երեկոյան եկեղեցու զանգը, Ուստա Կարոյի ընկերները այլևս իրար լեզու չէին հասկանում: Մացակը, որ ամենից զգաստն էր, ժողովեց բոլորին տարավ տուն, որ հանգչեին մի քիչ:

Կարոն, Հարութը և Մացակը իրար կողք պառկեցին, մի երկու-երեք ժամ հանգչեցին, առաջինը Ուստան սթափվեց և նրանց էլ ոտքի կանգնեցրեց, սառը ջուրը, որով լվացվեցին, գլուխներին ածելով, բավական զգաստացրեց նրանց, մի երկու բաժակ թեյ խմեցին ախորժակով, մի-մի օղի ևս, և ընկան գյուղամեջ, ուխտավորների մեջ, ինչպես հաճախ, նախկին տարիներին արել էին, լսելու, լրտեսելու հարսների զրույցները, ընկերների խոստովանությունները, հատ ու կտոր, հարսների ձեռքերից քաշելու, գաղտագողի կատակներ անելու, մի խոսքով չարաճճիություններ, ծիծաղել և զվարճանալ և մանավանդ այսօր, այս անգամ որ մոնթաթող էր:

Գիշերը ծովի պես սև լցվել էր, կանգնել Բագրանի հովիտում, լուսին չկար, բայց վճիտ երկինքը լիքն էր աներթիվ վառվռուն աստղերով:

Երբ Ուստան նայեց երկնքին, ուրախությամբ գոչեց:

— Հա՜յ, ա՜յ, երկնքումն էլ տոն է, ճրագալույս է, ճրագալույս, կանթեղները ամենքը վառ, ես ձեր ստեղծողին մեռնեմ, նորից քիչ է...

Օդը ջերմ էր ու հեշտալի. ամեն տան առաջ լույս կար, կյանք ու շարժում, խոսք ու ծիծաղ, հազար տեղից լսվում էր սրինգի, փողի, երգ ու պարի ձայներ, տեղ-տեղ խարույկներ կային, որի շուրջը կլոր պար էին դառնում:

— Մի՞տդ է, էն տարին, էստեղ էր որ էն հարսի դիմաց խնձորը խածելով ասիր. «Էսպես ուտեմ քեզ», հարսը էլ. գրո՛ղ, գրո՛ղ կեր, ասավ գնաց:

— Երեկ էն տարին,— ասաց Մարութը.

— Կարելի է գալող տարի էս օրին էրեկ տանք,— ասաց Ուստան բազմախորհուրդ շեշտով ու թախծոտ ձայնով. միտքն ընկավ գնալը, ապա ժողովեց իրեն:

— Անցած օրվան օր չի հասնի ու մեր քեֆին էլ քեֆ չի հասնի, էրթանք էս դիով, պար կա էնտեղ:

Երեք ընկերներով մոտեցան մի պարող խմբի, երիտասարդ տղա և աղջիկ երգում էին ու թռչում իրար ձեռք բռնած:

Ծողեր պառկե երես բաց —
Հո՛պ, հո՛պ, հո՛պ լա դմբա, հո՛պ,
Ինչ լավ է, ինչ լավ է, հո՛պ, հո՛պ:

Հարութը մի հարսի ցույց տալով, ասաց ընկերներին.

— Տեսեք ինչ Հնդստա ապրանք է, ամեն բանը տեղն է, ամեն կողմն էլ աննուշ է «ի՞նչ լավն է, ինչ լա՞վն է, հո՛պ, հո՛պ, հո՛պ լա դմբա...»:

— Պա՛հ, հո՞, հաստատ որ,— ծոծրակին ամուր զարկելով հաստատեց Մարութը,— մենք հո՞ կնիկ չենք պահել, մենք մեր քեռոնց սև էշն ենք պահել:

Ուստան աչքերը լարեց,— հա, է՞դ-Սոնայիս քով՝ ասորու պատկեր, մի բան էլ պակաս:

Ընկերները չհակառակեցին, Հարութը ձայնեց.

— Էն կնկան նայե՛ք, նմանի վանա տատեխի, չորչորուք, հագուստը մեռելի պատանք:

— Էդ պատին, էդ ծեփն էլ հերիք է...

— Տո՛, տո՛ նայեք,— ասին իրարու հանգով,— Ան-

թառամն էլ է էնտեղ, պարի մեջ ընտած, դրուստ որ, էդ մոնթաթող է... ինչ լավ է մնացել՝ ջանն էլ կանաչ հարս:

— Երթանք ուրիշ տեղ, համն ելավ էստեղ,— ասաց Մարուքը, և առաջ ընկավ: Այդ միջոցին մի կին էր վազում դեպի պարը, հանկարծ կնոջ բարակ շալի ծոփը անցնելիս կառչեց Հարութի գոտու արծաթի կեռից, կինը քաշեց շալը կարմրած, Հարութը ոչ մի շարժում չարավ՝ արձակելուն օգնելու:

Ուստան միջամտեց և արձակեց, հարսը գնալուց Հարութը մեղմակի բռնեց նրա արմուկից:

— Տո՛, անսպեո, խեղճը քիչ մնաց ամոթու մեռներ, թևն ինչի՞ բռնեցիր:

— Քեզ ինչ, ինչո՞ւ մեջ մտար, մատաղն իր ոտքով էր եկել, էդքան էլ իրավունք չունենք, դրա տերը ինձնից լա՞վ է, օրթե գումար ինքը կուտե, ես ո՞ւտ էլ չառնեի...

— Էրթա՛նք, խաղք կլինենք, խաղք...

Գնում էին երեք հոգով, անցան մի փողոցով, որ ուխտավորների մի խումբ հարբած թափվել էին գետին, մեկը գլուխը դրել մյուսի փորին ու քնել, մյուսը դեռ բթի տակ մռմռում էր, մի անկյունում երկու գինով իրար համբուրում ու լաց էին լինում, մի ուրիշ տեղ մեկը մյուսին քաշում էր՝ չես իմանում ինչ նպատակի համար, մյուսը համառում էր՝ բոլորովին անգիտակից:

Անցան. մի տեղ մատաղի փոքրիկ խարույկի առաջ նստել էին մի քանի ծեր մարդ ու պառավներ, ծխում էին ու քթախոտ էին իրար հրավիրում, և մերթ մատաղի կաթսան խառնում: Անցնելիս նրանց ականջին դիպան խոսքի կտորներ... «Աստված մարդու տանելու չափ ցավ չտա, մարդ ամեն դարդ կտանի, սար ու քարից ամուր է... Բան չեմ խնդրե աստվածից երեք օրվա ալուլ-բալուլ մահ...»:

Ուստան ասավ,— երթանք էստեղից, մեռելի հոտ կուգա...

Անցան մի փողոցով, ուր մի խումբ ցվիքի տակ՝ սեղան էին նստած, մի աշուղ սազի վրա երգում էր, մեկը նկատեց Ուստային ու ձայն տվեց.

— Ուստա Կարո, հոգուդ մեռնիմ, սիրտդ վկայեց, որ

Էստեղ եմ, համեցեք, ընկերովդ,— և վազեց դեպի Ուստան:

— Մարգար ջան, դու էստե՞ղ ես, չէի իմացել, աննշ էրեք, մենք պիտի էրթանք:

— Համեցե՛ք, համեցե՛ք,— ձայն տվին սեղանակիցները,— ժամ շա՜տ կա, էլի կերթաք, մերն էլ սեղան է:

Գնացին, բարև տվին և նստան, իսկույն նրանց գինի տվին՝ մի մեծ-մեծ գավաթով, և խորոված գառի միս:

— Ծանոթ եղե՛ք, մեր Ուստա Կարոն է: Ուստայի խոսքըն արել էի:

— Գիտե՛նք, լսե՛լ ենք, հիմի էլ ճանաչ եղանք, շա՜տ ուրախ ենք...

Քեֆ անողները Կաղզվանցի էին, իսկ Ուստային հրավիրողը՝ Խաս գյուղացի:

Աշուղը հյուրերի պատվին շարժեց լարերը, բորբոքեց և ինքն էլ բորբոքված երգեց.

Հինգ հարյուր տարվա մի քուն քնեցանք,
Աստված ու եղբայր իսպառ մոռացանք.
Օրինակ առնենք բուլղարաց ազգեն,
Այսպես կազատվենք չար թուրքաց ձեռքեն:

Բոլորը, կարծես, մի խոսք արած, գոչեցին.

— Ուղի՛ղ է, ուղի՛ղ է, վա՜յ չհասկացողին, վա՜յ քնածին:

Ուստան էլ ոգևորված, հանեց 2 արծաթ դրամ տվեց աշուղին, և ասաց.

— Էլ քնած հայ չկա, զարթնել ենք ու մեր եղբայրներին չենք մոռանա:

Բոլորը հավանություն տվին Ուստային, իսկ Հարութը թեև ականջը սեղանին կպած էր, բայց աչքի ծայրով դիտում էր քաղաքացի մի կնոջ, որը զարդարուն ու հպարտ նստած էր մի քիչ հեռու:

Երբ Ուստան ընկերներով շնորհակալ եղած հեռացավ, Հարութն ասաց.

— Տո՛, զարթած Ուստա, տեսա՞ր էն Թիֆլիսի հարսը, օրթե վախնամ նրա մասին քնած էիր, ու աստված ու եղբայրդ մոռացած,— ասաց Հարութը, ձայնի մեջ հեգնանք դնելով:

Ուստաև զգաց թե Հարութը հեգնում է իրեև, և չկարողանալով պատշաճ հատուցում տալու ասաց.

— Տո, ձեզդ կտրի. Տիկոռի կալերից դուրս դու ի՞նչ աշխարհ գիտես, Թիֆլիս, դու որտե՞ղ էիր, որ ես տարին հարյուր անգամ Թիֆլիս ելնում էի ու իջնում:

— Թիֆլի՞սը — հա՛, եղել ես, գիտեմ, Սամսև էլ եղե՞լ ես:

— Ճամփուս վրա էր:

— Հաբա՞շ:

— Ճամփուս վրա չէր,— չոր պատասխանեց Ուստաև:

— Օրթե մեկ էլ կերթաս, բեր անպատճառ, լավ հարսներ կաև էնտեղ...

Մարութը գլխի ընկավ, որ իրար հետ ներհակ եև խոսում, կարող է կռիվ ծագել, Հարութի վրա պրծավ, բերանը բռնեց և հրամայական ասաց.

— Մեծ բրդում կեր, մեծ խոսք մի՛ խոսիր, կխեղդեմ, գիտե՞ս.

— Թող խոսի,— ասաց Ուստաև, վեհանձնաբար,— իր ջաղացի չախչախն է, աղունը պրծել է, պիտի կլափի տա...

Հարութը, որ հաճախ վիրավորում էր Ուստային, և վայրկյան չանցած՝ զղջում էր ու գառ դարձած՝ ընկնում Ուստայի գիրկը, Մարութին մի կողմ հրեց և փպթպթվեց Կարոյի վզով...

— Ուստա՛ ջան, աչքիս նայե. օրթե լավ կլներ, ճանճ դառնայի, Թիֆլիսու էն հարսի ծծի ծերը կծեի...

— Լա՛վ, լա՛վ, էրթանք տուև, էրթանք քնենք:

Ուրիշ փողոցներով դառնում էին դեպի տուև, ճանապարհը կարճելու համար երբեմն անցնելով կտուրների վրայից, գյուղը կամաց-կամաց լռում էր, ճրագները հոսրանում, ուխտավորները հետզհետե քուն էին մտնում:

Մարութը մենակ էր եկել, ընտանիքը չէր բերել, այնպես որ միացավ ընկերներին, միասին գնացին Հարութի իջևանած տուևը, և Հարութի մոր օրհնությունները առնելով՝ իրար կողքի պառկեցին քնելու:

Ուստաև մի պահ մտածում էր վաղվա աևելիքների մասին—վաղն է մեծ օրը—կիրակին, գլուխ կորցնելու օր է, ճնար գտնենինք Սոնային տեսնենինք, և այս մտքերի մեջ կորավեց:

Առավոտ Չավուշն եկավ նրանց մոտ, և հայտնեց թե Կայծակը, Թաթոս վարժապետը և Ռես Հոսեն արդեն եկել են, և գնացին մատուռը: Ուստան շտապեցրեց ընկերներին, որ շուտ ելնեն երթան, գոնե մատուռից իջնելիս դիմավորեն Կայծակին, որովհետև անհարմար կլինի նրան միայն ճաշին հանդիպել:

Կիրակի օրը Բագրանի ուխտավորների թիվը գրեթե կրկնապատկվել էր. մերձակա գյուղերը սովորաբար լույս կիրակի գիշերն են գալիս: Գյուղական նեղ փողոցներում, շրջապատում ասեղ ձգելու տեղ չկար. աղբյուրների գլուխ լայն տեղերում, հրապարակներում շեղջով դիզված էին մրգեր՝ խաղող, նուռ, խնձոր, տանձ, և ուրիշ բարիքներ, վաճառողների ու գնորդների, երեխաների, ձիերի, էշերի աղմուկ-աղաղակից իրար լսել անկարելի էր, տեղ-տեղ ծոր էր տալիս զուռնաճ այգիների խորքից:

Անցան չորսով մի հրապարակով, ուր երկու երիտասարդ ըմբիշներ իրար հանդես էին կոչում հոխորտալից խոսքերով. մեկն ասում էր,— Ես Սարդարապատի Արսենն եմ, երևանցի հայ ու թուրք կոխ բռնող անուն որ կլսեն ուռու պես կդողան.

— Դու, քոնը գիտես,— ասում էր մյուսը,— իմ մեջքս դեռ գետին չի առել:

Հարութը քթի տակ մի բան մրմնջաց. իսկ Ուստան շտապում էր վայրկյան առաջ Կայծակին տեսնելու: Երբ զառիվայրով մի քիչ բարձրացան, մի մարդ մոտեցավ Հարութին և հարցրեց:

— Ախպեր, դու Ճալա գեղի Պողոսենց Ալեքը չե՞ս:

— Որթե Ալեքն ըլնեմ, ի՞նչ պիտի անես:

— Խոսք ունեմ ասելու...

— Չէ՛, ախպեր,— մեջ մտավ Մարուքը,— սխալ դուռ ես զարկում, ինչպե՞ս Հարութը Ալեքին կրնա նման ըլնել:

— Ներող եղեք, Ալեքի դրուքն ուներ,— պատասխանեց անծանոթը և գնաց:

— Տո՛, Հարութ, ասել է դու մարդու նման ես եղե՞լ, ես չգիտեի,— խնդալով ասաց Ուստան:

Հարութը, որպես թե Ուստային չէր լսում, կանգնած տեղը երկու ձեռքը իրար զարկելով ասաց.

— Պահ, օ՜հ, կնի՛կ, կնի՛կ, ինչքա՜ն կնիկ կա, վեր, վար, տեսեք, քառասուն դի, մեկտեղ ծով է, մեկէլ տեղ սով է...

— Էդպես է, աշխարհ էշով լի է, մենք ոտքով մաճ կուգանք,— ասաց Մարուքը:

Ուստան քահ-քահ ծիծաղեց Մարուքի խոսքի վրա:

Հարութը մի ծուխ ուզեց Չավուշից, անխոս նստավ մի քարի վրա, և ուշադիր աչքերը պտտեցրեց ներքև խառնվող ժողովրդի վրա, որ գունագեղ ալիքով ծփում էր:

— Ել երթանք,— կրկնեց Ուստան:

— Ես չեմ գա Կայծակի քովը,— ասաց ծուխը բերնից հանելով,— Մարուք, դու էլ մի երթա, Կայծակ է, կզարկե:

Մարուքը նայեց Ուստայի վրա, ուզենալով նրա հայացքը կարդալ: Ուստան խոժոռեց աչքերը և Չավուշի հետ գնացին:

— Ես էդ Կայծակին չեմ սիրում, ասաց Հարութը:

— Սուրբ գործի մարդ է, Հարութ:

— Ես էդ սուրբ գործն էլ չեմ սիրում, ուրիշ բան խոսի:

Եվ լուռ տեսքով Հարութը հայացքը հառել էր ժողովրդի վրա, որ տոնական հագուստով, զվարթ սրտով ուրախության մեջ էր՝ ամեն ցավ ու չոր մոռացած: Հարութը հեգնող, տխուր տեսք ուներ, նրա տրամադրությունը առհասարակ միշտ հեղհեղուկ վիճակի մեջ էր, մերթ ուրախ, մանկան պես, և հաճախ թախծողի:

— Էլ ի՞նչ տակնուվրա եղար Հարութ:

— Ոչի՛նչ, Մարուք ջան:

— Չէ, ի՞նչ ես մտքում:

— Էն բանն եմ մտքում, օրթե մի քանի տարի անց, էս ամենքն էլ մեծ ու պստիկ մեկ դռնով դուրս ենք գալու էս աշխարքից, կսկիծ է, Մարուք ջան, կսկիծ:

— Էդ ի՞նչ մտքելու բան է, դրանց թոռները կուգան, տեղ կբռնեն:

— Թոռներն էլ պիտի երթան, թոռների թոռներն էլ:

— Մեզ ի՞նչ, հաշվով է տված:

— Մենք էլ էդ հաշվի մեջն ենք, տուն չքանդվի,— չոր ծիծաղով ասաց Հարութը:

Մարուքի վրա ազդեցին նրա խոսքերը մի վայրկյան, ապա գրպանից հանեց օղիի շիշը և ասաց.

— Ես էդ բանի վրա խելք չեմ փտեցնե, ե՛լ երթանք Գևոյի խանութը, մի-մի արաղ խմենք, մինչև Ուստան գա, Գևոյի դռնով պիտի անցնեն:

Եվ գնացին Գևոյի խանութը: Մի պահ հետո Ուստան եկավ Չավուշի հետ Մարուքը ձայնեց նրանց, երբ միացան Ուստան ասաց, թե Կայծակը հիմա գնաց վարդապետի մոտ, ճաշին լինելու է մեր սեղանին: Հիմի երթանք լարախաղացին նայենք, Բասինայի նշանավոր լարախաղաց է, նոր մուրազ առած, ողջ ժողովուրդ իրեն է ժողովված:

Գյուղի եզրին, ընդարձակ դալար կալի մեջ շինված էր լարախաղը, անհամար ժողովուրդ չորս կողմը նստած, կանգնած մտիկ էր տալիս խաղին:

Մացակը վաղուց տեղ էր գրավել լարախաղին շատ մոտիկ, աչքառու մի տեղ (դաշտի վրա սառը ուտելիքներ էր դրել և գինի ու արաղ): Ուստային նկատեց և կանչեց: Ուստան ընկերներով անցնելիս ժողովրդի միջից, որ հարգով բացում էին ճամփա, նկատեց իր սանամայրերին, որոնց աչքը իրենց խորթացած քավորի վրա էր: Ուստան թեթև բարև տվավ և անցավ, սանամայրերը նշան արին և Չավուշին կանչեցին իրենց մոտ, Չավուշը գնաց նրանց մոտ: Ուստան աչքերով թափառում էր ահագին բազմության վրա, Թորոսենց ընտանիքը էր որոնում, որ Օսկանի ընտանիքի հետ միասին պիտի լինեին, վերջապես գտավ և միամտեց, սակայն, իրենց տեղը նրանցից մոտիկ էր: Նստեցին, Ուստան լուրջ կերպարանք առավ, հանեց պատրաստի ծուխը և ընկերներին հրամցնելով, ծխում էր և դիտում խաղին:

Լարախաղացը երիտասարդ տղա էր, նիհար, ճկուն, ոսկեթել գդակ, ազդրներին կիպ կպած վարտիք, սպիտակ գուլպա, կարմիր շապիկ ուներ հագին՝ կուրծքը զարդարուն հմայիլներով, որ խաչ-կապ ձգած էր երկու ուսերից: Կանգնել էր ճոպանի վրա ձեռքին երկար ձողը և ցնցում էր ողջ իրանը՝ հմայիլները ծփում էին կրծքի վրա: Դավուլ-

զուռնաճ երգում էր և չափ էր տալիս նրա բազմաձև խաղին: Նրա ներքև գետնի վրա առակ-պառակն էր, ծաղրածուն, մի այծամարդ՝ հին, պատառոտուն հագուստով, դեմքի վրա կաշվից շինած դիմակ ուներ, աչքերի և բերանի տեղը բաց, թաղիքից շինված եղջյուրներ ուներ, որոնց ծայրից զանգակներ կային կախված. մորուքը այծի մազից էր, վարտիքը այծի փոստից էր, մազերից բոժոժներ կախված և առհասարակ հագուստի ամեն քուրջից բոժոժներ կախված: Ահագին ապատ ուներ մեջք ու կրծքի վրա, գոտկի մեջ փայտե դաշույն և ատրճանակ: Կրծքի քարգյահի մեջ դատարկ թանաքամաճ ուներ, գրչի փոխարեն մի բարակ ճիպոտ, ձեռքին փայտե նիզակ:

Ինչ որ լարախաղը ճոպանի վրա էր անում, նա էլ գետնի վրա, նա տնազ էր անում, հակառակ ուղղությամբ, երեսը երեսին:

Ժողովուրդը լարված դիտում էր մի դժվարին խաղի: Լարախաղացը՝ գլխի վրա մի մատուցարան էր դրել, վրան լեցուն բաժակներով գինի և գինու շիշը, ոտների վրա երկու-երկու դաշույն էր կապել, և այդպես պարում էր ճոպանի վրա ու ոստումներ գործում, առակ-պառակը իբրև թե զարմացած դիտում էր և հաճախ հիացումից գլխիվայր կանգնում էր և անիվի պես գլորվում...

Երբ խաղն հաջող անցավ, դղրդաց դավուլ-զուռնան և անվերջ ծափերը, ու զանազան տեղերից փող էին նետում պարանի տակ՝ կարպետի վրա, իբրև վարձ լարախաղին, իսկ ծաղրածուն, երբ նկատում էր մի-մի աչքի ընկնող հանդիսատեսի, վազում էր նրա մոտ և շաբաշ ուզում: Երբ տեսավ Ուստա Կարոյին, գլուխ-կոնճի տալով վազեց ներքև և Ուստան մի ռուբլի շաբաշ տվեց — շաբաշ մեկ մանեթ:— Ուստա Կարոյից, աշխարհաշեն մեծաց վարպետը շե՛ն մնա, շե՛ն մնա,— և գրիչը թրջեց լեզվով, թաթախեց թանաքամանի մեջ և հաստ թղթի վրա գրեց. «մեկ մանեթ Ուստա Կարոյից»:

Խաղի ընդմիջումին առակ-պառակը սկսեց իր կատակները: Վերև ձայնեց լարախաղացին՝

Էյ, Մշու սուլթան, Սուրբ Կարապետ.
Էյ, փառիւսաց ախպեր,
Սաա, չվաճ, չվաճ:

Լարախաղացը ասաց.— չվաճ, չվաճ:
Պատասխան —

Հայ Նախճվան, Նախճվան,
Հացը շատ՝ կուշտ կերան,
Ջուր չկա, կճվճվաճ...

Դառն ակնարկ էր Նախճվանա վրա, որ աղբյուր չունեն. ժողովուրդը ուրախ խնդաց, նախճվանցիները կարմրեցին:

Նորից ձայն տվեց,— Սաա—գերան, գերան:

Լարախաղացը պատասխանեց — Գերան, գերան:

Պատասխան —

Էյ, Բագարան, Բագարան,
Ծոմ են բռնել տարի բոլոր,
Մատաղ ուտեն ու գիրանան,
Էրնեկ էաոր, էրնեկ էաոր...

Ժողովուրդը ծափ տվեց ու ծիծաղեց, բագրանցիները վիրավորվեցին, շփոթ ընկավ, բայց ծաղրածուն արագ գուշեց և բոլորը լռեցին:

— Սաա, Սպճի, Սպճի:
Պատասխան —

Այ Ծպճի, Ծպճի,
Իշու քացին ձեզի դիպճի,
Ձեր շարմաղ հարսների սիրուն
Սուրբը ձեզի տա թողություն...

Նորից ծափ-ծիծաղ, որ խեղդվեց դավուլ-զուռնայի մեջ, լարախաղացը «Յա՜ սուրբ Կարապետ, յա՜ Մշու սուլթան», ասելով սկսեց նորից իր խաղը, մեկը մյուսից զարմանալի ու ճարպիկ, վտանգավոր և հաջող:

Ուստան ընկերներով խմում էին ու դիտում, ծափ տալի,

«ապրես, ապրես» բղավում, շաքաշը անպակաս տեղալով։

Ուստաճ աչքը չէր հեռացնում Սոնայի կողմից, մի պահ նրանց հայացքները իրար միացան, իրար աչքերի մեջ իրար հանդիպան, Ուստաճ բեղերը ոլորեց, լցրեց լիքը բաժակը, և Մարուքին ու Հարութին, որ իր աջ ու ձախ կողմն էին նստած՝ ասաց,— հենց որ Սոնային տեսնում եմ, մեջս էնքան զորք է լցվում, որ ուզում եմ աշխարհը հունցեմ խմորի պես, առաջս սար ու ձոր դուրան է դառնում, հենց իմանաս ուզում եմ ճոպան խաղացողի պես սարից սար լոք տամ։

Մարուքը աչքերը զարմացած բացեց, իսկ Հարութը քըմծիծաղ տալով ասաց.

— Սոնայի վրա լոք տուր, սար ու ձոր քամուն թող, օրթե դու քամի չես։

Ուստի համար նոր չէր Հարութի ոճը, ուշք չդարձրեց ու հանելով ժամացույցը մտածում էր, թե երբ պիտի [Կայծակի հետ ունենալիք] կերուխումը վերջանա, որ սկսեն Ոսկանի մոտ հրավերքը, ուր նոր-հարսին պարի պիտի հանեն, և այդ իրարանցումի մեջ հաջողի Լորիկի միջոցով Սոնայի հետ տեսակցելը։ Չավուշը եկավ և բազմիմաստ հայացքով նայեց Ուստային. սա հասկացավ, որ Չավուշը բան ունի ասելու։

— Տղերք ջան,— դիմեց Մարուքին, Հարութին,— ներող եղեք, ես Չավուշին եմ նայում, բան ունեմ խոսելիք։

Նա ուզեց ելնել, փեշից բռնեցին՝ թե մենք կելնենք, թող Չավուշը գա։ Նրանք իրենց տեղը տվին Չավուշին, իրենք նստեցին նրա տեղը և երկուսով դիտում էին կանանց. ոմանց գովում, ոմանց ծաղրում։

Չավուշը Կարոյի ականջին փսփսալով ասաց թե, սաղամերները իրեն հարցրին թե, ո՞րն է Քիրսվա էն հարսը, որ մեր քավորին խելքից հանել է, ինքն էլ ցույց տվեց, սաղամերները տեսան ասին... իսկի սիրուն չէ, լսել ենք որ մազ-կտրուկ մեկն է, բնկալ տաքցնող չէ, գլխակեր է։

Ուստաճ ծիծաղում աչքերով ասաց,— Չավուշ ջան, կատվի դունչը մսին չհասավ, ասավ, պաս է, նախանձ են խոսում, կնիկները սիրուն... կնկա. թշնամին են, կնիկը՝ իր

աչքը կույր տեսնել կուզե, ուրիշին սիրուն տեսնել չի ուզե: Սանամերերը կամ թե աշխարքի բոլոր կնիկները աչքիս փթած կեմ են, դու բան ունես, ասա...

Ուստան բավ համարեց և առաջարկեց ընկերներին, որ վեր կենան և մի քիչ զբոսնելով երթան ճաշկերույթին, ժամանակը հասել է: Երբ հեռացան խաղի տեղից, մտան գյուղը, ուխտավորների ուրախությունները՝ գինարբուքը, լրման մեջ էր, հարբած խմբերը զուռնայով թափառում էին. տեսան մի մարդ մեն-մենակ պատեպատ զարկվելով խըզված ձայնով երգում է միևնույն բառերը անընդհատ և պարում է.

Սելին կասեն արաբա,
Սարոյի կնիկը խարաբա,
Ծոպկե գոտի, ճկե փափախ,
Սարո ջա՜ն, Սարո ջա՜ն:

Հարութը մոտեցավ, ուզում էր նրա ձեռքից բռնել, պարել, Ուստան ցասկոտ քաշեց նրա օձիքից և առաջը ձգելով, տարավ:

Նույն Երիցախեղդի դիմաց, սեղան էր փռված, Մարուքն էր տնտեսը, այս անգամ ավելի օգնականներով: Ուստան իր չորս ընկերներով եկավ, բարևեցին իրար: Չավուշը միացավ Մարուքին օգնելու համար, քիչ անց եկան Կայծակը, Թաթոս վարժապետը, և մի երիտասարդ, Արամը՝ Կայծակի ընկերը, Ռես Հոսեն, նրանց հետևում էին երկու զինվոր Ասլան Բալան և Հլղաթը:

Ենթախմբի ավագ անդամ՝ երեցփոխը, ընդունեց բոլորին ու տեղավորեց, ինքը նստեց վերևը աջ ու ձախ կողմը Կայծակի ու Կարոյի ընկերները, Կայծակի մոտ Թաթոս վարժապետը, Արամի մոտ Ուստան, Ուստայի մոտ՝ Հարութը, և այսպես զինվորները նույնպես:

Իրար ետևից բերում էին կերակուրները և դարսում հյուրերի առաջ: Սեղանապետը բաժակները լցնել տվեց և հանդարտ ձայնով ասաց.

— Մեր պատվական պարոն Կայծակի և իրեն ընկեր պարոն,— կանգ առավ. Կայծակը ցած ձայնով թելադրեց,—

Արամ,— պարոն Արամի թանկագին կենացների համար: Աստված, սուրբ Գևորգ ձեր նպատակներին հասցնե:

Կենացի տերերը հարգանքով գլուխ տվին, բոլորը իրենց բաժակները զարկեցին նրանց բաժակներին:

Ջուռնաչիները, զուռնաների տեղ փողերն էին ևվագում, իսկ դավուլչի Ջուրաբը ևվագին ներդաշնակ երգում էր:

Այս հարգելի խմբի շուրջը հեռվից հավաքվում էին հետաքրքիր ուխտավորներ, կամենալով տեսնել ու լսել ևշանավոր մարդկանց քեֆն ու խոսքերը:

Պարոն Արամը ասաց.— Ես առաջին անգամն եմ ոտք կոխում հայկական գավառները և իմ կյանքիս ամենաքաղցր օրերն են այս օրերը, որ անցկացնում եմ հեռվից սիրած ու կարոտացած հայ ժողովրդի մեջ՝ իր սրբազան հայրական հին հողի վրա: Իսկ ես գիտեմ, որ այս ևվիրական հողերի վրա դարերով բարբարոսի ստվերն է ծածկել, և նրա սև ձեռքը ավերել է ինչ-որ գեղեցիկ է եղել և հոգեկան, բայց տեսնում եմ, որ նրանց բերած տիղմի տակ անաղարտ է մնացել հայ հոգին, և հայկական հոգու կենիքը անջնջելի փորած է այս երկրի քարի ու ժայռի վրա:

— Այո՛, հայ ժողովուրդը նորից ոտքի պիտի կանգնի, իր բոլոր վեհ հասակով, և պիտի քայլե դեպի լուսավոր ապագան, մի ոտքը հնի, ավանդականի վրա, մյուս ոտքը նորի, ժամանակի, որովհետև մի ազգ ուժեղ է երբ կապում է իրար անցյալն ու ապագան: Ընկած տեղից մենք ոտքի ենք կանգնում, որովհետև...

Ուստան չկարողացավ իրեն զսպել և արագ ավելացրեց.

— Ջիուց ընկնող կտրիճը, նորից կվազե ձիս կհեծնե:

— Կեցցե՛ս Ուստա Կարո,— ձայնեց Կայծակը,— Ուստա՛, ձեր կենացը,— և բաժակը զարկեց Ուստի բաժակին:

— Այո՛, որովհետև մենք իդեալ ունենք՝ նոր կյանքի, մարդկության, քաղաքակրթության, և գիտենք զոհվել այդ վեհ իդեալի համար, և քանի մի ազգի իդեալները չեն ջախջախված, նրա մեծ իդեալները, նա անմահ է, բռնությունն անզոր է:— Եվ լռեց, Կայծակը գլխի նշանով հավանություն տվեց:

Զուրաբը երգեց — Կանչե կոուկ, կանչե, քանի գարուն է...

Սեղանապետը բաժակները նորից լցնել տվեց:

— Մաղթենք, կռնակ տանք, որ մեր ազգը ազատվե անօրենի չար գերութունից, քանի անօրենը մեր գլխին նստած է, մենք օր ու արև չունենք, մեր ունեցածն էլ մերը չէ—տե՛ր աստված, դո՛ւ դատ արա, արդար կշռե, թե մերն է մեզ տուր, թե նրանցն է նրանց տուր:

— Կեցցե՛ս, տիրացու ջան, ասաց Մարուքը, զուր չէ քո ուսումը, քանի գովեն քեզ քիչ է:

Բոլորը խմեցին բաժակը, Ռեսը բթի տակին մրմնջաց. աստված օրհնյալ է...

Երբ վերջացան ճառերը, գոչում էին անվերջ և շուրջը հավաքված ուխտավորներն էլ արձագանք տվին: Դավուլը զուռնաների հետ ականջ խլացնելու չափ դղրդում էր, օդը լցվել էր որոտով, հեռավոր և մոտիկ դավուլ-զուռնաների ձայները մարել-խեղդվել են Զուրաբի դավուլ-զուռնայի մեջ:

Նվագից հետո, Տիրացու Հովակը բաժակն առավ ձեռքը.

— Մի կենաց էլ իմ կողմից: Խմենք մեր օրհնված հայրենիքի համար, որ մեր երկիրը օրհնված է, օրհնված է, ինչ որ աստված Եդեմի դրախտը մեր հողերի մեջ դրեց, Ադամը օրհնեց մեր հողն ու ջուրը, Արարատ-Մասիսի վրա իջավ աշխարհատեսիչ Նոյ Նահապետը, գլուխը դրեց Արարատի դաշտի վրա քնեց, այնտեղ այգի տնկեց և գինի շինեց, կերակուրը Կողբա աղից առավ ու ջուրը Արաքսի խմեց, Աստվածորդին միածին իջավ մեր հողի վրա, Լուսավորիչն այնտեղ դրեց մեր սուրբ եկեղեցու հիմքը և իր անմահ կանթեղը վառեց Արագածի գլխին, որ լուսավորե մեր հուսահատ սրտերը, օրհնվա՛ծ է մեր եկեղեցին, և մի՛շտ օրհնված էլ պիտի մնա:

Իսկ Հարութը լուռ, անմասն նրանց զգացմունքներին, ծաղրը շրթունքներին, ծխում էր՝ մերթ ընկերներին նայելով, մերթ հանդիպակաց ժայռերին:

Կարոն հաշտ ու մեղմ ձայնով ասաց,— ելե՛ք, ելե՛ք երթանք Օսկանի մոտը, հարսը պարը պիտի քաշեմ, չէ որ քավորի պարտքն է:

Ընկերները պատճառաբանեցին, թե իրենց համար անհարմար է ներկա լինելը, ընտանեկան բան է այդ, «երթանք հեռվից կդիտենք», Ուստան համաձայնեց, և Չավուշի հետ զուռնաչիին ուղարկեց Օսկանի մոտ, իսկ ինքը՝ Ախուրյանի ջրով մի լավ թրջելով գլուխը, տաքացած երեսը, թարմացավ, և ծուխի գլանակը բերանը դնելով, Ռեսի հետ կամաց-կամաց գնաց դեպի Օսկանի հրավերքին:

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻՆ

Ուստա Կարոն պար-տուն չհասած, պատահեց սանամեր Լորիկին, որին տեսել էր թեև և Սոնայի հետ տեսակցություն սարքելու խոստումն առել, հիմա էլ ուզեց ավելի ապահովել, որովհետև մնացել էր միայն այս պարի առիթը:

— Սանամեր ջան, հոգիս ձեռքիդ է, գիտես, Թորոյին լավ կխմցնեմ, հավկուր կշինեմ, դու Սոնային դուրս տար, ես հոն կլնեմ:

— Քավոր ջան, խոսքս խոսք է, մենակ, սատանոք է, որ չեկանք՝ մեզ մի՛ սպասե, Քերս (գյուղ) կեփեմ գործը:

— Վա՜յ, սանամեր, չի ըլնի, էսօր էլ որ Սոնային չտեսնեմ, էլ ի՞նչ սրտով մարդամեջ ելնեմ, գիշերն էլ հոն կմնամ, մեկէլ օրն էլ, մինչի վերջին օրն էլ...

Լորիկը երդումով խոստացավ:

Ուստան հանգստացած գնաց:

Տան առջև, բաց տեղում, սեղան էր դրած, արաղ-գինիով և աղանդերներով: Հարս-աղջիկ, երիտասարդ, պատանի տղաներ, հանդիսատեսներ լցվել էին դուռն-երդիկ: Օսկանը սեղանի գլուխը նստել սպասում էր խնամիներին, արդեն կինն ու եղբոր կինը գնացել էին հարսի և խնամոց ետևը:

— Ուստա՛ ջան,— ասաց Օսկանը,— ուշացաք, լավ չի՞ ըլնի դավուլ-զուռնան առնենք երթանք բերենք:

Ուստայի սրտից ջուր խմեց Օսկանը. ճանապարհ ընկան.

Թորոյի իջևանած տան մոտ հնչեց դավուլ-զուռնան «հարսնառի» եղանակը. արդեն պատրաստ էին Թորոյենք. իսկույն դուրս թռան և նվագի տակ հանդիսավոր քայլում էին դեպի պար-տունը:

Օսկանի կինը բռնել էր նորահարսի աջ թևը, ձախ թևն էլ՝ Սոնան. Թորոյի հետ էր իր կինը, ուրիշները և վերջապես իր հյուրը՝ հարուստ կողբեցին: Հարսին տարան ներս հյուրասիրելու համար. Արտաշը (փեսան) ընդառաջ եկավ աների (Թորոյի) և զոքանչի ձեռքերը համբուրեց. սրանք էլ նրա երեսը: Նստեցին սեղանի, ուր կային և Օսկանի աներանք, Ռես Յոսեն, Չավուշը և ուրիշ պատվավոր բագրանցիները: Հաստափոր Թորոն ծանր ու մեծ նստեց, մեկ ոտքը ձեռքով բռնելով դրեց մյուսի վրա՝ կողբեցուն աջ կողքին տեղ տալով:

Օսկանը բաժակները լցրեց, խմեց Թորոյի, նրա ընտանիքի և իրենց անխախտ բարեկամության կենացը. Թորոն կենացները դարձրեց պատշաճ բառերով:

Զուռնան պարի եղանակ էր նվագում, հասած ու մանր տղա-աղջիկ կլոր պար էին բռնել, ինքնաբեր. պաշտոնական պարը տակավին չէր բացվել: Քավոր Ուստա Կարոն պիտի բանար պարը նորահարսի համար, իսկ սա ուշանում էր. Ուստան, օգտվելով առիթից՝ անընդհատ օղի էր լցնում Թորոյի բաժակը:

— Խմե՛, խմե՛, խնամի Թորո, մեռնել կա, էսօրվա օրը որ չխմենք, բա ե՞րբ խմենք պիտի. էս օրը քեզ համար էլ և մեզ համար էլ միհատիկ օր է, էլ ձեռք չի ընկնի:

— Էդպես է, քավոր Կարո,— Թորոն էր խոսողը,— աստված բոլորիդ էլ բարի տա, աստված լուսավորե ձեր անցավորաց հոգին,— ու դառնալով առաջ կողբեցուն, հետո բոլորին,— Մինա աղա, կենացդ թող ընկի, ամենքիդ կենացը:

Եվ խմում էր, ու նորից լցվում էր բաժակը:

— Պարոն Մինա աղա, անուշ արեք,— խնդրում էր Օսկանը:

Հարսը դուրս բերին. Օսկանը մոտեցավ պաչեց հարսի ճակատը և ոսկի մանյակը ձգեց վիզը. հարսը խոնարհ

պաչեց կեսարի ձեռքը: Հանդիսատեսների մեջ շշուկ ընկավ, լարեցին հայացքները. հիմա հարսը պիտի պարեր. նվագում էին «Մանուշակ»-ի պարը: Ուստա Կարոն, իբրև քավոր, թևերը պարզեց և սկսեց մի վայրկյան պարել, ապա հարսի ձեռքից բռնեց, բերնց ասպարեզ և բաց թողեց մենակ. հարսն սկզբում վախվխելով, հետո սիրտ առնելով, դաշն ձևերով պարեց. ամենքը խրախուսիչ ձայներ էին ձգում ու ծափ տալիս:

Օսկանը շաբաշ տվեց մի մանեթ, որ դավուլչին բարձրաձայն հայտարարեց:

— Էդպես է բանը, խնամի Թորո, վարդդ քաղինք, փուշը կրակին տվինք. առ խմե, սիրտդ հովնա:

— Արժեցող տեղ տվինք, չենք խաբվել,— ասաց Թորոն բաժակը դատարկելով:

— Արտաշիս պարի հանել, Արտաշի՛ս,— գոչեց Օսկանը, և Ուստան իսկույն Արտաշին գտավ, հանեց ժողովրդի միջից և քաշեց ձգեց հարսի առջևը. նորաթխաան պարելով դառնում էր իր հարսի շուրջը:

Թորոն խոպոտ ձայնով ասաց.

— Արտա՛շ ջան, շատ ապրիս, քաղցր պառավիս ձագուկիս հետ, ծլիք, ծաղկիք, ճուղեր տաք, տեր աստված քեզ փառք,— և քսակը գրպանից հանելով, գաղտնի բացեց բերանը ու հանեց մի մանեթ շաբաշ, որ դավուլչին նորից բարձրաձայն հոչակեց. շաբաշի հերթը եկավ քավորին, որ նվիրեց երկու ռուբլի, դավուլչին ավելի բարձր ձայնով հայտարարեց շաբաշը. կողբեցին նվիրեց մի ռուբլի:

Նորահարսի պարը վերջացավ: Հարսը կարմրած եկավ կարգով համբուրեց հոր, կեսարի, քավորի և մյուսների ձեռքերը, և բարև բռնած կանգնեց կեսուրի մոտ:

Պարի եղանակը փոխեցին մի պարզ տեսակի, և հերթով մեծերը պիտի ելնեին: Թորոյին հանեցին պարի, որ մի պահ օրորվեց, գլորվեց և հևալով եկավ հասավ իր տեղը — ընդհանուրի զվարթ ծափերի տակ. հետո Օսկանը պարեց, հետո Թորոյի և Օսկանի կիները, որոնք իրենց հարսնությունը միտք բերելով՝ ջանք էին թափում կոտրտվել-ծեքծեքվել, որ միայն անչար ծիծաղ էր զարթեցնում հյուրերի

և դիտողների երեսին: Այս պարն էլ վերջացավ, սկսվեց երիտասարդների պարը, իսկ սեղանի վրա կերուխում կար, խոսք ու զրույց:

— Քավոր Ուստա Կարո,— բերանը բացեց Թորոն,— ես քեզ շա՜տ եմ սիրում, շնորհքով մարդ ես, ձեռքդ բարի ըլնի, պսակին հաստատ կենաս. գիտե՞ս, էլի, գլորվող քարը հիմքի քար չի ըլնի. տեր աստված, փառքդ շատ:

Ուստան հասկացավ, որ վերջին խոսքն իրեն է ուղղված, բայց չուզեց հասկանալ, որ չվիրավորե Թորոյին, հետը չթշնամացնե. «Աղվես մարդ է, մտածում էր նա, չորս աչք ունի, քնեցնել պետք է, վառեկը ձեռքից խլել»:

— Խնամի Թորո,— դարձավ Ուստան,— խմենք էն մարդու կյանքի համար, որ իր գլխի պատիվը աշխարքի հետ չի փոխե. ի՞նչ ես ասում էս խոսքիս:

— Ընդունակ է, ընդունակ, խմենք...

Ուստան մինչ այդ աչքի ծայրով որոնում էր Սոնային, երբ լսեց Թորոյի ձայնը.

— Մինա աղա, չե՞ս ուզում մի պար գալ, ջահել, կըտրիճ մարդ ես:

Մինան համաձայնեց և Կողքի մի եղանակ ածել տալով սկսեց պարել, բոլորը ծափ էին տալիս. Մինան աչքերը հարավ-հյուսիս ուղղված պարում էր, աջ ձեռքը գլխի վրա բռնած, ուր շողում էին ոսկի մատանիները կարմիր ու կանաչ քարերով, ձախ ձեռքը ոսկե գոտիի վրա, ժամացույցի ոսկեջուր շղթան ծփում էր ատլաս արխալուղի վրա, իսկ նոր կոշիկները ճոճոում էին:

Թորոն ոգևորված, հևալով, փնչալով ծափ էր զարկում ու «կեցցես, կեցցես» մոմոում: Ու դարձավ Օսկանին ու Ուստային.

— Մինա աղան օջախի տղա է. ես վաղուց գիտեմ դրա բունքը. ինքն էլ կտրիճ մարդ է, ձեզնից լավ մարդ չըլնի, անուշ մարդ է, տո՛, մի տեսեք ին՞չ տնկոզ պար է գալում:

Ուստայի սիրտը չկարողացավ տանել այս գովքը:

— Էդման է, խնամի Թորո, հարուստ կաղը լավ պար կխաղա:

— Տո՛, քավոր Կարոյի բանը, ես քեզ ի՞նչ եմ ասում, դու ի՞նչ ես ասում:

— Ես էլ էն եմ ասում, թե կույր հարուստի լույս աչքերը միշտ կգովեն:

Ուստայի այս խոսքերը, որ ակնարկ էին Միհայի շիլ աչքերի վրա, քաղ-քաղ ծիծաղ առաջ բերին սեղանակից-ների մեջ. Թորոն իրենն առավ, տնքաց, ճակատի երակ-ները ցցվեցին, Օսկանը սեղանի տակից կամացուկ Ուստա-յի ոտքը սեղմեց, Ուստան ուշք չդարձրեց:

Թորոն դեմքն ուղղակի մոտեցնելով Ուստայի դեմքին՝ ծանր շեշտով ասաց.

— Կարո, է՛յ Կարո, քավորս որ դու ես, շիտակը կուզես, փողն է բանը, մարդու գինը էնքան է, ինչքան փող ունի. մեկ մանեթ ունիս, մեկ մանեթ արժես, միլիոն մանեթ ունիս, միլիոն արժես, հասկացա՞ր. խելոք խոսքը քանի՞ գոռոշ արժե, տո՛, դու ինձ մի կտոր հաց տուր, քեզ էնպես խելոք բաներ ասեմ, որ եպիսկոպոս մարդն էլ պապանձի... լից խմենք, տղա ես դեռ:

— Է՛յ, Թորո ջան, խելոք ես խոսում, խմենք, իմաստուն խոսք է ասել ասողը, թե՝ ոսկին դիր իշու վրա, ամեն մարդ էլ գլուխ կուտա...

Օսկանը նորից սեղմեց Ուստայի ոտքը այս անգամ ավելի ամուր, Ուստան զգաստացավ և արագ լցրեց, ասելով:

— Խնամի Թորո, դու իմ մեծ ախպերն ես, խոսք է՝ ասինք. ներող եղիր:

Սակայն Թորոյի սիրտը չիջավ. թույն կար դեռ մեջը, պիտի կծեր, որ հանգստանար:

— Քավոր Կարո, ականջիս դիպավ, թե էսօր շրջիկ Կայծակի հետ սեղան եք նստել. լավ քեֆ եք արել. տո՛, արե՛ք, քանի ոուսի գլուխը խառն է, հիմի դարը ձերն է...

— Էդ քո գովված ոուսդ էլ տեսանք...

— Տո՛, հոպոպները (ճապոն-ոուս պատերազմի ժամա-նակն էր) ի՞նչ են ոուսի առաջ. գումար ծովը պիտի թափե. ոուսի առջև թուրք ու ինգլիզ, ֆրանկ ու լամսա, ոնցոր հարդի դեզ, փչե՝ էրանի կուտա. հետո ախպերս որ դուն ես, ասա-ծի պես ծոծրակս քերեմ, տեղը կբերեմ. էդ ձի խաղցնող-

ները մկի ծակին էրնեկ պիտի տաս... Եվ բաժակը տարավ բերնին,— խնամի Օսկան, կենացդ. թող ըլնի ամենքիդ կենացը:

Ուստան շրթունքները ծամում էր, ուզում էր այնպես ձևով պատասխաներ Թորոյին, որ կռիվ չծագեր, պարհրավերքը չփչանար, կշռում էր իր ասելիքը, երբ Օսկանը բոթեց նրա կողքը խորհրդավոր կերպով: Ուստան նայեց պարին, ի՞նչ տեսավ. հավատա՛ աչքերին, Մինա աղաս Սոնային պարի է խնդրում: Ուստան աչքերը նախանձի կրակով լցված, անթարթ նայեց Սոնային, Սոնան էլ՝ Ուստային, մի երկու վայրկյան Սոնայի սև աչքերի մեջ մի փայլուն ժպիտ խաղաց Ուստայի հանդեպ, իսկ նուրբ շրթների վրա մի բարակ ծաղր Մինայի հանդեպ: Սոնայի սիրտը իր դեմքի վրա լեզու էր առել. Ուստան հասկացավ այդ քաղցրիկ լեզուն և բոլորովին հանգստացավ ու, իրեն չմատնելու համար, դարձավ Թորոյին ու հանելով գրպանից ծխատուփը, պատրաստի սիգարեթներ հրամցրեց Թորոյին ու Օսկանին և ծխելով անխոով, անայլայլ դիտում էր: Սոնան նայեց կեսարին, Թորոն գլխով համաձայնություն տվավ, և Սոնան պատրաստվեց պարել: Կողքեցին երկու ռուբլի շաբաշ տվեց և ինքն էլ մի երկու շրջան արավ նրա բոլորքը, ապա կանգնեց մոտիկը, ծափ տվեց մի պահ, հետո լուռ, բերանբաց նայում էր:

Սոնան պարում էր «Նուռնուֆարի» կոչված պարը:

«Ո՞ւր է սովորել էդ պարը որբևայրի տեղով, կարելի է երազի մեջ, ի՞նչ վարպետ է պարում», խոսում էր Ուստան իր մտքի հետ:

Մատաղ ուռենու պես դողում էր Սոնան ու սրսփում կանգնած տեղը, երկար, նուրբ ձեռքերն օձերի պես գալարվում էին մարմնի շուրջը. աչքերը կիսախուփ էին սիրուն դեմքի վրա:

Բոլոր դիտողները հիացած, ծափ էին տալիս, իսկ Ուստայի սիրտը երջանկության անհունի մեջ էր, որովհետև այդ աննման կնիկը իրենն է, միայն իրենը, սրտով արդեն վաղուց. և սակայն հազիվ է իշխում իր հորդ զգացմունքներին, մազ էր մնում՝ վազեր, բռներ նրան ու տաներ հե-

ոո՜ւ, հեռո՜ւ այն տեղերը, ուր ո՛չ իր, և ո՛չ էլ մի ուրիշի քարավանը տակավին ոտք չէր դիպցրել: Բայց իր բոլոր ուստությունը թափեց և զսպեց իրեն, ու կծու հեգնանքով նայեց կողքեցուն, որի աչքերը կոպերից պոռթկած ավելի էին ծոմովել. «Տո՛, իշոտ, դու գիտես, թե Սոնան քեզ համար է պարում, խելքիդ քշա՛ արա», և մտքի մեջ դարձավ Սոնային՝ «Ինձ համար ունեցած սրտի սերը երեսի վրա վարդ է դառել. քո թուփ ու տերևիդ մեռնիմ, Սոնա ջան», խոսեց իրեն հետ Ուստան և մի սիգարեթ նորից վառեց, ծուխը ածիագ ծխելով, իբրև թե Սոնայի բուրյան շունչը լիներ:

Պարը վերջացավ, ծափերն ու հիացական կոչերը դեռ շարունակվում էին. Միհան եկավ սեղանին, Թորոն հարսին (Սոնան նրա այրի հարսն էր) մոտը կանչեց, ճակատը պաչեց, հարսն էլ նրա ձեռքը, ապա Օսկանի ձեռքը մոտեցավ Ուստայի ձեռքին, Ուստան չթողեց, ապա կանգնեց նրա առջևը: Ուստան անլսելի «ա՜խ»-ով բերնիցը ծուխ հանեց, իսկ Թորոն օրհնեց. «Ապրես, հարս, դու իմ աճգին զավակն ես, իմ սրտիս ցավը. ես քեզնից գանգատ չունիմ, բարի հիշատակ ես, մեր գինավար սուրբ Գևորգը քեզ պահապան ըլնի, ապրե՛ս, գնա՛ աղջիկս...»:

Սկսվեց կլոր մեծ պարը, որ գրեթե բոլոր հյուրերին մեջն առավ: Ուստա Կարոն, որ մշտական պարքաշն էր, պարագլուխը, ելավ, փափախն ուղղեց, կարմիր մեծ թաշկինակն առավ աջ ձեռքը, ձախ ձեռքը տվեց սանամեր Լորիկին և թաշկինակը ճոճելով քաշ տվեց իր ետևից պարի շղթան, ուր ծաղկավուն, երփներանգ զգեստներ հագած հարս-աղջիկ, եռուն կտրիճ տղերք, օղակ-օղակ, իրար ձեռք բռնած՝ կամարվելով հասնում էին մինչև պարագլուխը, մի երկու քայլ հեռու. դավուլ-զուռնան պարի մեջն էր, երեսը միշտ ուղղած դեպի պարաշարքը. հաճախ նրա հետ ընթանալով, հավասար քայլով:

Քանի գնաց պարն այնքան մեծացավ, որ տան առջևի ողջ բացատանը բռնեց. ճնչում էր զուռնան ու դավուլը թնդում, ծուխ-ծուխ գալարվում էր պարը:

Ուստաև երգեց, և ողջ խումբը, բոլորը կրկնեցին նրա երգած տողերը.

Դե՛ռ, սիրում կաքպով, բռնե պարը բոլորի,
Մեր թշնամին պարի հետքում մոլորի:

Չպարող հյուրերը, ծերերը, պառավները և կողմնակի հանդիսատեսները «ա՛յ, ապրե՛ք, ապրե՛ք» գոչելով ոգևորում էին պարը: Սոնան դեռ պարի մեջ չէր: Նա դիտմամբ նստել էր կեսուրի մոտ, լուռ դիտում էր, ցույց տալու համար, թե սիրտ չունի ուրախանալու... Ուստան երբեմն-երբեմն նայում էր Սոնային, որի աչքերից ու ողջ մարմնից հրեղեն մի գետ էր խուժում Ուստայի հոգուց ներս, և Ուստան կրակված ոտքը զարկում էր տափին և սկսում էր մեկը մյուսից հետո նոր-նոր պարեր՝ «Հնաբրբանը», «Խնկի ծառը», «Վերվերին», «Աշխենի պարը». բոլոր այս պարերը խիստ զվարթ անցան: խումբը երախտագետ, ոգևորված գոչեց.

Կլոր պա՛ր, կլոր պա՛ր,
Ուստան գլխին ոսկե ծառ:

Կեսուրը, Թորոյի կինը, հանկարծ դարձավ հարսին.

— Աղջի Սոնա, գնա՛ դուն էլ մեջ մտիր, ի՞նչ անենք, գիտեմ, մոռանալու բան չէ, է՛հ աղջիկս, աշխարքի կարգը էս է:

Սոնան դրան էր սպասում, շտապ քայլերով մոտեցավ և բռնեց Լորիկի ձեռքը, ամաչեց և սիրտ չարեց մտնել նրա և Ուստայի միջև. վառ ու վարար մի զգացումով լցվեց ու լուսացավ Կարոյի հոգին ու ողջ աշխարհը, երբ այնքան մոտիկ տեսավ իր սրտի սիրածին. և ավելի ու ավելի մեծ թափով ցնցեց իրեն ու իրեն հետ էլ ողջ պարաշղթան, ոտքը զարկեց գետին, թաշկինակը փաթաթեց թևին, ապա արձակեց ու գլխի վրա բարձր ծածանելով, երգեց բոլոր իր ավյունով.

Նշի ծառիկ նուշ կըլնի,
Պաչ մի տաս, անո՛ւշ կըլնի,
Թե պիտի տաս, էսօր տուր,
Թե չէ էգուց ո՛ւշ կըլնի:

Խումբը խինդով ու ծիծաղով կրկնեց երգը:

Թորոն ալեխառն մեծ մորուքն ափի մեջ առած, աչքերը ճակատի տակից չորսել էր Սոնայի և մանավանդ Կարոյի վրա, նախազգական մի կասկածանքով:

Պարը շարունակվում է նորանոր ձևերով, ավելի գինովցած, ավելի ինքնամոռաց: Մեկ էլ Ուստան նկատեց, որ Թորոն մորուքն ափի մեջ, աչքերը կուլ գնացած նիրհում է,— վայրկենի մեջ Լորիկին հասկացրեց, որ պարից հոգնության պատրվակով դուրս գա, և առավ Սոնայի ձեռքը իր բոցավառ ափի մեջ, իրապես համոզվեց, որ ձեռքերի այս միացումը պայծառ նշանն է իր այն խորհրդի, որ տերտերը եկեղեցում աշխարհի առջև սուրբ պսակով պիտի հաստատե միացնելով երկու իրար սիրող սրտեր: Մի պահ կանգնեց, սրբեց ճակատը, դավուլչի Ջուրաբին կանչելով մի երեք ռուբլիանոց կպցրեց նրա ճակատից և «Լաչիմ-նանա» պարերգը նվագել պատվիրեց, ավելացնելով, որ ինչքան հնարք ու շնորհք ունին, թափեն: Դավուլչին «Ուստա Կարոն շե՛ն մնա, երեք կանաչ մանեթ շաբաշ» գոռալով իր ընկեր զուռնաչիների հետ իրենց բոլոր վարպետությունը սպաս դրին. աչքերը խուփ, ինքնամփոփ նվագում էին զուռնաչիները, այտերը պայթելու չափ ուռցրած, և դավուլչու հետ օրորվելով հետևում էին պարբաշին:

Ուստան փափախը շուռ տված ծոծրակի վրա, բարձր ձայնեց՝ «Լաչիմ-նանա», և ողջ խումբը միասին, միաբերան երգեցին:

Լաչիմ-նանա, լաչիմ-նանա,
Լաչիմ սարից գլդոր-մլդոր:

Եվ Ուստան գլուխը մեկ դեպի աջ, մեկ դեպի Սոնայի ականջը թեքվելով, նրան միայն լսելի, երգում էր փոխելով պարի խոսքերը, պահելով եղանակը և հանգերը: Ուրիշները դավուլ-զուռնայի և ընդհանուր աղմուկի տակ չէին կարող լսել Ուստայի խորամանկ խաղը, որով նա սրտի ուզածը հայտնում էր Սոնային: Եվ նա ծիծաղերես, հանգերը բարձր ինչելով, թև առած թռչում էր ու դոփում գետինը:

Լաչիմ, լաչիմ, լաչիմ-Ցանա,
Սոնա՛ յար ջան, Սոնա՛, Սոնա՛,
Թուշդ պաչեմ, մարդ չիմանա,
Լաչիմ-Ցանա, լաչիմ-Ցանա:
Ես դուրս կերթամ, դուն էլ արի,
Էնպես արա՝ մարդ չտեսնի,
Լաչիմ-Ցանա, մարդ չիմանա:
Լաչիմ, լաչիմ, լաչիմ-Ցանա:
Մարդ չտեսնի, լաչիմ-Ցանա.
Բամբասանքի բան չունենա,
Զենը տակը, քարը վրան,
Լաչիմ, լաչիմ, լաչիմ-Ցանա...

Այս կատաղի թափով ու թոիչքով պարեց ողջ խումբը քրտնաթոր ու շնչասպառ լուծվեց, խառնիխուռն ցրիվ եկավ:

Այս իրարանցումից օգտվեց սանամեր Լորիկը ու Սոնայի թևից բռնած անհետացան երկուսով:

Ուստան գաղտագողի աչքերը ձգեց Թորոյի վրա. զարթնել էր նա և կողքեցով էր զբաղված: Վայրկյանի մեջ ինքն էլ ծլկվեց հակառակ ուղղությամբ, մտքի մեջ ծիծաղելով. «Ծեր աղվես Թորո, աշխարքն էսպես կուտեն»...

Եվ կամացուկ մտավ Օսկանի աներոջ գոմը: Լորիկը գոմի բակումն էր, նա հսկում էր իբրև լրտես պահակ:

Լորիկը գլխով դուռը ցույց տվեց, Ուստան մտավ գոմը. կիսախավար էր. մի աղոտ լույս միայն ծորում էր երդիկի պատուհանից: Աչք ածեց չորս կողմը — որոնածը չգտավ. միայն մի իշուկ կար մսուրի առջև, և մի կործած քթոց գոմի մեջտեղը:

Աչքերը տրորելով նորից նայեց, և նորից չգտավ փափագածը. շվարած կանգնել էր, երբ հանկարծ Սոնան, որ այուլի ետևը թաքնվել էր, գլուխը երկարացրեց բարձր սիրազեղ ծիծաղեց — ակնթարթի մեջ աղոտ գոմը լցվեց լույս պայծառությամբ, դարձավ Չինմաչինի թագավորի պալատ, այուները ոսկի հագած և խորքի կանգնած ավանակը՝ ծովից ծնած ձիույգ:

— Սոնա ջա՛ն, Սոնա՛ ջան ու ջան,— քնքշորեն ասաց Ուստան ձայնի մեջ ողջ սիրտը դրած, վազելով դեպի սիրած կինը. ձեռքից բռնեց և նայեց երեսին, աչքերին, առանց

կշտանալու.— Սոնա ջան, որեմն էս աշխարհումն էլ մարհից առաջ արքայություն կա. ես հիմա արքայության մեջ եմ, թո՛ղ հոգիս հիմի աստված էատեղ առնի. Սոնա՛ ջան, գիտե՞ս, քեզ ինչքան եմ սիրում, հաշիվ չկա, չափ չկա...

Սոնան ժպտալով լսում էր, Ուստան գորովով գրկեց նրա մեջքից, ինքը նստեց բթոցի վրա, ոտքեց նրան էլ նստեցնել ծնկների վրա, Սոնան դիմադրեց. Ուստայի ձեռքերը թուլացան. նա թեև շատ անգամ երաշխիքներ էր ստացել Սոնայի փոխադարձ սիրո մասին, բայց և ամեն անգամ նրա բմայքների հանդեպ դողում էր:

— Սոնա՛ ջան, հոգիս, ճերիք կրակես ինձ, աչքիս արևը, սրտիս բլբուլը, կյանքիս աստղն ու ծաղիկը, իմ վիզս քո առաջ մազից բարակ է, էդ անուշ ճկութովդ էլ կրնաս կտրե, անունիդ մեռնիմ, էդ անուշ անունդ որ ասում եմ, բերանս մեղրով լցվում է. ասա՛, դու սեր ունի՞ս խեղճ Կարոյի համար...

Ուստա Կարոն երբեք կյանքի մեջ այնչափ չէր խեղճացել մի կնոջ առջև, բայց սա ուրիշ էր. կրակն առել էր սիրտը և մարելու ճար չկար:

Ուստայի կրակված խոսքերը Սոնայի վրա ազդեցին.

— Թե որ չսիրեի, էատեղ ի՞նչ գործ ունեի...

— Բլբուլ էր խոսողը, լեզուդ ուտեմ, ասա, խոսի, Սոնա ջանս, ծովերի մարջանս:

— Կարո, ինչ որ սիրտս է ասում, լեզուս ինչպե՞ս կըրնա ասել:

— Ջա՛ն, ջա՛ն, սրտիդ մատաղ, գիտեմ որ սրտիդ մեջն եմ, չէ՞ որ դու օր ու գիշեր իմ սրտիս մեջն ես. Սոնա ջան, ճստիր, ոտներիդ մեռնիմ, ինչո՞ւ ես կաևգնել:

Եվ նստեցրեց ծնկների վրա, Սոնան չմերժեց. երբ Ուստան զգաց Սոնայի քաղցր ծանրությունը իր ծնկների վրա, այն իմացավ, թե աշխարհը բոլոր գանձերով իր գոգը թափեցին, և երբ Սոնայի մազերի ծայրերը դիպան երեսին և Սոնայի անուշ շունչը թափանցեց Ուստայի հոգուց ներս, մի անանուն երանություն պռունկ պռունկ լցրեց նրա ամբողջությունը... և մի թափով ճանկարծուստ համբուրեց Սոնայի աչքերը. Սոնան ձեռքով աչքերը ծածկեց, Ուստան

համբուրեց շրթները. Սոնան այս անգամ երկու ձեռքով ծածկեց դեմքը:

— Վա՛յ, Սոնա ջան, աշխարհը գլխիս մի մթնեցրու, էդ լույս պատկերդ որ տեսնում եմ, ամպ ըլնի թե գիշեր, սիրտս ու բոլորքս արևով լցվում է:

Այս խոսքի վրա Սոնան լիահնչուն ծիծաղեց, գոմի մեջ արծաթ զանգի մի քաղցրություն փռելով: Եվ բազուկը հետելով Ուստայի վզովը կախած համբուրեց նրա բերանը... ինչպես որ գինու գավը լիուլի լցվում է կարմիր գինով ու պռունկներից թափվում, այնպես էլ Ուստան ինքնիրենից ելավ ու հորդեց.

— Վա՛յ, ես մեռա, մեկ էլ մի հատ էլ,— և չսպասելով պատասխանի, ինքը փակչեց Սոնայի շրթներին, երկա՛ր, երկա՛ր ծծեց նրա շրթունքների անուշ կրակը. երկուսով էլ բռնկվել էին համբյուրներից, երկուսի երեսներն ու աչքերը բոցին էին տալիս:

— Ա՛խ, էս ժամանակը չանցներ, ոտքը կոտրեր, մնար, հավիտյան ըլներ. հավիտյան մնայինք էստեղ, իրար գրկած, երես-երեսի,— ասաց Ուստան խելակորույս:

Սոնան թե — Կարո, երթամ, թող, երթամ:

— Չէ՛, չէ՛, հոգիս, բան ունեմ քեզ ասելիք,— զգաստացած ասաց Ուստան,— գիտե՞ս, ուխտից մի-երկու շաբաթ հետո Արտաշի հարսանիքն է, հետո... մերը, հոգի ջան,— և զննող նայեց նրա աչքերի մեջ:

— Կարո, գիտե՞ս կողքեցու շիլ աչքը վրաս է, կեսուրս ասաց, որ ինձ լավ պահեմ. հասկացա՞ր. թաղեմ կողքեցու գլուխը, ես չէի ուզում նրա խնդիրքի վրա պար գալ. կեսարս հրամայեց. ես էլ քո սիրու համար պարեցի, էնպես գիտեի թե՝ մենակ դու ես էնտեղ ու քո առջևդ եմ պարում. տեսա՞ր, ինչ սիրուն պարեցի, Կարո, գույնդ ինչո՞ւ գցեցիր, վախնաս թե նրան առնեմ, ո՞վ է նրա աչքերին կարոտ, աչքի մեկը Սիս է, մեկը Մասիս, վրաս նայելուս, չէի իմանում, թե ո՞ւմ էր նայում:

Ուստան լսում էր ու քանի գնում եփում, իրան ուտում էր.

— Է՛դ կողքեցին, գյուլլեն նրա ճակատի մեջ կմխեմ,

քանի գլուխ ունի իմ առջև ոտք երկնցնելու, ինձ Ուստա Կարո են ասում, խնդրեմ՝ ճանչնաս, ես մեղավոր չեմ, թե գլուխ թռնի:

Եվ մտքի մեջ շատ ցավեց, որ ատրճանակը տունն էր թողել, բայց մի կողմից էլ գոհ էր հետը չբերելուն համար. փորձանքի մեջ պիտի ընկներ, արյուն թափվեր, փախըստական դառնար, ամեն բան տուրը տար:

— Ամա՛ն, Կարո ջան, ես վախենում եմ, ի՞նչ ես խոսում, ինչո՞ւ էդպես աճոխկ բաներ...

— Սիրտս ելած էր, ասի. բանը քեզնից է կախված, կողբեցին ո՞ւմ շունն է, Թորոն ի՛նչ իրավունք ունի վրադ, դու որ ինձ ուզենաս, ես հո մեռած չե՞մ, ծով ըլնի առջևս կճեղքեմ, սար ըլնի՝ կծակեմ...

— Կարո, մի տակն ու վրա ըլնիր, կեսարս շա՞տ բան կուզե, լսողն ո՞վ է, կողբեցին ինձ ոսկու մեջ թաթխե, նրա անունը բերանս առնողը չեմ. հազար թուման պարտքըս ըլնի, մարդամիջի մարդս ըլնի... Կարո, դու ինձ չես ճանաչում, թե աշխարհաճոցում ըլնի ու հազար կտոր դառնամ, էլի ամեն կտորս քեզ համար պիտի բաժին հասցնեմ...

Ուստան լարված լսում էր, շրթները դողում էին: Սոնան կամացուկ քաշեց նրա բեղից.

— Ես ասել եմ քեզ, էլի կասեմ, մեռնիմ՝ քոնն եմ, ապրիմ՝ քոնն եմ, քոնն եմ, քառասուն կողբեցի քո մեկ մազի հետ չեմ փոխի, հասկացա՞ր,— և շրթները երկնցրեց համբույրի համար:

— Կարո, ականջիդ մի բան ասեմ, ծածուկ պահես, քեզ էլ չասես.— և կամացուկ փսփսաց,— երբ որ կեսարիս քովը պապիլոս էիր քաշում, երեսս քո կողմը դարձրի, որ ծուխդ դիպներ ինձ, կարոտս առնեի քեզնից...

Այս խոստովանանքի վրա՝ Ուստան բազմապատկվեց, հազարապատկվեց:

— Սոնա ջան, Սոնա, հազար անգամ քեզ մատաղ, երբ իմս ըլնիս, ասենք հիմի էլ իմս ու իմս ես, կուզեմ ասել, երբ սուրբ պսակով իմս ըլնիս, քեզ թագավորի կնկա պես պիտի պահեմ, շարան-շարմաղ բմբուլների մեջ, ձեռ-

քըդ տաքից պաղը չպիտի մտնի. կերածդ խորոված կաքավ պիտի ըլնի, խմածդ նոաձ գինի, հագածդ ատլաս ու զար ոսկի, քո գործդ պիտի ըլնի գլխիս վրա արևի պես պտուտ գաս, թև ու թուր ըլնիս ինձ:

Սոնաձ խոսքը կտրեց:

— Կարո ջաձ, ասել է, մի ամսից հետո ես քո...— և չկարողացավ ասել՝ թե քո կինն եմ լինելու, խորհրդավոր ծիծաղեց, կարմրեց ու գլուխը կախեց. ապա ավելացրեց.— գիտե՞ս Կարո, ես վարդի պես եմ, թե որ սիրես, ծոցիդ մեջ հազար թերթերով կբացվիմ, թե որ չսիրես, թուփիդ վրա կթոռնիմ...— և ձորից Ուստայի ականջին փըսփըսաց.— հասկացա՞ր, մեկ խոսք — մեկ աստված:

Ուստայի գիտակցությունը մթնեց, հազիվ մի պահ անց՝ կարողացավ իրեն ձորից գտնել.

— Ա՜խ, Սոնա ջաձ, աստված վկա է, թե որ ինձ հավ-ևրթի պես առնես, զարկես պատին, ցրեխ-ցրեխ անես, ձորից երջանիկ եմ, որ ձեռքիցդ մահ առա:

Եվ Ուստան մղված մի անպարտելի զորությունից՝ ձեռքը մեկնեց Սոնայի ատլաս կապույտ կրծկալին. Սոնաձ չէր թողնում, քաշում էր նրա բեղերից, ետ հրում: Ուստան ճգնում էր քանդել կրծկալը. Սոնաձ պայքարում էր, բայց Ուստան կորցրել էր բոլոր պաղարյունը և դիմադրություն չձանաչող փափագն էր նրա բռնակալ տերը:

— Թո՛ղ տեսնեմ, Սոնա ջաձ, էդ ջուխտակ մարմար պալատներդ տեսնեմ, հոգուս տուրը, թող մի հատ պաչեմ, իմս են, չէ՞...

— Չէ՛, Կարո, չէ՛, հետո, ամոթ է, հետո...

— Թո՛ղ մի պստիկ համտես անեմ, թե չէ կխելոիմ...

— Համտես, համտես, պուտուկը՝ կես...

— Սոնա ջաձ, կյանքս, քոնը մեղրի ծով է, չի պարպի, հոգիս առ, թո՛ղ, թո՛ղ, հարյուր տարի ծարավ եմ, ծարավ եմ...— նա այլևս չէր խոսում, այլ բառերի կտոր-փըշրանքներ էր շշնջում, անկապ, բայց բոլորը միասին մի խորհուրդ ունեին, մի հուր-տենչ:

— Քո սիրուդ համար,— բարակ շշնջաց Սոնաձ, և թուլացան ձեռքն ու կամքը:

Ուստաճ դողդոջուն, բայց բախտավոր մատներով պարանոցի կողմից արձակեց կրծկալը և բաց թողեց, և հուզմունքից շաղված աչքերի առջև փայլեցին ու վառվեցին, ու լեզու առան Սոնայի ստինքները. Ուստաճ գլուխը թաղեց նրանց մեջ և առավ իր քարավանի անցած դաշտերի ու սարերի ծաղիկների ու ծոթորների խելք թոցնող բույրերը. գլուխը մի պահ վերցրեց, նայե՛ց, նայե՛ց ստինքներին, ապա հարյուր տարվա ծարավի պես հարձակվեց և համբուրում էր ու համբուրում, մատներով շոյում էր կուրծքը, վիզն ու մազերը և անուշ զրույց էին անում մատները նրանց հետ, և աչքերից ավելի, և շրթունքներից ավելի մատներն էին, որ տեսնում էին ու համբուրում: Եվ մատները թունդ հարբել էին, ու դողդողում, սարսռում էին մի անկուշտ ծարավից, որ ծայր չուներ: Լուռ էր Սոնան, լուռ էր Կարոն՝ համր ու պապանձ:

Եվ ժամանակի բոլոր ձևերը կանգ առան նրանց համար:

Լորիկը գոմի դուռը ծեծեց. նորից ծեծեց, նորից ավելի ամուր ծեծեց. Սոնան ցնցվեց, և թափով հրեց Ուստային. երազը ցնդվեց, Ուստան դարձավ իրականությանը.

Լորիկը գլուխը կոխեց ներս.

— Հերիք է: Սուրբ պսակի գիշերվա համար է՛լ բաւ թողեք...

Եվ նորից ծածկեց դուռը:

Սոնան ոտքի կանգնեց, կրծկալն ուղղեց, կլոր պստլիկ հայելին հանեց գրպանից. խառնափնթոր էին մազերն ու հագուստը ճմրթված:

— Վա՜յ, հողը գլխիս, էս ի՞նչ հալի եմ...

— Թո՛ղ էս ըլնի միշտ մեր հալը,— ասաց Ուստան, աչքերը տրորելով և վերջին անգամ մնաս բարևի համար համբուրելով Սոնայի երեսն ու աչքերը, թռավ բակը. նույնիսկ Լորիկին առանց մի շնորհակալության խոսք ասելու, ուղղվեց դեպի դուրս, ա՛յնպես հուզված էր, այնպե՛ս շփոթված:

Սանամեր Լորիկը ետևից ասաց.

— Բախտավոր մարդ, ինչո՞ւ չէ, արհեստը ձեռքդ, սրտում հարսը ծոցդ, տերն ես աշխարքի. առջևդ թե՛ մարդ, թե՛ մժեղ մեկ եմ...

Ուստաև ելավ դուրս, մի ակնարկ նետեց աջ ու ձախ. թարմ օդը դիպավ երեսին, զգաստացավ Է՛լ ավելի, հավաքվեց, մի պահ՝ տարած հաջողությունը և վերջին անըսպասելի ապրումները մտքում ամփոփեց ու կշռելով նրանց մեծ արժեքն ու նշանը, լիուլի ինքնաբավությամբ տղորեց բեղերը, քթի տակ մրմնջալով.

— Է՛ս էլ էսման...

ԲՈՒՀԻԿԵՆՑ ԱՄԲԱՐԸ ԵՎ ՂԱՆԴԱՀԱՐԻ ԲԱԶԱՐԸ

Կալերում, ծառերի տակ Ուստաև ընկերներով քեֆ էր անում: Երբ ելավ, «շաբաշ» տալով զուռնաչուն՝ թևերը պարզեց պարելու, զուռնաև այնպե՞ս որոտալից ոգևորված փչեց նրա ականջի տակ, որ Ուստաև ցնցված աչքերը բացեց, նայեց և նորից գոցեց... սակայն, ընկերներն Է՛լ չկային, քեֆն Է՛լ չկար, իսկ զուռնաև կար՝ հնչուն ու զռնչուն: Ո՞ւր էր, որտեղի՞ց էր դա՝ զուռնաև: Ականջը լարեց, ուշով, ավելի ուշադիր: Հասկացավ՝ սա՜յլ էր. խոտաբարձ օրանի սայլեր էին, որ իրար հետևից ճռնչալով ու ծլվլալով հար ու նման Սրապ-Ջուրաբի զուռնաներին, լուսադեմին, անցնում էին իր օթևանի տակով:

— Տո՛, աշխարքի էն գլխեն մինչի օրս՝ էս սելերը սապոնի երես տեսած չունին.— դժկամ քրթմնջաց Ուստաև աչքերը տրորելով.— քու տիրոջն ի՞նչ ըսեմ, քեֆս ավիրեց, թեկուզ երազի միջի, հաշիվը մեկ է...

Արևի ոսկի թելերը շեղ ընկել էին պատուհանից ներս: Երկու աղավնի պարանոցի ծիածանները շողշողացնելով, իրար կտուց էին տալիս պատուհանի գոգում: Ուստաև, սիրտը մանկաև պես ճխալով, ոտի կանգնեց: Անուշ արևը, սիրող աչքերով, նայում էր անուշ աշխարհին, և նորից առօրյաև Ուստայի համար դարձավ հրաշքի ու հեքիաթի պես՝ հմայիչ ու սիրեկաև...

Մի տղա «Շեկո՝ ջան, ծամմե՞ւ-րդ» երգելով, անցավ լուսամուտի տակից: Ուստան ինքնաբերաբար շարունակեց նրա երգը՝ «Կանթեղ ես աչքե՞րդ, մանավանդ աչքե՞րդ», հետն էլ հագնելով բանելու օրվա շորերը:

Նախաճաշին ստիպեց Չավուշին, որ երրորդ բաժակ օղին այսօր անպատճառ խմե:

— Չավուշ ջան, հոգիդ ուտեմ, էսօր շա՜տ ուրախ եմ, էսօր սրտիս մեջը իրեք արև կա, մեկը մեկեն սիրուն, էդոր համար իրեք թասև էլ պտի խմես: Եղածն ինչ է որ՝ մատնոցի չափ ստականներ են, ճնճղուկ ջրելու բաներ են...

— Վարպե՜տ ջան, ուրախութենիդ համար կյանքս էլ կուտամ, մենակ էսօր շատ խմելու ենք, ամբարի հիմքը գցելուն, ճաշի վրան...

— Լա՛վ ըսիր, ես էլ չեմ խմե...

Մինչ Փիլոսը արհեստի գործիքները կհավաքեր, Ուստան կարմիր թաշկինակը կապեց գլխին և իրեն ու ընկերի ծխատուփերը լիքը լցրեց թութունով:

Փողոց ելնելիս, Ուստան հետ նայեց.

— Չավո՛ւշ ջան, հո բան չմոռցա՞նք:

Մի վայրկյան ամփոփվելուց հետո.

— Չէ՛, վարպետ ջան, ամեն բան տեղոք հետներս է,— ասաց Չավուշը:

Բուլիկենց Տեփանոսը նրանց ընդառաջ եկավ: Նա երեսուն տարին անց, կապույտ աչքերով, հաստ ու հաստատուն մի մարդ էր: Խոսում էր «ֆսֆսալով»: Միասին գնացին կառուցվելիք ամբարի տեղը, ուր արդեն փորված էին հիմերը և քարեղեն ատաղձը դիզված: Մինչ այս, մինչ այն, հավաքվեցին Տեփանոսի մոտիկ ազգականները, աներն ու աներձագը, հորեղբայրը, փեսան, որ ականատես լինեին ամբարի հիմնարկին և ապա մասնակցեին հանդիսավոր ճաշկերույթին:

Եկավ և Նազարենց Պոտոս Տացուն, Տեփանոսի քեռին. հիսուն տարեկան կլիներ նա, բարձրահասակ ու պատկառելի, շա՜տ թուխ դեմքով, խոհուն արտահայտությամբ: Աչքերը փոքր, սուր բզի պես ծակող ու թափանցող: Գյուղի ազդեցիկ, առաջին մարդկանցից մեկն էր, հարուստ օջախի

զավակ, ու գրաճանաչ: Ուստա Կարոյի լավ բարեկամն էր, Ուստային սիրող ու պաշտպան-հովանավորող:

Մոտիկ ազգականներից բացի, հավաքվեցին նաև անգործ մարդիկ, պարզապես ժամանցի համար: Արդեն, երբ Ուստան մի տեղ բանի լիներ, իսկույն գլխին կհավաքվեին տունը մնացած պարապ մարդիկ, լսելու Ուստային, զրուցելու և կատակելու նրա հետ և միմյանց հետ: Կուգային ու կնստեին Ուստայի շուրջը. ոմանք «տամա» կխաղային՝ հողի վրա գծած, ոմանք իրենց տրեխի կաշիները քարերին քսելով, «կհասցնեին», ոմանք ձեռներին մի դանակ՝ գոմեշի եղջյուրից շինած կոթով, մեքենայաբար, փայտ կտաշեին, և բոլորն էլ ուշադիր՝ Ուստայի խոսքին ու զրույցին:

Երկու բանվոր կար Ուստայի ձեռքի տակ, որոնք շաղախ ու քար էին կրում: Ուստան, Տեփանոսի ձեռքից բըռնած, թոավ հիմքի խրամատի մեջ. Չավուշը բանվորներով չորս մեծ անկյունաքարերը եզրին մոտեցրեց: Ուստան երեսը խաչակնքեց, Տեփանոսը ցորենի հատիկները շաղ տվեց խրամատի մեջ, սրտում լուռ աղոթելով:

Ապա Ուստայի հետ միասին դրին հիմքի անկյունաքարերը: Ամեն կողմից ծայր տվին բարեմաղթանքները.

— Տեփանոս ջան, բարով-խերով ամբար էղնի, արդար սրտով վայելես...

— Ամբարդ լիքն էղնի. աստված քեզի տա, դուն էլ՝ ուրիշին:

Տեփանոսը խրամատից ելնելով, օդի հրամցրեց բարեկամներին, միատեսակ խոսքով շնորհակալ լինելով մաղթած բարիքներից.

— Տառոսը ձեզի էղնի, դուք էլ ուրախնաք:

Պոտոս Տացուն քրոջ որդուն մի քանի խրատական խոսքեր ասելով, բաժակը տվեց Ուստային:

— Տեփանոս ջան, արաղի թասն ինձի, ամբարիդ բարին՝ քեզի: Էնպես ամբար շինեմ, որ թոռանդ թոռն էլ վայելե, թե՛ քամի խաղա մեջը, թե՛ մուկ չժաժա, քու պատվիդ, ու Էվելի՛ Պոտոս Տացուիս պատվի համար:

— Ուստա ջան, գիտեմ,— ասաց Տեփանոսը,— ձեռքդ բախտով է, շնորհքիդ մեջ անսպառ մնաս:

Սկսվեց եռուն աշխատանքը:

Բանվորները քար ու շաղախ էին բերում, Ուստան շարում էր որմը, Չավուշը լիցքն էր անում: Եռանդով, աշխուժով գործում էր Ուստան՝ մի պահ կլանված աշխատանքով:

Պոտոս Տացուն գնաց, խոսք տալով ճաշին ներկա գտնվելու:

— Ուստա՛ ջան, բանըմ ըսա, անկանջ էնենք,— ձայն տվին հավաքվածները:

— Դժվար տեղ եմ, խոսքի մի՛ գցեք ինձի, դուք ըսեք, ես լսեմ.— և գրպանից հանելով ծխատուփը, նետեց հավաքույթի մեջ, ասելով.— Քաշե՛ք, քեֆերո՛ւդ աշեք:

Մեկը ծուխը քիթ ու բերանից հորդաբուխ հանելով, խոսք բաց արեց:

— Կըսեն թե՝ յապպոնները ռուսի թագավորի բուրդը լավըմ գզեր են. քաղաք քաղքի վրա տալով՝ թագավորի զորքը «վա՛յ մերիկ» կանչելով կփախնի. էդ ինչ ածդահա մարդիկ են եղեր յապպոնները...

— Ասպած է ղրկե էդոնց մեր հայի ոխն առնելու համար... Ըպա՞: Էջմիածնի դուռը կկոտրեն, Լուսավորչա աջն ու խաչը տանելու, մեր ժամերու, մեր ուսումնարաններու մյուլքը կառնեն, հիմի թո՛ղ մեկին հազար տան, Լուսավորչա ականջը բռնեց,— ասաց ներկաներից մեկը:

— Էդ ուրտեղե՞ն եկան էդ յապպոնները կամ թե հոպպոնները. էդոնց անունը լսած չունեի ըսկի, ո՞ւր էին մինչի օրս...

Հարց տվեց մեկը և հարցը մնաց օդում, անպատասխան... Ոչ ոք չգիտեր, և Ուստան էլ, որ թերևս կարող էր գիտենալ, ոտով-գլխով զբաղված էր հիմքի որմերը հաստատուն դնելու հոգսով:

— Ուստա՛, Ուստա՛ Կարո, դուն յապպոններու, էդ հոպպոններու հողը չե՞ս եղեր...

— Ե՞ս... տո՛, հոգիս աղբ ու ավլուքի մեջ ո՞ չէի գտեր, որ էդոնց աշխարքն երթայի... Էդոնք՝ թիզ ու կես-գետնի բզեզ, մարդ կկտրեն մարախի պես:

Բանվորի ձեռքից փրթեց ընկավ քարը՝ սրունքը ուժգին

քերծելով. խեղճը բռնեց ոտն ու նստեց. արյուն էր կաթում տաշված մսից...

— Խաճձրձուկ էրեք, խաճձրձո՛ւկ,— ձայն տվին ամեն կողմից:

— Արաղո՛վ, արաղո՛վ,— գոչեց Ուստան,— խաճձրձուկը քրդի բան է, արաղով լվացեք, ես էդպես կենեմ մշտական:

Եվ չդոհանալով միայն խորհրդից, թռավ ելավ խրամից. ինքն իր ձեռքով թրջեց թաշկինակը օղիով, և կապեց վերքին, առաջուց օղիով սրբելով վերքի վրայի հողն ու ցեխը: Բանվորը օղիի պատճառած սուր կսկիծից ծամածռում էր երեսը, հառաչում էր. նույնիսկ արցունքներ երևացին աչքերում:

— Տո տղա, էս թասն էլ խմե, մրմուռը կանցնի, ներսեն էլ կլավնաս: Ես մշտական էդպես կէնեմ, հա՛մ դրսեն, հա՛մ ներսեն...

Կեսօր եղավ:

Տեփանոսը հայտնեց ճաշը պատրաստ լինելը: Այսօր Ուստան՝ բանվորներով, և Տեփանոսի ազգականները հանդիսավոր սեղանի էին կոչված ամբարի հիմնարկի առթիվ:

Ուստան միջօրեի բանթող հայտարարեց:

Սրահում, ստվերի մեջ, սեղան էր պարզած: Խորովածի հոտը բռնել էր արդեն բակի մթնոլորտը: Հյուրերը գրգռված ոռնգներով սեղան նստեցին: Պոտոս Տացուին «հրամցրին» վերի գլուխը. ձախ կողմը՝ Տեփանոսի աներոջը, աջ կողմը՝ Ուստայինն: Մոտիկ ազգականներից բացի, հրավիրված էին և՛ մի-երկու բարեկամ դրացիներ:

Զվարթ, աղմկալից սեղան էր. առատ ուտելիքներով ու խմիչքով՝ վայել Տեփանոսի նման ունևոր գյուղացու անվանն ու կարողությանը:

Տացուն բացեց սեղանը, խմելով Տեփանոսի կենացը, նաև նրա ընտանիքի, և բարեմաղթեց գործերին հաջողություն, ամբարին անսպառելի լիություն:

Կոչնականները ուտում էին ու խոսում, խմում էին ու ծիծաղում, բայց Ուստայի հնչուն ու զվարթ ծիծաղը գլուխանցնում էր բոլոր. խինդ ու ծիծաղից: Իրեն ամենազվարթ

օրերից, իրեն հատուկ բոլոր չափերից գերազանց ուրախ էր այսօր նա, և դեմքը՝ գարնան պայծառ արեգակ:

Տեփանոսի աները, որ ծանր ու մոայլ մարդ էր, նույնքան ծանր ու մոայլ ժպիտով, ասաց Ուստային.

— Ասպած քեզի է՛լ Էվելի ուրախ պահե, Ուստա ջան, քեզի չճանչցողը պտի իմանա, թե Նախճվանու գումար ամբարներու հացը քուկդ է:

— Է՛, Աթո ամի,— վրա բերեց Ուստան,— քանի որ աչքս կուշտ է, աշխարք իմս է: Աթո ամի, դուք որ իրեք ամբար հաց ունիք, տարին քանի՞ հեղ կխնդաք:

Աթոն չկարողացավ պատասխանել. շփոթվեց, մանավանդ որ Ուստայի խոսքի վրա տարափի պես տեղաց ընդհանուր ծիծաղ ու քրքիջ:

Ուստան կամաց շշնջաց կողքը նստած Տեփանոսի հորեղբոր ականջին. «Հարսեղ ջան, ես ամպ-օրը կսիրեմ, ամպ-մարդը չեմ սիրե. խնամիդ ամպ է»:

— Մշտական ուրախ է Ուստես, մենք էլ էդպես հետը կուրախանանք: Դրուստ որ, թե Ուստեն մեր գեղը չեղներ, մենք նավակատիկե-նավակատիկ պտի խնդայինք,— ասաց Տացուն, գինով լիքը թասը խփելով Ուստայի թասին:— Ուստիս ծնած տարին հեչ մարդ չի մեռեր, եոսուն հարսնիք է էղեր, չէ՞, Կարո ջան:

— Պատիկըմ սխալվար, Տացու, քառասուն հարսնիք է էղեր, մեկ էլ օխթը տարվա գոթի պառավ՛մ է հայր Աբրահամու գոգն ընկեր.— հնչուն ծիծաղով հաստատեց Ուստան.— մեկ էլ որ, ուրիշները Աթո ամուս պես, ծնվելուս լաց են էղեր, ես խնդացեր եմ... Էն օրվանեն էդ ծիծաղն երեսիս մնացեր է... հպա՞, Աթո ամիս որ դուն ես:

Լռություն իջավ. կոչնականներն եռանդով, առանց հագենալու, ուտում էին, ծնոտները «չփչփոցով» գործի դրած:

Սակայն Ուստան մարդկանց մոտ լռելը անվայել, մի տեսակ վիրավորական բան էր համարում. պիտի խոսեր նրանց պատվելու համար, եթե, հակառակ իր կամքին, ուրիշը խոսեր, վատամարդ կդառնար նրա աչքին, և պիտի աշխատեր խոսքի մարգից նրան դուրս նետել:

Եվ գինու գավաթը լցնելով դարձավ Տեփանոսին.

— Տեփանոս ջան, ամբարդ ուրախ սրտով վայելես, ուրախությունո՜վ. բանը ուրախությունն է. ուրիշ մարդու չհավատաս, ինձի լսե, ուրախ էղնելու մեջն է խելքն ու հնճարքը մարդու: Աստծու շնորհը ում վրան է որ, է՛ն ուրախ սիրտ կունենա. ապրելու համը ուրախութենի մեջն է, դուրսը բան չկա... Խոսքս թագավորցնելու համար, կեցե՛ք, ձեզի գլխես անցած բանըմ պատմեմ... Շատ իմաստուն մարդիկ եմ տեսե ճամփեքիս վրան, քարվանիս վրան ու քարվանսարեքի մեջ. մեկ իմաստուն մարդու ըսկի չեմ մոոցե. ամեն օր ողորմիս կուտամ, պատկերն աչքիս առաջն է, ձենն՝ ակընջիս մեջ:

Ես Իրանա հողն էի. Իրա՜ն, տունդ չքանդվի, ինքը մեկ անուն, ճամփեքն ու քաղաքները՝ հազար: Թավրիզեն իրեք օր հետու, գարնան գլխուն մեկ անծեր դուրանի մեջ մե քարվանարի մեջ բանդ եղեր մնացել էինք, էնոր համար, որ ջրերը ելել, կարմունջն ու ճամփան ավերեր, ծածկեր էին: Երկու շաբաթ էդտեղ մնացինք. ես ըսեմ հարուր, դուք ըսեք երկու հարուր մարդ ճամփորդ էր: Շա՜տ մարդ ճանչցա էդտեղ, անունով, հունարքով մարդիկ, երևելի աշըղներ, հեքիաթ ըսողներ: Էդտեղ սովրեցա Մելիք-Շահի, Ասման ու Զեյջանի հեքիաթները. վաղուց էդ օրեն առաջ, ուրիշ տեղեր, խոսքի օրինակ՝ Ղարաբաղ, Բորչալու, Գյանջա, Թուրան. Սպահան, սորվեր էի Քյոռօղլուի, Դահար-Միրզայի, Աշըղ-Ղարիբի, Քյարամ ու Ասլուի, Ռոստում Զալի հեքիաթները...

Խոսքս էս չէր. հապա էն էր, որ էնտեղ մեկ աղքատ մարդ կար. էնպե՜ս ուրախ սրտով ու երեսով, էնպե՜ս ուրախ-զվարթ, որ խնդում-ուրախություն ըսած բանը էդքան կէղներ: Չոր հացը մեկ թաս գինու հետ առաջը կդներ, կուտեր ու կխմեր, իրան համար խաղ կանչելեն, էնպես ուրախ-զվարթ, գիտես թե՝ Շահնշահի սեղան կար առաջը, անմահական գինին ոսկե թասով: Թե որ կխոսեր՝ մարգրիտ կթափվեր բերնեն. էն կըսեր. «Ուրախ ապրի՝ սատանեն մոտ չի գա քեզի. ուրախությունը մարդն է իրան տվողը. քեֆով ապրի, անմեղ մեռի, մնացածը թող աստծուն»: Կըսեր, թե աշխարքը սիրտդ է. հույսդ կտրած մարդ ես՝ աշխարքը սգատուն է, սեր ու խնդում կա սրտիդ մեջ՝ աշխարքը հարսնատուն

է. ուրախ աղքատը՝ «ախ» քաշող թագավորեն առավել է. բանը՝ սիրտն է:

Էդ մարդու իմաստուն խոսքը՝ տեղոցտեղ հաստատվավ. ճամփա ընկանք թե չէ, տեսանք մի քաղաք՝ իրար կպած երկու ախպեր կային, ջուխտ ծնած. կարելի է՞ որ դուք էլ էդպես բան տեսած կամ լսողած էղնիք. հա՛, էդոնցեն մեկը միշտ կուլար, մեկելը միշտ կխնդար. մեկի երեսին ծիծաղ չկար, մեկելի երեսը՝ վարդ ու խնձոր: Երկուսն էլ մեկ և նույն փորն ունեին, կերած-խմածները մեկ էին, և էլ նույնը, մենակ սրտերն էին ջոկ, պատճառը՝ ամեն բանը մարդու սիրտն է, հասկցա՞ք, գլխո՞ւ եք...

— Ի՞նչղ շիտակ խոսքեր են:

— Տո՛... էդ ի՞նչ բան էր:

— Ի՞նչղ էլ միտքդ ես պահեր, Ուստա՛ ջան:

— Էստեղ կենացդ ուզեց, Կարո ջան, ապրի՛ս, ապրի՛ս:

Ամեն կողմից ձայնեցին սեղանակիցները, գովելով ու խրախուսելով Ուստայի խոսքն ու աշխարհատեսությունը:

Ուստան ոգևորված նորից քայլ առավ.

— Էդ պատվական մարդու մասին խոսքս բանալով, միտըս ընկավ Ղանդահարի բազարը իրան քեյֆխանեով: Կեցե՛ք էս փլավը սրբեմ. փորս ցնծա, էդոր մասին էլ պատմեմ:

Ուստայի սովորույթով, մի պատմությունը միշտ մի ուրիշ պատմության դուռ կբանար, և միտը կընկներեին այնպիսի նոր բաներ, որ ինքն էլ կզարմանար, թե ինչպե՞ս եղավ, որտեղի՞ց եկան ու միտն ընկան սրանք. այնպիսի բաներ, որ առաջ մտքում բնավ չկային...

Որտեղից էլ որ եկած լինեին այս պատմությունները, և ի՛նչ կերպ, միևնույն է, քանի որ, ինչպես միշտ, կուրախացային բոլոր գյուղացիները. այսօր էլ այս սեղանակիցները սրտանց ուրախացան, որ Ուստան նոր պատմություն պիտի անե, մանավանդ գիտեին, որ երբ Ուստան ուրախ կլինի և բավականաչափ խմած, ավելի հետաքրքիր և շքեղ դեպքեր ու զրույցներ կպատմե, ավելի հեռավոր ու խորհրդավոր երկրներից, և այնպե՞ս համով և իր տեսածները ուրիշների աչքերի առջև այնպե՞ս վառ ու պատկերավոր

կներկայացնե, որ թերհավատ մարդն անգամ կկարծե, թե ինքն էլ Ուստայի հետ այնտեղերն եղել ու տեսել է նրա հետ միասին՝ նրա տեսածները բոլոր...

Ուստան շտապում էր: Տեփանոսը թախանձեց.

— Ուստա՛ ջան, ծանր կեր, քեզի համար է հաց քաշելս. ի՞նչ կվռազես, էսօր բանթող ենք, էգվան կաշխատիք...

Ուստան յուղոտ շրթներն ու բեղերը սրբելով, սկսեց.

— Էդ մարդն ըսավ, թե ես էնքան ուրախ եմ, ոնց որ Ղանդահարի բազարի քեյֆխանեի մեջն էղնիմ. չեննաթի երազի մեջ: Միտքս դրի՝ Ղանդահար էղնելուս էդ գովական քեյֆխանեն տեսնեմ: Էնպես էղավ, որ մե տարի չանց՝ մեր քարվանը Ղանդահարի ճամփեն բռնեց, լավ միտքս չէ, քանի օր ու գիշեր գնացինք. Թեհրան, Սպահան, Բաղդադ, իջանք Ղանդահարի վրա...

Ղանդահարի բազարը շա՜տ մենծ տեղ կբռնե, կրնամ ըսել մեկ պստիկ աշխարքի չափ. էնտեղ ամեն տեսակի արհեստի ու առուտուրի խանութ կա. մի տեղ երկաթ կծեծեն, մեկէլ տեղ աբրշում կշինեն, էստեղ կտավ կհինեն, էնտեղ կներկեն. մեկ տեղ ոսկե զարդեր կշինեն, հաց կեփեն, մեկէլ տեղ գլուխ կխուզեն, ակռա կքաշեն, հագուստ կկարեն, ձի կնալեն: Էսպես հազար ու մեկ խանութ, հազար տեղ կկանչեն ու կքաշեն առուծախսի. ապրանքները կգովեն, առնողին կխաբեն, ծախողին կխաբեն: Էս փող ու հաշվի, խաբելու և էլ խաբվելու, վեճի ու կռվի տեղն է. պարտքը-տերը փողը կուզե, պարտականը չի տա, ծեծ ու գեշ-գեշ խոսքեր, դիվան-դատաստան. ղը՜ժ-բը՜ժ, գլուխ կդնկա... Բայց էս բազարի վերևը, սանդուղներով կելնես — վերնատունն է, ուրիշ տեսակ տեղ է, դրախտի աշխարք, քեյֆխանե, անունն էդման է: Բազարի վրեն շինած էր քեյֆխանեն էնոր չափ մենծ տեղ, մարմար օթևաններ, անհաշիվ շա՜տ, ամենքը զարդարած, թախտերը դրած, բարձ ու խալի. տեղ-տեղ շուշաբանդ, մեջը շատրվաններ, զով ու զուլալ ջուրը կբխե, առիքներեն պիլլորի ջահեր կախած, ամեն դին ծառ ու ծաղիկ, խասհավքերը կգլուգունան...

Մե տեղ անուշ խորակներ կուտեն, հազար ու մեկ

միրգ ու պտուղ, շարբաթ ու ղայֆա կխմեն. ճարգիլա կբաշեն, տամա, ճարդի կխաղան...

Կերթաս կնստիս շուշաբանդի մեջ, բարձին մեջքդ տված՝ ճարգիլա կքաշես, ղայֆա կխմես կամ շարբաթ, մեկ էլ ջահերը կվառին, խնկածաղիկի անուշ մուխը չորս դին կբըռնե, թառն ու սազը բլբուլի ձենով կխոսին. ներս կմտնեն խաս ու ատլաս հագած, թևերն ու կրծկալները բաց հուրիփերի աղջիկներ, էն որ երազիդ մեջ տեսել ես ու ցորեկը ա՞խ քաշել, կամ էն որ աշխարքի մեջ տեսել ես ու երազիդ մեջն էլ չես կրցեր գրկել... Էդ աննման, անմահական աղջիկները կպարեն ու կերգեն, ու կխաղան հազար նազերով...

Հետև, ջահերը կմարին, թառերը կերթան, ձեն-ձուն կկտրվի, մենակ շատրվանի անուշ շիշփոցը կիմանաս. մենակ աստղերու լուսը շուշաբանդեն մարմանդ կցոլա, կամ թե լուսնակի լուսը: Մեկ էլ էդ պահին, քաղցր քելելով կուգա քու ամենեն ուզած ու ա՞խ քաշած աղջիկդ, քու մտքիդ ու երազիդ միջի աղջիկը, կուգա կմտնի ծոցդ՝ անուշ ծամերը երեսիդ վրան շաղ տալեն, գլուխը սրտիդ վրան դնելով... Ու կմոռնաս, թե աշխարքում քեզնեն ջոկ ուրիշ մարդ կա, թե որ քեզի էլ չի մոռնաս...

Դրա՞խտ... Էսքան կրնա էղնի դրախտը. ամեն բան կուտաս հոգիդ էլ վրան, որ ինչ է՝ էս օրը տարի դառնա, տարին էլ ծեր չունենա...

Մի վայրկյան լռեց Ուստան և հայացքը պտտեցրեց սեղանակիցների վրա: Նրանք Տեփանոսի սրահում նստած՝ հոգով ներկա չէին. նրանց ներքին աչքերը գինով ու երազով թև առած թռել, հեռացել էին Ղանդահարի մարմարյա վերնատունը...

— Պահո՜, պահո՜...

— Ո՞րման բաներ կան ի վեր աշխարքի...

— Արքայութենն էնտեղ է էղեր, տեղյակ չէինք...

Ուշքի եկած ունկնդիրների կրծքերից էր, որ թռչում էին այս հիացական կոչերը:

— Էս էլ ըսեմ որ,— շարունակեց Ուստան,— մարդ կար, որ տարին մեկ հեղ էլ վարեն չի ելեր վերև, առուտուրեն, ագահութենեն աչք չի բացեր՝ ելնելու, վայելելու քեյֆա-

նեն: Մարդ կար, որ տարիներով ցածեն վերև չէր ելեր: Շատ մարդիկ էլ կային, մեկ ոտքը բազարի մեջն էր, մեկէլ ոտքը քեյֆխանեի մեջ. շատերն էլ կային, օրը բոլոր վերնատան մեջն էին, մե-երկու պստիկ պահիկ կիջնեին բազարը, մե-երկու պլիկ կշահեին ու նորեն վերև կելնեին: Կային, որ ըսկի վերևեն վար չէին իջնի:

Մանսուր աղեն, երկու օր մեկ հեղ մտներ-չմտներ վերնատուն. առուծախի վրա էր, քարավանի համար բաներ կառներ ու բերածը կծախեր: Ես էլ՝ մեկ ոտքս վարն էր, մեկէլ ոտքս վերևը. հենց որ առուծախի մեջ գլուխս ջաղաց կդառնար, սիրտս կնեղվեր, ինձի վերև կգցեի: Գիշերները ցորեկ դարձած, ցորեկները՝ գիշեր, էնտեղ ըսկած՝ քեֆ նէնեի:

Լավ կյանք քաշեցի, պակաս տեղ չմնաց...

Ուստան վերջացրեց:

— Կարո,— դիմեց Տացուն, որ սովորույթ ուներ հաճախ միայն անունով կոչելու նրան,— դուն էդքան հեռուները երթալու պետք չունեիր. դուն մշտական էլ վերևն ես, ամեն հեղ էլ, երեկ էլ, հիմի էլ, էգվան էլ, և էլ՝ ամեն տեղ էլ դուն մշտական քեյֆխանեի մեջն ես...

— Չէ՛, Տացու, հոգուդ մեղք մի՛ էրա. ոտքիս մեկը մշտական բազարի մեջն է, վարն ու վերը ես խառներ եմ իրար:

— Ես էլ Տացուի պես կմտքեմ. Ուստես մշտական քեյֆխանեի մեջն է:

— Կարելի է,— հարեց Տացուն,— ժամանակ-ժամանակ բազար իջնես, թե չէ փող ո՞ւր տեղեն պիտի ճարես, որ քեֆ էնես. առանց փող՝ վերնատուն կթողնե՞ն, Ուստա՛...

— Տացու ջան, լա՛վ իմացա, որ հարուստ, փողաշատ մարդիկ առավել քիչ կելնին վերնատուն, քանց աղքատները: Կրնամ ըսել, որ աղքատներու համար է շինված քեյֆխանեն... աղքատը, խեղճը էն տեղ կմոռնա իրան խեղճ օրը, էնտեղ իրան հարուստ ու բախտավոր կտեսնի. մեկ պլիկ ունեցողը էնտեղ իրան գանձատեր կիմանա:

— Ուստա,— հարցրեց Աթոն,— դուն էս բաները լսողաց ես, թե՞ տեսողաց:

— Ըսի ըշտե,— կարճ կապեց Ուստաճ, առանց նրա կողմը նայելու:

Սեղանակիցներից մեկը սեղանի վրայից կանաչեղենի մի ցողուն առնելով, մաքրեց ծխամորճը, ու զարկելով Ուստայի ծնկին, ասաց.

— Էրնեկ աչքերուդ, Ուստա, մեկ ինա գովական թութունդ հա՛ն, խելքս տուն գա:

Ուստայի ծխատուփը դատարկվել էր արդեն. Ձավուշը տվեց իրենը. խնդրողը մի գլանակի չափ ծխախոտ առնելով, տուփը հանձնեց հարևանին, սա էլ իր հարևանին, և այսպես ձեռքե-ձեռք անցնելով, կիսված հասավ կրկին տիրոջ ձեռքը:

— Ուստա՛, Ղանդահարի բազարը մինչի՝ քանի՞ օրվա ճամփա է,— հարցրեց Աթո ամին:

— Ղանդահարի քովեն կես ժամու ճամփա է,— պատասխանեց Ուստաճ ամենայն լրջությամբ:

Աթոն շփոթված նայեց Ուստայի աչքերի մեջ:

— Աթո ամիս, բան կհարցնես, օրենքով հարցրու. ուրտեղե՞ն քանի օրվա ճամփա է:

Աթոյի հարցերը անհաճո էին Ուստային, որով նա հեգնող ու թշնամական էր տրամադրվել դեպի Աթո ամին:

— Հա՛, խոսքի օրինակ, Թավրիզեն,— լրացրեց տված հարցը Աթո ամին:

— Քառասուն օրվա ճամփա է. Իրանա հողերեն կելնես Բաղդադ. էնտեղեն էլ Թուրանա դուրաններով շիտակ՝ Ղանդահար:

— Տո՛, մարդ զարմանք կմնա, էդքան հեռու ի՞նչդ ես գնացե, մեր Շորագյալն ո՞ւր, Ղանդահարն ո՞ւր...

— Ի՞նչ կա զարմանալու. մեր գեղերեն ինչքա՞ն էրթացող ու գալող կա Պետրեբոլ, Վարշավ, Երուսաղեմ, մինչի Ամերիկա, որ գիտցածովս աշխարքի էն ծերն է՝ մեր աշխարքի տակի-դին: Դո՛ւ, Աթո, կալերեն հեռու չես գնացե, գիտես, թե ուրիշներն էլ քեզ պես են,— Ուստային պաշտպանելու մտքով միջամտեց Տացուն և շատերը ձայնակցեցին նրան:

— Պոտո՛ւս Տացու,— դիմեց Ուստաճ իր ազդեցիկ բա-

րեկամին,— գործեն հասկցող մարդու մասին չէ խոսքս. ըսած է, թե՝ վանեցու կաղը Չինմաչին է հասեր. տո՛, ես որ երկու ոտք եմ ունեցեր, քարվանն էլ տակս, ընչի՞ վանեցու կաղեն պակաս տեղ երթըցած չեմ կրնա էղնի, ընչի՞ իմ էրթըցած տեղերը էրթըցած չեմ կրնա էղնի: Վանեցին Չինմաչին է էղեր, ես չեմ էղեր. մենակ էս հերիք է, որ խոսքս շիտակ էղնի. սուտ որ ուզենամ ըսեմ, կըսեմ թե՝ Չինմաչին էլ եմ էղեր, Արաբստան էլ, Հնդստան էլ. թևս բռնող ո՞վ է. ի՞նչ է, խելքի չի պառկի: Ճշմարիտը կուզե՞ք, ես կհավտամ, որ վանեցին իրան կաղ ոտքով հասեր է հասած տեղերը, Չինմաչին ու էլ էվելի հեռու աշխարքներ: Չէ՞ որ մարդը անթև թռչուն է, ճամփեն բռնե՝ կերթա, կերթա մեկ տարի, օխթը տարի, տասը տարի, թե որ չմեռնի, մեկ օր էլ կհասնի հենց դրսի աշխարքներն էլ: Հնութ խոսք է, թե՝ հավին որ թողնես, մինչի Երուսաղեմ կերթա, հպա աքլորն ո՞ւր կերթա: Դե՛ հիմի, Աթո ամի, դուն թև ունիս՝ հետևես հասի...

Ուստան այս խոսքի վրա կանգ առավ, մի գավաթ գինի «կաթեցրեց» ուղղակի քիմքի վրա և նույն վայրկյանին շարունակեց.

— Աթո ամին գիտե, թե ծնկաչոք եմ գնացեր ես...

Աթոն իսկույն վրա բերեց.

— Գիտեմ, որ քարվանով ես գնացե:

— Է՛, պրծանք-գնաց պարտապանաց: Դժարը քարվան ունենալն է, ըսենք՝ դժարը էդ չէ, բանը սեր ունենալն է, աշխարք տեսնելու սերը: Մանկուց ես կուզեի ժուռգալ՝ վերվար, էդին-էնդին... Բախտս բացավ, քարվանի մեջ ընկա, էնդուց հետև, ինչ տունը նստելու չէի, քարվան ունեցող մարդը թևավոր է, մեկ էլ, որ՝ քարվան որ ունենաս, պտի առուտուրի համար երկրե-երկիր, քաղքե-քաղաք էրթաս-գաս, ընչու որ՝ քարվան խոսքը, ինչ որ ըսին ինձի Թավրիզի գիտնական աճամները, բյար-բաս խոսքն է, որ ըսել է՝ բյարի, շահու, օգուտի բան, գործ:

Ուրեմն, էսպես, քարվան ունիս, առվի ջրի պես կընկնես ճամփա, կ'էրթաս ու կ'էրթաս, ու կ'էրթաս օրերով, ամիսներով, էտեղեն, էնտեղեն, էնտեղեն էլ կանցնիս կ'էր-

թաս Է՛լ Էվելի հեռուները. մեկ էլ որ աշխարքները, ներսի ու դրսի, վերի ու վարի, և էլ՝ բոլոր աշխարքները իրար կպած բաներ են, հողը հողին կիպ կպած է. մեկ աշխարքի հողը մըտար, ըսել է, թե՝ մեկ ուրիշ աշխարքի հողին մոտիկցար, էդ ուրիշ աշխարհն էլ, որ մտար, մեզի համար հեռու, իրանց համար դրկից աշխարքին մոտեցար: Էսպիսով, էման կ'էղնի, որ էրթալով, էրթալով հեռուն մոտիկ կդառնա, մոտիկը՝ հեռու:

Ուստան նորից կանգ առավ, մի գլանակ շինեց, որ ծխե, մի փոքր հանգստանա, սակայն չէր կարող հանգստանալ. ապրած-անցած կյանքը, աշխարհաժուռ քարվանը գրգռել էր նրա երևակայությունը, որ օղի-գինու շնորհիվ էլ գերագանց վառվել էր արդեն: Զարթնել էին հոգում գեղեցիկ հուշերն ու տեսիլները ապրած քաղցր օրերի և անցած հեքիաթային ճանապարհների: Ուզում էր պատմել, անհագ պատմել, որ միտքը հանդարտի, երբ սեղանակիցներից մեկը, կարծես, ճեղքեց նրա մտածումը, մի հարց տալով նրան.

— Կզարմանամ, Ուստա՛, դուն ի՞նչդ ես էդ օտարական, այլազգիներու հետ տարիներով ճամփա կտրեր, տարիներով հետներն ապրեր, շա՞տ կզարմանամ...

Տված հարցը փոխում էր խոսքի ընթացքը. Ուստան հանկարծակիի եկած՝ վարանքի մեջ էր. շփոթվեց նրա միտքը: Մի պահ անց՝ իրեն գտավ վերստին ու վստահ պատասխանեց.

— Իսկի էլ մի՛ զարմացի. աշխարքը ինձի ու քեզի պես մարդոցով լիքն է. մեկ անգամ պատահիս մարդուն՝ ճանաչ կ'էղնիս, վրա երկուսին՝ ընկեր, վրա իրեքին՝ ախպեր: Ու էս էլ իմաց, որ մարդն ախպորեն առավել է. ախպերն օրական է, մարդն՝ հավիտենական: Ի՞նչ ըսիր, Պոտո՛ս Տացու:

— Շիտակ է խոսքդ. ախպերն օրական է, մարդն՝ հավիտենական. ողորմածիկ հերս էլ էդպես կսեր,— վկայեց Պոտոս Տացուն:

— Չէ՛, Ուստա՛,— նորից դիմեց նախկին հարցատուն,— կուզեի ըսել, թե՝ դուն հայ-քրիստոնե, քու հավատքին ու օրենքին հաստատ, էնոնք մայմեդական՝ ամամ ու արաբ,

հաշաք ու մսըր, իրանց դինին ամուր, ո՞րման կապրեիք...

— Ըսինք՝ ընկերոջ պես, ախպոր պես, մարդու պես...

— Էդ որման կ'էղնի, չեմ հասկնա:

Ուստան նկատեց, որ բոլոր սեղանակիցները շահագրգռված էին այս հարցի պատասխանով: Մի պահ խորհեց՝ հայացքը ներս դարձրած, ապա ձեռքը փարատելով, որպես թե իրենից մի հոգս դուրս էր նետում:

— Բանը հասկնալու մեջն է. չէ՞ որ աստված մեկ է ամեն ստեղծի համար՝ թե՛ քրիստոնեի, թե՛ մահմեդականի, թե՝ կռապաշտի, և էլ ամեն արարած-աշխարքի. աստված մեկ է, մենք էլ իրան ստեղծները:

— Հա՛:

— Չէ՞ որ աստված ղրկեց իրան օրենքները մարդոց ըսելու համար, իրան մարգարեն ու փեղամբարները:

— Էդ հայտնի բան է:

— Էդման: Քրիստոսին ղրկեց մեր մեջը քարոզելու, Մահմեդին ղրկեց էնոնց մեջը քարոզելու... Քրիստոսը քարոզեր է մեր մեջը մեր լեզվով, Մահմեդը էնոնց մեջը իրանց լեզվով. Քրիստոսը իրան Ավետարանը գրեր է էս կողմեն,— ձեռքը ձախից դեպի աջ շարժելով,— Մահմեդն էլ իրան Ղուրանը ներհակ կողմեն,— նույն շարժումը կըրկնելով աջից դեպի ձախ,— ու էդ գրածները էկեր մեջտեղը, իրար հետ մերվեր են, միավորվեր,— և ձեռքերը աջից ու ձախից վրա բերելով, մատներն հյուսեց իրարու՝ այս պատկերով Ավետարանի և Ղուրանի միաձուլումը ցույց տալ կամենալով, ապա մի պահ լռելով, հարեց.— Երկու մարգարեքն էլ նման-նմին բաներ են քարոզեր՝ աստված սիրել, աստծուց վախնալ, արուն չթափել, չգողնալ, չզրկել, ողորմություն էնել.— լսող-կատարողները կերթան մեր դրախտն ու իրանց ջենաթը, չկատարողները կերթան մերոնց դժոխքըն ու իրենց ջեհենեմը: Էդման, մենք էլ: Ես Ավետարանի ճամփեն բռնած էս դիեն, էնոնք էլ Ղուրանի ճամփեն բռնած հակառակ դիեն՝ կերթայինք ախպոր պես, ընկերոջ պես, հիմի հասկցա՞ք...— Ավարտեց Ուստան իր խոսքը, և քրտինքը ափով ճակատից սրբելով, հաղթական նայեց ունկնդիրներին:

— Ապրիս, Կարո ջան, ապրիս,— արտագին ձայնեց Պետոս Տացուն,— վարդապետներեն լավ քարոզ կուտաս, խելքի պուտուկ ես, խելքի՛ պուտուկ:

Եվ ամենքը գովասանքներով օծեցին Ուստային: Սեղանը վերջացավ: Տեփանոսը այսօր «բանթող» հայտարարեց, ասելով: «Մեկ՝ կուշտ կերածին, մեկ էլ՝ անոթուն պտի չբանեցնես: Էգուց առավոտ կանուխ նորեն գործի ենք»:

Անուշ խոսքերով իրարուց բաժանվելով, Ուստան Չավուշի հետ գնաց տուն: տաքացած գլուխը մի քիչ բարձին դնելու: Այսօր թե՛ շատ էր կերել ու խմել, թե՛ շատ էր խոսել, և վերջապես՝ մինչև ճաշ եռանդուն բանել էր:

ԱԿՈՒԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՉԱՎՈՐ ԱԴԱՄ ԱՄԻՆ

Արդեն մի քանի օր էր՝ Ուստան բանում էր Բուլիկենց ամբարի վրա: Այսօր էլ, աշխատանքի համար, վաղ առավոտյան, ոտը դուրս դրեց թե ոչ, առջևը կտրեց սանահայր Մուկուչը: Մեծոյենց Մուկուչը Ուստայի հին սանահայրերից էր և լավ բարեկամներից մեկը. երկարահասակ, կարճ քթով, վճիտ աչքերով մի մարդ:

— Բարի լո՛ւս, Ուստա ջան,— ասաց Մուկուչը ժպտալով և ձեռքը մեկնելով:

— Ա՜յ լուսը քեզի տեսնողին. էս ո՞ր խաչեն է՝ էսման կանուխ ինձի միտքդ ես բերեր:

— Գիտե՞ս, էլի՛, գլխուդ մատաղ,— աչքերը գետին խոնարհելով շշնջաց Մուկուչը,— երկնային տերը մեզի գթաց. տղա-սանիկ ունիս... ի՞նչ ըսեմ, տղա-զավակի կարոտ էինք, քեզի հայտնի է,— ու աչքերը ձայնի հետ բարձրացնելով,— ում քավոր որ չուզենաս էղնիլ, մերը կաս ու կաս: Էսօր կիրակմուտ է, երեխեն պտի մկրտենք, լավ քեֆ էլ պտի էնենք: Բան ունի՞ս ըսելու...

— Չէ՛, սանահայր ջան, գլուխս վրեն. իմ բանիս անունն ի՞նչ է: Երթանք ներս, արաղըմ խմենք սանիկիս կյանքի

համար, ետև էրթամ քիչմ բանիմ, ետև էլ...— Ուստան ձայնը ծոր տալով, լռեց...

Մուկուչը հասկացավ լռության իմաստը:

— Ուստա ջան, էլ ի՞նչ ետև. բան-ման պետք չէ. հե՛չ բան չառնիս...

— Դուն քեզի համար ես ըսեր: Աստվածամոր քավոր էղա, մեռնելաթն ինձեն ուզեց. էսման է օրենքը՝ հնութ-բնութ:

Ներս մտնելն ու մի-մի բաժակ օղի խմելն ու դուրս գալերն մեկ եղավ:

Ուստան գնաց «բանտեղը»: Ճաշից հետո էլ, մինչև արևի թեքումը աշխատեց, ապա գործը հանձնելով Չավուշին, ինքը շտապեց մկրտության համար գնումներ անելու: Ուղղվեց Պետոյենց Մանուկի խանութը: Երկու գյուղացի մոտեցան նրան, մեկը մի-երկու ոտ հետու մնաց, մյուսը, գտակը հանելով, ասաց.

— Ուստա՛ ջան, ներո՛ղ էղիր, ո՞ւր էսման վռազ. քովդ կուգայի:

— Ի՞նչ կար, Սողոմոն,— քաղցր ձայնով հարցրեց Ուստան:

— Հե՛չ ի՞նչ, Ուստա ջան, քիչըմ փող էր պետքս, հարկը կուզեն,— ձայնը փորը ձգելով, ասաց Սողոմոնը.— ո՞ւր էրթայի. դո՛ւ գիտես, քեզենեն ջոկ մարդ չունիմ: Քու միրտն էլ հայտնի է աշխարքին. որ ձեռդ էղնի, չէ չկա:

— Ինչքա՞ն է պետք. շա՞տ չըսես:

— Տասը մանեթ, գլխուդ մատաղ:

— Հիմի քովս չկա, գնա Չավուշեն առ:

Եվ սև հատիկներից շարած «թազքեյը» տվեց նրան, իբրև վկայություն Չավուշին ներկայացնելու՝ դրամն առնելու համար:

— Շա՛տ շնորհակալ եմ, Ուստա ջան, ասպած սրտովդ քեզի տա: Հիմի պարտքս էղավ, առաջվար հետը, քսանըհինգ մանեթ. կալոցին կթափեմ:

— Ես չիտեմ, Չավուշը գիտե. իմ միտքս չի մնա էդ բաները. իմս էն է, որ աստված ինձի տա, ես էլ ձեզի:

Եվ շարունակեց իր ընթացքը:

— Տեսա՞ր մարդ,— Սողոմոնը դարձավ ընկերոջը,— մե

խոսքս երկուս չէրավ: Ըստեղ է ըսած, թե ծառ կա, տակը մեկ ոչխար չի կրնա ծվարի, ծառ էլ կա, տակը մե հոտ ոչխար կծվարի: Հատը չկա, հա՞տը...

— Ես էնոր ևո՞ր գիտեմ. ափսոս չէ՞ էնոր ուրիշի հետ մե կշեռքի դնենք: Էդման բարի մարդ քիչ կա էս ժամանակներս:

Ուստան գնեց մեռոնլաթը և մի թեթև շալ էլ սանամոր համար: Գնումը անութի տակ դրած, խանութից ելնելիս, հանդիպեց Ղուկաս աղային: Շեկ մորուք ուներ Ուստայի թշնամին, երկայն բեղերով. կանաչավուն աչքեր, հաստ ու կարճ ոտքեր, մեծ, հսկա իրանով. լայն երես ուներ՝ խոշոր ներքին ծնոտով. քիթը երեսի վրա չէր երևում:

Նրանց հայացքները մի վայրկյան դիպան իրար և կայծակեցին սև և կանաչ բոցերով: Կովի պատրաստ խոյերի ձև առան նրանք: Ուստան խոժոռեց ճակատը, Ղուկասը սեղմեց ծնոտները... և իրար կողքից անցան, բթերի տակ մրթմրթալով.

— Օխթը տարվա անոթի գիլուն պտի տամ քեզի, աղցան էնե,— զայրացած սրտում Ուստան էր խոսողը:

— Պնչիդ մուխը և էնպես Սմրղանդ հասցնեմ, անուս մտքեդ չհանես...— Ղուկասն էր զայրացած երդվողը:

Ուստան հասավ տուն, լվացվեց, հագավ տոնական զգեստները և գնաց սանահորանց տունը:

Եկեղեցու երեկոյան զանգերը հնչում էին արդեն: Սանահայր Մուկուչը, գլխաբաց, դիմավորեց նրան, շնորհակալությամբ ձեռքից առնելով բերած նվերները: Ներսի տնից տատմայր Զմրուխտը, «դայեկ անան», բերեց խանձարուրի մեջ պարուրած նորածին երեխային, և քավոր Ուստայի հետ ուղղվեցին եկեղեցի, շրջապատված դրացի և ազգական կանանցով, որոնց մեկը տանում էր սափորով տաք ջուրը ավազանի համար:

Մանր տղա-աղջիկների մի խումբ նրանց հետևն ու առջևն ընկած՝ զվարթ աղմուկով ընկերակցում էին այս թափորին:

Ծեսի կատարումից հետո, ծանր ու հանդիսավոր քայլերով եկեղեցուց ելավ Ուստան՝ խանձարուրը տարածած

բազուկների վրա, ափերի մեջ երկու վառվող մոմեր: Նրա աջ ու ձախ կողմերը մկրտող քահանա տեր-Մաթոսն էր, ոսկեթել շուրջառ հագած, և տիրացու Հովակը: Ամենքը գլխաբաց էին:

Հանդիպողները պատկառանքով ուղի էին տալիս թափորին, կանգնում էին՝ երեսները խաչակնքում. պառավ կանայք մոտենում էին համբուրում երեխայի մեռոնած ճակատը:

Մաթեոս քահանան, «Ակոռցի տեր-Մաթոս» հորջորջմամբ, մի խորին ծերունի էր, մեջքը գետնահասակ, մորուքը հինավուրց ճերմակությունից դեղնած. գորշ դեմքը բազմաթիվ կնճիռներով թնջկած, սակայն, հակառակ այս առաջացած տարիքին, տակավին կայտառ էր իր շարժումների մեջ և ձայնը՝ հնչեղ:

Տիրացու Հովակիմը մոտ 32—33 տարեկան մարդ էր, միջահասակ, թիկնեղ. մեծ գլուխը սև-երկայն մազերով, խնամքով սանրած, թավ հոնքեր ուներ՝ ծայրերն իրար միացած և իջած քթի վրա բավական տեղ: Սրճագույն խոշոր աչքեր՝ լուրջ ու խաղաղ հայացքով: Կարճ վիզը ծածկված էր երկայն մորուքով. աջ այտի վրա մի մեծ մազոտ ծին ուներ: Շարժումները դանդաղ էին, ձևերը մտածված. ամեն մի բառը կշռելով ասող ու կշռելով ընդունող, և մեծ համբոյում ներշնչող իր խոսքին:

Խոսելիս և խորհելիս անընդհատ խաղում էր մորուքի հետ: Քահանացու էր, միջավայրին պահանջած չափից բարձր կրթությամբ. սովորել էր Շիրակի Հառիճո վանքի դպրոցում, ապա երկու տարի Էջմիածնում մի գիտնական վարդապետի մոտ ձրի սպասավոր էր եղել՝ գրաբար լեզվի և ժամերգության մեջ հմտանալու պայմանով: Լավ տեղյակ էր Աստվածաշնչին, հայոց հին պատմիչներից մի երկուսին և Չամչյանի «Հայոց պատմությանը»:

Գոց գիտեր շարականները. հզոր ու դուրեկան ձայն ուներ:

Նա հագնված էր գյուղական մտավորականի պես — չուստեր, երկայն տաբատ, արխալուղ, վրան ժակետ, գլու-

խին ռուսական «շապկա»: Գյուղական գաղտնի վարժարանում կրոնի և երգեցողության դասատու էր...

Նախճվան մեծ գյուղը երկու քահանա ուներ. մեկը տեր-Միքայելն էր, Ղուկաս աղայի աները, մյուսը՝ տեր-Մատթեոսը. տիրացուն վերջինիս օգնականն էր և ծուխերի ժառանգորդ նրա մահից հետո:

Թափորը ներս մտավ Մուկուչի տունը: Տերտերը կընքահոր հետ մոտեցան տղոցկանին, որի անկողինը պատրաստված էր թոնրատան վերի անկյունում, կամերից կապած թախտի վրա: Այս վայրկյանին, մայրերին հատուկ ևվիրական հուզմունքից շառագունած՝ նստել էր տղոցկանը վերմակը ծնկներին, բարձերը մեջքի հետևը, մովի բաղդադիով գլուխը փաթաթած և ուսերին ձգած քավորի ևվիրած վարդափթիթ շալովին:

Նրա գլխավերևը կանգնել էր իր պառավ մայրը՝ արցունքոտ ու ժպտուն աչքերով, դնչակալը խորշոմած բերանին, իսկ Մուկուչի մայրը, տան տնտեսը, մի ոտը հարսի մոտն էր, մյուսը՝ թոնրի շուրջը, կերակուրների մոտ: Դրացի և ազգական կանայք պատել էին անկողնու բոլոյը, թևերի տակ բռնած իրենց ևվերները ծննդկանին՝ ավանդական «սեղանները», որը ձվածեղ, որը մաղի մեջ խաշած հավ, որը հալվա:

Քավորը, ինչպես կարգն էր, խանձարուրը տվեց սանամորը, որը բազուկները պարզած, գլուխը համեստ խոնարհած՝ ընդունեց իր մեռոնած զավակին, ապա նույն ձևով մոմերը հանձնեց սանամորը:

Տերտերը շուտ էր տալիս Մաշտոցի այս ու այն էջը՝ լսողին և չլսողին անհասկանալի աստուածքներ մրմնջալով: Ծեսը ավարտելուց հետո օրհնեց մանուկին, ծնողներին, կնքահորը:

— Հորով-մորով զավակ լինիցի, բարով մեծնա, ավազանի սուրբ շնորհքը վրան իջնի. աչքերդ ի լուս, քավոր վարպետ, դատումդ ի կատար:

— Ամե՛ն, ամե՛ն,— ասացին բոլոր կողմերից, և հերթով մոտեցան համբուրելու տերտերի ձեռքի խաչը, հետո երեխային, խանձարուրի վրայից:

— Աչքերդ լուս, սանահաեր Մուկուչ, սանամեր քուրիկ, Գոհար անա, աստված ձեզի ողջ պահե սանիկիս գլխուն, երկեն արև էղնի, էս սուրբ բալուլը աջողություն բերե ձեր օջախին, պայծառ մնաք...

Քավորը դեռ երկար շարելու էր մաղթանքները, բայց սանիկը կկսեց լալ. մայրը ստիպված եղավ ծիծ տալ, միայն ամաչում էր պատվավոր մարդկանց ներկայությանը կուրծքը բանալ: Մուկուչի մայրը, Գոհար անան, բանը գլխի ընկավ և դարձավ ծիսակատարներին.

— Տե՛ր հայր, քավոր ջան, համմեցե՛ք այվանը:

Մուկուչը առաջնորդեց նրանց այվանը (հյուրասենյակը): Ուստան տատմայրի ափը դրամ դնելով, հետևեց նրանց: Լուսավորված այվանում նստել էին արդեն կոչնականները.— Պոտոս Տացուն, տանուտեր Խեչանը, Օսկանը, Չավուշը, Մուկուչի աները՝ Խաչավոր Ադամ ամին և Թաթոս վարժապետը, և ուրիշ ազգական ու դրացի մարդիկ:

Ադամ ամին, որ եկել էր թոռի մկրտության հանդեսի համար, Շիրակի Ճալա գյուղից էր. մի բավական ծերացած մարդ, նիհար, փոքր մարմնով, բայց աշխույժ և առողջ. շարժուն աչքեր ուներ, մի հոնքը անծեղի կոտրած թևի պես կախվել էր, իսկ մյուսը բոլորովին չկար. կզակը սուր էր, վիզը անթիվ խորշոմներով ակոսված: Հին արխալուղի նոր կարկատած կրծքի վրա կախված կային մի բրոնզե խաչ ու մեդալ, որ ստացել էր ռուս-տաճկական պատերազմին, ցարի բանակին մատուցած ծառայության համար, որով «Խաչավոր» մականունն էր ստացել:

Կուրծքը ստեպ-ստեպ հպարտությամբ առաջ էր ցցում, ուժգին ցնցելով շքանշանները, որոնք իրար դիպչելով զընգում էին: Ադամ ամին հագած ուներ ռուս գեներալի հին վերարկու, որի կարմիր եզրերն ու կարմիր աստառը ավելի էին աչքի ընկնում լամպարի լույսի տակ, հյուրերի գորշ հագուստների միջև:

Թաթոս վարժապետը Շիրակի արևելյան մասից էր, ավարտել էր Ալեքսանդրապոլի երկդասյան դպրոցը, քընություն բռնելով, ուսուցչական վկայական էր ձեռք բերել: Նախճավանի ծխական վարժարանում դասատու էր մինչև

1896 թիվը, երբ ռուս կառավարության բռնությամբ գոցվեցին հայոց դպրոցները: Վարժարանը գոցվելուց հետո էլ մնաց նա Նախճվանում, որովհետև ամուսնացել էր Մուկուչի քրոջ աղջկա հետ. նրա զոքանչը այրի կին էր և աղջկանից բացի ուրիշ զավակ չուներ, ուստի Թաթոսը տնփեսա եղավ: Նա պարապում էր հողագործությամբ և մեղվաբուծությամբ:

Երկու զավակ ուներ. մեկը կնքել էր իր ընկեր մի ուսուցիչ, մյուսը՝ Ուստա Կարոն:

Երբ զանազան գյուղերում բացվեցին գաղտնի դպրոցներ և փոքրիկ գրադարաններ, Թաթոսը կարգվեց ուսուցիչ և գրադարանապահ: Ավանդում էր հայերեն լեզու, հայոց պատմություն և թվաբանություն:

Որպես գրադարանապահ, որի ձեռքի տակ կային 100-ի չափ հայերեն գրքեր, նա ամառը շաբաթը մի անգամ, ձմեռը երկու անգամ գլխին հավաքում էր գյուղացիներին և նրանց համար կարդում էր վեպեր ու պատմություններ — Աբովյան, Րաֆֆի, Ահարոնյան, Փափազյան և այլն, բուլղարական և ուրիշ ազգերի ազատագրական կռվից դրվագներ, և կարդացածը մեկնում, բացատրում: Ուստա Կարոն և Չավուշը, Նախճվան եղած դեպքերում, նրա ընթերցումների հավատարիմ ունկնդիրներից էին:

Գյուղացիները սիրում էին նրան և իրենց համագյուղացին էին համարում. ինքն էլ սիրում էր նրանց և նվիրված էր գյուղի շահերին:

Ուստայի լավ բարեկամն էր, իրար հավանած և իրար սիրած:

Կլիներ մոտ 33—34 տարեկան. եռանդուն և կրակոտ երիտասարդ էր, ամեն գործի վազող. միամիտ էր ու պարզասիրտ, ժպիտը միշտ վառվում էր նրա զվարթ դեմքի վրա, և ոչ մի ծանր կացության մեջ չէր հանգչում այդ լուսավոր ժպիտը: Խոսում էր արագ-արագ և միշտ ոգևորված. լեզվի շնորհք ուներ, ամեն առիթի կարող էր ճառեր ասել, պերճ, բոցաշունչ ճառեր: Երբեմն հայրենասիրական ոտանավորներ էր գրում, որոնք գոց էին անում իր աշակերտները:

Ուներ բաց գույնի մազեր, նեղ ճակատ, կոր քիթ, ժըպ-

տուն, խած աչքեր. նիհար էր, միջակից բարձր հասակով. ձևերը՝ աշխույժ, արագաշարժ:

Հագուստը գյուղական վարժապետի էր, գլխին «ռուսական շապկա՝ կրզոնկով», ժակետ ու ժիլետ (բաճկոն և բաճկոնակ), առանց փողկապի շապիկ, երկայն տաբատ, ոտներին՝ երբեմն «չուստիկներ», երբեմն կոշիկներ:

Կոչնականները ոտի ելան, համբուրեցին տերտերի աջը և տեղ տվին բուխարիկի վերի գլուխը. կնքահորն էլ՝ նրա հանդեպ, մյուս վերի գլուխը, սակայն Ուստան հարգանքով իր տեղը զիջեց ծերունի Ադամ ամուն:

— Օրինյա ի տեր,— նորից ասացին հյուրերը, նստած տեղերից, գլուխ տալով:

— Աստված օրհնեսցե ամենեցուդ,— պատասխանեց տերտերը:

— Քավոր Ուստա Կարո, դատումդ կատար, բարով էդ սուրբ մեռոնը մեր տունն էլ բերես,— ձայնեցին ամեն կողմից, և ապա դառնալով Մուկուչին.

— Մուկուչ ջան, բարով էրեխիդ պտուղը վայելես:

Մուկուչը բախտավոր ժպիտով շնորհակալություն հայտնեց բոլորին մեկ-մեկ և համբուրեց աներոջ ձեռքը. Ադամ ամին թաց աչքերով՝ համբուրեց փեսայի ճակատը:

Մուկուչը, ապա, օդին առաջ բերելով հրամցրեց ամենքին, որոնք խմեցին նորակնունք երեխայի արևշատության համար:

Տեր Մաթոսը գոտիկի ծալքից հանեց բռնոթու (քթախոտի) մեծ տուփը և մի ահագին պտղունց բռնոթի լցրեց քթի խոռոչների մեջ, և հետո տուփը հրամցրեց Ադամ ամուն:

Քթախոտը գրգռեց տեր Մաթոսի քիթը, սկսվեց մի անընդհատ փշտոց. ներկաները իրար հետևից ձայնում էին.

— Տերտե՛ր, բարի էղնի, տերտե՛ր, առողջություն:

— Օրինյալ լիջիք, որդիքս,— հազիվ փշտոցի միջից տեր-հայրը պատասխանել կարողացավ, և թեզանիքից հանելով խոշոր, դեղին թաշկինակը, սրբեց քիթն ու մորուքը:

Մուկուչի երիտասարդ եղբայրը թեյ էր շինում և հյուրասիրում կոչնականներին:

— Ի՞նչ նոր բան կա՝ նեսո ու դուսը,— դիմեց Ուստան բոլոր ներկաներին, անխտիր:

Ուստայի բնույթն էր, որ հավաքույթների մեջ լուռ կեցած չէր սիրում ու չէր կարող. կամ ինքը պիտի խոսեր, կամ ուրիշին պիտի խոսեցնել տար:

— Նորն էլ դուն գիտես, հինն էլ, քավոր Ուստա,— պատասխանեց տանուտեր Խեչանը:

— Խաչան քիհա, դուն լավ գիտես, որ մեծերն եղած տեղը, պզտիկները չեն խոսի,— ասաց Ուստան, բարձը քաշելով թևի տակը:

— Էդման, խոսքը ինձի տվավ Ուստեն,— սկսեց տանուտերը,— երեկ պրիստավը ինձի Տիկոր կանչեց ու բարևագիր-նամակներ տվավ, որ մեր սաղաթ էրթցած տղերքը գրեր են իրանց ծնողներուն: Գրեր են յապոնիներու երկրեն, գերի են ընկեր էնտեղ. զարմանալի բաներ կգրեն...

Ներկաների հետաքրքրությունը վառվեց և տիրեց մի լարված լսողություն: Օրվա այրող հարցը ռուս-ճապոնական պատերազմն էր. հին սերունդը ռուսի հաղթանակն էր տեսչում, նոր սերունդը՝ պարտությունը. թեև, առհասարակ, ամենքի համար էլ ռուսի պարտությունը աստվածային արդար հատուցման նշանն էր հայերի հանդեպ գործած ցարի անիրավությունների:

— Ի՞նչ կգրեն...

— Ի՞նչ են գրե...

Կարկուտի պես, ջղագրգիռ ձայնով, տեղացին հարցերը:

— Արմանք-զարմանք բաներ, հիմի կըսեմ,— և տանուտեր Խեչանը պատրաստություններ տեսավ պատմելու. լռիկ և դանդաղ շարժումով գրպանից հանեց ծխախոտի նախշուն քսակը, միջից առնելով չոր ու կոշտ ծխախոտը, դրեց ձախ ափի մեջ և սկսեց աջ ափով մանրել, միաժամանակ անվերջ կրկնելով.—հա՛, զարմա՛նք բաներ...—Ապա մանրած խոտը դրեց ծխամորճի կավե գլխի մեջ. Մուկուչը շտապով բուխերիկից այրվող աթարի կտորը դրեց խոտի վրա. տանուտերը ծուխը անհագաբար ծծելով և ամպի նման դուրս մղելով քթից ու բերանից, սկսեց ասելիքը.

— Կռիվը ռուսի և յապոնի մեջը է, բայց հիմա Չինմաչինի հողերու վրեն է կռվի տեղը. մեր գեղերու տղերքն էլ ընտեղն են գերի ընկեր, ու տարեր են յապոններու երկիրը, որ Չինմաչինեն երկու ծովով հեռու է. մենք մեր տղութ ժամանակ նեքիաթներու մեջ էինք լսեր Չինումաչինի անունը, մեր տղերքը հիմի աչքով տեսան... աշխարքի բանը չի հասկացվի... Հա՛, կգրեն, որ շատ լավ են, հանգիստ են, լավ կերուխում ունին: Էդ յապոն ըսվածները պստիկ, կարճ ու դեղին մարդիկ են, անբեղ-անմորուք, բայց լմա սատանի խելք ունին, հնձարքով մարդիկ են. երևելի քաղաքներ ունին, ծովերու վրեն էլ գեղ կշինեն՝ կապրին. կերածները գանելիք բաներ են՝ հոտած ձուկ ու մուկ, շուն ու կատու, միսը կհոտեցնեն, միջի որդունքը կուտեն, ամեն ժժմունք կուտեն, չայեն ու բրինձեն գինի-արաղ կշինեն ու կխմեն: Կնտիքը դուսը տկլոր կլողան, ամոթ չկա. աստվածապաշտ են լմա, բայց խաչ ու Քրիստոս չունին: Շատ քաջ մարդիկ են, մահեն վախ չունին, ու մեր թագավորի բանը լավ չէ, վերջը լավ նշանց չի տա...

— Օխա՜յ, օխա՜յ, թող մեկ ցարի գլուխը քարին գա, քիթ ու պռունկը ջարդի, կակարտը շատ բարձր կբռներ,— վրա տվին մի քանիսը, չքաշվելով պաշտոնական անձի՝ տանուտերի ներկայությունից:

Այս ուրախաձայն կոչերի վրա՝ Ադամ ամին նստած տեղը բռնկվեց, զորապետական վերարկուն մի ցնցումով շիտկեց ուսերի վրա, ձեռքը զարկեց խաչին, և ուղղակի գոռաց.

— Ռուսի դեմ խոսալը Քրիստոսի էս սուրբ խաչի դեմ խոսալ ըսել է. հրամմե՞ր եք, գլուխը քարե գա, հպը ձեր գլուխն ո՞ւր պտի մնա. խելքերդ տե՞ղն է թե չէ: Փորձված բան է, թե որ ռուսի թուրը կոտրի, աշխարքի վերջը կեղնի, քար քարի վրեն չի մնա: Թուրք ու չաչան, գյուրջի ու լազկի, քյուրտ ու ջլո, շուն ու գել հայ-քրիստոնեին հում-հում պտի ուտեն. դուք դրո տղա եք՝ խելքով էվելի, քանզ հասակով. մարդ տեսածեն կվախնա, դուք ի՞նչ եք տեսեր որ... Տերտեր, տիրացու, աստծուն աղոթք էրեք, ամենքդ էլ գումար աղոթք էրեք, որ աստված ռուսի թուրը կտրուկ էնե...

Տերտերն ու մի երկու հոգի կրկնեցին Ադամ ամու մաղթանքը:

— Իմ սրտես չի գնա ցարի թրին հաջողություն խընդրեմ,— Պոտոս Տացուն էր խոսողը,— թո՛ղ կոտրվի ինքն էլ, իրան թուրն էլ. ինչո՞ւ մեր ժամերու հարստությունը գումար խլեց տարավ, մեզի հարկերու տակ կապուտցրեց, մեր երկրի հողերը քրդին ու մալականին կուտա, մեզի չի թողնե մեր պապական տեղերու վրեն՝ Մրենի, Անվա քովերը գեղեր շինենք, այլազգիներուն կուտա: Ես ո՞րն ըսեմ, էդոր համար էլ աստված վերեն տեսավ ու զարկեց...

Թաթոս վարժապետը լրացրեց Տացուի մեղադրանքը.

— Ցարը, ներկա Նաբուգոդոնոսորը, ինչո՞ւ դպրոցները գոցեց. որպեսզի հայերենը մոռանանք, ուրանանք մեր ազգը, մեր լեզուն. ինչո՞ւ գազան թուրքին, իժից արմատ, դև սուլթանին օգնում է, որ հայերին ջարդեն, ջնջեն, ո՞ւր մնաց նրա քրիստոնյա լինելը, ասացեք, խնդրեմ...

Տիրացու Հովակն էլ, չուզենալով հետ մնալ, ինքն էլ իր հերթին լրացրեց Թաթոս վարժապետի մեղադրականը.

— Ինչո՞ւ ոուս և ուոում տերտերներին ուղարկում են գյուղերը, կաշառով հայերին՝ մեր Լուսավորչա լույս հավատքից դարձնում իրանց խաչին և հավատքին. ամենաառաջին քրիստոնյա դառած ազգը հայն է...

Տիրացու Հովակը և Թաթոս վարժապետը ձգտում էին միշտ գրական լեզվով խոսել՝ գյուղացիների վրա տպավորություն թողնելու համար, թեև հաճախ թելը կորցնում էին ու դառնում միջավայրի բարբառին:

Ադամ ամին կրակ ու բոց կտրվեց, թեյի բաժակը բարկացած վայր դրեց, և բռնեց ուղղակի Պոտոս Տացուի ձեռքից, արհամարհական հայացքով չափելով տիրացուին և վարժապետին.

— Տացո՛ւ, Պոտո՛ս Տացու, ես քեզի խելքը գլխում մարդ գիտեի. տո՛, մազերդ ճերմակած տղա ես էղե, էնքան հում կխոսես, որ կզարմանամ: Մինչի էս օրս չիտես, որ էսման բաներու մեջ թագավորը մեղավոր չէ, իրան վազիր-նազիր, էն իշու փիծուկ, շան կրծուկ մինիստրները, էն անիծածներն են մեղավոր, որ բանը սուտ տեղ կհասցնեն. թագավորը

անարդար բան չի բռնե, աստծու ձեռքը էնոր սրտի վրեն է: Գրոց մարդ ես, ի՞նչ էս բան չիտես...

Պոտոս Տացուն վիրավորվեց, ուզում էր չոր ու կծու պատասխան տալ, սակայն Մուկուչը թախանձալից ակնարկներով հասկացրեց թե՛ Տացուին, թե՛ տիրացուին ու վարժապետին, որ աներոջ խոսքը բանի տեղ չդնեն: Դեմքին ծաղրող երևույթ տալով, Տացուն մեկ-մեկ նայեց հյուրերին, աչք ու հոնքը շարժելով:

Ադամ ամին խրախուսվեց նրանց կամավոր պապանձումից.

— Յապպոնները հեչ բան են, էնոնք ջրի փշտիկ են,— շարունակեց նա.— էն սատանի ձագ ինգիլիզն է մեղավորը, էնոր պոչն է ամեն կովի մեջը, էդման էր ռուս-օսմանլուի կովին էլ. ուրիշին կսրե, ինքը պռունկը կկայնի: Իմա՛ց էղեք, թե աշխարքը իմ գիտցած աշխարքն է, թե ռուսը իմ տեսած ռուսն է, էն որ օսմանլուին քոռ մկի ծակը մտցուց, առաջը բան չի դիմանա. էնպես թոփեր ունի, որ էստեղեն Կաղզվան մէ գցելով կսրբե. աչքիս տեսը՝ Ալաճայի գլխեն Ղարսա մեջը կրակ կթափեր: Իմ գիտցածովս՝ էս մեր տափակ գտակ շեկ ռուսը վերջը-վերջը ամենքի մերը պիտի լացըցնե.— լամսա էղնի թե նամսա, ֆրանցուզ էղնի թե տալիանցի, յապոն էղնի, թե ինգլիզ...

Ադամ ամին մի պահ կանգ առավ. տերտերից քթախոտը խնդրելով, լցրեց քթի մեջ, փռշտաց ու նորից փռըշտաց, մինչ այն Մուկուչը աչքով նշան արավ եղբորը, և հարդարեցին հացի սփռոցները: Թոնրատնից Թաթոս վարժապետի կինը և Մուկուչի եղբայրը բերում էին կերակուրները, իսկ Մուկուչը արտի գուղձերի պես կոշկոռ մատներով՝ ափսեներն էր շարում հյուրերի առջև:

Տերտերը, խաչակնքելով սեղանը, վրա տվեց «Հայր մերը», որ տարիների ընթացքում օր ու գիշեր ասվելուց, այլևս մաշվել էին բառերը, և ոչ մի որոշ հնչյուն չէր մնացել: Ապա վեր առնելով լավաշ հացը, վերից վար կտրեց, արավ երկու կտոր, ետո իրար վրա դրեց կտորները և այս անգամ աջից դեպի ձախ կտրելով՝ դարձրեց չորս

կտոր, որով հացը բեկանելու շարժումից խաչի պատկերն ստացվեց. և դառնալով կոչնականներին և Մուկուչին, ճարեց.

— Հայր Աբրահամու օրհնությունը իջնի էս տան վրեն, Նորածինը բախտավոր եղիցի, հորն ու մորը խնդում եղիցի, Սիմավոն ծերունի եղիցի:

— Ամե՛ն,— ձայնեցին հյուրերը,— Մուկուչ ջան, աչքդ ի լուս:

Իսկ Ուստան ավելացրեց.

— Աստված լսող-կատարող էղնի, Մուկուչ ջան, սանիկիս լավ պահե. ես գիտեմ՝ էնպես տղա պտի կանգնի, որ նմանը չունենա:

Մուկուչը օրհնի հյուրերին հրամցնելով՝

— Աչքի լուսով կենաք. էս ուրախությունը թշնամուս տունն էլ թող էղնի. խնդրեմ, հաց անուշ էրեք, ձեր տունն է, էվել-պակաս ներող էղեք:

Միառժամանակ ոչ մի ձայն չէր լսվում, բացի միայն գդալների ներդաշնակ աղմուկից:

Ադամ ամին խզեց լռությունը՝ շարունակելով խոսքի կտրած թելը.

— Հը՛մ, հը՛մ... Ռուսին բան չի էղնի, էնոր աստղը պոյծառ է: Երեկ-մեկել օրը մեր տիրացուն ըսավ, թե ռուսի աստղը ոսկի է և էլ ճրագի պես պոյծառ է: Հը՛մ, դուք չեք լսեր մեր գեղի երևելի տիրացուի անունը: Էն շա՜տ գիտնական մարդ է, հիմի շա՜տ ծեր է, ընձեն մենծ է. ես մատղս ջուր էի, էն կարգին տիրացու էր.— և օղիով ու գինիով կենդանացած հայացքը պտտեցրեց, դիտելով մեկ-մեկ ունկնդիրների երեսները.— ուսում ունի, ուսում ունի, ծովու չափ ուսում ունի մեր տիրացուն. խորունկ հող է փորեր, ու կմտնի մեջն ու օր-ցորեկով երկնուց միջի աստղերը կաշե, կքննե, էնոնց ճամփու գիրը կկարդա. աստղաբաշխություն կենե: Ես ո՞ր մեկն ըսեմ էնոր գործերեն. թուղթ ու գիր կենե, գել կկապե, ընկնավոր կլավցնե: Էդ ի՞նչղ որ էնոր անունը չեք իմացած. տերտե՛ր, տիրացո՛ւ, դուք էլ գրոց մարդիկ եք, էս էղնելո՞ւ բան է:

— Օրհնյալ կենաս, Ադամ ջան, չեմ իմացեր, անունը

ո՞րման է, ըսա, կարելի է միտքս գա,— հարցրեց տերտերը:

— Տիրացու Բարսեղ:

— Հա՛, հա՛, ծալեցի տիրացու Բարսեղ, հին մարդ է, վաղուցվա տիրացու է:

— Հը՛մ, էն է. գիտեմ որ պտի իմացած էղնիք, անունը ամեն տեղ ձեն կուտա... էնիկ հերու Խրիմյան Հայրիկի աստղը գտավ, էս տարի էլ գտավ թագավորի՝ իրան աստղը ճրագ-պոյծառ: Էդման, աստղերը կմաղե ու կգտնի մեծամեծներու աստղերը: Մեր գեղի տանուտերը էդ գըտնումնքի մասին քաղաք գրեց, նաչալնիկին իմաց տվավ... — Հյուրերը զսպված ծիծաղով իրար երես նայեցին: Ուստան, որ վարժվել էր զարմանալի բաներ տեսնել ու լսել, ապշանքի մի սարսուռ զգաց:

— Կզարմանամ, էսքան անհաշիվ աստղերու մեջեն էդ ո՞րման իմացավ թագավորի աստղը, վրեն գրա՞ծ էր անունը... Հրա՞շք բան է:

— Յա՛, քավոր Ուստա,— ավելի զարմացած պատասխանեց Ադամ ամին Ուստայի թերահավատ հարցումին,— դուն ի՞նչղ էդման կխոսաս, ուրիշ մարդ խոսա, ջոկ բան: Դուն որ աշխարհաժուռ մարդ ես, հրաշքի պես բաներ ես տեսե, ի՞նչղ չես հավատա էղած բաներուն: Էն մարդուն ես գիտեմ, որ կըսեմ: Էն համրե թե՝ եռսուն տարի կա՝ ցորենկով կաշե աստղերուն, գիշերով կաշե աստղերուն. Սողոմոն Իմաստուն կկարդա, վեցհազարակ կկարդա, մարդու ճակտի գիրը՝ ճակտին կաշե՝ կկարդա... Էն դըռ ռուս-օսմանլուի կռվի տարին, դըռ կռիվ չէղած, մեկ արնաժեռ աստղ գտավ, ըսավ թե՝ մահ-պատերազմ, կռիվ-կոտորմունք պտի էղնի, և էլ էղավ...

Ուստան ըմբռնեց իր սխալը. ճիշտ որ՝ ինքը իրավունք չուներ զարմանալու: Եվ Ադամ ամու՝ իրեն ուղղած խոսքերից շոյված զգալով, պատեհ բառեր էր որոնում բարեխառնելու իր անպատեհ հարցումը, երբ տերտերը երկուսի մեջն ընկավ.

— Ակոռա կործանման տարին էլ Մասսա գլխուն մեկ աստղ երևաց. սուրբ Հակոբ վանուց վանահայրն ըսավ, թե՝ աշխարհնաժուռ-կոտորում պտի էղնի, չքաշեց մեկ-եր-

կու ամիս, էղավ. ինքը գուշակ վարդապետն էլ տուրը գնաց, մենակ ես ողջանց մնացի...

Նախճվանցիները շա՜տ անգամ էին լսել Ակոռի աղետը ականատես տերտերի բերանից պատմված, ուստի անտարբեր մնացին, իսկ Ադամ ամին մոռանալով իր պատմելիքը, հետաքրքրված դիմեց տեր-Մաթոսին.

— Դուն է՞նտեղ էիր էղեր...

— Դու ճո՞ր կիմանաս, օրինյալ, ողջ աշխարքին ու տիեզերաց հայտնի է, չէ՞ որ ինձի Ակոռա տեր-Մաթոս կըսեն,— և խորշոմների տակ ծածկված փոքրիկ աչքերը հանդիմանությամբ ուղղվեցին Ադամ ամու վրա: Այդ հայացքի տակ շփոթվեց Ադամ ամին, մի բառ իսկ չկարողացավ հայտ բերել չքմեղանքի համար:

Մինչդեռ տերտերը, առանց հրավերի, սկսեց նույն բառերով ու նույն ոճով տարիների ընթացքում անթիվ անգամ կրկնված նույն պատմությունը, որ հարկ էր համարում պատմել ամեն հավաքույթի:

— Հա՛, Ակոռա կործանման տարին, ես մեկ թեթև տղա էի: Ողորմածիկ հերս տվեր էր ինձի ս. Հակոբա վանահոր քովը մնթ, ժամուց ասմունք սովրելու համար. մեկ խոսքով ըսած, կիրակոց կիրակի վանահայրը ինձի կարդմունք կսորվեցներ, ողջ շաբաթը հոտաղություն կենեի: Ս. Հակոբա վանքը շինած է էն ժեռ-ապառաժներու վրեն, որ տեղեն Տրդատ թագավորն հայոց՝ ս. Էջմիածնա հիմանց վեմ քարերը մեջքի վրեն դրած տարավ ի քավություն մեղաց. վանքի դռանն է ցավոց դարման, հրաշագործ սուրբ աղբյուրը. էդ սուրբ աղբյուրը բխեր է Հակոբ Մծբնա հայրապետի գլուխը դրած տեղեն, երբոր ծարաված քնավ հայրապետը, երբոր Մասիս լեռը բարձրանալ կճգներ՝ Նոյան տապանը տեսնելու կարոտով. էդտեղ տեսիլքի մեջ տյառն հրեշտակի ձեռքեն ընդունեց տապանեն մե կտոր փայտ, որն հիմի Էջմիածին է, ամեն մարդ կրնա երթա տեսնի, մեռնիմ էնոր զորքին:

Էդ օրվանեն վանքն ու աղբյուրը սուրբ հայրապետի անվամբն կոչվեցավ: Ս. Հակոբը մեր Լուսավորչա հորքուրի տղան էր...

Մուկուչը, որ սեղանի ծայրին փշի վրա նստածի պես էր, չորս աչքով հսկում էր, թե ո՛ւմ ի՛նչ է պակաս, և ակնարկով հասկացնում էր ոտքի վրա կանգնածներին՝ եղբորն ու վարժապետի կնոջը, որ լրացնեն թերին, և անվերջ թախանձում էր սրան ու նրան՝ ախորժակով և լիուլի ուտեն, եթե ուզում են Մուկուչի հարկինքը պատված լինել:

— Օրինյալ կենաք, որդիքս, ես էն կուզեի ըսել, որ Ակոռա կործանման դառն օրը ընկեր, հոտաղներու հետը տավարը կարծեցնեինք Մասըսա ժեռերու և հարոսներու վրեն, մեկ էլ, ըսես, աճոխ երազի մեջ էղնեինք, աշխարքարարատ դղորդ ընկավ, ու մեր ոտաց տակի հողը կամի պես կալլար ու կալլար, էնպես ժաժք էղավ, էնպես ժաժմունք, որ սարերը իրար կուգային ու կերթային: Մասըսա ծանոտ ու բարձր լեռը, որ հայոց աշխարքի երդիկն է, ու ամեն երդիկի վրան մարդ արարած կրնա էլնե, մենակ էնտեղ՝ հրամանք աստծու չկա, ամեն երդիկի ձուկը կհալի, էնորը՝ հավիտենական է, էս անգամ էնոր ձուկն էլ հալավ, փլավ եկավ— ջրհեղե՜ղ, իսկ ջրհեղեղ. ամեն ջուր խառնվան իրար, ծով էղան ու քարափներու գլուխն ելան: Դե՛հ, գիտեք, Մասիսը, որ մեկ չափազանց սար է, ամուր և էլ հաստատուն, էս ժաժքի զոռեն հազար տեղեն տրաքվեց, ու ճեղքերեն ծուխ ու կպրե հեղեղ թափվավ. ծուխը երկինքը բռնեց՝ յոթ օր, յոթ գիշեր, ծուխը կանգնավ մնաց մուժի պես, արևը խավարավ, իջավ Ադամա մութ գիշերը... Ընկերտիքս ամենքը լեղապատառ ընկան մեռան...

Ադամ ամին, տերտերի հանդիմանությունից միայն հիմա իրեն հավաքած լինելով, ընդհատեց նրա անհավոր պատմությունը.

— Շտե, ես էն կուզեի ըսել, որ Ակոռա ավերման տարին եմ աշխարք էկեր, էդ տարին ժաժքի վախեն մեր գեղի ծոցվոր հարսները անցուցք են էրե, մենակ ես կարգին ու ժամանակին ծնվա: Էս բանի վրեն՝ տիրացու Բարսեղն ըսեր է, թե՝ էս էրեխեն շա՜տ կտրիճ պտի էղնի, որ ժաժքին դիմացեր է մոր փորի մեջը:

Հյուրերի աչքերում նորը ծիծաղ նշմարվեց, որ չխու-

սափեց Մուկուչի հայացքից. և սա աներին ծաղրական դրությունից ազատելու համար, անմիջապես վրա եկավ.

— Էդ գուշակ խոսքը շիտակ դուրս եկավ, քանի որ աներս կովին մենձ քաջություններ է ցույց տվեր ու խաչմեդալ առեր և էլ ամեն տարի թագավորի խազնեն տասնօխթը մանեթ կուտա մինչի մահ:

Ուստա Կարոյի բարի տրամադրությունը շրջվել էր արդեն դեպի Ադամ ամին և հենց այն է, ուզում էր նրան պաշտպանել, երբ տեր-Մաթոսը վիրավորված իրեն զրույցի ամենակարևոր տեղում խզումից, ակներև դժգոհությամբ ասաց.

— Էդոր մասին ետև, հիմի թողեք խոսքիս ավարտն առնեմ: Հա՛, էնտեղ էի, թե ընկերտիքս ամենքը վախու մեռան, մնացեր էի ես, կիսամեռ, գետնին ընկած, անոթի-ծարավ: Յոթ օրեն ետև ծուխը քաշվավ, երկինքը պարզվավ, արևն ելավ, աշխարհք-աշխարհք էղավ. ես էլ ոտքի ելա, մնացած ցիրուցան տավարը իրար վրա գլխեցի, անցա Ակոռա կուշտով, ի՞նչ տեսնեմ, ինչ որ տեսա, տղոցըս սպանողը չտեսնի.— Ակոռա տեղը ծով ու բրոր, մարդոց և անասնոց լեշերը ջրերու վրեն՝ ուռած-կապուտցած կտմբտմբայինն... գետին ընկա ու լաց լացի — հեր, մեր, քուր, ախպեր, ազգ ու տակ՝ գումար կորած, կուր էղած... Աստծու պատիժն էր, որ ընկավ մեր գեղի մանուր-խոշորի վրա, ես պզտիկ էի, չիմացա, ի՞նչ էր մերոնց մեղքը:

Մեկ էլ հոգիս տուն տվավ, տավարն առա, իջա սուրբ Էջմիածին, տվի վանքին: Լուսաւոգի Ներսես կաթողիկոսըն էր էն ժամանակ Լուսավորչա աթոռի վրեն, ինձի կանչեց հարցուփորձ էրավ ու ինձի վար դրավ իրան կուշտը ծառա-սպաս. ղայֆա կշինեի, չիբուխին կրակ կդնեի: Լավ օրեր տեսա էդ լուսաւոգու քովը: Ինձի շա՜տ կսիրեր, ինձի արդար կհաշվեր, քանզի որովհետև ես էի մենակ ողջանց մնացեր էդ մարդաշատ հայ-քրիստոնե գեղից ու մենակ ես էի ականատես...

Տեր-հայրը վերջացրեց: Ունկնդիրները թեև շա՜տ անգամ էին լսել այս զարհուրելի անցքը և սարսափել, հիմա էլ, առաջին անգամ լսողի նման, մութ սարսափով հա-

մակվեցին, այնքա՜ն կենդանի կերպով վերստին պատկերացավ ականատեսի պատմվածքը նրանց տեսողության առջև:

Մի պահ լռություն իջավ:

Տերտերի քունը տանում էր, գլուխն օրորվում էր կրծքի վրա. քունը վտարելու համար ուժգին ցնցեց իրեն.

— Օրհնյա՛լ մնաք, որդիք, ես էրթամ, ծեր մարդ եմ, էգուց կիրակի է, պատարագ ունինք. ժամ հասմեցեք,— և խաչակնքելով սեղանը՝ տնքալով ոտքի ելավ.— Մուկուչ ջան, շեն մնաս, մե կտոր հավու միս տուր՝ առտվան ակրատիս համար:

— Հրամմեր ես, տերտեր ջան,— ասաց Մուկուչը, հավի փափուկ մսերը լավաշի մեջ փաթաթելով:

Տեր-Մաթոսը խոշոր պատառը գրպանը դնելով, ուղղվեց դեպի դուռը, ընդհանուրի պատշաճ «գիշեր բարի»-ի մաղթանքների տակ: Մուկուչի եղբայրը ուղեկցեց նրան մինչև տուն:

Երբ տերտերը հացը գրպանն էր դնում, Ուստայի մտքովն ակամա անցավ այս խոսքը. «Տերտերները երկու փոր ունին, մեկը իրանց ջեպն է» (գրպանը):

Սակայն զսպեց իրեն և բարձրաձայն չարտահայտեց մտքովն անցածը: Զարմանալի մարդ էր նա. հաճախ կարողանում էր տիրել իր լեզվին, իբրև շա՜տ մարդամեջ եղած և վարվելակերպ ձեռք բերած մարդ, բայց ավելի հաճախ բաց էր թողնում խոսքի սանձը և հանդես էր բերում ինչ որ կար սրտի մեջ. «Ինչ կեղնի, թող էղնի», ասում էր նա և մի կողմ նստում:

Այս անգամ ոչ միայն զսպեց իրեն, այլև անհաճո ինքնագգացում ունեցավ, թույլ տալով վիրավորիչ խոսք մրտքովն անցնել սուրբ կարգ կրողի հանդեպ. տխրեց և երկար պահ լուռ մնաց ու անուշադիր արտաշխարհի անցուդարձին:

Ներկաները խոսում էին զանազան իրերի մասին. տարվա բերքի և նոր հարկերի մասին, գյուղերում պատահած դժբախտ դեպքերի և այս ու այն մարդու մասին:

Երբ խորովածը գրգռիչ հոտ արձակելով տեղաց լա-

վաշների վրա, Ուստաճ դուրս ելավ իրեն միջից և վերըստին ընկավ նախկին զվարթ տրամադրության մեջ:

Երկու գամփռ շներ, թաթերը դրած սեմին, վառ աչքերով հետևում էին համեղ պատառներին: Երբեմն նրանց ոսկոր էին նետում այս ու այն կողմից:— Պոտոս Տացուն մի ոսկոր նետեց, որ շներից մեկը օդի միջից բռնեց և մոմոալով սկսեց կրծել:

— Ի՞նչ է էդ շաճ անունը,— հարցրեց Տացուն:

— Ղուկա՛ս,— վրա բերեց անմիջապես Ուստաճ:

Հյուրերը, որ գրեթե բոլոր թշնամի էին Ղուկասին, ուրախ ծիծաղեցին:

— Տո՛, ափսոս չէ Ասլանս,— վիրավորված շեշտով ասաց Մուկուչը, թե՛ իր շաճ պատիվը պաշտպանելու և թե՛ Ուստային հաճելի լինելու համար:

— Դրուստ որ ափսոս է,— հաստատեցին մի քանի ձայներ:

Ուստաճ ուզում էր լսել Ադամ ամու կյանքի վեպը. մարդը խաչ-մեդալ ունի, հարկավ ձրի չի ստացել, ի՛նչ խոսք, որ մի բաճ արած կլինի:

— Ադամ ամի,— դարձավ նրաճ,— գիտեմ, որ դար ապրած մարդ ես՝ գլխուդ գալածներից պատմե, ականջ էնենք:

— Քավոր Ուստա,— բերանը սրբելով խոսեց Ադամ ամին,— իմ գլխու գալածները Աչամավուրքեն շատ են: Մենք էլի մեզի համար մարդ էինք ժամանակով, հիմի ծերացանք, հարցնողն ո՞վ է, թե դուն ո՞վ ես, անցածն անցուկ է, ամեն բաճ մոռցուկ. հիմի որ պատմեմ, շատերու աչքին սուտ կթվա կամ տեսիլք:

— Ադամ ամի,— հարկ համարեց Ուստաճ խրախուսել նրաճ և միաժամանակ ուղղել իր սխալը,— ես ուրիշներու պես թերահավատ չեմ: Ես էլ իմ տեսածները, որ կպատմեմ, մազերս բիզ-բիզ կկայնին, բայց լսողներու հավատը չի գա. բանն էդպես է, տեսնողը տեսածին կհավատա, լսողը լսածին չի հավտա. մեղք դնել չի էղնի:

— Դրուստ է ըսածդ, քավոր Ուստա, հմա ուրտեղե՞ն գտնինք քեզի պես բանիբուն մարդ: Իրաճ գեղեն դուրս

չեկող մարդը աշխարքեն ի՞նչ կիմանա... ինչղ որ իրան քնի վրեն պպզած հանդի մուկ...

Ուստայի սրտին յուղ քսեցին. ինքն էլ միշտ այնպես էր մտածում. իրեն կարծիքի փայլուն վկայությունն էր տեսնում ինորձված, ծեր մարդու բերանում: Հիմա թող գյուղից ու գոմից դուրս չելած մարդիկ, «տնմնա աղջիկներու պես իրանց ասղաբնով մեկտեղ», իրենց խուլ ականջներով լսեն, թե աշխարհում ինչե՞ր կան, որ չտեսի աչքին երազ ու հեքիաթ կերևան: Եվ համակրությամբ լցվեց դեպի Ադամ ամին:

Առատ կերուխումից բոլորի տրամադրությունն էլ զվարթացել էր, բոլորն էլ խոսք ու զրույց էին ուզում լսել. և Ադամ ամուն հավատացողն էլ, չհավատացողն էլ թախանձեցին նրան, որ պատմե ինն բաներից. միայն Պոտոս Տացուն էր, որ քմծիծաղը դեմքից բնավ չհեռացնելով, ծուլորեն վարունգն էր կեղևում, անտարբեր դեպի շրջապատը: Իսկ Ադամ ամին՝ կրկնակի զվարթացած, որովհետև՝ մեկ որ արու թոռի մկրտության հանդեսն էր այսօր, և երկրորդ, որ խնդրում էին իրեն, սկսեց ոգևորությամբ պատմել իր կյանքի անցքերից.

— Է՛յ գիտի օրեր, մենք էլ էինք երիտասարդ, հիմիկվանները էլ... Ի՞նչ ընկեր-տղերք ունեի, ամենքն էլ կտրիճ, տղամարդ: Էս Ալաճա սարը ի՞նչ է քաշե մեր ձեռքեն, լեզու առնի, խոսի. ամիսներով գեղ չէինք իջնի. քարը բարձ կենեինք, երկինքը՝ ծածկոցք: Թուրքը, քուրդը չէին իշնա մեր սինոռին մոտիկնա... Որսի մենծ սեր ունեի. երկնուց հավքերը, վերի անասունները ձեռքես դադարը չունեին: Նմանս չունեցող նշան բռնող էի, խոսքի վրա մեկ օրինակըմ ըսեմ, հասկցեք. օրվա մեկը լուսհոգի մերս, ասպած ողորմի ձեր անցավորաց հոգուն էլ, գոռաց, բոռաց, թե՝ ուրուրը թխսամերը ձագերով առավ-տարավ. տեսնիմ՝ ուրուրը երկնուց մեջ, ամպերու տակ կթռնի, թխսամերը ճանկերու մեջ, ձագերն էլ թխսամոր թևերու տակ ծվարած. մեկ-երկուս չերի, թվանքս կրակեցի՝ շիտակ ուրուրի սրտին, ուրուրը սատկած գլոր-մլոր վար կուգար. ես փափախս բռնի, մերս՝ գոգնոցը, էնպես որ թխսամերը ձագերու հետ ողջ-կենդանի ընկան մորս գոգնոցի և էլ իմ փափախի մեջը:

Մե զարմանալի պատահմունքով՝ որսկանութենեն վազն էկա: Բգների (Բագնայր) քովերը մեկ եղնիկ զարկի, ոտքին էի նշանս առեր, որ ողջանց բռնեի, մեկ էլ խեղճը վիրավոր ոտքը վերցնելով գնաց վանքի դուռը, մեջքը տվավ դռանը, աչքերը արտըսունքով՝ երեսիս քցեց. խղճիս դիպավ, սիրտըս դող ընկավ, թվանքս մեկդի քցի, եղնիկն էկավ քովս, ձեռքս լիզեց: Էն օրեն ուխտեցի՝ որսկանութեն չ՚ընեմ...

Եղնիկի պատմությունը հուզեց ունկնդիրներին:

— Լավ ես արեր, Ադամ ամի, աստված էնոր բարեխոսությամբ մեղքերիդ թողություն կուտա,— ասաց տիրացուն:

— Է՛ն, տիրացու ջան, ո՞ր մեկ մեղքերուս... Է՛նքան ապրունք եմ էրեր ռուս-օսմանլուի կռվին...

— Էդ մեղքերուդ համար դրախտի մեջտեղը կերթաս, աստծուն ընդունելի բան ես էրեր,— ասաց հյուրերից մեկը, և շատերը գլխու, ձեռքի նշաններով հավանություն տվին:

— Ողորմի ձեր ծնողացը,— պատասխանեց Ադամ ամին ուրախացած,— ի՞նչ պտի էնեինք, կռվի տարի էր. էնոնք կուզեին հայ սպանել, մեր ձեռքերը իսո բանճար չէ՞ր քաղե, հը՛մ, էդման, մենք էլ մերն էրինք: Հա՛, կռվի խոսքը կենեի: Հայոց քաջ երանալ Լազարովն էր կռվի մենջը, թագավորի աչքն ու ձեռքը. էնիկ Արփաչայի էն երեսն էր, Գյումրվա քովերը: Ես՝ ընկեր-տղերքով՝ փարկիտցի Գալուստն էր, մալրակցի Աբրոն, կարմիր-վանքցի Մարտոն, իսոսք մեկ էրինք,— ասպած էնոնց հոգին լուս դարձնե,— հա՛, իսոսք մեկ էրինք, փախանք օսմանլուի հողեն, գնացինք Լազարովի դուռը: Գնացինք իրան զինվոր գրվանք: Ինքը ղարաբաղցի էր ու ձեռքի տակ ղարաբաղցի առյուծի պես կտրիճ տղերք ուներ, որ թրեն երես չէին դարձնե:

Անցանք օսմանլուի հողը, վրա տվինք Ղարսա բերդն առնելու: Սուլթանի զորքը մերեն շա՜տ էր. ռուսի թագավորը հրաման չտվավ Ղարսա վրեն երթալու, ըսավ թե՝ կեցեք նոր զորքեր ղրկեմ. հմա Լազարովը Լազարով էր, հրամանին ականջ չդրավ, մուզիկաները փչեցինք, արաղը կոնծեցինք ուզածիդ չափ, ուռա՜ քաշելով ընկանք ասկյարի վրա: Ինքը Լազարովն էլ թուրը քաշած, գլուխը՝ բաց, մեր առաջն ընկած՝ կրակի ու կեծակի պես մտավ ասկյարի մեջը.

թուրը առաջ կբերեր՝ իրեք մարդ կզարկեր, հետև կտաներ՝ հինգ մարդ կզարկեր: Էսպես, ջարդելով, փրթելով կոխեցինք Ղարսա բերդը: Էնքա՜ն, էնքա՜ն թուրք ջարդեցինք բերդի տակը, որ էնոնց լեշերն ելան, դեզ-դեզ հավասարվան բերդի բուրջերուն, ու էդոնց վրեն ոուսի խաչի նշանը տնկեցինք...

Ադամ ամու պառաված աչքերը փայլում էին հիևավուրց վերարծարծված կրակով, կուրծքը պարզել էր առաջ, որի վրա խաչն ու մեդալը տոն էին տոնում ցնծուն զրնգոցով, կարմրել էին երեսն ու շրթունքները. ինքը տարված իրեն զրույցով ու ձայնով, քարշ էր տալիս իր հետևից հավատացող ու թերահավատ ունկնդիրների ուշն ու ուրուշը:

— Ընկեր Գալուստս, լուսհոգին, էստեղ զարկվավ, ես էլ վզիս վրեն ծանոտ վերք առա, մազ մնաց մեռնեի... Ա՛յ, էստեղ էր թրի կտրածը:

Ադամ ամին վիզն երկարեցրեց՝ վերքի տեղը մատով ցույց տալով, բայց մոտը նստողները չկարողացան գտնել կտրվածքի հետքերը, որովհետև ծերության խորշոմներով ծալ-ծալ պատած էր ամբողջ վիզը:

Ապա հանգեց խոսքի ավարտին.

— Լազարովն եկավ, ամենքիս ճակատը պաչեց ու խաչմեդալ տվավ. շատ զարմացավ, որ մենք ղարաբաղցի չէինք: Շատ ազգասեր, քաջ մարդ էր Լազարովը, ու խելքի ծով: Ղարաբաղցիք ամենքը էդպես են, էնոնց պորտը թրով է կտրած, մեր մարդը էնոնց քով էրեխա է, հավի ձագ, քա՜մի, վախկո՜տ...

— Սյունյաց աշխարհի մարդիկ միշտ քաջ ու արի են եղել,— վկայեց տիրացու Հովակը:

— Շա՜տ շիտակ է,— հաստատեց Ուստան նրանց կարծիքները,— էնոնք են իսկ հայ տղամարդ, ազգի պատիվը պահող ու խելոք, սատանի ձագեր են: Ես էնոնց լավ գիտեմ, մեջերը շա՜տ եմ էղեր:

— Թե որ ղարաբաղցուն էդքան գովք կենեք, հըպա ինչի՞, հետու լսողաց, հետու էս սուրբ հարկեն, ասեմ և ոչ ամաչեմ, էնոնց իշու հետ կնմանցնեն, էշ-ղարաբաղցի կըսեն,— նկատեց հյուրերից մեկը:

— Այո՛, զարմանալի է,— խոսք առավ Թաթոս վարժապետը,— ես էլ նրանց շա՜տ եմ տեսել, տեղից-տեղ խելքի կտոր են, այդ անունը իսկի չի սազում նրանց վրա. ուղղակի՛, ուղղակի՛ զարմանալի է, ես չեմ հասկանում...

— Զարմանքի բան չկա,— միջամտեց Պոտոս Տացուն, որ մինչև այդ լուռ էր,— ես էնպես կհասկանամ, թե խելքի պատճառով էդոնց էդ անունը կուտան, ընչու որ է՛ն խելացի մարդը էն է, որ իրան ախմախ կձևացնե, էդով ուրիշին մարդ ավելի լավ կխաբի: Հնուց խոսք է, թե՝ սուտ աղվես է էղեր, վանքի հավերը կուտե: Ի՞նչ ըսիր, Ուստա:

— Չէ՛, հիմի ես ըսեմ ձեզի,— խոսեց Ուստան,— ամենեն առաջ էն է, որ էդոնց աշխարքը շա՜տ էշ կա. տուն գլուխ մե քանի էշ ունի: Քարուտ-սարուտ տեղեր են, սել չի բանի, ամեն բան իշով կենեն: Էդոնց էշերը մեր աքլորներու գործը կտեսնին. իշու զռոցեն կիմանան օրվա կամ գիշերվա ո՞ր ժամն է: Ամեն գեղ հազար էշ ունի, էդ պատճառով էլ իրանց երկրի անունը «Խարաբաղ» է դրած. ընչո՛ւ որ՝ Ղարաբաղ՝ սև բաղ ըսել չէ, հըպա՝ էշի-բաղ: Գիտեք, որ ես Իրան—Թուրան շա՜տ եմ էղեր ու էնոնց լեզուն քչեն-շատեն կհասկնամ. Իրանա լեզվով «խար» էշ ըսել է:

Ուստան հաղթանակով նայեց հյուրերին, որոնցից մի քանիսը գոհունակ ժպտացին նրա բացատրության վրա, մի քանիսն էլ զարմացան նրա լեզվագիտության վրա:

— Հա՛, մեկ էլ որ,— շարունակեց Ուստան,— ղարաբաղցիք, շիտակը ըսած, խարաբաղցիք, շատ իրանց ասածի, համապաշտ մարդիկ են: Չես կրնա իմանա, էշերն են իրանց տիրոջներեն սորվեր էդ կամապաշտ բնութը, թե տերերն են էշերեն սորվեր... Ի՞նչդ հասկցնեմ ձեզի էդոնց կողքի ընկնելը. էդոնք որ, աստված մի՛ արասցե, կողքի ընկնին, օխթը լուծ գոմեշ լծես, իրանց տեղերեն չես կրնա ժաժել: Էնպես իրասածին են, որ ամառվան կեսօրին արևը սուտ կհանեն, էնոնց հետ որ վեճի մտնիս, էն գլխեն պտի իմանաս, որ սարերու ձունը սև դուրս պտի գա:

Ղարաբաղցին իրան գլուխը կկոտրե, խոսքը չի կոտրե: Որ մեկ բան ուզենա, դեմը բերդ չի դիմանա: Ա՛յ, լավ մի-

տըս ընկավ. մե պատմությունըմ պատմեմ, տեսեք էդոնց կողքի հաստությունը:

Դըր-Դոռանչի օրը, ըսել է մեր Տերնտազին, ղարաբաղցում հետ Սխտորաշեն գեղեն կերթայինք Զուռնապատ գեղը,— այս անուններուն վրա հյուրերի դեմքը ծիծաղով փայլեց,— մեկ էշ ես ունեի, մեկ էլ՝ ինքը: Ճամփեն կեռմաններով էր, ձեղ կածաններով, սարերու բանձրիկ լեռնեերով, մեկ տեղ էլ անդունդ-անհատակի պռունկով կերթայինք: Էս ղարաբաղցին էլ հենց պռունկով կերթար: Իրանց լեզվով ըսի.— Ատա՛, էդ ձորի պռնկավ գնալ մի՛:

Էն թե՝ խի՞:

Ըսի՝ վեր կըննկիս, կերթաս Ադամա կոշտը:

Էն էլ թե՝ պեն չինի. այսինքն՝ բան չի եղնի:

Ըսի. Հունց թա պեն չինի, ճանճ որ վեր քցես, լոխ մենձ տեղը անգուշը կմնա, ո՞ր մնաց թա մարդ:

Էն ձորեն թե՝ պեն չինի:

Էլի անդունդի պռունկով կերթար: Ես իմ խոսքիս վրեն կայնա, էն՝ իրան խոսքին. վեճը որ շատ տաքցավ, էն դառավ, ըսավ.

— Եկ մյառջ գյանք, լոք տանք, թա հյուր գլոխ կջարդըվի:

Այսինքն, թե՝ բյաս (գրավ) բռնենք, թռնենք, տեսնենք ո՞ւմ գլուխը կջարդվի:

Դե՛ հի, ես գլուխս Փոթոլենց խելոնոցը չէի գտեր, որ տուրը տայի:

Էն ձորեն ըսավ.— Թա դու վախես ես, ես թռնելական եմ. թա ես մեռա, իմ էշը քեզ, թա մեռա ոչ, քո: Էշը ինձ. խոսքս խոսք ա:

Ես խղճացի վրեն, մտքիս մեջ ըսի.— Էն ղարաբաղցի է, խոսքի տերն է, կքցե իրան, կմեռնի. հա՛մ տունը հաց տանող չի էղնի, հա՛մ ես աստծու առաջ սևերես կմնամ: Ըսի.— աբեր, հինչո՞ւ դու մեռնիս, թողըլական չեմ, քե՛ մատաղ, հոգի օձիմ աստծու տալացուկ: Եկ քու էշը վար քցինք. թա ողջ մնաց, իմ էշը քեզ, թա արևը քեզ տվավ, ասիլա, իմ խոսքս իլավ. դու էլ աստուծուդ փառք տու, որ քու տեղը էշդ ոտները տնկեց:

Է, թե՝ լյավ, թխի գյա:

Ձեռքը ձեռքիս զարկեց, կամք տվավ:

Երկուսով գլկեցինք էշը ու վար քցինք. խեղճ անասունը զռռալով գնաց ու էն զռռալն էր... կարելի է ողջ կտորը մենակ պոչը մնաց:

Տերն էլ կայներ-մնացեր էր շվար, քարի վրայեն վիզն երկնցուցած ձորն ի վար կաշեր: Էլ ձեն-ձուն չկար: Թևեն բռնեցի, քաշեցի մեկ դի, ըսի.— Տեսա՞ր, հունց իպատոս ի-լավ: Այսինքն թե՝ տեսա՞ր ոնց մեռավ...

Էն ի՞նչ ըսեր, որ քեֆերդ գա.

— Հի՞նչ խոսք,— ըսավ,— որ էշս էշ էր, ընտրա ըռենի պենը չէր թռնի, խելքը հասավ ոչ. թա ես ընկել էի, չէի մեռնե:

Կուզեր ըսել թե՝ ինչ խոսք, որ էշս էշ էր, էնոր բերնին չէր ընկեր՝ թռնի. թե ես ընկնեի, չէի մեռնի:

Էլ խոսքս չըսի նորեն փորձություն չենելու համար: Մըխիթարելով, տարա գեղը, «դուն ապրիս» խմցրի, սրտի մրմուռն առա:

Տեսա՞ք հիմի, ինչքան կողը հաստ են. մեկ խոսքով՝ ղարաբաղցու ըսածը ըսած է, կտրածը՝ երկաթ:

Ուստաճ վերջացրեց. բոլոր ներկաները քահ-քահ ծիծաղեցին:

Ապա Պոտոս Տացուն խոսքն ուղղեց բոլորին.

— Ես կըսեմ, բավական գիշեր էղավ, ելինք:

Բոլորը ոտի կանգնեցին և շնորհակալություն հայտնելով Մեծոյենց Մուկուչին, սրահ ելան:

Սանահայրը մի կապոց դրեց Ձավուշի թևի տակ:

— Էս ի՞նչ բան է, Մուկուչ ջան, փեշքեշ-նվերս ո՞րն է, ամո՞թ չէ, մեր տունն է. էս չեղավ,— նկատեց Ուստաճ:

— Չէ՛, քավոր ջան, հնութ սովորութ է, գիտես էլի, գըլխուդ մատաղ: Սանամոր փեշքեշներն են. վնաս չունի, քեզի ու Փիլոս ախպորս համար գուլպա է գործեր և էլ ուրիշ մանըր-մունր բաներ. թողություն էրա:

— Լա՛վ, լա՛վ, սանամորս ըսա, որ երկնուց գետին շընորհակալ ենք. թո՛ղ շուտ ոտքի կենա: Կիմանա՞ս, քեզի

հետ եմ,— և խորհրդավոր ժպիտով հարեց,— մեկ տարի էաօրս էլի քավոր եմ էստեղ: Ինձի ամոթով չենեք:

Մուկուչը ամոթխած հարսի նման կարմրեց, մինչդեռ փոքր եղբայրը՝ Հրագը ձեռքը, մինչև մեծ ճանապարհը առաջնորդեց կուշտ ու կուռ կերած պատվավոր հյուրերին, որոնք խոսելով ու զրուցելով սուզվեցին գյուղական աննլապտեր փողոցների բավիղում:

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ՀՈՎԻՎՆԵՐԻ ՄՈՏ

Ուստա Կարոն ձիու գլուխը ծռեց հարոսների միջով բարձրանալու Բլվկա Ծեյխի հովիվների մոտ: Մեղմիկ փըչում էր հովը լեռան լանջերից, սաւում էր՝ ծաղիկներն իրար տալով և անուշ բուրմունք սփռելով իր թևերը հպած տեղերում:

Կապույտ ամբողներն ու կարմիր պուտպուտները գիրկգրկի օրորվում էին, հորոտ-մորոտները քնքուշ աչքերով նայում էին մեկ-մեկու, խաս-կաքավները շորոր էին տալիս և լորերը ճովողելով թաքչում էին քարերի ետևը:

Կեսօրից անց նա հասավ ոչխարների փարախի մոտ, իջավ ձիուց, վայր բերեց խուրջինն ու յափունջին, պարանով կապեց ձիու առաջի ոտքերն ու բաց թողեց հարոսի մեջ:

Փարախը գտնվում էր Յաղլիճայի (Շիրակում) կողերի վրա, բամիներից պատսպարված լեռնագոգում, և չորս բոլորքը հսկա ժեռ քարերով պատ քաշած. երեկոյից մինչև լուսաստղը հոտը այստեղ էր հանգչում, հզոր, գայլեհեղդող գամփռների անքուն հսկողության տակ:

Ուստա Կարոն փարախի առաջ, դալարի վրա փռեց յափունջին և պառկեց. «Ուրտեղ հով-արև, էնտեղ էլ կփռեմ յափունջիս, դարդս ո՞րն է»,— խոսեց ինքն իրեն և մի պապիրոս շինելով՝ թիկն տվեց խուրջինի վրա:

Մի փոքր անց Ուստեն արդեն քնած էր: Երբ զարթնեց,

սարի հսկա ստվերը իր քողն էր ձգել ո՛չ միայն Ուստի, այլև ստորոտի գունագեղ հարոսների վրա: Արևը մերեմեր էր:

Նա կանգնեց փարախի պատի վրա և նայեց չորս դին.— «Ահաո, ոչխարը կուգա». և ուրախ-ուրախ դեմ գրնաց: Ոչխարները գլուխները կախ, դմակները օրորելով, ծովի պես շարժվում էին՝ ալիք-ալիք. այծերը թռչկոտում էին քարից-քար, առաջ վազում, իրար կոտշտում և քաղցր մկկում. հոտից բարձրացած փոշին ծածկել էր հովիվներին, որոնց բարձրագոչ «ը՛, ը՛, ը՛, ը՛,...» փովում էր հոտի վրա:

— Է՛հ, է՛յ, Մախսո՛, Հոչո՛, մա՛րհաբա, մա՛րհաբա, ես եմ, Ուստա Կարոն, գամփռներին խոսք հասկցրեք, ինձի չգզեն: Ուստի ձայնի վրա գամփռները միաբերան կատաղի հաչեցին և իսկույն լռեցին. հովիվներն հասկացրին նրանց, որ բարեկամ մարդ է եկողը: Ապա նրանք՝ հովիվները, ավելի հուժկու ձայնեցին. «Մա՛րհաբա, Ուստա, սար սարան, սար ճավան»: Եվ մոտեցան երկու հաղթանդամ քրդեր, արևաո, մերկ ու թավ կրծքերով, հաստագլուխ, երկայն մահակները ձեռքներին և ուրախ-ուրախ ասին,— «Բարո՛վ, Ուստա՛, բարով տեսանք, էդ լավ մեզի միտք բերիր». և մեկը բռնեց Ուստի աջ ձեռքը, մյուսը՝ ձախ: Այդ շրջանի քրդերը հայի պես հայերեն գիտեն:

— Ես ձեզի շա՛տ կսիրեմ, մատաղ ձեզի, թաո՛ւ, ես ե՞րբ կմոռնամ ձեզի,— ասավ Ուստեն, պինդ-պինդ սեղմելով նրանց ձեռքերը:

— Ուստեն լավ մարդ է, տարին քանիմ հեղ մեզի մարդու տեղ կդնե:

— Ի՞նչ կըսեք, օրթե կրնանամ, տղերք ջան, միշտ ձեզի հետ կըլնիմ. շա՛տ կսիրեմ ձեր օրն ու ձեր հոտը:

— Փեշքեշ է Ուստին մեր հոտը. Ուստեն մեր ազիզ բարեկամն է:

Ուստեն գլխով շնորհակալություն հայտնեց:

Ոչխարը մայելով մտավ փարախը. գամփռները մոտեցան Ուստին. քավեցին նրա չուխի փեշերին, հոտոտեցին, և ապա հեռացան, ցրվելով հոտի մեջ՝ ամեն մեկը իր տեղը:

Հովիվները հինգ հոգի էին. Մախսոն ու Հոչոն՝ գլխավորները. մնացածները՝ օգնականներ: Ամենքի ձախ ուսից մի-մի հրացան կար կախ արած, մեջքից՝ խանչալ, հաստ գոտիների մեջ հովվական սրինգ-բլուլը, և վրաները՝ երկու փաթ փամփուշտակալ:

Մախսոն ավագ հովիվն էր. մի երեսուն տարեկան տղամարդ, թուխ դեմքով, բազեի աչքերով. Հոչոն մի քսանհինգ տարեկան կլիներ, բարեձև, արծվաքիթ, մի սիրուն կտրիճ տղա, երազող աչքերով. մյուսները՝ տասնութ-քսան տարեկան, առողջ, հուժկու տղերք:

Նրանց միջից միայն Մախսոն էր ամուսնացած. կինը Բզովիկ գյուղումն էր ապրում: Հոչոն հարգանքով էր վերաբերվում Մախսոյին և իրրև իրենից մեծին՝ ծառայում ու հնազանդվում. փոքրերն էլ նույն վերաբերմունքը ունեին դեպի Հոչոն:

Ուստեն Մախսոյին և Հոչոյին աջ ու ձախ կողմն առնելով նստեց, և մի-մի պապիրոս փաթաթելով, հրամցրեց նրանց՝ ասելով.

— Կարոտցել էի ձեզի, տղերք ջան, աստված վկա, լա՛վ տղերք եք:

— Ո՛ղջ ընիս, Ուստա ջան,— պատասխանեց Մախսոն ծնկի գալով և աջ ձեռքը ճակատին տանելով.— մենք էլ քեզ էինք կարոտցել. մեր շեյխեն ետև մեր տեղի ամենեն լավ մարդը Ուստեն է. միշտ էլ մենք Ուստի խոսքը կենենք:

Ուստեն խուրջինից հանեց բերած նվերները—թյություն, մուշտուկ, չայ, շաքար, հայլի, սանդր, և տվեց Մախսոյին, որ բաժանե ընկերներին:

— Շյուբյո՛ւր, Ուստա ջան, էսոնք ավելորդ բաներ էին, հերվա տվածներդ չուր հիմի կան:

— Է՛հ, Մախսո ջան, բան ասա՛, բանի նման ընի:

— Ուստիս բախտեն էր, որ էսօր չորանքյաբաթի ունինք. Հասո՛, գնա, կրակը թեժցու, Մստո՛, դու էլ կաթ բեր, մածուն, սեր...

Հովիվները շատ ուրախ էին Ուստի գալով և ամեն կերպ ուզում էին նրան պատված լինել:

— Լա՛վ, լա՛վ, էլ բան կա՞, — ասավ Ուստեն, — առաջ մի չայ խմենք, ետև:

Հոչոն փարախի պատի տակ խարույկ վառեց, չայդանը դրեց վրան: Հովիվները ավելորդ ուտելիքներն ու իրերը պահում էին սովորաբար փարախի պատերի մեջ մի գաղտնի տեղում, իսկ ցերեկվա համար անհրաժեշտ բաները բարձում էին ջրի կուժերի հետ մեկ կամ երկու ավանակի վրա, որոնք հոտի հետ անբաժան շրջում էին:

— Քիրվա Ուստեն վաղո՞ւց է մեր շեյխի օջախը չի եղել, — հարցրեց Մախսոն:

— Գարունքը բացվելուն եղա. լավ պատվեց ինձի. շա՛տ լավ մարդ է շեյխը:

— Էլ խո՞սք կուզե. մեր շեյխի պես իմաստուն, և էլ լավ սիրտ ունեցող մարդ չկա ի վեր աշխարհիս. սուրբ է, սուրբ մեր շեյխը:

— Լոխմանեն շա՛տ բան գիտե մեր շեյխը, — հաստատեց Հոչոն:

— Քար ու քոհն համրանք կա, էնոր մալին՝ չկա, օխթը կոտ ոսկի ունի. չուրի աշխարքի վերջը աղքատությունն է՛լ էնոր չի կրնա խեղճցնե, — ասաց Մախսոն:

— Օրը հազար մարդ էնոր դուռը կտփե, — ավելացրեց Հոչոն, — էնոր սեղանը հեչ չի վերցվի. անցնողը կուտե, դարձողը կուտե:

— Էդպես է, շա՛տ հացով մարդ է, — հաստատեց Ուստեն, — էնոր տունը վանքի պես կգրռա:

— Էնիկ որ ջեննաթ չերթա, մա՛րդ չի էրթա, — վրա բերեց Մախսոն, որ, ասես, չէր հագենում իրենց շեյխի գովքն անելուց.— էնոր աղոթքը ամեն սրբի առաջ ընդունակ է. հերու մեկ օխթը տարվա անդամալուծ կնիկ բերին, շեյխը ձեռքը դրավ գլուխը թե չէ՝ էդ կնիկը ձեռաց ոտքի կայնավ, մորեն մեկ եղավ, խնդրլով վազեց-գնաց իրեն մարդու կուշտը:

Այսպես երկար ու բարակ, խորին հավատով, պատմում էին հովիվները շեյխի առաքինությունների և հրաշքների մասին, և Ուստեն էլ գլխով կամ խոսքով հավանություն էր տալիս:

Մինչ այդ, թեյը պատրաստ էր, և Ուստեն ախորժակով խմում էր ու սերը ուտում:

Արդեն մութը ծածկել էր Կամսարականների Բարձրավանդակը, և աստղերը մեկ-մեկ իրար ետևից թարթում էին անամպ երկնքից. խորունկ լռություն. անո՛ւշ-անո՛ւշ շնչում էին ոչխարները, երբեմն էլ, մոտիկի՞ց, թե՞ հեռվից, հնչում էր անտեսանելի հավքերի մրմունջը. սար ու քար, սեզ ու ծաղիկ անդորր քուն էին մտել, միայն լեռնային սլսլուն հովն էր անքուն:

— Մախսո՛ ջան, մեկ բլուղդ փչե, Հոչո՛ ջան, դուն էլ անուշ ձենովդ հետը գնա, ի՛նչ անմահական իրիկուն է. հո՛վ, զուլալ, մեռածը կողջանա:

— Գլխուս վրա,— ասավ Մախսոն:

Պարզունակ, հասարակ սրինգը թրթռում էր Մախսոյի շրթունքների վրա և սրտալի մեղեդին լեռների ծաղկաբույր հովի հետ շշվում էր ու գվգվում, ասես, սիրահար կաքավներն էին խոսում քարերի ետևից: Հոչոն գլուխն առած ափերի մեջ, աչքերը սևեռած գետին, և ձայնը դաշնակելով սրինգի գվգվոցի հետ, մի փոքր ժամանակ մեղմ, առանց բառերի դունդունում էր. ապա ձայնը բարձրացնելով, արծաթե զանգի պես անուշ երգեց.

Երկու սիրո՛ւն, սիրո՛ւն աչքեր
Ջաճել սիրտս բանձրացուցին.
Երկու սիրո՛ւն, սիրո՛ւն աչքեր
Ջաճել սիրտս փշուր արին:

— Ջա՛ն, ջա՛ն, սրտիդ մեռնիմ,— գոչեց Ուստեն զգացված.— ի՛նչ անուշ ձեն, ի՛նչ անուշ խոսքեր. մե՛կ էլ, մե՛կ էլ:

Հոչոն երգեց մի նոր կտոր.

Թաղած էի, բանդեցին,
Խաս թևերս փետեցին.
Շահ-մար էին աչքերդ՝
Փաթթված ինձ, խեթեցին:

Եվ ապա երկար ժամանակ առանց խոսքերի Հոչոն գը-

նում էր սրինգի հետ: Ոչխարների մի խումբ, գրավված քաղցր նվագով, կամաց-կամաց խոնվում էր մակաղի դռռանը. գամփռներից մի-երկուսն էլ եկան շարվեցին խարույկի մոտ: Մախսոն իրար ետևից նվագում էր մեկ՝ ոչխարը ջուրը քաշելը, մեկ՝ բըրե տանելը և ուրիշ քրդական սյարզ, սիրուն մեղեդիներ. ընկերները «թաո՜ւ, թաո՜ւ» ձայնակցելով, իրենց հիացքն էին հայտնում և ուշագրավ լսում իրենց սրտին հարազատ այս բուրալից երգերը, որ ամեն օր լսելով՝ նորից աննմա՜ն, հոգեթով էին...

Մախսոն վերջացրեց:

— Հազա՜ր ապրիս, Մախսո ջան, Հոչո ջան, հաստատ որ ձեր հատը չկա, անգի՜ն եք, անգի՛ն...

Եվ իսկապես, Ուստեն աներեղի գովք չէր անում. Ցաղլըճայի հովիվների մեջ Մախսոն առաջին բլուլ փչողի, իսկ Հոչոն անգերազանցելի դանկբեժի հոչակ ուներ:

Ուստեն պապիրոսներ հրամցրեց նրանց, և երեքով ըսկըսեցին լուռ ծխել: Հոչոն երազական աչքերը սուզել էր լեռնային քնքուշ խավարի մեջ. խարույկը զվարթ չըթչըթոցով վեր-վեր էր թռչում, և կարմիր լեզուները սլանում էին մութի մեջ:

Ուստեն նույնպես խորասուզվել էր:

Լռությունը խզեց Մախսոն.

— Ես կըսեմ՝ Ուստի սիրտը հիմի իրա մաև գալած աշխարքների վրաև է:

— Չէ, Մախսո՛ ջան, սիրտս հիմի մեկ ուրիշ նոր աշխարքի վրաև է:

— Քիրվա Ուստեն հլա էդ աշխարքը չի՞ եղել:

— Չէ, Մախսո՛ ջան, նոր միտք ունիմ երթալու:

— Բարով էրթաս, բարով գաս. էդ աշխարքը ո՞ր աշխարքի քովն է:

— Էդ աշխարքը...— միտքը հավաքելով ասաց Ուստեն— էդ աշխարքը—դաոն ու դժար աշխարք է. տղամարդ կուզեմ, որ էնտեղ ոտք կոխե. հազարեն մեկը ետ չի դառնա. արևոտ ճամփա եմ բռնել էս հեղին, տղե՛ք ջան...

— Աստված հետդ, Ուստա ջան,— կսկիծով ասաց Մախսոն:

— Ուստեն տղամարդ է,— ասաց Հոչոն,— մարդ պտի կտրիճ ըլնի. մեր քուրդը կըսե, թե՝ որձ ոչխարը խաճջալի համար է, տղամարդը՝ գյուղի:

— Ի՜նչ գովական խոսք,— բացականչեց Ուստեն, կըրկնելով Հոչոյի ասածը:

Լիալուսինը գաղտագողի երևաց լեռան թիկունքից և հանկարծ նայեց դաշտերի վրա. ստվերները դողդողացին և ձորերի ու ժայռերի տակ թաք կացան. դաշտերից դեպի լեռն էր սլանում գութանավորների առույգ հորովելը:

Մախսոն, քոլոզը ճակատին քաշած, դիտում էր լուսնի լուսով վառված Ուստա Կարոյի երեսը. նրան թվաց, թե Ուստեն տխուր է, և սրտանց ցավեց իր սիրելի քիրվայի վրա.

— Ուստա ջան, դարդ մի՛ ընե. դու խելոք մարդ ես, լավ գիտես, թե՝ ի՜նչ պըտի էնես. դու քարի տակ մնացողը չես:— Տղե՛րք,— բարձր գոչելով դիմեց փարախի մյուս կողմում նստած օգնականներին.— ես կըսեմ՝ քյաբաբը էփած կըլնի. հանե՛ք, տեսե՛ք:

Օգնական հովիվները մահակների վրա կապած բերին ոչխարի խանձված մի տիկ, լեփ-լեցուն, որից մի ան՛ուշ յողորշի էր բարձրանում. այս հովիվների ամենասիրած սորտիկն է. ոչխարը տիկ են հանում, միսը մանր-մանր յտրտելով, աղով ու համեմներով լցնում են տկի մեջ, թալում են գետնում, հողի բարակ շերտով ծածկում են և վրան աթար վառում. առավոտից մինչև երեկո, կամ երեկոից մինչև առավոտ աթարի շեղջը մարմանդ վառելով, խոթվում է միսը. ցերեկը իրենց բացակայությանը անթեղ և անում, որ պատահական անցորդները չնկատեն ու չըողանան:

Տիկը դրին Մախսոյի առաջը, որը մեծ դանակով ճեղեց փորի տակից, մի կտոր վերցրեց «համտես անելու».— ո՛, յամաո լավն է եղել. Ուստիս բախտեն էր:

Իսկույն պատրաստեցին ամեն բան. Մախսոն լավ պաուառները ընտրելով դրեց Ուստի առաջը:

— Ուստա՛ ջան, համեցե՛ք, էվել-պակաս ներող եղե՛ք:

Ուստա Կարոն խուրջինից հանեց արաղի շիշը և մոտեցրեց բերնին.

— Տղե՛րք ջան, ձեր կյանքի համար.— շեն-ուրախ սրտով ապրիք, ձեր մեկ լավը հազար դառնա, ձեր հազար չարը հեչ դառնա:

Եվ կլկլալ խմեց:

— Անո՛ւշներ, Ուստա՛,— ձայնեցին հովիվները:

— Անո՛ւշ մնաք,— ու դարձավ Ավագին.— Մախսո ջան, մեկ հատ էլ դու խմե:

— Չէ՛, Ուստա, գիտես, էլի, մեր օրենքը չի թողնի:

— Ի՞նչ ըսեմ ձեր օրենքին. փեղամբար Մահմեդը տղամարդ օրենք է դրել—կռիվ, աղջիկ, հյուրի-փերի. հըմա որ արաղ, գինի չի սիրել... էդ մեկը...

— Գինի խմող չի եղե, հըմա ղայֆա, շարբաթ շատ կըխմեր, կըսեն էնոր տեսնողները,— պաշտպանողական ջերմ շեշով ասաց Մախսոն:

— Դե՛ հ լավ, ամեն մարդ թող հաստատ մնա իր օրենքին:

— Հա՛ վալլահ,— միասին ասին Մախսոն ու Հոչոն:

Հովիվները, մեծ ու պստիկ, բոլորով մեկ հացի էին նստել. անհագաբար ուտում էին, սոխը մեծ-մեծ խածում և վրան պաղ ջուրը խմում: Գամփռները չորս արած աչքերով հետևում էին ընթրողների ձեռների շարժումներին, ասես, պատառներն են համրում:

Կուշտ ուտելուց հետո՝ Ուստեն բերանը սրբեց և ձեռքը մեկնելով Մախսոյին և մյուսներին, ասաց.

— Գոհանամ, շուքրիմ, շեն մնաք, սուփրեքդ լիքը կենան:

— Փեշքեշ է Ուստին. էդ մեզի մեծ բախտ է, որ դու մեր հացը կկտրես:

Անկեղծ սրտից էին բխած այս խոսքերը. Ուստեն մեծ անուն ուներ այդ շրջանի բրդերի ու եզիդիների մեջ, և ամենքն էլ հարգում և պատվում էին նրան:

Սեղանը վեր քաղեցին. Ուստեն ու Մախսոն թիկն տըված հանգիստ ծխում էին, հայացքները ուղղած աստղոտ երկնքի հեռուները:

Հազար-հազար աստղերը ոսկեղեն տոտիկներով ըզբոսնում էին փերուզյա հարոսներում. մի տաքարյուն աստղ սուսիկ-փուսիկ հետևում էր մի կապուտաչյա աստղիկի և երբ ուզեց բռնել նրա ոսկի մազերից, հանկարծ սայթեց և վայր ընկավ՝ մեղմիկ հառաչով:

— Ուստա, շա՛տ հեղ էսման աստղերուն աշելով, քուն կմտնիմ:

— Էսման ոսկե գողինքի մեջ, Մախսո ջան, մարդ անուշ քուն կըլնի:

— Ուստա ջան, էդ աստղերը մեր սհաթն է. տես՝ Բուլքը հասավ Կշեռքին, ըսել է՝ գիշերը կիսվեց:

Ուստեն նայեց ժամացույցին.— Հաստատ որ, Մախսո ջան, ի՛նչ խաս սհաթ է ձեր սհաթը. թագավորներն էլ էդ-մանը չունին:

Մախսոն ու Հոչոն ժպտացին:

Աստղերի անուններն տալով, Մախսոն կանգ առավ մի շողշողուն աստղի վրա:

— Ուստա ջան, ա՛յ էնտեղ, հեռո՛ւ, հեռո՛ւ—էն Լեյլին է, էնոր դիմացը—երկնքի մեկէլ ծերը—էն էլ Մեջլումն է. հեռվեն հեռու կարոտով իրար կաշեն: Հոչոյի պես դանկբեժ չկա: Էն լավ կըսե Լեյլի-Մեջլումի երգը, թե սըրտիդ խոշ է, ասե, ես էլ բլուլով ձեն բռնեմ:

— Ըբա, էլ ո՞ր օրվան կպահենք, էսօրվանեն լավ օր չըկա, ո՞վ գիտե, մեկ էլ ե՛րբ տեսնենք իրար. Հոչո ջան, ըսա, մեռնիմ ձենիդ:

Հոչոն քոլոզը թեքեց աջ ականջի վրա, գլուխն առավ ափերի մեջ, ձայնը մի քիչ ժամանակ ներդաշնակեց և ապա սկսեց երգը.

Կտրիճ Մեջլում քնավ, երազի մեջ տեսավ Լեյլիին.
Տեսավ, սեր տըվավ ու սեր առավ.
— Ա՛յ նանե-մերիկ, գլուխս կըդնեմ, կըբանձրցնեմ,
Դրախտի հյուրին երազիս կտեսնեմ.
Ա՛յ նանե-մերիկ, հալալ արա ինձի քու ծըծի կաթ,
Երթամ, աշխարհ ժուռ գամ, գտնեմ Լեյլին:
Ասավ Մեջլում, ասպասպ հագավ ու գնաց,
Գնա՛ց, գնա՛ց,
Բինգյոլի աղբուրի վրա հոգին վկայեց ու կանգ առավ:

Կեսգիշերին, մեջ-գիշերին
Հոչվոր եկավ Բինգյոլի սարը.
Հոչվոր եկավ, վրան զարկեց Բինգյոլի սարը:
Սիրուն Լեյլին քնավ, երազի մեջ տեսավ Մեջլումին,
Տեսավ, սեր տվավ ու սեր առավ:

Առավոտ բարի լուս բացվի ձեր վրա,
Առավոտ բարի լուս բացվավ Լեյլիի վրա.
Առավ կուժն ու գնաց աղբուրը ջրի,
Հոգին վկայեց ու եկավ Բինգյոլի աղբուրը ջրի:
— Ա'յ Մեջլում, բարև քեզ, ասավ Լեյլին:
— Հազար բարին քեզ, աչքիս վրա,
Սրտի սիրական Լեյլի:
Մեջլում նայեց Լեյլիին
Ու կանգնավ, մնաց.
Լեյլին նայեց Մեջլումին
Ու կանգնավ մնաց:
Լեյլիի աչքերը գիշերվա երկինք են՝
Արևներով վառ.
Լեյլիի մազերը աբրշումն առուներ են՝
Ծուփ-ծուփ կըթափվին
Մարմարե կրծքին...

Յոթն օր, յոթ գիշեր
Ոտքի վրա կանգնած էնոնք,
Էլի կիմանայինն, թե նոր են եկած:

Յոթն օր, յոթ գիշեր բոլորավ,
Լեյլին ասավ.
— Ա'յ Մեջլում, իմ սեր ու իմ սրտի տեր,
Ինձ հրաման տուր,
Մի կուժ ջուր տանեմ հորս վրանը,
Առավոտ էլի քու մոտը կուգամ:
Խոսքերը Լեյլիի բերնեն անուշ կըթափվեին՝
Շիրազի մեղրե գինուց գովական:
Լեյլիի մատները լուսնյակի շողեր են,—
Մնաս բարովի ձեռք տվավ Մեջլումին:
Մեջլում լացնց, ասավ.
— Լեյլի՛ ջան, Լեյլի ջա՛ն, է ջա՛ն, մի՛ գնա,
Ես քու սպանվածն եմ առանց վերքի.
Հեզի փեշքիշ կանեմ Հնդուլամանը
Մինչի Չինմաչին.

Լեյլի, քու հասակ ոսկի բուրջ է.
Մի սև խալ կա քու թըշի վրա,
Լեյլի՛, աշխի՛ղս Լեյլի, մի՛ գնա...
Լեյլիս ջուրն առավ ու գնաց,
Մեջլումի աչքը ետևեն քցած մնաց.
Ձեռքը ծոցիս մոլո՛ր, մոլո՛ր...

Լեյլիս գնա՛ց.— գնաց ի՛նչ տեսավ.
Հոր վրաններ բարձած՝ քոչվոր կերթան,
Լեյլիս գնաց հոր քոչի հետ:

Իմ վրա բարով անցնի աշնան խազալը,
Քու վրա բարով անցնի ձմռան ձուլը.
Իմ վրա բարով ծաղկի գարնան լալեն,
Քու վրա բարով ծաղկի գարնան վարդը:

Լեյլիս տեսավ գարնանը՝
Մի հավք վերև մաս կուգար.—
— Ա՛յ թռչուն, ասավ Լեյլիս,
Դուս կուգաս Սիփանա քարեն,
Քու ճամփեն կանցնի Բինգյոլի սարեն,
Մի հարցում տամ, պատասխան տուր.
Ձե՞ս իջել յարաբ Բինգյոլի աղբուրի վրեն,
Ձե՞ս տեսել Մեջլումիս Բինգյոլի աղբուրի վրեն:
— Ո՛վ խըճե—Լեյլի, ասավ հավքը երկնուց,
Ես կուգամ Սիփանա քարեն,
Իմ ճամփեն կանցնի Բինգյոլա սարեն,
Ես տեսա էնտեղ մի կտրիճ մեռած,
Միսը կերա, ոսկորներն իրար վրա ժողվեցի...

Լեյլիս ծամեր քանդեց,
Մոխիր լցավ ծամերու վրա,
Գնա՛ց, գնա՛ց Բինգյոլի աղբուրի վրա.
Տեսավ Մեջլումի ոսկորները ծաղկուձանց մեջ,
Կարմիր ու ճշխուն ծաղկուձանց մեջ:
Լաց լացեց, լաց լացեց ու մեռավ,
Տնավեր Մեջլումի ոսկորների վրա:
Աստծու հրամանով երկուսն էլ աստղ դառան,
Անմուրազ Մեջլում ու երազ-Լեյլիս

Երկինք թռաւ, աստղ դառաւ,
Մեկը շողաց հարավակողմ,
Մեկը՝ հյուսիսա:

Աստծու հրամանով տարին մեկ անգամ
Լեյլի ու Մեջլումի աստղերն իրար կուգան,
Կարոտ-ծարավ սրտով կփաթթվին իրար,
Պաչ կուտան ու պաչ կառնեն,
Նորեն իրարուց կհեռանան
Ու կերթան նորեն,
Լեյլին Մեջլումի տեղը,
Մեջլում՝ Լեյլիի,—
Լեյլին՝ հարավակողմ,
Մեջլում՝ հյուսիսա...

Երբ Հոչոն վերջացրեց, երազուն լռությունը թաթախել էր Ուստա Կարոյին ևնուշ վշտերի մեջ. և քնից աթափվածի պես ասաց.

— Պա՛հ, պա՛հ, պա՛հ, ի՞նչ լավն էր: Ապրի՛ս, Հոչո ջան, կտրի՛ճ ջան. հե՛յ գիտի Լեյլի-Մեջլում, մատաղ ձեր սերին, ձեր կարոտին:

Մի գիշերահավ ծղրտալով սահեց նրանց վրայից. թևերի բախումից օջախի կրակը սիրտ առավ, ասես, նրա հետ հեռուները թոչել էր ուզում: Հովը զարթնեցրել էր ծաղիկներին, որ հետները խաղա, հեքիաթներ պատմե, ու սեր փսփսա ոսկե ականջներին. անթառամը, վայրի մեխակն ու խնկածաղիկը զարթնել, անմահական քուրում էին:

Ուստի սիրտն էլ հովի և գիշերահավի հետ թռել էր անմահ Սանամի մոտ. տեսնում էր նրան—իր սրտի տերն ու սերը—լուսնկայի շողերի տակ, քառասուն ծամ մազերը ծովի պես փռած բարձին, և լուսաթաթախ կուրծքը, որ կըթրթռար աստղերի տակ, զույգ տատրակի պես...

Ուստի սիրտը ծփաց փոթորկված սիրո ալիքներով, թափահարեց գլուխը, և փափախը դեպի ծոծրակը շրջելով, դարձավ հովիվներին.

— Սերը երկնքի կրակ է. կրնամ ըսել, որ մարդու պըզտիկ աստված կըդարձնե. առանց սիրու աշխարքը չարժե

չիբուխիս ծխին... Մեկ լավ պատմություն միտքս եկավ, ըսեմ, լսե՛ք:

Հովիվները շարժվեցին իրենց տեղերի վրա և լարեցին լսելիքները:

— Հա՛... ես որ քարվանս կոլորտեի Հնդստանու կողմերը,— սկսեց Ուստեն,— մի երևելի բան տեսա. մեկ երկիր կոիվ էր գնացել թշնամու երկրի վրա. կոիվը քառսուն օր ու քառսուն գիշեր քաշեց. վերջը էն երկիրը, որտեղ ես էի էդ ժամանակ, հաղթեց մեկէլին. հըմա էնոր գլխավորը՝ մի կտրիճ տղա, վերջի սհաթում հանկարծ զարկվել էր. լուրն եկավ էդ երկրի քաղաքը, ուրախությունը փոխվավ սգի. մեկ էլ զորքը տխուր երգերով, սև դրոշակներով ծածկված բերին զարկված կտրիճին ու դրին քաղաքի մեջտեղը. ժողովուրդը չորս կողմը սուգ կապած կայնել էր:— Մեր գըլխավորը չի մեռել,—ասին մի քանի մարդիկ:— Չէ՛, չի մեռել, էնոր մահ չկա, էն անմեռ է,— գոռաց ժողովուրդը հազար տեղից:— Էնոր վրա գյուլլա չի բանի, էնոր ուշքը անցած կըլնի.— ըսին մեծամեծ մարդիկ, ու գութանի խոփը քցին կրակի մեջ, դառավ կաս-կարմիր. ետև դրին կտրիճի ոտքերու տակը՝ ժաժ չեկավ, դրին մեջքի վրա՝ ժաժ չեկավ: Ամենքը հույսերը կտրած լաց կուլային, չտեսնըված գառնագոչում եղավ, իմ սիրտս էլ բլավ, մարդ չէր կրնա տեսնել էդ կառնանչ կտրիճին ու քար կտրեր—մնար. Էդ լացի ձենը հասավ քաղքեն դուրս, քյոշքի մեջ նստած էնոր յարին. մեկ էլ ի՞նչ տեսնիք—մազերը քանդած մեկ հրեղեն աղջիկ լալով, գոռալով եկավ ու ընկավ իրեն սիրածի կրծքի վրա, բացեց վերքն ու պաչեց, պաչեց, ու երբ էնոր արտասուքները թափվան կտրիճի երեսին, մեկ էլ, հրաշք բան էր, հրաշք. որ միտքս կուգա, մազերս բիզ-բիզ կկայնին.— կտրիճը ժաժ եկավ, ձեռքն ու ոտքը կծկեց, աչքերը բացեց ու նստավ, գրկեց, պաչեց յարին ու ոտքի կայնավ, բանձր ձենեց.— Թուրս ո՞ւր է, ձիս ո՞ւր է, էստեղ տվե՛ք, թշնամին ո՞ւր է...

Ուստեն վերջացրեց:

— Հոը բա՛վ է, հոը բա՛վ է,— զարմանք կտրած միաբերան գոչեցին հովիվները:

— Ըբա՛, էդման բան է սերը, կտրիճը գյուղեն չի մեռնի. կտրիճ մարդուն մենակ կնիկը կրնա հա՛մ մեռցնել, հա՛մ էլ կյանք տալ,— կնքեց իր խոսքը Ուստեն:

— Էդպեսն է, ալլահ-վաքիլ,— ասաց Հոչոն:

Հոչոյի խոսքի վրա Մախսոն խոր հոգվոց քաշելով ասաց.

— Է՛յ գիտի աշխարք...

— Ի՞նչ կմտքես, Մախսո,— հարցրեց Ուստեն:

— Էն կմտքեմ, որ աշխարքը մարդու սրտի ուզածով պիտի ըլնի, որ լավ ըլնի:

— Ըսա՛, տեսնինք, սիրտդ ի՞նչ կուզե, Մախսո ջան, որ ըլնի,— հետաքրքրվեց Ուստեն:

— Ջիրվա ջան, սիրտս լավ բան կուզե. ես գեշ մարդ չեմ. սիրտս բարի բան կուզե. ա՛յ, Ուստես որ դո՛ւն ես, ես կուզեի, որ մեր շեյխի չափ հարուստ ըլնեի. զան վրանները զարկեի աղբուրներու գլխուն, սիրուն հարսները բռներս, լավ բլուլ փչողներ, լավ դաճկեժներ—սուփրիս վրեն. անցուդարձողին, օխտն օտարին դուռս բանայի, գայլին, ուտեին, խմեին երթային. էդորեն էլ վեր բան չեմ ուզե. գե՞շ կըլնի...

— Չէ, լավ բան կըլնի, Մախսո ջան, դարդըման տղա ես, ստատված սրտովդ քեզի տա: Դո՛ւ ինչ կուզես, կտրիճ ջան,— դարձավ Հոչոյին:

Հոչոն մի պահ լռեց, ապա աչքերը սևեռելով խարույկին, պատասխանեց.

— Ես էլ կուզեի ունենայի մեկ մենծ, շատ մենծ մկրատ, ոնց որ ոչխարը կխուզենք, էնպես էլ էդ մկրատի շեքերու մեջ դնեի ամեն-ամեն մարդոց գլուխն ու կտրեի...

— Պա՛հ, քու տունը չքանդվի,— վախեցած ասաց Ուստեն.— տո՛ր, Հոչո, աստված քեզի բարի տա, մարդիկ ի՞նչ մեղավոր են:

— Ես էլ էդման եմ,— կարճ կտրեց Հոչոն:

Ուստեն ուղղակի չէր հասկանում Հոչոյի լեզուն և զար-

մացած աչքերով չափում էր նրան. «Էս լոլոն չխելոի՞»,— մտածում էր ինքն իրեն:

— Ուստեն թո՛ղ չվախնա,— մեջ մտավ Մախսոն,— էս տարի մենծ զուլում եղավ Հոչոյին. իրան աչք քցած աղջըկան տարան, էդոր համար էլ գազազած է, արունք կուզե:

— Հա՛, որ տարան, ես էլ կուզեմ ամենքի գլուխը կըտրեմ:

— Ամենքի՞, հա՛րս, աղջի՛կ, ջա՛հել,— հարցրեց Ուստեն:

— Հա՛, ես յարի համար օխթը ձեր կմորթեմ, քառսուն ախպեր, ընչի՞ պըտի խղճամ ուրիշ մարդոց վրա:

— Տո՛, հալալ կաթնակեր, իմ գլուխս է՞լ կուզես կտրել, Մախսոյինն է՞լ:

Հոչոն գլուխը կախել լռել էր:

— Հոչո ջան,— ցավակցական ձայնով ասաց Ուստեն,— կհասկնամ, դժար է սիրու դարդ տանելը, հմա իգի՛թ եղիր. դու չգիտե՞ս, որ կնկա ճամփեն մեկ գրկեն մեկել գիրկն է. ի՞նչն է բոլ՝ աղջիկը, նորեն գտի՛, նորեն խնդա՛. բոլոզդ ծո՛ւռ դի, աշխարքը կտրիճինն է:

Մինչ այդ Հոչոն լռելյայն վեր կացավ, թաղիքե աբան վերցրեց և սուզվեց խավարի մեջ: Փարախի մյուս ծայրից դեռ երկար ժամանակ լսվում էին նրա բլուղի սրտակոտոր հառաչանքները:

— Խե՜ղճ Հոչո,— ասաց Մախսոն,— շա՜տ դարդ կենե. էնոր սիրտը փշուր եղավ. ախըր էն անաստվածի աղջիկը խոսք էր տվե:

— Մախսոյիս բանը. տո՛, կնկա խոսքին լսես, էդ մեկ է թե առվի մեջ ցորեն ցանես:

— Ի՜նչ տեղոք ըսիր, Ուստա ջան:

Սակայն Ուստեն համարյա չլսեց. նրա միտքը հիմա ո՞վ գիտե, որ ծովերի վրա էր... Երկուսով էլ լուռ էին: Այսպես անխոս անցավ մի ժամանակ: Ուստեն ասաց.

— Մախսո ջան, քնինք:

— Հա՛, Ուստա ջա՛ն, քարվան կտրող աստղն ելավ, քնինք:

Հովիվը փաթաթվեց իր թաղիքով, Ուստեն էլ իր յափունջով, և խարույկի մոտ պառկեցին քնելու: Ուստեն աչքերը ձգած աստղերին, նայում էր ու նայում, և երազական տարտամության մեջ, սուզվեց աստղերի ոսկեղեն գիրկը:

Գամփռները աչալուրջ թափառում էին հոտի մեջ կամ փարախի բոլորքը:

Երբ աստղերի քարավանները սարերն ի վար իջան, և լուսու աստղը ծայր տվեց, օգնականները զարթնեցին, խարույկի կրակը նորոգեցին և չայդանով ջուրը վրան դրին: Փչեց առավոտու զով քամին, իրար ետևից զարթնեցին հավքերն ու իրենց ներբողը ինչեցրին լույսի հրաշքին: Մախսոն և Ուստեն էլ զարթնեցին — մազ ու մորուք ամբողջապես թաթախված վաղորդյան ցողով:

Իրար «բարի լույս» ասելուց հետո, Ուստեն ավելացրեց.— Լա՛վ քնանք, երազիս մեջն էլ բլուլ կլսեի. Հոչոյի ձենը ականջս էր:

Շտապ-շտապ թեյ խմելուց հետո՝ օգնականները ոտքի կանգնեցին, ոչխարը փարախից արձակեցին, այծերն առաջ անցան: Արևը դեռ չէր ծագել, բայց աղոթարանը շառագունել էր:

— Տղե՛րք ջան, երթալու եղա, շե՛ն մնաք, ուրա՛խ, աստղված ձեր հոտը ցավե, չորե ազատ պահեե. հաստատ մնա Բլվկա շեյխի օջախը. կեցե՛ք բարով, բարո՛վ նորեն իրար տեսի արժանանանք:

Ասաց Ուստա Կարոն և ամենքի ձեռքը կսկուծ-կսկուծ սեղմելով, հեծավ ձին:

— Ուստա՛ ջան, ոտքդ բարի է,— գոչեց Մախսոն,— երբ սիրտդ կուզե, գլխներուս վրա տեղ ունիս, մեզի մտքեդ չհանես, ուր որ երթալու ես, աստված հետդ...

Ուստեն փափախը ճոճելով՝ ասպանդակեց ձին և շաղաղ սեզերի միջով լեռն ի վայր բռնեց Նախճվանի ճամփան:

ԳՅՈՒՄՐԵՑԻ ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Կապիտան Ղազարը կենսաթոշակի արժանացած, ռուս կայսերական բանակի հին սպա էր, պատերազմների մեջ եփված և բազմափորձ: Թեպետ յոթանասուն տարեկանից անց մի ծերունի էր, սակայն տակավին առույգ էր՝ հոգով և մարմնով: Ապացուցելու համար իր բազուկի ուժը, նա հուպ էր տալիս մի ափով միայն երիտասարդների ձեռքը և լուրջ ցավեցնում. թեև իր կտրիճ տարիքին՝ քարը սեղմելով միջից արյուն էր կաթեցնում, ինչպես վկայում էր ինքը:

Միջահասակ էր, բարեձև կազմվածքով: Քիթը՝ կոր, կըզակը՝ սուր: Քայլում էր ամուր և հաստատ, առանց ցուպի օգնության: Ձայնը հզոր էր և հնչուն: Եվ տեղն էր տակավին աչքերի լույսը, որը պղտորվում էր միայն երբ երգել էր տալիս իր իսկ ձայնակցությամբ այս հին սիրած երգը, որ հիշեցնում էր զինվորի զուրկ, չարքաշ կյանքը:

Այս երգը միշտ երգել էր նա կռվի և հաղթանակի օրերին. և երգում էր հիմա իր վերջացող օրերի երեկոյին.—

«Զինվորիս երգերը, եղբարք, լսեցեք,
Աշխարհիս բաները լավ մտածեցեք.
Մեկն ունի մեծ տներ, մյուսը գյուղ ունի,
Միայն խեղճ զինվորը ոչինչ բան չունի:—
Շորերը՝ թանկագին, փորը միշտ քաղցած,
Տուր ձիուն միշտ գարի, ինքդ կեր չոր հաց,
Թե քաջ պատերազմես, կտան քեզ պարգև,
Թե ոտքդ կորցնես, կասեն՝ մնաս բարև»,

Հագնում էր կազակի զգեստ սև մահուդից: Կուրծքը բազմաթիվ արծաթե մեդալներով և խաչերով զարդարված, մեջքին ոսկեզօծ գոտի, որից պետական հանդիսավոր օրերին կախում էր արծաթապատ դաշույնը: Դնում էր կազակի փափախ՝ բանվածքներով, երբեմն զինվորականի գլխարկ՝ կակարդով, կարմիր լայն երիզով:

Ղազար աղան, ինչպես գյումրեցիք սովորաբար կոչում

էին նրան, բարեկեցիկ վիճակ ուներ, զավակների և թոռների տեր: Ընտանեկան պարկեշտ անուն էր վայելում քաղաքի մեջ: Շատ ժամասեր էր ու աստվածավախ, բարի և աղքատախնամ: Հայրական մի ընդարձակ տուն ուներ մեծ և պարսպած պարտեզով: Իր սենյակը գնքերի փոքրիկ թանգարանի նման էր. պատերը ողջ ծածկված էին վայրի կենդանիների մորթիներով, որոնց որսացել էր իր իսկ ձեռքով Կովկասի ամեհի լեռներում, ռուսական անծայր դաշտերում, Լեհաստանում և Թուրքիայում:

Մորթիների վրա ներդաշնակ ձևերով ու խնամքով կախված էին մեծ քանակով՝ զանազան տեսակի և ոճի զենքեր՝ մանր ու խոշոր դաշույններ, սրեր, հրացաններ, փշտովներ, կարաբինաներ, որոնց յուրաքանչյուրը իր հատուկ փառավոր պատմությունն ուներ՝ իրավունքով ձեռք բերած Բելբութովի պատերազմին, Շամիլի և Վարշավայի կռիվներին:

Իր նստած թախտի տակ կար մի երկաթյա արկղ, ուր աչքի լույսի պես պահվում էին թագավորից և փոխարքայից ստացած գովեստի և գերազանցության թղթերը, իր խաչերի և մեդալների վկայականները, մուրհակներ, պահեստի դրամ և իր կենսաթոշակի տետրակները,— որոնց մեջ գրված էր արքայական գանձարանից ամսե ամիս ըստացած թոշակը, իբրև արդար հատուցումն իր արժանավոր զինվորական ծառայության «հանուն հայրենիքի, թագավորի և հավատի»: Առավոտ վաղ զարթնում էր Ղազար աղան, մի երկու կանոն Սաղմոս էր քաղում, մի-երկու գլուխ Նարեկ էր կարդում, ապա գնում եկեղեցի: Այնտեղ՝ հատուկ իր գորգի վրա կանգնած՝ ձայնակցում էր տերտերների և տիրացուների բոլոր ժամասացություններին՝ գոց, անվրեպ կերպով:

Եվ հետո ժամի դուռը կուչ եկած աղքատներին ողորմություն տալով՝ դառնում էր տուն և սկսում պարտեզում աշխատել, ուր հասցնում էր ծաղիկներ ու բանջարներ և մի քանի պտղաբեր ծառեր—բալ, կեռաս, տանձ և խնձոր:

Կեսօրվա հանգստից հետո շարունակում էր պարտեզի աշխատանքը: Ապա իր մշտապես ընտրած փողոցներով

գնում էր տասնյակ տարիներից ի վեր իր հաճախած սրճարանը, որ սովորական ժամադրավայրն էր ժամանակն անցած, տարիքավոր մարդկանց: Նրանք հավաքվում էին այնտեղ վերստին ասելու և վերստին լսելու իրենց կյանքի դիպվածներն ու դրվագները, որոնց վերհիշումը կախարդական զորություն ուներ վերապրեցնելու անդարձ թռած քաղցր երիտասարդությունը...

Երեկոյան ժամի զանգերը լսելուն պես՝ Ղազար աղան կտրում էր իսկույն իր կամ ընկերների խոսքի թելը, շտապում էր եկեղեցի, ապա նորից տուն, անպայման տանելով հետը մի թաշկինակ լեցուն մրգերով իր սիրելի գերդաստանի մեծի ու պստիկների համար:

Այսպես էր կապիտան Ղազարի ամեներօրյա կյանքը՝ անխախտ, բանուկ ժամացույցի նման, ժամը՝ ժամին, վայրկյանը՝ վայրկյանին:

ՂԱԶԱՐ ԱՂԱՅԻ ՏՈՀՄԸ, ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԳԱՂԹԸ

Ղազար աղայի Մալխազյանց ազնվական տոհմը Տուրուբերան աշխարհից էր: Բերանացի ավանդությունների համաձայն՝ Մալխազյանց ընտանիքը անմիջական շարունակությունն էր հինավուրց Խոռխոռունի իշխանական տան՝ սերված Հայկ Նահապետի Խոռ որդուց, որ ապա Վաղարշակ թագավորի օրով Խոռխոռունի Մալխազը նրա թիկնապահն եղավ, դարեդար ժառանգելով այդ մեծ պաշտոնը:

Եվ իսկապես էլ, Մալխազենք ունեին Խոռխոռունյաց գավառում ընդարձակ հողեր: Նրանց սեփական Խոռանց մեծ գյուղը հին դարերից ի վեր շինված էր Սիփանա ծաղկոտ լանջերին: Մալխազենց բերդի նման հին տունը կառուցված էր երկու ձորաբերանի ժայռերի վրա, որոնց աղբյուրները գոչգոչալով իջնում-թափվում էին մոտիկը փռված Վանա կապույտ ծովակի մեջ:

Այնքան հարուստ է եղել Ղազար աղայի հայրը՝ Մալխազ աղան, այնքան հարուստ, որ փաշաներն ու վալիները ոսկի էին պարտ առնում նրանից: Դրանց չվճարված մուր-

հակները, մինչև օրս՝ հիշատակի համար պահում էր Ղազար աղաև երկաթյա արկղի մեջ: Մալխազ աղայի մի չոր խոսքի վրա Էրզրումից քարավաններով ապրանք էր գալիս-թափվում նրա դուռը:

Սիփանա արոտները ծածկված էին Մալխազենց տեսակ-տեսակ ձիերի երամակներով, ոչխարների հոտերով, տավարների նախիրներով: Ոչխարները կթում էին սարերի գլուխը և այնտեղից կավե խողովակներով կաթը աղբյուրի պես հոսում էր մինչև Մալխազի տունը և լցնում հսկա տաշտերը՝ պանիր ու յուղ շինելու համար:

Ամեն տարի տասը մեծ կարաս գինի՝ բերանները կընքած՝ ետ էին դրվում անձեռնամուխ պահվելով, քառասուն տարուց հետո բացվելու համար: Նրա ծառաներին, աղախիններին, հովիվներին, այգեպաններին ու մշակներին թիվ ու համար չկար: Աշխարհ բանում էր նրա համար ու աշխարհ ուտում էր նրա հացը:

Մալխազ աղաև տան մոտ մի հյուրանոց—խան էր շինել ճամփորդների, անցնող ու դարձողների համար: Հարուստ ու աղքատ, ամեն լեզվի ու հավատի մարդ, իջնում էր այնտեղ, օրերով իրենց կողքին պառկում, ուտում-խմում. ամենքը իրենց պատվի համաձայն շահվում ու խնամվում և շարունակում էին իրենց ճանապարհը. անուններն հարցնող չկար, համրանքը պահող չկար:

Հինգաչքանի մի ջրաղաց օր ու գիշեր ցորեն էր աղում այդ մեծ տան պետքին բավելու համար. ձիթահանքն էլ իրեն կարգին:

Ղազարը՝ Մալխազ աղայի միահատիկ անդրանիկ զավակը ծնվել է 1826 թվին, հունվարի 12-ին, ինչպես վկայում է տոհմական ձեռագիր հին Նարեկը, որի հիշատակարանի մեջ նշանակված է ընտանեկան այս մեծ դեպքը:

Այդ տարին ծերերի կողմից չտեսնված ու չլսված ցուրտ է եղել. այնպես ցուրտ, որ թուքը գետին չէր հասնում, ձրկները սառել են Վանա ծովի մեջ և անտառի ծառերը այրող ցրտից վառվել ու բոցին են տվել:

«Էդ տարին,— ինչպես պատմում էր Ղազար աղաև ծերակողներից լսածը,— էդ տարին բոլոր ծնված երեխաները

մեռել են հայ, թուրք, քուրդ: Մնացել եմ մենակ ես, մենակ ես: Խոսքը մեր աշխարհի մասին է, ուրիշ տեղի ծնվածներ կան, պատահել եմ:

Զարմանք բան չկա, թե որ պատճառն իմանաք, ինչու որ ամեն բան պատճառ ունի, բացի միայն անպատճառ աստվածութունեն, ու դրա համար էլ աստված անպատճառ կա, խոսք ու վեճ չի վերցնի, հավատով խոստովանիմ:

Ծնվելես օրթն օր հետո, մկրտության սուրբ խորհուրդը կատարելու ժամանակ, հայրս հրամայել է, որ ինձ եռման ջրի մեջ մկրտեն, ու անունս էլ դրել է Ղազարոս: Հիմի, համբերեցեք, կիմանաք թե ինչու համար: Հա՛, ժամի դռան առջևն էլ բերել կուտա սառույցը վրան կապած մեկ տաշտով ջուր: Մկրտութունեն ետո, հայրս ականթոթափելի, ինքն իր ձեռքով կառնի ինձի, մորե մերկ, ու սառույցը կոտրելով ձեռաց կկոխե ջրի մեջ. եռման ջրեն սառը ջրի մեջ, գլխո՞ւ եք: Կկոխե ասելով, «Թե ապրավ, կնշանակե, Ղազարոսի պես հարություն առավ. թե մեռավ, աստված ողորմի անմեղ հոգուն»:

Էսպես սառը ջրի մեջ թողնելով մեկ պահ, հետո կհանե ինձի կաս կապույտ դառած, շունչ կենդանի...

Ուրախացած կգոչե լուսահոգի հայրս, «Տղաս անունը վայելեց. Ղազարոս հարյավ ի մեռելոց. տղաս դառավ ջանփողաղ, պողպատիկ, վրան թուր ու արճիճ պիտի չըբանի»:

Հորես օրինակ առնելով մեր հողի ժողովուրդը՝ հայ, թուրք, քուրդ, էդ տարին իրենց նորածինները ամենքը մեռցրին, որը եռման ջրի մեջ, որը՝ սառը ջրի մեջ: Չդիմացան էդ անմեղ հոգիները: Էդ պատճառով էլ ես մնացի մենակ էդ տարվա ծիներեն, ու էդպիսով էլ նրանց կատարելիք քաջությունները ես մենակս կատարեցի:

Ո՛վ հայեր, չլինի թե դուք էլ ձեր երեխաների գլուխն էդ տորձն անեք, փորձանք կլինի, իմ բանս ուրիշ էր:

Ողորմածիկ հայրս, որ իմաստուն մարդ էր, ինձի հետո ասավ՝ թե պողպատիկությունս հիսուն տարեկան ժամանակըս անցնելու է: Ինչ որ անելու եմ, մինչև էդ տարին անելու եմ: Էդ թվեն դենը հասարակ մահկանացու պիտի լի-

նեմ ու ափսո՜ս, էդպես էլ եղավ... Հիմի հասկացաք հորս միտքը: Ոնց որ դարբինները տաք երկաթը ջուրը կմխեն պողպատ շինելու համար, էնպես էլ հայրս դարձուց ինձի մուխ տված երկաթ. ու էդ պատճառով էր, որ ամեն կռիվներու մեջ վրաս ճանճերու պես գնդակ ու թուր կթափեին ու բրդի կծիկներու պես ետ կդառնային՝ մենակ ինգուսու մաղ-մաղ ծակելով: Միայն կայծակը, երկնքի թուրը, վրաս կրնար բանի: Թե որ զարկվեի, կայծակին պիտի զարկվեի, ինչու որ պողպատը կայծակը իրան կքաշե»:

Եվ Ղազար աղան մինչև հիսուն տարեկանը կայծակից լուրջ վախ ուներ: Երբ երկինքը ամպոտում էր ու որոտում, նա փախչում էր ու պահվում տան կենտրոնի մութ սենյակը և վերմակների ներքև կծկվում: Միայն հիսուն տարեկանից հետո այդ վախը թուլացավ, բայց իսպառ չանցավ:

Մի անգամ նույնիսկ նա ակներև մահից ազատվեց, որի համար միշտ այդ տարեդարձին մի գառ մատաղ էր անում:

Այսպես պատահեց: Դաղստանում, երկնքին կպած լեռների մեջ, Իմամ Շամիլի դեմ կռվելիս, հանկարծ ամպերից ընկնում է ահավոր կայծակը, ուղիղ Ղազար աղայի վրա: Ղազարը վայրկյան ու գլուխը չկորցրած փախչում է, վագում, կայծակն էլ ետևից, ինքը փախչում է, կայծակն էլ ետևից, կրնկկոխ, մի թիզաչափ հեռու միայն, որ նույնիսկ այրում է Ղազար աղայի փափախը: Հազիվ խեղճը իրեն մրգում է մի խոր քարայրի մեջ, իսկ կայծակը դիպչում է մայռին փշուր-փշուր անելով մայռ-ապառաժը:

Մանուկ Ղազարի մկրտության այսպես հաջող երթի համար Մալիսազ աղան մեծ կոչունք է տալիս հազար մարդու—հայի, թուրքի, քուրդի, որոնք գալիս են մեծամեծ երվերներով ու արմաղաններով, բերում են նժույգ-ձիեր, թանկարժեք գորգեր, քերմանշալներ, ոսկե և արծաթե իրեր...

Այդ օրը հազար հավկիթ են կոտրում ձվածեղի համար, երեսուն եզ են մորթում, հարյուր ոչխար, երեք հարյուր հավ, մի տաշտ աղ ու պղպեղ են բաևեցնում, հինգ կարաս արդար յուղ: Բրինձը, հացը և մնացած բաներն էլ ամեն ոք կարող է իր մտքի մեջ ամբողջացնել՝ լրիվ պատկեր ան-

նելու համար: Գինին ու օղին... այն էլ աղբյուրի պես հոսել է հարբեցնելով գյուղ ու քաղաք:

Երբ ռուսները 1828—1829 թվերին արշավեցին թուրքերի վրա, հաղթեցին Սուլթանին և գրավեցին Կարսն ու Էրզրումը, Մալխազ աղան իր քաջերով միացած էր ռուսներին՝ փափագելով, որ քրիստոնյա թագավորի հովանին տարածվի հայոց աշխարհի վրա: Բայց երբ Անգլիայի պահանջով ռուսը ստիպված եղավ ետ տալ գրավված հողերը, Մալխազ աղան էլ հարկադրված եղավ, հազարավոր հայերի հետ, ռուս զորքի հետ գաղթել, որովհետև օգնելով ռուս թագավորին վատամարդ էր եղել Սուլթանի աչքին և վախենում էր Սուլթանի վրեժից:

Այսպես, Մալխազ աղան լքեց իր ծով-հարստությունը, պապական հողերը և առնելով իր ընտանիքը, ձիերի և տավարի հազիվ մի մասը ու միայն ու միայն մի գոմեշի տիկով ոսկի, փախավ եկավ Գյումրի, հող գնեց՝ տուն շինեց, պարտեզ տնկեց և ընդմիշտ հաստատվեց այնտեղ:

Ռուսաց պետությունը, ճանաչելով թեև Մալխազենց ազնվականությունը և գրելով նրանց ընտանիքի անդամների անունները ազնվականների Ոսկե Գրքի մեջ, սակայն պատշաճ վավերաթղթերի չգոյության պատճառով, չընդունեց նրանց հայկազն Խոռխոռունի իշխան լինելը, որով Մալխազենց տունը պիտի հանդիսանար աշխարհի ամենահին տունը չորս հազար տարվա հնությամբ, ռուս ազգից չորս անգամ հին: Ո՞ր թագավորը այդ կհանդուրժեր...

Մալխազ աղան մի կողմից դժգոհ է, որ թողել է հայրենիքը և իշխանական վիճակը, բայց մյուս կողմից էլ գոհ էր, որ քրիստոնյա թագավորի ձեռքի տակ անարգել, միշտ լսում է հայոց եկեղեցու զանգերի հրեշտակային ձայնը, որ դարերից ի վեր պատմանված էր մահմեդական տերության մեջ:

Այդ ժամանակները մանուկ Ղազարը վեց-յոթ տարեկան էր: Երբ դարձավ տասը տարեկան, հայրը առավ տարավ նրան Թիֆլիս, տվեց ազնվականների դպրոցը, որպեսզի ուսում առնի զինվորական դառնա, կռվի ու մեռնի հայրենիքի համար:

Ղազարը տասնհինգը տարեկան էր, երբ փայլուն կերպով ավարտեց գիմնազիական դպրոցը: Եվ ինչպես երիտասարդ, գեղեցիկ ու մանավանդ ազնվական տան որդի, փոխարքա—նամեստնիկը նրան առավ իր շքախմբի մեջ, իբրև իրեն թիկնապահ:

Ժառանգական ուժերի ի՞նչ գաղտնի խորհուրդ կար այս երևույթի մեջ, որ Վաղարշակ արքայի թիկնապահ՝ Մալխազի թոռը երկու հազար տարի հետո դառնում էր փոխարքայի թիկնապահ: Բայց ի՞նչ զարմանալու բան կա, քանի որ մի անգամ ջուր գնացած տեղից վերստին ջուր կերթա, և ծառը հազարավոր տարիներից հետո նույն պտուղներն են տալիս: Եվ թիկնապահ դառնալով Ղազարը իր նախահայրերի պես հավատարիմ էր ու քաջ, զենքի մեջ վարժ ու հմուտ: Մասնակից էր նա, իբրև թիկնապահ՝ պալատական բոլոր հանդեսներին ու պարերին, արքայական որսորդություններին և ճանապարհորդություններին:

Այդ ժամանակները մի մեծ տոնի առթիվ, Կովկասի հին սովորույթի համաձայն, պալատի առջև մեծ հրապարակի վրա ձիարշավ տեղի ունեցավ և ջիրիդ խաղ:

Այստեղ էր, որ երիտասարդ սպա Ղազարը ցույց տվեց առաջին անգամ իր շնորհքն ու քաջությունը: Նա շքեղ հագնված՝ հեծել էր նժույգը՝ սերված պապական ազնիվ ձիերի արյունից:

Նամեստնիկն ու իր տիկինը՝ իշխաններով ու գեներալներով և սրանց զարդարված կանանցով շրջապատված՝ բազմել էին պալատի պատշգամբում:

Մեկ էլ... նշան տրվեց ու մրցողները ձիերը շարժման մեջ դրին:

Մրցողների մեջ կային շատ ազնվատոհմ երիտասարդներ, բայց ամենից առավել աչքի էին ընկնում երեք հոգի, թե իրենց թանկագին հագուստներով, թե իրենց ընտիր նըժույգներով: Մեկը վրաց գահազուրկ թագավորի տղան էր, որ նույնպես ռուսական զինվորական պաշտոնի մեջ էր, մյուսը Իրանի շահի քառասուն կանանցից մեկի տղան էր, որ հյուր էր եկել Թիֆլիս՝ փոխարքայի մոտ, իհարկե պե-

տական մի գաղտնի հանձնարարությամբ, իսկ երրորդը՝ Ղազարն էր, Խոռխոռուկյաց տոհմի պայազատը:

Մրցակիցները դեռ իրար ասպարեզ չէին հրավիրել, երբ պարսիկ արքայազնը՝ հակառակ ընդունված կանոնին, հանկարծակի ջիրիդի ձողը թափով նետեց Ղազարի վրա: Բոլորովին միամիտ էր Ղազարը, սակայն իր բախտից ձողը վրիպեց:

Ղազարը միանգամայն պաղարյուն կերպով ձայնեց հրապարակով մեկ.

— Շահզադե՛, դու հյուր ես, պատիվդ պահեցի:

Արքայազնը գոռոզաբար խնդաց քթի տակ, և նորից նետեց: Այս անգամ էլ վրիպեց: Ղազարը ուժգին գոչեց.

— Շահզադե՛, ներողություն խնդրե:

Շահզադեն ներողություն չխնդրեց:

Հայ սպան նորից գոչեց.

— Շահի տղա՛, էս անգամ կխնայեմ քեզ ու միայն փափախդ կթոցնեմ:

Ասելն ու ձողը նետելն ու փափախը թոցնելը մեկ եղավ: Հանդիսականները ապշած մնացին: Արքայազնը վիրավորվեց ու սաստիկ կատաղեց, ձին լարեց Ղազարի ետևից և ձողը նետեց: Ղազարը ակնթարթում իր ձժույգի փորի տակն անցավ: Ձողը թռավ ձժույգի վրայով: Ղազարը փորի տակից ձին քշելով, բռնեց սուրացող ջիրիդաձողը՝ տակավին գետին չընկած, ապա հուժկու ձայնով գոռաց.

— Ա՛յ շահի տղա, մեղք ես, ներողություն խնդրե:

Շահզադեն համառեց:

Ղազարը թե՝ «այս անգամ էլ կխղճամ ծաղիկ կյանքիդ ու ձիուդ ականջը կթոցնեմ»:

Եվ լարեց ձողը, ձիու ականջի մի մասը պոկ եկավ ու թռավ: Հանդիսականները այս անգամ չհամբերեցին ու ծափ տվին: Արքայազնը խայտառակված՝ ավելի և ավելի գրգռվեց ու զայրացավ, ձին քշեց հետու, մինչև հրապարակի ծայրը և այնտեղից լցված՝ բաց թողեց, մոտեցավ, շատ մոտեցավ Ղազարին և ձողը նետեց. վերջինս թռավ կանգնեց ձիու վրա և ձողը իրեն մոտեցած վայրկյանին այնպես

ճարպկորեն բռնեց, ոնց որ մարդ թռչող ճանճը կբռնի: Հանդիսականների վրա ջուր մաղվեց, շնչերը կտրած սպասում էին դեպքի զարգացմանը... Հայ ազնվականը այս անգամ, առանց խոսք ասելու ձողը խաղցրեց գլխի վերևը և այն է պիտի հետեր, որ նամեստնիկն ու տիկինը թաշկինակները ճոճեցին ձայն տալով.

— Լազար, Մալխազով, բավակա՞ն է, բավակա՞ն է...

Ղազարի ձեռքը թուլացավ, ձողն ընկավ գետին: Փոխարքան կանչեց նրան իր մոտ.—«Ապրի՛ս, կտրիճ, ասաց, քո վեհանձնության համար այս մեդալը հիշատակ-ընկեր»... Եվ մեդալը ուզեց փակցնել հայ քաջի կրծքին: Նամեստնիկի տիկինը քաղցր ժպիտով իր կրծքի վրայից հանեց գրնդասեղը և իր ձեռքով ամրացրեց ժապավենը...

Ղազարը հուզված համբուրեց մեծ տիկնոջ և փոխարքայի ձեռքը, ապա խոնարհ ու համեստ կանգնեց նրանց սպասին:

ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ ՊԱՏԺԵՒՄ Է ԻՐ ՀԱՅՐԵՆԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Ղազար աղան կեսօրից անց՝ նստել էր Համիպատի սրճարանում իր մշտական տեղը: Աջ կողքին իր հին ընկերն էր՝ ֆելդշեր Գալուստը, որն իբրև զինվորական բժշկի օգնական, ներկա էր Դաղստանի կռիվներին և Ղազար աղայի քաջ գործերից շատերը տեսել էր իր սեփական աչքերով:

Ֆելդշեր Գալուստը մի փոքրաճասակ, վտիտ ծերուկ էր, հակառակ կապիտան Ղազարի՝ մոլի խմող ու ծխող: Մատներն ու մորուքը ծխելուց կարմրա-դեղին գույն էին ստացել:

Սրճարանը լի էր մարդկանցով: Ավելորդ, տեղի ու անտեղի խոսակցություններով բռնված էր մթնոլորտը, որը միաժամանակ հագեցած էր սրճի հոտով, ծխի մշուշով:

Սրճարանը ներս մտավ Ուստա Կարոն, դարբին ուստա Մացակի և Չավուշի հետ: Դարբին Մացակը Ուստա Կարոյին ներկայացրեց Ղազար աղային:

— Ղազար աղա,— ասաց նա,— խնդրեմ ճանաչեք եղեք

երևելի վարպետ Ուստա Կարոյի հետ: Քու անունդ շատ է լսել, ուզեց քեզի տեսնի:

Ղազար աղան ծանրությամբ ձեռքը մեկնեց.

— Բարով եք եկել, ո՞րտեղացի եք:

— Ղարսա Նախճվանի գեղը կնստիմ: Ինչպես ուստա Մացակ ախպերս ասավ, շատ մենձ փափագ ունեի հրամանքիդ տեսնելու:

— Ի՞նչ բանի վարպետ ես:

— Տուն կշինեմ,— պատասխանեց Ուստա Կարոն:

— Վնաս չունի, վնաս չունի—լավ բան է. աշխարհաշեն գործ է: Աստված է՛լ ավելի շնորհք տա:

Ուստա Կարոն զննեց Ղազար աղային—ճերմակել էին իգիթ կապիտանի ոչ միայն գլխի նոսր մազերն ու բեղ-մորուքը, այլև հոնքերը:

«Հե՛յ վախ,— մտքի մեջ հառաչեց Ուստան,— կրակը գնացել է, մոխիրն է մնացել»:

Սրճարանի սպասավորը ձախ ափի մեջ իրար վրա դարսած կթխաները շարեց հյուրերի առջև և սուրճ լցնելով ասաց.

— Ուստա Գաբրելից:

Ուստա Մացակը աչքերը պտտեցրեց սրճարանի չորս կողմը և գտնելով հյուրասիրող ուստա Գաբրելին գլխով շնորհակալության նշան արավ:

— Ղազար աղա,— դիմեց ուստա Մացակը,— վարպետ Ուստա Կարոն շատ կփափագի քու պատմություններեն մեկ-երկու բան լսել, շատ կխնդրվինք:

Ղազար աղան չլսել ձևացավ:

Ուրիշներն էլ միջամտեցին թախանձելով.

— Ղազար աղա, մեր օտար հյուրի պատիվը մի՛ կոտրի, մենք էլ կխնդրվինք. մի քիչ կյանքիդ պատմություններն արա, մենք էլ լսենք, օրն անցնի, էրթանք տներս...

Ղազար աղան էլ ներս հոգով-սրտով այդ էր ուզում: Սիրում էր իր արկածները պատմել, նորից-նորից, հազար անգամ, որովհետև անգիտակից կերպով զգում էր, որ երբ պատմում է իր կյանքի վեպը՝ կամաց-կամաց ետ է գալիս անցյալը, դառնում է այսօրվա օր, իրական, ապրող ներկա

կյանք: Լսում է վառոդի հոտն առած ու գրգռված ձիերի խրխինջը, նրանց ամբակների դափն ու դոփյունը, փողերի և թմբուկների ռազմիկ, ոգևորիչ ձայնը: Տեսնում է ու լսում թնդանոթների կրակն ու որոտը: Սրճարանը դաշտային միկիտան է դառնում, ունկնդիրները՝ զինվորներ: Զգում է, որ իր մարմինը նորից պողպատանում է, արյունը եռ է գալիս պրկված երակների մեջ և սիրտը պատերազմի թմբուկի պես զարկվում է ու դղրդում... Եվ բազուկը տանում է թրին, թեև թուրը սենյակի պատից էր կախված...

Սակայն մի պահ նազ արեց, որ նորից խնդրեին:

— Ի՞նչ պատմեմ, գիտեք, շատ անգամ եմ պատմել, ձանձն ելել է: Ուրիշ բան խոսենք:

— Ղազար աղա, հարմը չի ելել: Քու պատմություններն ամեն օրվա հացի պես են, որ մարդ միշտ կուտե ու չի զզվի: Պատմե, կշտանալիք չունինք:

— Ո՞րը պատմեմ, ի՞նչը պատմեմ. էնքան շատ են,— մտածկոտ ասաց Ղազար աղան, ինքն իր հետ խոսելով, սակայն որոնելով մի կենտրոնական թել, որից սկսեր բանալ իր պատմությունների կծիկը:

— Գլխեն պատմե, Ղազար աղա, իրիկվան զանգերին դեռ ժամանակ շատ կա,— կրկին թախանձեցին:

— Ժամանակ շատ կա,— հանստատեց Ղազար աղան՝ ձևի համար իր ժամացույցին նայելով ու շտկվեց նստած տեղում:

Ուստա Կարոն սուրճ ու թեյ պատվիրեց բերել բոլոր ներկա եղողների համար:

Սրճի կթխաները և թեյի բաժակները նորոգվեցին, չիբուխներն ու ծխամորճները սկսեցին կայծի տալ, տամայի և նարդու խաղերը դադար առան:

Կապիտան Ղազարը մի սուրճ ևս խմելուց հետո սրբեց բեղերը և կծիկը բացեց:

— Կտրիճ երիտասարդ էի, դեռ երեսուն տարեկան չեղած, որ էն խորամանկ Անգլիան, աշխարքի անառակ Ֆրանսիան ու քսակ կտրող Իտալիան միաբանած քրիստոնեից թշնամի Սուլթանի հետ պատերազմ բացին մեր թագավորի, Նիկոլայ Պաբլովիչի դեմ: Կռվի մեկ ծերը Ղրիմու

վրա էր, մեկէլ ծերը մեր քաղքեն բռնած: Նամեստնիկը Թիֆլիզեն ելավ եկավ Գյումրի: Ես էլ հետն էի: Ծնողներուս օրհնությունն առած՝ կսպասեի հրամանի: Մեկ գիշեր էլ հրամանը տվին, մեր զորքն անցավ Արփաչայը, մտավ թուրքի հողը: Մեր գեներալն էր հայազգի իշխան Բեյբութովը: Նամեստնիկը մնաց մեր քաղքի բերդը: Ես ձիավոր էի ու հարյուրապետ: Թուրքի զորքը՝ շատ խառնիխուռն էր. բաշի-բոզուկ, Ղասապ-Թաբուրի, ևնիչարի, ջիլո զելքեկ, արաբ, չերքեզ, չաչան, առնավուտ ու իրենք թուրքերը և էլ քրդերը: Թրի ու թնդանոթի բերան տված՝ քշեցինք նրանց, ժողվեցինք Քյուրակ-դարա ու Քյադիկլար, ու ջարդեցինք, փրթեցինք, էնպես որ մեկ տարի բոլոր դրանց լեշերի վրա ագռավները մրջյուններու պես կբանեին ու իրենց բները էնտեղ էին շինել...

Եկանք հասանք Ղարսա բերդի առաջը ու կանգ առանք: Դուք գիտեք՝ որ Ղարսա բերդը անառիկ է. հիմի որ անգլիչանի ու ֆրանցուզի խելքով ու հնարքով էլ անառիկ դառած:

Մարդու միսը թուրքի կողմն էր, փողն ու կովի վարպետությունները էդ անամոթ եվրոպացիներու կողմը: Էդ պատճառով էլ էս կռիվը շատ երկար քաշեց, երկու-երեք տարի:

Էսպես Ղարսա առաջն էինք, ձմեռը վրա հասավ: Ի՜նչ ձմեռ—սուր ածելի. ձեռք ու ոտք կտրեր-կթափեր: Բայց, գիտեք, ես ի՜նչ դիմացկուն տղա էի. ճիշտ որ ջանփոլադ. երկաթ-հոգի—ողորմած հոգի հայրս էն սկիզբեն գլխուս ճարը տեսել էր: Արմանք-զարմանք բաներ կանեի. բոլոր զորքի բերանն էր անունս: Թուրքերն էին, որ անունս դրել էին «Ջանփոլադ», տեսնելով, որ իրանց ծանր ու սուր յաթաղաններով, երբ կզարնեին ինձի, միս ու ոսկորներս պողպատի պես «չը՜խկ» ձեռ կուտային ու արյուն չէր կաթի: Էս չընկ ձեռով բռնված էր կովի դաշտը—ամեն կողմը—չլսող մարդ չէր մնացել: Ինձ որ կտեսնեին բոռալով կփախնեին.— ամա՜ն եկավ Ջանփոլադը:

Ես էլ փափախս կքաշեի ականջներուս վրա ու ինձ կըքցեի փախչող թշնամու ետևը, զարկ, որ կզարկես, թուրս

կտաքանար ու կծովեր. ես նորեն նոր ուժ կառնեի ու կսըրվեի. ի՞նչ անենք, թե թուրս բութ էր դառել:

Ա՜խ, չեք գիտի թե էս ձեռքս ինչքան ուժով էր,— ափսոսանքով ցույց տվեց Ղազար աղան աջ բազուկը.— մեկ զարկով գլուխ կթռցնեի, մարդը պանիրի պես կկիսեի...

Էնպես եղավ, որ երբ կռիվ կլիներ, դեմս էլ մարդ չէի տեսնի... Ստիպված եղա հագուստս փոխել, սոլդատի շինել հագնել, որ ասկյարները չիմանային՝ թե ես եմ: Բայց կարճ ժամանակ հետո նորեն գլխի կընկնեին էդ անիրավները...

Իրիկուն կլիներ, ետ դառնալու փողը կփչեր, լագըր կդառնայինք: Բոլոր սոլդատներն ու խազախները մեռելի պես կփովեին կրակի շուրջը:

Լագըրի մեջ շատ տեղ մեծ-մեծ օջախներ կային վառած, որ զինվորները տաքնային,—չմոռնաք որ ձմեռ էր,— տակառներով էլ արաղ կար Էս ու էն դին: Ես կրակին իսկի չէի մոտենա. կերթայի արաղը ջրի պես կխմեի, կուտեի ինչ որ ձեռս ընկներ, ու յափունջիս փաթաթված՝ սառած գետնի վրա կպառկեի: Գիշերը ծարավցած ժամանակս կելնեի, սառույցը կկոտրեի, ջուրը կքաշեի գլուխս ու նորեն կքնեի, ոնց որ բմբուլներու վրա լինեի, տաք սենյակի մեջ: Թե արաղի, թե իմ արունի տաքությունեն գիշերը բոլոր՝ վրայես շոգին կելներ. քիչ կպատահեր, որ յափունջուս վրա սառույց բռներ կամ բեղերես սառույց կախվեր...

Շատերը հիվանդացան ու մեռան, կրնամ ասել, որ հրով ու թրով էնքան զինվոր չմեռան, ինչքան հիվանդություններեն: Ես իսկի չհիվանդացա. գլխու ցավն ինչ է՝ չունեցա. ոչ թե մենակ էս կռվին, հապա բոլոր գալիք մյուս կռիվներին էլ: Կյանքիս մեջ միայն մեկ անգամ հիվանդ պառկա, էն էլ մեր տան մեջ, լավ կերած, լավ խմած: Տիֆով էի բռնվել, դոխտուրները ձեռք էին քաշած եղել ինձեն, հույսերը կտրած: Էդ գիշերը ծարավ-պապակ՝ ծածուկ փախել եմ անկողնեն, մտել եմ մեր մառանը, մորս դրած թուրշինն (թթու) կուշտ-կուշտ խմել եմ,— ու էդ առավոտը մորեն նոր ծնված՝ ողջ առողջ ոտքի եմ կանգնել, գիտես թե իսկի բան պատահած չի եղել հետս:

Հա՛, էն կասեի, որ Ղարսը առնելու գործը երկարացավ: Մեր գեներալները խորհրդի նստան, ու էն միտքը դուրս բերին թե՝ բերդը շուտով առնելու ճարը բերդի տակը գըտնըվող վառոդի ամբարը տրաքացնելն է. համ ճամփա բանալու համար, համ թշնամուն սարսափեցնելու համար:

Հիմի ո՞վ էր էն խելառ կտրիճը, որ գլուխը փեշը դներ՝ էրթար: Ես էի էդ խելառը: Մեջ ընկա, ասի թե՝ կերթամ:

Կնյազ Բեյբութովը ճայեց աչքերիս մեջ, կուզեր ասել, թե՝ «Մեկուճար ես, ափսոս ես»: Ես էլ իրան աչքերու մեջ ճայեցի, ասել կուզեի թե՝ «Ինձի փառքից մի զրկիր»...

Վերջապես, ինչ երկար գլուխ ցավցնեմ, գիշերը ծածուկ, մենակ ճամփա ընկա, ոչխարի սև մորթին վրաս քցած, տեղն եկած ժամանակը չորս թաթ կերթայի, որ ղարաղուլները (պահակ) իմանային, թե՛ անասուն կլինի էրթացողը. մեկ խոսքով՝ հոգիս բերանս առած՝ գնացի...

Լույսը չբացված՝ երկինքը բոցով լցվավ, աշխարք՝ դըղըրդոցով. ամբարը տրաքեցրի...

Ասկյար, փաշա՝ փախչող-փախչողի: Կեսօր չեղած բերդի վրա էինք. բերդի մեջ եղած անգլիչան, ջիլո-միլո ավլեցինք, թափեցինք բերդի պատերեն ցած, Ղարսա ջուրը սրբեց տարավ:

Իրիկունը Բեյբութովը լալով գրկեց ինձի, ճակատս պաչեց ասելով. «Մեր զորքի պարծանք, ասա ի՞նչ կուզես»: Ես էլ ասի. «Ուզածս եղավ, բերդն առանք, էլ բան չեմ ուզե»: Առջևս թափեց խաչերն ու մեդալները թե՝ որը կուզես՝ առ, բոլորն առ: Ես էլ ասի թե՝ օրենքի կարգով տուր, աստիճանիս հարմար: Էս խաչերն ու մեդալները ինքը տըվավ, տեսեք՝ վրան գրած է՝ «Քաջության համար. 1855 թվին»:

Եվ Ղազար աղան՝ ոգևորված կրծքին զարկելով ցույց տվեց շքանշանները, մեկ-մեկ նայելով հանդիսականների աչքերին, ապա շարունակեց խոսքի թելը:

— Գարունը նոր էր բացվել: Իշխան Բեյբութովը ինձի մեկ գաղտնի նամակով շտապ ղրկեց Նամեստնիկի մոտ, Գյումրի քաղաքը: Գնալ գալու համար երկու օր միջոց տըվավ: Ձիս նստա ու թռա:

Մշկոներու մոտ ձիուս ոտներն ընկան մեկ քանի գաղթական հայեր: Մեկ մարդ ու կնիկ լացով ասին թե՝ քրդերը իրենց լուսի պես աղջիկը փախցրին տարան: Ու ցույց տըվին տարած կողմը: Էլ չմտածեցի պաշտոնիս մասին, նորեն թռա: Մութը կոխեց. ի՜նչ մութ—սև ձուխ, մատը աչքդ կոխեին, չէիր տեսնի: Մեկ ոտքս ձիու վրա, մեկէլը գետնին՝ ականջս դրած հողին, կլսեի աղջիկ փախցնող քրդերի ոտքի ձենը—հեռու, հեռվանց:

Ձիս կրակ ու քրտինք մտած՝ կանգնեցրի Հուխլուի ավերակ կարմունջի վրա:

Տեսած կաք, ի՞նչ խոսք, մեր նախնյաց շինած էդ զարմանալի կարմունջը՝ մեջը դարդակ, կամարակապ, իջևան տուն: Ձիս թողեցի դուրը, ես ներս մտա: Շատվոր շնչի ձեն առա, խոմփոցներ, նրանց մեջեն երեխայի պես մեկ անուշ շունչ: Էս է, հայի աղջիկն է, մտածեցի, ու կամաց-կամաց մոտեցա, մատներովս երեսը շփեցի, տեսա, հայի աղջիկն էր: Երկու քուրդ փռել էին յափունջին աղջկա վըրա. իրանք պառկել էին յափունջու վրա երկու կողմեն: Էնպես, որ աղջիկը չէր կրնա ժաժ գալ յափունջու տակը. ո՞ր մնաց ելներ ու փախներ:

Մտածեցի սպանեմ քրդերին, աղջիկը առնեմ, վախեցա, որ նրանց ձեներն մեկէլները զարթնեն, կուվի բռնվինք, մութի մեջ խեղճ աղջիկը զարկվի:

Հնար մտածեցի. խանջալովս յափունջին երկու կողմեն կամացուկ կտրեցի, աղջիկը հանեցի մեջերեն, առա ձիուս վրա: Լույսը չճեղքված հասցրի հորն ու մորը: Նրանց օրհնանքն առած՝ եկա հասա Գյումրի նամեստնիկի մոտ ու նամեստնիկի պատասխան նամակն էլ առած՝ քերի տվի Բեյբութովին, որոշված ժամանակին, վայրկյանը վայրկյանին:

Էստեղ էն տխուր բանը պիտի ասեմ որ,—ձայնը իջեցնելով, հառաչանքով ասաց Ղազար աղան,— մեր քաջությունները զուր անցան: Ավազակ, խալտառակ եվրոպացիք պահանջ դրին, պայման կապեցին ու մեր կովով առած հողերը նորեն ետ տվինք Սուլթանին... Ղազար աղան մի պահ լռեց: Ուստա Կարոն կրկին սուրճ հրամցրեց նրան,

խմեց, հանգստացավ, ապա մի նոր պատմության գլուխ սկսեց:

Սա արդեն նրա սովորույթն էր. երբ նա մի անգամ բաց էր թողնում պատմությունների կծիկը, այլևս հակառակ իր կամքին, գլորվում էր, գլորվում էր կծիկը, մինչև որ մի արտաքին հանգամանք առաջը կտրեր:

— Էս պատմությունս էլ,— շիտկվեց դեպի Ուստա Կարոն, կարծես միայն նրա համար էր պատմում իր զրույցը,— էս անմոռանալի պատմությունս էլ էն ժամանակվա համար է, երբ Դաղստանի Իմամ Շամիլը Կավկազի բարձր սարերու ծերին թառած՝ գլուխ էր բռնել մեր թագավորի դեմ, հարկ չէր տալիս, չէր հնազանդում ու Սուլթանի հետ էր իրեն սիրտն ու գործը:

Նամեստնիկը, Ղարսա կռվեն հետո, ինձի հետը նորեն Թիֆլիզ էր տարել. ինձի իրեն հարազատ տղայի պես կսիրեր, պալատի մեջ փակ դուռ չկար առջևս:

Հիմի որ կռիվ սկսավ, կանչեց մեջքիս զարկեց, ասավ,— «Քեզի տեսնիմ, Լազար, էս անգամ կապիտան պիտի դառնաս»:

Էսպես գնացինք Դաղստան կռվի:

Շատ դժվար էր էս կռիվը, քանի որ Դաղստան ասածդ—սարեր ու ձորերու մեկ թընջուկ, քեզի օրինակ: Առաջըդ բաց դաշտ չկար, որ թշնամուդ բրդեիր, հապա՝ սար ու քար, անդունդ ու անտառ, գազաններու բուն: Ելիր, իջիր, վա՜յ թե ոտքդ դուրս պրծներ, մինչի անդունդը մերիկ կանչելով պիտի էրթայիր: Մեր ռուսի սոլդաթն էլ՝ դաշտ ու դուրանի մարդ, սարը տեսներ ամպ կկարծեր, ձորը տեսներ՝ ջուր ու գետ: Էս ամեն պակասն էլ կլրացնեին իրանք՝ Շամիլի իգիթ զինվորները—չաչան, լեզգի, չարքյազ՝ անվախ, անահ, մահեն երես չդարձնող սրբած թրեր...

Արի ու էս կռվեն գլուխ հանե: Թնդանոթը կտրաքեցնեինք՝ կերթար կդիպչեր ապառաժներուն. թշնամու տեղ վայրի հավքերն ու անասունները ծակ ու ծուկերեն փախ կուտային, կթռնեին...

Մեկ էլ հանկարծ, սատանան գիտի, որտեղերեն Շամիլի զորքի ղափաղլուի մեծ-մեծ գնդակները կարկուտի պես վրա-

ներս կթափվեին: Չորս դին կնայենք՝ մարդ-մուրդ չէր երեվա... կերթային մութն ու ծմակ անտառներու մեջ կկորեին: Ո՞ւմ հետը կովեիր—ծառներու, քարերու, թե՞ հավքերու հետ:

Էստեղ, վրաս չխնդաք, որ ասեմ թե՝ շատ անգամ կովի ժամանակ մորուքս մեր պոլկի համար օրացույց դարձավ: Էս էլ գիտենալու է, որ հիմի է մորուք կպահեմ ծերությանս պատվի համար: Առաջ աստծու իրան օրը թրաշ կանեի: Բայց կովին սար ու ձորերու մեջ, ազատ ժամ ու միջո՞ց կար թրաշի—ամենևին: Մորուքս երեսիս վրա երկու-երեք մատ հաստությամբ կնստեր: Ընկերներս կհարցնեին— «Մաղխազով, էսօր ամսու քանիսն ենք, ի՞նչ օր է»:

Ես էլ ձեռքովս կշփեի երեսս, ճիշտ ու ճիշտ օրը, թիվը կասեի, ինչու որ մորուքիս հաստ ու բարակ, կարճ ու երկեն մազը ժամանակի աստիճանը ցույց կուտար: Միտքս էի պահում վերջին թրաշիս օրն ու ամսաթիվը, ու հիմի ավելացնելով էդ թրաշից հետո անցած օրերը, որ ինչպես ասի՝ մորուքս ցույց կուտար, մտքիս մեջ կհաշվեի ու անսխալ կիմանայի, թե ինչ ժամանակի մեջ կգտնվեինք:

Շատ անգամ նամեստնիկը խնդալով կհարցներ. «Էյ, Լալազար, օրացույցդ ի՞նչ նշանց կուտա»:

Կշփեի մորուքս ու ձեռաց կասեի, խոսքի օրինակ. «Ձերդ մեծություն, էսօր սեպտեմբերի ութն է, օրը հինգշաբթի»: Ու մորուքս շատ տերտերներեն ավելի շիտակ ցույց կուտար:

Ասելիքս էս չէր, հապա էն, որ նամեստնիկը իրան կուտեր, որովհետև ամոթ էր ողջ աշխարքի առաջ, թե ռուսաց զորքը, անգլիչանին ու ֆրանցուզին ծակը մտցնող ռուսաց զորքը, հիմի անճար մնացել է էս սարերու վայրենիներու դիմաց:

Էստեղ չմոռանամ ասել, որ էս կովի միջոցին առաջին հեղ ծանոթացա Գալուստ ախպորս հետ, որ դոխտուրի մոտ ֆելդշեր էր,—գլուխը թեթևակի թեքելով դեպի ֆելդշեր Գալուստը,—բայց դոխտուրեն շատ բան կհասկնար ու շատ գործ կտեսներ: Մեկ քաղաքից էինք, լավ բարեկամացանք, ախպեր դառանք:

Ուսկնդիրներից ոմանք Ուստա Կարոյի հետ հայացքները ուղղեցին դեպի ծերունի ֆելդշերը, որը համեստությամբ գլուխը կախեց և սկսեց դողդոջ մատներով ծխախոտ փաթաթել:

Նամեստնիկի հետ կելնեինք սարերու գլուխը թշնամու տեղը գտնելու համար: Ինքը դյուրբին (հեռադիտակ) կը-դներ աչքերին ու կնայեր: «Մալխազով, կասեր ինձի, ես էն սարի լանջին զինված մարդիկ կտեսնեմ, դուն ի՞նչ կասես»: Ես էլ ձեռքս ճակատիս՝ աչքերիս վրա դրած՝ կը-նայեի ու կասեի—«Ձերդ մեծություն, ներող եղիր, տեսածդ շիտակ չէ, ոչխարի հոտ է երևացողը»:

Ու վերջը միշտ իմ խոսքս կըլլեր:

Էսպեսով էր, որ իմ աչքիս զորությունը փրկեց պատերազմը ու մեզի հաղթություն բերեց: Խոսքիս լավ ականջ դրեք, ամենեն լավ տեղն ենք պատմությանս:

Ես, որ արծվի պես մեկ աչքս էս սարի վրա էր, մեկէլ աչքս էն սարի, մեկ օր իրիկվան դեմ տեսա, որ հեռվեն թշնամու շատ զորք կուգար մեր վրա:

Հաշվեցի, տեսա, թե որ մենք էստեղ մնանք, նրանք պիտի վրա տան մեզի, չորս կողմեն փաթթեն, հում-հում պիտի ուտեն մեզի: Նորեն հաշվեցի, տեսա, թե որ մենք վրա տանք, առավոտ չեղած՝ նրանց կբռնենք ձորի մեջ, մենք՝ վերև, իրենք՝ ներքև, ուղղակի հալած արճիճի տակ նրանց կխեղդենք: Կնշանակե՝ զորքը պիտի առաջ քշել: Բայց զորքը առանց նամեստնիկի հրամանի տեղեն չի շարժվի: Իսկ թե նամեստնիկին ասեմ, ժողովի պիտի ևրս-տին, տեսածիս չպիտի հավատան, եկողն էլ գիշեր է, որ իրենք տեսնեին. թե որ հավատան էլ, պիտի քննեն, խո-սեն, վիճեն, ժամանակ պիտի կորի, բաներս բուրդ պիտի դառնա: Վճռեցի գործս ինքնագլուխ տեսնեմ: Հենց որ նա-մեստնիկը քուն մտավ, ես ձիս առանց թամբի ու առանց սանձի հեծա, որ տեսնողը համոզվեր թե շիտակ վռազ էի: Լագըրի մեկ ծայրեն մյուս ծայրը վազեցի գոռալով—«Նա-մեստնիկը հրաման տվավ ինձի, որ զորքը տանեմ. ելեք, հագնվեք, շուտ, շուտ». ամենքը մեկ վայրկյանի մեջ ոտքի ելան, ձիավոր ու ոտավոր, կազմ ու պատրաստ:

Զորքի գեներալները ինձի հարցրին— «Ո՞ւր պիտի երթանք»:

Ես չուզեցի ճշմարիտն ասեմ. գաղտնիք պահելը հաջողության էն սկիզբն է ու կեսը: Էսպես պատասխան տվի.— Ձիբուխիս ծուխը ուր որ կերթա, ետևեն արեք:

Ես հիմի ծուխ չեմ քաշի. առաջ չիբուխս բերնես վար չէր ընկնի: Բայց քանի տարիքս առա ու պողպատությունս էլ անցավ, ծուխն ու խումը թողեցի: Ծերությունը հանաք բան չիմանաք: Նապոլեոն մեծն էլ, ինչպես ուսումնարանի մեջ կարդացել էի, որ հարյուր պատերազմների մեջ եղավ ու իսկի վերք չունեցավ. (կարծեմ որ ինքն էլ պողպատված էր). բայց որ ծերացավ, փորի ցավեն ընկավ մեռավ: Ժամանակի խարտոցը ամեն բան կուտե. պողպատ էլ չի դիմանա, ժայռ-ապառաժ էլ:

Զորքը բոլորը ինձի հնազանդվեցավ: Սուտ հրամանի հանելուս մարդ չկասկածեց. քանի որ բոլորին հայտնի էր, որ նամեստնիկը ամենեն շատ ինձի կսիրեր ու կհավատար: Առանց հրամանի ներս ու դուրս կանեի, մինչև իսկ իրան քնած սենյակը կմտնեի ու կզարթնեցնեի: Ու մանավանդ որ՝ նրա գրած ու բերանացի հրամանները գեներալներին ես կհայտնեի: Մեկ էլ որ ամեն մարդ գիտեր, թե որ սուտ խոսեի, ասել կուզեմ, սուտ հրամանս տայի, նամեստնիկը գլուխս պիտի կտրել տար, թեկուզ ինձ հոր պես կսիրեր. Ես օրենք է պատերազմի:

Ես էլ մտածեցի. թող փրկեմ զորքը, թող գլուխս կըտրեն: Մեկ օր եղել եմ՝ մեկ օր էլ պիտի մեռնիմ, բայց անմահ անուն կթողնեմ, հորս ու մեր քաղաքի համար հավիտենական փառք ու պարծանք:

Զորքի գլուխն անցած կերթայի: Վա՜յ թե ձիս չհնազանդեր ու գլուխն առներ, փախներ. պապիս ձիերը հրեղեն էին ու կատաղած: Ծնկներովս էնպես կսղմեի փորին, որ շունչը կկտրեր, կանգ կառներ...

Հա՜, զորքի գլուխն անցած էսպես կերգեի.

«Խմենք պիտի, պարենք պիտի,
Երբ մահը գա, մեռնենք պիտի,

Հայրենիքի պատվի սիրուն
Զարկենք պիտի, մեռնենք պիտի...»:

Էսպես կերգեի, ու ժամանակ-ժամանակ էնպես կիմանայի, թե մահի կերթամ... Էս մտքերու մեջն էի, երբ հասա ուզածս տեղը՝ Դարգո, Սալավաթ սարերու տակը: Զորքս շարեցի կովի համար ու սպասեցի: Մեկ էլ ձորը լցվավ Շամիլի զորքերով: Նրանք միամիտ էին, մեզի չէին տեսել:

Օրվա լույսի հետ կրակ ու բոց բացինք: Ի՜նչ կռիվ, ի՜նչ կրակ: Բոլոր տեսած կռիվներս սրա քով՝ խաղկնելիք: Շաչաններն ու լեզգիները առյուծի պես կկովեին, գայլի պես կոռնային: Մերոնք էլ պակաս առյուծներ չէին: Մենակ վախն էն էր, որ նրանք շատվոր էին, սարի ու ձորի կովի մեջ վարժ: Երկու օր ու գիշեր կռիվ ունեցանք: Մեր կողմից թե մեկ մարդ կվիրավորվեր, նրանց կողմից հարուրը կվիրավորվեր:

Ես կովի կրակ ու բոց տեղերն էի: Ձիս, հրեղեն ձիս, զարկվեցավ տակս, ձախ թևս էստեղ վիրավորվեցավ. թեվիս էն տեղը, որ հայրս մկրտությանս ժամանակ բռնել էր ու պաղ ջրի մեջ կռխել էր ինձի, էդտեղ մուխ չէր առել ու հասարակ մսի պես էր մնացել: Էդ վերքը Գալուստ ախպերըս ինքը հետո լավացրեց: Էնպես լավացրեց, որ տեղն էլ չի երևա հիմի:

Վերջապես երկու օր հետո՝ առջևներս էլ մարդ չկար— մենակ մեռած լեշեր. հատ ու կտոր մարդ փախավ, էն էլ Իմամին սև լուր տանելու համար:

Ուրախ ու զվարթ, երգով ու խաղով դառանք լագըր (բանակատեղ): Երկու օր ոչ կերել էինք, ոչ քնել, բայց նորեն թռնելով կերթայինք, թև էինք առել. հաջողությունը մարդուն թև կուտա:

Լագըր մտանք-չմտանք՝ նամեստնիկի ծառաները՝ թրթված դեմքերով եկան առաջներս կտրեցին, ինձի տարան նամեստնիկի քովը: Ինքը լսել էր ինքնագլուխ հրամաններ տալս, էնպես էր զայրացել, որ ինձ տեսնելս ու գլուխս կտրելը մեկ պիտի ըլներ: Էսպես կյանքս մազե կախված էր եղել: Գեներալները գործի հոտն առնելով հետս եկան:

Նամեստնիկը ինձի տեսավ թե չէ բարկությունից կրակ կտրած, ոտքերը գետնին զարկեց ու գոռաց—«Էստեղ Նամեստնիկը ե՞ս եմ, թե դու»,— և հրամայեց, որ վրայես խաչերն ու մեդալները և էլ էպոլետները պոկեն:

Գեներալները վախու պապանձվել էին: Իմ իսկի պետքս չէր. գիտես թե՝ ինձի հետ գործ չուներ էս բանը: Ծառաները եկան, յափունջին առան վրայես. ի՜նչ յափունջի՝ քարմաղ դառած: Նամեստնիկը տեսավ զարմացավ: Ձեռքիս վերքեն էլ դեռ արյունը կկաթեր, մոռացել էի կապել:

Նամեստնիկը նայեց ինձի, նայեց գեներալներին, էդ վայրկյանին գեներալները մեկ մարդու պես ընկան նրա ոտները՝ աղաչելով. «Ձերդ մեծություն, ներե Մալխազովին. նա ազատեց Ձեր զորքը. թշնամին հաղթված է»:

Նամեստնիկը էս խոսքի վրա մոտեցավ ինձի, նայեց, խղճմտանքով նայեց. աչքը ընկավ հագուստիս: Վրաս-գլուխս, փափախս, չերքեզկաս, կոշիկներս՝ ամենքը, ծակծըկված: Հանել տվեց վրայի հագուստներս... Ի՜նչ ասեմ, 50 հատ, 100 հատ ղափախլուի գնդակների արճիճներ թափվեցին հատակի վրա:

«Մարդ աստծու, էսքան գնդակ ես կերել ու չես մեռել. հրաշք է, աստված վկա»:

Կուրծքս բացեց, տեսավ, ողջ կապուտցած, գնդակները ուժով դիպել էին, միս ու ոսկրս չէին ծակել. դիպած տեղերը կապուտցել էին մեհակ: Էս բանի վրա սիրտը էնպես կակղեց, որ գրկեց ինձի, ճակատս պաչեց ասելով.

— Կապիտան Լազար, իմ սիրելի Լազար...

Էսպես դառանք կապիտան:

Էս հրաշքի համար էր, որ Նամեստնիկը ինքն իր ձեռքով նամակ գրեց թագավորին, ու էն ժամանակվա Պետերբուրգի ու Մոսկվայի կազեթները զարմանալի բաներ գրեցին վրաս—«Լազար Մալխազով, կավկազսկի գերոյ»: Ամեն մարդու և կնկա բերանն էր էս խոսքը: Թագավորը խաչ դրկեց: Ա՛յ, էս խաչն է՝ Սուրբ Գյորգի: Գալուստ ախպերս էս բոլոր բաներում ականատես է:

Այդ միջոցին ֆելդշեր Գալուստը կոկորդը շիտկելով, խռպած ձայնը հարմարեցնելով՝ ասաց.

— Կազեթները կպահեի, միայն վերջի տարիներս թողներս մուկի պես ծակ ու ծուկ մտաև, փչացրին թուղթ ու կազեթ: Ղազար աղայի ձեռքը ես լավցուցի, ոսկորները ավազ էին դառել: Է՜յ գիտի օրեր...

Ղազար աղաև շարունակեց իր խոսքը.

— Նամեստնիկը ամեն բաև տեղին իմացավ գեներալներեն: Լսեց, որ երկու օր ու գիշեր բաև չենք կերել ու աչք չենք փակել: Հրամայեց ծառաներուն, ինձի տարաև իրա սենյակներեն մեկը, հանվեցրին, դեղ քսեցին մարմնիս վրա, պառկեցրին, հավի ապուր կերցրին, ոռմով չայ խմցրին: Հանգստացա ու քուն մտա: Մեկ օր ու երկու գիշեր մեջքիս վրա քնել էի: Երբ որ զարթնա, ոնց որ գարնաև նոր բացված արեգակ:

Իրիկունը էս հաղթության պատվին՝ նամեստնիկի մոտ կերուխում եղավ, պար ու մուզիկա: Ես նոր հագուստներ հագած կապիտանի էպոլետները դրած՝ նամեստնիկի առաջը ելա:

Է՜յ, ինչ երջանիկ օր էր, անմահական, դրախտի օ՛ր...

Մուզիկաև ածեց, շամպայնի գինիները տրաքվեցաև, փրփուրը մոմած հատակը բռնեց: Խմեցինք թագավորի, թագուհու, հայրենիքի կենացը: Հետո պարը սկսվավ: Նամեստնիկը ինքը առաջինը պարեց՝ կազաչկա, հետո ես, հետո բոլոր գեներալները, օֆիցերները:

Ես ինչքաև շնորհք ունեի՝ թափեցի—մերկ խանջալներով պարեցի, բուտիլկաև գլխիս դրած, շամպայնի լիքը բաժակները ձեռքիս՝ պարեցի, կամարինսկի, կազաչկա, լեզգինկա: Խենթ ու խելառ, ոչ հոգնել կար, ոչ էլ կշտանալ...

Էյ վա՜խ, էյ վա՜խ, անցած օրին օր չի հասնի. սուտ բաև է մնացածը:

Էսպես կերանք-խմեցինք, երգեցինք, պարեցինք երեք օր, երեք գիշեր: Երեք օր ու գիշեր որ լրացավ, Շամիլի կողմեն մարդ եկավ, թե Իմամը անձնատուր է: Հասկացա՞ք, թե բանը ուրտեղեն ծագում առավ, Շամիլի տաշտը ուրտեղեն ծակվեց, գլխո՛ւ եք...

Ղազար աղաև հարկ համարեց այստեղ վերջացնել իր պատմությունը, թե հոգնել էր, թե արդեն բավականաև ուշ էր:

Մի տաք-տաք սուրճ խմեց սրա վրա, մինչ այդ իրիկվան ժամի զանգերը տվին: Բոլոր ունկնդիրներին մնաս բարև ասելով և բոլորից հարգալից բարև ընդունելով, ելավ ֆելդշեր Գալուստի հետ ժամ գնաց, սակայն մեջքը գրեթե բոլորովին ուղղվել էր՝ քայլում էր գլուխը բարձր, կեցվածքը՝ զինվորական, փափախը՝ գագաթի ծայրին, ու մի քիչ աջ ականջի վրա շրջած:

ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԻ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. ՆՐԱ ՏԵՍԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՀԵՏ

Կապիտան Ղազարի և ֆելդշեր Գալուստի մեկնելուց հետո Ուստա Կարոն և ուստա Մացակն էլ թողին սրճարանը և գնացին Ուստա Կարոյի իջևանը: Ուստան շատ հետաքրքրված էր իմանալու Դաղստանի կռիվներից հետո կապիտանի անցրած կյանքը: Մացակը պատմեց, ինչ որ ինքը լսել էր ու տեսել, ինչ որ ողջ քաղաքը գիտեր նրա հետագա կյանքի մասին:

Դաղստանը ավարտելուց հետո փոխարքան Պետերբուրգ է գնում պատերազմի և հաղթանակի մասին զեկուցում տալու ցարին և մնում այնտեղ. նրա տեղը ուրիշ փոխարքա է գալիս Կովկաս: Ղազարն էլ գնում է Ալեքսանդրապոլ ծնողներին տեսնելու և մնում է նրանց մոտ: Եվ որովհետև այլևս փոխարքայի թիկնապահ չէր, լավ է համարում մնալ հոր տանը և ծառայել տեղական բանակի մեջ:

Ծնողները բավական ծերացել էին և բոլորովին մենակ էին: Նրանց աչքերը ջուր էր կտրել միհատիկ որդու ճանապարհը սպասելով: Գրեթե քսան տարի անընդհատումներով, նա բացակա էր տնից. և հիմա որ իրենց ձեռքը ընկավ, ուղղակի ուժով-զոռով բռնեցին նրան պսակեցին մի գեղնցիկ, համեստ աղջկա հետ, որպեսզի Խոռխոռուկյաց տոհմը չվերջանար:

Ընտանեկան կյանքը շատ խորթ եկավ Ղազարի համար: Երկար ժամանակ չէր կարողանում հարմարվել նոր կյանքի ձևերին: Մարդը տարիներով դուրսը, լեռներում ու

դաշտերում, կատարյալ վայրենացել էր: Կոիվների մեջ ե՞րբ էր նա մոր ձեռքով եփած անուշ կերակուր տեսել. շատ անգամ քաղցից որսի միսը հում-հում էր կերել կամ ծառի չոր կեղևը ծամել: Ե՞րբ էր նա կնոջ ձեռքով ձգած անկողին մտել. քարն էր եղել բարձ և թաց գետինը՝ անկողին: Այսպիսի մարդը ինչպե՞ս հարմարվեր փափուկ կյանքին:

Մի խոսքով՝ սիրտը տանն վրա դեռ տաք չէր: Ծառայությունից ազատ օրերը որսի էր գնում կամ ընկեր-օֆիցերների հետ գինարբուքի մեջ գիշերները ծայրեծայր լուսացնում:

Տանը եղած միջոցին էլ կամ ձին էր լողացնում, կամ զենքերով էր գբաղվում, կախված տեղերից վար բերում, մաքրում, նորից կախում և նոր-նոր ձևերով դասավորում փայլեցրած զենքերը պատերի վրա: Սակայն կամաց-կամաց այս վայրի թռչունը սովորեց ընտանեկան բակին, սիրեց կնոջն ու երեխաներին, որ արդեն երկու հատ էին՝ մի տղա, մի աղջիկ:

Մալխազ աղան խիստ կրոնական մարդ էր, որ առանց «եկեսցէ»-ի անկողին չէր մտնում. Ղազարն էլ ենթարկվեց հոր ազդեցությանը, որի հեղինակությունն ընդունում էր անպայման և ինազանդվում էր սիրով: Դարձավ եկեղեցասեր և սկսեց «հոգու ետևեն» ընկնել: Առավոտ կամ երեկո անպատճառ, գոնե մի անգամ, ժամ պիտի գնար, ջերմեռանդ աղոթք աներ ու թեթևացած խղճով տուն դառնար:

«Պատերազմներու մեջ կամա-ակամա, գիտությամբ ու անգիտությամբ և մասամբ նորին,— ամեն անգամ այս կերպ էր ասում Ղազար աղան, երբ խոսք էր բացվում այդ առիթով,— կրնա պատահել, որ շատ մեղք գործած ընկնիմ, ուստեղ արյուն թափած, թեկուզ թագավորի հրամանով: Բայց հոգի ունիմ ապաշխարելու տալու, դառն հաշիվ ավուր ապրեղ դատաստանին: Միայն էս մեկ թուրս հազար գլուխ է կտրել, հապա՞ մնացած թրերս ու փշտովներս, որ հաշվենք, ճոթը մինչի Ղըրմզ կհասնի: Թե որ միայն մեկ ուստեղ արյուն էլ թափած ընկնիմ, նորեն հաշիվը շատ խիստ էր ընկնելու»:

Խոսքը այն կեռ և ծանր թուրի մասին էր, որ կախել էր արջի մորթու վրա, իր անկողնու գլխավերևը:

Քաջ մարդկանց մոտ հնուց հարգի օրենք կա, որ հազար հատ գլուխ թոցրած թուրը պետք է հանգստյան կոչել ու պատվով կախել բարձր ու պատվավոր տեղից: Այդպիսի մի նշանավոր, սրբագործված թուր ուներ կապիտան Ղազարը. տեսնողը տեսել է այն, ով որ ուզում է՝ կարող է տեսնել իր աչքերով և հավատալ: Թեև գյումրեցիք ասում էին՝ թե այդպիսի երեք թուր ունի Ղազարը, բայց այդ ճիշտ չէ. ճիշտը մեկ թուր է:

Ղազար աղան քաղաքում հարգված մարդ էր, բայց մի գարշելի բամբասանք շատ դառնացրել էր նրա սիրտը, որ չէր կարող մոռանալ: Մի քանի արուն-բերան գյումրեցիք նախանձից տարածել էին՝ թե Ղազար աղան պատերազմում թալան է արել, թուրքերին, դաղստանցիներին կողոպտել է, նույնիսկ բանակի գույքից ծախել է, դրա համար էլ հիմա այսպես ապահով, անկարիք ապրում է: Անճիտանները մոռանում են, որ նա թոշակ ունի, տուն ունի. Մալխազ աղան գոմշի տկով ոսկի է բերել, քաղաքում մի մեծ քարվանսարայի բաժնետեր է... բայց արուն-բերան մարդկանց ի՞նչ խոսք հասկացնես:— «Տո՛, ե՞ս թալան, կողոպուտ,— զայրացած ասում էր նա,— վա՛յ, վա՛յ, վա՛յ. ես որ փող ուզենայի, ձեռքս բռնողն ո՞վ էր: Ուրիշները բեռներով իրենց տները ոսկի, արծաթ, շալ ու աբրեշում, խալիներ ղրկեցին: Ես ամեն կովի մեջ աչքս կուշտ մտա ու կուշտ դուրս ելա: Ես իմ փողիս հարգը չգիտեի, ուրիշի փողին ի՞նչ աչք պիտի տնկեի: Խոսքի օրինակ. Դաղստանի կովեն հետո, երբ տուն կդառնայինք, մենք չոր, ամայի տեղով անցնելուս, զինվորիս մեկը մրսեց, հիվանդ պառկավ: Չայ պիտի խմեցնեինք, որ քրտներ, լավանար: Սամովարի ջուրը տաքացնելու համար կպչան (փայտիկ) չընկար: Ծոցիս մեջ եղած թուղթ փողերս բոլորը վառեցի, զինվորիս համար չայ շինեցի: Մենակ էս բանը ձերիք էր կազեթի մեջ քցել՝ իմացնելու համար, թե ես ի՞նչ սրտի տեր մարդ էի և էլ միշտ էն սրտի տեր մարդն եմ: Ես հորես ու-

րիշ օրինակ չունեի, Մալխազենց տան մեջ արատ չի եղել ու չպիտի լինի:

Երբ Ղազար աղան բավական տարիքն առավ՝ հրաժարվեց զինվորական պաշտոններից, սկսեց օրեցօր նույնպես հրաժարվել զինվորական ունակություններից. թողեց գինարբուքները, որսի ելնելը և ուրիշ մանր ու անհրաժեշտ սովորությունները. ամբողջապես նվիրվեց ընտանիքին և եկեղեցուն:

Այսպիսի պարկեշտ կյանք վարելով, անցավ բավական ժամանակ, երբ նորից ռուս և թուրք իրար դեմ ելան, 1877 թվին: Ղազար աղայի հոգում կրկին ոտքի կանգնեց զինվորականը՝ կապիտանի սուրը ձեռքին: Թեպետ անցել էր ճակատագրային հիսուն տարին և ակներև կերպով կորցրել էր պողպատիկությունը, բայց դարձյալ ուժ ուներ և մանավանդ ուժեղ փափագ այս անգամ էլ չափվելու թուրքերի հետ, անպատճառ մի թուր էլ «հազարով օրհնված»— հանգստի կոչելու:

Սակայն ձեռքն ու ոտքը կապված էր ընտանեկան անհաղթելի արգելքներով: Նրա խեղճ մայրը ձմռան մեջ վախճանվել էր և ծերունի Մալխազ աղան էլ կսկծուց կաթվածահար անկողին էր ընկել: Այժմ ինքն էր տան մեծը, միակ կարող տղամարդը: Ո՞ւմ թողներ հիվանդ հորը, անփորձ կնոջը մատաղ երեխաներով: Չէ՛ որ որդիական և հայրական սրբազան պարտականություններ ուներ կատարելու: Դժվարին կացության մեջ էր կապիտան Ղազարը: Սակայն ամեն օր նոր-նոր զորափմբեր էին գալիս Ալեքսանդրապոլ ճակատ մեկնելու համար, զինվորական քաղցրերգով և որոտալից երաժշտությամբ: Ղազարը՝ իր բոլոր մեդալները կրծքին շարած, ոգևորված ընդառաջ էր գնում նրանց, ճանապարհին ու կազարմաններում խոսում էր զինվորների և զինվորականների հետ: Իբրև հին փորձված զինվոր խրատում էր նրանց ու խրախուսում, սովրեցնում էր նրանց աշխարհագրական տեղերը, կովի ձևերը, թուրք զինվորի թույլ և ուժեղ կողմերը ցույց տալով:

Եվ որքան որ մեծ էր կովի մեջ նետվելու արգելքը, այնքան էլ զորեղ էր մարտնչելու իղձը: Հորը խնամելուց ա-

զատ ժամերը նա իր սենյակը քաշված, փայլուն ու խոսուն զենքերի տակ, գիշերները լուսացնում էր թղթերի վրա՝ Կարսն ու Էրզրումը առնելու պլանները քաշելով, հարձակման, պաշարման նախագծեր կազմելով: Խորհելով, որ այս ամենը Լոռիս-Մելիքովին պիտի հանձնի՝ իբրև մի փորձված զինվորի կողմից համեստ առաջարկներ:

Վրդովվում էր պատերազմի մասին անհաջող լուրեր լսելիս և սաստիկ ափսոսում էր, որ ինքը այնտեղ չէ: Ցավով տեսնում էր իր անփոխարինելի բացակայությունը:

Հիվանդ հոր մոտ նստած՝ հոգով նա կովի դաշտումն էր: Իրական միջավայրը ջնջվում էր: Տեսնում էր իրան բանակի գլուխը կանգնած, իր քաշած պլանները ձեռքին, ինչ օրերի պես՝ սուրը մերկացրած՝ հարձակում է գործում թշնամու վրա: Ահա պաշարել է նա Ալաճա-սարը, որի գլխին թառած Մուխթար փաշան մի քանի օր առաջ նեղն էր ձգել ռուս գեներալ Գեյմանին, իսկ հիմա ինքը՝ Ղազարը նեղն է ձգել թուրք փաշային, որը ոսկի թուրն հանձնելով Ղազարին՝ անձնատուր է լինում: Ահա՜ Ղարսն ընկնում է նրա ոտների տակ: Ահա ինքը իր ձեռքով ցուրի դրոշակը կանգնեցնում է բերդի գլխին: Ցարը հեռագրով նրան առաջին աստիճանի Գյորգիի խաչ է նվիրում և գեներալության հասցնում... Հայրը ցավից նեղված հառաչում է և Ղազարին հանում կովի միջից և դարձնում տխուր, անփառունակ իրականությանը:

Երբ Լոռիս-Մելիքովը, որ այս պատերազմի զորապետն էր, Ալեքսանդրապոլ եկավ, կապիտան Ղազարը իր բոլոր մեդալներով զարդարված՝ ներկայացավ նրան, հանձնեց իր պլանները: Գեներալը շատ շնորհակալ եղավ, գնահատելով նրա փորձառությունը, որովհետև ինքը առաջին անգամն է, որ Ղարսի կովի մեջ պիտի մտնի, այնինչ կապիտանը մի անգամ արդեն եղել է և հաղթող դուրս ելել: Ղազարը ցավով հայտնեց կովին իր չմասնակցելը, և զորապետը ցավով ընդունելով այս հանգամանքը, մխիթարեց նրան և ապահովեցրեց, որ իր ընկեր ռուս և հայ գեներալները ամեն բան կանեն, ինչ որ կապիտանի սրտի ուզածն է: Ապա նրան, իբրև հավատարիմ զինվորի, կարգեց բերդի

մեծ վառոդատան գլխավոր պահապան: Անձնվեր մարդ պետք էր այս կարևոր տեղի համար, որովհետև քիչ անգամ չէ պատահել, որ պահապանները փողի համար գողանալ են տալիս վառոդի կեսը և փոխարենը սև հող լցնում: Մնաս բարևին զորապետը ասաց.— «Միամիտ եղիր, կովի գործը լավ ձեռքերու մեջ է: Պատերազմեն հետո նորեն կըտեսնվենք,— խորհրդավոր ձայնով շեշտելով այս վերջին խոսքերը»:

Ռուս և հայ գեներալները լրիվ կատարեցին Ղազարի երազած և չկատարած քաջությունները:

«Մարդիկ իմ գործս տեսան. խիղճս հանգիստ է: Ղարսըն առան՝ Էրզրումը վրան, Արդահանն առան՝ Բաթումը վրան: Ուրիշ էլ բան չէի ուզե»,— ասում էր Ղազար աղան մխիթարված:

Լոռիս-Մելիքովը չմոռացավ վարձատրել հավատարիմ կապիտանի ծառայությունը, թե՛ մեդալ տվեց և թե՛ դրամական նվեր:

Մի երեկո էլ, հաղթանակի այդ օրերում, Ղազարը լսեց, թե հին փոխարքան Թիֆլիս է եկել նոր գրաված երկրները տեսնելու համար: Պատշաճ ու պատվավոր համարեց Թիֆլիս գնալ՝ փոխարքայի աչքին երևալու համար, քան թե Ալեքսանդրապոլ մնար և սպասեր, որ նամեստնիկի Ղարս անցնելու միջոցին ներկայանար նրան:

Կապիտան Ղազարը անկեղծ սրտով փափագում էր իր սիրած փոխարքային օր-առաջ տեսնել, հին անուշ օրերը վերհիշել միասին: Համոզված էր, որ փոխարքան չի մոռացել իրան:

Այսպիսի տրամադրությամբ կապիտան Ղազարը ձին նստավ և մեկնեց Թիֆլիս: Հասած օրվա մյուս առավոտ հարդարված ու զարդարված ճամփա ելավ փոխարքայի իջած պալատը գնալու համար: Ինքը, իբրև ուղղակի ականատես՝ այսպես էր պատմում այդ տեսակցությունը:

— «Գլուխս կախ՝ մտածելով ասելիքիս մասին, կերթայի ինձ ու ինձ, երբ մեկը հետևես երկու ափով աչքերս բռնեց, ասելով—«Թե իմանաս ո՞վ եմ ես...»: Հրաշք բան էր ու անհավատալի.— ինքը նամեստնիկն էր: Ասացի.—

«Ծառայիդ ինչպե՞ս ճանչցար, Ձերդ մեծություն»: Նամեստնիկը աչքերս թողեց. գրկեց ինձի, ասելով.— «Է՛, Լազար, սիրելիս, ինչքա՞ն ես փոխվել. երանի՛ էն օրերուն»: Ես, աչքերս լցված՝ համբուրեցի ձեռքը: Ինքը բոլորովին ծերացել էր՝ ճերմա՛կ, ճերմա՛կ: Պատվեր տվավ, որ մեկէլ օրը պալատ էրթամ: Գնացի, երկար խոսեցինք անցած օրերից, ինձի ճաշի պահեց: Մնաս բարևիս, զավակներուս ընվերներ տվավ: Էսպես՝ սիրտս ուրախ, դարձա եկա տուն: Բայց քաղաքիս մեջ համբավ էր ընկել ու մինչի օրս էլ շատերը սխալմունքով կպնդեն, թե ես եմ նամեստնիկի աչքերը բռնել ու հարցում արել: Ես ասել եմ ու միշտ էլ կասեմ, որ էս բանը բոլորովին սխալ է, սուտ է: Նամեստնիկը ինքը իրեն իսկ ձեռքերով բռնեց աչքերս: Էդ խաղը իմ կողմեն անկրթություն և ամբարտավանություն կլիներ ինձեն էնքա՞ն բարձր աստիճան ունեցող մարդու դիմաց: Բայց շիտակը էն է, որ նամեստնիկը բռնեց աչքերս ու էդ հարցումըն արավ: Ես սուտը չեմ սիրե. ամեն ինչի մեջ ճշմարտությունը լավ բան է»:

ՈՒՏՏԱՆ ՏԻԿՈՐՈՒՄ

Ուստա Կարոն, Չավուշի հետ եկավ կանգնեցին Տիկորի զառիթափի վրան: Տիկորը լայն հովիտի մեջ շինված, ջրերով և այգիներով լի, պատմական մի հայ գյուղ է: Բլուրից իջան և առանց գյուղը մտնելու հոչակավոր վանքի հարավային կողմով անցան՝ դիմելով ուղղակի Հարութի ջաղացը: Հայոց վանքերի նախամայրը, որի մեջ մարմնացավ և կաղապարվեց տոհմային գեղեցկի գաղափարը և ճառագայթեց Հայաստան աշխարհի և ուրիշ աշխարհների վրա, այդ բազմադարյան վանքը միշտ հառում էր իր վրա Ուստա Կարոյի հայացքը: Ուստան անտարբեր չէր կարող մնալ վանքի հանդեպ, ամեն անցնելուց կանգ էր առնում մի քանի րոպե, հիացած նայում էր հարյուր անգամ նայած վան-

քին, գլուխը շարժելով խոսում էր յուրովի. «երևելի, աննըմման գլուխ վարպետի շենք է»։

Ուստան աչքերը ձգած ճանապարհի ծայրին, անհամբեր՝ ծառերի միջից որոնում էր Հարութին, մոտեցան թե ոչ, ավանակը քայլերն արագացրեց և գնաց կանգնեց ջաղացի դռան առջև, և ձայնը ձգեց. Ուստան էշի աղաղակին խառնեց և իր ձայնը՝ բարձր և ուրախ գոչեց.

— Հարութ ջա՛ն, գլուխդ թաղեմ ոչ, եկանք։

— Վա՜յ, Կարո ջա՛ն, օրթե դու ես, գալած ճամփիդ մեռնեմ, լուս էիր, վրաս բացվեցիր, Չավուշ ջա՛ն, հոգիդ ուտեմ,— պարտեզի միջից վազեվազ եկավ Հարութը, ուրախ-ուրախ, փաթաթվեց Ուստային և Չավուշին միաժամանակ, և համբուրվում էին իրար գրկած. ապա մոտենալով ավանակին, գորովով շոյեց նրա աչքերն ու ճակատը։

— Կարո ջան, օրթե իշուդ կտեսնեմ, շատ կամչնամ, շատ խելքը վրան մեկն է։

— Բա, ի՞նչ կասես, երեք քաղքցու խելք ունի, կրնա հինգ թուրքի գեղի խոջա ըլնի։

— Օրթե էդչափ գիտնական է, արի էշիդ կարգենք։

— Լավ, լավ, էդ օրն էլ կուգա, բարին հետը, մեկ առաջ դու ինձ ասա, ի՞նչ բանի ես, քեֆդ տե՞ղն է։

— Է՜հ... ձեռքը թափ տալով պատասխանեց Հարութը.— Էլի էն ջուրը, էլի էն ջաղացը,— է՜յ Մրոտ, հոս արի, դեպի ջաղացի ներս,— կանչեց Հարութը, ջաղացից դուրս եկավ մի երիտասարդ՝ ծառա Գաբոն, որ հակառակ իր մականունին, որ Հարութն էր կնքել, բոլորովին ճերմակ, ալրիկոլոլ էր, մոտենալով հյուրերին բարևեց։ Ուստան սրտագին բարևելով, հարցրեց.

— Գաբո ջան, վարպետ Գոգորն ո՞ւր է։

— Ուստա ջան, գեղ է գնացել, հիմի կուգա։

— Մրո՜տ,— դիմեց Հարութը,— չայ դիր, հավ մորթե, ձուկ խաշե, իրակվան համար,— Կարո, Չավուշ, երթանք հոլիկս, ցորեն ենք փռել չորնալու, հավերը չուտեն։

— Հարո՜ւթ ջան,— ասաց Չավուշը էշը քշելով դեպի գոմը,— ես կմնամ Գաբոյին օգնելու, մենակ է տղեն։

Համաձայնեց Հարութը և թևը փարելով Ուստայի վզովը, ծանր քայլերով անցան ծառերի հետևը:

Հարութը մոտ 32—33 տարեկան, միջահասակ, թուխ մի երիտասարդ էր, սև, անուշ և տխուր աչքերով՝ լայն ճակատի տակ եզրված բարակ հոնքերով: Սուր քիթ ուներ, փոքրիկ բեղեր և նուրբ շրթունքով բերան, որի երկու անկյունում վշտի թեթև խորշոմներ կային: Կարճ և խնամված մորուք ուներ, հագնվում էր շիրակեցոց պես,— չուխա, արխալուղ, մեջքին արծաթե գոտի, սև մազերը ծածկում էր մի փոքրիկ դեղնավուն փափախ:, Ջայլը գրավիչ էր և մեղմ: Գյուղի հարուստ աղջկա աչքին Հարութը գեղեցիկ տղայի համբավ ուներ: «Սխ ու ափսոս» էին քաշում նրա անունը տալիս:

— Կարո ջան,— ասաց Հարութը հոլիկին մոտենալով,—դուն ու քու հոգիդ, էս պարտեզի ծառները հարսների պես չե՞ն, զան հագած, նշխուն, համավոր-հարգևոր, գլխըներին քողեր, բարև բռնած-կանգնած ու իրար ականջ կըփսփսան, արի էս խնձորի ծառի տակ նստենք, դու խոսի, ես քշա անեմ հավերին, ես խոսեմ՝ դու քշա արա:

— Հա՛, Հարութ ջան, քո պարտեզ-հոլիկդ թագավորությունն արժենա: Ուստան թիկն տվեց ծառի տակ և հանեց ծխատուփը. Հարութը հոլիկի առջև շողին տվող (արծաթափայլ) ավազանի միջից հանեց շիշով օղին, որ դրել էր սառը մնալու համար: Ուստան իր սիրելի ընկերի համար մի պապիրոս փաթաթեց և ինքը իր թքով չկպցնելով թղթի թերթերն իրար, մեկնեց նրան, ասելով:

— Տո՛, թքոտ տիկդրցի, կպցրու:

— Ուստա՛ ջան, քու պռոշներդ կպցրու, գեղերեն կուգաս, սանամորներիդ մեղրե պաչերով ու ձվածեղներով մեռոնած են էդ կարմիր պռունկներդ:

Ուստան զվարթ ծիծաղեց ու ինքը միացրեց թերթի ծայրերը:

— Ուստա՛ ջան, առ էս բաժակը խմենք քո ազնիվ, քո ոսկի կյանքիդ համար:

— Հարութ ջան, հոգիս, աչքիս լուսը, և էլ քու անուշ կյանքի համար, մեզի իրարուց ով է բաժնել, որ դու կբաժ-

ձեռ հիմի. աստված մեզի մեկ պահեն, իրաբ հետ պահեն, սիրով, մեկ սրտով, արաղն էլ անպակաս ըլնի մեր վրա իրեն օրհնությաև հետ:

— Ամեն, Կարո ջան, արաղն է մենակ աստծու օրհնությունը, օրթե մեկէլները վրաս գրե:

— Հարութ, ձենդ կտրե, Էս գիշեր լավ քեֆ պիտի անենք, աքլորը երդիկը պիտի հանենք, էսոր ի՞նչ կասես:

— Գլխուս վրա, ես էլ պատարագիչն եմ,— եռանդուն ձայնով հավանեց Հարութը, ապա ձայնին վիրավորվածի գույն տալով ավելացրեց,— գիտես, Կարո, քեզնից խռով եմ, բա չես ասի, ինչու:

— Ինչո՞ւ, խելառ Հարութ, ես ե՞րբ եմ ասել, թե աչքիդ վերև ունք կա:

— Օրթե ինչի էս քանի ժամանակ է, քովս չես եկել, էս ելավ իրեք շաբաթ:

— Իրավունք ունես, Հարութ ջան, մեղավոր եմ առջևդ, բայց պարապ չէի, գեղերը շատ գործ ունեի—Ջոչի, Բագրան, Ծպնի, թե չէ քո հոլիկդ աշխարհի հետ չեմ փոխե: Վայ—Հարութ ջան, ասել է՝ մենակ էիր: Անուշիկդ ի՞նչ կեներ, քովդ չէ՞ր գա:

— Անուշիկս ոսկի աղջիկ է, էն կա-կա: Էն իրեն ոտքով եկած մատաղ է, էն իր տեղը, դու՝ քու տեղը:

— Իրեն ոտքով եկածը աստծուն ավելի ընդունակ է, բարով իմ դուռս էլ գա, քու էդ անուշ անուշիկեդ,— դիտմամբ ասաց՝ Հարութին չարացնելու համար:

— Փեշքեշ քեզի, մեծ ախպեր, անուշիկս քեզի, սանամերներդ՝ ինձի, աշխարքը փոխ-հաց է, էս խոսքիս ինչ ասիր:

— Իրավունք ունես, բայց իմ աչքս ինչ տեսավ, որ քոնըն ինչ տեսնի:

— Կարո, աչքիս աշե, սատանա պոչիդ տակ մի բան կա:

— Չէ՛, Հարութ ջան, անգին գլուխդ վկա, եղածը կասեմ:

— Վա՛յ, ամոթ քու տղամարդությանդ, էդպես:

— Էդպես, Հարութ ջան, աշխարքը իշով լիքն է, մենք ոտքով մանը կուգանք:

— Չէ, Կարո ջան, օրթե դու թաց տեղ պառկողը չես, դու հում գործ բռնող չես, ինձի քարե մի թոցրու, ամենին լոլո, քրդի տղի՞ն էլ լոլո:

— Հարութ ջան, էդ թող հլա,— խոսքը փոխելու նպատակով ասաց Ուստան,— տո, ախր ես ծպնեցոց հետ կովեցի, արուն-քերան ունեն էդոնք:

— Օրթե արժե՞ր էդ լվոտների համար արուն պղտորել:

— Ինչ ասեմ, քեզի նոր էվել ասում էին դրել, գիտես թե՝ օրթեն քիչ էր:

— Պահ, ես էդոնց...— զայրացած խոսքը կուլ տվեց Հարութը,— սպասե օրթե վանքը ուխտի գան, էդոնց էշերի բոլորի պոչը կտրեմ:

— Խելառ Հարութ, էշերի հետ ինչ գործ ունես, դու գիտնական, տերտերացու մարդ, կրնաս էդոնց տերերի պոչերը կտրե:

— Օրթե պոչ ունենան, Կարո, պսակված մարդիկ վադուց պոչերը կտրած էշեր են:

— Կրակ չուտես, Հարութ ջան, լավ տեղին ասիր,—ուրախ ծիծաղեց Ուստան,— տո, Հարութ, դու հին կապելուն ես, մի՞տքդ է, էն տարին, վարդեվորին, վանքը, անաստված, ինչ խայտառակն ես, ինչ խաղ խաղցար էն ագրակցու հարսի գլուխը, ողջ շենլիքի մեջ, գնացիր, պաչեցիր հարսին, շատ անսպեռն ես, բայց քցած էիր, հա, լոլիկ, լոլիկ:

— Չէ, մտքիս դրել էի վադուց, օրթե էդ Սողոյենց Զավոյին պաչեի, չէի իշխնա, սուտ հարբած ցուց տվի, մուրազիս հասա:

— Հըմը, լավ կերար, հարսը ոնց շերեփով կոճոլիդ մեկ, երկու հասցուց, դու էլ ռած-ոչխարի պես ճակատդ դեմ էիր տվել, կասես թե էն սեր կաներ հետդ. գլուխդ կըմաժեր, լավ կերար, լավ կերար:

— Վնաս չունի, կնկա ձեռքեն կերածը շաքարեն քաղցր է, մեկ էլ քեզ պես տակեն խուզող չեմ, աշխարքի քավոր,

ով փեսա դու հետդ ընկեր. ծածուկ էլ կուտես, պռոշներիդ ճող կցանես:

Ուստան շարունակում էր ծիծաղել:

— Որթե դու ինձի էշի տեղ ես դրել կներկես, ես գիտեմ, որ մեղրահատը կլիզե մատը. քու ձեռքդ տարի բոլոր մեղրի մեջ է:

Ուստան ժպտում էր, քմծիծաղի տալով:

— Հա՛,— շարունակում էր նույն շեշտով Հարութը,—ես քու զորքդ ևո՞ր գիտեմ: Պատճառն ի՞նչ է, որ քեզի ձեռքեձեռք կխլեն քավորության համար, քու պսակածներդ իսկի չբերք չեն մնա, օրթե ես կասեմ, որ բանի մեջը բան կա. ագահ, աչքաճակ Կարո, Անուշկես վրաս շա՜տ տեսար:

Ուստան աչքերը խոլոելով Հարութի վրա, բարկացած ձայնով թնդաց.

— Լկվե՜, կտրե՜ չախչախդ, տո՜, օրթե, թե չէ բուտիլկեն ճակտիդ կկոտրեմ, ճոլիկդ գլխիդ կբլեմ, ցորենդ ջուր կթափեմ, ճերիք սանամորներիս միսը ծամես, անոթի խելաս:

Հարութը գլուխը կախեց, մի բաժակ արաղ մատուցանելով Ուստային, թախանձեց:

— Լա՜վ, ներե՜, օրթե նեղսրտար, մեծ ախպեր:

Ու իրար աչքերի մեջ նայելով, հաշտված ծիծաղեցին:

Ուստան և Հարութը իրարուց երբեք չէին վիրավորվում, որ հետո հաշտվեին, այս ամենը կատակ էր սոսկ, կատակով էին իրար խայթում, կծում, ծաղրում ու հայհոյում. երբեք լրջորեն, չար դիտումով, դա նրանց տարիների անփոփոխ սովորույթն էր, որ ժղլանք էին անվանում,— նստել գիշերը մինչև լույս՝ օղիի սեղանի առջև, իրենց սրտերը բանալ մեկ-մեկու դիմաց, անվերապահ՝ ոչ մի գաղտնիք չթաքցնելով և այսպես խոսում էին դառն ու անուշ, սրտախոսում, համով-հոտով առակներ պատմում, այնտեղ ջաղացի չախչախն էր անդադար չխկչխկում. այստեղ նրանց ծնոտները. ամբողջ գավառակի ծանոթ մարդկանց ու կանանց մասին էին խոսում. նրանց ծաղրելի կողմերը հանդես բերում,— ծիծաղում, ծափ տալիս և ուրիշ ծիծաղաշարժ անցքեր պատմելով և անցած օրերի դեպքերը վերհիշելով զվարթանում ու տխրում. հաճախ համեմում էին ի-

րենց ժղլաձքը աշխարքի երևույթների վրա իրենց դատողությունները և կարծիքները հայտնելով:

Եվ այսպես, մինչև լույս ժղլվում էին ու խմում, բայց երբեք գլուխ չէին կորցնում, որ չկարողանային համով ու խելացի խոսել կամ կռվել ու իրար վիրավորել. նրանք փորձված քեֆ անողներ էին, ողջ գավառակի մեջ անուն հանած, առակի կարգ անցած:

Մրոտն եկավ հայտնեց, թե պատրաստ է թեյը: Ուստան ու Հարութը շորթվելով առաջ անցան, գնացին ջաղացը, պատի տակ, հասիր էր փռած, վրան մի խոնջա սառը կերակուրներով. մի երկու քայլ հեռու սամովարը աղմկում էր. նրանք նստեցին իրար կողքի, եկան Չավուշն ու Գոգորը, ուրախ ժպիտով բարևեցին Ուստա Կարոյին՝ երկու ափերի մեջ ամուր բռնելով նրա ձեռքը:

Վարպետ Գոգորը Կարոյին հասակակից կլիներ, կարճահասակ էր, մի քիչ ծաղկատար քթով, նոսր բեղերով, շարժուձևերը կենդանի էին և արագ, փայլուն, մանր և խելացի աչքերը, դեմքը դարձրել էին արտահայտիչ և համակրելի:

— Ուստա՛ ջան, գալդ բարի, կարոտդ հա կքաշենք, պոչով աստղի պես ուշ-ուշ կերևաս:

— Վարպետ ջան, շուտ-շուտ որ գամ, համը կելնի:

— Ո՛վ կասե, դու ցորենհացի պես միշտ համ ունես, էն որ ամեն օր համով կուտենք և էլի չենք կշտանա:

— Տեսա՛ր, Կարո,— միջամտեց Հարութը,— օրթե Գոգորը խոսքով, շնորհքով քեզնեն վար չի մնա:

— Վարպետ մարդիկ մեկ հենքի կտավ են, դու քու գլխուդ ճարը տես,— ասաց Ուստա Կարոն:

— Իմ գլխուս ճարը դուք տեսեք,— ասաց Հարութը,— դուք իմ մեծ ախպրտիքս եք, հիմի ինձ ասեք, չայ խմելուց առաջ օրթե մի-մի արաղ երթանք՝ գեշ չի ըլնի:

Եվ լցրեց արաղի բաժակները: Արաղը խմեցին, ապա սկսեցին թեյին անցնել:

Երեկոյանում էր, պարտեզն ու ջաղացը սուզվում էին վերջալույսի երազական անդորրի մեջ, աղավնիները զույգ-զույգ իջնում էին գետակի եզերքին՝ կարմիր տոտիկ-

ները դնում դալարի վրա, ջուր էին խմում ու թոնում դեպի բույները:

— Գոգո՛ր ջան,— դիմեց Ուստան,— գեղն էիր գնացել, ի՞նչ նոր բան կա:

— Բան չկար, գլխիդ մեռնիմ, մենակ կնիկս հետս կովավ:

— Ըսել է՝ պաչի տեղ ճանկոտոց կերար:

— Կսե՝ ուշ-ուշ կուգաս, կարոտ եմ քեզի:

— Դու էլ շուտ-շուտ գնա,— հարեց Չավուշը:

— Չավուշ ջան, ասելը հեշտ է, կատարելը՝ դժար:

— Չեմ հասկնա, խրթին կխոսաս,— Չավուշի տեղը բռնեց Ուստան:

— Ուստա ջան, ուշ-ուշ կերթամ, տարին մեկ ծին ունի, թե որ շուտ-շուտ երթալու ըլնիմ, գլխովս-արևովս պիտի թափե, հաց պիտի չկրնամ հասցնել, մոլորվել եմ, Ուստա ջան, թե որ հեռվեն աչքով կենեմ, ձեռաց երեխան ծոցում տուն կուգա:

Բոլորը զվարթ ծիծաղեցին:

— Գոգոր ջան, դու էլ և-ի պոչը կարճ էրա,— խրատեց Ուստան:

— Կզարմանամ, Ուստա ջան, որ անփորձ կխոսես, չի ըլնի, երկու կրակի մեջ եմ, ախր դու չէիր, որ կսեիր թե— կնկան պաչես, տղա կբերե, չես պաչե—բուղա: Դու հիմի տեղս ըլնես՝ ի՞նչ կանես:

— Հորս հացը ես կուտեմ, ուրիշին չեմ տա:

— Ողորմի քեզ ետ քցողին, կնիկս էլ էդման կասե, կեր թե չէ...

— Աստված քեզի կարողություն տա,— ասաց Ուստան ծիծաղելով:

— Երեխա ունենալուց ինչի՞ կվախենաս, տղան աուուշ բան է, տան ծաղիկ է, աստծու օրհնությունն է, թող անպակաս ըլնի,— ասաց Չավուշը:

— Ես էլ, Չավուշ ջան, քու խելքիցդ եմ,— հարեց Գոգորը,— հանաք կենենի, առանց երեխի կնիկն ինչացու է, պնչիդ զարկողը, դնչին ցստողը:

— Երեխան իր տեղը,— ասաց Ուստան խոհական լըր-

ջությամբ,— կնիկն իր տեղը. կնիկը անմահականու բան է:

— Խմենք կնկա կյանքի համար, աստծու անբավ հարըստությաև մեջ կնիկն է էն թանկ բանը ու մեր բախտեն՝ էդ էլ մեր բաժինն է: Փառք իրան:

— Ինձի համար՝ կնիկը սատանի թաուի է, մեջն ընկար՝ կորած ես,— ասաց Հարութը:

— Ջաղացպանի խելքով ասեմ,— խոսք առավ Գոգորը,— մարդ ու կնիկ երկու ջաղացի քարեր են վերնակ ու տակնակ՝ իրար հետ մեկտեղ ջաղաց կշինեն, կդարձնեն:

— Ու իրար փառավոր կմաշեն,— հաղթանակով կցեց Հարութը:

— Ու իրար մաշելով աշխարք կշենցնեն,— վրա բերեց Գոգորը և դառնալով դեպի Ձավուշը.

— Ձավուշ ախպար, դու ի՞նչ մտքի ես:

— Կնիկ առնելը, սուրբ պսակով, սրտի սիրով՝ լավ բան է:

— Հա՛, հա՛, հա՛,— ծիծաղեց Հարութը,— օրթե 40 էշ շալկես, չորով Երուսաղեմ երթաս լավ է, քան կնիկ առնես:

— Էլի կարկուտ էրիր,— բարկացած ասաց Ուստաև Հարութին, խիստ նայելով,— կնկա համար հոգի կուտաս, էլի էդպես կխոսիս, դու չէի՞ր ըսողը թե՝ կնկաև գրկելիս՝ մարդու հոգին կերթա դրախտն ու հետ կուգա:

— Դեհ, լավ, մի՛ վրա կախե, ես իմ ո՞ր խոսքը միտքս բերեմ, դու հլա մեկ չոնգուրդ զարկ, մինչև հավն ու ձուկն եփեն, ես քեզի շատ բան ունեմ ասելու կնկա մասին:

Երեկոյան ստվերները բարակ քողերի պես նրբաձալ իջնում էին ձորի վրա, ծղրիդները անուշ, միալար ծղրտում էին, բարակ սյուքը երբեմն շշնջում էր սաղարթների միջով. Ուստաև զարկում էր չոնգուրի լարերին, Հարութը կլանված լսում էր:

— Ձավուշ ջան, Գոգոր ջան, Քյոռ-օղլի կզարկեմ, ձեն բռնեցեք:

Ուստայի նվագի վրա մի տուն Գոգորն էր երգում, ապա մի տուն Ձավուշը, մինչ այդ Գաբռն սեղանի վրա դարսում էր կերակուրները: Ուստաև ձկի հոտը առնելուն պես՝ չոնգուրը վար դրեց:

— Օ՜յ, օ՜յ, օ՜յ, ինչ երևելի ձկներ են, մատներդ հետևերըդ շարեք,— ասաց Ուստան և արխալուղի թևերը ծալեց:

— Գոգոր ջան, արաղը լից ճամփա բանանք պատվական ձկների համար:

— Մրոտ, գինին մոռցար, վիզդ տակը չմնաց, վազե,— գոչեց Հարութը,— Մրոտը թռավ և գավով գինին բերեց:

— Տղերք ջան, կերեք, խմեք, լեն ու բոլ չափեցեք,—ասաց Ուստան, կարծես թե ինքը լիներ հյուրատերը:

Մի պահ ամենքը լռելյայն ուտում էին:

— Հավսարական ողջ ըլնեք, երկար խոսելու ժամանակ չունեմ,— ասաց Ուստան,— դեռ մեկ էս գինով պառկեցնենք ձկներին, դառնանք հավին, տեսնենք վերջերս ինչ կլնի:

— Ես ձեզի մատաղ,— ասաց Հարութը,— խմեք ինչ կենաց որ կուզեք, կամ հենց առանց կենացի կոնծեցեք, հաշիվը մեկ է, օրթե շիտակ երթանք, շուտ կերթանք, Ջավուշ ջան, մինչև ի տակ ձգե:

— Հարութ ջան, գիտես, խմելու հետ շատ գլուխ չունեմ, մի-երկու հատ որ երթամ՝ քունս կուգա:

— Ուստա ջան, լավ կշտացիր, քարվանդ էս գիշեր շատ հեռուները պիտի քշես:

Ուստան չլսելու տվեց:

— Էս սաղը ձվածեղը ո՞րտեղից է, էս չոր սերը ե՞րբ եկավ:

— Հարութ ջան, ես դրի սեղանի վրա,— պարզեց Ջավուշը,— Ծպնվո արմադան է:

— Հա, սանամոր անուշ ձեռքով է, մատներն ուտեմ,— ասաց Հարութը և աչքի պոչով նայեց Ուստային:

Ուստան նույնպես չտեսնելու տվեց և բեղերը սրբելուց ու ոլորելուց հետո սկսեց պապիրոս փաթաթել:

— Ուստա, ինչ շուտ հետ քաշվեցիր:

— Հարութ ջան, կշտացա հիմիկ-հիմիկ:

— Վա՜հ, դուք էլ՝ կշտացա՞ք,— դիմեց մյուսներին,— կերեք, ինչքան կուզեք, մնացածը Ուստային և ինձի հերիք է մինչ լույս մանր-մանր աղալու համար:

— Լավ կերանք,— միասին ասացին Գոգորն ու Ջավու-

շը,— շեն մնա Տերտերանց օջախը:— Ուստան ծխախոտը երկարացրեց նրանց:

Լուսնյակը ծայր տվեց ձորաբաշի վերևից:

— Մեկ էդ լուսնյակին նայեք,— ցույց տվեց Հարութը,— ասես՝ կեսը կոտրած ըլնի, օրթե կնիկ է, մարդն է թուշը խածել, կիսել, օրթե մարդ է՝ կնիկն է շերեփով զարկել, երեսը կոտրել, բայց լիաերես ժամանակ կնմանի Աթոյենց Մանուշակի երեսին, լույս ու կլոր, ես եղա՝ էդ կնիկը, չկըրցա էդոր թշերին բեղերս քսեի:

— Քու բերնին է ընկել լուսնյակ պաչելը,— ծաղրեց Ուստան:

— Էդքան էլ վերևանց չէ,—միջամտեց Գոգորը ու փըսփըսաց Կարոյի ականջին, Ուստան գլուխը շարժեց:

— Ի՞նչ կմտքես,—հարցրեց Հարութը:

— Էն կմտքեմ, թե՝ մեկ իշու պառավը չիմացա, մեկ էլ՝ կնկա հավատարիմը:

— Տեսար, Ուստա ջան,— խոսքը տեղը դրեց Հարութը,— դուն էլ դավուլի երկու երեսը կզարկես, եկար իմ խոսքիս:

— Ես գեշերի, անզգամների մասին կխոսեմ,—արդարացրեց Ուստան իրեն,— լավ, ազնիվ կնկա ծոցը դրախտ է, ասել եմ ու միշտ կասեմ:

— Անզգամ ու ազնիվ կնիկ չկա, գեղեցիկ ու ասորու պատկերով կնիկ կա մենակ:

Ուստան ուշք չդարձրեց Հարութին և խոսքն ուղղեց ջաղացպան Գոգորին,— վարպետ ջան, Ղևոնդենց որբևայրի հարսը ինչ ջրի է: Ուստան դիտմամբ նրա մասին հարցրեց, որովհետև Զավուշի համար հանկարծ նկատի ուներ:

— Էդ հարսը իր ողորմած փեշը բացել է, իր դուռն ելողին ծարավ հետ չի դարձնե:

— Դուն ու քու հոգիդ:

— Հա, գլուխդ վկա, Ուստա ջան, հոգուս մեղք չեմ անե:

Ուստան մատը կծեց մի բան վերհիշելով, և հանկարծ կոահելով, Հարութը այս չնկատեց, թե ոչ տեղին մի խոսք կփակցներ իր կարծիքը հաստատելու համար:

Բոլորը ընթրիքից հետո հեռված իրենց արմուկներին ծխում էին, ու սարից-ձորից, հնից-նորից զրույց անում: Գոգորը պատմեց մի քանի զվարթ բամբասակ բաներ, երբ վերջացրեց, Կարոն նույն նպատակով հարցրեց մի ուրիշ կնկա մասին:

— Վարպետ ջան, Փիլոլենց Արշակի էն որբևայրի քույրը, որ խնամախոս եկողներին ճամփու կդնե՝ ասելով թե ինձի էլ մարդ պետք չէ, գլխավոր կորցնելեն հետո, կճանչընա՞ս, ի՞նչ կենե:

— Կարո ջան, ջանիդ մատաղ, էնիկ առանց մարդ առնելու, երեխա բերեց, էս հացը վկա:

Ուստան զարմանքից բերանը բացեց:

Հարութը մարաղ մտած կատվի պես վրա պրծավ:

— Տո՛ աշխարհաժուռ Կարո, բերանդ բանալու տեղ, աչքդ բաց, մի՞տքդ է, օրթե ես ասի, թե աշխարքիս վրա մի կույս կնիկ է եղել, մենակ էն էլ երեխա է բերել. էդ էլ մենձեմ իրա՝ Մարիամ աստվածածինն է եղել: Չավուշը երկյուղած՝ խաչակնքեց դեմքը, Ուստան խոժոռեց աչքերը.

— Գաբը բահով է բացած:

— Լավ, ինչ ասի, որ բերնիս եկար, դրուստ չէ՞ր:

— Տո, օրթե, դրուստ էլ որ ըլնի, նորեն բառդ բառ չէր, ասաց Ուստան և խոռվի պես դեմքը շուռ տվեց:

Տիրեց մի պահ լռություն, ապա Գոգորը ոտքի ելավ՝ բարի գիշեր ասելով և հայտնելով թե ջաղացում գործ ունի, գնաց: Չավուշի գլուխը ծանրացել էր կրծքի վրա. Հարութը նկատեց և յուրովի խոսեց,— Չավուշը տանձ կկշռե: Սա էլ սթափվեց և աչքերը տրորելով ասաց.

— Քունս կտանի, ներող եղեք:

Հարութը առաջարկեց, որ Չավուշը գնա ջաղացի սենյակը իր անկողնի մեջ քնի, քանի որ ինքը Ուստայի հետ գիշերը հոլիկում պիտի անցկացնեն և կարգադրեց, որ Մրոտը սեղանի մնացորդը տանի հոլիկը: Քիչ հետո Չավուշին բարի քուն մաղթելով գնացին հոլիկը, որի դռան առջև, ավազանին կից, Մրոտը տարածել էր հասիր ու կարպետ բարձերով և սեղան էր հարդարել:

Երբ նրանք առանձին մնացին՝ գոհունակ կերպով իրար երես նայելով՝ իրար հասկացած ժպտացին:

— Էս լավ եղավ, տունը մնաց մեզի, բակը՝ հավերին, կուշտ կժղլվենք, իրար աչքերի մեջ այդպես կարղացին: Նստեցին միմյանց դեմուդեմ: Հարութը լցրեց գինու բաժակները:

— Ուստա ջան, մեկ էս բաժակը վռազ խմենք հոլիկիս կենացը, հոլիկս, գիտես, ինձի համար սրբատեղ է:

Բայաթու պես անուշ գիշեր էր, պայծառ, աստղազարդ, թռչունները լուռ էին թեև, երբեմն միայն քնի միջից, երազի ձայներ էին արձակում: Բարակ հովը բերում էր գիշերային ծաղիկների արբեցնող հոտը. առուն էր միայն, որ արթուն էր և մանկական ծիծաղով մաս էր գալիս պարտեզի մեջ՝ շողշողուն դեմքը երբեմն ցույց տալով:

— Հարութ ջան, տրորանք, քեզի առնեմ, ուր երթամ, ի՞նչ գիշեր է, ի՞նչ գիշեր է, հոգիդ կոծեմ:

— Ինձի ա՛ո, քարվանիդ հետ տա՛ր, Կարո ջան, մեկ քարվանիդ ճոթը բաց, լուսնկա զով գիշեր է, երթա՞նք, երթա՞նք մինչև աշխարքի ծերը:

Ուստան ականջ չկախեց և նայելով երկնքին, ասաց ոգևորված.

— Ա՜խ, Հարո՛ւթ ջան, էդ աստղերը մարդ բռնե ուտե, հոգին փառավորվի:

— Տո՛, բան չունես, որ ուտես, էնքան շատ են, որ հա մեկ էլ խոսքը երկնքի կտուրը մի՛ քցե, Ուստա ջան, քարվանիդ ճոթը բաց:

Ուստան անդեն ականջ չկախեց և շարունակեց իր մտքի թելը:

— Մարդ գոնյա մի գիշեր էդոնց մեկի տեղն ըլնի. մեկ պստիկ աստղ ու վերևեն աշխարքին նայե, ամեն գեղ ու քաղաք, երդիկներեն ու պատուհաններեն ներս, ինչե՜ր կըտեսնի, մարդ իմաստուն կդառնա:

— Դու, Ուստա ջան, քու քարվանովդ, գիշերով ու արեվով, էնքան տեղ ես եղել, էնքան բան ես տեսել, որ պետք չունիս իսկի աստղ դառնալու: Ուստա ջան, մի հատ էլ խը-

մենք ու յալլա, քարվանիդ ճոթը բաց, հոգուդ մեռնեմ, ոտքըդ պագեմ...

— Լավ, առաջ-առաջ քու որդիների ճոթը բաց:

— Գլխուս վրա, պայմանը պայման է, Ուստա ջան, ես կասեմ, դու համրե... Օրթե բարակ քամի ըլնեի, փարվեի հարսներին աճո՜ւշ-աճո՜ւշ պաչեի, օրթե շատ հեռու չերթանք, մեր վանքի ջերմուկները ըլնեի, քաղքցոց ճերմակ հարս-աղջիկներին չոփ-չոփ լողցնեի ծոցիս մեջ, ու էնոնց բամբակ ծիծերի վրա ալիճ-ալիճ գայի, օրթե վրաները ցամքեի, չորնայի, էդ դհա ոչինչ, ես կուզենայի, օրթե կրնայի էնպես բան ըլնեի ծածուկ, անտես, մտնեի ամեն տուն, գինու կարասները բանայի, խմեի, խմեի, սիրուններին գրկեի, պաչեի ու պաչեի, ու հետո օրթե պուկ գայի, հեռուն կանգնեի, էնոնց մարդկանց ժիժի գայի, օրթե...

— Հերի՛ք է, հերիք է՛, հաստատ որ՝ օրթե Հարութ:

— Դե՛հ, իմ պարտքս տվի, Հնդստանցի Կարո, անունիդ մեռնիմ, ալմաստե քարվանդ քշե, ոսկի զանգուլակները թող զնգան, զնգան, աճո՜ւշ-աճո՜ւշ. Էս թասը խմենք քարվանիդ ազիզ կենացը. թող էնոր ճամփան ջրի պես երկան ըլնի, երթա, երթա, ձենն անսպառ ըլնի.—և խմեց լիքը բաժակով,—խմե, Ուստա ջան, օրթե լավ քշես, սար ու դար շիտկվի, գարուն դառնա առջևդ:

Ուստան լուռ էր, մտքերն էր հավաքում, ասես, պատրաստություն էր տեսնում երկար ճամփա ընկնելու, մինչդեռ Հարութը անհամբեր էր:

— Ե՛լ, ե՛լ անմահ քարվանիդ գլուխը ե՛լ, ուղտերդ ոտքի հան, երեսս դնեմ էնոնց ոտների տակ, կոխեք անցեք, Ուստա՛ ջան, հոգի՛ս,—և թախանձավոր աչքերը աղերսանքով ձգած նրա աչքերին, ականջները կախած նրա շրթունքներից, Ուստան տակավին տեղից չէր շարժվում:

— Կարո ջան, քարվանդ որ էդպես զարմանալի տեղերով երթաս օրորվելով, շորորվելով, զնգալով, զնգալով վրաս անուշ քուն կբերե՝ թագավորի վայել երազներով, քշե, տար քարվանդ, ես էլ հետդ չեմ, հետդ չեմ, էլ հոլիկիս մեջը չեմ, քեզի հետ դրսի ու ներս աշխարհներն եմ, անմահական գինով-արաղով լիքը էդ աշխարհները, ապրած կե-

ևա քարվանդ, որ հոգիս մարմնից կբաժանե, օրթե սուտ էլ ըլնի քարվանդ, հազար ղորթ արժենա—էնքան սիրուն է, էնքան սիրուն է, որ մարդ կուզե անպատճառ հավատալ:

— Ի՞նչ, սուտ, չես ամչնա ինձ էդպես կասես, ես ո՞րտեղի սուտ խոսողն եմ, ե՞րբ,— վիրավորված ասաց Ուստան:

— Բերանս ծովի, Ուստա ջան, թե ես էդ մտքով ասի, կուզեմ ասեմ, թե քուկդ ոսկի հեքիաթներ են...

— Հեքիաթ...— Ուստան կտրեց նրա խոսքը,— կուզես հեքիաթ ասեմ, քեֆդ գա,—Քյոռ-Օղլին, Ասլի-Քյարամը, Դահար-Միրզան... բայց իմոնքս տեսած ու եղած լսած բաներ են, սուտ բան չկա, ասենք հեքիաթներ էլ կան, որ էնքան սուտ չեն, մենակ մի քիչ ծաղկեցրած են:

— Կարո՛ ջան, խոսքիս կատարն առ, քուկդ թագավորի արժանի ստեր են, չէ՛, չեղա՛վ, էն կուզեմ ասեմ՝ հնարածներդ, ստեղծածներդ ղորթ են, դրուստ, զուտ ճշմարիտ:

— Տո՛, ինչ կզվռնես, եղած բանը չեն ստեղծի, չեղածը կհնճարեն, կստեղծեն:

— Հա՛, գլխիդ մեռնեմ, մեծ մարդն էն է, օրթե չեղած տեղեն բան կստեղծե, թող միտքս ասեմ, էնպես բան, որ աշխարքի ղորթը էնոր մոտ սուտ է, ինչ ասեմ, քեզի, օրթե հասկանաս, Կարո ջան, ես կուզեմ, որ քու սուտը ինձի հետ ըլնի, քու ճշմարիտը ուրիշների հետ, ես քու սուտերին կհավատամ, ինչու որ՝ քու սուտը, թե՛ բոլոր մարդկանց, թե՛ քու ճշմարիտեն առավել է ու շատ ճշմարիտ...

— Քեզի չեմ հասկնա,— ակներև նեղսրտած ասաց Ուստան,— սուտը սուտ է, ղորթը՝ ղորթ, սուտը խաբեբա մարդու քովն է, ճշմարիտը՝ ազնիվ, շիտակ մարդու, ի՞նչ պատեպատ կընկնիս, ես ազնիվ, շիտակ մա՞րդ եմ, թե չէ՝ ասա, լսած կա՞ս, որ ես մարդկանց խաբեմ, փող տված չլնեմ—փող պահանջեմ, սուտ մրող խոսքեր իրար տանեմբերեմ. սուտ կխոսեն փողի համար, օգտի համար, իմ օգուտս, շահս ի՞նչ է, որ ես վարպետ մարդ, իմ հացը ուտող մարդ՝ սուտ խոսեմ. թե որ սուտ քարվան ունեցած ըլնեմ, բուռս փող կդնե՞. իմ տեսած-լսածս պատմությունների

համար ինձ ո՞վ փող տվեց, տո՛ խելառ, անապեր Հարութ, չափդ չես ճանչնա, կըլոուրես:

— Ուստա ջան, բեղերդ ուտեմ, ես էլ էդ կասեմ, ուրիշ ի՞նչ ասի, որ դու գիտես, օրթե ես քեզի հոգուցս առավել կսիրեմ, ինչպես մի ազնիվ, շիտակ մարդու, ես էլ կասեմ, էդ տեսակ սուտը քու մոտը չկա, էդ տեսակ սուտը մեր գյուղացոց քովն է, որ կեղծ վկայություն կենենք, սուտ երդում կուտենք, փողի, օգուտի համար ի՛նչ ստեր ասես, կմոգռնենք. սուտը քաղաքացոց մոտն է, էդ խաբեբաները, որ փտած ապրանքը սուտ խոսքերով լավի տեղ կծախեն, սուտը ղորթի տեղ կքշեն, բայց դու չէ, դու քաջ տղամարդ ես, սուտասան չես, գողին գող կասես, լավին-լավ. մենակ-մենակ քու քարվանիդ հեքիաթները՝ էդ անգին... ստերը, աշխարքի բոլոր սրբերի ճշմարտություններեն ճշմարիտ են, հասկացար, հիմի, հոգիս—լի՛ց խմենք...

Ուստան գլուխը զարմացմամբ և բարկությամբ տարուբերեց.

— Չե՛մ հասկնա, չե՛մ, չե՛մ, հարբած կերևաս, հարբած, տո, մեկ նայիր կուտաս, մեկ՝ մեխիդ՝ մեկ կասես, թե քեզ պես շիտակ մարդ չկա, մեկ էլ կասես—հեքիաթներդ, ստերդ... տո՛, գիփո, սուտ ուզենամ ասեմ, էնպեսներն ասեմ, որ զարմանաս ու զարմացած մնաս, դու էլ, քու յոթը պապն էլ, թևս բռնողն ո՞վ է, ծովերը կրակեմ... ա՛յ, կուզես ասեմ. մեկ անգամ Արաբստանի կողմերն էի, էնպես սատանի քամի ելավ, որ մեկ պոչը գետինն էր, մեկել պոչը երկինքը կըխառներ, ծովերը վերցրավ թափեց ցամաքի վրա, ցամաքն էլ գեղերով ու քաղաքներով լցրեց ծովերի տեղը, քարվանս ետև հին ծովերի տեղով անցավ, էդ ժամանակ մի պոչով աստղ երևաց, պոչը գետին հասած՝ բռնեցի պոչը, ելա երկինք. լավն է, կուզես, կեսն էլ ասեմ. փախա հասա Հնդըստան թե Չինմաչին, լավ միտքս չէ, ազատվեցի, նստել էի, չիբուխս կքաշեի, չիբուխիս կրակեն մի պեծ քամին տարավ, մեկ էլ էն տեսա, որ էդ աշխարքի սարերն ու ձորերը փաթթող բադամի ու խուրմի անտառները վառվեցին, բոցն հասավ երկինք, մուխը երեք տարի օր ու գիշեր բռնել էր ա-

մայի տեղ ու արևի խավարում էր երեք տարի օր ու գիշեր, տեսար, սուտն ինչպես կլնի...

Ուստան լռեց, շատ հուզված էր, մի բաժակ գինի խմեց լուռումունջ, ապա մի պահ հանգչելուց հետո նայեց Հարությունին, որը կարծես վախից կուչ էր եկել ու հետաքրքիր աչքերով դիտում էր նրան: Ուստան անդորրացած շարունակեց,— Թե բանը հավատի վրա է, օրինակ, եթե մեկը գնա Քրդստան և քրդերին ասե թե՝ երկաթե-ճանապարհ կա, որ անասուն ու կենդանիք տեղ ջրով ու կրակով են գնում, որ հեռու տեղերից, աշխարհ աշխարհի հետ թելով խոսում են ու գրում (կամ մեքենայի միջոցով թռչում են օդի միջով—) նրանք պիտի ծաղրեն քեզ, խաբեբա, ստախոս-պիտի անվանեն, որովհետև չեն տեսել իրենց աչքով, չգիտեն ու չեն ուզում հավատալ: Ամերիկայից վերադարձող մեր գեղերի տղերքը Ուստա Կարոյի տեսածներից ու լսածներից ավելի զարմանալի բաներ են պատմում, բայց նա չի ասում՝ թե սուտ է, որովհետև հավատում է, թեև չի տեսել նրանց տեսածները, դեռ վերջերս Ռես-Հոսեն ամենայն լրջությամբ և շիտակությամբ պատմեց իր աչքով տեսածը թե՝ տարիներ առաջ մի 20 տարեկան համր տղա ս. Կարապետ ուխտի եկավ, և հենց որ վանքի գմբեթը տեսավ՝ լեզուն բացվեց և խոսեց, փառք տվեց, հազար մարդու ներկայությանը. ինչպե՞ս ասել, թե սուտ է, կամ Ռեսը խաբեբա է, հնճարող է, պետք է հավատալ, և ինքը, Ուստան, հավատում է, մանավանդ երբ պատմողը ազնիվ մարդու մեկն է:

Եվ ապա ասաց բոլորովին հանգստացած...

— Հարութ ջան, դու խելոք տղա ես, մենակ ճզեն մեկ-մեկ դուրս կուգաս, ճամփա չես գնացել, ճամփա բանը չես հասկանա, երբ մարդ ճամփա կերթա, աշխարհե աշխարհ, կասես, երազ կտեսնի, երազի մեջ է, կամ երազի միջով կերթա, էդոր համար էլ իմ ճամփորդած աշխարհներեն երբ բաներ կպատմեմ, ուրիշին սուտ, երազի նման բաներ կերևան, քանի որ ուրիշ, հեռու աշխարհներ էնտեսակ բաներ կան, որ էստեղ չկան. էնպես նոր տեսակի, նոր ձևի բաներ են, որ մեր երկրի բաներին իսկի նման չեն, թե՛

աստծու ձեռքով, թե՛ մարդու ձեռքով շինած բաներ, էդոր համար էլ անհավատալի կթվան, երազի մեջեն:

— Ապրես, Կարո՛ ջան, խոսքս թագավորեցրիր, օրթե ես էլ էդ կուզեի ասել, դու բաց աչքերով երազ կտեսնես, արթուն, օր-ցերեկով, էդոր համար էլ տեսած երազներիդ կհավատաս, ինչ որ բաց աչքով ես տեսել: Դու գիտես, օրթե ես երազ տեսնելու համար կքնեմ, ու կմեռնեմ, որ սիրուն երազներ տեսնեմ, էս գեշ աշխարքեն հեռանամ, թե չէ խելաո եմ, օրթե քնեմ, մենակ երբ աչքերս կբանամ, կիմանամ օրթե տեսածներս երազ են, սուտ ու փուչ՝ գեշ կլնեմ, տխուր ու տրտում, բայց դու չես զարթնի, քանի որ զարթուն ես, զարթունի մեջ երազը կտեսնես, էդոր համար էլ տեսածներդ հաստատ, օղորթ կհամարես, ու բախտավոր ես: Հասկացա՞ր, հոգիդ ուտեմ, դու ամեն օր տեսիլք կերթաս, ու ո՞վ կրնա քեզի սուտ-խոսող ասել, քու պատմածներդ իսկի սուտ չեն, քանի որ տեսիլիքի մեջ հաստատ տեսել ես, ինձի նայե, խոսքս ա՛ռ,—օրթե մարդ ելնի առավոտը, ու իրեն երազի մեջ տեսած զարմանալի-հրաշք բաները պատմե, խո՞ էդ մարդուն չեն ասե սուտ-խոսաո, խաբեբա, կսեն՝ երազ է, երազ, թագավորն էլ երազ կտեսնի, կաթողիկոսն էլ, խո՞ էնոնք փչաներ, սուտասաներ չեն, քոնն էլ էդպես է, ու դեռ ավելի՛, քանի որ դու բաց աչքերով երազ կտեսնես, ու կհավատաս, ինչպես ասի, տեսածներդ իսկություն են: Քու մեծությունը, քու առավելությունը էդ է՝ թե՛ իմ վրա, թե՛ գումար աշխարքի վրա, էդոր համար էլ քեզի շատ կնախանձեմ, ինչ որ շատ երջանիկ ես, աշխարքը արտիդ ուզածի պես կերևա քեզի, ու էս ամենի համար էլ հատուկ՝ քեզի շատ կսիրեմ:

— Օ՜ֆ, հոգիս հանեցիր,— շունչ քաշելով ասաց Ուստան, որ համբերությունը հավաքած լսում էր նրան, և ավելացրեց,— գլուխս բան չմտավ, լի՛ց, խմենք:

— Ուստա՛ ջան, մի՛ նեղսրտիր, մտքիս ծերին դեռ չեմ հասել, հլա լսե՛,— ասաց Հարութը բաժակները լցնելով և Ուստային ներկայացնելով: Ուստան խմելով ասաց.

— Ակռանջս բերանդ է, ասա՛, ասա՛, շան ոտք, Մշու

դաշտ, գնա ու գնա, վերջ չկա, սրտիդ փուքը բաց թող, հանգստանաս:

Եվ մի ծխախոտ փաթաթեց, թիկն տալով սկսեց ծխել հիւսախուփ աչքերի թարթիչների միջով նայելով Հարութին:

Հարութը խոսում էր հասնելու համար իր մտքի ծայրին: Իր խոսքերով և իրեն հատուկ ոճով ձգտում էր բացատրել իր հայացքները,— թե ինքը քանի հարյուր անգամ ասել է Ուստային, թե աստծու շինած այս աշխարհը շատ պակասավոր է: Մի քանի գեղեցիկ բաների կողքին լիքն են սարսափելի վատ բաներ—ցավ ու հիվանդություններ, աղքատություն, ավազակ, արյունարբու մարդիկ... պատերազմ, ծերություն և մահ, և այս բոլոր սարսափները, որ տանջում են մարդուն՝ պետք է որ մարդ մոռանա ապրելու համար, և մոռանալու համար—մի միջոց կա՝ ընկնել գեղեցիկ երազների մեջ: Եվ այսպես, մարդ աստծու աշխարհի վրա շինում է իրեն սրտի ուզածով մի լավ աշխարհ, ուրտեղ նա իրեն բախտավոր է զգում, իր փափագներին հասնող, իր սիրածի սերը ունի, իր ցավերը բժշկված. երիտասարդացած, այնտեղ կտեսնի լավությունը, ազնվությունը, այն ամեն ցանկալի բաները, որ պիտի լինեին աստծու աշխարհում, բայց չկան. դրա համար էլ մարդ սիրում է իր շինած աշխարհը, այնքան է սիրում, որ ո՛չ միայն հավատում է նրա գոյությանը, այլև աչքով տեսնում է, ձեռքով բռնում: Եվ նրան երևում է այդ աշխարհը անկասկածելի ճշմարիտ, անմեռ ու անմահ, իսկ աստծու աշխարհը սուտ, չելած, անհաստատ:

— Ուստա՛ ջան, օրթե հասկացար, դու աստծու պակասավոր աշխարքի վրա զարկում ես ոսկի վրանդ, ուր երջանկություն է ապրում, քու շինած վրանը իմ աշխարքե դուրս չկա, բայց քեզի համար կա. կնշանակե կա, ու սուտ չես խոսի, էն հաստատ կա, քանի որ դու սրտանց կփափագես էնոր ու ինչ բանի որ կփափագես՝ էնոր էլ կհավատաս, ու էդոր համար էլ քու սուտերդ անուշ են ու հրաշք, ոսկի են ու գոհար, անմահական գինի են, քարվանդ մարդու էնպիսի սիրուն աշխարքներ կտանի, որ աստծու աշխարհեն շատ վեր ու պատվական, ի՞նչ են մեր գյուղացոց

կամ արարատ-աշխարքի սուտն ու ղորթը—էն մարդը փողս կերավ, մոզիս ծախեցի, ախպերս Ղարս ինձ տարավ, սելս կոտրավ, Պողոսն եկավ, Մարկոսը գնաց, կնիկս կարպետ կգործե, երեխիս փորը ցավավ. գաճելի, գլուխ տաճելի, սիրտ խառնելի բաներ, բայց քուկինքդ՝ քուկոնքդ աստղ ու արև, լույս ու լուսնյակ: Ուստա՛ ջան, քանի՞-քանի՞ անգամ քու անուշ քարվանդ տարել է ինձի էս չար աշխարքեն հեռու, դրախտի տեղեր, ինչքա՞ն անգամ մոուսցել եմ թե՛ ինձի, թե՛ դարդերս, Հրեղենիս դրկած գինին եմ խմել, որ քու քարվանդ է քերել էնոր մոտեն... Դե՛ հ, Կարո ջան, ջանիկըս, քարվանդ քշե, բերնիդ մատաղ:

Հարութը վերջացրեց, Ուստան հասկացավ ու չհասկացավ, նրան ամենենին հաճելի չէր երևում «սուտ» բառի հիշատակումը, որ Հարութն անվերջ կրկնում էր զանազան ձևերով, թեև միշտ «ճշմարիտի» արժեք տալով: Եվ ձեռքը թափահարելով, ջղայնացած ասաց.

— Է՛հ, Հարո՛ւթ, վարդապետի լեզու թափեցիր, հերիք ձեռք առնես ինձի, գլուխս կդմբա, լի՛ց խմենք, էս գիշեր քեֆը գլխուս խռով արիր, չոնգուրս մեկ էստեղ տուր, տեսնեմ:

— Ուստա՛ ջան, ի՞նչ ասի, որ քեֆդ խռով եղավ, առ չոնգուրդ, զարկ, քեֆդ բացվի, էլ չեմ խոսի:

Ուստան սկսեց չոնգուրը խոսեցնել, կաթնոտ գիշերվա մեջ ծորում էին հնչյունները՝ քաղցր և գրավիչ, և գնում էին լուռ ստվերների մեջ մարում: Մի մեղմ տխրություն իջավ երկու մտերիմ ընկերների վրա: Ուստան չոնգուրը վար դրեց, նրա տրամադրությունը ավերված էր. մի պահ երկուսով լուռ էին: Ուստան ասաց.—Հարութ, մի հանելուկ ասեմ, պարզիր. էն ի՞նչ պստիկ տղա է, վար կդնեմ կըսսկի, սըրտիս կդնեմ կուլա... (չոնգուրն է, չիմացար):

Տիկոռի վերևից, գիշերվա անդորրի միջից լսվեց անցնող մի քարավանի մեղմ ու ներդաշնակ ղողանջը. երկուսն էլ ականջները լարեցին:

— Քարվան է,— ասացին միասին, իրար աչքերի մեջ մխրճվելով:

— Ի՜նչ անուշ է,— հառաչեց Ուստան,— ա՜խ էրնե՛կ էնոնց, կերթա՜ն, կերթա՜ն...

— Քու քարվանիդ ձենին չի հասնի իսկի...

Այս շրջանում շատ հաճախ են քարավանները, որ սովորաբար կողքից աղ են կրում:

— Հարութ, լավ միտս եկավ, էս սալած ճամփեքը, որ կան մեր հանդերում Անիից դեպի Մրենի կողմերը, որ մեկ կերևան, մեկ կկորչեն, ո՞վ է շինել, դու կարդացած տղա ես, կգիտնաս և էլ որտե՞ղից կուգան, ո՞ւր կերթան...

— Ա՜խ, Ուստա՛ ջան, էդոնք շատ հնութ ճամփեք են, հայոց թագավորներն են շինել, որ Անի կնստեին, էդոնք կուգային քու ներսի աշխարհներեն, կերթային քու դրսի աշխարհները, հայոց զորքերն են անցել էդոնց վրայով, հեռու աշխարքների, Հնդստանի ու Բաղդատի քարվաններն են եկել ու անցել՝ բարձած հուրիներով ու փերիներով, գինիներով ու գոհարներով ու ատլասներով, և զարմանալազան թանկ բաներով. (հիմի շատ մասը քանդած է, թուրքերըն են քանդել, Ուստա ջան...)

— Հե՜յ վա՛խ, հե՜յ վա՛խ,— խորունկ հառաչեց Ուստան,— հե՜յ վա՛խ, հե՜յ վա՛խ, հայոց ազգ, հայոց փառք:

— Ուստա, ես չգիտեի թե էդքան ազգասեր ես եղել:

— Ինչո՞ւ, դու ազգդ չե՞ս սիրում:

— Ես, չգիտեմ, ես,—մտածելով,— օրթե լավ մարդ ըլնի, նրան կսիրեմ: Ես քեզ հայի համար չեմ սիրե, ես քու հոգիդ կսիրեմ, քո քարվանդ...

Ուստան չպատասխանեց, աչքերը տխրությամբ թաթախված հետևում էր քարավանի անհետանալի, միայն ներքին լսելիքին զգալի քայլերին, ասես, հոգով գնում էր քարավանի հետ: Կարծես եկեղեցու տոնական զանգերի պես, նրա զանգակներն ու բոժոժները հրավիրում էին մարդկանց երազի ու հեքիաթի դյութական աշխարհները:

— Ուստա՛ ջան, էս քարվանները հիմի աղ կտանեն Կողբեն, քու քարվանդ էլ ադ կրող է. մենակ քու աղդ ուրիշ է, էնոնց կրածը-ոչինչ, քուկը կյանքի ու աշխարքի աղն է:

Հարութն ուզում էր ասել թե աղ, հասարակ աղ չհաս-

կանաս, հապա, խոսքի աղը, որ սուտն է, բայց վախեցավ զայրացնել Նորից, և շարունակեց,— Ուստա ջան, առանց էդ քու աղիդ, աշխարքը անհամ կլիներ, կհոտեր, կորդնոտեր...

Ուստան չէր լսում Հարութին. նա հոգով ներկա չէր այնտեղ, ականջները սուզած տարածության մեջ, հոգով ծծում էր քարավանի հետզհետե մարող ղողանջները:

Ո՛չ միայն քարավանի ձայնը, կամ նրա պատկերը, այլ սոսկ նրա անունը դյութիչ-հափշտակիչ ներգործություն ուներ Ուստայի վրա. անհաղթելի փափագ էր զարթնեցնում նրա մեջ՝ իսկույն իր քարավանը ոտքի հանելու և ճանապարհ ձգելու:

— Ա՛խ, Հարութ ջան, դու չես կրնա իմանա, թե ինչքա՜ն անուշ բան է քարվանը, թե որ իմանայիր, էլ ձեռք չէիր քաշի, ա՜խ, աստված Նորեն պիտի տա, որ քարվան ունենամ. էս սալած, հնութ ճամփեքով երթամ մանե եկած տեղերս և էն հետու, դրսի տեղերը, որ կուզենայի ու չկրցա երթալ... Հարութ ջան, հլա աչքիդ առջև բեր, էսպես մի լուսնյակ, քաղցր գիշեր, մի անգամ քարվանիս հետ Հաբաշեն կերթայինք Ղանդահարի աշխարքը...

Հարութը կենդանացավ, մի ցնցումով հենվեց արմունկի վրա, վառվեց հետաքրքրությամբ՝ աչք ու ականջ դարձած:

...— Ղանդահարի աշխարքում ջուր չկա, հողը ավազ է, երկնքեն կրակ կթափի, մենակ մեր ճամփի երկայնքով, Չինի պատերով բանձրիկ, բանձրիկ՝ պարտեզներ կան, որ մեր գլխի վրա կախված կերևան. էդոնց շվաքի տակով կերթայինք, պարտեզների մեջ փիրուզե քարերով շատրվաններ կան, որ երկնքի մեջ էնոնց կաթիլները անգին պայծառ ակունքների պես պեծին կուտան...

Եվ ընդհատելով ինքն իր պատմությունը դարձավ դեպի Հարութը:

— Տո՛, գեղացիք անունդ լավ են դրել,—Ձնչահավատ,— հիմի պիտի ասես թե՝ հեքիաթ է, սուտ է, երազ է, էդ տեղերը չես եղել:

Հարութը ուշքի եկավ, և մի պահ վարանումից հետո, պատասխանեց.

— Ուստա ջան, կարելի է, օրթե ոտք չես դրել էդ տեղերը, բայց հավատամ ու խոստովանեմ, որ քարվանդ եղել է՝ հոգիդ վրան թառած, հաշիվը մեկ է...

Ուստան արդեն պատասխանին չէր սպասել և շարունակում էր իր պատմությանն թելը:

— Էդ պարտեզի մեջ կան էնպիսի պտուղներ, էնպիսի անմահական մրգեր, որ իսկի նման նմուշը ուրիշ տեղ չկա, էնպիսի հուրնիհրեղեն, հրեշտակ աղջիկներ, որոնց մի պաչը մի թագավորությունն արժենա, մի բան էլ ավելի: Էդ ծառերի հոտն ու աղջիկների ձենը շատ հեռուներեն մարդու ուշքն ու ուրուշը կտանեն. կհարբեցնեն: Գետին ընկած էդ անուշ պտուղներեն թե որ մի հատ կուտեինք, քներս կտաներ ու երազի մեջ կտեսնեինք, թե մենք էլ վերևն ենք, պարտեզների մեջ, շատրվանների տակ, աղջիկների գրկի մեջ, կխոսեինք, կծիծաղեինք, ու էնոնց ձեռքեն դրախտի գինին կխմեինք: Ծա՜ղ, շա՜տ հարուստ մարդիկ, իշխան-իշխանապետ կուգային էդ ամայի չոր տեղերը, որ պտուղներ գտնեին, ուտեին, դրախտի երազների մեջ ընկնեին, ինչո՛ւ որ հնար աստծու չկար էդ պարտեզը երթալու, դուռ չունի, սանդուղ չկա ու անկարելի է, թե շինվի, թեկուզ սարերի չափ ոսկի ծախսվի: Մի անգամ էլ քարվանս կպըտտըցնեի...

— Ուստա ջան, հոգուդ մեռնեմ, մեկ էդտեղ հլա կանգնեցրու քարվանդ, մի բան պիտի հարցնեմ:

Ուստան կանգ առավ և աչքերը բացեց Հարութի վրա:

— Ա՛ո, հլա էս թասը խմենք քարվանիդ կենացը, ասեմ: Հա, Ուստա ջան, աշխարքի մեկ ծերեն մտել, մեկէլեն դուրս ես եկել. տեսակ-տեսակ ազգեր ես տեսել ու գիտնական, աշխարհաժուռ ճամփորդներու ես պատահել, իսկի լսած կա՞ս Հրեղենիս տեղի մասին, կամ տեսած, ասա՛, հոգուդ մեռնիմ, ծառա եմ ձայնիդ, Կարո՛ ջան: Հրեղենս օր ու գիշեր մտքիս մեջ ունեմ, ես կրնա՞մ մեր կնիկներին սիրել, իսկի խելք է. հանաք կանեմ, երբ կնիկների մասին կխոսեմ, ի՞նչ են կնիկները—գեշ ապրանք են, գեշ հոգի ունեն, չար, բամբասող, խելք չունեն, մենակ, տակե-տակ են՝ խորամանկ, սուտ կուլան, սուտ կխոսին, կնիկ ասածդ ի՞նչ է

— միևնույն բանը ամեն օր, օրական քառասուն անգամ ասող, հոգի հանող ես, հոգի...

— Հարութ, սուտ կխոսիս, դու կնկա համար հոգի կուտաս, մի հատ էլ փոխ կառնես տալու:

— Չէ՛, Ուստա ջան, ես քեզի օրթե հազար անգամ ասած կլինեմ, թե՝ Էս գեշ աշխարքը, սրտիս ցավերը ու Հրեղենիս կրակ-կարոտը մոռնալու համար կնիկներին բարև աստծու բարին կուտամ, քանի որ սիրուն, գեղեցիկ կնիկը արաղ ու գինի ունի իրեն սերի մեջը, մարդու կհարբեցնե, մոռնալ կուտա... Հրեղենս, ա՞խ, էրնեկ էր բերաևս դնեի էնոր մարջանի պռունկներն, ու խմեի էնոր սերի գինին, ծծեի էնոր սերի արաղը ու գրկի մեջ մեռնեի... Կարո՛ ջան, օրթե ողջ-աշխարքի սիրուն կնիկները դնես կշեռքի մեկ թաթը, մեկէլ թաթը Հրեղենիս, Հրեղենս բոլորին կկշռե, կանցնի, ա՞խ, ինչպես վազ անցնեմ, ես կխելոնամ, Հրեղենս տվեք ինձի, մեկէլ բոլոր-բոլոր կնիկները ձեզի ոտովգլխով, իսկի վրաները մի օր էլ չնայեմ, օրթե Հրեղենս չըկա, բոլոր-բոլոր սիրուն կնիկները ինձի տվեք, որ Հրեղենիս ցավը քիչիկ մի մոռնամ, օրթե էն էլ կրնանամ... Կարո ջան, ասա՛, սուտ-ղորթ, Հրեղենիս մասին օրթե լսել ես:

— Հարո՛ւթ ջան, չգիտեմ Հրեղենիդ նման է թե չէ,— աչքերը տրորելով ասաց Ուստան,— մեկ անգամ, քարվան իջավ մեկ աղբյուրի վրա, լուսնյակ գիշեր էր էսօրվա պես, մենակ նստել էի մեկ ծառի տակ, հանգիստ կենեի ու չիբուխս կքաշեի, մեկ էլ մոտիկեն մեկ թառի ձեն առա, ասես, ինձի կկանչեր, վեր ելա՝ քալեցի թառի ձենի վրա, ես կմոտենայի, ձենը կհեռանար ու մեկ էլ կմոտիկանար. ես կմոտենայի, էն էլ կմոտիկնար ու կհեռանար, ես մոտեցա, էն հեռացավ, ես մոտեցա, էն հեռացավ, երթալով հասա լույսերի մեջ կորած մեկ պալատի, դռները կրնկի վրա բաց, ապշած, բերանբաց մոտեցա դարբասին. մեկ զուգված ծառա ինձի ներս համեցրեց, թե Էս պալատի տեր-տիրուհին է կանչողը. ներս մտա. արմանք-զարմանք բան, ասես, թագավորի տունուտեղ ըլներ, դեմս ելավ մեկ հրաշք կնիկ, նուշը կոտրած մեջեն հանած, տեսա թե չէ, երկու անգամ բանձր ձենով աստծուն փառք տվի, ինչու որ, Հարութ ջան,

սիրուն կնիկ կտեսնես երկու անգամ աստծուն փառք տուր, լավ մարդ կտեսնես—երեք անգամ: Սպահանի թագավորների պարտեզների էն անուշ վարդերի հոտը էդ կնկա ծոցեն կբխեր, Հարո՛ւթ, դու էլ գիտես, թե կնիկ ես տեսել, հողը գլխիդ, էդ անասված կնիկը, կնկա աչքերը անհատակ, ծծերի պտուկները—ակն-յաղութ, էն իր մարմար ձեռքով ոսկի թասով գինի տվեց, խմեցի թե չէ, ներսս կրակ ընկավ, ծարավ-պապակ ելա, գլուխս կորցրի...

— Լա՜վ, լա՜վ, հասկցա՛նք,— ու կոպիտ ձայնով ընդհատեց Հարութը,— Հրեղենիս շվաքն էլ չես տեսել, ուր մընաց Հրեղենս, էն ուրիշի պաչ չի տա, էն ինձի կսպասե, Հրեղենս թե՛ մարմնով է սուրբ հրեշտակ, թե՛ սրտով-հոգով, էնոր դեռ հողեղեն չի պաչել, պարծենկոտությունն մի՛ արա, օրթե ուրիշ բան գիտես, ասա:

— Հարութ ջան,— կարծես չքմեղելով ասաց Ուստան,— կարելի է Հրեղենդ չէր տեսածս, մենակ պատմածս շիտակ էր, թե որ տեղը կորցրած չլինեի, նորեն կերթայի. քովը, համը դեռ բերանս է: Հարութ ջան, լավ միտս եկավ, էս պատմությունը որ պիտի էնեմ, հիմի, անպատճառ Հրեղենդ է: Մեկ անգամ Մսրա կողմերը մեկ հալևոր մարդ տեսա, որ կապրեր մեկ քարվանսարայի մեջ, տասներկու ճամփաբաժինի վրա շինած, էստեղ, օր ու գիշեր, տարի բոլոր, էդպես 40 տարի նստել էր էդ մարդը, որ 12 ճամփեքից եկող-գնացող քարվաններին հարցուփորձ անե աշխարքի էն գեղեցիկ կնկա մասին ու իրեն կորցրած քարվանի մասին...

Հարութը շտապով կտրեց խոսքը.—Հրեղենիս կմոտենա, ասա՛, Ուստա ջան, հե՛տև...

— Հետև, ես խնդրեցի որ ինձի պատմե իր գլխի եկածը, էն էլ թե՝ կանանչ-կտրիճ երիտասարդ էի, քարվանի գլուխ-գլխավոր, մեկ անգամ Հնդու աշխարքով անցնելուս տեսա ճամփին մարգարիտներ կային շաղ տված, ամեն մի հատը իրարուց մեկ-մեկ ոտք հեռու, քարվանս իջեցրի մի ջրի վրա, ասի օգնականիս, թե դու էստեղ ինձի սպասե, ես էս է՝ կուգամ. ես էլ մարգարիտները մեկ-մեկ ժողվելով գընացի-գնացի, մեկ էլ ասես, Հնդու այգիների բոլոր բլբուլ-

ները ականջիս տակ մեկ ձենով երգեցին. աչքս ծածկեցի որ լավ լսեմ, մեկ էլ որ աչքս բացի, ի՜նչ տեսնեմ.— մեկ երևելի, անպատմելի քյոշք ու սարա, մարմարե ու սադաֆե շինած, դռներեն ու պատուհաններեն հազար ջահերի լույսը արեգակի պես դուրս կթափվեր. սիրտ արի, ներս մըտա,— շա՜տ աշխարքներ էի տեսել, շա՜տ պալատներ, բայց էսմանը—իսկի: Ինչ բանի որ աչքդ կդիպչեր—ոսկի էր ու ալմաստ, յաղութ ու զմրուխտ, բանձրիկ փղի ոսկորի ջահի վրա նստել էր մեկ գեղեցիկ, անպակաս, անմման լուս արեգակ կնիկ՝ աշխարքի ամեն սիրուն կնիկներեն էն սիրունը,— Դունիա Գյոզալին, կնիկների թագն ու պսակը, խոսքով չեմ կրնա պատմել էնոր սիրունությունը. լեզու չի կրնա բռնի էդ սիրունությունը չափելու համար, խելքե, մտքե սիրուն, երազների մեջ տեսածներեն ու հեքիաթների մեջ լսածներեն հազար-հազար անգամ գեղեցիկ, գեղեցիկ, գեղեցիկ: Բերանս բռնվեց, լեզուս կպավ, դողն ընկավ սիրտըս, էնոր անմահական հոտեն գլուխս դառավ, ծնկներս ծալվեցան, գետին ընկա, էնոր ոտների տակ, քիչ հետև ուշքս վրաս եկավ. ասի,—կտեսնեմ, որ թագուհի ես, կուզեմ իմանալ, դու ո՞ր աշխարքին կհրամայես: Էն էլ բլբուլներից անուշ ձենով ասաց, թե բոլոր աշխարքի վրա կերթա իմ հրամանս. դու ինձի չե՞ս ճանչնա: Ախի, ներող եղիր, անունդ չեմ լսել, ես հասարակ, քարվան քշող մարդ եմ, ո՛չ գիտնական եմ, ո՛չ գիր կճանչնամ: Էն էլ թե՝ ես կնիկն եմ, հաստատ իսկական կնիկը, ով որ իմ սերս վայելե ամեն-ձեն երջանիկը կլինի, ո՛չ կպառվնա, ո՛չ կմեռնի, իմ սերս անմեռ է՝ հուր-հավիտյան մինչև աշխարքի վերջը:

Մեկ էլ էն հրաման տվեց, մեր քով եղողները բոլորը դուրս եկան, մնացինք ինքն ու ես, մենակ: Ասավ, ես քեզ սիրեցի, դու կտրիճ տղա ես, կուզեմ քեզի հետ սեր անել...

— Ուստա, կանգնի՛ր, քարվանդ զուրը անպետք տեղեր մի պտտցնիր, էդ Հրեղեն չէ, էնիկ ուրիշի սեր չի տա, բան գիտես, բան ասա:

— Հարութ ջան, լսե մինչև տակը, կարելի է էն դուրս կուգա, էն էլ որ չեղավ, լավ պատմություն է... Հա էն կասեի... հետև էդ հալևորը ասաց, թե՝ աղջիկը սկսեց հա-

գուստները հանել: Յոթ հագուստ իրար վրա էր հագած՝ բարակ քողերի պես, առաջ հանեց ոսկի հագուստը, ես աչքս չթարթած կնայեի, հետև արծաթը, վարդե, կապուտ, կանանչ, ալ կարմիր՝ արյունի գույն, մնաց վերջինը, որ արևի պես վառ-վառ կփայլեր, վրան նայել կարելի չէր. էն է, որ սկսեց վերջինը հանել, մարմինը՝ կայծակի պես կրակ տրվեց, ու ասես, կայծակի պես ինձի զարկեց. մեռած ընկա գետին, առտվան զարթնա, տեսա ինձի դուրսը մեկ օտար ճամփու վրա քցած: Հետև էդ մարդը փնտրել է քարվանը, հարցուփորձ է արել, իմացող մեկը չի գտել, ուզեցել է ետ գնալ էն կնկա մոտ, ճամփա չի գտել, ու մինչև էս օրս հարցուփորձ կանե նստած էդ քարվանսարայի դռան առաջ՝ օրը հարուր քարվան 12 ճամփեքեն ու հեռու տեղերեն կուգան ու կերթան, բայց ոչ մեկն էլ բան չի կարող ասել էդ խեղճ հալևորին, որը չի մեռնի, ու չի ուզի մեռնել, որ ետ մի անգամ էլ տեսնի էդ կնկան ու հետև մեռնի: Հարութ ջան, անհնար է գտնելը, դուն էլ ձեռք քաշե Հրեղենից: Լի՛ց խմենք, բերանս չորցավ:

— Կարո, իմ անունս Հարութ է, Կարո չէ, որ մխոտ սանամերներով աստծուն փառք տամ ու Հրեղենս էլ ձեր բերնի բանը չէ, դուք ո՞վ, էն ո՞վ:

— Ինչո՞ւ, էլ կնիկ չենք տեսել, ի՞նչ է, էնոր ոտները ամպո՞տ են:

— Հա, ամպոտ են, էն հրեշտակ է, էն կնիկ չէ. աստված էնոր ստեղծելուս մազաչափ չի սխալվել, էն հրեղեն է, հողեղեն չէ:

— Կարելի է, մեռնեմ էնոր սուրբ զորությանը,— ասաց Ուստան երեսը խաչակնքելով,— հլա մեկ-մեկ առջևս բեր էդ աղջկա սիրունությունը, կարելի է նմանը տեսած ըլնեմ:

— Կարո ջան, ինչ ասեմ, օրթե հասկանաս, անհնման է, անհնման է, տեսած չես ըլնի, սուտ մի՛ խոսի, էդ սուտիդ չեմ հավատա, էն անթառամելի է, անձերանալի. ամեն մեկ մազը մարդ կհարբեցնե. դրախտի ամենաանուշ ծաղիկը էնոր մոտ գարշահոտ, ունքերը մարդ կսպանե ու հոգի կուտա, երկնքի բոլոր աստղերը էնոր աչքերի քով մարած ճրագներ են. նրա աչքերը արեգակներ են, մեղրաթաթախ

ու դեմքի վրա դրախտի մեղր կթափե. Է՛հ, մի՛ հարցրու, չեմ կրնա ասել, մի անգամ տես, հետև մեռիր, էլ ապրել պետք չէ, էնորեն հետև էլ գեղեցիկ բան տեսնելու չես, թեկուզ անմահ ըլնես ու ամենակարող:

— Պահո, չէ, Հարութ ջան, չեմ տեսել, էլի ասա,— հափշտակված ասաց Ուստան:

— Ի՞նչ ասեմ: Ո՞ր մեկն ասեմ, իրեն ամեն մասերով աստվածաշեն, ի՛նչ մարմար, ի՛նչ գոհար, ի՛նչ լուսնյակ. ի՛նչ ծովերի փրփուր — էդպես էնոր մարմինը խելոքելու բան, տես ու հողերը համբուրե: Ինքը մոլոր գինի, աստծու խմած գինի: Կարո ջան, էնորից կատարյալը կրնա մեկ էլ աստծուն ստեղծող աստվածը ստեղծել:

— Չէ՛, չեմ տեսել, Հարութ ջան, ինչ սուտ խոսեմ:

— Տո՛, ուր կարող էիր տեսնել, էն երկնային է, էն ինչպես կրնա ապրել էս գեշ աշխարքի մեջ. էնոր մեկ անգամ գայլելը անմահություն է, արքայություն է, էնոր մոտ մի օր մնալը հազար երջանիկ, անցած ապրած տարիներեն ափելի կերևա, ու էնոր հետ հազար տարի ապրելը մի ժամվա պես կանցնի, չես իմանա, էն որ քունդ ըլնի,— դու աստծուց մեծ կլնես:

Կարոն հաղթված էր՝ լուռ, ապշահար:

— Լեզուն, լեզուն... Զինամաչինի թագավորի ու քու գոված աշխարքների պարտեզների բլբուլների երգերը էնոր մոտ՝ ագռավ ղողռա. օրթե Սողոմոնը լսեր՝ իր իմաստությունը մեկ պլիկի կծախեր էնոր լսելու համար ու նորեն էժան կհաշվեր: Կարո՛, հողեղենների մեջ աշխարքի էն գլխեն մինչև էսօր մենակ ես տեսա իրան ու էդոր համար էլ էնօրվանեն էսպես անբախտ եմ, քանի որ տեսնելը՝ երջանկությունների գլուխ կատարյալն է, չտեսնելն ու քաշ գալը էս ավանակների ու գազանների մեջ տարտարոս է. ա՜խ, Կարո՛ ջան, ա՜խ, էնոր տեսնելեն հետո էլ ուրիշ ուրախություն, փափագ չունեմ... լից խմենք, լի՛ց, լի՛ց...

Հարութը տխրեց, նրա տխուր աչքերը ավելի տխրեցին:

— Հարութ ջան, էլի հազար էրևեկ քեզի, որ էդպես երազ ես տեսել, աշխարքի հրեղենին ես տեսել, էդ էլ է մեծ շնորհք, ուրիշ մարդիկ էդ շնորհքն ու բախտն էլ չու-

ձեռ: Լիքը լից, թող թափվի, խմենք քու անգին Հրեղենի՝ կենացը:

Հարութը լցրեց գավաթները պռունկեպռունկ՝ լիքը:

— Հարութ ջան, քու ծովերդ գինի դառնան, քեզի ու Հրեղենիդ անուշ օրորելով, նավերդ հարբած ման գան:

— Շնորհակալ եմ, Ուստա ջան, միայն առանց էնոր չեմ կրնա ապրի, ես պիտի փնտրեմ էնոր, հուր-հավիտյան, մինչև գերեզման, օրթե չէ կխելոտեմ, նորեն սարերը կընկնեմ, օրթե չէ կմեռնեմ, ա՜խ, Կարո ջան, դու չես կրնա իմ ձի հասկանալ, լի՛ց, լի՛ց նորեն խմենք Հրեղենիս կենացը:

— Հարութ ջան,—խորապես ցաված արտով ասաց Կարոն,— շա՜տ մի՛ տխրի, հույսդ էլի իսկի մի՛ կտրի. դու չըգիտես, որ արտե-սիրտ ճամփա կա. քու սրտի լացը, կարոտը կհասնի Հրեղենի սրտի ականջին, ո՞վ գիտե, թե էս պայծառ աստղը, որ հիմի քեզի կնայե, Հրեղենիդ աչքը չէ, էս անուշ հովը, որ կշնկշնկա ծաղիկների միջով, Հրեղենիդ շունչը չէ, որ քովդ է եկել, Հարութ ջան, ի՞նչ իմանաս, աչքիս լույսը:

Հարութը հոգով, ուշքով լսում էր:

— Հարութ ջան, ի՞նչ իմանաս, արդյոք Մսրա ծովերեն եկող բարակ քամիները չե՞ն, որ կբերեն քեզի էնոր վարդի հոտը, մեր սինոռի սալած ճամփեքով անցնող քարվանների անուշ զնգոցը չէ՞, որ Հրեղենիդ բարևները կբերե քեզի, բարևներդ հետը տանելով:

— Կարո ջան, ես էլ շատ ժամանակ էդման Հրեղենիս քովս կզգամ, էդոր համար էլ հույս չեմ կտրել, ա՜խ, մեկ-մեկ էլ կհուսահատվեմ, մտածելով, թե՝ թիթեռնիկը օրթե սիրահարվի հեռու աստղի վրա, ու թռնի դեպի աստղը, կրնա՞ հասնի, իսկի հնա՞ր է, ես էլ նմին նման, Հրեղենս աստղ երկնուց, ես խեղճ թիթեռնիկ...

Ուստան ջանում էր Հարութին մխիթարել և հույս ներշնչել, մյուս կողմից էլ ցավում էր, որ փափագած քեֆը գլուխ չեկավ՝ խանգարվեց մի կողմից սուտի ու ճշմարտի մասին ավելորդ խոսք լինելով, մյուս կողմից էլ Հրեղենի մեջը ընկնելով, փորձեց խոսքի ընդութը փոխել.—Հարութ ջան, ականջ էրա, չոնգուրս պիտի ածեմ, հլա մեկ դու էս

քարճիկը կեր, կրծքի էս ճերմակ միսը, ի՞նչ լավն է, թթու խիարն էլ վրան տապկցրու. տո, ինձի նայե, դարդս ո՞րն է, քեֆ արա, էսօր կանք, վաղը չկանք:

Հարութը մեքենաբար ինազանդվեց Կարոյին: Մի պահ եղավ, որ երկուսով էլ լուռ էին և խոհուն, մտքի մեջ ընկած. ջաղացն էր քաղցր ու մեղմ չխկչխկում և գետակն էր գիշերվա անխոս լռության մեջ բարձրահնչուն խոխոջում, ծղրում:

— Տեսնես ի՞նչ կասե էս առուն,— ասաց Կարոն,— իմ չոնգուրիս ձեռնից քաղցր կխոսի, ի՞նչ դարդ ունի, ի՞նչ կարոտ ունի, որ մի գլուխ կխոսի, կխոսի...

— Բա էս թռչնիկը, չես իմանա հոլիկիս ո՞ր ծակեն գիշերը մինչև լույս ինձի բան կասե, ու չի հայտնի, մեզնեն շատ կխոսի, տե՛ս...

— Հարութ ջան, էդ իր յարի անունն է, որ մտքեն չի քցե, կասե ու չի կշտանա:

— Կարո ջան, ի՞նչ սիրուն կխոսես, մարդու սրտեն կխոսես:

— Էդպես է, Հարութ ջան, լից խմենք էս էլ հավասարական բոլոր սիրուն կնիկների կենացը, կնիկը լավ բան է, վարդաջրի անուշ շատրվան է, մեղրի աղբյուր է, Հնդուքուշի գիսու ինձան է... և գավաթը զարկեց Հարութի գավաթին:

— Չէ՛, Կարո ջան, սարսափելի բան է կնիկը ու ավելի սարսափելի բան է կնկա սերը, Սողոմոն Իմաստունը կասե՝ որ սերը մահի չափ հզոր է, կհասկանաս, անհաղթելի մահեն հզոր է:

— Կհասկանամ, Հարութ ջան, կերածս հաց է, խոտ չէ, կհասկանամ ու քո Սողոմոնիդ էլ սխալը կշիտկեմ. սերը մահից հզոր է, ինչու որ մահը աշխարքը դարդակում է, սերը լցնում է մեկէ կողմից ու մարդիկ մեռնողներից շատ կաճեն, սերը մահի չափ որ հզոր չլիներ, աշխարք չէր ըլնի:

Եվ ձեռքն առավ չոնգուրը ու սկսեց թրթռացնել բարակ լարերը. Հարութը հարբած, մի քիչ խզած ձայնով երգեց.

Մերս ինձի բերել է,
Նշխուն բարուր էրել է,

Նշխուն բարուր մեռնեի,
Սիրուդ գերի չըլնեի...

Ուստան էլ իր հերթին մի տուն երգեց՝ ձայնակցելով իր ընկերին:

Սիրելիս, ես քարեքար,
Սիրովդ խենթ ու խելագար,
Ինձ դրեցիր կրակի մեջ,
Ու ձգեցիր ինձ քարեքար:

Հանկարծ պարտեզի միջից բանձրիկ զնգաց բլբուլի ձայնը. նրան հետևեցին մի ուրիշ երկուսը և սկսվեց դայլայլիկների մի անուշ ցնցուղ:

— Կարո ջան, սուս, չոնգուրդ թող, բլբուլներին լսենք, ջա՜ն, ջա՜ն, Հրեղենիս լեզուն է ձեր պստիկ բերանների մեջ, ուտեմ ձեզի:

Ուստան արդեն չոնգուրը մի կողմ էր դրել, լսում էր և վերացած նայում: Լուսաբացի մոտ էր, աղոթարանի կողքը պայծառ էր ու ամպերը թեթև, վարդերն ու ծաղիկները, ծառերը գլուխները թեքել էին լույսի կողմը, գիտակցաբար սպասելով կենսատու արևին: Մի բարակ, մի քիչ ցուրտ հով սուրալով գալիս էր ձորի վերևից: Ուստան զգաստացավ.

— Հարութ ջան, առավոտ է, ե՛լ պառկենք, շատ խմեցինք, խոսեցինք, դադար առնենք մի քիչիկ:

— Դու քնիր, ես զարթուն կմնամ, բլբուլներին լսեմ:

— Հարութ ջան, չի ըլնի, վրաս ուժ չկա, քեզի էլ մենակ չեմ կարող թողնի, վախնամ քնով ըլնես ու վրադ բաց՝ մրսիս, պառկի՛ր, անկողնուդ մեջին էլ՝ կլսես:

— Լավ, ե՛լ պարտեզիս մեջ մեկ պտուտ անենք, գանք քնենք:

Ուստան համաձայնեց և երկու արտակից ընկերներ՝ գունատ ու քնոտ դեմքերով, հոգնած ու հարբած աչքերով՝ իրար թև-թևի շրջում էին ցողապատ սեզերի վրա. ձորի հսկա քարաժայռերի սուրուլիկ ծայրերը կարմրել էին, արև-

վը դեռ չէր երևում, թռչունները՝ զարթնած ու զվարթ իրենց թաքստոցներից դուրս էին ելել, ճովողում էին ու թևերը ներկում արևի ոսկի ցնցուղի մեջ:

— Կարո ջան, նայիր,— մատով ցույց տվեց Հարութը օդում թևող թռչուններին,— արդյո՞ք Հրեղենիս երազներն ու կարոտները չեն, գլխուս վրա էսպես կպտտին...

— Հա՛, Հարութ ջան, հա՛, իսկ և իսկ:

Եվ Ուստան Հարութին, ասես, գրկելով, կամաց-կամաց տարավ հոլիկը, ուժով պառկեցրեց թախտի վրա, ինքն էլ նրա կողքին: Ուստան իսկույն քնեց. Հարութը մի ժամանակ դեռ արթուն էր, նա հոգին բլբուլների ձենին տված խոսում էր ինքն իրեն. «Ա՜խ, էս բլբուլների հետ թռնեի», մինչև որ քունը փակեց նրա աչքերն էլ:

ՀԱՐՈՒԹԸ

Հարութը Տիկոռի տերտերանց հարուստ, անունով ընտանիքի զավակն էր: Այդ ընտանիքի գլուխն էր, գյուղ-գաւառում շա՜տ հարգված տեր-Սահակը, Հարութի հորեղբայրը, որն ուներ չորս որդի և ամուսնացած երկու աղջիկ: Հարութը մեկուկար էր. նրա հայրը՝ Հակոբ աղան՝ վաղուց էր մեռել. պատանի Հարութի վրա այդ վաղահաս մահը շատ տխուր և խորին ազդեցություն էր թողել. նրա մայրը՝ խեղճ ու կրակ Մարիամը, մխիթարված էր միմիայն Հարութով: Նրա փոքր հորեղբայրն էր՝ Վարդան աղան, որն երեք որդի ուներ, երկու աղջիկ: Այս բազմամարդ ընտանիքը, որ լիքն էր հարսներով և երեխաներով, միասին էին ապրում, նահապետական սովորություններով, շա՜տ սիրով ու հարգանքով իրար հանդեպ: Ամբողջ ընտանիքը մեծ գուրգուրանքով էր վերաբերվում դեպի Հարութը, իբրև որքի ու միակ ժառանգին՝ հիշատակ մնացած իրենց մեռած սիրելի եղբոր ու հորեղբոր: Երևի այդ սիրալիր վարմունքի պատճառով էր, որ Հարութի մեջ զարգացել էր քնքուշ և շուտ վիրավորվող

մի սիրտ, այսպես ասած՝ տան մեծը թե փոքրը երես էին տվել նրան, և նրա ամեն մի իղձը կատարում էին:

Տերտերանց տոհմի մեջ քահանայությունը ժառանգական էր շա՜տ հին ժամանակներից. տերտերները իրենց կենդանությանը իրենք էին ընտրում իրենց հաջորդը, որին ամենահարմարն էին տեսնում՝ համաձայն այդ հին տոհմի ավանդական սովորույթի: Հարութը մանուկ հասակից գրավեց տեր-Սահակի ուշադրությունը իր խելացիությամբ ու ուշիմությամբ, և ընտրությունը կատարվեց Հարութի վրա. արդեն պատանի օրերից Հարութի վրա նայում էին թե՛ ընտանիքը և թե՛ գյուղը, իբրև ապագա քահանայի վրա: Տեր-Սահակը գյուղերի քահանաների մեջ «բանիբուն, ուսյալ» քահանայի հռչակ ուներ, հիսունհինգ տարեկան էր, կրթությունը առել էր իր պատանի հասակում, ս. Էջմիածնում, մի նշանավոր եպիսկոպոսի մոտ, միաժամանակ ժառանգավորաց դպրոցում. լավ գրաբար գիտեր, Աստվածաշունչին, հայոց մատենագիրներին, Չամչյանի հայոց պատմությանը քերականությանը հմտորեն տեղյակ էր՝ ձեռք զարկեց Հարութի կրթությանը: Հարութն էլ ամենայն եռանդով և ուշի ուշով արձագանք տվեց տեր-հոր թափած ջանքերին: Արդեն 21—22 տարեկան էր նա, որ գրեթե ծայրե-ծայր կարդացել էր տերտերի գրադարանը, ուր կային Չամչյանի հատորները, Փարպեցի, Խորենացի, Ագաթանգեղոս, Եղիշե, Եզնիկ, Վարք սրբոց, Թ. Գեմբացի, Դավիթ Անհաղթ փիլիսոփաս, Աստվածաշունչ, Ժամագիրք, Մաշտոց, Շարականներ, Այսմավուրք և այլ ծիսական ու եկեղեցական գրքեր: Նա մի քանի անգամ էր կարդացել, և շա՜տ բան անգիր գիտեր. օրինակ՝ եկեղեցու արարողության վերաբերյալ նյութեր և մանավանդ Սողոմոն Իմաստունի առակները, Ժողովողը, Երգ երգոցը:

Առավոտ-երեկո տերտերի հետ եկեղեցի էր գնում, և օրվա մեջ մի քանի ժամ անցկացնում էր տերտերի հետ, և նա էլ օրհնության ու գովասանքի խոսք չէր գտնում Հարութի կրոնասիրությունը, երկյուղածությունը, աշխատասիրությունը չափելու համար: Համագյուղացիք շատ սիրում էին Հարութին և հարգում. «գառի պես տղա է տիրացու Հարութը»,

ասում էին նրանք, «սուրբ հոգու շնորհքը վրան է, աստված պահե»: Ոչ ոք Հարութի բերանից վատ ու դառն խոսք չէր լսել. ոչ ոք գանգատ չուներ նրանից. ամենքի հետ նա վարվում էր քաղցրությամբ, փափուկ սրտով. նրա կյանքը օրինակելի էր բոլոր պատանիների և երիտասարդների համար. նա ո՛չ ծխում էր, ո՛չ էլ մի կաթիլ խմիչք բերանն առնում, հեռու էր քաշվում վատ տղաներից, որոնք խումար էին խաղում կամ աղջիկների հետևից ընկնում: Նրա օրն անցնում էր գրքերի մեջ՝ ընթերցանությամբ, եկեղեցում սպասավորելով. ամեն ծոմ ու պաս պահում էր, և դեպք չէր եղել եկեղեցուց բացակայելու:

Հարութի սիրած տեղը իրենց ջաղացն էր, ուր նա դասերից հետո՝ գիրքը թևի տակ՝ գնում էր, ծառերի տակ առանձնացած կարդում էր ու մտածում, և երեկոյան գյուղ դառնում ժամասացության համար: Նա գրեթե երբեք չէր զբաղվում գյուղատնտեսական գործերով, մեկ-մեկ ջաղացում եղած ատենը օգնում էր ջաղացի բանվորներին. կամ պարտեզում աշխատում էր, այն էլ միայն երբ հոգնում էր կարդալուց կամ մկանները շարժում ու գործ էին պահանջում: Ընդհանուր առումով նա լուրջ, սակավախոս, տխուր տղա էր:

Թեև առաքինի տեր-Սահակը միշտ ներշնչում էր Հարութին, թե քրիստոնյան պիտի նմանի Քրիստոսին և շարունակ խորհուրդ էր տալիս կարդալ ու կարդալ «Նմանողությունն Քրիստոսի», սակայն Հարութը այն կարծիքին էր, թե անկարելի է նմանվել Քրիստոսին, որովհետև նա աստվածորդի է՝ աստվածային կերպով կատարյալ ամեն վեհ բանի մեջ, ինչպես և բացարձակ անկարելի է նմանվել աստծուն, որպես ուսուցանում է Դավիթ Անհաղթը թե՝ իմաստասիրությունն է նմանություն աստծո ըստ կարողության մարդկան. սակայն ավելի հնարավոր է, և մարդկայնորեն կարելի է, նմանվել Սողոմոն Իմաստունին, ամենահիմաստուն և կատարյալ մարդուն բոլոր մարդկանց մեջ, քանի որ Սողոմոնը մարդ է եղել, ուրեմն ուրիշ մի մարդ էլ կարող է Սողոմոն լինել, գոնե մի քիչ պակաս, բայց ոչ մի մարդ չի կարող աստված լինել: Այսպիսով Սողոմոն Իմաստունը դարձավ Հարութի տեսակետով մարդկության համար կաղապար, ո-

րին պետք է ձգտել նմանվելու, նրա վրա ձևվել և այս ձըգտումը գրեթե եղավ նրա ճակատագիրը: Մինչև 21—22 տարեկանը գրեթե չէր հետաքրքրվում կանանցով. երբ աղջիկները նրա երեսն էին նայում, նա նորահարսի պես ամաչկոտ, աչքերը վար էր ձգում և կաս-կարմրում. սակայն կամաց-կամաց սկսեցին նրա հոգում քնած զգացումները զարթնել, և Հարութը թե՛ եկեղեցում, թե՛ դուրսը սկսեց աչքի ծայրով հետևել աղջիկների ստվերներին, և հետաքրքրությամբ կարդում էր Աստվածաշնչի այն էջերը, ուր խոսվում էր սիրո մասին և սիրային պատկերներ ներկայացվում. ամենից շա՜տ սիրում էր կարդալ «Երգ երգոցը»: Մի օր էլ, երբ նա ջաղացի պարտեզում, առվակի ափին, պառկել էր ծաղիկների մեջ ստվերաշատ ծառի տակ, կարդում էր հարյուր անգամ կարդացած «Երգ երգոցը», թռչունները երգում էին նրա գլխի վերևը, այնպես ասո՛ւր, ասես, «Երգ երգոցի» անուշ խոսքերն էին թոթովում. Հարութը գիրքը ծալեց, դրեց գլխի տակ, աչքերը փակեց և ուզում էր պատկերացնել իր հոգու առջև գեղեցիկ ու մանկատի Սոմնացին, որ կարողացել էր հափշտակել սիրուց հագեցված Սողոմոնին, որ հազար կին է վայելել: Տարված սաղարթի օրորուն ու քնաբեր շրշյունով, թռչունների երգով և իր մտքերով, քուն մտավ Հարութը և մեկ էլ ահա՝ երևցավ մի շա՜տ գեղեցիկ աղջիկ, հազար անգամ գեղեցիկ, քան Սոմնացին, լուսաշող երեսով, վարդեր հագած, անուշ ժպիտով, մի հրեղեն աղջիկ. մոտեցավ Հարութին այնքան, որ Հարութը հազիվ թե հասներ նրա զեփյուռի պես շղարշներին, Հարութի շրթունքներին մի ոսկի թաս մոտեցնելով՝ դրախտի թռչունների ձայնով ասաց.— «Խմի՛ր, Հարութ ջան, գիտե՞ս ես ով եմ. ես եմ մենակ հաստատ բանը»: Հարութը մի կումով խմեց անմահական խմիչքը և վայրկենի մեջ հարբած՝ ձեռքը մեկնեց, որ բռներ Հրեղեն աղջկա բազուկից. աղջիկը մի քանի քայլ հեռացավ և ասաց.—«Հարութ ջան, կրակով պիտի փորձվի սերը. մնաս բարով, ինձ մի՛ փնտրիր ծաղիկների, աղջիկների, եղնիկների մեջ, չես գտնի, ինձ փնտրիր երազների մեջ», ասաց և անուշ ժպտալով թռավ վե՛ր, վե՛ր և լույսի, բույրի, երգի պես ցնդվեց ու ցնդվեց: Հարութը ապշած նայում էր նրա

հետևից, պապանձված էր. խոսք չէր կարող խոսել, ու կայծակով զարկվածի պես ընկել էր մեջքակտոր, գետնին. երբ Հրեղենը իսպառ անհայտացավ, Հարութը կսկծուց ուշաթափվեց... Եվ երբ զարթնեց, արդեն երեկո էր, մոլորված ու շըփոթված պառկել էր նա և չէր կարողանում շարժվել. շըրթունքների վրա գգում էր անմահական խմիչքի համը. անուշ ձայնը թրթռում էր դեռ ականջների մեջ. աչքերը գոցեց՝ նորից նրան տեսնելու համար, բայց զուր. այդ ցնորում և մոլորում դրության մեջ էր, երբ լսեց երեկոյան եկեղեցու զանգերի հատ ու կտոր հնչյունները. այս առաջին անգամ էր, որ նրա սիրտը չձգտեց ժամ գնալ. նորից պառկած մնաց, մինչև ստվերները ավելի թանձրացան ձորի մեջ. ապա Հարութը, աչքերը տրորելով՝ ոտքի կանգնեց և օրորուն քայլերով, կիսաքուն ու կիսարթուն բռնեց տան ճամփան:

Բերանը առանց մի պատառ հաց դնելու, Հարութը մըտավ անկողին. առավոտ շատ դժկամությամբ հետևեց տերտերին եկեղեցի, և եկեղեցումն էլ նա սաստիկ ցրված էր, չփոթում էր ժամասացության կարգը, հաճախ էլ մոռանում էր հազար անգամ ասածը, ջրի պես գիտցածը: Տերտերի հարցին, թե արդյոք հիվանդ չէ, Հարութը չպատասխանեց: Տուն դառնալով՝ Հարութը իսկույն շտապեց ջաղաց, և պառկեց այն նույն տեղում, ուր եկել էր տեսիլը. աչքերը գոցեց՝ ականջը թռչունների երգին, հուսալով նորից տեսնել Հրեղենին, բայց նորեն զուր. այս գիշեր և հաջորդ երեք գիշերները Հարութը գյուղ չիջավ, մնաց ջաղացում, առավոտից մինչև ուշ-գիշեր նույն տեղում՝ աչքերը գոց, երբեմն էլ հայացքը աստղերից աստղ հածելով, ինքնիրեն մրմնջում.— «Տեսնես հիմի ո՞ր աստղի վրա է Հրեղենը...»:

Ջաղացի ծառաները ուժով նրան զարթնեցնում էին ու բերում ջաղացի սենյակը հաց ուտելու, և նրա փակված ախորժակը բանալու համար ջաղացպան վարպետը մի-երկու բաժակ օղի էր տալիս, ճաշից հետո էլ ծխախոտ էր հրամցնում, ասելով.—«Քաշե՛, Հարութ ջան, սիրտդ բացվի, մուխի հետ գեշ մտքերդ դուրս կելնեն, կերթան»: Այնուհետև Հարութը փախնում էր տնից ու ժամից, գալիս էր ջաղաց, պառկում էր այնտեղ, Հրեղենին տեսնելու տենչով, և ապա

գնում էր վարպետի մոտ, արաղ էր խմում, որը սկսել էր ընդրան դուր գալ, որովհետև կրակում էր արյունը, և ապա տաք ու անուշ թմրություն էր բերում վրան, որով ավելի դյուրությամբ ընկնում էր երազանքի գիրկը:

Մի անգամ ամբողջ մի շաբաթ ջաղացում, տերտերն ու մայրը քանի անգամ խնդրեցին, սպառնացին, որ տուն գնա, եթե հիվանդ է պառկի, Հարութը չհամաձայնեց, ապա նրան գրեթե ուժով տուն տարան, և որովհետև կարծում էին, թե ծառների տակ պառկելով, մրսել-հիվանդացել է, տաք թեյ խմեցրին, ծածկեցին, որ քրտնի, բայց Հարութը թեյի փոխարեն արաղ ու ծխախոտ էր ուզում, երբ չկատարեցին նրա պահանջը՝ գիշերով փախավ անկողնուց և գնաց ջաղաց, այնուհետև Հարութը ո՛չ եկեղեցի էր գնում, ո՛չ տան երես տեսնում. գյուղում ընկերներ գտավ, որոնք ծխում էին ու խմում, ընկերացավ նրանց հետ:

Հրեղենին տեսնելուց հետո բոլորովին փոխվել էր Հարութի հոգին. նա սիրահար էր, սիրով հարբած, գիշեհար, իսպառ լքել էր գրքերն ու եկեղեցին. թափառում էր սարերն ու ձորերը, ամեն ծաղիկի աչքի մեջ նայում, ամեն ծաղիկի բույրը ծծում, ամեն թփի տակ պրպտում էր Հրեղենին գտնելու համար, գնում էր Առիճ լեռան հետու, բարձր կատարները, իջնում էր խոր փաղարները, մացառուտների մեջ թաքչում, եղնիկներին գտնելու իղձով. սակայն ապարդյուն, որովհետև շա՜տ հազվագյուտ են եղնիկներն ու այծամները այս սարերում, որոնք պատահելիս էլ ծլկվում էին հետի պես, նման Հրեղենին, որ երևեցավ ու մի վայրկյան հետո չքացավ... ապա գյուղերի ափում, ճանապարհների վրա, հանդերը բանջար քաղելու եկած աղջիկներին մոտենում էր, երեսներին նայում, նայում, հուսալով, թե՝ մի գուցե նրանց մեկն ու մեկի մեջ, պատահաբար, իրեն տված խոստումի համաձայն, մարմնացած լիներ երազի աղջիկը: Սակայն ապարդյուն:

Հրեղեն աղջկա անսահման կարոտից և անհասնելի սիրուց Հարութի հոգին օր-օրի վրա ավելի բորբոքվեց ու կատաղեց, ալեկոծվեց ու խենթ ու խելառ ձևեր առավ. օրերով ծարավ էր մնում, որ գոնե երազում աղջիկը նրան ջուր տա,

ինչպես անում են գյուղերում սիրահարները սովորաբար, սակայն նրա չար բախտից Հրեղենը չէր երևում ու չէր երևում:

Տեր-Սահակը խորին վշտով, մտածում էր ու նորից մըտածում Հարութի հոգու փոփոխության մասին և չէր կարողանում հասկանալ պատճառը. իր ամեն աղոթքի մեջ խընդրում էր աստծուց ու բոլոր առաքյալների բարեխոսությունը, որ հանգստություն տան Հարութի վրդովված հոգուն, բարի դարձ տան մոլորված ոչխարին: Մի երկու անգամ խոսեց նրա հետ, խրատներ կարդաց, սակայն նա լուռ, անպատասխան լսում էր և հարմար վայրկյան գտնում, դուրս փախչում: Հարութը այսպես երկու տարի շարունակ անհանգիստ սիրով ու կարոտով այրվեց, տանջվեց ու մաշվեց, խըմելուց այլ չէր բանում, միակ մխիթարանքը խմելու մեջն էր գտնում: Երկու տարի նա անայլայլ որոնեց Հրեղենին, որը սակայն ո՛չ երազում տես եկավ, ո՛չ աշխարհի վրա մարմին առավ... Հուսահատ էր Հարութը... Իսկ նրա խեղճ մայրը մեկուճար սիրած որդու տանջանքով լուռ տոչորվելով, կոահեց մի օր կանացի բնազդումով, թե Հարութը սիրով զարկված կլինի, և մի անգամ բռնեց նրան ջաղացի մոտերքը. լալով, մղկտալով խնդրեց, որ ասե, հայտնե իր վիշտը հարազատ մորը, ավելացնելով, որ եթե այլ ունի ձգած մի որևէ աղջկա վրա, «երկինք-գետինք իրար կխառնենք, քու սերդ քեզ կհասցնենք, հազար աղջիկ քեզի մատաղ, հողեմ աղջիկների գլուխը, դարդ մի՛ արա, անուշիդ մեռնիմ»:

Այս խոսքերի վրա Հարութը մեղմացավ, լաց եղավ և ասաց, որ իրեն երազի մեջ սեր են տվել, մի հրեղեն աղջիկ, որ ասել է ինձ փնտրիր, կարելի է գտնիս: Մայրը խրատելով ասաց.— «Երազի աղջիկը թո՛ղ երազի մեջ մնա, շատ կարդացողի վերջն էդպես է, ես քեզի չէի՞ ասի՝ խելքդ գրի հետ կերթա, դու հանգիստ եղիր, ես քեզի համար հաստատ, աչքի տեսը, սիրուն, լույսի կտոր աղջիկ կառնեմ, չէ թե երազի միջի դարդակ, սուտ աղջիկ»:

Մայրը խրախուսված այս հայտնությամբ գնաց, տերտերին հայտնեց բանը. տերտերը լսեց ու հառաչելով ասաց.—

Հասկացա, խեղճ տղան սատանոք է եղել. փորձիչ սատանան, որ զօր ու գիշեր կդատե մարդկանց հոգիները որսալ, տեսնելով Հարութի աստվածապաշտությունը և ուղիղ ճամփով գնալը, գայթակղեցրել է նրան իր աղջկա պատկերը ցույց տալով. Հարութին անպատճառ պիտի ամուսնացնել, որ սուրբ պսակի կնիկը գա, դուրս քցե Հարութի չարոցք քնկած մտքի մեջեն էն անզգամ աղջիկը: Տե՛ր աստված, դու հասնի՛ս, ամե՛ն»:

Տերտերը վճռեց Հարութին շուտով պսակել. հայտնեց տիրուհուն և Հարութի մորը, որ գյուղում աղջիկ նայեն, ինքըն էլ հանձնարարեց իր բարեկամներին, որ գյուղերում հետաքրքրվեն, հարցուփորձ անեն ապագա տիրուհի լինելու անհրաժեշտ հատկություններով, իրենց տոհմի անունին վայել, մի սիրուն և լավ սրտի տեր աղջիկ գտնեն:

Գյուղացիք բերնե-բերան լսելով Հարութի այս խենթ փոփոխության մանրամասները, և նրան տեսնելով հանդերում մենակ թափառելիս, ինքնիրան խոսելիս, և մարդկանցից փախչելիս, վճռապես ասում էին, թե Հարութը սատանաների հետ է, որ նրանց փեսա է եղել, գիշերները նրանց մոտ քեֆ է անում դավուլ-զուռնայով, խմում հետները, նրանց լկտի աղջիկների հետ պար գալիս, նրանց հետ գնդակ է խաղում, ու միշտ էլ հիմա սատանի սաղմոս կարդում:

Նույնիսկ տեսնող է եղել, մի պառավ տիկոոացի կին, որ Հարութը ծառի տակ պառկած ժամանակ, մոտենում է նրան սատանան իր երկու տղոց հետ, Սլիկի և Պլիկի: Նրանք գիտնալով Հարութի ժամասիրությունը, մեծ տղան ուզում է զարկել նրան, սպանել, բայց հայրը չի թողել՝ ասելով, թե՝ եթե սպանես, հոգին դրախտ կերթա, այնպես մի բան անենք, որ մոլորվի, ժամի ճամփան կորցնե, գա մեր թարփն քնկնի: Այս խոսքի վրա Սլիկը արաղ է քսում Հարութի ճակատին ու շրթունքին, որ հարբեցող դառնա, աստծո երեսից քնկնի, իսկ փոքր տղան՝ Պլիկը ցույց է տալիս իր բրոջ սատանայական պատկերը, որ Հարութը նրա սիրով այրվի ու պապակի, և հոգին տա սատանին իր աղջկա համար:

Վերջապես, տերտերը գտավ մի սիրուն և լավ տնից աղջիկ, Խաս գյուղից, Հարութի համար հարսնացու:

Համաձայնվեց ամուսնանալ Հարութը, որովհետև հուսահատվել էր ու հոգնել Հրեղենին փնտրելուց և ուզեցավ «կնկա համն առնել», ինչպես ասում էր նա իր մտքի մեջ, վճիռ կայացնելուս: Ամուսնության առաջին երկու ամիսը բարերար փոփոխություն մտցրեց նրա հոգու մեջ, Հարութը սկսեց շուտ-շուտ եկեղեցի գնալ, և երբեմն էր խմում, տանեցիք բոլորը ուրախանում էին և իրար ասում, ծիծաղելով, թե «գոգնոցը խելք բերեց». իսկ տերտերը փառք էր տալիս աստծուն, որ գթացավ Հարութի վրա, սակայն այս դրությունը երկար չտևեց:— Մի գիշեր, երբ Հարութը կնոջ հետ պառկած էր, հանկարծ լսեց Հրեղենի ձայնը.— «Ամո՛թ քեզի, Հարութ, ինձի ուրիշի հետ փոխեցիր, հա՛, հա՛, հա՛...»: Հարութը խենթի պես թռավ անկողնուց և վազում էր սենյակի մեջ այս ու այն կողմը, այս ու այն անկյունում մի բան որոնելով: Այդ դեպքից հետո Հրեղենի սերն ու կարոտը զարթնեց ու տանջեց Հարութին առաջվանից ավելի զորեղ կերպով, դադարեց եկեղեցի գնալ. նորեն իրեն հարբեցողության տվեց, տուն չէր գալիս օրերով ու գիշերներով, երբ տուն էր դառնում, անախորժ, դառն կռիվներ էին տեղի ունենում մարդ ու կնոջ միջև: «Գառի պես տղա էր,— հեծկլտալով ասում էր կինը,— մեկ էլ ի՞նչ եղավ, ի՞նչ չեղավ, կես գիշերին դիվոտավ, ու էն օրվանեն կխմե, կուգա գլուխս կկպնի, հոգիս էլ չի առնի աստված, որ պրծնեմ էս տարտարոսեն...»: Եվ լաց էր լինում խեղճ հարսը օր ու գիշեր և իր բախտն անիծում, մանավանդ որ հղի էր արդեն և հիվանդագին կերպով ջղայնացած. շարունակ խանդում էր Հարութին և նրանից սեր ու համբույրներ էր պահանջում, մի բան, որ սարսափելի կատաղեցնում էր ու դիվահար դարձնում Հարութին, իսկույն գլուխն առած դուրս էր փախչում կնոջ փաղաքշանքներին չենթարկվելու համար, փախչում էր այս ու այն ընկերի մոտ, խմում, հարբում, կամ գնում էր Ծպնի, քեռանց տունը պահվում, և կամ ավելի հաճախ գնում ջաղացը, այն ճակատագրական տեղի վրա բերանքսիվայր հարթած ընկնում և Հրեղենին սպասում կարոտով, կարոտով:

Մինչ այդ Հարութի թշվառ կինը ծնունդի վրա մեռավ,

չուզենալով Հարութի երեսը նույնիսկ վերջին անգամ տեսնել. մեռավ խեղճ կինը մի երեխա թողնելով: Այս ահավոր դեպքը անկշռելի վշտով ու տանջանքով լցրեց Հարութի սիրտը, որ բնականից շատ փափուկ էր ու կարեկցող: Նա թեև, իսկապես չէր սիրում իր կնոջը, բայց շա՜տ էր խղճում նրան, իսկ մահը, որի մեջ Հարութը իրան մեղավոր էր համարում, չափազանց գազազացրեց ու հուսահատեցրեց նրան: Այլևս անկարելի էր Հարութին տունը գտնել, իր որբ երեխայի լացի ձայնը չլսելու համար նույնիսկ գյուղ չէր գալիս, կամ ջրաղացում էր անցկացնում, կամ քեռոնց տանը, կամ սարերում ու ձորերում, հաճախ անոթի-ծարավ: Եվ վերջապես խղճի խայթն ու իր դժբախտ կյանքի ծանր ցավերը մոռանալու համար նորից դիմում էր կամա թե ակամա կերպով խմիչքի: Հարութի ընտանիքի սիրտը լցվում էր կրակով, երբ տեսնում էին նրան այս ողբալի վիճակի մեջ. խեղճ մայրը ամեն շաբաթ մատաղ էր անում այս ու այն սրբի անունով և զանազան վանքերի դուռը մաշում լալով ու հեծեծանքով, որ աստվածային ուժերը մի ճար անեն Հարութի կորած հոգուն, սակայն Հարութը օրօրի վրա վատանում ու վատթարանում էր, գյուղացիք երբ հանդիպում էին նրան սարերում կամ ձորերում, խրատում էին, բայց նա հայհոյում էր թե՛ նրանց, թե՛ աստծուն, և թե՛ սատանային: Այսպիսով գյուղացիք նրան սկսեցին վերակոչել «Չիք Հարություն, դավանող Հարութ» կամ պարզապես—«չնչհավատ»:

Լուրը հասավ տերտերի ականջը. թե Հարութը աստծուն հակառակ բաներ է խոսում. տերտերը այս գույժի տակ բոլորովին վհատվեց, թե այլևս Հարութի համար բնավ փրկություն չկա, որի կրթության վրա նա տարիներ տքնեց, և ամեն ինչ հիմա զուր կորավ. վճռեց, ինչ էլ որ լինի, մի անգամ լուրջ խոսի նրա հետ, այնպես արեց, որ մի օր, երբ Հարութը ջրաղացն էր, սենյակում, տերտերը ներս մտավ, դուռը փակեց և Հարութի ձեռքը բռնելով, անհուն գորովով նայելով աչքերի մեջ ասաց.— Որդի՛ս, աչքիս լույս Հարությո՛ւն, դու գիտես, որ ես քեզ մեր տնոցից ամենեն շա՜տ կսիրեմ, ինչո՞ւ կտանջես թե՛ մեզ, թե՛ քեզ. մորդ

միակ մխիթարանքն ես, և հորդ միակ հիշատակը, գլուխդ հավաքիր, մի՛ խմիր, ափսոս էդ քու խելքին, շնորհքին, ուսումին, գոնե խղճա քեզի: Որդի իմաստուն ուրախ առնե զհայր, որդի անմիտ տրտմություն է մոր:

Հարութը գլուխը կախ՝ լուռ մնաց:

— Որդի՛ս, կլսեմ, թե դուն աստծուն հակառակ կխոսիս, այդ էր պակաս, փոխանակ որ նրան խնդրես, աղաչես, որ քեզի դարձ տա, դու գեղացոց ասել ես, թե նա չար է, ու չես վախենա, որ տեղն ու տեղը քեզի կայծակով զարկե: Սատանան ինքը կխոսի քո բերանովդ. սատանան ինքը, մեծը:

Հարութը պատասխանեց՝ աչքերը կախ ձգած՝ որովհետև միշտ ակնածում էր տերտերից և չէր համարձակում վստահ խոսել:— Ի՞նչ կասկած, որ նա չար է. ինքդ ասիր, թե կպատժե. օրթե բարի ըլնի, չի պատժե: Սատանա չկա, սատանան էլ ինքն է, աստված...

— Լռի՛ր, անզգամ,— բղավեց տերտերը բարկացած, ապա մտածելով, որ բարկությամբ նպատակի չի հասնի, խրատելը կընդհատվի, զինվեց համբերությամբ և սկսեց մեղմ ձայնով.— Որդիս, դու լավ գիտես, որ տեր-աստված չի ուզեր մեղավորի կորուստը, հապա նրա զղջումը, տես, ինչքա՜ն բարի է աստված: Արդ, դու ինչպես կասես, թե սատանան (մեղա՜, քեզ, տե՛ր) աստվածն է, դու չգիտես, որ սատանան աստծուն ներհակ է, և որ աստված սատանին ստեղծեց մարդկանց փորձելու համար:

— Տերտեր, դուք կասեք, թե աստված ամենագետ է, կանխագետ, ամենակարող, ամենաբարի, ամենագութ, ամենաողորմ...

— Հավատամ և խոստովանիմ:

— Լավ, օրթե էդպես է, ինչո՞ւ է ստեղծել փորձիչ սատանային, ինչո՞ւ է ստեղծել չարն ու մեղքը:

— Ամենաբարի աստված չէր կարող չարը ստեղծել, և չի էլ ստեղծել, երևացող չարը բարի նպատակի համար է ստեղծել, մարդուն փորձելու համար:

— Օրթե նա կանխագետ է, պիտի գիտենա, կանուխեն, շա՜տ, շա՜տ հառաջուց, որ էս ինչ մարդը փորձության կը-

դիմանա, թե չէ, մի՞թե նա չգիտեր, որ Եվան պիտի խաբվեր, ինչո՞ւ փորձեց, ինչո՞ւ կխաղա մարդու հետ:

— Հապա ինչպե՞ս կուզեիր, որ աստված ստեղծեր, դո՛ւն ասա, հետո ես կասեմ, մեկ միտքդ իմանամ:

— Օրթե աստված ամենակարող է, թող մարդուն ստեղծեր էնպես, որ մարդը իսկի չգայթակղվեր, փորձությունը հաղթեր:

— Կտեսնես, որ խելքդ բանի չի հասնի, էն ժամանակ մարդը մեքենայի պես կլիներ, իսկ աստված մարդուն ստեղծեց անձնիշխան, ազատ կամքով, բանականությամբ, մարդու հոգու մեջ դրեց կշեռք, որ մարդ մտածե, կշռե, դատե, ու ազատ, հոժար կամավոր ընտրությամբ ու խելքով չարն ու բարին ընտրե, իրարուց զատե: Եվ աստված այնքան ողորմած է, որ մարգարեների բերանով մարդկանց հայտնեց օրենքներ ու պատվիրաններ, կրոն ու սուրբ գիրք տվեց, իր միածին իսկ որդուն ղրկեց աշխարհ ճշմարտության բանը քարոզելու... մարդկանց կմնա մենակ լսեն այդ օրենքներին ու ճշմարտության բանին, և իրենց կյանքի ճանապարհը երթան նրանց ցույց տվածի համաձայն:

Տերտերը նայեց, որ Հարութը ուշադիր լսում է, քաջալերված շարունակեց, քթախոտը քաշելով.

— Այդ ճանապարհը երկնային է, կտանի մարդու հոգին հավիտենական արքայություն, իսկ հակառակ ճանապարհը սատանայինն է, որ կտանի հուր-հավիտյան դըժոխք, ուր լալ կա և կրճտել ատամանց: Դուն անմիտ ես, ու քեզ իմաստուն կկարծես:

— Տերտե՛ր,— հարցրեց Հարութը,— ես չեմ հասկանար, չէ որ գրած է, թե ինչ որ կկատարվի տիեզերք-աշխարհի մեջ՝ աստծո կամքով կկատարվի:

— Այո՛, մեր գլխի մազն իսկ առանց նրա կամքի վար չի ընկնի,— հաստատեց տեր-Սահակը:

— Օրթե էդպես է, ուրեմն աստծո կամքով է, որ մարդկանց մեկ մասը դրախտ կերթա, մեկէլ մասը՝ դըժոխք. ի՞նչ մեղավոր է էն մարդը, որ թույլ կամքով է ծընվել, չէ՛ որ աստված նրան էդպես է ստեղծել, ու չի կարող

հաղթել սատանային, իսկ ի՞նչ իրավունք ունի դրախտ գնացողը, որին աստված ամուր, հաղթող կամք է տվել, աստծո ձեռքն է մարդկանց դրախտ կամ դժոխք տանելը, էդպես է, օրթե ամեն բան աստծո կամքեն է կախ, օձը մեղավոր չէ, որ թույն ունի, գայլը մեղավոր չէ, որ գառ կուտե, թող աստված թույն չստեղծեր:

— Չէ՛, տղաս, աստված ամենաբարի հայրն է մեր, նա ստեղծել է աշխարքը մարդու վայելքի և բարիքի համար, չար սատանային էլ աստված տվավ այս երկրի իշխանությունը,— ուրեն կասեմ, որ լավ հասկանաս,— որ փորձե մարդու հաստատամտությունը, հնազանդությունը, հավատի ամրությունը աստվածային օրենքներին, ու էդպեսով բարի հավատքով մարդը կհաղթանակե չարի վրա. էնպես որ չարը բարիքի համար է, բարի աստվածը չար բան չի ըստեղծել: Որդի՛ս, հավատա՛, և կապրես, հավատքը կփրկե մարդուն, հավատա՛ ու մի՛ քննիր աստծու գործքերը, զի անքննելի, անիմանալի են նորա:

— Տերտեր, խելքիս չի նստի, չեմ կարող հավատալ,— հուսահատ ձայնով ասաց Հարութը,— դու կասես՝ չար բան չկա, երևացող չարը բարիի համար է ստեղծել, ինձի էնպես կերևա, թե չարն է հաստատը, բարին երևացողը: Մի՞թե բարի բաներ են՝ տանջանք, հիվանդություն, ցավ ու սով, մահ և սպանություն, օրթե աստված բարի է, ինչո՞ւ ստեղծեց կատուն՝ մկին դահիճ, մարդը մարդուն խաչող, բարի հայրը ինչո՞ւ ստեղծեց մահը, որ անխնա, անխիղճ կերպով կսպանե, կսպանե մարդուն, մեծ ու պստիկ: Սատանեն ղրկեց, որ մարդուն խաբելով կերցնե չարի ու բարու գիտության ծառի պտուղը, որ մարդ բան իմանա, անքախտ ընկնի ու մեռնի, իսկ հրեղեն սրով արգելեց, որ չուտեն կյանքի ծառից, որ անմահ մնան, էդպես հորը ես բարի չեմ ասի:

Տերտերը այլևս չհամբերեց, կտրեց Հարութի խոսքը:

— Դու նզովված հերետիկոս ես, սատանան մեջդ բուն է դրել, դժոխքական ես դարձել, ուրեն կասեմ, խեղճ ես, գոջա՛, մեղքերդ լաց ու քավե. ստեղծողը կներե, սատանայի ճանկից կազատվես: Սկիզբն իմաստության երկյուղ

տյառն է, դու էդ երկյուղը կորցրել ես. կհամարձակիս Ամենակալի գործերը քննել, նախախնամության դեմ քո փուչ ունայնամտությունը կբանեցնես, վախեցիր նրա աչեղ բարկությունից. դու ո՞վ ես որ. որդ, ճիճու, ոչնչական, հին ժամանակ քեզնից հազար անգամ մեծ ու խելոք հսկաները լեռները լեռների վրա դրին, որ հասնին երկինքին ու աստծուն սպանեն. նրանց պետը ելավ դիզված լեռների վրա ու նետն արձակեց երկնքի խորքը, նետը գնաց, գնաց, և ապա ետ դառավ, եկավ խրվեց ամբարտավան հսկայի սրտի մեջ, սատակեցրեց ու գլորեց դժոխքի խորքը ամբարտավան հսկային... Դու ո՞ւր կմնաս, ծունկի արի, հավատամք ի մի աստծուն, ասա հրաժարիմք ի սատանայեն, ասա, երթանք եկեղեցի, լա՛ց, որոտա՛, որ նորից հավատացյալ դառնաս, ապրես...

— Ջուր է,— ասավ կտրուկ Հարութը,— ես չեմ հավատա աստծու բարությանը, նրա բարությունը չեմ տեսել, ես տեսել եմ միևչի էսօր, որ չարն է աշխարքի տերը, ապրողը զրկողն է եղել, մեռնողը՝ խեղճը, զրկվողը, ինչո՞ւ աստված մեր աչքի առջև չի պատժի չարին, սպանողին, կամ օրթե չի կարող չարը ջնջել, կնշանակե ամենակարող չէ, օրթե կարող է ու չի անե, կնշանակե չար է, օրթե աստծո կամքով՝ մեղավորն է պատժվողը, ուրեմն հայն է մեղավորը, թուրքը՝ արդար, ես չեմ կարող էդպես աստծուն բարի ասել...

Տերտերը զարհուրած խաչակնքում էր երեսը և թախանձանքով ու զայրույթով պահանջում էր, որ Հարութը «Հավատամքն ու հրաժարիմքը» ասե:

— Ջո՛ւր է, զո՛ւր,— կրկնեց Հարութը,— ես չեմ հավատա աստծու բարությանը, ես չեմ հավատա սատանայի չարությանը, ո՛չ էլ դրախտի կհավատամ, ո՛չ էլ դժոխքի, ամեն բան էս աշխարքի մեջն է, օրթե սատանա էլ կա, նրա ճամփան լավն է, նրա աշխարքը՝ դրախտն է — կնիկ, գինի, քեֆ, զուռնա, իսկ աստծու աշխարքը—դժոխք, ծուխ, պաս, զրկում, անկնիկ, ճգնավորի մեռած օր ու կյանք...

Տերտերը այլևս չէր լսում Հարութին և իրենից դուրս ելած՝ հայհոյում էր և գավազանի մի երկու հարված իջեց-

րեց նրա գլխին, Հարութը առանց խոսք ասելու դուրս թռռավ լուսամուտից և անհայտացավ ձորի մեջ:

Տերտերը բավական ժամանակ չկարողացավ մեղմել իր նզովներն ու բարկությունը, ապա «Հրաժարիմքն ու հավատամքը» ինքը մենակ բարձրաձայն արտասանելով, վերադարձավ գյուղ՝ ճանապարհին անվերջ խաչակնքելով երեսը: Հուսահատված իր ձեռնարկի անհաջողությունից, առաքինի ծերունին, աչքերը լցված կոշտ արցունքով, մտավ Տիկոռի հին, բազմադարյան նվիրական տաճարը, և մեկության ու լռության մեջ փուվեց բազկատարած՝ սեղանի առջև: Ջերմեռանդ ու սրտաբուխ աղոթքով նա խնդրում էր աստծուց մոլորյալ Հարութի համար կամ վաղահաս մահ, կամ դարձ դեպի ուղղափառ հավատքը և Քրիստոսի սուրբ եկեղեցին:

Հարութի կասկածները դեպի աստծո ամենակարողությունն ու ամենաբարությունը, թերահավատությունն ու շեղումը ուղղափառ դավանանքից իրենց արմատները վաղուց էին ձգել նրա հոգում, սկիզբները շատ նուրբ ու վախկոտ, ապա ավելի հաստատուն ու վստահ. եկեղեցում ապաստարկության ժամանակ հաճախ նրա մտքում կասկածի մտքեր էին ծագում, ակամա կերպով, ինչքան ջանում էր վանել, այնքան ավելի մեծ թափով նրանք արշավում էին Հարութի վրա ու դնում իրենց անհավոր հարցերը նրա հոգու առջև, և պատասխան պահանջում, խստասիրտ, անողոք պարտատերի նման. անլույծ հարցեր, որոնք օր ու գիշեր տանջում էին նրա երիտասարդ միտքը: Բնությունից սուր և խորունկ խելքով օժտված այդ գյուղացին անկարող էր լուծել այդ հարցերը: Չուներնալով ժամանակակից գիտական զարգացում, կրթված լինելով միջնադարյան դպրությամբ, սակայն ինչպե՞ս, ե՞րբ դրդվեց նրա ուղղափառ հավատքը, և ինչպե՞ս, ինչտեղի՞ց մուտք գործեցին նրա մեջ կասկածները, շատ դյուրին կարելի է հասկանալ, երբ նկատի առնվի այն երևույթը, որ Շիրակում գաղտնի և հայտնի կերպով զանազան աղանդների փոքրիկ կենտրոններ կան, բողոքականներ կան, շաբաթականներ կան, որոնք գործում են հայ եկեղեցու անսխալականության դեմ. թոնդրակյան հին

և մեծ աղանդի արձագանքները կան, որոնց հետևորդները դիմակված ու ծպտյալ կերպով շրջում են գյուղերը՝ առևտրական գործերով, պարզ, անպաճույճ գյուղացիներ, խոսքի ու վեճի են բռնվում այս կամ այն տիրացուի հետ, կրոնական խնդիրների վերաբերմամբ. թունավորելով իրենց շուրջը, կասկածներ հարուցանելով հոգու անմահության, հանդերձյալ կյանքի, նախախնամության, վերջին դատաստանի և եկեղեցու յոթը խորհուրդների մասին, որոնց թեև իրենց սրտի խորքում չեն հավատում, սակայն, երեսանց հավատացյալ են ցույց տալիս՝ իրենց հալածանքների չենթարկելու համար: Վեճերից հետո եկեղեցի են հաճախում և ավելի ջերմեռանդ աղոթում, քան անկեղծ հավատացյալները: Նույնիսկ մի քանի դեպքեր պատահել էին Հարութին, այդ ծպտյալ աղանդավորների հետ վիճել էր նա կատաղի կերպով, պաշտպանել էր ուղղափառ դավանությունը, սակայն այդ վեճերը ձգել էին միևնույն ժամանակ կասկածի և քննության սերմերը նրա մեջ...

Եվ Հարութի կարդացած գրքերը՝ ուղղափառների կողմից գրված ընդդեմ աղանդների, ինչպես Եզնիկի «Եղծ աղանդոցը» կամ Չամչյանի և հին հայերի պաշտպանողականները թոնդրակեցոց դեմ, այդ ամենը հակառակ ազդեցություն էին գործում նրա վրա, ուղղակի պաշտպանողական վահան էին դառնում աղանդների համար:

Շիրակի գյուղական ժողովրդի ուղղափառ հավատին դեպի ամենաակարող աստվածը նվազ չհարվածեցին հայկական ահավոր ջարդերը, նյութված սուլթան Համիդից. հայը ո՛չ երկնքից օգնություն ստացավ, ո՛չ երկրից, ո՛չ աստված վրա հասավ, ո՛չ մարդը, թուրքը այրեց եկեղեցին՝ մանուկներով ու կանանցով լեցուն, խաչը ձգեց ոտքի տակ, սկիհով շուներին լափ տվեց, եկեղեցիները շինեց հայ կույսերի պղծարան վայրագ զինվորների համար: Գյուղերում եղան մարդիկ, որ բացարձակ ժխտում էին նույնիսկ աստծո գոյությունը: Հարութը նույնպես ազատ չմնաց զգացումների և մտայնության այս ընդհանուր ալեկոծումից: Սակայն կասկածներ տածելով աստծո բարի կամքի վրա, վախվը-

խելով, քննադատելով նրա արարքները, երբեք չհասավ նա անաստվածության:

Տերտերի հետ ունեցած խոսակցությունից հետո Հարութի երեսի կաշին, ինչպես ասում է ժողովրդի ոճը, պատռվեց. մինչ այդ նա ակնածում էր հարգված հորեղբորից, այսուհետև դարձավ համարձակ, անվախ. խմում էր անչափելի, հարբած մտնում էր գյուղ, ծանոթ թե անծանոթ հարսների ու աղջիկների առաջն էր կտրում. մի խոսքով, Տերտերանց տան անունը խայտառակել էր գյուղում. դրացիները մերթ զսպում էին իրենց, Տերտերանց ընտանիքի պատիվը պահելով, մերթ բողոքում էին, թե ինչո՞ւ ճար չեն անում. ինչո՞ւ են վեր վարել... «Խելառ է, խելառ չէ Հարութը, խելոք է, խելոք չէ, ինչպե՞ս պրծնենք էս աստծո կրակի ձեռքեն»,— ասում էին գյուղացիք, որը ցավով, որը բարկությամբ: Տերտերն ուղղակի գլուխը կորցրել էր, իսկ խեղճ մայրը խունկ ու մոմով, ու մատաղով ձանձրացրել էր բոլոր սուրբերին: Մի օր էլ լսեց մայրը, թե Կողպում մի պառավ կին կա, որ մեծ համբավ ունի գյուղերում, իբրև նշանավոր աղոթող, թեզ բացող, նետ ձգող, վախ բռնող և ուրիշ աստվածատուր շնորհքների տեր, գնաց այդ վհուկի մոտ, պատմեց իր վիշտը, պառավը նետ դրեց, նետը ցույց տվեց Կաղզվանի խոնարհ կտուրի դուռը: Այդ սուրբը գտնվում է Կաղզվանի մոտ և բոլոր գազազված, խելագար հոգիների բուժողն ու անդորրացնողն է:

Պետք է Հարութին տանել նրա դուռը, բայց ինչպե՞ս համոզել Հարութին, նա երբեք բոի մեջ չէր գալիս, կատաղած ցուլի պես փախչում էր, ով որ ուզենար մոտենալ: Մնում էր, որ նրան բռնեին, կապեին ոտն ու ձեռքը և տանեին: Մի օր էլ, Հարութը շատ խմած-հարբած անցգա ընկել էր գյուղում, փողոցի մեջտեղը, գյուղացիք նրան տուն բերեցին, տանեցիք պատեհ վայրկենը գտան, որ նրան կապեն ու տանեն Կաղզվան, բայց Հարութը մեկ էլ ուշքի եկավ, հայհոյեց բոլորին, կատաղած, գազազած սրան էր խփում, ձեռքն ընկած իրը կոտրում, ջարդում: Տերտերը վրա հասավ, Հարութը նրան տեսավ թե ոչ, խաղաղվեց, ապա տերտերը կանգնեց ու Հարութի գլխին ավետարան

կարդաց: Երբ կարդում էր ու ներից անընդհատ կարդում, դողդոջուն ու լալահառաչ ձայնով, ամբողջ ընտանիքը ժողովված լաց էր լինում, այդ խորհրդավոր ու սրտառուչ ժամին, մեկ էլ հանկարծ Հարութը դիվոտեց, զարկեց գըլխով Ավետարանին և գոռաց.

— Տերտեր, շուտ արա պրծի,

Հարսներն ելան սնձի...

Տերտերը սաստիկ բարկացած, գոչեց.— Խռով մնա ավետարանը գլխիդ, ազգի խայտառակ, Սադայելի աշակերտ, կորի՛ աչքես, կորի՛, կորի՛, կորի՛, և գավազանի անխնա հարվածով դուրս արավ տնից, հրամայեց ծառաներին, որ ջաղաց տանեն և հայտնեն «անպիտան» Հարութին, որ իրավունք չունենա ջաղացից ոտքը դուրս դնելու. եթե գյուղում երևա, ամեն մարդ կարող է նրան ծեծել, Տերտերանց տնից ո՛չ ոք չի պաշտպանելու նրան:

Տերտերը հայտնեց ընտանիքի հասուն անդամներին.— «Թո՛ղ էն անհավատը իրեն համար ապրի ջաղացում, ի՛նչ կենե, թո՛ղ էնե, էլ օգուտ չունի, իրեն կոտոշն իրեն փորը, երեխեն մենք կպահենք, թող տան երեսը չտեսնի, մինչև աստված նրան դարձ տա»:— «Իրեն կոտոշն իրեն փորը», համաձայնեցան տանեցիք, հուսահատված ձեռները թափ տալով: Այդ օրվանից Հարութը թե՛ տերտերի և թե՛ տան համար կենդանի մեռել էր, միայն խեղճ մոր համար դեռ կենդանի էր — ապրող, տանջվող ու դիվահար: Եվ մայրը օր ու գիշեր ավելի ջերմագին սկսեց լալ ու աղոթել, աղոթել ու լալ:

Ծառաներն Հարութին ձեռքից բռնած տարան ջաղաց և հանձնեցին վարպետ Գրիգորին, հայտնելով տերտերի կարգադրությունը, որ լավ հսկե և չթողնե ջաղացեն հեռանալ, աշխատեցնե և արգելե խմել: Արդեն գյուղացոց տերտերը խնդրել էր, որ Հարութին արաղ չտան, արաղ չծախեն վրան: Վարպետ Գրիգորը, որ տարիքն առած մի բարի, ուրախ և առակախոս մարդ էր, սիրով ընդունեց Հարութին, որին միշտ էլ սիրել էր ու փայփայել, Հարութը նույնպես

սիրում էր վարպետին: Տեղավորեց Հարութին իր սենյակում, ամեն օր նոր-նոր առակներ ու հեքիաթներ էր պատմում, ծիծաղեցնում, մխիթարում էր նրան, աշխատանքի սեր էր ներշնչում նրան, հետը աշխատեցնում էր պարտեզում, ջաղացում, երբեմնապես արաղ էր տալիս, և միշտ խնդրում էր, որ վերջ տա, կամ շատ սակավ կերպով գործածե:

Ժամանակ անցավ, Հարութը կամաց-կամաց բավական փոխվեց դեպի լավը, առաջ որ շատ խմելու պատճառով ախորժակը փակվել էր, նորեն բացվեց, առաջ, որ շատ նիհարել և դեղնել էր, հիմա կարմիր գույն եկավ երեսին և մի քիչ պարարտացավ: Գեղեցիկ բնության մեջ ապրելը, հանգիստ և մենավոր կյանքը, պարտեզի ու ջաղացի զբաղումները գոհացուցիչ կերպով նորոգեցին նրան, համեմատաբար խաղաղացրին հուզված հոգին:

Արդեն երկու տարի էր անցել, որ նա ջրաղացումն էր, ուժերի ներածի չափ աշխատում էր տնտեսության մեջ, և այս ժամանակի ընթացքին ո՛չ մի անգամ գրեթե խենթության կամ կատաղության մեջ չընկավ, թեև ամեն օր խըմում էր, սակայն բավական չափավոր, առաջ որ օրն ի բուն, հաճախ մինչև անզգայությունը հարբած էր լինում, հիմա շա՜տ ուշ-ուշ, մանավանդ, երբ Ուստա Կարոն և կամ մի ուրիշ սիրելի ընկեր հյուր էր գալիս մոտը, կամ երբ առանձնապես ուժգին կերպով վերզգում էր իր հոր ու կըմոջ մահը կամ Հրեղենի անհույս սիրո կարոտը և կրոնական անլուծելի հարցերը — և վերջապես, այդ բոլորից հետո, երբ շարեշար հետևում էին իր հոռետես տպավորությունները կյանքից ապրած, տխուր մտքերը, տխուր հուշերը—այն ժամանակ խմում էր ու հարբում, որ ինքնամոռանա, անտեսե աշխարհի իրականությունը և ընկնի երևակայական գեղեցիկ աշխարհի մեջ, երազական իրականության մեջ:

Պակաս չնպաստեց Հարութի զգաստանալուն և այն հանգամանքը, որ տերտերը դուրս արավ նրան տնից ու գյուղից. խորապես խայթվել էր նրա ինքնասիրությունը, և պատվի զգացում էր զարթնեցրել հոգում դեպի իր անձը:

Այդ դեպքի շնորհիվ Հարութը չուզեցավ այլևս գյուղ գնալ, տունը այցելել: «Թե կուզեն ինձ տեսնել, թող գան ջաղացը, թե կուզեն տուն դառնամ, թող ասեն»— այսպես էր ասում նա շարունակ ինքն իրեն մեջ:

Տերտերը մտքի մեջ ուրախանում էր, տեղեկանալով Հարութի մի քիչ դեպի լավը փոխվելու մասին, սակայն տնեցոց նորից խիստ պատվիրում էր, որ երես չտան, թող տակավին մնա աչքից ընկած, տնից հեռու, մինչև որ կատարելապես լավանա: Ինքը երբեք չգնաց Հարութին տեսնելու, բայց մայրը շաբաթը մի երկու անգամ Հարութի որբուկին գրկած գնում էր նրան տես, զանազան նվերներով, կամ շապիկ, գուլպա և այլ կարևոր բաներ հետն ունենալով: Հարութը կարոտով համբուրում էր մորը, երեխային գրկում, լաց լինում, ապա շա՜տ զվարթ կերպով մոր հետ զբոսնում էր պարտեզում, հյուրասիրում էր լավ պատառներով, և դարձին մինչև գյուղի մոտերքը ուղեկցում նրանց: Մայրը մխիթարված էր և գոհ, որ աստված բոլորովին աչքից չձգեց աննման Հարութին: Տանեցիք նույնպես այցելում էին նրան:

Կարմրադեմ և վիթխարի ժայռերի ծոցում, խորունկ ձորի մեջ, Խնձկոնքի մշտակարկաչ և անապակ գետակի վրա կառուցված էր Տերտերանց ջրաղացը — երկու աղօրիք և մի դինկ. ջրաղացին կից շինված կար մի գոմ, մի ամբար ն երկու սենյակ իրենց սրահով: Այդ շենքերի շուրջը, գետակի երկու ափերին տարածվում էր պարտեզ-բանջարանոցը, խնձորի, տանձի, ծիրանի, հասմիկի ծառերով. ուռիների շարքը ձգվում էր գետակի ընթացքով, բարդիները շրջապատում էին պարտեզը ամեն կողմից: Ժայռի տակից հորդառատ բխում էր մի սառնորակ ու վճիտ աղբյուր, որ վարդենիների ներքև շողալով, քարերի մեջ, ծիծաղի պես, քրքջալով մաև էր գալիս պարտեզում, կենտրոնի մեջ կազմում էր մի ավազան, ուր լողում էին Հարութի սագերն ու բադերը: Ավազանին շա՜տ մոտիկ, այնտեղ, ուր Հարութը տեսավ Հրեղենին, շինել տվեց մի հոլիկ, մի պստիկ բուխարիկով, իր մենակության ու երազանքի պահերը նա այստեղ էր անցկացնում. փոխնեփոխ, գիշերները նա կամ

այստեղ էր քնում, կամ ջրաղացին կից սենյակում: Հարութը իր տնտեսության համար հավեր, սագեր, բադեր ուներ, մեղվի մի քանի փեթակներ, մի կով, այծ ու ոչխար, աղավնիներ շա՜տ սիրելով՝ շատ աղավնիներ էր պահում, գանագան տեսակի ու գույնի. դուռն ու երդիկը հսկելու համար մի քանի շներ էլ ուներ նույնպես: Կատուները նույնպես բացակա չէին:

Հարութը ամեն տեսակի բանջարներ էր ցանում և ամեն օր տուն՝ Տիկոն, թարմ բանջարներ էր ուղարկում նորահաս մրգերի հետ: Այս ամբողջ տնտեսությունը, ջրաղացն ու պարտեզը, Հարութը կառավարում էր վարպետ Գրիգորի և երկու ծառաների հետ, որոնց մեկի անունը Մխո էր, մյուսինը՝ Գաբո. վերջինս, որի մականունը Հարութը Մրոտ էր դրել, Հարութի անմիջական ծառան էր. նա էր հացը թխում, կերակուր եփում, թեյ շինում, կովն ու այծ-ոչխար կթում. Մխոն օգնում էր վարպետին ջրաղացի գործերում, գյուղ էր գնում-գալիս և Հարութի հետ պարտեզն էր մշակում:

Հարութը առհասարակ մասնակցում էր ամեն աշխատանքին, երբ տրամադիր էր լինում: Նրանք բոլորը՝ տեր, վարպետ ու ծառա, շա՜տ հաշտ ու սիրով էին ապրում, ասես մի ընտանիք լինեին: Հարութն ապրում էր այդ տնտեսության արդյունքով և առատորեն մասն էր հանում իրենց ընտանիքին, որով մայրն ու որդին վայելած էին լինում Հարութի աշխատանքից:

Հարութը Ուստա Կարոյի հետ վաղուց էր ծանոթ և տարիների ընթացքում սրտանց մտերմացել, մտերիմ ընկերներ էին դարձել: Նրանց այս փոխադարձ սիրո վրա գյուղացիք կատակով ասում էին.— «Ուստա Կարոյի խուփը գյուղերը գլորվելով, գլորվելով եկել ընկել է Օրթե-Հարութի պուտուկի բերանը»:

Կարոն Հարութի մասին միշտ ասում էր Չավուշին.— «Հարութը գովական տղա է. էն փիլիսոփա է, հազար վարդապետեն շա՜տ բան գիտե, իմ տեսած աշխարքների մեջ Հարութի հատը չգտա. ա՜խ, թե որ շա՜տ չխմեր, աշխարքի մեջ մատով ցույց տալիք մարդ կըլներ. բայց ի՞նչ.—ճակտին

արաղ քսես, կհարբի... խմելեն ե՞րբ աչք կբանա, որ իր գլխի պատիվը գիտնա, երազի մեջն էլ փերիների ձեռքեն արաղ ու գինի կընդունե»:

Հարութն էլ Կարոյի մասին էսպես էր խոսում իր սրտի մեջ.— «Կարոն իմ մեծ ախպերն է. էնպես լավ սիրտ ունեցող մարդ աշխարքում չկա, մեծ հոգի ունի, համ խելք ունի, համ խելառություն, ուտող-խմող, ազնիվ տղա է, աշխարքով մեկ ոսկի արժե Կարոս, էնոր շա՜տ կսիրեմ, մանավանդ երբ քարվանը շա՜տ հետուները կքշե, հեքիաթների սիրուն աշխարքները կերթա, մարդ կնախանձի, թե ինչո՞ւ ինքն էլ հետը չի եղել, սուտ կամ ղորթ, հաշիվը մեկ է»:

Մի քանի տարի էր անցել Հարութի՝ ջաղացը տեղափոխվելու օրից, նա այդ ամբողջ ժամանակը գրքի երես չտեսավ, սակայն կարդացածները գրեթե չէր մոռացել, բերան գիտեր ու հաճախ իր մտքի մեջ կրկնում էր սիրած հատվածները, մանավանդ Աստվածաշնչից: «Գրքերի մեջ նոր բան չկա,— մտածում էր Հարութը,— մարդկանց գիտցածը ամեն մարդ էլ գիտե. օրթե մի նոր բան ասվի, բերնե-բերան կիմանանք, օրթե չկարդանք էլ: Սողոմոնի ասածեն դուրս ո՞վ նոր բան կրնա ասել, ո՛չ մի մարդ, քանի որ էն իրենեն առաջ, իր ժամանակի, ու իրենեն հետո եկած ու գալիք մարդկանցեն ամենեն իմաստունն է եղել ու կմնա: Հենց Սողոմոնի ասածի պես, կարդալը ծայր չունի ու շա՜տ կարդալն էլ մարդու հոգին կչարչարե, գլխավոր բանը հայտնությունն է, օրթե մարդ ստանա»:

Այսպիսով, նա գիրքը ծալեց, և, ասես, նրա առջև բացվեց բնության պատկերազարդ գիրքը. այդ գեղջուկ, բայց խորունկ հոգին աչքը լարած, ականջը սրած ճիգ էր թափում կարդալ ու լսել բնության մեծ գիրքը, ուշով ու սիրով դիտում էր իր շուրջը կատարվող երևույթներին, ականջ էր դնում թռչունների երգերին ու ծառերի և ջրերի ձայներին, ականջ էր դնում ջաղացը եկող գյուղացիների խոսքին ու զրույցին, և հանդարտիկ, անընդհատ մտածում էր, իր հոգում վերարտադրում, քննում աշխարհում կատարվածը:

Մի անգամ, աշնանային մի օր, երեկոյան դեմ, Հարութը բուխարիկը վառել, նստել էր հոլիկում, ծխում էր՝ աչքերը

մարմանդ կրակին հառած, և ականջը՝ ծառերի տխուր սոսափյունին, միտք էր անում աշխարքի բանը: Հրեղենը իրան ասաց, թե ինքն է մենակ ճշմարիտը, բայց Հրեղենին ինչպե՞ս գտնել, նա խոովել էր Հարութից, ա՞խ, հնար լիներ գոնե Սողոմոնին տեսնել, հարցնել, իմանալ նրանից, թե մարդ ինչո՞ւ է ապրում, աշխարքն ինչո՞ւ համար է, թե ի՞նչն է հաստատ, ճշմարիտ բանը, ի՞նչն է որ չի մեռնում, քանի որ ինչ որ մեռնող է, նա սուտ է, նա չկա, նա աչքի երևույթ է...

Պարտեզում, աշնան տխուր հովի շնչի տակ մեղմ ու թախծագին սոսափում էին ծառերը նրա հոլիկի վրա, նրա գլխի վրա և այդ մելամաղձոտ, ներդաշնակ սոսափը անցնում էր նրա գլխի վերևով, անցնում, գնում, հեռանում, ասես, մի հեռու աշխարհ, ուր կամաց-կամաց հալվելով, լուծվելով, լռում էր, տանելով իր հետ Հարութի ուշքն ու միտքը, բոլոր բովանդակ հոգին հեռու-հեռուները, ներկա իրականությունից դուրս այդ հեռավոր աշխարհը: Հարութը գնաց այդ աշխարհի բարձր լեռների կատարներով, ապա իջավ անդունդները և մխրճվեց անդունդների անսահման խավարի մեջ, ու նորից մենակ, մենակ գնաց խավարի միջով՝ առաջնորդ ունենալով հեռավոր խավարի մեջ մի փայլփլուն աստղ, որ մեղմ ճրագի պես առկայծում էր. հասավ այնտեղ թե ոչ, մի ձայն ասաց նրան.— «բարև եկար, Տիկոռցի Հարութ, հազարանց տարի է, ես քեզ կսպասեի, գիտնալով, որ պիտի գայիր»:

Հարութը հասկացավ, որ Սողոմոն Իմաստունն է խոսողը, և միևնույն ժամանակ տեսավ նրան՝ մեծ, ծեր, ալևոր մարդ, ոսկոր ու կաշի դարձած, կուչ եկած, գլուխը մութ քարին դրած՝ աչքերը խուփ մտածում էր, մտածում, ու չէր կշտանում մտածելուց, վաղօրոք գիտնալով, որ զուր է մտածում. նրա գլխի վերև այն աստղն էր վառվում՝ ճրագի պես՝ օր ու գիշեր, հավիտյանս հավիտենից: Հարութը կարկամել էր, չգիտեր անելիքն ու ասելիքը:

— Գիտես ինչո՞ւ եմ եկել,— ասաց Սողոմոնը մի ահավոր ձայնով, որ ասես բյուր տարիների մեռելն է խոսում,— հազարանց տարի է նստել միտք կանեմ աշխարքի բանը.

բայց զո՞ւր, զո՞ւր, նոր բան չեմ կարող ասել, ինչ որ ասել եմ հազարանց տարիներ առաջ՝ միշտ նոր է, քանի որ ճշմարիտն է—ունայնություն ունայնությանց. ամենայն ինչ ունայնություն է. ինչ որ եղել է, նույնը պիտի լինի, ինչ որ գործված է, նույնը պիտի գործվի, և արևի տակ նոր բան չկա. իմ սիրտը տվի արեգակի տակ ամեն եղած բանը իմաստությամբ փնտրելու և քննելու համար. աստված այս չար զբաղումը տվեց մարդկանց որդիներին արևի տակ զբաղվելու համար. ինչու որ, ով իր գիտությունը կավելացնե, նա իր ցավը կավելացնե: Ու ատեցի իմ կյանքս, որովհետև արևի տակ եղած արարածները ինձ չար թվացին, և ամենայն բան ունայնություն է: Ես իմ սրտի մեջ խոսեցի մարդու մասին, թե աստված ցույց կտա, որ նրանք անասուններ են, որովհետև մարդկանց որդիներին պատահածը և անասուններին պատահածը միևնույն բանն է. ինչպես մեկը կմեռնի, այնպես էլ մյուսը և ամենքի շունչը մեկ է. մարդը ի՞նչ առավելություն ունի անասունի վրա, և ոչ մի, և ամեն բան ունայնություն է: Ամենքը միևնույն տեղը կերթան, ամենքը հողից եղան և ամենքը հողը կդառնան: Եվ ո՞վ գիտե, թե մարդկանց որդիների հոգիները վեր կերթան և անասունների հոգիները վար՝ գետինը կիջնին:

Ողջ շունը մեռած առյուծեն լավ է և քո երթալիք գերեզմանի մեջ գործ, խորհուրդ, գիտություն և իմաստություն չկա. գնա ուրեմն հացդ ուրախությամբ կե՛ր, և գինիդ զվարթ սրտով խմե՛, և սիրածդ կնկա հետ կյանքը վայելե՛, քո կյանքիդ ունայնության բոլոր օրերի մեջ, որ տված է քեզի արևի տակ մինչև կյանքիդ վերջը, որովհետև սա է քո բաժինը արևի տակ քաշած քո աշխատանքներիցդ. մըն-ացած բոլոր գալիքը ունայնություն է: Ունայնություն, ունայնությանց, ամենայն ինչ ունայնություն է...

Հարութը Սողոմոնի ձեռքից ու ձայնից սարսափած ուշաթափվեց, կամ ավելի ճիշտ, ուշքի եկավ, քամին կատաղի վազում էր ծառերի վրայով, որոտան հեղեղի պես գոռալով ու շառաչելով: Հարութի դուռն ու լուսամուտը դողդողում էին, ասես, աճաբեկված: Ահավոր, աշխարհավեր ունայնության շունչն էր, որ խորտակելով պատ ու երդիկ՝ արշա-

վում էր Հարութի վրա, Հարութը սմքած, վախեցած ու մենակությունից սահմոկած դուրս թռավ մարդկանց մոտ լինելու, գտնելու համար, վազեց դեպի ջաղացը. քամին ծառերի դեղին, մեռած տերևները պոկում էր բուռ-բուռ և ցանում Հարութի գլխին, նրա ճամփու վրա և ապա ոռնալով վիրավոր գայլի պես, հավաքում էր բոլոր այս դեղին, պըզտիկ մեռելները, տանում հեռավոր ու մոտավոր ժայռերի ծերպերում ու խութերում թաղում, ծածկում:

Հարութը մտավ ջաղացի սենյակը: Գրիգորը նստել էր Մխոյի հետ բոցկլտող կարմիր ու զվարթ օջախի առջև, տամա էին խաղում. հոխորտանքով իրար վրա էին հարձակվում, ծիծաղում, քրքջում: Կրակի վրա թեյի համար ջուր էր դրած. Հարութը անխոս բարձրացավ օջախի գլուխը և նստեց.— «Ի՜նչ աճոիկ երազ էր, բայց ի՜նչ իմաստուն երազ էր. ես ասի՝ էս է պիտի մեռնեի... Խոսում էր Հարութը իրեն հետ.. Հանկարծ հասկացա. իմաստության ուղն ու ծուծը մահն է, որ կա, մահն է, որ աշխարքը ունայն կդարձնե... Զարհուրիկ բան է մեռնելը»: Այս մտքերի տակ նորից կծկվեց նրա սիրտը անանուն տանջանքով. ապա կարծես թե մեկը իրեն սիրտ տալով շշնջում էր հոգու ականջին՝ «խելքը էն բանի մեջն է, որ մոռանաս մահի գոյությունը, Սողոմոնի ասածի պես զվարթացնես մարմինդ գինով, սիրածդ կնկա հետ օր անես, չէ՞ր ինքը, որ իմացավ աշխարքի բանը, չմեռցուց իր անձը, քանի որ՝ շուն, որ կենդանի է, լավ է, քան զաղուծ մեռյալ. կնշանակե՝ ապրիր, թեկուզ շան պես ապրիր... բայց խելք ունեցողը թագավորի պես կապրի, ա՛յ ինքը Սողոմոնը՝ կերավ, խմեց, հազար կնիկ ունեցավ, ու անկուշտ աչքը ձգեց պստիկ Սոմնացու վրա, խոր ծերունի դարձավ՝ մեռավ, երբ էլ իր գրագի մեջ ո՛չ ձեթ մնաց, ո՛չ պատրույգ... Եկ կեր ուրախությամբ զհաց քո և արբ սրտիվ զվարճացելով զգինի քո... Հերը տղային էսպես լավ խրատ չէր տա, ինչ որ Սողոմոնը քեզ տվեց...»: Եվ վերադառնալով դեպի շրջապատի աշխարհը՝ ձայնեց Հարութը.

— Ե՛լ, Գաբո, ե՛լ, արաղ, գինի բեր էստեղ, հավ մոր-

թե, փլավ դիր, էսօր սրտիս մեջ շուն կոունա, քեֆ պիտի անեմ...

— Ի՞նչ կա, Հարութ ջան, ի՞նչ է պատահել,— հարցրեց Գոգորը՝ Հարութի ջղային փայլով շողացող աչքերի մեջ նայելով:

— Բան չկա, աշունքը վրաս վատ կազդե:

— Դարդակ բաներ են, դու առողջութենեն խոսք ասա...

— Գոգոր ջան, դու մահեն չե՞ս վախնա:

— Ի՞նչ ասեմ, Հարութ ջան, ուզենանք-չուզենանք պիտի մեռնենք. մահը մերն է, մենք մահինը. գլխավորն էն է, որ մարդ լավ ապրի, քանի ողջ է, թե չէ մարդիկ կան, որ ողջ ժամանակները կիսամեռ են՝ տխուր-տրտում, սգավորի պես. դարդը կես մահ է, Հարութ ջան:

— Լավ կասես, Գոգոր ջան, բայց օրթե մահը չըլներ, ես կասեմ՝ լավ կըլներ...

— Չեմ կրնա ասե, Հարութ ջան, վախնամ կյանքի համըն էլներ: Քիչ բանն է համով, մարդ ավելի կարոտով, դողդողալով կսիրե անցավոր կյանքը. չէ՞ որ երբ գիտես, թե սիրածդ հարսը առավոտ կանուխ ծոցեդ անպատճառ պիտի երթա, ավելի անկուշտ, ագահ, խելառի պես կվայելես էնոր, քան թե որ գիտենաս թե միշտ մոտդ է ըլնելու:

— Խելոք խոսք ասիր, կենա՛ցդ, Գոգոր ջան,— ասաց Հարութը արաղի թասը զարկելով նրա թասին:

— Հարո՛ւթ ջան, ողջ ըլնիս, ուրախ, աստված մի հատիկ Հակոբիկդ քեզի բաշխե, տղամարդ կա՛ց, ուրախ կա՛ց, դարդ անողին դարդ չի պակսի, քեֆ անողին քեֆ չի պակսի, ասել են մեր խելացի պապերը:

— Էդպես է, Գոգոր ջան, Սողոմոն Իմաստունն էլ էն կասե՝ թե տխուր մարդու ամեն օրերը գեշ են, ուրախ սիրտը մշտական կոչունքի մեջ է:

— Ապրած կենա Սողոմոնը, հաստատ որ իմաստուն է եղել. ես էլ իմ կարճ խելքով նույն բանին եմ հասել: Մարդ պիտի իր քրտինքով մի կտոր արդար հաց ճարե, խիղճը հանգիստ, իր կնկա կողքին նստի, ուրախ-ուրախ ուտեխմե, էս կմնա աշխարքում, մեկէլները վրաս գրե՛:

— Գոգոր ջան, դու Սողոմոն չես կարդացել, բայց էնոր

պես բաներ կասես, ինքն էլ կասե, թե՝ մարդս ուտելեն, խմելեն և իր աշխատանքով, իր գինիով հոգին զվարճացնելեն դուրս, ուրիշ լավ բան չունի, կնկա մասին էլ նույն խոսքը կանե:

— Տեսա՞ր, Հարութ ջան, կարդացողը չէ մենակ բան գիտցողը. մարդու սիրտը իրեն համար գիրք է, մեջը կարդա՛ և ասա... Քեֆ անենք, Հարութ ջան, քանի կա, քեֆ անենք, քանի ողջ ենք, քեֆ անենք... ա՛ո էս բաժակը:

— Էդպես է,— հաստատեց Հարութը,— քեֆ անենք, քանի որ մեռնել կա, իմաստությունը ուրախության մեջն է:

Եվ այդ գիշեր, գրեթե մինչև լույս, Հարութը Գոգորի և ծառաների հետ կերան, խմեցին, երգեցին, պարեցին. Գոգորը մի երկու սիրուն հեքիաթ պատմեց, Մխոն մի քանի զվարճալի առակներ ասաց, Հարութը սփոփված քուն մըտավ:

Սողոմոնին տեսնելուց հետո Հարութի հոգեկանը արտաքին երևույթով մեղմացավ, հանգստացավ, կարծես, վիշտը սուզվեց հոգու ստորերկրյա սահմանները, վերքի երեսը գոցվեց, և խոցը ուղղվեց դեպի ներսի դին՝ իր թույն-թարախը ներսերը ուղարկելով:

Այդ տեսիլից հետո, ունայնության գաղափարը, մահը, մի խոսքով, եղավ նրա համար իմաստության սկիզբը, մեջը և վերջը. նա Դավիթ Անհաղթ փիլիսոփային փորձել էր կարդալ մի երկու անգամ, թեև չէր հասկացել, բայց հիշում էր շարունակ նրա գրվածքից մի տող, թե ըստ Պղատոնի, իմաստասիրությունն է խոկումն մահու, և գլխին շատ էր նստել այս միտքը: Այնպես որ նրա հոգեկան աշխարհը սկսեց պտույտ գալ մահվան գաղափարի շուրջը, որպես միակ առանցքի: «Դարդ մի՛ արա, մահ կա,— ասում էր նա միշտ,— լաց, սգա՛, մահ կա, սիրի՛ր, մահ կա, մի՛ սիրիր. մահ կա, քեֆ արա, մահ կա, մեռի՛ր հաշիվը մեկ է,—մահ կա». հակասական մտքերի և զգացումների այսպիսի մի վիճակ:

Բայց ընդհանրապես մի անտարբեր դրություն էր իշխում նրա հոգու վրա: Առավոտ վեր էր կենում, թեյի հետ մի բաժակ արաղ էր խմում և ձեռք էր զարկում աշխատան-

քի պարտեզում, գոմում, փեթականոցում, հավանոցում և ջրաղացում. գրեթե ապրելով կես-քուն, կես-արթուն, կորած, ինքնամոռացված: Ուստա Կարոն էր, որ ամիսը մի երկու անգամ գալիս էր իր սիրելի Հարութի մոտ «ժղլվելու», և իր քարավանով ու ճամփորդությունների զրույցներով ու արկածներով զարթեցնում էր նրա նիրհած հոգին՝ լիքն երազական անհագ տենչերով:

Բայց երբեմն էլ, ասես, հանկարծ նորոգվում էին վերքն ու վիշտը, անգթորեն կրծում էին նրա հոգու արմատները— «Ջուր է, ամեն բան ունայն է,— հոգին քանդելով ու քրքրելով խոսում էր, կովում էր Հարութը իրեն հետ.— Կարոյի ասած էն սուտը ամենեն ճշմարիտն է, որ իր քարվանով ժուռ եկած տեղերում տեսել է մի մարդու, որ պատանքը հագած կապրի եղեր, ասելով, թե՝ Էս իմ հուր-հավիտենական շապիկն է, աշխարքը մահի թառփի մեջն է, ազատվելիք չկա, մեր կյանքը երկու օր է, մեկն անցավ—մանկությունը, մնաց մեկէլը—սև ծերությունը. ծայրը—գերեզման». և ուղղակի աչքին այնպես մոտիկ, շա՜տ մոտիկ բացվում էր օրհասական անդառնալի փոսը, որ քաշում էր նրան դեպի իրան, և որից սասանած, հազիվ էր ետ դառնում մի քանի քայլ և հուսահատ քաջությամբ ձեռքը թափ էր տալիս սարսափից չորացած կոկորդով բղավելով—«Հերըն անիծած աշխարքին էլ, մահին էլ, մի օր է մնացել, դարդս ո՞րն է, կե՛ր, խմե՛, որովհետև ամեն բան ունայն է»:

Եվ ապա, օրերով տալիս էր իրեն հարբեցման, խմում էր անհաշիվ, կատաղի, գոռալով ամենքի վրա, երբ մերժում էին խմիչք տալ՝ համոզելով, որ չխմե. «Տո՛ւք արբեցություն տրտմեցելոց և գինի ըմպել ցավագնոտաց, զի արբցին և մոռասցին զտնանկությունս յուրյանց և զցավս յուրյանց ոչ ևս հիշեսցեն»:

Եվ ապա սկսում էր նորից անտարբերության մի բութ շրջան: Թեև աշխարհը իր բոլոր իրերով ու գաղափարներով սև էր ներկվել Հարութի տրամադրությամբ, բայց և այնպես նրա հոգու մոայլի մեջ ապրում էր Հրեղենին վերստին գտնելու անմահ, պայծառ հույսը, ինչպես խավար ամպերի մեջ արևը,— և այդ հույսը կապում էր Հարութին դեռ կյան-

քի հետ: Ապրում էր թշվառ Հարութը այդ անհաղթելի հույսով, և օր ու գիշեր չխկչխկում էր նրա ջաղացի չախչախը, ձորն ու պարտեզը լցնելով անդորրությամբ և չքնաղ երագով, և բոլոր ակց ու դարձողին հրավիրում էր հոգով տըխուր, երեսով ուրախ Հարութի մոտ:

ՀԱՐՈՒԹԸ ՀՐԵՂԵՆԻ ՄՈՏ

(Երազ)

...Ճամփաբաժինքին բուսել էր մի մեծ, բունը տասը գըրկաչափ կաղնի, ճյուղերը մի մեծ ոչխարի հոտ ստվերով կծածկեր. ո՞վ գիտի քանի հարյուր տարվա հասակ ուներ այդ կաղնին, որ խուլ հնչում էր...

Նրա տակ նստել էր մի ծերունի մարդ, միրուքը ճերմակ, մինչև գետին առած, թիկն էր տվել մի մամոռոտ քարի, և ճերմակ, թավ ունքերի տակից նայում էր հեռուն...

Հարութը հրեղեն ձիով մոտեցավ, կանգ առավ ճամփաբաժնին. վարանում էր, ո՞ր ճամփով գնար. նկատեց ծերունուն, խոնարհ գլուխ տվեց և ասավ.

— Բա՛րև, պապի՛:

Ծերունին մտքով էր ընկած, չլսեց բարևը: Հարութը կրկնեց.

— Բարև՛, պապի՛:

— Ա՜յ բարով, որդիս,— ասաց նա. ձայնը կասես հեռվից կուգար,— ո՞ւր առաջ բարի:

— Լսել եմ, որ աշխարքի արևը, հրաշք աղջիկը, էս տեղերն է ապրում. մի փափագով եկա. կտրեցի սարեր ու ձորեր. էս քանի տարի է ճամփորդում եմ. հիմի չգիտեմ, ո՞ր ճամփով երթամ՝ աջ թե ձախ...

— Է՜հ, որդիս, լավ ճամփա չես բռնել. ե՛տ դարձիր. Էնտեղ գնացողը ետ չի դառնա: Ես աշխարքի սկզբից մինչև հիմա էստեղ եմ նստած ու տեսել եմ բյուրավոր, անհա-

մար կտրիճներ, թագավորներ, թագավորի տղերք—գնացին ու ետ չեկան: Նրան տեսնողը կոչնչանա, կայրվի ու մոխիր կդառնա, կամ կքարանա, կամ հավիտյան անտես շղթաներով գերի կդառնա նրա պալատի դռների տակ:

— Ի՛նչ էլ որ լինի, ես պետք է երթամ, պապի:

— Մի՛ գնա, որդի, ափսո՜ս ես, խեղճ ես. էնտեղ՝ աշխարքի էն գլխից մինչև հիմա ապրում է աշխարքի գեղեցկուհին. կինը, իսկական կինը. արևը նրա աչքերիցն է յուր լույսն ու բոցը առնում. նա ավելի գեղեցիկ է, քան արևը, քան կյանքը: Ե՛տ դարձիր. օրը հազար-հազարներն են անցնում էստեղից, որն էս ճամփով, որն էն ճամփով ու ետ չեն գալիս:

Աշխարքում էնքան մարդ չկա հիմա, ինչքան որ էնտեղ կա. ծովի պես լցվել են Հրեղենի շուրջը...

Ամեն օր հազարների նա մորթում է ու գանգերից բուրգեր շինում: Ու մեկն էլ չեղավ գնացողներից, որ ետ դառնար:

Նա կինն է, որին ո՛չ մի մարդ չի կարող հաղթել. էդպես մարդ դեռ ո՛չ մի մեր աշխարհք չի բերել...

Ու ծերունին համոզող աչքերով նայեց Հարութին:

— Չէ՛, պապի, ես պիտի երթամ, ինձ աշխարհքը արժեք չունի առանց Հրեղենի: Ուստա Կարոն էլ համոզեց, որ չերթամ, բայց հնարք չկա. ես պիտի տեսնեմ Հրեղենին, որի աչքերից արևն է ծագում. թո՛ղ միայն մի վայրկյան նայեմ նրան ու մեռնեմ, միայն մի անգամ համբուրեմ նրա ձեռները ու այրվեմ, մոխրանամ — էլ ինձ բան հարկավոր չէ, քանի որ մի վայրկյանի երջանկությունը ավելի հավիտենական է, քան առանց երջանկության անմահությունը: Պապի, ես հրացանից արձակած գնդակ եմ, պետք է երթամ, ետ դառնալ չկա. բարի եղիր ցույց տալ ճամփեն ու օրհնիր իմ գնալը...

Ծերունին խղճահարվելով, նայեց Հարութին և ասաց.

— Էս մի ճամփեն կերթա Հրեղեն աղբկա մոտ. էն ճամփեն՝ վիշապ աղի մոտ, որն աշխարհքի բոլոր գանձերի տերն է: Աշխարհքի գեղեցիկները ուզում են ամենակտրիճ,

ամենասիրուն, ամենահարուստ մարդուն. կնիկն ուզում է մարդ ու ոսկի:

Վիշապ աղեն աչքը տնկել է Հրեղենի վրա. իր բոլոր գանձերը տալիս է նրան, որ իր կինը լինի, բայց Հրեղենը չի ուզում, որովհետև վիշապը սիրուն չէ, այլանդակ է:

Ո՞վ երթա վիշապին հաղթի, գանձերն առնի—Հրեղենը էդ կտրիճի կինը կդառնա: Բայց վիշապի մոտ գնացողն էլ ետ չի դառնում. գնացողները բոլորն էլ ընկնում են նրա ուղկանը, դառնում են նրա ծառան ու գերին, որ օր ու գիշեր պիտի արյուն քրտինք թափեն աղի համար: Էդ ճամփով մի՛ գնա:

Հրեղենի մոտ որ երթաս, լսիր իմ խրատներին, որ ամեն գնացողի տվել եմ և զո՞ւր է կորել. եթե կարողացար կատարել խրատներս, կհաղթես նրան ու տերը կլինես: Գնա՛, նրա պալատի առաջով անցնելիս միայն մի անգամ նայիր նրան, կիմանա՞ս, միայն մի անգամ նայիր ու անցիր. երկրորդ անգամ չնայես, լա՛վ միտքդ պահիր: Նա կկանչե քեզ, կերգե, ետ մի՛ նայիր, ուշք մի՛ դարձուր. արհամարհելով, բանի տեղ չդնելով կհաղթես կնոջը և ո՛չ թե սիրով ու խոնարհվելով. անտարբեր քեզ համար անցիր և նա վերջը կվազե քո ետևից. դու նորից գնա, նա տարիներ կվազե ետևիցդ, կընկնի քո ոտքերդ և քո գերին կդառնա...

Ու երբ կինը կուզենա գերի դառնալ, այն ժամանակ՝ վերցրո՛ւ, առ նրան, որովհետև, այն ժամանակ անկեղծ ու ճշմարիտ կլինի նրա սերը: Լսեցի՞ր, հասկացա՞ր, որդիս: Հարութը կանգնել ու մտածում էր:

— Լսի՛ր, որդիս. կինը անհաղթելի է. բոլոր մարդիկ օերի են դառել նրա մի համբույրի համար ու խաչվել են: Եվ ոչ մի մարդ չի ճարվել, որ արհամարհի նրան: Իսկ նա, Հրեղենը, կինը — կսիրե ու գերի կդառնա նրան, ով անտես կառնի նրա սիրունությունը, հրաշք-սիրունությունը. այդպիսի կտրիճ տղամարդ դեռ աշխարհ չի եկել:

Եթե դու կարողանաս արհամարհել նրան, կլինես ամենից քաջ և իմաստուն մարդը աշխարքի մեջ: Կնոջ սերը, բախտավորությունը՝ խոնարհվելու, գերի դառնալու մեջն

է. երբ կինը կլինի ոտքերիդ տակ, էն ժամանակ կինը հավատարիմ կսիրե, իսկ եթե հաղթվեցիր՝ խոնարհ նրա առաջ, էն ժամանակ նա կդառնա մի կատաղած գազան, կըգցե քեզ ոտների տակ, սիրտդ կտրորե, կխեղդե քեզ: Ասածներս մի՛ մոռանար, ականջիդ օղ արա, բարով երթաս, բարով գաս:

Հարութը իջավ ձիուց, համբուրեց ծերունու ձեռները և պացավ աջ ճամփով, դեպի Հրեղենը:

Շատ գնաց թե քիչ, մեկ էլ նա տեսավ՝ հեռվից, ասես ոսկեվառ ամպերի մեջ, վարդե, մարգարտե բարձերի վրա նստած Հրեղենին: Հարութը խթանեց ձին և արշավեց, մոտեցավ: Փղոսկրե սյուներով, ադամանդե պատերով մի պալատ փայլեց իր առաջը. զմրուխտի ու յաղութի պատըշգամբում բազմել էր Հրեղենը, որ շողում էր ու շողշողում հազար ու մի գույներով: Աչքի տակով նայեց Հարութը, և սարսուռ անցավ նրա մարմնով: Տեսավ պալատի ոսկե պատերի տակ, ոչխարների անհամար հոտերի պես, լցվել են իրար վրա անհաշիվ-անհաշիվ մարդիկ, բյուր-բյուր սերունդներ, ամեն տեսակի ազգեր. գլուխները քսում են ապառաժներին, որոնք մաշվել են սերունդների ճակատների տակ և լալով սեր են մրմնջում, խոստումներ ու երդումներ անում, աղաչում, պաղատում, իսկ Հրեղենը հազար ու մի ակներով շողշողում է ու այրում, խանձում բոլորին, գերում ու քարացնում ամենքին-ամենքին:

Նա ավելի մոտեցավ: Հրեղենը իր ոսկեծով մազերը շաղ էր տվել, որոնց մեջ աստղեր էին վառվռում... Ծովերի պես աչքերը հառել էր մի սադափե հայելու վրա:

Հայելին նա բռնել էր ճամփու առաջ, որ տեսնի թե ո՛վ է գալիս: Եվ Հրեղենը հայելու մեջ տեսավ Հարութին ու հեքիաթների նման աչքերը հառեց հեռուներից Հարութի վրա: Հարութը դեռ հեռու էր, բայց տեսավ Հրեղենի աչքերի այրող ճառագայթները իր ճամփի վրա. ձիու սանձը քաշեց ու դանդաղ-դանդաղ մոտենում էր ապարանքին, ասես թե իրեն համար հանգիստ ճամփա էր գնում:

Եվ երբ մոտեցավ ապարանքի դեմուդեմը, Հրեղենի պալատի ուղիղ դեմը, Հարութը հիշեց ծերունու խրատը՝ աչ-

քերը մի անգամ բացեց ու նայեց մի վայրկյան, հավիտենականության չափ երկար մի վայրկյան:

Այդ վայրկյանում նա տեսավ հրաշքների մի ծով. Հրեղենը իր հազար ու մի արևը միանգամից թափեց Հարութի վրա: Հարութը ցմքեց տեղն ու տեղը. մահից ավելի հզոր էր այդ հրեղեն աղջիկը: Հարութին թվաց, թե նա կարող է բոլոր սարերն իրար շաղվել, աշխարքը մի գնդակի պես բռնել ու փշրել... Հարութին թվաց, թե ուր որ է իրեն կփչե և ապա իր վրա հազար-հազար մարդու ուժ թափելով հաղթեց իրեն, աչքերը գցեց ձիու բաշին, ամուր, ասես երկաթե ոտքով, այնպես ամուր խփեց ձիու կողերին, որ լոպկեց խեղճ ձիու կողերը և ցավից թռավ ձին և անցավ հանդարտ, պատահական անցորդի պես:

Երբ աչքը ներքև գցեց, տեսավ՝ անհամար մարմարե շատրվաններից առատությամբ բխում էին խաշխաշե հարբեցնող, քնեցնող աղբյուրներ, որոնք թափվում էին պալատի շուրջը, մեռած մարդկանց վրա և ամենքին խելքից հանում. պատի չորս կողմը խաշխաշե անծայր ծով էր կապել: Նա տեսավ, թե ինչպես նրա ոտների տակ մարդիկ սողում են ու ներքևներ են տալիս նրան՝ որն իր սիրտն է պոկել, բռնել է ձեռքին, ասում է՝ ա՛ռ, քեզ մատաղ, որը իր գանձը, թագավորն իր գահը, քաջն՝ իր սուրը, գիտունն իր գիրքը, վարդապետն՝ իր խաչը, մյուսները ուրիշների կտրված արնաշաղ գլուխները:

Բայց Հրեղենը աչքով աչք չուներ նրանց նայելու. նա հայելին բռնել հեռուն էր նայում: Նա սպասում էր էն ազնավուրին, որը ոչինչ չի խոստանա և անտես կառնի ընդառաջ...

Իսկ մարդիկ հուսահատված գլուխները զարկում են քարերին, փշրում են, իրար խայծում, բզկտում, իրար մորթոտում...

Այդ ամենը Հարութը տեսավ նորից մի վայրկյանում:

Հրեղենը աշխարքի բոլոր բլբուլների ձենով կանչեց նրան.— Ո՞ւր ես գնում, ե՛տ դարձիր. գիրկս քեզ համար բաց է:

Հարութին այդ հզոր երգը հարբեցրեց, քիչ մնաց ձիուց

ներքև գլորվեր, բայց զսպեց իրեն և նորից, նորից մտրակեց ձին:

Հրեղենը նորից-նորից հազար նազանքով կանչեց, խնդրեց, բարկացավ հետո, ասելով՝ «Դևերին բաց կթողնեմ և կտոր-կտոր անել կտամ, ո՞ւմ ես արհամարհում...»:

Հարութը չլսելու տվեց և գնում էր ու խելագարի պես խթանում ձին:

Հրեղենը նորից քաղցր, աղաչող ձայնով մղկտաց, կանչեց: Հարութը հավաքեց իր բոլոր ուժերը, ասես նա աշխարքի չափ ուժ ուներ...

Հրեղենի քաղցր, դյութական ձայնով թոված՝ ժայռերը պոկոտվում էին լեռներից ու գլորվում. հավք ու թռչուն խելակորույս, թևաթափ, շնչասպառ ընկնում էին նրա ոտների տակ, աշխարքի ծովի մեջ իրեն երջանիկ համարելով...

Հրեղենը նորից կանչեց, և մեկ էլ հուսահատված զարկեց հայելին մարմարե սյունին, փշրեց ու մազերը խառն ու ցրիվ, թռավ պատշգամբից և վազեց Հարութի ետևից, քաղցը-քաղցր կանչելով.—«Կանգնիր, արի՛, արի՛...»:

Նրա երկնային, ճառագայթի պես, մատները, մեռնող քնքշությամբ կանչում էին Հարութին. «Արի՛, արի՛, իմ փեսա, արի՛, արի՛...»:

Հարութը, որ այնքան զորք ուներ իր սրտում, այս անգամ մազ մնաց, որ ետ դառնար. նրա ոտքերն ու ձեռքերը թուլացել էին, չէր կարող խթանել ու մտրակել, բայց հիշեց ծերունու խրատը և խթանեց ձին խելագարի պես այնպես ամուր, որ խեղճի կաշին լոպկվեց և ցավից թռավ ձին:

Հրեղենը խելքը կորցրած վազեց Հարութի ետևից, որ բռներ նրան: Հուսակտուր վազում էր Հրեղենը...

Իսկ նրա սիրո գերիները, դարերի մեջ քարացած ու մեռած մարդիկ շունչ առան, կենդանացան և հողերի ու քարերի մեջ քաշ գալով, իրենց բզկտած մարմինները, ճանկռոտելով իրար, իրար կոխելով վազում են ու կանչում. Դարձի՛ր, Հրեղեն, դարձի՛ր, դարձի՛ր, դարձի՛ր, մի՛ գնա: Մենք գոհ ենք քեզ գերի լինելով, քեզ համար մեռնելով: Ե՛կ, նստիր գահիդ վրա: Թող քեզ նայելով մենք տապկվենք ու մեռնենք— դրանից վեր բախտ չկա աշխարքում:

Եվ լալիս էին, հեծեծում ու հուսահատ պատուում իրար:

Բայց Հրաշք-աղջիկը չէր նայում նրանց, չէր լսում նրանց լացն ու կոծը, կռիվն ու մահը... Բոլորը հուսահատ մեռնում են, մեռնում են, ասես թե արևը հավիտյան չկա նրանց վրա և նրանք սառան, մեռան...

Սակայն Հրեղենը ինքը ևս խեղճացած, ավելի հուսահատ, քան իր գերիները, մարած, հոգին բերանը վազում էր Հարութի ետևից՝ հետացող, անետ, հպարտ Հարութի ետևից լացով ու կոծով:

Իսկ Հարութը, տղամարդու պես, գնում էր, անդարձ գընում, իր հետը տանելով Հրեղենի սերը, կյանքը:

Առանց Հարութի Հրեղենը կմեռներ, ինչպես մեռան այն բյուր-բյուրավոր մարդիկ առանց Հրեղենի...

Հարութը գնում էր. Հրեղենը օրերով վազում էր նրա ետևից: Նա Հարութի ձիուց ավելի արագ էր վազում և, վերջապես, Հրեղենը կտրեց Հարութի ձիու առաջը, բռնեց Հարութի ասպանդակից և ուժասպառ ընկավ ձիու ոտքերի առաջ. ձին կանգնեց: Հրեղենն ասավ սիրտ մղկտացնող ձայնով.— «Իմ քաջ, իմ հրեղեն փեսա, ես քոնն եմ, քո գերին. ահա՛ իմ սիրտը՝ կամ վերցրու տաքացրու գրկիդ, կյանք տուր, սեր տուր, կամ գցիր ևժույգիդ ոտքերի տակ ու ճմլիր սիրտս, որ աշխարքի սկզբից մինչև հիմա քեզ համար էի պահել. ես աշխարքի թագուհին եմ. ոչ կդադարվամ և ոչ կմահանամ»:

Ասաց և աղերսալի աչքերով նայեց ու լացեց:

Հարութը հաղթական և հզոր ձեռքով բարձրացրեց փոշու մեջ թաղված Հրեղենին, գրկեց ամուր, համբուրեց, համբուրեց, վայելեց վայրկյանի անմահությունը: Հրեղենը անմահ, անհուն երջանկության մեջ մտավ. աչքերը խփեց և բախտավոր քուն մտավ Հարութի գրկում, ասես՝ ամենաերանելի դրախտում:

Հարութը անմահ քաջի պես մտրակեց ձին.

«Երթամ հոլիկս, Կարոյիս հետ մեծ կոչունք սարքեմ, նրան էլ քավոր անեմ. ես ու նա — էլ հարսնառը հարկավոր չէ: Տեսար, Ուստա, ի՞նչ կնիկ առա. էսպես սանամեր երազիդ մեջ էլ ունեցած չկաս»:

Այսպես խոսելով, Հարութը Հրեղենին գրկած՝ գիշեր ու ցերեկ երգող աղբյուրների, բուրալից դաշտերի վրայով սլաքում էր դեպի իր հոլիկը:

— Երթամ հոլիկս, աշխարքի հետ չեմ փոխի հոլիկս. ամենից մեծ թագավորությունն է հոլիկս: Ես թագավոր, Հրեղենը՝ թագուհի, Ուստան՝ քավոր: Տեսա՞ր, Ուստա, ի՞նչ տղա եմ:

Ծանոթություններ

Խաճակյանի վեցհատորյակի ներկա հատորը ընդգրկում է 1927—1951 թվականներին գրած պատմվածքները և գլուխներ «Լուստա Կարո» վեպից։

Տեքստերը պատրաստելիս հիմք են ընդունված բանաստեղծի կենդանության օրով իրականացված քառհատորյակի երրորդ հատորը (1951), վերջին մեկհատորյակը (1955) և, առանձին դեպքերում հեղինակային հրապարակումները պարբերականներում, անտիպների համար՝ ինքնագրերը։ Հաշվի են առնված նաև տպագրված տեքստերի վրա հեղինակային ուղղումները։

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՕՋԱԽԻ ԾՈՒԽԸ (էջ 7)

Նախնական տարբերակի մտահղացումը գրի է առել 1926 թ., «Քեռի Նիկոն» խորագրով։ Գրել է 1927 թ. դեկտեմբերին, Երևանում։ Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայաստանի կոչնակ», 1933, հուլիսի 10, № 23, էջ 539—541, «Վարոս ամու բաղձանքը կատարվեց» վերնագրով, ապա, մասնակի փոփոխություններով՝ «Ընտիր երկեր» (մեկհատորյակ), Երևան—Մոսկվա, 1948, էջ 298—302։ Նույն տեքստը մյուս ժողովածուներում։

Պատմվածքի նյութը, ինչպես հավաստել է բանաստեղծը, վերցրած է իրականությունից, Ղազարապատ գյուղի կյանքից։

«ՀԱՄԲԵՐԱՆՔԻ ՉԻԲՈՒԽԸ» (էջ 14)

Գրել է 1928 թ. դեկտեմբերին, Երևանում։ Առաջին անգամ տպագրվել է գեղարվեստական արձակի համանուն ժողովածուի մեջ (1929, Երևան, էջ 5—26), ապա, մասնակի փոփոխություններով՝ «Ընտիր երկեր», II հ., 1940։ Նույն տեքստը մյուս ժողովածուներում։

ՀՈՎՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ (էջ 28)

Գրել է 1929 թ., Երևանում։ Առաջին անգամ տպագրվել է՝ «Նոր ուղի», ամսագիր, Երևան, 1929, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9—10,

էջ 41—45, ապա, նույն տեքստը՝ «Ընտիր երկեր», II հ., 1940, և մյուս ժողովածուներում:

ԱՄԲՈՂՋ ԲՈՔՈՆԸ ՏՎԵՑ (էջ 36)

Մտահղացման գրառումները կատարել է 1926—1927 թթ.: Գրել է 1929 թ., Երևանում: Առաջին անգամ տպագրվել է՝ «Նոր ուղի», ամսագիր, 1929, հունվար, № 1, «Երվանդ Միրաքյան» խորագրով, ապա մի քանի մասնակի փոփոխություններով և «Ամբողջ բոքոնը տվեց» խորագրով՝ «Երկերի ժողովածու», հ. III, 1951, որը և հիմք է ընդունված:

ՂԵՎՈՆԴ ԱՂԱՆ (էջ 48)

Գրել է 1931 թ. Փարիզում: 1940 թ. հանձնել է Ռ. Զարյանին տպագրելու իր խմբագրած «Սովետական գրականություն» ամսագրում, սակայն, խմբագիրը պատմվածքը թույլ գտնելով, չի տպագրել (տե՛ս **Ռ. Զարյան, Ավետիք Իսահակյան**, Երևան, 1974, էջ 31—32): Հետագայում Ռ. Զարյանը Իսահակյանի այդ պատմվածքը հրապարակեց նույն ամսագրում, իր մոտ պահվող ինքնագրից: Տե՛ս «Սովետական գրականություն», 1964, № 5:

ԾԱՌԱ ՍԻՄՈՆԸ (էջ 57)

Մտահղացման գրառումը կատարել է 1928—1929 թթ., Երևանում: Գրել է 1931 թ.: Առաջին անգամ տպագրվել է՝ «Մեր ուղին», երկօրյա թերթ, Փարիզ, 1931, սեպտեմբերի 27, № 29, «Հին հուշատետրից. Ծառա Սարգիսը» խորագրով, ապա պատմվածքի հերոսի անունը դարձրած՝ Սիմոն և մի քանի մասնակի փոփոխություններով՝ «Հոկտեմբերիկ» մանկական ամսագիր, Երևան, 1939, մարտ-ապրիլ, № 3—4: Նույն տեքստը՝ «Ընտիր երկեր», մեկհատորյակ, 1948, և մյուս ժողովածուներում:

ԿԱՎԱՃԱՏԵՐԵՐԻ ՄՈՏ (էջ 60)

Գրել է 1932 թ. դեկտեմբերին, Փարիզում: Առաջին անգամ տպագրվել է՝ «ՀՕԿ» ամսագիր, Փարիզ, 1933, № 1: Հետագայում, 1937 թ., մասնակի փոփոխություններ է կատարել նոր հրատարակության համար, որը, սակայն, չի իրականացել:

Հետմահու տպագրվել է՝ «Գրական Ադրբեջան», 1974, № 4:

ՆՐԱՆՔ ԴՐՈՇԱԿ ՈՒՆԻՆ (էջ 69)

Գրել է 1952 թ. փետրվարին, Փարիզում: Հատվածներ տպագրվել են՝ «Գրական թերթ», 1932, հունիսի 30, № 13, «Հոկտեմբեր—նոյեմ-

բեր», տարեգիրք, 1932, ամբողջությամբ, առանձին գրքով նույն թվականին, Փարիզում, ապա, 1949 թ. վերամշակելով տպագրել է՝ «Սովետական գրականություն և արվեստ», 1950, փետրվար, № 2, այնուհետև, մասնակի փոփոխություններով՝ «Երկերի ժողովածու», հ. III, 1951: Նույն տեքստը՝ «Երկեր» (մեկհատորյակ), 1955:

Երեսնական թվականների վերջերին, Իսահակյանը մտադրվել է այս պատմվածքը վերակառուցել և դարձնել վեպ, որոշ աշխատանք այդ ուղղությամբ կատարել է, սակայն, ավարտին չի հասցրել:

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՒՇԵՐ (էջ 116)

Գրել է 1933 թ.: Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայաստանի կոչնակ», 1934, հունվարի 6, № 1, «Հուշեր. Հայրենի հողը» խորագրով: 1951 թ. երկերի քառահատոր ժողովածուի երկրորդ հատորում զետեղելով «Հայրենի հողը» բալլադը, «Հուշերի»-ից հանեց բալլադի հիմքը կազմող լեգենդը և խորագիրը՝ չկրկնելու համար, դարձրեց «Հայրենի հուշեր»՝ «Երկերի ժողովածու», հ. III, 1951: Նույն տեքստը՝ «Երկեր» (մեկհատորյակ), 1955:

«ՋԻԼԻ ՍՈՒԼԹԱՆԻ» ԵՐԳԸ (էջ 122)

Գրել է 1933 թ.: Առաջին անգամ տպագրվել է՝ «ՀՕԿ», 1933, սեպտեմբեր, № 8, ապա, փոփոխություններով՝ «Խորհրդային գրականություն», 1939, փետրվար, № 2: Նույն տեքստը՝ «Ընտիր երկեր», II հ., 1940, և մյուս ժողովածուներում:

ՀՈՌ ԵՐԱՆԵԼՈՒ ԾԱՌԸ: ԴԱՆԿԲԵԺ ՍԼԵՄԱՆԸ (էջ 127)

Գրել է 1934 թ., Փարիզում: Առաջին անգամ տպագրվել է՝ «Ապագա» եռօրյա թերթ (Փարիզ), 1934, նոյեմբերի 25—28, №№ 5—7, «Հուշեր» ընդհանուր խորագրի տակ, որտեղից նույնությամբ արտատպվել է՝ «Պայքար» օրաթերթ (Բոստոն), 1934, №№ 331—335: Ժողովածուներում չի զետեղել: Հետագայում, «Դանկբեժ Սլեմանը» հատվածից անջատել է Սլեմանի երգած սիրերգը և մշակել՝ դնելով «Սիրահար Նադոն» խորագիրը (տե՛ս սույն հրատարակության երկրորդ հատորը): Հետմահու տպագրվել է՝ «Արձակ էջեր», 1963, որտեղից և արտատպվում է:

Դանկբեժ՝ երգ ասող (քրդերեն):

ՀԻՆ ԳՅՈՒՂԸ (էջ 140)

Գրել է 1934 թ., Փարիզում: Առաջին անգամ տպագրվել է՝ «ՀՕԿ», 1935, մայիս—հունիս, № 5—6, ապա մասնակի փոփոխություններով՝ «Ընտիր երկեր», II հ., 1940: Նույն տեքստը մյուս ժողովածուներում:

Պատմվածքի հիմքում իրական դեպք է՝ Խաճակյանի համագյուղացու և հարևանի կնոջ մահը, որի ծանր տպավորության մասին բանաստեղծը գրել է իր «Հիշատակարան»-ում. «Երեկ գիշեր, ժամը 12-ին մեռավ Գլեենց Ավետիքի կինը ծննդաբերության վրա, թողնելով եթումներ և մի նորածին աղջիկ: Առավոտ կանուխ թաղեցին այդ կնոջը, որ ամբողջ տան այուն էր, նեցուկը, իսկ ամուսինն ու տղան արդեն առավոտ ժամը 10—12-ին կալ էին կալսում. ի՜նչ անեն, սված կմնան... Աղքատության հետ զուգընթաց է, անբաժան է տգիտությունը» (1907 թ. օգոստոսի 11-ի գրառումը):

Պատմվածքի կերպարների հետագա ճակատագրի մասին գրել է բանաստեղծի եղբոր որդին՝ Աբաս Խաճակյանը՝ «Ավ. Խաճակյանի «Հին գյուղը» պատմվածքի դեմքերն ու դեպքերը» հոդվածում (տե՛ս «Բանվոր», Լենինական, 1962, № 145):

ՎԵՋԼԵ (էջ 148)

Գրել է 1934 թ. սեպտեմբերին, Ավալոն քաղաքում (Ֆրանսիա): Առաջին անգամ տպագրվել է՝ «Ակոս», թերթ (Լիոն), 1936, մայիսի 7, ապա, անփոփոխ՝ «Երկերի ժողովածու», հ. III, 1951 և «Երկեր» (մեկհատորյակ), 1955:

ԳԵՐՆԻԿԱՅԻ ՆՎԻՐԱԿԱՆ ԿԱՂՆԻՆ (էջ 152)

Գրել է 1937 թ. հոկտեմբերի 22-ին, Երևանում: Առաջին անգամ տպագրվել է՝ «Խորհրդային գրականություն», 1938, հունվար, № 1, ապա, անփոփոխ՝ «Ընտիր երկեր» (մեկհատորյակ), Երևան—Մոսկվա, 1948, այնուհետև, մեկ պարբերության կրճատումով՝ «Երկերի ժողովածու», հ. III, 1951: Նույն տեքստը՝ «Երկեր» (մեկհատորյակ), 1955:

Տպագրվում է առաջին հրատարակության տեքստը:

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԴԻՄԱՎՈՐՈՒՄԸ ՓԱՐԻԶՈՒՄ (էջ 163)

Մտահղացումը գրի է առել 1927 թ. («Ճամփորդական նոթեր»). «Հիշել ճաշարանի դեպքը. մենք ճաշում էինք, գիշերը. լավեց մի երեխայի (անապատան) սուր լացը: Սպասավորը ծեծել էր երեխային, հարվածել—արյունը վազում էր քթից: Մուգիկան խեղդեց նրա լացի ձայնը:

Եվ արյունը, կարծես, իմ կերակուրի մեջն էր թափվում...»:

Գրել է 1938 թ.: Առաջին անգամ տպագրվել է՝ «Պիոներ—կանչ», 1939, հունվարի 1, № 1, ապա, անփոփոխ՝ «Ընտիր երկեր» (մեկհատորյակ), Երևան—Մոսկվա, 1948: Նույն տեքստո մյուս ժողովածուներում:

Մտահղացումը գրի է առել 40-ական թթ., մտադրվելով գրել պատմվածքաշար, «Հին Գյումրին (պատկերասրահ)» վերնագրով:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Սովետական Հայաստան» ամսագիր, 1954, փետրվար, № 2, «Հին Գյումրին» ընդհանուր խորագրի տակ, ապա, անփոփոխ՝ «Սովետական գրականություն և արվեստ», 1954, ապրիլ, № 4, և «Երկեր» (մեկհատորյակ), 1955:

ԳԼՈՒԽՆԵՐ «ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊԻՑ

«Ուստա Կարո» վեպը (որ սկզբում ունեցել է «Շորագյալցի Ուստա Կարոն» խորագիրը), սկսել է գրել 1910 թ. ապրիլի 21-ից, «Աբու-Լալա Մահարի» պոեմն ավարտելուց հետո. գրել է մեծ ոգևորությամբ, ամբողջովին կլանված իր նոր ստեղծագործությամբ, ինչպես վկայում են 1910 թ. մայիսի 2-ին, Ղազարապատից Վիկտորիա Աբովյանին գրած նամակի հետևյալ տողերը. «Ամբողջ օրը պարապում եմ. օրական 14 ժամ սեղանիս առաջն եմ. գրում եմ, գրում եմ, գրում եմ, իսկի չեմ կարդում. սկսել եմ մի մեծ վեպ, որ, հավատացնում եմ, հանճարեղ բան է. մինչև այժմ այդպես բան չեմ գրել, և ոչ մի մարդ չէ գրել. չասես՝ պարծենկոտ Ավետիք. ոչ, ճիշտն եմ ասում. «Աբուլ Մահարին» նրա մի գլուխը չարժե... Մինչև մայիսի վերջը կլինի բոլորովին պատրաստ... Շա՜տ ջղային եմ, քուն չունեմ. գրում եմ շա՜տ տենդոտ, հազիվ եմ զսպում ձեռքս, որ չվազե...»:

1911 թ. ամռանը ցարական ոստիկանության հետապնդումներից ազատվելու նպատակով, գաղտնի անցնելով արտասահման, Իսահակյանը շարունակում է ստեղծագործական աշխատանքը տարագրության մեջ, և 1912 թ. հունվարի 19-ին, Իզմիրում ավարտում է վեպի առաջին տարբերակի սևագրությունը:

1913 թ. մայիսին, Շվեյցարիայում, բանաստեղծը վերստին անդրադառնում է իր վեպին, մտադրվելով «ամբողջը նորից գրել, մշակել» (1913 թ. մայիսի 30-ին, Կոլոնիժից Գար. Լևոնյանին հասցեագրած նամակը):

Առաջին համաշխարհային պատերազմի և համազգային աղետի տարիներին (1914—1918 թթ.) բանաստեղծը կտրվում է վեպից. պատճառը ո՛չ միայն այն էր, որ ինքը Շվեյցարիայում էր, իսկ «Ուստա Կարոն» (վեպի ձեռագիրը)՝ Գերմանիայում, պակասում էր առավել կարևոր պայմանը՝ նման մեծածավալ ստեղծագործության վրա կենտրոնանալու համար անհրաժեշտ հոգեկան անդորրը, որի բացակայությունը հետագայում էլ շատ է խանգարել ավարտելու վեպը:

Իսահակյանը «Ուստա Կարոյին» վերադառնում է 1918 թ. վերջե-

րին՝ զուգընթաց իրականացնելով իր ստեղծագործական այլ մտահղացումները («Սասմա Մհեր», «Լիլիթ»):

«Ուստա Կարոյի» վերակառուցմամբ Իսահակյանն արգասավոր եռանդով զբաղվում է 1922—1925 թվականներին, տպագրում է տասը գլուխ՝ վեպի առաջին մասից: Ընկերներին և գրական բարեկամներին հղած նամակներում նա նշում է վեպի ավարտման նոր ժամկետներ (1924 թ. մայիսը, 1924—1925 թթ. ձմեռը): «Ես պարապում եմ, որ վերջացնեմ վեպս և Հայաստան գամ»,— կարդում ենք նրա 1924 թ. դեկտեմբերի 18-ի՝ Մարտիրոս Սարյանին ուղղած նամակում:

Անցնում էին ժամկետները, «Ուստա Կարոյի» տպագրված հատվածները ճաշակած ընթերցողները շարունակում էին սպասել... վեպը չէր ամբողջանում:

«Ուստա Կարո» վեպի անավարտ մնալու պատճառների պարզաբանումը կարոտ է հանգամանալի և մանրազնին հետազոտության: Ինքը՝ հեղինակը, հակված է այդ պատճառները տեսնելու վեպի բնույթի մեջ. «Այս վեպը ուղղակի պատիժ դարձավ գլխիս,— կարդում ենք 1924 թ. փետրվարի 21-ին գրած մի նամակում.— գրել էի վերջացրել. նորից փոխում եմ, ո՛չ էապես, բայց շա՜տ բաների մեջ. մի տեսակ վերագնահատում եմ ի տես բոլոր սնանկությանց, որոնք եղան մեծ պատերազմի ընթացքին, և հետ-պատերազմի շրջանում — սնանկություն պետությունների, դեմոկրատիայի... հումանիտեի, և այլն: Այն բոլոր ապրումները, որ ունեցա՝ պիտի բյուրեղանան Ուստա Կարոյի և Օրթե Հարութի մեջ. դա է վեպս, որ հիմքում փիլիսոփայական է, և գերազանցապես ազգային-հայկական»: «Շարունակե՞լ «Ուստա Կարոն»...— գրում է Իսահակյանը 1925 թ. դեկտեմբերին մի այլ նամակում:— Ես դժգոհ եմ եղածից... Ես նորից եմ գրում այն, 1000 էջ նորից եմ գրելու: Բայց պետք է լինել Ուստա Կարոյի միջավայրում, տեսնել, ստուգել նորից տիպերն ու պատկերները, երկիրն ու օդը, բարբառները: Ահա թե ինչո՛ւ դադարեցրի «Ուստա Կարոյի» հրատարակությունը. նա չեղավ իրականացումը իմ մտածումների, իմ տեսիլի»:

Ըստ Իսահակյանի մտահղացման, «Ուստա Կարո» վեպը Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից առաջ հայ իրականության արտացոլումն է: Հայ ժողովրդի զգացմունքների, ձգտումների, երազանքների, տառապանքների էպոպեան է՝ մանավանդ հանուն ազգային անկախության մղվող պայքարի: Վեպն արտացոլելու էր հայ ժողովրդի քաղաքական-հասարակական կյանքը քսաներորդ դարի սկզբին. ժողովրդի կենցաղը, գեղարվեստական մտածողությունը, փիլիսոփայությունը, հոգեբանությունը... Վեպի առաջին տարբերակից հետո տեղի են ունեցել շա՜տ փոթորկալի իրադարձություններ. շա՜տ բան էր փոխվել, խորտակվել էին շատ պատրանքներ, հույսեր, սպասելիքներ... Եվ այդ ամենը պետք է գտնեին իրենց արտացոլումը վեպում... Երկը պետք է վերակառուցվեր հիմնովին: Իսահակյանի ար-

խիվում պահվող բազմաթիվ ծրագրային գրառումները պերճախոս վկայում են, որ մինչև կյանքի վերջին տարիները բանաստեղծի միտքը անդուլ աշխատել է իր մոնումենտալ վեպի վերակառուցման ուղղությամբ:

«Ուստա Կարո» վեպի բոլոր ինքնագրերի սիստեմավորումն ու հրապարակումը թողնելով բանաստեղծի երկերի գիտական հրատարակությանը, վեցհատորյակի ներկա հատորում ընթերցողների ուշադրությանն է ներկայացվում հեղինակի կենդանության օրով տպագրված գլուխները, ինչպես և մի քանի անտիպ հատվածներ:

ՍԵՂԱՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ՊԱՏՎԻՆ (էջ 175)

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայրենիք», ամսագիր, 1925, հունվար, № 3: Ժողովածուներում չի զետեղել: Տպագրվում է «Հայրենիքի» տեքստը՝ հեղինակային ուղղումներով և մասնակի կրճատումներով:

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԵՎ ՉԱՎՈՒՇԻ ԴԱՐՁԸ ՆԱԽՃՎԱՆ (էջ 189)

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայրենիք», ամսագիր, 1925, փետրվար, № 4: Ժողովածուներում չի զետեղել: Տպագրվում է «Հայրենիքի» տեքստը՝ հեղինակային ուղղումներով:

ՇԻԿՈՅԵՆՑ ՕՍԿԱՆԻ ՏՈՒՆԸ (էջ 197)

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայրենիք», ամսագիր, 1925, փետրվար, № 4: Ժողովածուներում չի զետեղել: Տպագրվում է «Հայրենիքի» տեքստը՝ հեղինակային ուղղումներով:

ՈՎՔԵՐ ԷԻՆ ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ՉԱՎՈՒՇԵՆՑ ՓԻԼՈՍԸ (էջ 205)

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայրենիք», ամսագիր, 1925, № 6: Ժողովածուներում չի զետեղել:

Տպագրվում է 30-ական թթ. առաջին կեսին Փարիզում հիմնովին մշակված տեքստը՝ ինքնագրից:

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ԳՑՈՒՄՐԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ (էջ 240)

Առաջին անգամ տպագրվել է՝ «Արեգ», գրական-գիտական ամսագիր, 1922, օգոստոս, № 8, ապա, վերամշակած և ընդարձակած,

«Ուստա Կարոյի ժամացույցը և վեճը գյումրեցի վաճառականների հետ» խորագրով՝ «Հայրենիք», 1925, մարտ, № 5, այնուհետև, «Արեգ»-ի տեքստը, մասնակի փոփոխություններով՝ «Ընտիր երկեր», 1948, և «Երկերի ժողովածու», հ. III, 1951, որտեղից և արտատպվում է:

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԱՅՑԸ ՍԱՆԱՄԱՅՐԵՐԻՆ (էջ 249)

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայրենիք», ամսագիր, 1925, № 9, ժողովածուներում չի զետեղել: «Հայրենիք»-ի տեքստը հեղինակային ուղղումներով հետմահու տպագրվել է՝ «Երևան», օրաթերթ, 1936, №№ 151—152, 154—157, ապա՝ «Արձակ էջեր», 1963, որտեղից և արտատպվում է:

ԾԵՐԵՐԸ (էջ 279)

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայրենիք», ամսագիր, 1925, № 10, այնուհետև, նույն տեքստը մասնակի հեղինակային ուղղումներով՝ «Արձակ էջեր», 1963, որտեղից և արտատպվում է:

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻՆ (էջ 316)

Առաջին անգամ, «Մի հատված «Բագրանի ուխտը» գլխից» խորագրով, տպագրվել է՝ «Հայրենիք», 1924, մայիս, № 7, ապա, մասնակի փոփոխություններով՝ «Երկերի ժողովածու», հ. III, 1951:

Այստեղ տպագրվում է «Հայրենիքի» տեքստի հիմնովին վերամշակած տարբերակը՝ ինքնագրից:

ԲՈՒԼԻԿԵՆՑ ԱՄԲԱՐԸ ԵՎ ՂԱՆԴԱՀԱՐԻ ԲԱԶԱՐԸ (էջ 331)

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայրենիք», ամսագիր, 1925, օգոստոս, № 10: Ժողովածուներում չի զետեղել: «Հայրենիք»-ի տեքստը հեղինակային ուղղումներով հետմահու տպագրվել է՝ «Արձակ էջեր», 1963, որտեղից և արտատպվում է:

ԱԿՈՐԱ ՏԵՐ ՄԱԹՈՍԸ ԵՎ ԽԱՉԱՎՈՐ ԱԴԱՄ ԱՄԻՆ (էջ 346)

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայրենիք», ամսագիր, 1925, № 11, ապա, մեկ հատված, «Խաչավոր Ադամ ամին» խորագրով՝ «Կոմունիստ», օրաթերթ, (Բաքու), 1928, № 86: Ժողովածուներում չի զետեղել: «Հայրենիք»-ի տեքստը, մասնակի հեղինակային ուղղումներով, տպագրվել է հետմահու՝ «Արձակ էջեր», 1963, որտեղից և արտատպվում է:

ՈՒՏԱՏ ԿԱՐՈՆ ՀՈՎԻՎՆԵՐԻ ՄՈՏ (էջ 371)

«Մի գլուխ «Ուտատ Կարո» անտիպ վեպից» ենթավերնագրով առաջին անգամ տպագրվել է՝ «Գեղարվեստ», հանդես, 1913, № 5: Ժողովածուներում չի զետեղել: «Գեղարվեստ»-ի տեքստը, մասնակի հեղինակային ուղղումներով հետմահու տպագրվել է՝ «Արձակ էջեր», 1963, որտեղից և արտատպվում է:

ԳՅՈՒՄՐԵՑԻ ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ (էջ 387)

Գրել է 1921 թ. Վենետիկում: Առաջին անգամ, «Կապիտան Ղազարը» խորագրով, տպագրվել է՝ «Հայրենիք», ամսագիր, 1923, ապրիլ, № 6, ապա, մեկ հատվածը փոփոխություններով՝ «Ընտիր երկեր», հ. II, 1940 և «Ընտիր երկեր», մեկհատորյակ, 1948: Այնուհետև «Հայրենիք»-ի տեքստը ամբողջությամբ, վերամշակած (հատկապես վերջին ենթագլուխը)՝ «Երկերի ժողովածու», հ. III, 1951, որտեղից և արտատպվում է:

«ՈՒՏԱՆ ՏԻԿՈՐՈՒՄ» (էջ 416), «ՀԱՐՈՒԹԸ» (էջ 447), «ՀԱՐՈՒԹԸ ՀՐԵՂԵՆԻ ՄՈՏ» (ԵՐԱԶ) (էջ 475)

«Ուտատ Կարո» վեպի այս հատվածները տպագրվում են առաջին անգամ՝ ինքնագրերից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Օջախի ծուխը 7
«Համբերանքի չիբուխը» 14
Հովվերգություն 28
Ամբողջ բոքոնը տվեց 36
Ղևոնդ աղաև 48
Ծառա Սիմոնը 57
Կալվածատերերի մոտ 60
Նրանք դրոշակ ունին 69
Հայրենի հուշեր 116
«Զիլի Սուլթանի» երգը 122
Հոբ երանելու ծառը: Դանկբեժ Սլեմանը 127
Հին գյուղը 140
Վեզըլե 148
Գերնիկայի ճվիրական կաղնին 152
Նոր տարվա դիմավորումը Փարիզում 163
Դարբին Գևորգը 166

ԳԼՈՒԽՆԵՐ «ՈՒՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊԻՑ

Սեղան Ուստա Կարոյի պատվին 175
Ուստա Կարոյի և Չավուշի դարձը Նախճվան 189
Շեկոյենց Օսկանի տանը 197
Ովքեր էին Ուստա Կարոն և Չավուշենց Փիլոսը 205
Ուստա Կարոն և գյումրեցի վաճառականները 240
Ուստա Կարոյի այցը սանամայրերին 249
Ծերերը 279
Բագրանի ուխտը 286
Ուստա Կարոն Բագրանի ուխտին 316
Բուլիկենց ամբարը և Ղանդահարի բազարը 331
Ակոռա Տեր Մաթոսը և խաչավոր Ադամ ամին 346
Ուստա Կարոն հովիվների մոտ 371
Գյումրեցի Կապիտան Ղազարը 387
Ուստան Տիկորում 416
Հարութը 447
Հարութը Հրեղենի մոտ (երազ) 475
ԾԱՆՈԹԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 485

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Երկերի ժողովածու վեց հատորով

հատոր 4-րդ

Հրատ. խմբագիր՝ Լ. Ն .Արազյան

Նկարիչ՝ Կ. Թ. Տիրատուրյան

Գեղ. խմբագիր՝ Ա.Հ. Վ. Գասպարյան

Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան

Վերատուգող սրբագրիչ՝ Հ. Ա. Կարապետյան

Аветик Исаакян

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

в шести томах

том IV

ПРОЗА

(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1975

Հանձնված է շարվածքի 26/VI 1975 թ.:
Ստորագրված է տպագրության 21/X 1975 թ.:
Թուղթ № 1, $84\times108^{1}/_{32}$, տպագր. 16,5 մամ.=26,04 պայմ. տպ. մամ., հրատ. 21,4 մամ.+1 ներդիր: Գինը՝ 1 ռ. 04 կ.:
Պատվեր 1615: ՎՖ 07861: Տպաքանակ 60 000:
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:
ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Совета Министров Армянской ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван, ул. Теряна, 91.

ՀԱՍԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220054962